

Բնաբանի փոխարեն

*Ժայռի նման է այս հին բարբառը,  
Ժայռի պես կոշտ է, չհղկված.  
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,  
Չի պոկի նրան ոչ մի հարված.  
Շուրթերի վրա այնպես է բառը,  
Ինչպես որ ժայռն է հողում խրված:*

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՆԿԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
**50-ԱՄՅԱԿԻՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

Ա. ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

*(Երկրորդ լրամշակված հրատարակություն)*

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի եւ Արցախի պետական համալսարանի  
գիտական խորհուրդների երաշխավորությամբ

**Գրախոսներ** - ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
բարբառագիտության բաժին

Արցախի պետական համալսարանի ակադեմիկոս  
Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

**Խմբագիր՝** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր  
ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բառարանը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքն է: Այն  
ներկայացնում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող բառերը, ոճերն ու  
դարձվածները: Բառահոդվածներն օժտված են քերականական, իմաստաբանական,  
լեզվաոճական եւ ծագումնաբանական նշումներով ու բացատրություններով, տպագիր  
ու ձեռագիր աղբյուրներից եւ բանավոր խոսքից քաղված անհրաժեշտ  
վկայություններով:

# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՈՆԸ

**ՀԱՐՑԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՑ:** Ղարաբաղի բարբառը հայերենի ամենատարածված եւ կենսունակ բարբառներից է, որով հաղորդակցվում են ԱՅ-ում, ՀՀ-ում եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող հարյուր հազարավոր հայեր: Երբ եւ հատկապես որ շրջանում է ստեղծվել այն՝ դժվար է ասել: Խոսելով այդ մասին՝ Հր.Աճառյանը բարբառի ծագումը հատկացնում է XII դարին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գրաբարյան **բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղների խլացումը Ղարաբաղի բարբառում ընդգրկում է բնիկ հայերեն բառերը եւ ասորերենից, պարսկերենից, հունարենից առնված հին փոխառությունները, բայց չի տարածվում թուրքական փոխառությունների վրա: Աճառյանը նկատի ունի, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչեւ XII դարը՝ «թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ» եւ դարել է գործելուց այդ դարից հետո (48, հ.1, էջ 380):

Հակադրվելով դրան՝ Գ.Զահուկյանը առաջ է քաշում իր տեսակետը, որի համաձայն՝ բարբառների հնչյունական, քերականական եւ բառապաշարային հատկանիշները ձեւավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում (324, էջ 311), եւ ձայնեղների խլացման երեւույթը պայմանավորված է այլ հանգամանքներով (320, էջ 58):

Բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ մի քանի բարբառների շարքում նշելով նաեւ *զԱրցախային*ն. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառն զգեղականս, որպէս ԳԿործայն եւ զՏայեցին եւ զխոթայինն եւ զՉորրորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄԻջերկրեայսն եւ զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ եւ աւտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն» (382, էջ 187):

1869 թ. հրատարակած աշխատության մեջ Զ. Պատկանյանը հայ բարբառների դասակարգմանը զուգընթաց ներկայացնում է որոշ բարբառների, այդ թվում եւ Ղարաբաղի բարբառի նկարագրությունը (400, էջ 55-73):

Բարբառի վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է Հր. Աճառյանը(44)՝ հիմնականում ներկայացնելով հնչյունական ու ձեւաբանական օրինաչափությունները: Թեմային մեծ լեզվաբանական դարադարձել է նաեւ իր ձեւաբանական դասակարգման մեջ(41), ինչպես նաեւ հետագայում (48, հ.2, էջ 195)՝ բարբառը դասելով «*ում*» ճյուղի բարբառների շարքին:

Հետեւելով բարբառների դասակարգման ձեւաբանական սկզբունքին՝ Ա. Ղարիբյանն իր «Համառոտություն հայ բարբառագիտության» (230) եւ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (232) աշխատությունների մեջ «*ել*» ճյուղից առանձնացրեց «*ս*» ճյուղը՝ «*ում*» ճյուղի մեջ ընդգրկելով բուն Ղարաբաղի բարբառը, իսկ Հաղրուփի եւ Շաղախի խոսվածքներն առանձնացնելով որպես «*ս*» ճյուղի առանձին բարբառներ: Հետագայում, տալով հայ բարբառների հնչյունական դասակարգումը, հեղինակը Ղարաբաղի, Հաղրուփի եւ Շաղախի բարբառները համարեց առաջին տեղաշարժի ենթարկված բարբառներ՝ ելնելով գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների՝ նրանցում խուլերի վերածվելու հանգամանքից:

Նշված բարբառների հակիրճ նկարագրությունն է տրված նաեւ Ա. Գրիգորյանի՝ «Հայ բարբառագիտության դասընթաց» աշխատության մեջ (113):

Սակայն այս բոլոր աշխատություններն ամբողջությամբ չեն արտացոլում Ղարաբաղի բարբառի բուն էությունը, առավել եւս՝ դրանցում գրեթե հաշվի չեն առնված բարբառի խոսվածքների յուրահատկությունները, մի հանգամանք, որ անչափ կարեւոր է հայերենի բարբառագիտական առկապի ստեղծման համար:

Հենց այս տեսակետից անգնահատելի է Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» մենագրությունը (124): Ի տարբերություն Լախորդների՝ այստեղ հանգամանորեն ներկայացվում են Ղարաբաղի բոլոր գյուղերի խոսվածքների հնչյունական ու ձեւաբանական օրինաչափությունները, ինչպես նաեւ բառակազմական եւ շարահյուսական որոշ առանձնահատկություններ, դիտողություններ բարբառային խմբավորումների եւ ազդեցությունների վերաբերյալ: Հեղինակը առանձնացնում է Ղարաբաղի տարածքի վեց բարբառ՝ բուն Ղարաբաղի, Հաղրուփի, Շաղախ-Խծաբերդի, Չայլուի, Մարաղայի, Մեհտիշենի, որոնցից վերջին չորսը 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի տարբեր վայրերից՝ Ղարաղաղից, Ուրմիայից, Մարաղայից եւ Խոյից, գաղթած ու Ղարաբաղում բնակություն հաստատած հայ բնակչության խոսվածքներն են: Աշխատությունն ունի հավելված, որտեղ ընդգրկված են նմուշներ բոլոր, ինչպես նաեւ Ղարաբաղի հարակից շրջանների որոշ գյուղերի խոսվածքներով: Առանձնակի ուշադրության արժանի են վերջում տեղադրված համադրական բառարանը, որտեղ տրվում են գրաբարյան շուրջ 2000 բառերի համար-

ծեքները վերոհիշյալ վեց բարբառներում, եւ բարբառագիտական քարտեզները:

Ուշագրավ մենագրություն է նաեւ Ա. Պողոսյանի «Հաղորդի բարբառը» (316) աշխատությունը: Այստեղ հանգամանորեն լուսաբանվում են բարբառի խոսվածքների հնչյունական եւ ձեւաբանական, մասամբ նաեւ բառագիտական եւ շարահյուսական օրինաչափությունները: Հաղորդի բուն գյուղերի խոսվածքներին զուգահեռ հաճախ քննվում են Պարսկաստանի Ղարաղաղի գավառից 1828-30 թթ. գաղթած եւ Հաղորդի շրջանում վերաբնակված խճաբերդ, Ղուլակար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ գյուղերի խոսվածքները, որոնք պատկանում են Շաղախի ենթաբարբառին: Ուսումնասիրության վերջում տրվում են բարբառային նմուշներ եւ հնչյունաձեւաբանական մի քանի իրողությունների նվիրված քարտեզներ:

Ա. Պողոսյանը Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է ներկայացրել նաեւ «Հայ բարբառագիտություն» դասագրքում (317):

1972 թ. հրատարակվեց Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» մեծարժեք ուսումնասիրությունը, որի առաջին մասում տալով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը՝ մեծ լեզվաբանը 120 բարբառախոս վայրերից մեկ տասնյակից ավելին ընտրել է Արցախի տարածքից: Որոշ խոսվածքներ ուսումնասիրության առարկա են դարձել նաեւ աշխատության երկրորդ մասում, որտեղ դրվում եւ լուծվում են բարբառագիտության մի շարք հարցեր: Ըստ հեղինակի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Ղարաբաղի բարբառը ընդգրկվում է բարբառների արեւելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախի կամ ծայր հյուսիս-արեւելյան միջբարբառախմբի մեջ, իսկ Շաղախի, Հաղորդի եւ Գորիսի խոսվածքները բարբառի կենտրոնից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չեն ներկայացնում:

1975թ. Ալ. Մարգարյանը հրատարակեց «Գորիսի բարբառը» մենագրությունը՝ հանգամանորեն ներկայացնելով ՀՀ Գորիսի եւ հարեւան՝ Ղափանի ու Սիսիանի շրջանների խոսվածքների հնչյունական, ձեւաբանական, բառագիտական օրինաչափությունները՝ փորձելով հիմնավորել այդ խոսվածքների ամբողջության՝ Ղարաբաղի բարբառից անկախ բարբառ լինելու հանգամանքը: Աշխատության վերջում հեղինակը տվել է նմուշներ տարբեր խոսվածքներով, ինչպես նաեւ գրաբարից ավանդված, բարբառային, արեւելյան լեզուներից եւ ռուսերենից փոխառյալ բառերի բառարան, որը առանձին բարբառների նվիրված բառարաններից ամենահարուստն է եւ ընդգրկում է շուրջ 10000 բառ:

Բարբառի դարձվածների համակողմանի քննությունն է ներկայացնում Շ. Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածները» աշխատությունը (281), իսկ Ա. Սարգսյանի «Շաղախի ենթաբարբառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում» աշխատությունը նվիրված է երկու ենթաբարբառների համեմատական ուսումնասիրությանը (360):

Բարբառի տարբեր խոսվածքների եւ իրողությունների վերաբերյալ ուշագրավ հոդվածներ են տպագրել Գ. Զահուկյանը, Հ. Պետրոսյանը, Ալ. Մարգարյանը,

Լ. Հովհաննիսյանը, Մ. Աղաբեկյանը, Ժ. Միքայելյանը, Ա. Սարգսյանը, Շ. Մինասյանը, Օ. Բաբայանը եւ ուրիշներ (տե՛ս օգտագործված գրականության ցանկը):

Հարուստ նյութ են պարունակում նաեւ բոլոր այն բառարանները, որտեղ այլ բարբառներին զուգընթաց ներկայացվում է Ղարաբաղի բարբառի բառապաշարը: Դրանցից առանձնապես հիշատակության արժանի են Հր. Աճառյանի «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», «Հայերէն գաւառական բառարան», «Եվրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ», «Հայերէն արմատական բառարան», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարան» աշխատությունները:

Բացի դրանցից՝ Ղարաբաղի բարբառով հրատարակվել են գեղարվեստական գործեր եւ բանահյուսական ժողովածուներ, որոնց մի մասին կցված են բառարաններ:

Հիշատակության արժանի են նաեւ առ այսօր անտիպ մի շարք ուսումնասիրություններ, բառարաններ եւ բանահյուսական բազմաթիվ նյութեր (տե՛ս ձեռագիր աղբյուրների ցանկը):

**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ:** Ղարաբաղի բարբառի ձայնավոր հնչյուններն են՝ *ա, օ, ու, ռ, օ, ծ, է, ի, ը, ը', ը'': Ա, ու, օ, է, ի, ը* ձայնավորները արտասանությամբ համընկնում են ժամանակակից հայերենի համապատասխան հնչյունների հետ:

*Ս, ռ, ծ-ն ա, ու, օ* ձայնավորների քմային տարբերակներն են:

*Ը'-ն* ներկայացնում է *ը* եւ *է, ը'-ն՝ ը* եւ *ի* ձայնավորների միջին աստիճանը:

Բաղաձայն հնչյուններն են. ձայնեղ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *բ, գ, գ', դ, ձ, ջ*, խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *պ, կ, կ', տ, ծ, ճ*, շնչեղ խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *փ, ք, ք', թ, ց, չ*, ձայնեղ շփականներ՝ *վ, զ, ժ, դ*, խուլ շփականներ՝ *ս, շ, խ, հ*, ձայնորդներ՝ *մ, ն, ռ, լ, լ', խ*:

Գրական լեզվի համեմատությամբ նորություններ են *գ', կ', ք', լ'* բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան *գ, կ, ք, լ* հնչյունների քմային արտասանությունը:

Հազվադեպ գործածություն ունեն նաեւ *դ', տ', թ', ծ', ծ', ց', ճ', չ', ք'* բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում եւ հնչույթային արժեք չունեն:

Բարբառում բացակայում է *ֆ* խուլ շփականը, որի փոխարեն գործածվում է *փ* բաղաձայնը:

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում եւս *ա, օ, ու, է, ի, ը* ձայնավորները հնչույթներ են, քանի որ հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բաց եւ փակ, շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում, բնիկ ու փոխառյալ բառերում եւ միմյանց հետ կարող են կազմել հակադրական զույգեր:

*Ս, ռ* եւ *ծ* ձայնավորները նույնպես ունեն գործածության լայն ոլորտ: Դրանք հակադրության զույգեր են կազմում ինչպես միմյանց, այնպես էլ մյուս ձայնավորների հետ: Սակայն *օ, ռ, ծ*-ի հնչույթայնությունը ի վերջո հաստատվում է ամենամերձավոր հնչույթների՝ *ա, ու,*

**ա-ի** - շեշտանախորդ (մասամբ՝ շեշտակիր) վանկերում (բառասկզբի բաց եւ փակ վանկեր)՝ **արեգակն-իրիթ'նակ/ըրիթ'նակ, բանալի-պինանլի(ք')/պընն-լի(ք'), աւել-իվիլ,**

*ա-օ/ծ* - շեշտակիր փակ վանկերում՝ *դգալ-քըթծլ, բարծր-պծցիւր, կաղիւն-տըկողէն, գարթուն-գծրթիւն: ա-ու/իւ*-շեշտանախորդ (մասամբ՝ շեշտահաջորդ) բաց եւ փակ վանկերում՝ *մատանի-մուտանա, ալետոր-հիլիւփուր, ականջ-անգուն:*

Գրաբարի *ե* ձայնավորը շեշտակիր վանկում փոխարինվել է հետեւյալ ձայնավորներով.

*ե-է* (միավանկ եւ երկվանկ բառերի բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ *ծեռն-ծէրք/ծըրք, գերան-կ'է-րան/կ'ըրան, երկու-էրկու, երկայն-էրկան, բեռն-պէռնը/պըրնը:*

*ե-ի* (բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ *երես-իրըս, մենակ-մինակ, թել-թիւ, շերեփ-շիրըփ, չէչ-չիչ, եփել-իփիլ, երբ-հիբ,*

*ե-ը* (փակ վանկում)՝ *սեպ-սըփայ, սերմն-սըրմ, խելք-խըլք, համեղ-համըղ, եռ-հըռ:*

Մի շարք բառերում, որտեղ *ե*-ն փոխարինվել է *է* եւ *ը*՝ ձայնավորներով, այդ հնչյուններից առաջ լսվում է նախահունչ *յ՝ երկիր-յէրգ'իր, երկինք-յէրգ'ինք՝, ես-յըս՝, երգ-յըրք:*

*ե-ա/ան* (առաջնավանկ)՝ *երագ-արագ/անրանգ, երաշտ-արաշտ, երկանք-արկանք, երկաթ-արկաթ:*

*ե-ու/իւ* (առաջնավանկ, միջնավանկ)՝ *երեւալ-ուրվալ/ըրվալ, դեղնուց-տիւղնծց/ տըղնոց/տիղնոց, լեզու-լիւզիւ,*

*ե-օ/ծ* (առաջնավանկ, միջնավանկ)՝ *խելոք-խօլիւ(ն)ք/խէլու(ն)ք, ուղեղ-հըղղոլ/հուղոլ,*

*է* երկբարբառակերպի դիմաց ընդհանուր առմամբ բարբառում առկա է *է* պարզ ձայնավորը՝ *շէն-շէն, կէս-կէս, էշ-էշ, օրէնք-օրէնք՝, դէմ-տէմ, խէժ-խէժնը, ամէն-ամմէն:*

Շեշտակիր եւ շեշտահաջորդ վանկերում *է*-ն երեւան է հանում նաեւ հետեւյալ փոփոխությունները. *է-ա՝ տէր-տար, մէջ-մաջ, մէջք-մաշկ, գոմէշ-կ'ումաշ, է-ի՝ թէժ-թիժ, շրէշ-շիրիշ, կիւրակէ-կ'իրակ'ի:*

Հին հայերենի գաղտնավանկի *ը* ձայնավորը շեշտագուրկ վանկերում հիմնականում մնում է անփոփոխ՝ *ծանր-ծանդոր, խնոցի-խընըցէ, պսակ-փըսակ, կծիկ-կըծէգ՝:*

Բառասկզբում *ը*-ն պահպանվել է *ընկեր-հընգեր, ընտրել-հընդորէլ* բառերում, որտեղ ստացել է *հ*-ի հավելում:

Որոշ բառերում գաղտնավանկ *ը*-ն փոխարինվել է *ի, օ, ու* ձայնավորներով՝ *գրել-կ'իրիլ, բլիթ-պիլիթ, կրայ-կօրէ, ճիպոռ-ճուպօռ, կծու-կուծօ:*

*ի* ձայնավորը շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում մնում է անփոփոխ կամ փոխարինվում է *է, ը, ը՛, ու, իւ, ծ* ձայնավորներով՝ *իլիկ-իլիգ՝, գին-կ'ին, չամիչ-չամէնչ, քիթ-քէթ/քըթ, դիմանալ-տըմանալ, կռիւ-կըռը՛վ, յիշոցք-ուշունց, Յիսուս-Յիւսիւս, սիրուն-սէրիւն/սիւրիւն/սծրիւն/սիրուն:*

Գրաբարի *ո* ձայնավորը բառասկզբի բաց վանկում դառնում է *վը՛/վը/վօ/վէ/վի՝ ործ-վըրց, ոսկոր-վըսկըռ/ վըսկըռ/վէսկըռ, ոսկի-վը՛սկէ/վըսկէ/վէսկէ, որս-վը՛րս/ վէրս, ոչխար-վը՛խճար/վէխճար/վօխճար, ոջիւ-վիջիւ:*

Շեշտակիր վանկում *վ* բաղաձայնից առաջ *ո*-ն հնչյունափոխվում է *ա*-ի կամ *օ*-ի՝ *կով-կավ/կօվ, հով-հավ/հօվ, ծով-ծօվ, սով-սօվ:*

Որոշ բառերում *ո*-ն դարձել է *ը, ի* կամ սղվել է՝ *բորբոս-փիրփէշնը/փըրփէշնը, խորոված-խըրաված, ողորմ-ըղուրմ/ դուրմ, ողողել-ըղօղէլ/ղօղէլ:*

Մյուս բոլոր դեպքերում *ո*-ին համապատասխանում է պարզ *օ/ծ* կամ *ու՝ խոտ-խօտ, փոս-փօս, չոր-չծր, ձոր-ծծր, խնձոր-խընձծր, թռռն-թօռնը, գոմ-կ'ում, քակոր-քաքոռ, լակոտ-լակոտ* եւ այլն:

Ու ձայնավորը բառերի մեծ մասում կրել է *ու-օ/ծ* հնչյունափոխություն՝ *ուղտ-օղտ, սուգ-սծք՝, կտուց-կըտօց, խունկ-խօնգ, թուղթ-թօխտ, ուրբաթ-ծրփնթ, ընկերութիւն-հընգըրօթիւն:*

Մի շարք բառերում *ու*-ն մնացել է անփոփոխ կամ քմայնացել է՝ *աշուն-աշունք, կատու-կատու, ձու-ծու/ծիւ, լու-լիւ, թունդ-թիւնդ, յուշ-հիւշ:*

Որոշ բառերում *ու*-ն դարձել է *ը*, իսկ որոշներում՝ *է՝ անուն-անըմ/անում, թուք-թըք, մանուշակ-մընէշակ, հեռու-հըռէ:*

Եական փոփոխությունների են ենթարկվել նաեւ հին հայերենի երկբարբառները:

*Այ* երկբարբառը շեշտակիր ու շեշտահաջորդ վանկերում կրել է հետեւյալ փոփոխությունները.

*այ-է* (բառասկզբ, բառամեջ, բառավերջի փակ վանկ)՝ *այծ-էծ, այս-էս, այդ-էտ, այն-էն, լայն-լէն, ձայն-ծէն, եղբայր-ախպէր,*

*այ-ա/ան* (միջնավանկ, բառավերջի բաց վանկ)՝ *մայր-մար, հայր-հանր սատանայ-սադանա, տղայ-տըղա:*

Որոշ բառերում *այ*-ը փոխարինվել է *ի, իւ, ը, ը՛, է* ձայնավորներով՝ *ցայտ-ցիթ, գայլ-կ'իւլ, գայլագռավ-կըռակլւմվ, սայր-սը՛ռ/սըռ/սէռ:*

*Այսօր-սօր* բառում բառասկզբի *այ*-ը սղվել է:

*Աւ* երկբարբառը բարբառում, ինչպէս հայերենի բոլոր դրսեւորումներում, հանդես է գալիս իբրեւ *օ* պարզ ձայնավոր՝ *աւր-օր, աւծ-օխց, յաւք-օնք, կարաւտ-կարօտ:*

Մի շարք բառերում (շեշտահաջորդ եւ շեշտանախորդ վանկեր) առկա է *աւ-օ-ու* հնչյունափոխություն՝ *օրորոց-ուրուրու(ն)ց, մօտենալ-մուտանալ:*

Շեշտի տակ եւ շեշտահաջորդ վանկերում *եա* երկբարբառը սովորաբար հերթափոխվում է *է* պարզ ձայնավորով՝ *կորեակ-կօրէկ, ցորեան-ցօրէն, սեամ-շէմք, ծովեար-ծօվէր:*

Որոշ բառերում *եա* երկբարբառը հնչյունափոխվել է *ա/ան-ի՝ կեանք-գ'անք, մեռեալ-մը՛ռալ, ածեալ-ածալ, գրեալ-կ'իրանլ:*

*Ե* խոնարհման բայերի եզակի հրամայականի *եա* վերջավորությունը բարբառում փոխվում է *ի*-ի կամ *է*-ի *գրեալ-կ'իրի՛, կազմեալ-կա՛զմէ:* *Եա*-ի հնչյունափոխություն առկա է նաեւ անցյալ կատարյալում՝ *գործեաց-կ'օրծից, սիրեաց-սիրից:*

Հին հայերենի *իւ* երկբարբառին բարբառում ընդհանուր առմամբ համապատասխանում են *ու* եւ *իւ* ձայնավորները՝ *լաւութիւն-լ'ըվօթուն, իւրեանք-իւրանք, արիւն-արիւն:*

Գրաբարի *ոյ* երկբարբառը սովորաբար փոխարինվել է *ու* եւ *իւ* ձայնավորներով՝ *բոյր-բուր, լոյս-լիւս, թոյլ-թիւլ, կապոյտ-կ'անպիւտ/կ'անպիտ, բոյն-պիւն*, իսկ *ոյծ-օծ* բառում *ոյ*-ը դարձել է *օ*:

Ղարաբաղի բարբառում զգալի են գրաբարի բաղաձայնական համակարգի կրած փոփոխությունները:

Բառասկզբում (մասամբ բառամիջում եւ բառավերջում) հին հայերենի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց բարբառը հանդես է բերում խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ *բերան-պերան, աղբիւր-ախպիւր, գլուխ-կըլծխ, գազար-կէզար/կ'էզար, ազգ-ազկ, մզլահոտ-մըկլավլ'տ, դանակ-տէնակ, դատարկ-տերտակ, ձեռն-ծերք, ձմերուկ-ծըմէրուկ, ջուր-ճիւր, ջրադաց-ճը'դաց:*

*Բ, գ, դ, ձ* բաղաձայնները ռեզայիններին հաջորդելիս մնում են անփոփոխ՝ *բամբակ-պէմբակ, ամբար-ամբար, հինգ-հէնգ', հանգիստ-հմնգ'իստ, հանդարտ-հմնդարտ, հիւանդ-հիվանդ, տանձ-տմնձ, խնծոր-խընծոր, բանջար-պէնջար, տանջել-տմնջիլ:*

Որոշ բառերում *բ* եւ *գ* բաղաձայնները ձայնեղության որակը պահպանել են բառասկզբում՝ *գիրկ-գ'իւրգ', գուլպայ-գ'իւլբւ, գիտել-գ'իղմիլ, բաշխել-բախշիլ:*

Բառամիջում եւ բառավերջում ձայնավորներից եւ *ր* ձայնորդից հետո գրաբարի ձայնեղներին համապատասխանում են շնչեղ խուլեր. *խաբել-խմփիլ, սուրբ-սորփ, թագաւոր-թաքավէր, օգուտ-օքուրթ, մարդ-մարթ, կարդալ-կարթիլ, օծ-օխց/օց, բարձ-պերց, աջաջ, արջ-արջ, վերջ-վէրջ, մրջմին-վըրջմնը:*

Մի շարք բառերում *բ* եւ *գ* ձայնեղների դիմաց շնչեղ խուլ *փ, ք* բաղաձայններ առկա են բառասկզբում՝ *բռնել-փըռնել, բորբոս-փըրփէշնը, գիշեր-քըշեր, գնալ-ք'ինիլ:*

Հնչյունափոխության մասնակի դեպքեր են՝ *գ-դ՝ գերփել-ղըրփել, ձ-ս՝ դագձն-տէսնը, ձ-զ՝ սինձ-սը'զնը, արծակ-հմրզմկ:*

Հին հայերենի խուլ պայթականներն ու կիսաշփականները բառի բոլոր դիրքերում հիմնականում մնում են անփոփոխ՝ *պակաս-պակաս, ճիպոտ-ճըպատ, պարապ-հըպարապ, տընկել-տընգէլ, սատակել-ըստակէլ, տատ-տատ, կասկած-կասկած, ծակել-ծակէլ, կայծակ-կածմկ, կորեակ-կօրէկ, ճուտ-ճօտ, կոճակ-կօճակ, կարծ-կարճ, ծաղիկ-ծաղէգ', արծաթ-արծաթ, առիւծ-մռնիւծ:*

Որոշ բառերում խուլերին համապատասխանում են շնչեղ խուլեր՝ *պսակ-փըսակ, յուշապ-օշափ, օգուտ-օքուրթ, կթել-քըթէլ, ծիծառն-ցըցէռնակ, ճանկ-չմնկ՝ ճախարակ-չըխարակ, իսկ որոշներում՝ ձայնեղներ՝ աշխատանք-աշխադանք, պատարագ-բաղարանք՝, երկինք-յերգ'ինք՝, պատինճան-բաղըմջան:*

*Յնկնել-ցըղնէլ, ճոճք-ճօճկ* բառերում *չ* եւ *ճ* խուլերը կրել են մասնակի փոփոխություն:

Ընդհանուր առմամբ անփոփոխ են մնացել նաեւ հին հայերենի շնչեղ խուլ պայթականները եւ կիսաշփականները՝ *փրփուր-փըրփօր, շամփուր-շամփուռ, շերեփ-շիրք'փ, քամի-քամէ, կաքաւ-կաքավ, խելք-խըլք, թափել-թափէլ, մորթի-մօրթէ, խորթ-խօրթ, ցուրտ-ցօրտ, կացին-կացէն, հաց-հաց, չափել-չափէլ, կաջաղակ-քըջէղակ, կանաչ-կանանչ:*

Հատուկ են բառերում շնչեղ խուլերի դիմաց բարբառը երեւան է հանում խուլ բաղաձայններ՝ *փաթաթել-պըտատէլ, խոսք-խօսկ, բոյթն-պիլտնը, քաղցր-քախծըր, ոչխար-վը'խճար:*

Գրաբարի ձայնեղ եւ խուլ շփականները բառի բոլոր դիրքերում ընդհանուր առմամբ հնչյունափոխության չեն ենթարկվել՝ *զկեռ-զըկըռ, խուզել-խօզիլ, մագ-մնգ, ժամ-ժամ, դժուար-տիժեր, կուծ-կօծ, վարագ-վարագ, խորովել-խըրավէլ, հով-հավ, սուրբ-սորփ, խոսել-խօսէլ, թուխս-թօխս, շուն-շօն, խարշել-խաշիլ, էշ-էշ, խմոր-խըմօր, մոխիր-մօխեր, ծուխ-ծօխ, հայելի-հիլի, մահակ-մըհակ, մահ-մահ, ողողել-ըղօղէլ, մեղր-մը'ղըր, տեղ-տը'ղ:*

Այդ ընդհանուր օրինաչափություններից կան շեղումներ՝ *սալոր-շըլծր, սեամ-շէմք, հող-վը'ղ, հոտ-վը'տ, թուղթ-թօխտ, աղջիկ-ախճիգ':*

*Լ, մ, ն, ր, ռ* ձայնորդները տարբեր դիրքերում հիմնականում ներկայանում են անփոփոխ վիճակով՝ *լափ-լէփ, լայն-լէն, իլիկ-իլիգ', ծիլ-ծիլ, մենակ-մի-նակ, ամիս-ամէս, համ-համ, նկար-նըկար, հանել-հանէլ, բան-պէն կրակ-կըրակ, գիր-կ'իր, քուռակ-քօռակ, աստառ-աստառ:*

Գրաբարի *ն* վերջնահանգ ունեցող բառերում Ղարաբաղի խոսվածքների մեծ մասում հիմնականում պահպանվել է *ն*-ն, իսկ որոշներում այն ընկել է՝ *թռն-թօռնը/թօռ, ծռն-ծօռնը/ծօռ, դռն-տօռնը/տօռ:*

Մասնակի հնչյունափոխության դեպքեր են՝ *ր-ռ՝ պորտ-պօռտ, ոսկոր-վը'սկըռ, ռ-ր՝ ձեռն-ծը'րք, փառք-փարք':*

*Յ* ձայնորդը բառամիջում սակավ է հանդիպում՝ *մայիս-մայիս, ծառայել-ծըռայէլ:*

Բառասկզբում *յ*-ն սովորաբար սղվում է կամ դառնում է *ի՝ յաւնք-օնք, յիսուն-իցցուն, յստակ-իստակ:*

Որոշ բառերի բառասկզբում *յ*-ն հնչյունափոխվել է *հ*-ի՝ *Յիսուն-Հինսնս, յաղթել-հախթէլ/յը'խնէլ, յունիս-հունիս:*

*Ի* ձայնորդը հանդես է գալիս որպէս ձայնեղ շփական *վ՝ ծարաւ-ծարավ, ցաւ-ցավ, աւել-իվիլ, թել-թէվ, արել-մըրք'վ:*

Ղարաբաղի բարբառում լայն տարածում ունեն նաեւ դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության մի շարք երեւոյթներ, ինչպիսիք են. հնչյունների անկում՝ *անալի-նմիլ, աքացի-քացէ, ուղղորդ-ղօրթ, ողորմեայ-ղօրմի, հայելի-հիլի, ջախջախել-ճիճը'խէլ, եկեղեցի-յը'խցէ, խոնարհ-խօնար, խաղող-խաղու, պաշտպան-պաշպան, արջառ-մնջը'ռ, բարշել-քաշիլ, հնչյունների հավելում՝ աներ-հանէր, համարել-հըմբարէլ, ծանր-ծանդըր, ոգնի-կօզնի, ամաչել-հըմանչիլ, առնամանում՝ մատն-մաննը, ելանել-իլմիլ, շաղախել-շըղաղէլ, անմեղ-ամմէղ, տարնմանում՝ բոբիկ-պէպէգ'-տէպէգ', ծածկել-ծասկէլ, անուն-անըմ, դրափոխություն՝ արեգակն-իրիք'նակ, ականջ-անջուկ/անգուճ, արմուկն-արմունգ, դատարկ-տերտակ, փետուր-թէփուռ, սրահ-սըհար, պղտոր-պըրտծղ, բաշխել-բախշիլ, ոչխար-վը'խճար, կապերտ-կարպետ, խստոր-սըխտօր, նման-մընան, համար-մըհար, հաւաքել-վըհաքէլ, հնչյունի կրկնություն՝ ամեն-ամմէն, գոռալ-կ'օռռալ, տաս-տասսը, հազար-հազգար, յիսուն-իցցուն, հնչյունի պարզեցում՝ կծկել-կըզկէլ, անէծք-անէսկ, երիցակին-իրիսկին, հնչյունի բարդացում՝ վաթսուն-վացցուն, բանգ-կանց, վարժվմը, վարժապետ-վմրջմբէղ, ինժեներ-ինջիներ:*

**ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ:** Ինչպես հայերենի մյուս բարբառներում, Ղարաբաղի բարբառում եւս թվի կարգի արտահայտությունը պայմանավորված է եզակի եւ հոգնակի թվերի հակադրությամբ:

Հոգնակերտներն են *էր/ը՛ր, նէ, ք՛, ա(ն)ք/ան(ն)ք, ու(ն)ք/ո(ն)ք, էք/էրք, օտէ(ն)ք՛, իք՛, անէք՛, վանք, վասկ, ըթկընէ, էն/ը՛ն, օտ/ծտ, լար/լմր*: Սրանցից յուրաքանչյուրը գործառնում է որեւէ դիրքում կապված տվյալ բառի ձեւի եւ իմաստի հետ:

Առավել հաճախակի գործառնություն ունեն *էր* եւ *նէ* թեքությունը, որոնք հին հայերենում (*եար, անի*) ընդգրկում էին սահմանափակ թվով հիմքեր՝ արտահայտելով հավաքական իմաստ:

*էր* հոգնակերտ ստանում են միավանկ բառերը՝ *տօս-տընէր, շօն-շընէր, հապ-հավէր*: Այդ թվին են դասվում նաեւ գրաբարյան *ն* վերջնահանգով բառերը, ինչպես նաեւ այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը անվանական միավանկ բառ է՝ *կ'առնը-կ'առնէր, թօռնը-թօռնէր, տընատար-տընըտարէր, ծըծամար-ծըծըմարէր*: Որոշ խոսվածքներում *էր* թեքությոնի գուգահեռ գործածություն ունի *ը՛ր-ը՛ տընը՛ր, շընը՛ր, հավը՛ր*:

*Նէ* հոգնակերտ ստանում են բազմավանկ բառերը՝ *արկաթ-ըրկըթնէ, ջանավար-ջանավարնէ, ք'անթն-ք'ըթնէ, ճըպատ-ճըպըտնէ, դասատու-դասատունէ*: Այդ վերջավորությամբ հոգնակի են կազմում նաեւ բառակազմում *ռ* ունեցող որոշ միավանկ բառեր՝ *ռոք-ռուքնէ, ռուս-ռուսնէ*, որոնք ավելի շատ գործածվում են նախաձայն *ը*-ով կամ *ու*-ով՝ *ըռուք/ուռուք-ըռուք-նէ/ուռուքնէ, ըռուս/ուռուս-ըռուսնէ/ուռուսնէ*:

*Ա(ն)ք/ան(ն)ք, ուք/ո(ն)ք, էք/էրք, օտէ(ն)ք՛* հոգնակերտները գործառնում են ազգակցություն կամ գերդաստան ցույց տվող բառերի հետ՝ *հանէր-հընէրա(ն)ք, Սանք'իս-Սիրք'իսան(ն)ք, Վանի-Վանու(ն)ք/Վանո(ն)ք, տըղա-տըղէք/տըղէրք, փը՛սա/ փըսօտէ(ն)ք՛*:

*Ք/ք՛* հոգնակերտը, որ գրաբարում ամենակենսունակ թեքությոն էր, բարբառում գործածվում է որտեղացի լինելը մատնանշող բառերի հետ՝ *ղարաբաղէ-ղարաբաղէք՛, պիլթընէ-պիլթընէք՛, շինըգէ-շինըգէք՛, տըղըգէ-տըղըգէք՛*: *Ք/ք՛*-ն իր հոգնանշության արժեքը պահել է նաեւ բաղադրյալ կազմություններում:

*Օտ/ծտ* թեքությոնով հոգնակի են կազմում ծառանուններ արտահայտող բառերը՝ *կաղնէ-կաղնօտ, գըկըռի-գըկըռօտ, շանթանի-շանթանիծտ, թնկի-թնկօտ*: Այս բառերը հոգնակիությունից բացի կարող են արտահայտել նաեւ որեւէ բույսի աճման տեղի, վայրի իմաստ: Տարբերությունը երեւում է միայն շարահյուսական մակարդակում, ինչպես՝ *ք'ը՛ցալ ըմ գըկըռօտը* (գնացել եմ այն տեղը, որտեղ զկռենիներ են աճում), *գըկըռօտ ըմ քանդան, պէրալ* (զկռենիներ եմ քանդել, բերել):

Թուրքերենից փախառյալ *լար/լմր* հոգնակերտը հանդես է գալիս ինչպես փոխառյալ, այնպես էլ բնիկ բառերի հետ՝ *բալա-բալալար, դայի-դայիլմր, Արոն-Արոնլմր, Թունի-Թունիլմր*:

Մյուս հոգնակերտները կենսունակ չեն եւ գործածվում են սահմանափակ թվով բառերի հետ՝ *մարթ-մարթիք՛, կընէգ՛-կընանէք՛, շէն-շինըթկընէ, թէ-թիյէն/թիյը՛ն, ծոն-ծոնվէն/ծոնվը՛ն, փանդ-փանդվանք/փանդվասկ*:

Հարկ է նշել նաեւ, որ որոշ բառեր կարող են ստանալ թվանիշ տարբեր կամ կրկնակի թեքություն, ինչպես՝ *ծի-ծիյը՛ն-ծիյանք-ծիյէր-ծիյէրք-ծիյանէր, շէն-շէնէր-շէնէք՛-շէնէրք-շինըթկընէ*:

Հին հայերենի համեմատ՝ բարբառը հոլովման համակարգում երեւան է հանում զգալի տարբերություններ. գրաբարի վեց հոլովներից այստեղ առկա են չորսը՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական: Որոշ դեպքերում գործածական են ներգոյականի հատուկ ձեւերը, որ գրաբարը չունի: Բարբառում չեն գործառնում գրաբարյան հոլովման որոշ տիպեր (*ո* վերջադրական հոլովում, *ե* ներքին հոլովում, տրականի *ոջ* վերջավորություն (Մարտակերտի շրջանի որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն *տիրույ, քըրօչ* եւ այլ ձեւերը), խառը հոլովում), առաջ է եկել *վա* արտաքին հոլովումը: Փոփոխություններ են կատարվել հոլովների կազմության մեջ. բարբառը չունի նախդիրներ, հայցականի *ս*, գործիականի *ք, լ, ք* վերջավորություններ: *Ք*-ն պահպանվել է հատուկ եղանակով բառերում՝ *վը՛նսուք, ծէ՛ռուք, կօլ՛ուք*, որտեղ արտահայտում է եզակի գործիականի իմաստ՝ *ոտքով, ձեռքով, վզով*: Անգործածական է նաեւ տրականաձեւ գործիականը: Նորություն է բացառականի եւ գործիականի կազմության վերլուծական եղանակը: Փոխվել է հոգնակի հոլովման կազմությունը. ընդհանուր առմամբ նույնացել են հոգնակիի եւ եզակիի հոլովանիշ թեքությունները: Նույն բառերը գրաբարում եւ բարբառում ընդգրկվում են հոլովման տարբեր տիպերի մեջ:

Այսքանով հանդերձ՝ բարբառը հոլովման համակարգում գրաբարի հետ ունի մի շարք ընդհանրություններ:

Անվանական համակարգում հոլովները ունեն հետեւյալ կազմությունը.

Ուղղական-հայցական հոլովը եզակի եւ հոգնակի թվերում գուրկ է հոլովակերտներից եւ մյուս հոլովներին հակադրվում է զրո վերջավորությամբ: Եզակիի եւ հոգնակիի հակադրությունը արտահայտվում է հոգնակերտների բացակայություն-առկայություն հատկանիշով:

Տրականը բնութագրվում է հոլովանիշ թեքությունների բազմազանությամբ, որոնք արտահայտվում են վերջավորություններով եւ հնչյունական հերթագայություններով:

Վերջավորություններն են՝ *էն/ին, ու(ն)/ո(ն), վա/վան, ա(ն)/ան(ն)*:

Հերթագայություններն են՝ *ք/ց, ա/օ, է/օ, է/ու, ի/ո, օ/ա, ու/ըվօ*, որոնցից առաջինն ունի վերջադրական, մյուսները՝ ներդրական բնույթ:

Տրականի նշված թեքություններից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի սահմաններում:

*էն/ին* հոլովակերտը, հանդիսանալով ամենակենսունակ թեքությոն, չունի միանշանակ բնորոշում եւ ընդգրկում է բոլոր այն բառերը, որոնք չեն բաշխվում այլ հոլովանիշ թեքությունների սահմաններում: Այս հոլովակերտով տրական են կազմում.

ա) գրաբարյան հոլովման տարբեր տիպերից բազմաթիվ բառեր, ինչպես՝ *Վարդանայ-Վըրթանէն, սրտի-սըրտէն, գործոյ-կօրծէն, ծօվու-ծօվէն, աստեղ-ասթըխէն, ընկերութեան-հընգըրթունէն* եւ այլն:

բ) գրեթե բոլոր փոխառյալ բառերը՝ **ջանեն, գ'օլեն, ըստօլեն, դանդին**:

գ) հատուկ անունների մեծ մասը՝ **Ըրշակեն, Գագօ-յին, Վօվին, Ըրասխեն, Թըրթանին**:

Հարկ է նշել, որ բարբառում բառերը **էն/ին** հոլովա-նիշ ստանում են միայն որոշյալ առման դեպքում:

**Ու(ն)** հոլովակերտը կենսունակությամբ երկրորդն է, մանավանդ որ **էն/ին** հոլովման բառերը անորոշ իմաստով գործածվելիս թեքվում են **ու(ն)** թեքույթով, հմմտ.՝ **մեր ծառեն - մին ծառու, ծը՛ր շենին- մին շենու**:

**Ու(ն)** հոլովանիշ են ստանում նաեւ.

ա) **է/ի** վերջավորություն ունեցող բառերը՝ **բամէ-բամու(ն), շինըցէ-շինըցու(ն), կօզնի-կօզնի(ն), Բադ-դի-Բադդու(ն)**:

բ) **ա** վերջավորություն ունեցող՝ ազգակցություն արտահայտող որոշ բառեր՝ **այա-այուն, ապա-ապուն, նանն-նանուն, մամա-մամուն, պապա-պապուն**:

գ) **ա** վերջավորություն ունեցող անձնանունները, որոնք զուգահեռաբար թեքվում են նաեւ **էն/ին** թեքույթով՝ **Լիդա-Լիդու(ն)/Լիդին, Յաշա-Յաշու(ն)/Յաշին**:

Մարտակերտի շրջանի խոսվածքների մեծ մասում **ա** վերջավորություն ունեցող բառերը թեքվում են **ան** թեքույթով՝ **այան ախպերը, ապան էշը, Յաշան տօնը**:

**Վա/վն** հոլովանիշով թեքվում են ժամանակի իմաստ արտահայտող բառերը՝ **օր-օրվա, քրսծր-քրսծրվն, կ'արունք-կ'արունքվա, ծըմընը-ծըմընըվա**:

**Ա(ն)/ն(ն)** հոլովանիշ ստանում են.

ա) **կրնէգ՝** եւ **ախճիգ՝** բառերը՝ **կրնգա, ըխճըկա**:

բ) հատուկ տեղանունները՝ **Ղարաբաղ-Ղարաբաղա, Իրէվան- Իրէվանա, Զնորոյթ-Զնորոյթն, Կ'ծրէս-Կ'ծրէսն**:

գ) գրաբարյան **ն** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը՝ որոշյալ առման դեպքում՝ **կ'առնը-կ'առնա-նը, թօռնը-թօռնանը, տօռնը-տօռնանը**: Անորոշ առ-ման դեպքում այս բառերը թեքվում են **ու** հոլովա-նիշով՝ **կ'առնու, թօռնու, տօռնու**:

**Է/օ** հերթագայությունը պատմականորեն հանգում է հին հայերենի **այ/օ** հերթագայությանը՝ **ախպօր, դօր-փօր** (նաեւ **դօրփօր**):

Գրաբարյան նույն հերթագայությանն են հանգում **ա/օ, ն/օ-ն' մար-մօր, հնր-հօր**:

**Է/ու** հերթագայությամբ հանդես է գալիս **հա-նէր/հանուր** (նաեւ **հանօր**), իսկ **ի/ն** հերթագայու-թյամբ՝ **տնք'իր- տնք'նիր** (նաեւ **տնք'ծր**) բառը:

**Օ/ա** հերթագայությունը համապատասխանում է գրաբարյան **ու/ա** հերթագայությանը եւ ընդգրկում է **շօն** եւ **տօն** բառերը՝ **շօն/շան, տօն/տան**:

**Ու/ըվօ** հերթագայությամբ է թեքվում **քուր** հիմքը՝ **քուր-քըվօր, մըրաքուր-մըրաքըվօր**:

Հոգնակի թվում տրական հոլովը արտահայտվում է **էն/ին, ու(ն)** վերջավորություններով եւ **ք/ց** հերթագա-յությամբ:

**էն/ին** հոլովանիշ են ստանում **էր/ը՛ր, նէ, լար/լնր, էն/ը՛ն** հոգնակերտներով բառերը՝ **ծառէր-ծըռէրեն, սալդաթեն-սալդաթենէրեն, աթալար-աթալարեն, ամիւնր-ամիւնրին, թիյը՛ն- թիյը՛նէն**:

**Ու(ն)** հոլովանիշ են ստանում **օտ/ծտ** հոգնակերտ ու-նեցող բառերը՝ **զկըռօտ-զըկըռօտուն, տննծօտ-տըն-**

**ծծտուն**, ինչպէս նաեւ **նէ** հոգնակերտով բառերը՝ **Հադ-րուքի** եւ **Շաղախի** ենթաբարբառներում՝ **ըմընէ-ը-մըննուն, սալդաթեն-սալդաթենուն**:

**Ք/ց** հերթագայությամբ թեքվում են **ք', ա(ն)ք/ն(ն)ք, ու(ն)ք/ն(ն)ք, էք/էրք, օտէն(ն)ք', իք', անիք'** հոգնակերտ-ներով բառերը, **շինըցէք'-շինըցուց, Ըրշակա(ն)ք-Ըր-շակա(ն)ց, Սըրք'իսն(ն)ք-Սըրք'իսն(ն)ց, տատու(ն)ք-տատու(ն)ց, ննգն(ն)ք-ննգն(ն)ց, ըխճըկէք'-ըխճըկօց, տըղէրք-տըղօրց, փըսօտէ(ն)ք'-փըսօտա(ն)ց, մար-թիք'-մարթկանց, կընանէք'-կընանուց** եւ այլն:

Այսբանով հանդերձ՝ տրականի թեքույթների գոր-ծառնությունը որոշակի հիմքերի հետ օրինաչափ երեւոյթ չէ, եւ երբեմն հոլովման տիպերի միջեւ կա-տարվում են փոխանցումներ, ինչպէս՝ **Ճըրտարա/Ճըրտարեն, օրվա/օրեն, տարվա/տարուն**:

Բացառական հոլովը ներկայանում է համադրա-կան եւ վերլուծական կառուցվածքներով:

Համադրական բացառականի վերջավորությունն է **ա(ն)**, որ դրվում է ուղղական-հայցականի անհնչյունա-փոխ կամ հնչյունափոխված հիմքի վրա՝ **ծակ-ծա-կա(ն), թումբեր-թումբերա(ն), տէնակ-տինակա(ն), տինըկէն-տինըկնա(ն), հինծտ-հինծտան**:

**Օ/ա** հերթագայությամբ թեքվող բառերը եզակիում եւ վերջնահանգ **ք** ունեցող հոգնակերտով բառերը հա-մադրական բացառականը կազմում են տրական հոլո-վածեւից՝ **շօն-շան-շանան, տօն-տան-տանան, ծի-յանք-ծիյանց-ծիյանցան, շէնէրք- շէնէրց- շէնը՛րցան**:

Վերլուծական կառուցվածքով բացառականը հիմ-նականում հատուկ է անձ ցույց տվող գոյականներին եւ բաղադրվում է տրականից եւ **անա** կամ **նը՛ստա/նըս-տա/նիստա/նը՛ստա** բառ-մասնիկներից՝ **տըղէն անա/նը՛ստա, մարթին անա/նը՛ստա, դօրփուրցը անա/նը-՛ստա, հօրը անա/նը՛ստա, Ըրշակէն անա/նը՛ստա**: Այդ գոյականները, բացառությամբ անձնանունների, բացա-ռականը կարող են կազմել նաեւ համադրական եղա-նակով՝ **մարթան, կընգանան, ըխճըկանան**: Այս երեւ-ոյթը, սակայն, չունի լայն տարածում:

Տեղանունների բացառականը նույնանում է սեռա-կան-տրականի կառուցվածքին՝ **Իրէվանա, Մարտու-նա, Իրանա**: Տարբերությունը նկատվում է միայն շա-րահյուսական մակարդակում:

Գործիական հոլովին եւս հատուկ են համադրական եւ վերլուծական կառուցվածքներ: Դրանց կազմության եղանակները նույնն են բացառականի հետ, այն տար-բերությամբ, որ գործիականը ունի **ավ** ընդհանուր վեր-ջավորությունը՝ **ծառավ(ը), քըրէրավ(ը), տինըկնավ(ը), տանավ(ը), շանավ(ը), ծիյանցավ(ը), ըխճըկօցա-վ(ը)/ըխճըկօցը անավ/նը՛ստավ, տըղօրցավ/տըղօր-ցը անավ/նը՛ստավ, Ըրշակէն անավ/նը՛ստավ, քըվօ-րը անավ/նը՛ստավ, Զըթէրքավ(ը), Ճըրտարավը**:

Ներգոյական հոլովը հատուկ է հիմնականում տե-ղի եւ ժամանակի գաղափար արտահայտող բառերին եւ ունի **ուղղական-հայցական հոլովածէս+ըմ/ում վերջավորություն** կառուցվածքը (ուղղական-հայցա-կանը կարող է ներկայանալ անհնչյունափոխ եւ հնչյու-նափոխված հիմքերով)՝ **շէն-շէնըմ(ը)/շէնում(ը), կ'ում-կ'ումըմ(ը)/կ'ումում(ը), ժամ-ժամըմ(ը)/ ժամում(ը), ամէս-ամսըմ(ը)/ամսում(ը)**:

Հատուկ տեղանունների ներգոյականի իմաստը ընդհանուր առմամբ արտահայտվում է ուղղական-հայցականով՝ **Շուշի լ՛ալ ճո՛ր կա** (Շուշիում լալ ջուր կա), **Տումէ բօլ զըկըռօտ կա** (Տումիում շատ զկռենիներ կան):

Մյուս դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվում է տրական հոլովի եւ **մաշին/մէշին/միշին** ետադրության բաղադրությամբ՝ **խօսկէն մաշին** (խոսքի մեջ), **մարթին մաշին** (մարդու մեջ) եւ այլն:

**ՀՈՂԱԴՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ:** Բարբառին հատուկ են որոշյալության, ստացականության, ցուցականության եւ դիմորոշության հոդային ենթակարգեր:

Որոշիչ հոդերն են **ը-ն** եւ **ւ-ն**, որոնցից առաջինը գործառնում է բաղաձայնահանգ, երկրորդը՝ ձայնավորահանգ բառերի հետ՝ **կարբը, կ'իրբը, կըլօխը, ըստօլը, ռնմուզը, կատուն, տըղան, մայան:**

**Ը, Ս** որոշիչ հոդ են ստանում գոյականները եւ փոխանունները եզակի եւ հոգնակի թվերի թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովաձեւերում՝ **շէնը, շէնին, շէնանը, շէնավը, շէնմը:**

Անորոշությունը որոշյալությանը հակադրվում է զրո վերջավորությամբ եւ **մի/մին** ցուցիչ առկայությամբ՝ **քարը-քար/մի քար/մին քար, հայաթը-հայաթ/մի հայաթ/մին հայաթ:** Մի/մին ցուցիչը ունի միայն նախադաս կիրառություն:

Առանց որոշյալ հոդի են գործածվում.

ա) **իմ, քու, մէր, ծըր** անձնական դերանունների հետ գործածվող՝ ազգականություն ցույց տվող բառերը՝ **իմ տատ, քու հնը, մէր մար, ծըր քուր:**

բ) ազգակցություն ցույց տվող հավաքական գոյականները, որոնք տրականում թեքվում են **ք/ց** հերթագայությամբ՝ **պապուք, տատուք, մզոնք, ղորոթլանք, Անվանք:**

Ուղղական հոլովի կիրառություններից անորոշ ձեւ ունեն գոյականաբար հանդես եկող որոշիչները եւ կոչականները՝ **չամէնչ մէս, մըղըր հաց, Սմբի, յըր կաց:**

Գործիականում սովորաբար որոշիչ հոդ չեն ստանում **վա** հոլովման բառերը՝ **ժամավ, օրավ:**

Շաղախի ենթաբարբառի հին սերնդի խոսվածքում անձնանունները սովորաբար խոսքի մեջ հոդ չեն ստանում՝ **Արշակ քը՛ցավ, Սմրդու տըղան** եւ այլն:

Ստացականությունն արտահայտվում է **ս** եւ **տ** հոդերով՝ **տօնըս, հընգէրուքըս, հացըտ, ծառըտ:** Ստացական հոդ ստանում են գոյականները՝ **հնըրս, մարըտ,** գոյականաբար գործածվող ածականները՝ **մըծըս, կուծինիտ,** թվականները՝ **հէնգ'ըս, էրկունջինըտ,** մի շարք դերանուններ՝ **ինք'ըս, ըշտըղըտ,** անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները՝ **կարթիլըս, կէրածըտ, օտօղըտ:**

Ստացականության իմաստ են արտահայտում նաեւ **ը** եւ **ւ** հոդեր ունեցող բառերը, որոնց ստացական իմաստը սակայն չի պայմանավորված հոդով: Դա բառի ներքին ստացական իմաստն է, որի՝ երրորդ դեմքի վրա կոնկրետանալը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված **ս, տ** հոդերի բացակայությամբ, ինչպես՝ **վը'նը կօտրալ ա** (նրա ոտը), **տըղէն փըսակալ ա** (իր տղային):

Ստացական հոդերը միաժամանակ որոշյալության իմաստ են արտահայտում եւ կարող են գործառնել բոլոր հոլովների եզակի եւ հոգնակի ձեւերի հետ՝ **քաղաքըս/բըղըքնէս, բըղաքէս/բըղըքնէրէս, բըղաքաս/բըղըքնէրաս, բըղաքավըս/ բըղըքնէրավըս, բըղաքըմըս/բըղըքնըմըս:**

Ստացական հոդեր ունեցող բառերը կարող են գործածվել ե՛ւ առանց դերանուն հատկացուցիչների, ե՛ւ դերանուն-հատկացուցիչներով՝ **ծըր'ըքս/իմ ծըր'ըքս, խօխատ/քու խօխատ:**

Գրաբարյան **ս, դ, ն** ցուցական հոդերից բարբառում, ինչպես արդի հայերենում, պահպանվել է միայն **ս-ն**, որն ունի **էս** (այս) դերանվան իմաստը եւ գործածվում է տեղի ու ժամանակի մի շարք անունների հետ՝ արտահայտելով ժամանակի եւ առարկայի մոտիկության գաղափար, ինչպես՝ **աշունքըս** (այս աշնանը), **վէրէրքըս** (այս վերջին ժամանակները), **աշխարքըս** (այս աշխարհը), **յըրգ'իրըմըս** (այս երկրում): Այս բառերը կարող են գործածվել նաեւ **էս** դերանվան հետ՝ **էս աշունքըս, էս ըմըռնուս, էս շէնըս:**

Դիմորոշության կարգը, որ հատուկ է ե՛ւ հին, ե՛ւ արդի հայերենին, պահպանվել է նաեւ բարբառում եւ արտահայտվում է **ս, տ**, հոդերի միջոցով՝ **յը'ս ինք'ըս, տու ինք'ըտ, մինակըտ, սաղըս:**

**ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ:** Ածականները բարբառում լինում են որակական եւ հարաբերական: Որակական ածականների բաղադատական աստիճանը ներկայանում է վերլուծական եւ շարահյուսական կառուցվածքներով: Վերլուծական կառուցվածքը արտահայտվում է գրաբարյան **քան+ գ-քանց/կանց/ կանս** նախդիրի միջոցով՝ **իմ տըղաս կուծի յա, քանց քունը:**

Բաղադատականի իմաստ է արտահայտվում նաեւ **պակաս, շատ** բառերի, ինչպես նաեւ **ավուն** ածանցի միջոցով՝ **պակաս խէլիւնք, շատ դաշմնգ', կ'ըյտնվուն:**

Շարահյուսական կառուցվածքը արտահայտվում է համեմատելի առարկայի բացառական հոլովաձեւով՝ **էտ ծին էս ծիյան քավթառ ա:**

Գերադրական աստիճանին եւս հատուկ է վերլուծական կառուցվածք. կազմվում է **ամմէն** եւ **լօխ** դերանունների բացառական հոլովաձեւի հարադրությամբ՝ **ամմէնաթմնգ'ը, ամմէնապը'նղը, լուխճաց/լօխճաց պէրակը:**

Հարաբերական ածականները սովորաբար կազմվում են գոյականներից՝ **է/ի** ածանցով՝ **արկաթ-ըրկաթէ, քար-քարէ, պիւրթ-պըրթի, փնդ-փնդի:**

Փոխանվանական կիրառության դեպքում ածականը հոլովվում է **էն/ին** (որոշյալ առման դեպքում) եւ **ու** (անորոշ առման դեպքում) հոլովումներով՝ **պառավը/պառավ, պըռավէն/պըռավու, պըռավէն անա/նը-ստա/պըռավու անա/նը-ստա, պըռավէն անավ/նը-ստավ/պըռավու անավ/նը-ստավ:**

**ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ:** Բարբառում թվականները լինում են քանակական, դասական, բաշխական, չափական, անձներական, կոտորակային, բազմապատկական:

Քանակական թվականներն են. միավորներ՝ **մի/մին, էրկու, իրը'ք/իրէք, չօրս/չծրք', հէնգ', վէց(ց), օխտը, օթ, իննը (օխտը եւ իննը** թվականները հանդես են գալիս միայն հոդով), տասնավորներ՝ **տասս(ս)ը, տըսնը-**

*մին/տասնըմին, տըսնըերկու, տըսնըիրժք, տըսնը-  
ջօրս, տըսնըհէնգ, տըսնըվէց, տըսնըօխտը, տըսնը-  
օթ, տըսնըինը, քըսան, յէրէս(ս)ուն/ըրէս(ս)ուն/հի-  
րծս(ս)ուն/ իրէս(ս)ուն, քըռաս(ս)ուն/քառաս(ս)ուն, ից-  
ցուն/իցծուն/իծծուն/, վացցուն/վացծուն/վածծուն/,  
ուխտընաս(ս)ուն/ ուխտունաս(ս)ուն, ութաս(ս)ուն, ին-  
նաս(ս)ուն/իննաս(ս)ուն:* Մյուս թվականներից են՝ *հն-  
րիւր, հազ(զ)ար/ հըզ(զ)ար/հըզ(զ)էր/հիզ(զ)էր մի-  
լծն/միլյօն/մըլյօն, միլլարդ/մըլլարդ:*

*Տաս(ս)ը* թվականը միավորներին միանում է հնչ-  
յունափոխված եւ անհնչյունափոխ արմատներով՝ *տըս-  
նը/տասնը*, որտեղ վերականգնվում է գրաբարյան *ս*  
վերջնահանգը:

Երբեմն գործածվում է նաեւ *քաց(ց)ուն/ քած-  
(ծ)ուն/քաթսուն* տասնավորը, որ *քառասուն* թվակա-  
նի հնչյունափոխված ձեւն է՝ *իցցուն* եւ *վացցուն* թվա-  
կանների համաբանությամբ, սակայն ունի այլ իմաստ՝  
*շատ, ահագին*, ինչպես՝ *քացցուն հը՛տէ ասալ ըմ*  
(շատ եմ ասել):

Տասնավորները միավորներին միանում են նախա-  
դաս շարադասությամբ:

Դասական թվականները, բացառությամբ *առա-  
ջին-ընդջի/առաջի/ըռաջի* թվականի, արտահայտվում  
են քանակական թվականների եւ թուրքերենից փո-  
խառնյալ *ինջի/ընջի/հինջի* մասնիկի հարադրությամբ՝  
*վէց(ց)ինջի/վէց(ց)ընջի, իրը՛ք(հ)ինջի:*

Այս թվականների իմաստը նախադասության մեջ  
կարող է ներկայացվել նաեւ քանակական թվականնե-  
րի տարբեր հոլովածներով՝ *փոխվալ ա հէնգ՛ը* (փո-  
խադրվել է հինգերորդ դասարան), *վեցըմըն ա սըվը՛-  
րում* (վեցերորդ դասարանում է սովորում), *օխտան*  
*տոն ա յը՛կալ* (յոթերորդ դասարանից հեռացել է):  
Նոր սերնդի խոսվածքում երբեմն գործածվում են գրա-  
կան հայերենի *օրթ/թորթ/էրորթ* ածանցներով կազմ-  
ված ձեւերը՝ *ջօրթթ, յէրգըրթթ, հինգ՛էրթթ:*

Թվականների մյուս տեսակներն արտահայտվում  
են.

- բաշխականները՝ քանակականների կրկնու-  
թյամբ՝ *մին-մին, հէնգ- հէնգ, քըսան-քըսան:*

- չափականները՝ *անուց/անուց* ածանցով՝ *տըսսա-  
նուց, իրըքանուց, վըցցանուց:*

- բազմապատկականները՝ *տակ, պատեզ՛* բառերի  
հետ քանակականների հարադրությամբ՝ *հինգ՛ըտակ,  
հինգ՛ըպատեզ՛, վից(ց)ըտակ, վից(ց)ըպատեզ՛,*

- անձներականները *ը՛քան/էքան* ածանցով՝  
*հինգ՛ը՛քան/հինգ՛էքան, վըց(ց)ը՛քան/վից(ց)էքան:*

- կոտորակայինները՝ քանակական թվականների  
բացառականով (հայտարար) եւ ուղղական-հայցակա-  
նով (համարիչ)՝ *ջօրսան մինը* (մեկ չորրորդ), *քըսանան*  
*օթը* (ութ քսաներորդ):

Թվականները փոխանուն կիրառությամբ հոլով-  
վում են՝ տրականում թեքվելով *էն/ին* (որոշյալ առում)  
եւ *ու* (անորոշ առում) հոլովանիշներով՝ *օթը/օթ,*  
*օթէն/օթու, օթան/օթա, օթավը/օթավ:*

**ԴԵՐԱՆՈՒՆ:** Բարբառում դերանունները լինում են  
անձնական, ցուցական, հարցական-հարաբերական,  
որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Անձնական դերանուններն են՝ *յը՛ս/յըս/յէս,  
տու/տոն, ինք՛ը/ինքը, մուք, տուք/տոնք, նրան(ն)ք:*

Ցուցական դերանուններն են՝ *էս, էտ, էն, ըստի/իս-  
տի, (ը)տի/իտի, (ըն)դի/ինդի, էսքան, էտքան, էնքան,  
էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը՛դ/ըստեղ/ըստող,  
(ը)տը՛դ/(ը)տեղ/(ը)տող, (ըն)դը՛դ/(ըն)դեղ/ընդող:*

*էն* ցուցական դերանունը կիրառվում է նաեւ *նա*  
անձնական դերանվան փոխարեն:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝  
*հու(վ), հինչ, վէր/վը՛ր, (հ)ըշտը՛դ/ըշտեղ/հիշը՛դ/վըր-  
դեղ/վըրդը՛դ, հիշկան/հինչքան/հինչանք/հիշչա(ն)ք/  
հինչուք/հիշչուք, քանէ՛/ քանը՛/քանի, հիբ(ը)/հիբի/հի-  
բու/հէբ/հէփ, հուր, հօր, խէ՛խի, հունց(ը)/հունցու:*

Որոշյալ դերանուններն են՝ *ամ(մ)էն/ամը՛ն/  
ամ(մ)ան, ամ(մ)էնք՛ը/ ամը՛նք/ամանք՛ը, ան(է)զ՛ն/  
ամէզ՛ա/անմիզ՛ն/ամաքա/ամէք՛ա/ ան(է)կ՛ն ամմէն  
մին, լօխ, սաղ:*

Անորոշ դերանուններն են՝ *մի(ն), էրոնշ/ծրոնշ/ծրիշ,  
մը՛կալ/մէկալ, մի(ն) քանէ, փըլան, փըստան, փը-  
լանք՛նս/փալանք՛նս:*

Ժխտական դերանուններն են՝ *վէչ մինը, վէչ միի  
պէն:*

Փոխադարձ են *նրոնք, մինմինու/մինմինու* դերա-  
նունները:

Անձնական դերանունների սեռական հոլովածե-  
րը բարբառում գործածվում են որպես ստացական դե-  
րանուններ եւ փոխանվանաբար գործածվելիս կարող  
են հոլովվել, ինչպես՝ *իմը, քունը, իմին, քունան, նրան-  
նանը* եւ այլն:

Դերանունները ներկայանում են պարզ եւ բա-  
ղադրյալ կառուցվածքներով: Պարզ դերանուններ են՝ *յը-  
՛ս, տու, էս, էտ, էն, հիբ, հուր, քանէ, մին, լօխ, սաղ* եւ  
այլն: Բաղադրյալ դերանուններից համադրական բար-  
դություններ են՝ *ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ, էսչա(ն)ք, էտ-  
չա(ն)ք, էնչա(ն)ք, մը՛կալ (մէկ այլ),* հարադիր բարդու-  
թյուններ են՝ *վէչ մինը, վէչ մին պէն, ամմէն մի, մի(ն)  
քանէ,* կրկնավոր բարդություններ են՝ *նրոնք, մինմինու:*

Դերանունների մի մասը չեզոք է դեմքի նկատ-  
մամբ, ինչպես՝ *հիշկան, հուր, ըշտը՛դ, հիբ:*

Որոշ դերանուններ դեմքի գաղափար են հանդես  
բերում՝ հողերին միանալով, օրինակ՝ *ամմէն մինըս,  
վէշ մինըտ, սաղըս:*

Որոշ դերանուններ (հատկապես անձնական) ու-  
նեն դեմքի իմաստի լիակատար դրսեւորում, ինչպես՝  
*յը՛ս, տու, ինք՛ը, մուք, տուք, նրանք, էն:*

Ըստ թվի կարգի իմաստային արտահայտության՝  
բարբառում դերանունները բաժանվում են մի քանի  
խմբերի.

ա) դերանուններ, որոնք ունեն թվի կարգի լիակա-  
տար դրսեւորում, դրանք են՝ անձնական՝ *յը՛ս, տու,  
ինք՛ը*, ցուցական՝ *էս, էտ, էն, ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ,*  
հարցական-հարաբերական՝ *հու(վ), հինչ, ըշտը՛դ,* անո-  
րոշ՝ *էրոնշ, մը՛կալ, փըլան, փըստան, փըլանք՛նս:*

բ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ եւ եզակի  
իմաստ՝ *քանէ, մին, ամմէն մին, վէր, վէչ մինը, վէչ միի  
պէն,*

գ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ, հոգնակի  
իմաստ՝ *ամմէն, լօխ, սաղ, նրոնք, մինմինու, մին քանէ,*

դ) դերանուններ, որոնք ընդհանրապես չեզոք են  
թվի կարգի արտահայտության նկատմամբ՝ *էսքան, էտ-*

*քան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հունց, հիշկան, հիք, հուր, խէ:*

Ձեռաբանական մակարդակում հոգնակի թիվը ներկայանում է *ք, էր, նէ* հոգնակերտներով:

*Ք* թվանիշ թեքույթով կազմություններ ունեն միայն անձնական եւ ցուցական դերանունները՝ *յը՛ս-մուք, տու-տուք, ինք՛ը-հւրանք, էս-ըստըրանք/ըստահանք, էտ-ըտըրանք/ըտահանք, էն-ընդըրանք/ընդահանք* (Շաղախի եկթաբարբառ՝ *հուսողք՛/հուսողք՛էր, հուսողք՛/հուսողք՛էր, հունդողք՛/հունդողք՛էր*):

Մյուս դերանունների հոգնակին կազմվում է անվանական հիմունքներով. միավանկները ստանում են *էր*, բազմավանկները՝ *նէ* հոգնակերտները, որոնց նախորդում է ուղղական-հայցականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքը՝ *հու(վ)-հուվէր, հինչ-հինչէր, էրիւշ-էրիւշնէ:*

Ցուցական *ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ* եւ հարցական-հարաբերական *ըստը՛դ, հու(վ), հինչ* դերանունները կարող են ստանալ կրկնակի հոգնակերտ (*ուղղական-հայցականի հիմք + էր + ք*)՝ *ըստը՛դէրք, ըտը՛դէրք, ընդը՛դէրք, հուվէրք, ըստը՛դէրք, հինչէրք:*

Որոշ դերանուններ՝ *հունց, հոր, խէ*, բարբառում փոխանվանական կիրառություն չունեն եւ չեն հոլովվում:

Թեքվող դերանուններին հատուկ է հոլովման երկու տիպ՝ անվանական, երբ դերանուններն ստանում են գոյականներին հատուկ հոլովակերտներ (*մինը-մինին*), եւ դերանվանական, երբ դերանունների ուղիղ եւ թեք հոլովածները ներկայանում են տարարմատներով (*յը՛ս-իմ-ինձ*):

**Անվանական հոլովում:** Դերանունների մեծ մասին հատուկ են ուղիղ եւ թեք բոլոր հոլովածները (բացառությամբ ներգոյականի): Դրանք են՝ *ինք՛ը, էս, էտ, էն, հու(վ)* դերանունների հոգնակի ձեւերը (*հւրանք, (ը)ստըրանք, (ը)տըրանք, (ըն)դըրանք, հուվէրք*, եւ *էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ, ամմէն, ամմէն մի, լօխ, սաղ, մին, էրիւշ, մը՛կալ, մին քանէ, փըլան, փըստան, փըլանք՛ան, հինչ, վէր, ըստը՛դ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն* դերանունները: Սրանք բոլորն էլ ունեն չորսական հոլովածեւ, որոնք կազմվում են անվանական հոլովման սկզբունքներով. տրականը բաղադրվում է ուղղական-հայցականի հիմքից եւ հոլովական թեքույթներից, բացառականը եւ գործիականը հանդես են գալիս երկու կազմությամբ՝ պարզ (*ուղղական-հայցականի հիմք+վերջավորություն*) եւ վերլուծական (*տրական+անա/նը՛ստա (գործ.՝ անա/նը՛ստա)*) բառ մասնիկներ: Եթե խոսքը իրի է վերաբերում, բացառականի եւ գործիականի կազմությունը պարզ է, իսկ եթե անձի մասին է, կազմությունը վերլուծական է:

*Ըստըրանք, ըտըրանք, ընդըրանք, հւրանք, հուվէրք* դերանունները տրականում թեքվում են *ք/ց* հերթագայությամբ՝ *ըստըրանք, ըստըրանց, ըստըրանց անա/ նը՛ստա, ըստըրանց անա/նը՛ստա*:

*էն/ին* հոլովանիշով թեքվում են՝ *էսքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հիշկան, ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ, ամմէն, ամմէն մի, մին, լօխ, սաղ, մին քանէնը, էսհինչը, էտհինչը, էնհինչը, հինչ,*

*վէր, ըստը՛դ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն, էրիւշ, մը՛կալ, փըլան, փըստան, փըլանք՛ան* դերանունները՝ *էսքան(ը), էսքանէն, էսքանան/էսքանէն անա/նը՛ստա, էսքանա(ը)/էսքանէն անա/նը՛ստա*:

Մի շարք դերանուններ, որոնք թեքվում են *էն/ին* հոլովանիշով, անորոշ առման դեպքում թեքվում են *ու* հոլովանիշով, ինչպես՝ *էրիւշին տօնը-էրիւշու տօն, ըստըղէն ճիւղը - ըստըղու ճիւղ*:

Հարցական-հարաբերական *հիք* եւ փոխադարձ *հւրիւր, մինմինու* դերանունները ունեն թերի հոլովում:

*Հիք* դերանունը չունի գործիական հոլով, տրականը կազմվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման՝ *վա* հոլովանիշ թեքույթով, բացառականը ստանում է *անց* վերջավորությունը՝ *հիք, հիքվա, հիքանց*:

*հւրիւր* եւ *մինմինու* դերանունները գրաբարի նման (*իրերաց, միմեանց*) չունեն ուղղական հոլով, բացառականը եւ գործիականը կազմվում են վերլուծական եղանակով՝ *հւրիւր, հւրիւր անա/նը՛ստա, հւրիւր անա/նը՛ստա, մինմինու, մինմինու անա/նը՛ստա, մինմինու անա/նը՛ստա*:

Որոշ հարադիր բայերում պահպանվել է գրաբարյան *իրերաց* ձեւը՝ *հւրիւր(ն)ցան վաճէլ/անէլ/տալ/քըցի/ըղնէլ/ընցընէլ/ինի/կ՛ան*:

**Դերանվանական հոլովում:** Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս ուղղական-հայցական, սեռական եւ տրական հոլովներում, իսկ բացառականը եւ գործիականը կազմվում են անվանական հոլովման ընդհանուր սկզբունքներով:

Դերանվանական հոլովմամբ թեքվում են անձնական *յը՛ս, տու, մուք, տուք, ինք՛ը*, ցուցական *էս, էտ, էն*, հարցական-հարաբերական *հու(վ)* դերանունները, որոնց հոլովման առանձնահատկությունները առնչվում են ընդհանուր հայերենի դերանվանական հոլովման համակարգի հետ:

Անձնական *յը՛ս, տու, մուք, տուք* դերանուններն, ի տարբերություն մյուս բոլոր դերանունների, ունեն հնգական հոլովածեւ՝ ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Այս դերանունների սեռականը եւ տրականը համընկնում են գրաբարի հետ՝ *իմ-ինձ, քու-ք՛դ, մէր-մը՛գ, ծէր-ծը՛գ*: Եղած տարբերությունները պատմական հնչյունափոխության արդյունք են: Բացառականը եւ գործիականը ունեն համադրական կառուցվածք՝ *ինձանա, ինձանալ, ծըզանա, ծըզանալ*:

*Ինք՛ը* անձնական դերանունը սեռական հոլովածեւ չունի: Տրականը առնչվում է գրաբարյան *իրեան* հոլովածեւին՝ *հւրան*: Բացառականը եւ գործիականն ունեն վերլուծական կառուցվածք՝ *հւրան անա/նը՛ստա, հւրան անա/նը՛ստա*:

Որոշ դարձվածներում պահպանվել է գրաբարյան (*գ*)*ինքն-գինք՛ը* հայցական հոլովածեւը՝ *գինք՛ը ըսպանէլ/թափ տալ/հըվաքէլ/կուրցընէլ/շաղ տալ* եւ այլն, որտեղ *գինք՛ը* կրել է իմաստափոխություն եւ պարզապես նշանակում է մարմին:

Ցուցական *էս, էտ, էն* դերանունները ունեն չորսական հոլովածեւ, ինչպես անվանական հոլովումը: Դե-

րանվանական հոլովման առանձնահատկությունները արտահայտվում են տրական հոլովում՝ **ըստորա, ըտըրա, ընդորա** (Շաղախի եկթաբարբառ - **հնստհր, հնստհր, հնստհր**):

Բացառականը եւ գործիականը կարող են կազմվել եւ՛ համադրական, եւ՛ վերլուծական եղանակով՝ **ըստըրանա/ըստըրա անա/նը՛ստա, ըստըրանա/ըստըրա անա/նը՛ստա**:

Հարցական-հարաբերական **հու(վ)** դերանունը տրականում թեքվում է **վ/ր** հերթագայությամբ՝ **հու(վ)-հիր**: Տրական հոլովածեւը համապատասխանում է գրաբարյան սեռական հոլովածեւին՝ **ոյր**: Բացառականը եւ գործիականը ունեն վերլուծական կառուցվածք՝ **հիր անա/նը՛ստա, հիր անա/նը՛ստա**:

**ԲԱՅ**: Ինչպես հայերենի մյուս դրսետրոմներում, Ղարաբաղի բարբառում եւս բայն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի եւ սեռի քերականական կարգեր: Սրանցից յուրաքանչյուրը եւ՛ իմաստային, եւ՛ կառուցվածքային տեսակետից հիմնականում մնում է ընդհանուր հայերենի կաղապարներում:

Բայերն ըստ կազմության բաղադրություններ են, որոնք լինում են երկու բնույթի՝ համադրական եւ հարադրական: Համադրական կազմությունների կառուցվածքը բնութագրվում է **հիմք+բայական վերջավորություն** կաղապարով:

Բայերի հիմքը կարող է լինել անածանց եւ անհավոր, որոնց անորոշ ձեւում հաջորդում են **ալ/նլ, էլ** եւ **իլ** բայական վերջավորությունները:

Որպես անածանց հիմք կարող է հանդես գալ բայարմատ (**մըն-ալ, խոս-էլ, կարթ-իլ**), անվանական արմատ (**կիպտ-իլ, քար-էլ**), փոխառյալ արմատ (**յըհմր-իլ, նաղդ-էլ**), կրկնավոր արմատ (**հըռհըռ-ալ, փըրփըր-էլ**):

Ածանցավոր հիմքերի կառուցվածքն է՝ **արմատ+բայածանց**: Բայածանցները բաժանվում են երեք խմբի՝ հիմքակազմ, կերպանիշ եւ սեռանիշ: Բարբառի հիմքակազմ ածանցներն են՝ **ան, էն, ըն, ն, չ**, որոնցից առաջինները համապատասխանում են գրաբարի **ան, են, ն**, իսկ վերջինը՝ **չ** բայածանցներին: Հին հայերենի **ն** բայածանցը սովորաբար բարբառում մնացել է անփոփոխ՝ **առնուլ-առնել, դնել-տինիլ**, մինչդեռ **ան** եւ **են** բայածանցների **ա** եւ **ե** ձայնավորները մեծամասամբ ընկել են կամ հնչյունափոխվել՝ **տեսանել-տը՛սնալ, հասանել-հըսնել, անկանել-ընկել/ընգընել, մոտենալ-մոտանալ, գտանել-քըթենալ**: Որոշ բայերում **ան**-ը մնացել է անփոփոխ՝ **հասկանալ-հըսկանալ, քարանալ-քըրանալ**: Այս բայածանցը կարող է հանդես գալ նաեւ մի շարք արմատների հետ՝ կազմելով նոր բայահիմքեր, ինչպես՝ **քաշ+ան+ալ-քըշանալ, դամազ+ան+ալ-դըմազանալ**:

2 բայածանցը ընդհանուր առմամբ մնացել է անփոփոխ՝ **թըռչիլ, օռչիլ, փախչիլ**:

Հին հայերենի **նչ, աչ, անչ**, բայածանցները բարբառում սովորաբար չեն գործառնում: Թերեւս կարելի է նշել **ճանաչել-ճընն(ն)չիլ, մեղանչել-մըղանչիլ** բայերը:

Գրաբարում հազվադեպ գործածություն ունեցող բազմապատկական-կերպանիշ **ատ, օտ** բայածանցները բարբառում խիստ կենսունակ են՝ **կուտըր-ատ-էլ, շըղշուղ-ատ-էլ, ճըկճուկ-ատ-էլ, ծըն-օտ-էլ, պըտըռ-**

**օտ-էլ, ըսպըն-օտ-էլ**: Միաժամանակ երեւան են գալիս **օր/ծր** եւ **կօտ** կերպածանցները, որոնք չկային գրաբարում՝ **պըչպըչ-օր-էլ, կուղկըղ-օր-էլ, տըշտըշ-ծր-էլ, կընընչ-կօտ-էլ, թըռչըն-կօտ-էլ**:

Սեռանիշ ածանցներն են՝ **-ըվ/վ** եւ **-ցըն/ըց(ը)ն**:

Կրավորական **-ըվ/վ** բայածանցը, որ ավանդված չէ գրաբարում, սովորաբար դրվում է ներգործական սեռի բայերի վրա: **է** եւ **ի** լծորդության բայերի դեպքում այն դրվում է անորոշի հիմքի, **ա** լծորդության բայերի դեպքում՝ երբեմն նաեւ անցյալի հիմքի վրա՝ **օտել-օտ-վել, շինիլ-շինվիլ, աղալ-աղվել/ըղացվել**:

Պատճառական **-ցըն/ըց(ը)ն** բայածանցը համապատասխանում է գրաբարի **ուցան** ածանցին: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, որտեղ բոլոր բայերի պատճառականը կազմվում է անցյալի հիմքից, բարբառում **ցըն/ըց(ը)ն** ածանցը դրվում է անորոշի հիմքի վրա՝ **ծիծաղել-ծիծաղեցուցանել-ծըծըղց(ը)նել**: Բացառություն են կազմում **ան, ըն, ն** ածանցներով բայերը, որոնց դեպքում պատճառական բայածանցը դրվում է անցյալի հիմքի վրա՝ **տըմանալ-տըմըց(ը)նել, ընցընել-ընցըց(ը)նել, հըսնել-հըսըցընել**:

Հարադրական կազմությունները բարբառում ունեն լայն գործածություն: Հարադրության առաջին մասում գործառնում են բնիկ եւ փոխառյալ բառեր, իսկ երկրորդ մասում՝ մի շարք բայեր, ինչպես՝ **խաղ անել, ինչիմիշ ինիլ, հօփ կնլ, սը՛րտ տինիլ, յը՛ր ածել** եւ այլն:

**Տալ** բայի եւ որեւէ այլ բայի անորոշ ձեւի հարադրությամբ արտահայտվում է պատճառականության իմաստ՝ **ասել տալ, խօսել տալ, օտել տալ, ըսպանել տալ**:

Բարբառում բայի բոլոր ձեւերը կազմվում են երեք հիմքից՝ **անորոշի հիմք, անցյալի հիմք, անորոշ դերբայ** (դերբայական հիմք):

Սրանցից հիմնական են համարվում առաջինները, որոնք կազմությամբ լինում են պարզ կամ արմատական եւ բաղադրյալ: Անորոշի հիմքը պարզ է, երբ գուրկ է բայածանցներից՝ **աղ-ալ, խըմ-էլ, կարթ-իլ**: Անորոշի բաղադրյալ հիմքում բայարմատների հետ գործառնում են բայածանցները՝ **մուտ+ան-ալ, առ+ն-էլ, քըթ+էն-ալ, ընց+ըն-էլ, թըռչ+իլ, ըստըկ+օտ-էլ, կուտըր+ատ-էլ, կըրկըրտ+օր-էլ, կընընչ+կօտ-էլ, ըսպան+վ-էլ, չուք+ըց(ը)ն-էլ**:

Անցյալի հիմքը պարզ է, երբ համընկնում է բայարմատին: Անցյալում այդպիսի հիմք ունեն **էն, ըն, ն, չ** ածանցներով բայերը, որոնցից ածանցները դուրս են ընկնում, ինչպես՝ **քըթենալ-քըթ, ընգընել-ընգ, տը՛ս-նալ- տը՛ս, օռչիլ-օռ**: Անցյալի բաղադրյալ հիմքը լինում է բուն հիմքածանցավոր եւ հերթագայական: Հին հայերենի **ի** թույլ բաղադրիչով անցյալի հիմք բարբառին հատուկ չէ: Բուն հիմքածանցավոր հիմքի կառուցվածքն է՝ **անորոշի հիմք+հիմքածանց**: Որպես հիմքածանց՝ հանդես է գալիս **ց-ն**, որին կարող են նախորդել՝ **ա, ը՛, է** լծորդ ձայնավորները: Այդպիսի հիմք ունեն **ա** լծորդության բայերը եւ **է, ի** լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ **աղալ-ըղաց, մընալ-մընաց, խըմել-խըմը՛ց, ըսպըն-օտել-ըսպընտըր՛ց, խաշվիլ-խըշվեց**: Հերթագայական հիմքը կազմվում է բայածանցների եւ անցյալի հիմքա-

ծանցների հերթագայությունների միջոցով: Դրանք են.

ա) *և/ց* - անցյալի հիմքը այդպիսի հերթագայություններ են կազմում *ան* ածանցով բայերը՝ *մըծանալ-մըծաց, թիթըվանալ-թիթըվաց, հըստանալ-հըստաց*:

բ) *և/ր* - այդպիսի հերթագայություն ունեն պատճառական ածանց ունեցող բայերը՝ *մուտըցընել-մուտըցըր, հըսըցընել-հըսըցըր, շըշկըռըցընել- շըշկըռըցըր, խուսըցընել-խուսըցըր*, ինչպես նաև որոշ անկանոն բայեր՝ *տանել-տար, տիկնիլ-տիր*: Մի քանի անկանոն բայերի անցյալին բնորոշ է տարահիմքությունը՝ *օտել-կեր, տալ-տուվ, կ'անլ-յը'կ*:

Անորոշ դերբայը իբրեւ հիմք (դերբայական հիմք) գրաբարում մասնակցում էր միայն ապառնի դերբայի կազմությանը՝ *թոչելոց, թոչելի*: Բարբառում այս հիմքից են կազմվում ապառնի դերբայը (բացառությամբ *և, ան, էն, ըն, ցըն/ըցըն* ածանցներով բայերի)՝ *խուսըլան, կըրթիլան, ըղըլան*, պայմանական եղանակի ժեստականը՝ *աղալ չըմ, ասել չըմ*, արգելական հրամայականը՝ *ք'իսիլ մէլ, մընալ մէք'*, իսկ Շաղախի ենթաբարբառում՝ նաև ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակները՝ *ասիլ ըմ լան, բիղը/բեղը ասիլ ըմ լան*:

Բարբառում բայերի սեռի իմաստաձեւային հատկանիշները արտահայտվում են ներգործական, կրավորական եւ չեզոք սեռերի միջոցով՝ հին հայերենի համեմատությամբ երեւան հանելով մեծ տարբերություններ:

Հայտնի է, որ գրաբարում բայական սեռի կարգը արտահայտվում էր լծորդ ձայնավորների, ինչպես նաև ժամանակաթվադիմանիշ վերջավորությունների միջոցով, ինչպես՝ *գրեմ* (ներգործական սեռ)- *գրիմ* (կրավորական սեռ), *աղաց* (ներգործական սեռ) - *աղացալ* (կրավորական սեռ): Հաճախ էլ նույն բայաձեւը արտահայտում էր եւ՝ ներգործական, եւ՝ կրավորական սեռերի իմաստներ. օրինակ, *հեղու* նշանակում էր եւ՝ *թափում է*, եւ՝ *թափվում է*, *աղայ*՝ եւ՝ *աղում է*, եւ՝ *աղացվում է*: Տվյալ դեպքում սեռերի հակադրությունը իրացվում էր նախադասության մեջ: Հին հայերենում սեռերը չէին տարբերակվում նաև *անցյալի անկատար* ժամանակաձեւում, իսկ դերբայները ընդհանրապես չունեին սեռի ձեւաբանական արտահայտություն: Արեւմտյան խմբակցության որոշ բարբառներ մասամբ պահպանել են գրաբարյան առանձնահատկությունները, մինչդեռ արեւելյան խմբակցության բարբառներում, այդ թվում եւ Դարաբաղի բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում, սեռերի հակադրությունն հիմնականում արտահայտվում է *վ* սեռածանցի առկայություն - բացակայություն հատկանիշով: Այս ձեւաբանական միջոցը, որ հանդես է եկել դեռես ետգրաբարյան շրջանում, հետագայում գործածվել է գրեթե բոլոր բարբառներում:

*Վ* սեռածանցի միջոցով կրավորական սեռը հակադրվում է ներգործականին: Ընդ որում, *վ* ածանց կարող են ստանալ նաև անդեմ բայերը՝ *ըսպանվել, ըսպանվալ, ըսպանված, ըսպանվող, ըսպընվըլան* եւ այլն:

Սակայն *վ*-ն զուտ կրավորանիշ ածանց չէ, եւ բազմաթիվ բայեր *վ* ստանալիս արտահայտում են նաև չե-

զոք սեռի իմաստ: Այդպիսի բայերի մի մասը սովորաբար չեզոքության իմաստ ունի փոխաբերական նշանակության դեպքում, ինչպես՝ *ըզաղվել*- 1) *ազատվել* (կրավ.), 2) *ծննդաբերել* (չեզոք), *քամվել* - 1) *քամվել* (կրավ.), 2) *սնանկանալ* (չեզոք), եւ այլն:

Չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաև անդրադարձություն եւ փոխադարձություն ցույց տվող որոշ բայեր՝ *տըղըվարվել, պըտատվել, տը'սնըվալ*:

Որոշ բայեր չունեն իրենց սկզբնատիպ՝ չեզոք թե ներգործական, ձեւերը եւ գործածվում են միայն *վ* ածանցով՝ *կ'ընգ'անտվել, խըղաղվել, կ'իժվիլ, հըմ-բանըցվիլ*:

Սեռածանց կարելի է համարել նաև պատճառական *ցըն/ըցըն* ածանցը, որի միջոցով հիմնականում չեզոք սեռի բայերից կազմվում են ներգործական սեռի, իսկ ներգործական սեռի բայերից՝ պատճառական սեռի բայեր՝ *թիլանալ-թիլըցընել, մընալ-մընըցընել, փախչիլ-փըխչըցընել, օտել-ուտըցընել, խըմել-խըմըցընել*:

Բայի անդեմ ձեւերը բարբառում ներկայանում են հետեւյալ տեսակներով՝ անորոշ՝ *խօսել, հանրփիլ, աղալ*, անկատար՝ *խոսում, հանրփում, աղում* (Հադրուքի եւ Շաղախի ենթաբարբառներ՝ *խուսէս* (Շաղախ՝ *խուսիս*), *հիրփիս, ըղաս*), վաղակատար՝ *խօսալ, հանրփանլ, աղալ/ըղացալ*, հարակատար՝ *խօսած, հանրփած, աղած/ըղացած*, ենթակայական՝ *խօսող, հանրփող, աղող/ըղացող*, ապառնի՝ *խուսուլան/խուսուլական, հիրփիլան/հիրփիլանլան, ըղըլան/ըղըլական*, համակատար՝ *խուսելիս/խուսելիս, հիրփիլիս/հիրփիլիս, ըղալիս/ըղալիս*:

Հին հայերենի անորոշ դերբայի հինգ՝ *ա(լ), է(լ), ի(լ), ու(լ), ո(լ)* լծորդություններից բարբառում կայունացել են միայն երեքը՝ *ա(լ)/ան(լ), է(լ), ի(լ)*: Շաղախի ենթաբարբառում *է(լ)* լծորդությամբ բայերը ենթարկվում են *ի(լ)* լծորդության՝ *ասել-ասիլ, խըմել-խըմիլ*:

Գրաբարի բայերը շատ հաճախ լծորդություններով չեն համընկնում բարբառի համապատասխան բայերի հետ, ինչպես՝ *տեսանել-տը'սնալ, թողուլ-թողնել, զարթնուլ-զո'րթնանալ* եւ այլն: Ընդհանուր առմամբ անփոփոխ է *ա* լծորդությունը՝ *բանալ-պէնալ, աղալ-աղալ, բարձրանալ-պիցըրանալ, գողանալ-կ'ուղանալ, մնալ-մընալ*:

Անորոշ դերբայը ունի թե՛ բայական-դերբայական, թե՛ անվանական կիրառություններ: Բայական-դերբայական նշանակությամբ, ինչպես նշել ենք վերելում, այն մասնակցում է ապառնի դերբայի եւ որոշ ժամանակաձեւերի կազմությանը:

Նախադասության մեջ հանդես գալով՝ անորոշ դերբայը հոլովվում է *ի(ն)* հոլովանիշ թեքությամբ՝ *օտել(ը)-ուտելի(ն)-ուտելա(ն)-ուտելալ(ը)*: Շարահյուսական մակարդակում այն ներկայանում է տարբեր պաշտոններով. ինչպես՝ *Պատ տիկնիլ լան փէշակ ա* (ենթակա), *Մըռնէլի վախտը յը'կալ ա, էլլան լիզոնս ուրան չի քաշոն* (հատկացուցիչ), *Էս ճուրը խըմէլի ճուր ա* (որոշիչ), *Տու խօսէլը գո'ղոն չըս* (ուղիղ խնդիր), *Պա էս ապրէլ ա'* (վերադիր), *Էրկան նըստէլան վը'նները տըմբըրալ ա* (պատճառի պարագա), *Խըղճը տընջվիլանլ ապրալ ա, տընջվիլանլ մը'ռալ* (ձեւի պարագա), *Ուտելի հը'տե*

գ'անքը կըտա (նպատակի պարագա), *Մըղակը պէնա-լըն բնատ, ըսկըսում ա ճըղճըղալը* (ժամանակի պարագա) եւ այլն:

Բայի անկատար ձեւը կազմվում է *ըմ/ում/իւմ/ամ/ւմ*, իսկ Հաղորդի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ *աս/ւն, էս, իս* վերջնամասնիկներով, որոնց բոլոր դեպքերում նախորդում է անորոշի հիմքը՝ *կարթիւ-կարթիւմ/կըրթիս, մընալ-մընում/մընաս, օռչիլ-օռչում/ուռչիս, մըծանալ-մըծանում/մըծընաս, հըսնէլ-հըսնըմ/հըսնէս/հըսնիս, ըստըկօտէլ-ըստըկօտում/ըստըկօտէս/ըստըկօտիս, ուտըցընէլ-ուտըցընըմ/ուտըցընէս/ուտըցընիս, տալ-տամ/տաս, կ'ւնլ-կ'ւնմ/կ'ւնս*:

Անկատար դերբայը մասնակցում է սահմանական եղանակի ներկա՝ *խըմում/խըմէս/խըմիս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղում/ըղաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվատըմ/հըվտաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն*, եւ անցյալի անկատար՝ *խըմում/խըմէս/խըմիս ի/իր/ար/ինք/իք/ին, աղում/ըղաս ի/իր/ար/ինք/իք/ին, հըվատըմ/հըվտաս ի/իր/ար/ինք/իք/ին* ժամանակաձեւերի կազմությամբ:

Վաղակատար դերբայը ձեւավորվում է *ալ/ւնլ* վերջնամասնիկով, որը համապատասխանում է հին հայերենի անցյալ դերբայի *եալ* վերջավորությամբ՝ *ծնեալ-ծընալ, գտեալ-քըթւնլ, գողացեալ-կ'ուղացալ*:

*Ալ/ւնլ* վերջավորությամբ կարող են նախորդել անորոշի եւ անցյալի հիմքերը՝ ի տարբերություն գրաբարի, որտեղ անցյալ դերբայը ձեւավորվում էր գլխավորապես անցյալ կատարյալի հիմքից:

Վաղակատարը անորոշի հիմքով են կազմվում է եւ *ի* լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ *շարէլ-շարալ, իփիլ-իփւնլ, էրվիլ-էրվալ, պըջպըջօրէլ-պըջպըջօրալ, նըստօտէլ-նըստօտալ*: Վաղակատարը անցյալի հիմքով են կազմվում 1) *ա/ւնլ* լծորդության պարզ, ինչպես նաեւ *ան, էն, ըն, ն* ածանցներով բայերը՝ *աղալ-ըղացալ* (նաեւ *աղալ*), *մընալ-մընացալ, տըմանալ-տըմացալ, քըթէնալ-քըթանլ, ընգընէլ-ընգալ, տըսնալ-տըսալ*, 2) պատճառական բայերը՝ *ուտըցընէլ-ուտըցըրալ, մըծըցընէլ-մըծըցըրալ, սըվըրցընէլ-սըվըրցըրալ*:

2 ածանցով բայերի վաղակատարը կազմվում է եւ՝ անորոշի, եւ՝ անցյալի հիմքերով՝ *սառչիլ-սառչանլ/սառալ, օռչիլ-օռչանլ/օռալ*:

Վաղակատար դերբայը անկախ կիրառություն չունի: Այն հանդես է գալիս օժանդակ բայի հետ՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար՝ *խըմալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղալ/ըղացալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվտալ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն* եւ անցյալի վաղակատար՝ *խըմալ ի/իր/ար/ինք/իք/ին, աղալ/ըղացալ ի/իր/ար/ինք/իք/ին, հըվտալ ի/իր/ար/ինք/իք/ին* ժամանակաձեւերը:

Հարակատար դերբայը, որի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով, բարբառում ձեւավորվում է *ած/ւնծ* վերջավորության եւ *անորոշի* կամ *անցյալի հիմքի* հարադրությամբ: Հարակատարի հիմքակազմությունը նույնն է վաղակատարի հետ՝ *շարէլ-շարած, իփիլ-իփւնծ, էրվիլ-էրված, պըջպըջօրէլ-պըջպըջօրած, նըստօտէլ-նըստօտած, աղալ-ըղացած* (նաեւ *աղած*), *մընալ-մընացած, տըսնալ-տըսած, տըմանալ-տըմացած, քըթէնալ-քըթանծ, ընգընէլ-ընգած, ուտըցը-*

*նէլ-ուտըցըրած, մըծըցընէլ-մըծըցըրած, սըվըրցընէլ-սըվըրցըրած, սառչիլ-սառչանծ/սառած, օռչիլ-օռչանծ/օռած*:

Հարակատար դերբայը ունի եւ՝ բայական, եւ՝ անվանական կիրառություններ: Այն մասնակցում է սահմանական եղանակի հարակատար եւ անցյալի հարակատար ժամանակաձեւերի կազմությամբ՝ *խըմած ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, խըմած ի/իր/ար/ինք/իք/ին, աղած/ըղացած ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղած/ըղացած ի/իր/ար/ինք/իք/ին, հըվտացած ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվտացած ի/իր/ար/ինք/իք/ին*: Փոխանվանական կիրառության դեպքում հարակատարը հոլովվում է *էն* (անորոշ առման դեպքում՝ *ու*) հոլովանիշ թեքությամբ՝ *խըմածը/խըմած, խըմածէն/խըմածու, խըմածէն անա/նըստալ/խըմածու անա/նըստալ, խըմածէն անալ/նըստալ/խըմածու անալ/նըստալ*:

Այս դերբայը շարահյուսական մակարդակում կարող է հանդես գալ որպես ենթակա (*Քըշէրվա կէրածը կօրած ա*), որոշիչ (*Պըռաված մարթըն էլ ա խօխա*), հատկացուցիչ (*Թըղվածէտ կընեգը հանց ա մարալ ինի*), վերաբերության խնդիր (*Մըռածէն անա թանրիփ կանին*), պատճառի պարագա (*Ըտըրա ըսածավը յըս շատ ըմ ուրխանում*), ուղիղ խնդիր (*Յըս ըրածըտ մընաս քըցիլ չըմ*), միջոցի խնդիր (*Ըրածավըտ պէն չի դիգիլ*), ձեւի պարագա (*Աշկըր չըռած յէշնում ա*):

Ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ/ծղ*, որով այն նույնանում է գրաբարի նույն դերբայի հետ: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, այդ վերջավորությունը հիմնականում դրվում է ոչ թե անցյալի, այլ անորոշի հիմքի վրա՝ *կիր-օղ, հըսն-օղ, ուրխան-օղ, սառչ-ծղ, լըպըզտ-օղ* եւ այլն:

Ա լծորդության մի շարք բայերի ենթակայականը կարող է ձեւավորվել նաեւ անցյալի հիմքից, ինչպես՝ *աղալ-աղօղ-ըղացօղ, մընալ-մընօղ-մընացօղ, մըծալ-մըծանօղ-մըծացօղ*:

Ենթակայական բայի եղանակային ձեւերի կազմությամբ չի մասնակցում: *խըմօղ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, խըմօղ ի/իր/ար/ինք/իք/ին, աղօղ/ըղացօղ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, աղօղ/ըղացօղ ի/իր/ար/ինք/իք/ին, հըվատօղ/հըվտացօղ ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվատօղ/հըվտացօղ ի/իր/ար/ինք/իք/ին*, եւ այլ ձեւերը լայն տարածում չունեն:

Փոխանվանաբար կիրառվելիս ենթակայականը թեքվում է հարակատարի նման՝ որոշյալ առման դեպքում՝ *էն*, անորոշ առման դեպքում՝ *ու* հոլովանիշներով՝ *ասօղը/ասօղ, ըսօղէն/ըսօղու, ըսօղէն անա/նըստալ/ըսօղու անա/նըստալ, ըսօղէն անալ/նըստալ/ըսօղու անալ/նըստալ*:

Ենթակայական դերբայը նախադասության մեջ ներկայանում է իբրեւ ենթակա (*Ծնլ կ'ուղանօղ ծի էլ կըկ'ուղանա*), որոշիչ (*Տու օտօղ-խըմօղ մարթ ըս, ինծ լ'ալ կըսկանաս*), հատկացուցիչ (*Հիրփօղին տօնը տէրտակ կինի*), խնդիր (*Ըսօղէն ըսկանօղ բիդի ինի*):

Ապառնի դերբայի հիմքակազմությամբ (անորոշ դերբայից) բարբառը ընդհանուր առմամբ նույնանում է հին հայերենի հետ: Սակայն վերջինիս *օց* եւ *ի* մասնիկները փոխարինված են *-ան/ւնն, -ական/անն* վերջավորություններով՝ *ասէլ-ըսըլանն/ըսըլաննան, թըռչիլ-*

*թըռչիլան/թըռչիլանան, զըռռալ-զըռռըլան/զըռռըլական, ուրվալ-ուրվըլան/ուրվըլական, մուրթօտել-մուրթօտըլան/մուրթօտըլական:* Ստեփանակերտի եւ հարակից որոշ խոսվածքներում դրան զուգահեռ գործածվում են *-էլու, -ալու, -իլու* վերջավորությամբ ձեւերը՝ *ըսէլու, թըռչիլու, զըռռալու, ուրվալու, մուրթօտէլու*, որոնք գրական հայերենի ազդեցության արդյունք են:

Պատճառական եւ *ան, էն, ըն, ն* ածանցներով, ինչպես նաեւ որոշ պարզ բայերի ապառնին ձեւավորվում է անորոշի հիմքից՝ *խըմըցընէլ-խըմըցընան/խըմըցընական, ուտըցընէլ-ուտըցընան/ուտըցընական, մուտանալ-մուտընան/մուտընական, քըթէննլ-քըթիննան/քըթիննան, ըղնէլ-ըղնան/ըղնական, հըսնէլ-հըսնան/հըսնական, շինիլ-շիննան/շիննան, մընալ-մընան/մընական:*

Ապառնի դերբայը ունի միայն բայական կիրառություն. նրանից կազմվում են սահմանական եղանակի ապառնի եւ անցյալի ապառնի ժամանակաձեւերը՝ *խըմըլան/խըմըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմըլան/խըմըլական ի/իր/ար/ինք/իք/ին, ըղըլան/ըղըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, ըղըլան/ըղըլական ի/իր/ար/ինք/իք/ին, հըվըտըլան/հըվըտըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հըվըտըլան/հըվըտըլական ի/իր/ար/ինք/իք/ին:*

Համակատար դերբայը ունի *իս* վերջավորությունը, որը դրվում է անորոշ դերբայի վրա՝ *խըմէլիս, ըղալիս հըվըտալիս:* Անորոշի *լ*-ն հաճախ փոխարինվում է *յ*-ով՝ *խըմէլիս, ըղալիս, հըվըտալիս:*

Այս դերբայը հիմնականում ունի փոխանվանական կիրառություն՝ ժամանակի պարագայի դերով (*Ուտէլիս խօսէլ չըն*):

Ղարաբաղի բարբառն ունի հինգ եղանակաձեւ՝ սահմանական, ըղծական, պայմանական, հարկադրական, հրամայական, որոնցից յուրաքանչյուրը մյուսներին հակադրվում է իր ուրույն հատկանիշներով:

Սահմանական եղանակը մյուսներին հակադրվում է օժանդակ բայի առկայությամբ (բացառությամբ անցյալ կատարյալի), ըղծական, պայմանական, հարկադրական եղանակները հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով. ըղծականը զուրկ է եղանակիչից, պայմանականին բնորոշ է *կ/կը*, հարկադրականին՝ *բիդի/բըդի/բէդի/պէտի/պըտի/պիտի/բէդմա/պէտմա* եղանակիչը: Հրամայական եղանակը ունի միայն երկրորդ դեմք, որ ընդգծվում է հատուկ վերջավորություններով եւ շեշտի ուժգին արտաբերմամբ:

Նշված եղանակաձեւերը տարբեր են նաեւ ժամանակաձեւերի քանակով. սահմանական եղանակն ունի ինը ժամանակաձեւ՝ ներկա՝ *ասում ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի անկատար՝ *ասում ի/իր/ար/ինք/իք/ին*, հարակատար՝ *ասած ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի հարակատար՝ *ասալ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի վաղակատար՝ *ասալ ի/իր/ար/ինք/իք/ին*, ապառնի՝ *ըսըլան/ըսըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն*, անցյալի ապառնի՝ *ըսըլան/ըսըլական ի/իր/ար/ինք/իք/ին*, անցյալ կատարյալ՝ *ըսըցէ, ըսըցէր, ասից, ըսըցէ(ն)ք, ըսըցէք, ըսըցէն*, որոնք բացի վերջինից, կազմվում են համապատասխան դեր-

բայներից եւ օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձեւերից: Անցյալ կատարյալն ունի ինքնուրույն ձեւաբանական արտահայտություն. կազմվում է անցյալի հիմքից՝ հատուկ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով:

Ըղծական, պայմանական, հարկադրական եղանակներին հատուկ է երկուական ժամանակաձեւ՝ ապառնի եւ անցյալ, որոնք կազմվում են անորոշի հիմքից՝ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով. ըղծական ապառնի՝ *ասիմ, ասիս, ասէ, ասի(ն)ք, ասիք, ասին*, պայմանական ապառնի՝ *կասիմ, կասիս, կասէ, կասի(ն)ք, կասիք, կասին*, հարկադրական ապառնի՝ *բիդի ասիմ, բիդի ասիս, բիդի ասէ, բիդի ասի(ն)ք, բիդի ասիք, բիդի ասին*, ըղծական անցյալ՝ *ըսի, ըսիր, ասար, ըսի(ն)ք, ըսիք, ըսին*, պայմանական անցյալ՝ *կըսի, կըսիր, կասար, կըսի(ն)ք, կըսիք, կըսին*, հարկադրական անցյալ՝ *բիդի ըսի, բիդի ըսիր, բիդի ասար, բիդի ըսի(ն)ք, բիդի ըսիք, բիդի ըսին*:

Շաղախի ենթաբարբառում օժանդակ բայի անցյալի ձեւեր չկան. անցյալի անկատար, անցյալի հարակատար, անցյալի ապառնի ժամանակաձեւերի իմաստը արտահայտվում է ներկայի ձեւերի եւ *լնլ* բայի հարադրությամբ՝ *խըմիս ըմ լնլ, խըմած ըմ լնլ, խըմըլան/խըմըլական ըմ լնլ*, իսկ անցյալը՝ *խըմալ ըմ լնլ*, խոսքի մեջ արտահայտում է նաեւ անցյալի վաղակատարի եւ անցյալ կատարյալի իմաստներ: Նույն ձեւով ըղծական անցյալի եւ պայմանական անցյալի կառուցվածքը բնութագրվում է *անորոշ դերբայ+օժանդակ բայի ներկայի ձեւեր+լնլ* կաղապարով՝ *խըմիլ ըմ լնլ*, որից *բիդը/բէդը* եղանակիչով կազմվում է հարկադրական անցյալը՝ *բիդը/բէդը խըմիլ ըմ լնլ*:

Հրամայական եղանակի հոգնակին բոլոր դեպքերում ձեւավորվում է անցյալի հիմքից՝ *շինըցէք, մընացէք, ըսըցէք, փախէք/փըխցէք*:

Եզակի հրամայականը անորոշի հիմքով են կազմում *է, ի* լծորդության պարզ եւ բազմապատկական, *չ* եւ կրավորական ածանցներով բայերը՝ *կարթի, խըմէ, ըսպանվէ, կուտըրանտէ, օնջի*, ինչպես նաեւ *ա/ան* լծորդության պարզ բայերը՝ *անղա, մընա, հըվանտա*:

Մյուս բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքից՝ *մուտաց, քըթիր, ընցէր, հըսէր, պիցըցըրոն*:

Բարբառում, ինչպես հայերենի մյուս դրսևորումներում, բայի դեմքի եւ թվի իմաստները ներկայանում են միեւնույն դիմաթվանիշ վերջավորություններով, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են նաեւ ժամանակի իմաստ: Այդ վերջավորությունները բաժանվում են վեց խմբի՝ օժանդակ բայի ներկայի ձեւերի՝ *ըմ/ում, ըս, ա, ը(ն)ք, ըք, ըն*, օժանդակ բայի անցյալի ձեւերի *ի, իր, ար, ի(ն)ք, իք, ին*, ըղծական ապառնու՝ *ամ/իմ, աս/իս, ա/է, ա(ն)ք/ի(ն)ք, աք/իք, ան/ին*, ըղծական անցյալի՝ *ի, իր, ար, ի(ն)ք, իք, ին*, անցյալ կատարյալի՝ *է, էր, -ալ, է(ն)ք/ի(ն)ք, էք/իք, էն/ին*, եւ հրամայական եղանակի՝ *ա, է, ի, էր, իր, ու, օ* (արմատ), *էք/իք*: Հրամայականի այս վերջավորություններին նախորդում են.

ա) *ա*-ին՝ *ա* լծորդության պարզ բայերի անորոշի հիմքը՝ *անղա, մընա, ըրվա*,

բ) է-ին՝ է լծորդության պարզ, կրավորական եւ բազմապատկական բայերի անորոշի հիմքը՝ **խըմէ, ըսպանվէ, ծըռմըռատէ,**

գ) ի-ին՝ ի լծորդության պարզ, կրավորական եւ չ ածանցով բայերի անորոշի հիմքը՝ **կախի, շինվի, փախչի,**

դ) էր/իր - ին՝ էն, ըն, ն ածանցներով բայերի, ինչպես նաեւ չ ածանցով որոշ բայերի անցյալի հիմքը՝ **բըթիր, ընգէր, հըսէր, փախէր, կօրէր,**

ե) ու-ին՝ պատճառական բայերի անցյալի հիմքը՝ **մըծըցըրո՛ւ, խըմըցըրո՛ւ,**

զ) թ-ին՝ ան ածանցով եւ անկանոն բայերի անցյալի հիմքը՝ **մուտաց, մըծաց, տիր, պէր,**

է) էք/իք՝ հոգնանիշ ընդհանուր վերջավորությանը նախորդում է բոլոր բայերի անցյալի հիմքը՝ **ըղացէք, հըսէք, կալիք, մընըցըրէք, տըմացէք** եւ այլն:

Ու ձայնավորով վերջացող բառերին հաջորդող օժանդակ բայից առաջ լսվում է **վ՝ ծախու վա, մարթու վա,** իսկ մյուս ձայնավորներով վերջացող բառերից հետո՝ **յ ձայնավորը՝ ըրկաթէ յա, կօզնի յա** եւ այլն:

Բարբառում ժխտական խոնարհումը արտահայտվում է **չ(ը), վէչ, մէլ/միլ/մէր/միր, մէք/միք** մասնիկների միջոցով, որոնք համապատասխանում են հին հայերենի **չ, ոչ, մի** մասնիկներին:

Օժանդակ բայով կազմվող բոլոր ժամանակների ժխտականը արտահայտվում է չ մասնիկով, որ դրվում է դերբայից հետո հանդես եկող օժանդակ բայի վրա՝ **աղում չըմ, աղում չի, աղալ/ըղացալ չըմ** եւ այլն: Օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում լինում է **չի՝** սպասելիք **չա-ի** փոխարեն՝ **ասում ա-ասում չի, շիննալ ա-շիննալ չի:**

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ դերբայից եւ օժանդակ բայի ժխտական ձեւերից՝ **կասիմ-ասէլ չըմ, կըսիմ-ասէլ չի:** Ընդ որում, ապառնի ժխտական ձեւերում օժանդակ բայը կարող է ունենալ նաեւ նախադաս գործածություն՝ **շօնը գօռնավ վըրս չըն տանէլ, անօդ-թօղօդ ախճիգը տանը չի մընալ:**

Մյուս ժամանակների (բացառությամբ արգելական հրամայականի) ժխտականը արտահայտվում է **վէչ** մասնիկով, որ ընդհանուր առմամբ գործառնում է խոնարհվող բայից հետո՝ **հըսնիմ վէչ, հըսնի վէչ, բիդի հըսնիմ վէչ, հըսէ վէչ** եւ այլն:

Ըղծական եղանակում երբեմն **վէչ** մասնիկը գործածվում է նախադաս (հատկապես անեծքներում)՝ **վէչ հըսնիս ումէդիտ, վէչ տըքսնաս խօնցըտ:**

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է նաեւ **չը** մասնիկով, որ գործառնում է եղանակիցից անանջատ՝ **չըբիդի ասիմ, չըբիդի ըսի:**

Արգելական հրամայականը բաղադրվում է անորոշ դերբայից եւ **մէլ/միլ/մէր/միր** (եզակի), **մէք/միք** (հոգնակի) մասնիկներից, որոնք հիմնականում ունեն ետադաս կիրառություն՝ **խըմէլ մէլ, խըմէլ մէք:** Անորոշի լ-ն հաճախ սղվում է՝ **խըմէ մէլ, խըմէ մէք:**

Արգելական մասնիկը հարադիր բայերում գործառնում է անորոշ դերբայից առաջ՝ **տոնս մէլ կ'ան, տոնս մէք կ'ան:** Այս դեպքում անորոշի լ-ն մնում է անփոփոխ, իսկ արգելական մասնիկը ձայնավորով սկսվող բային

նախորդելիս կարող է պահպանել միայն **մ-ն՝ տոնս մէլ անէլ/տոնս մանէլ:** Հոգնակիում անորոշի վերջավորությունը փոխարինվում է արգելականի վերջավորությամբ՝ **տոնս մէք՝ անէլ/տոնս մանէք:**

Բարբառում գործածական են նաեւ մի շարք անկանոն եւ պակասավոր բայեր:

Անկանոն են **անէլ, առնէլ, պէնալ, պիրիլ, կ'ան, բըթէնալ, տինիլ, կ'ընալ, ինիլ, կէնալ, օնէլ, օտէլ, տալ, տանէլ, տըքսնալ** բայերը, որոնք հիմքակազմության օրինաչափություններից եւ խոնարհման ընդհանուր համակարգից շեղվում են հիմնականում անցյալ կատարյալում, անցյալի հիմքից կազմված ձեւերում եւ բուն հրամայականում:

Պակասավոր են **ըմ(էմ)** էական բայը, ինչպես նաեւ **կամ, անրժիմ** բայերը: Սրանցից առաջինը ունի միայն սահմանական եղանակի ներկա եւ անցյալ ժամանակաձեւերը՝ **ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն, ի, իր, ար, ինք, իք, ին:**

**Կամ** եւ **անրժիմ** բայերը ունեն միայն սահմանական ներկա ժամանակաձեւը՝ **կամ, կաս, կա, կանք, կաք, կան, անրժիմ, անրժիս, անրժի, անրժիք, անրժիք, անրժիս, անար, ունիք, ունիք, ունին:**

**Օնէլ** բայը **փակել, ծածկել, վերցնել** եւն նշանակություններով գործածվելիս անկանոն բայ է, իսկ **ու-նենալ** նշանակությամբ գործածվելիս պակասավոր է եւ ունի նույն ժամանակաձեւերը, ինչ **ըմ** էական բայը՝ **օնիմ, օնիս, օնէ, օնիք, օնիք, օնին, ունի, ունիր, օնար, ունիք, ունիք, ունին:**

Լայն գործածություն ունեն նաեւ երկրորդական բաղադրյալ ժամանակները: Դրանք հիմնականում կազմվում են անկատար, համակատար, հարակատար դերբայների եւ **ինիլ** բայի խոնարհված ձեւերի հարադրությամբ, ինչպես՝ **քըննում ըմ իննում/իլն/իննն, քըննիս ըմ իննում/իլն/իննն, քըքած ըմ իննում/իլն/իննն** եւ այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւեր են կազմվում նաեւ հարակատար դերբայի եւ **կամ** պակասավոր բայի հարադրությամբ, ինչպես՝ **քըքած կամ, քըքած կաս, քըքած կա:**

**ՄԱԿԱՐԱՅ:** Բարբառում մակբայները ըստ իմաստային խմբավորման լինում են՝ ժամանակի՝ **ըսօր(է)/ասօր/սօր(է)** (այսօր), **էք'նց/էք'նծ/ծք'նց** (վաղը), **ան(լ)ծր** (մյուս օրը), **մըհէնգ/միհէնգ** (հիմա), **յըրկէ/յէրէգ'ի** (երեկ), **կընօխէ/կընօխանց** (վաղուց), **քըշէրավ/քիշէրավ** (վաղ առավոտյան), **ծանքին/ծաքին/ծէք'ին** (արեւածագին), **ըստարէ/ըստըռնէ** (այս տարի), **հըռ(ն)է/հըռնու/հէրու/հըրնէ** (անցյալ տարի), **էգ-զան(ան)/էգզան(ան)/էգզանան/էգզանան/էյ-զանան** (միշտ), **հան(մ)** (դեռ), **ահէտ/անհան(ըմըս)/անէտը** (հետո), **կանօխ/կանուխ** (կանուխ), տեղի՝ **դըբէտ/դիբէտ/դըբէտ/դիբէտ** (դեպի ետ), **տիյըր/տըյըր** (վերել), **տիվէր/տըվէր/տուվէր** (ներքել), **տէս/տըքս** (այս կողմ), **տէն/տըքն** (այն կողմ), **տէմատէմ** (դեմառդէմ), **մօտէ/մօտի** (մոտիկ), ձեւի՝ **կամա(ն)ց** (կամաց), **ափալ-թափալ** (արագորեն), **գօռ(ռ)ավ** (գոռով), **գընգըլըխտան(ա)/գ'ինգըլըխտան(ա)** (կամաց-կամաց), **բիւր-դան/բիրդան** (խսկույն), **գ'իրթ** (հանկարծ), **ափաշկարա**

(բացահայտ կերպով), **թաթարյախնի/թանթարնի** (ծեռաց), **ղասիդ/ղաստի** (դիտմամբ), **չափի՝ շատ-շատ** (առավելագույն չափով), **հերիք/հերիք՝** (բավական), **պատառ** (մի քիչ), **բոլ-բոլ** (առատորեն) եւ այլն:

Որոշ մակբայներ ընդհանրական են, ինչպես՝ **առաջ** (տեղի եւ ժամանակի), **ճէլի** (ծեփ եւ ժամանակի):

Որոշ մակբայներ առաջացել են քերականական ձեւերից՝ **քըշէրավ, գոռավ, վըճնուր**:

Տեղի եւ ժամանակի մակբայների մի մասը կարող է հոլովվել, ինչպես՝ **տիյը՝ր-տիյը՝րէն-տիյը՝րան-տիյը՝րավը, քըսծը՝ր-քըսծը՝րէն/քըսծը՝րա-քըսծը՝րանց** եւ այլն:

**ԿԼԿ:** Ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, բարբառում եւս կապերը ըստ տեղի լինում են նախադրություններ եւ ետադրություններ, ըստ կազմավորվածության՝ իսկական, անիսկական եւ կապական բառեր:

Գրաբարի նախդիրները ընդհանուր առմամբ չեն պահպանվել, թերեւս որոշ կապակցություններում հանդես է գալիս **ի-ն՝ ծծորն ի յը՝ր, ծծորն ի վը՝ր, սարըն ի յը՝ր, սարըն ի վը՝ր**:

Նախադրությունները իսկական կապեր են՝ **բի-դի/բըդի/բըդն/դիբի/դըբն** (դեպի), **մինչը՝վ/մինչէվ** (մինչեւ), **առանց/ուռունց** (առանց), **չըբ(էլ)անը/չըրու/չըբօրանը** (մինչեւ):

Ի տարբերություն գրաբարի՝ բարբառում գերակշռում են ետադրությունները: Դրանցից իսկական կապեր են՝ **մըհար** (համար), **կըման(ցէ)/գ՝ուման** (բացի), **քիմի** (չափ, մեծությամբ), **(ը)գ՝ծրն/ը)գ՝օրա** (համեմատ), **(ը)բնաստ/ը)բախտ/ըբնթ** (հենց որ), **տը՝ղ/տըղ/տէղ** (փոխարեն), անիսկական կապեր են՝ **յըրա** (վրա), **նըման/մընան** (նման), **մաջին** (մեջ), **խաթըռն/խանթըռն/խաթըր/խանթըր** (հանուն), **քըշտէն** (կողքին):

Կապական բառեր են՝ **տոնս** (դուրս), **յը՝րը** (վերեւ), **վախտը** (ժամանակ), **առաջ** (առաջ), **հըճէ** (հեռու), **տի-յը՝ր** (վերեւ), **տիվը** (ներքեւ):

Կապերը պահանջում են ուղղական, տրական եւ բացառական հոլովներով խնդիրներ:

Ուղղական հոլովով խնդիր են պահանջում **առանց, մինչը՝վ, չըբէնը, բիդի, քիմի** կապերը՝ **առանց տօն, մինչը՝վ շէնը, չըբէնը բօստանը, բիդի քաղաք, գ՝նվ քիմի**:

Տրական հոլովով խնդիր են պահանջում **կօշտ** (ընդըրա կօշտը), **մըհար** (տատուն մըհար), **նըիը՝տ** (շանը նըիը՝տ), **հըճէ** (ըխճըկա հըճէ), **մաջին** (տանը մաջին), **յըրա** (ծառէն յըրա), **տակէն** (սարէն տակէն), **տը՝ղ** (ըսկընալին տը՝ղ), **նըման** (ինձ նըման), **դանդան** (կընգա դանդան), **անվան** (փողէն անվան): Այս կապերի մի մասը պահանջում է սեռական հոլովով խնդիր, երբ գործածվում է անձնական 1-ին եւ 2-րդ դեմքերի դերանունների հետ, ինչպես՝ **իմ անվան, քու տակէտ, ծեր մաջին, մեր քըշտէն**:

Բացառական հոլովով խնդիր են պահանջում **յը՝տը** (հըրսընքան յը՝տը), **հըճէ** (մըզանա-ծըզանա հըճէ), **կըման** (կընգանը անա կըման), **տէս** (շէնան տէս), **տէն** (ծառան տէն), **առաջ** (ընդըրանա առաջ):

**Առաջ** կապը ժամանակի իմաստով իբրեւ ետադրություն գործածվելիս կարող է ընդունել նաեւ ուղղական եւ գործիական հոլովներով խնդիրներ, ինչպես՝ **երկու օր**

**առաջ, վէց տարե՛ առաջ, օրավ՛ առաջ, շէփտավ՛ առաջ**:

Անիսկական կապերը նյութական իմաստով գործածվելիս կարող են հոլովվել՝ **մաջ-մաջին-մաջան-մաջավը**: Այս կապերին հատուկ է նաեւ հոդառությունը՝ **տակէս, տակէտ, տակէն, մաջիս, մաջիտ, մաջին** եւ այլն:

**ՇԱՂԿԱԳ:** Բարբառում շաղկապները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ համադասական եւ ստորադասական:

Համադասական շաղկապներ են՝ **ու, էլ (եւ, ու), համ (եւ), ամ(մ)ա/ամիա/համ(մ)ա** (բայց), **նա (ու, եւ), յա (կամ)**:

Ստորադասական շաղկապներ են՝ **վըր/վար/վը՝ր/վօր** (որ, որպեսզի, եթե), **թա վըր (եթե), կանց/կա(ն)ս/քան(ց)** (քան), **կօզի/կօզի/կծզի** (թեկուզ, թեեւ), **ան՝նր/ազ՝նր (եթե)**:

**ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ:** Բարբառը հարուստ է ձայնարկություններով, որոնք բաժանվում են հետեւյալ խմբերի. **զգացական՝ ախ, վալ/վոյ, վա՛շշ/վի՛շշ, ուհ/օհ, ամ(մ)ան, ջան, ուխա(յ) /օխա(յ), փնի-փնի՛հ, քըխ(ա), պօ՛րօ/վօ՛, պա/բա, կամային՝ փըխկ, փիշտ, ճի՛-ճի՛, բի՛ծի, (ա)չո, տըտըռռ, բնածայնական՝ թըռ(ռ), ճըռռ, վըզ(զ), տըզզ, փը՛շշ, միյավու, բն**:

**ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ:** Բարբառում գործածվող վերաբերականները ըստ արտահայտած իմաստի ներկայանում են հետեւյալ խմբերով. **հաստատական՝ հա (այո), պա հինչ (հիարկե), դիզ վըր (հորոք որ), երկբայական՝ հանլընթ/հանթընթ (երեկ), բնլ(թ)ան/բնլթն/բնլ(թ)ի/բնլի (թերեւս), սաբավ (իբր, իբրեւ), հանցա (կարծես), կաբուտը(բը)/բուտը(բը)/բուտտը(բը) (իբրեւ), սաստական՝ առնէ/առնի (թեպետեւ, հենց), լափ (հենց), սահմանափակման՝ կօնյա/գօնյա (գոնե, թեկուզ), մի-նակ/մէնակ/մինանկ (միայն), կամային՝ հանլ(մ)/հըլնլ(մ) (հապա), թօղ(է) (թող), ժխտական՝ չէ (ոչ), չըչէ-մին/չէչէմին/չիչէմին (ոչ մի դեպքում) եւ այլն:**

**ՇԱՐԱՅՈՒՆԱԿԱՆ:** Շարահյուսական կառուցվածքով բարբառը ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ հանդես բերելով արեւելահայերենին բնորոշ հատկանիշներ: Այնուամենայնիվ, կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ.

- Հարցական նախադասություններում հարցը հիմնականում դրվում է օժանդակ բայի վրա՝ **խէ յը՛ս ասալ, հինչ ը՛ն շինիս** (ինչո՞ւ ես ասել, ի՞նչ են սարքում):

- Բարդ համադասական նախադասություններում համադաս նախադասությունները հաճախ կապակցվում են շարահարությամբ՝ **Յը՛ս ասալ ըմ, տու ըսկացալ չըս** (եւ ասել եմ, բայց դու չես լսել):

- Բարդ ստորադասական նախադասություններում գերադաս եւ ստորադաս նախադասությունները հաճախ կապվում են կախյալ շարահարությամբ՝ **Քը՛ցալ ա ծըմակը՝ փնդ պիրի** (գնացել է անտառ, որ փայտ բերի):

- Ուրիշ ուղղակի խոսք ստորադաս նախադասությունը գերադասին երբեմն կապվում է **թա** շաղկապի միջոցով՝ **Իմ տատ ասալ ա, թա. - Վէր մը՛ռնիմ, ինձ թօռնանըս քըշտէն կըթաղիք՝** (Իմ տատը ասել է. «Որ մեռնեմ, ինձ իմ թոռան մոտ կթաղեք»):

- **Ս, տ, ն, ը** հոդերը, զուգորդվելով կապական բառերի հետ, արտահայտում են համապատասխան դեմքի իմաստ եւ գեղջում կապվող դերանունը՝ **Մաջիտ հինչ**

*կա՞* (քո մեջ), *Տակըս նամ ա* (իմ տակը), *Յըրան պեն չի կա* (նրա վրա), *Առաջը տըմսնում չի* (իր առջեւը):

- Ուղղական հոլովով կարող է արտահայտվել գրական հայերենում տրական եւ ներգոյական հոլովներով դրսեւորվող տեղի պարագան՝ *մաշկը ճար ա քըսալ* (մեջքին դեղ է քսել), *Խըրմանջուղ տիլիփոն չի կա* (խրմանջուղում հեռախոս չկա):

- Տրական հոլովով երբեմն արտահայտվում է գործիական հոլովի իմաստ՝ *Տոնրտ քանե մընէթու վըս ծախալ* (տունդ քանի՞ ռուբլով ես վաճառել):

- Ուղիղ խնդիրը անձի առման դեպքում կարող է արտահայտվել ուղղական հոլովով՝ *Հիմքնըցին տըղան փըսակալ ա* (Համբարձումը տըղային ամուսնացրել է):

- *Լոխ, սաղ* դերանուններով արտահայտված որոշիչը սովորաբար դրվում է որոշյալից հետո՝ *Ըխճը-կէքը լօխ մարթու վըն քըցալ* (բոլոր աղջիկները), *Տըղէքը սաղ յըկալ ըն* (բոլոր տղաները):

- *Մուտանալ* բայը պահանջում է բացառական հոլովով խնդիր՝ *Հնրը տըղէն անա մուտացալ ա* (մուտեցել է տղային):

- Անորոշ դերբայի իմաստը կարող է արտահայտվել հարակատար դերբայով եւ հակառակը՝ *Հարկավեր ա ըղացած* (հարկավոր է աղալ), *Հնլն խօսկըս ըսելու, կըզընվում ըս* (դեռ խոսքս չսասած՝ բարկանում ես):

- Անորոշ դերբայի տրական հոլովի փոխարեն նախադասության մեջ երբեմն գործածվում է անկատարը՝ *Խըրմում վախտը շատ ա խօսում* (խմելու ժամանակ շատ է խոսում):

- Անկատար դերբայը կարող է գործածվել ենթակայական դերբայի փոխարեն՝ *Ըշտըդ տմնջվում մարթ ա տըմսնում, քժմնգ ա անում* (որտեղ տանջվող մարդ է տեսնում, օգնում է):

- Պայմանական ապառնին կարող է արտահայտել սահմանական ներկայի իմաստ՝ *Կասին փըսակվալ ըս, դիւզ ա՛* (ասում են՝ ամուսնացել ես, ճի՛շտ է):

- Ստորոգյալը հաճախ թվով չի համաձայնում ենթակայի հետ՝ *Ծառերը ծաղկալ ա* (ծառերը ծաղկել են), *Աշկերըս քուռանա, վըններըս փըռվէ, ընգուճ-նէտ քըռանա* (աչքերդ քուռանան, ոտքերդ բռնվեն, կանջներդ խլանան):

**ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:** Բարբառի բառապաշարի հիմնական շերտերն են՝ գրաբարից ավանդված բառեր, բարբառային բառեր, փոխառյալ բառեր: Բառային կազմի գերակշռող մասը բարբառային բառերն են, որոնք ստեղծված են հին հայերենից ավանդված եւ փոխառյալ բառերից՝ բառակազմական տարբեր միջոցներով, ինչպես նաեւ՝ անկախ դրանցից:

Փոխառյալ բառերի շերտում հիմնականում արեւելյան լեզուներից (արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ) եւ ռուսերենից կատարված անմիջական եւ միջնորդավորված փոխառություններն են:

Հատուկ տեղ են գրավում նաեւ այն բառերը, որոնք ունեն հնդեվրոպական ծագում, սակայն չկան գրաբարում՝ *անրգ, լափու, լէմ, լօկ, կօրկ* եւ այլն:

**ԻՍԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ:** Բարբառում բառերը լինում են մենիմաստ եւ բազմիմաստ:

Բազմիմաստությունը հիմնականում պայմանավորված է բառերի փոխաբերական իմաստով կիրա-

ռությամբ, ինչպես՝ *կառնը* բառը բացի հիմնական իմաստից՝ *գառ*, փոխաբերաբար նշանակում է նաեւ *հեգաբարո, խոնարհ, քար* բառը փոխաբերական կիրառությամբ ստացել է նաեւ *կարծր, անգութ* իմաստները եւ այլն:

Գրաբարի հետ ընդհանուր բառերը իմաստաբանական մակարդակում երեւան են հանում մի շարք փոփոխություններ.

ա) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը հանդես է բերում մենիմաստություն, ինչպես՝ *բարձ-պէրց* բառը հին հայերենում ունի 5 իմաստ՝ 1) *զլխի բարձ*, 2) *նստարան*, 3) *պատիվ*, 4) *նավի նստարան*, 5) *եռանկյան հիմքը*, որոնցից միայն առաջինն է բարբառում արմատացել որպես միակ եւ հիմնական իմաստ:

բ) գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում մի քանի իմաստներ, օրինակ՝ *բաժանել- պիծէնէլ* բառը եւ՝ գրաբարում, եւ՝ բարբառում ունի *բաժանել, զատել, անջատել* իմաստները:

գ) սակավաթիվ բառերում գրաբարի մենիմաստության դիմաց բարբառը երեւան է հանում բազմիմաստություն, ինչպես՝ *ուզել/օգիլ* բայը նշանակում է ոչ միայն *խնդրել, պահանջել*, այլեւ՝ *ամուսնանալ, մտադիր լինել, շող-շօխել* բառը *ցոլք, ճառագայթ* իմաստից բացի նշանակում է նաեւ *ստվեր*:

դ) առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրաբարից ավանդված այն բառերը, որոնք, բարբառում ինքնուրույն կիրառություն չունենալով, պահպանվել են բարդություններում եւ կապակցություններում, ինչպես՝ *հուր* բառը *հըրըդան* բառի մեջ, *երամակ-ըրամակ* բառը *ըրամակ ըղնէլ* (մարդամեջ ընկնել) դարձվածում, *ակ* բառը՝ *ակը տալ* (փնտրել, ստուգել) դարձվածում:

ե) բառիմաստի ընդլայնում, երբ գրաբարի մասնավոր իմաստի դիմաց բարբառը հանդես է բերում ավելի ընդհանուր իմաստ, ինչպես՝ *թեփ-թեփ* գրաբարում ունի 1) *ցորենի թեփ*, 2) *ծկան թեփ* մասնավոր իմաստները, մինչդեռ բարբառում նշանակում է *թեփ* ընդհանրապես:

զ) բառիմաստի նեղացում, երբ գրաբարի ընդհանուր իմաստին բարբառում համապատասխանում է մասնավոր իմաստ, այսպես՝ *կուրծք-կործ* բառը գրաբարում ունի *կուրծք* ընդհանուր իմաստը, իսկ բարբառում նշանակում է միայն *անասունի ստինք, ործվըրց* գրաբարում նշանակում է *արու*, բարբառում՝ նաեւ 3 *տարեկան արու ոչխար* եւ այլն:

**ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ:** Ինչպես ընդհանուր հայերենում, Ղարաբաղի բարբառում եւս բառակազմական միջոցներն են բառաբարդումը եւ ածանցումը, որոնց շնորհիվ ստեղծվում են նոր բառեր բնիկ եւ փոխառյալ բառերից:

Բարդությունները լինում են համադրական եւ վերլուծական:

Համադրական բարդությունները հիմնականում կազմված են երկու բաղադրիչներից, որոնք կապակցվում են հոդակապով՝ *քըթածակ, չուրաթան, ըզըզանմըն*, կամ առանց հոդակապի՝ *սըխտուրթակէ, փորքաշ, քըթկալ*:

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում

համադրական բարդությունների մի մասը առաջացել է կրկնավորներից՝ վերջիններիս բաղադրիչների միաձուլման հետեւանքով, ինչպես՝ **հըսըվհաս, պէցասպէց, գըռզըռաւ, կըթկաթէլ**: Այս շարքին են դասվում նաեւ **օր/ծր** բազմապատկական ածանց ունեցող բոլոր բայերը եւ **ատ, օտ** ածանցներով բայերի մեծ մասը՝ **թըղ-թըղօրէլ, տըշտըշծրէլ, տըրըքտըրըքօտէլ, ճուկճուկատէլ**:

Երեք բաղադրիչներից կազմված համադրական բարդություններ են՝ **դըբըրիւգիւնատէմ** (դեպի+երեկոյի+դեմ), **դըբըրիւգիւնաշախ** (դեպի+երեկոյի+շախ), **մաք-թողլի** (մայր+քոյր+օղու), **հաքթողլի** (հայր+քոյր+ օղու):

Վերլուծական բարդությունների մեջ մտնում են հարադրությունները եւ կրկնավորները:

Հարադրական բարդությունները լինում են անվանական եւ բայական:

Անվանական հարադրությունները կազմվում են տարբեր խոսքի մասերից, ինչպես՝ **ամըճ(նը)-ծը-մըճ(նը), տօն-տըճ, ծանդըր-ծընդըրմըճ, էրկու-ի-րըք, յըճ-տու**:

Բայական հարադրությունները հիմնականում կազմվում են բայից եւ որեւէ այլ խոսքի մասից՝ **կօլ տալ, պարան կ'ան, զակագ տալ, կըլծիս պիրի, յըճ ածէլ, յըրա հըսնէլ, դալիբ տալ**: Գործածական են նաեւ մի շարք զուգադրական բայեր՝ **ասէլ-խօսէլ, քիսիլ-կ'ան, օտէլ-խըմէլ**:

Կրկնավոր բարդության բաղադրիչները սովորաբար նույն բառի կրկնությունն են: Կրկնավորներ են կազմվում տարբեր խոսքի մասերից՝ **փօնց-փօնց, մըճ-մըճ, հէնգ-հէնգ, տու-տու, կամանց-կամանց, փահ-փահ** եւ այլն: Որոշ կրկնավորների բաղադրիչներից մեկը ենթարկվում է հնչյունափոխության, ինչպես՝ **աման-չաման, ական-սական, խըրէգ-մըրէգ, ծակ-ծուկ**:

Բառակազմական կարեւոր միջոց է ածանցումը: Բարբառում գործառնում են նախածանցներ եւ վերջածանցներ:

Նախածանցների թիվը խիստ սահմանափակ է: Հայերենի նախածանցներից գործածական են միայն **ան, չը** եւ **տը** ժխտական ածանցները՝ **անդար, անդարդ, անշընօրք, անլըվա, չըպէրք, չըհաս, չըխօսական, չըկամ, տըկօռ, տըհալ**: Լայն գործածություն ունի նաեւ պարսկերեն **bi-բէ/բէլ** ածանցը, որ դրվում է եւ՝ փոխառյալ, եւ՝ բնիկ բառերի վրա՝ **բէքըճի, բէյվախտ, բէյխաբար, բէյիւն, բէյշընօրք**:

Վերջածանցներն, ի տարբերություն նախածանցների, մեծ թիվ են կազմում: Դրանց շարքում հանդես են գալիս ինչպես գրաբարյան, այնպես էլ մի շարք նորանոր ածանցներ, որոնց մի մասը հին հայերենի որոշ արմատների իմաստների մթազնման, հոլովական թեքությունների եւ հոգնակերտ ձեւությունների քարացման արդյունք է, մի մասը՝ փոխառություն: Առավել կենսունակ են գոյականակերտ, ածականակերտ, մակբա-

յակերտ եւ թվականակերտ ածանցները, որոնք բնիկ եւ փոխառյալ բառերից ու բայարմատներից կերտում են նոր բառեր. **ագար/ագար՝** ցավագար/ցավագար, **ալ՝** մըճալ, **ալի՝** մըսալի, վըզգալի, **ած՝** նըշանած, խըրաված, **ակ/անկ՝** վըճակ, մաշնակ, կ'ոտնակ, **(ա)կան/ (ան)կան՝** պըրտական, վըճական, սըզ(ըլ)անկան, **ան՝** թացան, քըրըքաշան, կեսան, **անէ՝** էրկումըթկանէ, **հէնգքըրանէ, անէգ՝** լիզվանէգ, **անց՝** յըրկանց, **հըռ-նանց, անուկ՝** շըրանուկ, **անուց/անուց՝** խոտանուց, **վըցցանուց, հինգանուց, թընգանուց, անք/անք՝** փըշըրանք, **պըճըրանք, ըշկըլիւսանք, աշ/անշ՝** թըթվաշ, **կիրմիրանշ, ասկ՝** արմասկ, **թըռմասկ, ավ/անվ՝** թանավ, **ջանավ, զանմանվ, ավէր/ավէր/ անվէր/անվոր/անվոր՝** պուզանվէր, բախտավէր, պինավոր/պընանվոր, **ծիյավէր, ավուն՝** սըվավուն, **մըծավուն, ատ՝** կէսատ, **թէհրատ, արան/անրան՝** ըվիտարան/ըվըտանրան, **ճիրըքարան, արար/անրար՝** տըռարար, **կըռվարար, պինարար, ացու/ անցու՝** մըսացու, **թիլանցու, կօրսիսկացու, է/ի՝** թույթ, տանծի, **քըշէրէ, էգ՝** ածէգ, **հատէգ, ըճան՝** ըրծըթըճան, **վըսկըճան, հըրըճան, ը՛նէ՝** պընդը՛նէ, **ըմըռնը՛նէ, ը՛ցէ/ անցէ/ացէ/ըցէ/անցի՝** քըղըքը՛ցէ, **շինանցէ/շինացէ/շինըցէ/ շինանցի, ը՛քան/էքան՝** չուրսը՛քան/չուրքէքան, **իրը՛քան/իրէքան, ըյին/ույին՝** թուռըյին, **չուրույին, ըռ(է)/ը՛ռ՝** տակըռ(է), **շըքըռ/շըքը՛ռ, իճ/էճ՝** կավիճ/կավէճ, **ին/էն՝** ծանքին, **մըթէն, իք՝** ըսէլիք, **հըսնէլիք, լու/լիւ՝** ջանլու, **անիլի, կօտ/կուտ՝** վըխըլկօտ, **հըմանչկուտ, հան(ա)՝** տըկըռըհանա, **իրըսըհան, մունք՝** ըրարմունք, **չըչարմունք, պան՝** ճըղացպան, **ծիյապան, պատէգ՝** իրըքպատէգ, **վըցցըպատէգ, վաթ՝** խուրդանվաթ, **վանք՝** փանդվանք, **վաջի՝** դըմմըզվաջի, **իշըվաջի, վասկ՝** փանդվասկ, **վարի՝** դըմմըզվարի, **իշըվարի, վէ՝** հըրկըշվէ, **դըրըզվէ, վուսկ՝** կուտօրվուսկ, **տան՝** սըմբէտան, **ըռըշկէտան, տակ՝** մըճտակ, **հինգըտակ, ու/օ՝** ծախու, **թըթօ, կըծօ, ութկ՝** սըվըճրութկ, **ուկ/հնկ/օկ/օք՝** կաթուկ/կանթուկ, **ըղօկ/հըղօք, ում/ իւմ՝** կօլտում, **իւթթիւմ, ուն՝** ցալքուն, **թաքուն, ունք/իւնք՝** իրավիւնք, **հոլիւնք, իւշ՝** փըրթիւշ, **ուռ/օռ՝** հափուռ, **քըշկօռ, ուստ/իւստ՝** ապըրուստ, **կանիւստ, ուտ/իւտ/օտ/ծտ՝** խընծծրուտ, **մօշօտ, ցանքիւտ, հոլնծտ, քաշկուտ, փըսըլըքօտ, ուրթ/օրթ/ըրթ՝** ժուղօվուրթ/ժողօվըրթ, **փօխնուրթ/փօխնօրթ, ք/կ՝** թէվք, **շալք, փօխկ, շօխկ, օթուն/ ծթին՝** հընգըրօթուն, **փիսօթուն/փիսծթին, օսկ/ուսկ՝** պըտըռօսկ, **մէրուսկ, օվի/ծվի՝** թըկօվի, **քըցծվի, օց/ծց/ ուց/իւց՝** զըռռօց, **թըր-չծց, կուռկօռուց, տիւղտծղիւց** եւ այլն:

Որոշ վերջածանցներ փոխառյալ են, ինչպես՝ **ին-ջի/ընջի/հինջի** (թուրք. - inji)՝ **վէցցինջի/վէցցընջի, իրըճ(ի)ինջի, լար/լար** (թուրք. - lar)՝ **դայիլար, անիլար, թունիլար, արգումանլար, լու/լիւ** (թուրք. - lu)՝ **ջանլու, անգանլու-մանգանլու, անիլու, չի** (թուրք. - ci)՝ **դանիլուչի, գարափաթիչ, նախըրչի, սըզ/սուզ** (թուրք. - sus)՝ **սօնգսըզ/սօնգսուզ, թայսըզ, խստ** (ռուս. ucm)՝ **կամունխստ, թէվանխստ**:

## ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ԲԱՌԱՐԱՆԻ ՄԵՋ ԸՆԴՈՂԱԿՎԵԼ ԵՆ ԲՈՂՈՐ** այն բառերը եւ դարձվածները, որոնք գործածական են Ղարաբաղի բարբառի խոսվածքներում: Շաղախի, Շահումյանի եւ Գորիսի ենթաբարբառների բառապաշարին անդրադարձել ենք մասնակիորեն՝ հաշվի առնելով դրանց՝ բուն Ղարաբաղի բարբառից ունեցած որոշ էական տարբերությունները, որոնք հիմնականում այլ բարբառների ազդեցության արդյունք են:

Բառարանում չեն մուծվել .

1. **-Ամենա** ածանցով գերադրական աստիճանները՝ **ամենամեծ, ամենակուճի, ամենաղնշմանգ**:

2. Բայի անդեմ ձեւերը, բացառությամբ անորոշի, որ բայի ելակետային բառածեւն է, ենթակայականի, հարակատարի ու **-ելիք, -ալիք** ածանցով ապակատարի այն ձեւերի, որոնք վեր են ածվել գոյականների եւ ածականների՝ **կիրող, տղճած, ըսելիք**:

3. **-Ան** ժխտական ածանցով բառերը, բացի հետեւյալ դեպքերից.

ա) եթե միայն ժխտում չեն արտահայտում՝ **անդար, անշառ, անպէտ/անպէտ**,

բ) եթե **-ան** նախածանցը ստացած բառն առանձին գործածություն չունի՝ **անկէգ, անսանց, անփիշ/անփիշ**:

4. Հատուկ անունները, բացի նրանցից, որոնք ստացել են հասարակ անվան արժեք կամ փոխաբերական նշանակությամբ գործածվում են դարձվածներում՝ **Ապէլ, Մանթաշով, Ակունի, Սուրում/Սոթում-Պոմոր**:

5. Տեղանուններից **-ըցէ, -ըցէ, -ցէ** ածանցներով կազմված բառերը, բացառությամբ փոխաբերական իմաստ ունեցողների եւ դարձվածներում գործածվողների՝ **սինգըցէ, խընուշինըկըցէ, դարաբաղցէ, հըղըրըցէ**:

6. Գրական հայերենից ու ռուսերենից, ինչպես նաեւ դրանց միջոցով այլ լեզուներից կատարված նորագույն փոխառությունները, որոնք դեռեւս լայն տարածում չեն ստացել, կամ էլ, պայմանավորված լինելով պատերազմական իրավիճակով, կրում են ժամանակավոր բնույթ՝ **վարկ, հիպոթէկ, կամպիւտրը, սոտըրկի, բէտէռ, իստրիբիտէլ, կապիտան, զասադա, բատալյոն, դիվերսյա** եւ այլն:

7. Տպագիր եւ անտիպ աղբյուրներում հիշատակված մի շարք բառեր, որոնց՝ Ղարաբաղի բարբառում գործածվելը մեզ խիստ կասկածելի եւ անհավանական է թվում:

**ՂԱՐԶՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**: Ղարաբաղի բարբառը հարուստ է դարձվածներով: Հետեւելով դարձվածի լայն ըմբռնման տեսությանը՝ բառարանում, բացի բուն դարձվածներից, ընդգրկել ենք նաեւ ասացվածքները, կայուն բառակապակցությունները, հարադիր բայերը, ոճական արտահայտությունները:

Դարձվածները դրվում են բառահոդվածի վերջում՝ բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո: Յուրաքանչյուր դարձված ներկայացվում է միայն մեկ անգամ՝ դարձվածի առաջին բառի տակ՝ խիստ այբբենական կարգով՝ առանց հաշվի առնելու ուղիղ եւ թեք ձեւերը, որին հետեւում է բացատրությունը: Նույնիմաստ

դարձվածները բացատրվում են մեկ անգամ, մյուս դեպքերում հղում է կատարվում: Եթե նույնիմաստ դարձվածները տարբերվում են միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփոխությամբ, ապա դրանք հիմնականում ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատվելով ուղղահայաց գծիկներով, ինչպես՝ **Տնորմն անէլ/կօխէլ/նըստըցընէլ /տինիլ/բըցիլ, Օրը փիս/տըժէր տըղ մըթնէլ**:

Բոլոր դարձվածների համար բերվում են օրինակներ, բացառությամբ հաղորդակցական արժեք ունեցող (**Ասում ըմ՝ ասու մէր, թա էշը քած ա, ասում ա՝ քօռակըն էլ ա քած**) եւ **տեն** հոլում ունեցող (**Ըսածան տիւս կ'անլ - տեն խուսկան տիւս կ'անլ**) մի շարք դարձվածների:

Ղարաբաղում ընդհանուր տարածում ունեցող դարձվածներին զուգընթաց բերվում են նաեւ տեղական նշանակության՝ կոնկրետ որեւէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող դարձվածներ, ինչպես՝ **Ըթնին ծինը, Մէջուն արտը, Սօսէն հավը տըղնալ**:

Եթե որեւէ գլխաբառ հղվում է մեկ այլ գլխաբառի, ապա առաջինի տակ նույնանիշ դարձվածները չեն բերվում:

**ԲԱՌԱՅՈՂՎԱԾՔ**: Բառահոդվածը բաղկացած է հետեւյալ մասերից՝ ա) **գլխաբառ**, բ) **ծագումնաբանական նշումներ**, գ) **լեզվաոճական եւ քերականական նշումներ**, դ) **իմաստաբանություն**, ե) **օրինակներ եւ դրանց աղբյուրների վկայություն**:

ա) **Գլխաբառերը** ներկայացվում են մեծատառերով: Գլխաբառից հետո բերվում են տարբեր խոսվածքներում գործածվող հնչյունափոխված տարբերակները, որոնցից յուրաքանչյուրը, այբբենական կարգով դրվելով համապատասխան տեղում, **տեն**-ով հղվում է հիմնական համարվող բառին: Գլխաբառի ընտրության ժամանակ նախապատվությունը տվել ենք պատմական Վարանդայի գավառում գործածվող ձեւին, այնուհետեւ հերթականությամբ նշել մյուս շրջանների խոսվածքների ձեւերը, չնայած, ընդհանուր առմամբ, այդ ձեւերի գործածության սահմանները խիստ տարբերակված չեն, եւ հաճախ մի գյուղի խոսվածքի ձեւերը, տարբերվելով հարեւան գյուղերից, կարող են համընկնել հեռավոր գյուղերի խոսվածքներին: Թերեւս դա է հիմնական պատճառը, որ, նշելով հնարավոր բոլոր հնչյունական տարբերակները, խոսվածքների թվարկումներ չենք արել, ինչը կստեղծեր խառնաշփոթություն:

Գոյականները բերվում են եզակի թվի ուղղական հոլովով, բայերը՝ անորոշ դերբայով:

Որպես գլխաբառեր են բերվում դերանվանական հոլովմամբ թեքվող դերանունների սեռականի եւ տրականի ձեւերը, **իմ, քու, ինձ, քեզ**, ինչպես նաեւ՝ անկանոն բայերի խոնարհված յուրահատուկ ձեւերը՝ **կեր, յըք, տըգ, կալ** եւ այլն:

բ) **Ծագումնաբանական նշումներ** մասում համառոտագրությամբ նշվում է այն լեզուն, որից բառը անցել է բարբառին, ինչպես՝ **հ.է.** (հնդեվրոպական հիմք լեզու), **գրբ.** (գրաբար), **արաբ.** (արաբերեն), **պրս.** (պարսկերեն), **թրբ.** (թուրքական լեզուներ՝ թուրքերեն, թաթար-

րերեն, աղբբեջաներեն), **ռուս.** (ռուսերեն): Այդ նշումներից հետո բերվում է փոխատու լեզվի ձևը՝ գրաբարինը՝ հայկական, ռուսերենինը՝ սլավոնական, իսկ մյուսները՝ լատինական այբուբենով: Եթե նույն բառը գործածական է տարբեր լեզուներում եւ անհնար կամ մեր հնարավորություններից վեր էր կոնկրետ փոխատու լեզուն որոշելը, նշվել են բոլոր լեզուները: Եթե փոխատու լեզվի բառը բարբառում ներկայանում է իմաստափոխությամբ, ապա փոխատու լեզվի բառի մոտ փակագծերում տրվում է բուն իմաստը:

Եթե գլխաբառի մոտ ծագումնաբանական նշումներ չկան, նշանակում է բառը բարբառային է, կամ էլ՝ ծագումը մեզ անհայտ:

գ) **Լեզվառճական նշումները** երկու կարգի են՝ սոցիալական - **ծծկ.** (ծածկաբանություն), **մսկ.** (մանկական), եւ վերաբերմունքային - **անրգ.** (անարգական), **արհմ.** (արհամարհական), **ծղր.** (ծաղրական), **հեզկ.** (հեզական) եւ այլն:

Գլխաբառերի քերականական բնութագրությունը տրվում է խոսքիմասային պատկանելության նշումով, ինչպես՝ **գ.** (գոյական), **ած.** (ածական), **թ.** (թվական), **դ.** (դերանուն), **մ.** (մակբայ), **կ.** (կապ), **շ.** (շաղկապ), **ծ.** (ծայնարկություն), **վ.** (վերաբերական): Բայերի մոտ նշվում է նաեւ սեռը, ինչպես՝ **նք.** (ներգործական բայ), **չք.** (չեզոք բայ), **կբ.** (կրավորական բայ), **պբ.** (պատճառական բայ):

դ) **Իմաստաբանություն:** Այս մասում հնարավորինս համառոտ եւ հստակ տրվում են բառերի բոլոր ուղղակի եւ փոխաբերական նշանակությունները: Առանձին դեպքերում, հատկապես երբ գլխաբառը ազգագրական բովանդակություն ունի, բացատրություններն ավելի ընդարձակ են: Բազմիմաստ բառերի բացատրությունները տրվում են առանձին՝ արաբական թվանշաններով անջատված: Փոխաբերական նշանակություններից առաջ դրվում է **փխբ.** համառոտագրությունը:

Բառերի բոլոր նշանակությունները սովորաբար բացատրվում են, մեծ թիվ չեն կազմում հոմանշային բացատրությունները: Նույնիմաստ բառերից ընդհանուր առմամբ բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները **տեւ-** ու հղվում են վերջինիս:

Բայերի կրավորական ձեւերը, որոնք ինքնին նաեւ չեզոք են, բերվում են իբրեւ գլխաբառեր՝ որպես ընդհանուր կանոն բացատրվելով **կբ.** եւ **չք. (որեւէ) բայի** բանաձեւումով: Իսկ եթե այդ ձեւը ունի չեզոք սեռի այնպիսի նշանակություն կամ նշանակություններ, որ չունի ներգործականը, ապա դրանք բացատրվում են առանձին- առանձին՝ **չք.** նշումով, ինչպես՝ **ԶԸՍՎԷԼ- 1. կբ.** եւ **չք. ԶԸՍԷԼ-ի, չք. 2. Մի բանի դիպչել՝ կպչել, 3. Սն-գուրվել, 4. Զծնել, 5. Չքվել:**

ե) **Օրինակներ:** Բառերի նշանակությունները պարզաբանելու եւ հիմնավորելու համար բառիմաստի բացատրությունից հետո բերվում են օրինակներ, որոնք առնված են երեք կարգի աղբյուրներից՝ տպագիր, ձեռագիր եւ բանավոր: Տպագիր աղբյուրներից բերված օրինակների վերջում համառոտագրությամբ եւ փակագծերում նշվում են համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը:

Ձեռագիր աղբյուրներից քաղած օրինակների թիվը մեծ է: Այս առումով հատկապես մեծ տեղ ենք հատկացրել մեր անձնական արխիվին, որտեղ ընդգրկված է 1998-2011թթ. մեր եւ մեր ղեկավարությամբ ԱրԴՅ ուսանողների, ինչպես նաեւ մեր խնդրանքով ԼՂՀ տարբեր գյուղերի տասնյակ ուսուցիչների կողմից հավաքագրված բանահյուսական, բարբառային եւ ազգագրական հարուստ նյութ՝ շուրջ 20000 էջ, որոնցից յուրաքանչյուրը ժամանակին ենթարկել ենք նուրբ տառադարձության՝ տվյալ խոսվածքը կրող առնվազն երկու բարբառախոսների օգնությամբ:

Ձեռագիր աղբյուրներից քաղված օրինակների վերջում դրվում է (2) համառոտագրությունը:

Չնայած տպագիր եւ ձեռագիր աղբյուրների առատությանը՝ բարբառի բառապաշարի զգալի մասը արտացոլված չէ դրանցում եւ շարունակում է մնալ միայն բարբառախոսների սեփականությունը: Ահա թե ինչու բազմաթիվ բառերի օրինակներ բերվում են բանավոր խոսքից՝ վերջում դնելով (Բ) համառոտագրությունը: Այս աղբյուրի մեջ են մտնում նաեւ ԼՂՀ ազգային հեռուստատեսությամբ հնչած բարբառային հաղորդումները, ինչպես նաեւ մեր արխիվում պահվող բազմաթիվ ձայնագրություններ եւ տեսագրություններ՝ մեր կամ մեր խնդրանքով ուրիշների կողմից կատարված:

Վկայված օրինակները հիմնականում բերվում են նախադասություններով, երբեմն՝ բառակապակցություններով: Բառարանում օրինակներ են բերված բոլոր բառիմաստների համար: Մեջբերումներ չունեն միայն **տեւ-**ով հղում ունեցող բառերի մի մասը, ինչպես նաեւ մի շարք գոեհկաբանություններ:

#### **ՈՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ:**

Բարբառագիտության մեջ ընդունված է ուղղագրության մեկ սկզբունք՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է, այսինքն՝ մեկ հնչյունին մեկ գիր սկզբունքով: Դժբախտաբար Ղարաբաղի բարբառով հավաքագրված նյութի զգալի մասը կամ տառադարձության չի ենթարկվել կամ էլ տպագրվել ու հավաքագրվել է տառադարձության խախտումներով: Ահա թե ինչու, քարտագրելով բոլոր աղբյուրները, մենք ստիպված էինք բառերի եւ դարձվածների բացատրությունների համար օրինակներ բերել ոչ բոլոր տպագիր եւ անտիպ գործերից:

Բառարանում հետեւել ենք հետեւյալ սկզբունքներին.

1. Գլխաբառերը տրվել են մեծատառով՝ նուրբ այբբենական կարգով: Բառարանից օգտվողներին դյուրություն պատճառելու համար արել ենք որոշ բացառություններ.

ա) **ա, ռ, ծ** քմային ձայնավորները, չնայած անկախ հնչույթներ են, սակայն այբբենական կարգով դասավորելիս հավասարեցվել են **ա, ու, օ** ոչ քմային հնչյուններին,

բ) **լ** եւ **լ'** երկբարբառակերպերի է եւ **ի** հնչյունները դիտվել են որպես լիակատար հնչյուններ,

գ) **գ, կ, ք, լ'** եւ մյուս քմային բաղաձայնների կիսաձայն **-յ-**ն դիտվել է որպես լիարժեք բաղաձայն:

2. Խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության սկզբունքները: Հարկ է նշել, որ չնայած ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտու-

թյան բաժնի կողմից արդեն իսկ մշակված եւ հրատարակված է գիտական նոր տառադարձություն, որը հնարավորություն է տալիս ներկայացնելու հայերենի բարբառների հնչյունների բոլոր նրբությունները, սակայն մենք հետեւել ենք ավանդական տառադարձությանը՝ հաշվի առնելով, որ Ղարաբաղի բարբառի վերաբերյալ եւ բարբառով տպագրված նյութերի հիմքում դրված է այդ տառադարձությունը:

3. Տպագիր ու ձեռագիր աղբյուրներից վերցված օրինակներում ընդհանուր առմամբ պահպանվել է հե-

ղինակների տառադարձությունը: Մեր միջամտությունը սահմանափակվում է հետեւյալ դեպքերով՝ 1) բառերի տառադարձման ակնհայտ սխալների ուղղում, 2) գաղտնավանկի *ը*-ի ավելացում, 3) անհրաժեշտության դեպքում ծավալուն նախադասությունների կրճատում:

4. Եթե գլխաբառը հանդես է գալիս նաեւ հավելյալ տառերով, եւ այդ տարբերակները անմիջապես նախորդում կամ հաջորդում են գլխաբառին, ապա վերջիններս սովորաբար դրվում են կլոր փակագծերի մեջ, ինչպես՝ *ԱՇԽԱՐ(Ե), ՏՈՒՆԸ, ՏՊ(Ը)ՐԱԿ*:

#### ԿԿԱՅՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԱ - Ա. Սարգսյան, *Արցախյան ավանդություններ*, Ստեփանակերտ, 2007
- ԱԱԼ - Ա. Սարգսյան, *Արցախյան առակներ*, Ստեփանակերտ, 2011
- ԱԲԲ - Ա. Սարգսյան, *Արցախի բանաձեւային բանահյուսությունը*, Ստեփանակերտ, 2009
- ԱՅ - Ա. Սարգսյան, *Արցախյան հանելուկներ*, Ստեփանակերտ, 2002
- Բ - Բանավոր խոսք
- ԲՀԲ - *Բաքվի հայոց բանահյուսությունը* (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը), Երեւան, 2004
- ԶՏ, Ա - Տմբլաչի Խաչան (Կ.Կ. Մելիք Շահնազարեանց), *ԶՈՒՌՆԱ-SUPLU*, գիրք Ա, Վաղարշապատ, 1907
- ԶՏ, Բ - Տմբլաչի Խաչան (Կ.Կ. Մելիք Շահնազարեանց), *ԶՈՒՌՆԱ-SUPLU*, գիրք Բ, Վաղարշապատ, 1908
- ԼՂԲ - Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ.Ս.Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971
- ԼՂԲԶ - Կ.Ս. Ղավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Երեւան, 1966
- ՀԱԲ, 15 - Ալվարդ Ղազիյան, *Հայ ազգագրություն եւ բանահյուսություն*, հ. 15 (Արցախ), 1983
- ՀԲ - Ա.Ս. Պողոսյան, *Հաղորդի բարբառը*, Երեւան, 1965
- ՀԺՀ, V - *Հայ ժողովրդական հեքիաթներ*, V (գրի է առել Մ.Ս.Գրիգորյան-Սպանդարյանը), Երեւան, 1966
- ՀԺՀ, VI - *Հայ ժողովրդական հեքիաթներ*, VI (գրի են առել Ա. Բահաթրյանը, Կ. Մելիք Շահնազարյանը, Մ. Իսրայելյանը, Մ. Մխիթարյանը, Ա. Շահսուվարյանը), Երեւան, 1973
- ՀԺՀ, VII - *Հայ ժողովրդական հեքիաթներ*, VII (գրի է առել Մ. Առաքելյանը), Երեւան, 1979
- Ձ - Ձեռագիր աղբյուրներ
- ՆԱԲ - *Նշխարներ Արցախի բանահյուսության* (ժողովեց, կազմեց եւ ծանոթագրեց Լ. Հարությունյանը), Երեւան, 1991
- ՆԱԲ II - Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության*, II, Ստեփանակերտ, 2004
- ՆԱԲ III - Լ. Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության*, III, Ստեփանակերտ, 2007
- ՆԼՂԺԲ - *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից* (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

|                |                    |                 |                 |
|----------------|--------------------|-----------------|-----------------|
| <i>ած.</i> -   | ածական             | <i>հ.ե.</i> -   | հնդեվրոպական    |
| <i>անգլ.</i> - | անգլերեն           | <i>հեզն.</i> -  | հեզնական        |
| <i>անծ.</i> -  | անեծք              | <i>հմմտ.</i> -  | համեմատություն  |
| <i>անրգ.</i> - | անարգական          | <i>հոգն.</i> -  | հոգնակի         |
| <i>ասաց.</i> - | ասացվածք           | <i>հոլ.</i> -   | հոլանդերեն      |
| <i>ասոր.</i> - | ասորերեն           | <i>հպվ.</i> -   | հապավում        |
| <i>արաբ.</i> - | արաբերեն           | <i>հվք.</i> -   | հավաքական       |
| <i>արհմ.</i> - | արհամարհական       | <i>հուն.</i> -  | հունարեն        |
| <i>բրմդ.</i> - | բարեմադրություն    | <i>հունգ.</i> - | հունգարերեն     |
| <i>գ.</i> -    | գոյական            | <i>ձ.</i> -     | ձայնարկություն  |
| <i>գերմ.</i> - | գերմաներեն         | <i>մ.</i> -     | մակբայ          |
| <i>գռիկ.</i> - | գռեհկաբանություն   | <i>մնկ.</i> -   | մանկական        |
| <i>գրբ.</i> -  | գրաբար             | <i>նբ.</i> -    | ներգործական բայ |
| <i>դ.</i> -    | դերանուն           | <i>շ.</i> -     | շաղկապ          |
| <i>եբր.</i> -  | եբրայերեն          | <i>չբ.</i> -    | չեզոք բայ       |
| <i>եւն.</i> -  | եւ այլն            | <i>պբ.</i> -    | պատճառական բայ  |
- Աշխարքս դըղի-դուղի ըղնել - Իրարանցում ստեղծվել, անհամերաշխություն ստեղծվել: Աշխարքս դըղի-դուղի յա ընգալ, շօնը տարը ճընանչում չի (Բ):

- Աշխարքը դըղի-դուղի քըցիլ - Իրարանցում ստեղծել, ամենուր մարդկանց իրար դեմ գրգռել: Էտ պառալը սաղանէն ասմա.- Յըտացալ ըս, յը՛ս կընօխէ յըմ աշխարքը դըղի-դուղի քըցալ (2):

- Աշխարքը մըննան քըցիլ - Հմայվել, դյուրվել: Էտ ըխճըկանը տը՛սնալըն ըբանստ աշխարքը մըննան քըցից (2):

- Աշխարքը մօրէխ օտէլ/մին կըրպէ-տալ ծասկած ինիլ - Անիշխանություն, թողտվություն, անարդարություն տարածվել: Խէ՛, աշխարքս մօրէխ կէրալ ա՛, վէր Դօրոնց Զմբոն տինին նախագա (2):

- Աշխարքը յը՛խծէ շինիլ - տէն Աշխարքը մօրէխ օտէլ: Կ՛ոնը թա.- Աշխարքը յը՛խծէ յը՛ք շիննանկան, վագըրը մը՛ռալ ա՛, վէր օղտէն թաքավէր տընիկը՛ (ՆԱԲ, II, 39):

- Աշխարքը յըրտըրվէրտըր ինիլ - տէն Աշխարքը մօրէխ օտէլ:

- Աշխարքը նըմանը ծընալ չի - Նմանը չունի, միակն է (գործածվում է սովորաբար բացասական իմաստով): Էտքան մարդիմազար մարթ յը՛ս տը՛սած չըմ. աշխարքը նըմանը ծընալ չի (Բ):

- Աշխարքը շօռ կ՛ան/չափել - տէն Աշխարքը վըճնանը տակը տալ:

- Աշխարքը շօռ կ՛ա՝ նըմանը քըթէնալ չըս - տէն Աշխարքը նըմանը ծընալ չի:

- Աշխարքը պուք կ՛ան - տէն Աշխարքս վէրչը կ՛ան:

- Աշխարքը վըճնանը տակը տալ - 1. Շատ շրջագայել: Աշխարքս վըճն-

նանը տակը տուվալ, վէրչումը էլլա յը՛կալ ուրան վաթանը (2): 2. Փորձառու լինել: Աշխարքս վըճնանը տակը տուված մարթ ա, էտ կօրծը մինակ էն կըկարէ դիզըցընէ (Բ):

- Աշխարքը տալ մինին - Արտակարգ ուրախություն՝ երջանկություն պատճառել: Հանց ըն աշխարքը տուված ինին ուրան, սաղ օրը ք՛ը՛փ ա ա-նում (Բ):

- Աշխարքը տանին-պիրին՝ գիդան չի/վէջը չի - Անտարբեր է, ոչ մի բանով չի հետաքրքրվում: Կավը աշկէն ըռա-չան կ՛ողագէն, տը՛սալ վէջ, էն հինչ տըղամարթ ա՛, աշխարքը տանին-պիրին՝ գիդան չի (Բ):

- Աշխարքը ուրանը ինիլ/տըճնալ - Անչափ ուրախանալ, հրճվել, գոհ լինել: Զ՛օխվան ուրիշընաս ա, աշխարքը ուրանըն ա տըռնաս... (ԼՂԲ, 380):

- Աշխարքը ուրիշընացալ ածել/տալ/քըցիլ - 1. Ամեն ինչ տակնուվրա անել: Նէմէրը աշխարքը ուրիշընացալ ածից (2): 2. տէն Աշխարքը դըղիդուղի քըցիլ:

- Աշխարքը ուրիշընացալ ըղնել/ըն-ցընել/ինիլ - 1. Ամեն ինչ տակնուվրա լինել: Հիքը կըռը՛վ ա ինում, աշխարքս ուրիշընացալ ա ըղնում (Բ): 2. տէն Աշխարքը դըղի-դուղի ըղնել:

- Աշխարքը փանքան ա. մինը պիցըրանում ա, մինը՝ քըշանում - Կյանքը փոփոխական է. հաջողությունը եւ անհաջողությունը հաջորդում են իրար: Դանդ մէր անէլ, Զմ՛ոնէս, աշխարքը փանքան ա. մինը պիցըրանում ա, մինը՝ քըշանում, հանքան մին օր էլ քու բախտըտ կըպիրի (2):

- Աշխարքը օնէլ/փըռնել - Ամեն կողմ սփռվել, տարածվել: Մին քըշերալ մարթը քունըտը՛ղան յէր ա կը՛նըմ, տը՛սնըմ ծոնը աշխարքս կալան ա (ԼՂԲ, 306):

- Աշխարք կ՛ան - տէն Լոն աշխարք կ՛ան:

- Աշխարք պիրիլ/քըցիլ/հանել - տէն Լոն աշխարք պիրիլ/քըցիլ/հանել:

- Աշխարք տը՛սած - 1. Կյանք վայելած: Աշխարք տը՛սած մարթ ա, լ՛ալ ապրալ ա, խօխօնցը լ՛ալ տըղվարալ, մը՛ռնէ էլ, դարդը չի (2): 2. տէն Ընգած-տոնս յը՛կած (ԸՂՆԵԼ-ի տակ):

- Աշխարք տը՛սնալ - 1. Շրջագայելով շատ երկրներ տեսնել: Տը՛սնաս հիք կինի՛ մունք էլ տոնս կ՛անք, աշխարք տը՛սնանք (Բ): 2. տէն Ըղնել-տոնս կ՛ան:

- Աշխարքս բէխաբար - Միամիտ, անփորձ, արտաքին աշխարհին անծանոթ: Տըղան ըշխարքսս բէխաբար ա ի-նում, մարը հինչու ասում ա, հըվատում ա (Բ):

- Ընթարքաս խաբար չինիլ - տեն Ընթարքաս չինիլ:

- Ընթարքաս խոռավ քիսիլ - Կյանքից դժգոհ մեռնել: Սաղ գանքը տանջվից, ըստի ընթարքաս խոռավ քըճավ (Բ):

- Ընթարքաս ծըճը լըճ օնել/քաշիլ - Կյանքի նկատմամբ հետաքրքրությունը կորցնել: Յըճս ընթարքաս ծըճը լըճ լըճ կալնի, տուք հինջը օգում ըք, ըրէք (Բ):

- Ընթարքաս կըտըրվել - Արտաքին աշխարհից, մարդկային հասարակությունից մեկուսանալ: Ընթարքաս կըտըրված էն ըն էտ շէնումը ապրում ըն (Բ):

- Ընթարքաս կօշտ - 1. Ամեն ինչով լիացած, որեւէ բանի անկարող: Ընթարքաս կօշտ ըմ, ամմէն հինջ օնիմ (Բ): 2. Անտարբեր, ձանձրացած: Էնքան տանջնիլ ըն, ընթարքաս կօշտ ա, վէշ մին պէնու խառնըվում չի (Ձ):

- Ընթարքաս հըճէ - 1. Մարդկանցից՝ բնակավայրերից՝ աղմուկից հեռու: Ընթարքաս հըճէ շէն ա, հինջը օ-գում ըս, անում ըս (Ձ): 2. Կյանքի իրադարձություններից հեռու, կյանքից կտրված: Ընթարքաս հըճէ իւրան հըճտէ ապրում ա (Բ):

- Ընթարքաս հըռանալ - տեն Ընթարքաս կըտըրվել:

- Ընթարքաս չինիլ - Միամիտ, անփորձ լինել: Հանց ա ընթարքաս չինի, հու կարում ա, խնփիւմ ա (Բ):

- Ընթարքաս պէն չի կըլիսու ըղնել - Կյանքի հաճույքները չվայելել, դժվար կյանքով ապրել: Էս ծօրիւմը ըստի տընջվիւմը ըպրըճէնք, ընթարքաս պէն չի կըլիսու ընգէնք (Ձ):

- Ընթարքեավըս մին - Ամբողջ աշխարհում, ամենուրեք: Ընթարքեավըս մին շօռ կ'աս, Ղարաբաղա դաշննգ՝ յէրգիճը չըս քըթէնալ (Բ):

- Ընթարքեավըս մին անել - 1. Տրել՝ սփռել ամեն կողմ: Քամէ ըրավ, տիրըվնէն ընթարքեավըս մին ըրավ (Բ): 2. Ամեն տեղ տարածել, հռչակել: Մարթը հինջու ասում ա, կընէճը ընթարքեավըս մին ա անում (Ձ):

- Ընթարքեավըս մին ինիլ/տըճնալ - 1. Շատ ուրախանալ, ցնծալ: Վաճառականըն էլ ա շատ ուրիշանըմ, ընթարքեավըս մին տաննում (ՆԼԴԹԸ, 7): 2. Ցրվել՝ սփռվել ամեն կողմ: Թօթը վէր տըճնալ, ընթարքեավըս մին տըճնալ (Բ): 3. Ամեն տեղ տարածվել, հռչակվել: Պըլըպուրդուն անըմը ընթարքեավըս մին ա ինիս (ԼԴԲ, 391):

- Ընթարքեա աշկը հանել - Չնայած խանգարող հանգամանքներին՝ կյանքը վայելել, լավ ապրելով՝ բոլորի նախան-

ձը շարժել, զարմացնել: Սաղ վախտը քըճի ա անըմ, ընթարքեա աշկըն էլ ա հանըմ (Ձ):

- Ընթարքեա դարդերը լըճ օնել - Անտեղի տարվել մեծ վշտով, հոգսերով: Ընթարքեա դարդերը լըճ ա կալնի, բաշիր չանում, թա ապրէ (Բ):

- Ընթարքեա ըռաշկէն - տեն ԱՓԱՇ-ԿԱՐԱ:

- Ընթարքեա ըռըճըն ըղնել - Ընդհանուր՝ բոլորի խոսակցության նյութ դառնալ: Սաղ գանքումը մէհէտ մին ալէճ ըրավ, ընթարքեա ըռըճըն ընգավ (Բ):

- Ընթարքեա ըռըճը քըցիլ - Ընդհանուր՝ բոլորի խոսակցության նյութ դարձնել: Հիրըվանէն կընգանը սիրական պահէլը ընթարքեա ըռըճը քըցից (Ձ):

- Ընթարքեա իրըճէն - տեն Ընթարքեա տակէն:

- Ընթարքեա լէփը կըլիսէն ածել - տեն Շանը լէփը կըլիսէն ածել:

- Ընթարքեա խէրան-շառան կըլիսու ըղնել - Կյանքը հասկանալ, կյանքի լավ ու վատ կողմերն իմանալ: Ընթարքեա խէրան-շառան կըլիսու յա ըղնում, կօրծի յօր կանլ (Բ):

- Ընթարքեա համ տակը գիղնիլ, համ կըլծիլը - Շատ փորձված լինել: Էտ ախճիճը ընթարքեա համ տակըն ա գիղնիլ, համ կըլծիլը, կարէլ չըս խնփիս (Ձ):

- Ընթարքեա ճօնը փըռնել, քինիլ - տեն Ընթարքեա նըհըճտ քինիլ:

- Ընթարքեա մաջը թըվանգըն ա նըմըրոթթուն քըցնիլ - Բոլոր անօրինությունների պատճառը պատերազմն է: Ընթարքեա մաջը թըվանգըն ա նըմըրոթթուն քըցնիլ, վէր կըռըճը անդաճ չիննի, լօխ լ'ավ կըպրին (Ձ):

- Ընթարքեա մընաս պարավ ասել - Մեռնել, վախճանվել: Ընթարքեա մընաս պարավ ասից, դօրմի ընդըրա, լ'ավ մարթ ար (Բ):

- Ընթարքեա յէշիլ - Ուրիշներին հետեւել, ուրիշներին ընդօրինակել: Ընթարքեա յէշիլ ա, ինքըն էլ կ'ուրթթուն անում (Բ):

- Ընթարքեա նըհըճտ հըխկըհաշըճը պըրծըցընել - տեն Ընթարքեա մընաս պարավ ասել:

- Ընթարքեա նըհըճտ քինիլ - Տիրող պայմաններին, շրջապատին, ժամանակաշրջանին հարմարվել, հետեւել ընդունված կարգին: Միհէնգ էն էլ ա փօխվալ, ընթարքեա նըհըճտ ա քիննում (Ձ):

- Ընթարքեա պէնը գիղվալ չի - Աշխարհի գաղտնիքներն՝ իրերի ընթացքն անհնար է գուշակել: Այն ասում.- Ընթարքեա պէնը գիղվալ չի, ամբարըտ ցօրնալ լըցէլ (Ձ):

- Ընթարքեա վէրջը կ'ալ - Աշխարհը կործանման եզրին լինել: Ընթարքեա վէրջը լըճկալ ա, ամմէն օր կըռըճիլ ա ըսքըսում (Ձ):

- Ընթարքեա տակէն - Ամբողջ աշխարհում: Ընթարքեա տակէն հինջ օցէր ա ըննում, լօխ կ'ամ ըն թաքավըճէն ըռաշկալը անց կէնում (Ձ):

- Ընթարքու մընջանք - Անջափ, չափազանց շատ: Վըճուկանը ուրիշանում ա ընթարքու մընջանք, էլ գ'իւղնում չի, թա հունց հըսավ տօն (Ձ):

ԱՇԽՕՐ - գ. հպվ. Աշխատանքային օր, կոլտնտեսականի մեկ օրվա աշխատանքի համար սահմանված չափի միավոր: Կալիսօը մին աշխօրէն հէնգ՝ լիտըր կ'ինի պիճէնից (Բ):

- Աշխօր անել - Աշխօր վաստակել: Ճըրտըրըճէք՝ սավէտին վըխտէն բօլ-բօլ աշխօր ըն իլնիլ ընէյիս (Բ):

ԱՇԿ (գրք. աչք) - գ. 1. Տեսողության գործարան: Նի յա մըննում, տըճնում կ'ապիւտ ընկէրավ, էրկան մըգ'էրավ մին ղանջանգ՝ ախճիճ, էտ ութաղումը նըստած, լանց ա իննում (Ձ): 2. Տեսողություն, տեսնելու կարողություն: Այուն աշկէրը լ'ավ չի, կարում չի ասըճը թիլի (Բ):

3. Հայացք, նայվածք: Սաղ հըրսընքէն վախտը էտ տըղան էտ ըխճըկանը անա աշկը հըռըցընում չի (Ձ): 4. Հսկողություն, խնամք: Աշկէրըտ ըշտըճիլ ա՛ իլնիլ, վէր օրը ցիրըճկալ հիյվըննէն կոտլացալ ըն, կըլիսու չըս ընգավ (Բ): 5. Կիսք. Շատ սիրելի անձ: Կուճի թօռը ապուն աշկըն ա (Բ): 6. Կիսք. Ամենալավը, ամենաընտիրը, լավագույնը: Սաղ ընթարքեա ըրըղնէրէն աշկը թօթէն արաղըն ա (Ձ): 7. Կահույքի եւ նման այլ իրերի առանձին բաժանմունք, գզրոց, դարակ: Ընկափէն աշկը կօտրալ է (Բ): 8. Դռան՝ պատուհանի փեղկերից յուրաքանչյուրը կամ փեղկի յուրաքանչյուր բաժինը: Էս ակուշկան էրկու աշկ օնէ (Բ): Դիւլգանը մըղակէն աշկէրը Նի ըրավ (Բ): 9. Վերքի ծայրը՝ սպիտակ կետը, որի պատռվելով դուրս է գալիս թարախը: Հիւլճնէճիս աշկը դէնալը պոք տըվալ, վահարը տիւս լըճկալ (Բ): 10. Բողբոջ: Ծառէն աշկէրը ցօրտ տարալ ա (Բ): 11. Կարտոֆիլի եւ նման պալարների փոսիկները, որտեղից ծիլեր են արձակվում: Կարտօշկան վըրէլիս աշկէրը բիդի կըլիսըճիլ կըվարին (Բ):

12. Կշեռքի նժար: Քըռէնքը թանազու չի, աչի աշկումը մին կուճի քար տիճի (Ձ): 13. Մատանու կամ այլ իրերի վրա ագուցված՝ ամրացված քար: Էս մուտընէն աշկը խէ ճաքալ ա՛ (Ձ): 14. Ջրի ակունք: ...Ըխափրին աշկը մին օշափ կապալ ա, ամմէն

օր մին ախճիգ ա տանում, վրձր մին խը-  
րէգ ծուր ա տամ (ՅԺՅ, VII, 13): 15. Օղու,  
դռաբի եւն պղպջակ: Արաղը թըփըհա-  
րըմ ըս, վեր աշկերը զըճ-զըճ հլնւ, գի-  
դն վեր թօթ ա (2): 16. տր. հոլ. Աշկէն:  
Կարծիքով, գնահատումով, պատկերաց-  
մամբ: Յերգիւքը սըվացալ ա. աշկէս  
կարկուտ ա կըլական (Բ): 17. Խորքիկի  
երկու բաժիններից յուրաքանչյուրը: Կօ-  
լան տինում ա խորքիկին մին աշկումը,  
ջինը՝ էն մի աշկումը, օտուքը քըցում, հը-  
դէ ինում (2):

- Աշկա ըղնէլ - 1. Նախկին հարգան-  
քը կորցնել, այլեւս չսիրվել՝ չհարգվել:  
Էտ օրվանից Մէլիք՝ Շահնազարը ժու-  
ղովորութեն աշկան ըղնում ա (2): 2. Ա-  
նուշադրության մատնվել, մոռացվել:  
Աշկա ընգած տը՛ղ ա, քիկի բօստան ը-  
րա՛ (Բ): 3. Տեսադաշտից անհետանալ,  
այլեւս չերեւալ: Չըքօրանը թըվանգ՛ը  
ջընաղան քըջըցնէլը, կըխտարը աշ-  
կան ընգավ (2):

- Աշկա թօղնէլ - տեն Աշկաթօղ ա-  
նէլ:

- Աշկ ածէլ (գրք. ակն ածել) - 1. Չորս  
կողմը նայել՝ դիտել: Յիշկան աշկ ածից,  
էտ ծառը ըրվաց վէջ (Բ): 2. Հայացքով ու-  
րոնել, փնտրել, գննել: ...Թաքավէրը թա-  
քուն աշկ ա ածըմ, փափաղը յօր օնըմ...  
(ՅԺՅ, V, 127): 3. Հսկել, նայել, ինամել: Թա-  
քավէրին տըղան ատում ա. - Էտ պըռավէն  
տարէք՝ պալատը, վեր էրուշ պէն կարէ  
վէջ, լըհա մեր բախճին աշկ կածէ (2):

- Աշկա կօրջիլ - տեն Աշկա ըղնէլ (3):  
Թաքավէրին տըղան հէտան վագ ա  
տամ, թա փըղնէ, տը՛սնում ա աշկան  
կօրավ (ՅԺՅ, V, 47):

- Աշկա հը՛ռէ - Տեսադաշտից՝ ու-  
շադրությունից հեռու: Նծք՛անը Էտ  
վը՛սկուն պօլիգ՛ը տանում ա, մին աշկա  
հը՛ռէ տը՛ղ թաղում (2):

- Աշկա հը՛ռէ, սըրտա հը՛ռէ - Երկար  
ժամանակ իրարից բաժանված՝ հեռու  
լինելով՝ բարեկամությունը՝ մտերմու-  
թյունը վերացած՝ մոռացված: Յենգ՛  
տարէ յա՛ ախպօրը տը՛սալ չի. աշկա  
հը՛ռէ, սըրտա հը՛ռէ ըխպըրօթուն ա  
տահանց ըխպըրօթունը (Բ):

- Աշկա հըռանալ - տեն Աշկա ըղ-  
նէլ (3):

- Աշկան աղու կաթէլ - տեն Ունքը-  
մաջան աղու կաթէլ:

- Աշկան արուն կաթէլ - տեն Ունքը-  
մաջան արուն կաթէլ:

- Աշկան դաղած - Անօրեն, անկարգ,  
չար, չարաճճի: Էտ աշկան դաղածը վէշ  
մինին անգուճ չի օնում, ուրան օգնածը  
անում ա (2):

- Աշկ անէլ - 1. Սկսել բողբոջել: Խըն-

ծօրէն աշկ ա ըրալ (Բ): 2. Սկսել հասու-  
նանալ (պտտողների մասին): Գ՛ողւնսը  
աշկ ա ըրալ, խօխէնք՛ը բըղէրան տօն  
չըն կ՛ամ (Բ):

- Աշկան էլ պըրծընէլ, ըշկըցավան էլ  
- Ջրկվել որեւէ լավ բանից եւ դրա հետ  
կապված անախորժություններից՝ հոգ-  
ներից: Էնքան կըրկըռացէն, էտ բուս-  
տանան ծը՛րք քաշից. աշկան էլ պըր-  
ծավ, ըշկըցավան էլ (Բ):

- «Աշկանըտ յը՛րը օնք կա» ասել -  
Թեթեալի հանդիմանել: Ուրան գ՛ան-  
քում վէշ մինին փիսօթուն չի ըրալ, մին  
փիս պէնու խառնըվալ չի, հնչւն մին  
մարթու ասած չի, թա՛ աշկանըտ յը՛րը  
օնք կա... (2):

- Աշկան կըրակ վեր տը՛ռնալ - տեն  
Ունքըմաջան արուն կաթէլ:

- Աշկան կուրցընէլ - Տեսադաշտից՝  
ուշադրությունից, հսկողությունից բաց  
թողնել: Չօբանը տահանց նըի՛ր տ նըս-  
տում ա, քը՛փ անում, վըխճըրնէն աշ-  
կան կուրցընում:

- Աշկան նը՛ղ - տեն Հափուռը կապ:

- Աշկան պէց թօղնէլ - 1. Չնկատել,  
տեսնելու հարմար առիթը փախցնել:  
Թաքավէրին մաշնակ տըղան ըտըրա-  
նալ ա ինում, դէվին աշկան պէց թօ-  
ղում, կ՛ամ ա խընծօրը քաղում, ք՛ու-  
նում (2): 2. տեն Աշկան կուրցընէլ:

- Աշկան տօպ չըկաթէլ - 1. Ձեւական  
լացել, աչքերից արցունք չհոսել: Յանը  
մը՛ռավ, աշկան տօպ չի կաթից, ըտի  
ախճիգ՛ կիկի՛ (Բ): 2. Շատ լացելուց՝ ող-  
բալուց աչքերը չորանալ, այլեւս ար-  
ցունք չհոսել: Էնքան սծք՛ ա ասալ, աշ-  
կան էլ տօպ չի կաթում (2):

- Աշկ անց կըցընէլ - տեն Աշկ ածէլ:

- Աշկան փախջիլ - տեն Աշկա ըղ-  
նէլ (3):

- Աշկան քըցիլ - 1. Նախկինի պէս  
այլեւս չսիրել՝ չհարգել: Էտ պէնը վեր ի-  
լնւ, ախպօրը տըղէն աշկան քըցից (2):  
2. տեն Աշկաթօղ անէլ:

- Աշկ աշկու - Բացահայտ կերպով,  
առանց իրարից թաքցնելու: Աշկ աշկու  
մըրթըրընէգ՛ սիրական ըն պահում (2):

- Աշկ աշկու քըցիլ - Իրար աչքերի  
նայել, հայացքներն իրար սեւեռել: Նըս-  
տում ըն, աշկ աշկու քըցում, տու ա-  
նում (Բ):

- Աշկավ անէլ - 1. Աչքի շարժումով՝  
կկոցումով նշան տալ, ակնարկել, որեւէ  
բան հասկացնել: Վեր աշկավ ա անում,  
մարթը մին զը՛ռ քար յօր ա օնում, օցէն  
կըլիէն կ՛ամ, ըսպանում (ՅԺՅ, VII, 236):  
2. Սիրային ակնարկ անել, սիրահետել:  
Հնչւն էրկու ամէս կա վէջ, վեր փըսակ-  
վալ ա, ամմա ըշտը՛ղ դաշնանգ՛ ախջիգ՛

ա տը՛սնում, աշկավ ա անում (2): 3.  
Լամպը՝ ճրագը լավ չվառվել, թարթել:  
Էս լամբուշկան խէ փօխում չը՛ս, աշկավ  
ա անում (Բ): 4. Ընդհանրապես թարթել:  
Էտ խուխէն խէ տանում չը՛ք դօխտուր,  
սաղ օրը էն ա աշկավ ընէս (Բ):

- Աշկավ աշկ չինիլ - Բոլորովին չսի-  
րել՝ ատել, տեսնելու ցանկություն չունե-  
նալ: Թունի դնին շատ ար կըգընըվալ,  
շըտէրան խըռավալ, մին քընէնին էլ աշ-  
կավ աշկ չօնար, թա յէշի (ՅԺՅ, VI, 177):

- Աշկավըն ըղնէլ - Հանկարծ երեւալ,  
նկատվել: ...Մին շափաղ ա աշկավը  
ընգընմ, մին էլ կօրջըմ (ՅԺՅ, V, 37):

- Աշկավը տը՛սնալ - Անձամբ ակա-  
նատես լինել՝ իմանալ, ճանաչել: Էտ  
խօխան ասմա. - Դանի, աշկավըս ըմ  
տը՛սալ, ծէր էշը կ՛ողը կէրալ ա (Բ):

- Աշկավ չափէլ - 1. Հայացքով գննել:  
Աշկավ չափից, հավան կացավ (Բ): 2.  
Աչքաչափով որոշել (քանակը, ծավալը,  
հեռավորությունը եւն): Աշկավ չափէ,  
տը՛ս քանէ կիւօ վա (2): 3. Սպառնալից  
հայացքով, թշնամանքով նայել: Արջը  
մարթին աշկավ չափից, թըքից, հըռա-  
ցավ (2):

- Աշկավ տալ - Մեկին կամ մի բանի  
նախանձով նայելով՝ չար աչքով վնասել:  
Տանը պատան կարկաճ, կածոկ յա նալ  
ըն կախ տամ, վեր աշկավ չի տան (2):

- Աշկա տոն մընալ - Աննկատ մնալ,  
չնկատվել, աչքից վրիպել: Էտ հունց ամ  
աշկա տոն մընացալ, վեր տը՛սալ չըս (2):

- Աշկէն ալաբուլա ըրվալ - Տարօրի-  
նակ երեւալ, կասկածելի թվալ: Էտ պա-  
ռավը աշկէս ալաբուլա յա ըրվամ,  
սայաղ կաց (Բ):

- Աշկէն աղէնքը - տեն Աշկու լուս:

- Աշկէն աղուն հանէլ - տեն Աշկէն  
վը՛րթընը կօտըրել:

- Աշկէն առաշկը կլնլ - 1. տեն Աշ-  
կէն ըրվալ (1): 2. Վերհիշել, մտաբերել:  
Խօխա վըխտըվա պէնէրը լօխ աշկէն ա-  
ռաշկը յը՛կավ, ըսքըսից լնց ինիլը (2):

- Աշկէն առաշկըն օնէլ - Հաշվի առ-  
նել, նկատի ունենալ, նկատի առնել: Հօ-  
րը տըված խըրատնէն միշտ աշկէն ա-  
ռաշկըն ա օնում (Բ):

- Աշկէն առաշկը պիրիլ - 1. Տեսանե-  
լի դարձնել, նկատել տալ: Վեր էտ շօրէ-  
րը ըռնուտ պիրում ըն աշկէն առաջը, օ-  
շան տանում ա, վեր ըղնում (2): 2. Հի-  
շեցնել, մտաբերել տալ: Մէխկ ա էտ կը-  
նէգ՛ը, խըրէգ՛ ջանիլ վըխտըվա ըրածը  
աշկէն առաշկը պէր (Բ):

- Աշկէն բաբաճը կօխէլ - տեն Աշկը  
կօխէլ:

- Աշկէն բըբաճումը տինիլ - տեն  
Աշկը կօխէլ:

- Աշկէն գ՛ողը քաշիլ - Ծաղկաքաղ

անել, լավերը ընտրել: *Բուստանէս աշկէն գ'իւլը քաղից, տարաւ (Բ):*

- Աշկէն գօռ անել - Տեսողությունը լարել: *Հիշկան աշկէն գօռ ա անում, կարում չի գ'իղա, թա էն հու ընցավ էն սարավը (Ձ):*

- Աշկէն ըռաշկէն - 1. Մեկի ներկայությամբ, մեկի մոտ: *Կընգանը աշկէն ըռաշկէն փուլը հըմբարից, տուվավ էտ մարթին (Ձ):* 2. Դիմաց, մոտիկ: *Էն ա աշկէտ ըռաշկէն, տըմսնում չըս (Բ):* 3. *տեն ԱՓԱՇ-ԿԱՐԱ: Լօխճին աշկէն ըռաշկէն կուղօթուն ա անում (Բ):* 4. Հիշողության մեջ, մտքում: *Քանէ տարէ յա շէնան տոն յը կած, ամմա մեր սարերը, մեր քօլերը, մեր ըխպիրնէն էն ա աշկէն ըռաշկէն (Ձ):*

- Աշկէն ըրվալ - 1. Երեսալ, տեսանելի լինել, նկատվել: *Ըշտըդէք' ըս, հիբանցա աշկէն ըրվալ չըս (Բ):* 2. Աներեւոյթ, ոչ իրական բան տեսնել, թվալ: *Շինացէք' ծըծըդէս ըն, թա.- Մեր շէնըմը կ'իւլ չի կա. աշկէտ ա ըրվացալ (Ձ):* 3. Կարեւորություն՝ նշանակություն ունենալ, ափսոսալ, ժառանգություն արտահայտել: *Էտքան հարուստ ա, ամմա վեր մինին մին մանէթ փուլ ա տամ, աշկէն ըրվալ ա (Ձ):* 4. Սպառնալ, երկյուղ ազդել: *Աշկէն հանց ըրվացալ ըմ, վեր ինծ տըմսնըմ ա, հըդէն փօխում ա (Բ):* 5. Մեկին ցավակցելու համար տեսության գնալ: *Հիրըվանէս մըրաքուրը մըռալ ա, ք'ինիմ աշկէն ըրվալ, կ'ամ (Բ):*

- Աշկէն ըրտասունքը ցըմաթել - 1. Այլեւս չլացել, չտրտմել: *Ըտեղ լնվ ըպրէս ըն. էտ ըխճըկանը աշկէն ըրտասունքը ցըմըքէս ա (ՀԺՀ, V, 595):* 2. *տեն Աշկան տօպ չըկաթէլ (Ձ):*

- Աշկէն թըքել, տեն անել - Խիստ արհամարհել, ատել: *Յըս կընօխէ յըմ ընդըրա աշկէն թըքալ, տեն ըրալ (Ձ):*

- Աշկէն թօզ փըջիլ - Չնչին բաներով հրապուրելով՝ խորամանկությամբ խաբել: *Մին էրկու հէտ դօնաղ ըրալ, աշկէն թօզ փըջից, կաղէգ' ախճիգ'ը ըրիմ'տը փըսակից (Ձ):*

- Աշկէն իշըդան կախ ինիլ - Նեղել, խանգարել, ազատ գործելու հնարավորություն չտալ: *Հինչ ըս աշկէն իշըդան կախ իլնլ, թօղէ կօրծ անիմ (Բ):*

- Աշկէն իշըդը կըտըրել - *տեն Աշկէն լիւսը խըվարել: Մին փարա կընանէք' կ'էնգ'ատ ըն անըմ, վեր ուրանց մարթիք'ը, աշկընէրին իշըդը կըտըրած, տանան հըռանըմ չըն (Ձ):*

- Աշկէն լավ ըրվալ/լնվ թըվալ - Իրեն լավ դրսեւորել, մեկի սիրելին դառնալ: *Ամմէն մարթ էլ ուզիս ա լնվ, թա լի-հն տըրա աշկէն լնվ ուրվա, մին լիվօթուն անէ (ՀԲ, 338):*

- Աշկէն լիւսը խըվարել - 1. Տեսողու-

թյունը վատանալ՝ թուլանալ, լավ չտեսնել: *Հէրիք' չի' քառ ա, աշկէն լիւսըն էլ խըվարալ ա (Բ):* 2. *տեն Աշկէնը քուռանալ:*

- Աշկէն լիւսը հանել - *տեն Աշկը հանել:*

- Աշկէն լիւսը պըկասել - *տեն Աշկէն լիւսը խըվարել(1):*

- Աշկէն լիւսը վեր տըռնալ - 1. Շատ աշխատելուց՝ տեսողության լարում պահանջող աշխատանք կատարելուց կուրանալ: *Էնքան կիրնլ ա, ճինջնլ, աշկէն լիւսը վեր ա տըռալ (Բ):* 2. Մեծ դժբախտություն պատահել: *Աշկէն լիւսը վեր տըռալ, Աստուծ, էս հինչ գնլիւմ ա (Ձ):*

- Աշկէն լիւսը քիսիլ - *տեն Աշկէն լիւսը խըվարել(1):*

- Աշկէն ծօռ ըրվալ - Ատել, չսիրել, չհավանել: *Քըդ'գ հինչ ա' ըրալ, վեր աշկէտ ծօռ ա ըրվալ (Բ):*

- Աշկէն հատը յըր քաղէլ - Աջքի եղջերաթաղանթի վրա առաջացած բիծը վերացնել. աջք քաղողը, հիվանդի գլուխը կռացնելով ջրով լի ամանի վրա, նրա գլխի վրայից մի բուռ ոսպ է թափում ամանի մեջ, որից հետո իբր բիծը անհետանում է: *Խուխէն տանում ա ըտըրա կօշտը, վեր աշկէն հատը յըր քաղէ (Ձ):*

- Աշկէն դըրաղավը յէշիլ - *տեն Աշկէն տակավը յէշիլ:*

- Աշկէն ճըծօն կօտըրել - *տեն Աշկէն վըրթըն կօտըրել:*

- Աշկէն մինը լնց, մինը՝ ծըծաղ - Եվ տրտում, եւ ուրախ: *Կարում չըս կըլծիս ըղնիս ըտըրան. աշկէն մինը լնց ա, մինը՝ ծըծաղ (Ձ):*

- Աշկէն մինը պէց (թաղէլ, մըռնէլ) - Փափագին չհասած, մի բանի կարոտ մնացած: *Հնլն թօռնը տըսնալու մըռալ, աշկէն մինը պէց թըրըդ'ցէն (Ձ):*

- Աշկէն մին թանլիւր ըրվալ - *տեն Աշկէն ալաբուլա ըրվալ:*

- Աշկէն մօխեր փըջիլ - *տեն Աշկէն թօզ փըջիլ:*

- Աշկէն յէշիլ - Մեկի կամքով շարժվել, նրա օրինակին հետեւել: *Դօրնլնց Սուրէնը հինչը օգ'ում ա անէ, մըծ ախպօրը աշկէն ա յէշում (Ձ):*

- Աշկէն յըդը հնլիլ - Նիհարել, հյուծվել: *Էնքան կօրծ ա ըրալ, աշկէն յըդը հնլնլ ա (Բ):*

- Աշկէն յըդը (շիրմփալ) քաշիլ - Խիստ նեղել, տանջել: *Խըդ'դ ախճիգ'ը մին օր չի տըմսալ տահանց տանը, սաղ օրը էն ըն աշկէն յըդը քըշիս (Բ):*

- Աշկէն յըրա տըդ'ը ինիլ - *տեն Կըլ-խէն յըրա տըդ'ը ինիլ:*

- Աշկէն սըվըսիպտակը - Միակ հույսը, շատ սիրելին, թանկագինը: *Այան ամմա.- Խմ աշկէն սըվըսիպտակը իմ քըվօր տըղան ա (Բ):*

- Աշկէն վըրթըն կօտըրել - Քիչ քնելով՝ հանգստանալ, քնատությունից ծանրացած աջքերը հանգստացնել: *...Յէկի մին ծառի տակ տըմբըլաս կըլ-խըտակիս տիրի, վեր աշկիս վըրթըն կօտրիմ, մին էլ տէսնամ մին հարայ-հըրօց ընգալ... (ՋՏ, Ա, 107):*

- Աշկէն վըղմմօխեր փըջիլ - *տեն Աշկէն թօզ փըջիլ:*

- Աշկէն տակավը անց կըցընել - 1. Թեթեալիկ նայել՝ կարդալ: *Նամակը աշկէն տակավը անց կըցըրալ, տուվալ քըվօրը (Ձ):* 2. Անտես անել, ուշադրություն չդարձնել: *Ամմէն հինչ աշկէն տակավըն ա անց կըցընըմ, ըտըրա հըր'տէ էլ կօրծ չի դիւզիւմ (Բ):*

- Աշկէն տակավը յէշիլ - 1. Թեթեալիկ՝ հպանցիկ նայել՝ դիտել: *Աշկէն տակավըն ըմ յէշնլ, մըռտըս չի (Բ):* 2. Ծածուկ՝ գաղտագողի նայել՝ հետեւել: *Աշկէն տակավը յէշից, տըմսալ էտ մարթըն ի մըտալ հիրըվանէն կ'ուրմը (Ձ):* 3. Խեթ նայել: *Խանը աշկէն տակավը վեր յէշից, նօք'արը չօքից (Բ):*

- Աշկէն տակէն պահել - Ուշադրության կենտրոնում պահել, հսկել, հետեւել: *Նախագան բաղվանչուն աշկէն տակէն ա պահում, հանցու կ'ուղթօթուն չանէ (Բ):*

- Աշկէն տակէն փաննար տինիլ - Բռունցքով աջքատակին հարվածելով՝ կապտուկ գոյացնել: *Թըխից, կընգանը աշկէն տակէն փաննար տիրալ (Բ):*

- Աշկէն տակըն օնէլ - *տեն Աշկէն առաշկըն օնէլ:*

- Աշկէն տարըն ինիլ - Քունը հաղթահարել, չքնել: *Սաղ քըշէրը աշկըն հօփ չի կալնլ, աշկէն տարըն ա, էն ա իլնլ դարավուչթօթուն ընէիս (Ձ):*

- Աշկէն տուր կ'նլ - Մեկին դուրեկան լինել, նրա կողմից հավանության արժանանալ: *Էտ ախճիգ'ը լօխճին աշկէն տուր ա կ'ամ (Բ):*

- Աշկէն փիս թըվալ - Մեկի հավանությանը չարժանանալ: *Ըտըրա փըռնած կօրծը աշկէն փիս ա թըվում (Բ):*

- Աշկէն փօշը տոն օնէլ - *տեն Սըր-տէն փօշը տոն օնէլ:*

- Աշկէն քախճըր ըրվալ - *տեն Աշկէն տուր կ'նլ: Շօղօփուրթը ամէքա ուրանց հէտէ ք'նիվէն դօնաղ ին անում, վեր աշկէն քախճըր ըրվան (ՆԼՂԺԲ, 102):*

- Աշկէն քօն կ'նլ - *տեն Քօնը տանել: Էն մին փայ հըվըքօղէն աշկէն քօն չի կ'ամ (ՆԼՂԺԲ, 90):*

- Աշկեր յըրա - Սիրով, ամենայն հո-  
ժարությամբ, մեծ հաճությամբ: *Ասլան-  
Բալասին ասալ ա.- Ըշկըրներէս յըրան,  
կանկը... (ՅԺՅ, VII, 25):*

- Աշկեր չօփ կըկա՛մ - Ասում են աշ-  
խատանքից ուշացողին:

- Աշկերը արնոն կօխել/օնել - *տեն*  
Աշկերը ըռնավ լըցվել:

- Աշկերը բէյսին թըխել - Սաստիկ  
հուզվումնից, հարվածից, բարկություն-  
նից, սովածությունից, հիվանդությունից  
են աչքերը չօվել: *Սին պէն կէր, աշկե-  
րըտ բէյսիտ ա թըխալ (Բ):*

- Աշկերը ըռնավ լըցվել - 1. Աչքերն  
արնակալել՝ կարմրել: *Էտ խէ աշկերըտ  
ըռնավ լըցվալ ա, անքօն ը՛ս: 2. Խիստ  
բարկանալ, գայրանալ, կատաղել, գա-  
զագել: Էտ խօսկան Բայանդուր իշխա-  
նին աշկերը ըռնավ լըցվում ա, օզըմ  
ա, թա սօրը հանէ, սպանէ Արսէնին  
(ԼՂԲ, 340):*

- Աշկերը ըռնավ լիզը - Խիստ գայրա-  
ցած, կատաղած, գազագած: *Վէր ըտի  
աշկերը ըռնավ լիզը նի յա մընըմ, տա-  
հանք լօխ սըրտաճաք ըն տը՛նըմ (Ձ):*

- Աշկերը ըռնըկալիլ - *տեն* Աշկերը  
ըռնավ լըցվել:

- Աշկերը լըցնել - Արտասավակալել,  
լացակումել, հուզվել: *Վէր ըտի տը՛սնում  
ա էտ խօխօնցը, աշկերը լըցնում ա (Ձ):*

- Աշկերը լիզը - Արտասուքն աչքե-  
րին, լացակումած, հուզված: *Աշկերը լի-  
զը նի յա մընում, տը՛սնում հանը էն ա  
հոնք՛ին տալիս (Ձ):*

- Աշկերը խուփ - *տեն* Աշկերը հօփ:

- Աշկերը ծընդըրանալ (*գրբ. ծանրա-  
նալ աչաց*) - 1. *տեն* Աշկերն լիսը խըվա-  
րել: 2. *տեն* Քօնը տանել:

- Աշկերը ծիլի-վիլի անել - 1. Մեկին  
կամ մի բան խիստ հավանելով՝ ունե-  
նալու ցանկություն ունենալ: *Տըղան նի  
յա մընըմ կ՛ումը, վը՛սկէ ծիլ տը՛սնըմ,  
աշկերը ծիլի-վիլի յա անըմ (ՅԺՅ, V, 74):*  
2. Հարբել, հարբելուց տարուբերվել:  
*Վէր օխտինջի կէնացը խըմում ա, թա-  
մաղէն աշկերը ծիլի-վիլի յա անում (Բ):*

- Աշկերը ծոնը տանել/ծոննավ ըղնել  
- Չյանը երկար նայելուց աչքերը ցավել,  
տեսողությունը թուլանալ: *Խօխէնք՛ը էն-  
քան ծոնըրկըտըրակէ տըվէն, ըշկըր-  
նէն ծոնը տարավ (Բ):*

- Աշկերը ծօվ տը՛նալ - Շատ լացել,  
արտասվել: *Աշկերըտ ծօվ ա տը՛նալ,  
խըրէգ՛ լանց իլ (Բ):*

- Աշկերը կապ - *տեն* Աշկերը հօփ:

- Աշկերը կապել - 1. *տեն* Աշկերը  
հօփ օնել: 2. *տեն* Աշկերն թօգ փըջիլ: 3.  
Կաշառք տալ, կաշառել: *Սուրյին ըռուշ-  
վաթ տուվավ, աշկերը կապից (Ձ): 4.*

Մեռնողի կյանքի վերջին պահին, նրա  
մոտ լինելով, մեռնելուց անմիջապես  
հետո նրա աչքերը փակել: *Սուաբաթը  
հըռնէ էս վախտըն ա մը՛նալ. աշկերը  
յը՛ս ըմ կապալ (Բ):*

- Աշկերը կըծըկածի/կըծըկըրակ ա-  
նել - 1. Ուժեղ հարվածից աչքերի առաջ  
կայծեր երեսալ: *Արջը վէր թըխում ա,  
կ՛իլին աշկերը կըծըկածի յա անում  
(Ձ): 2. տեն* Աշկերը ըռնավ լըցվել (2):  
*Էտ վէր ըսկանում ա, թաքավէրին աշկե-  
րը կըծըկածի յա անում (Ձ):*

- Աշկերը կընանջիլ - Սաստիկ քաղց  
զգալ, քաղցածությունից տեսողությունը  
թուլանալ: *Էրկու օր ա՝ պէն չըմ կէրալ,  
աշկերըս կընանջալ ա (Բ):*

- Աշկերը կըրակ կըտըրել/կիւրմիւրիլ -  
*տեն* Աշկերը ըռնավ լըցվել (2):

- Աշկերը կիւր տանել - Շատ կարդա-  
լուց՝ գրելուց տեսողությունը թուլանալ:  
*Էնքան տան ա սըվը՛րալ, աշկերը կ՛իւր  
տարալ ա (Բ):*

- Աշկերը կօլ քիւնիլ - 1. Հոգնածու-  
թյունից կամ անքնությունից աչքերը  
փակվել: *Աշկերըս կօլ ա ք՛ինամ. սաղ  
քըշկերըս յը՛ս կօրծ ընէլիս (Բ): 2. Հիվան-  
դությունից կամ սովածությունից նիհա-  
րել, հյուժվել: Խը՛ղըմ էնքան ցավ ա քա-  
շալ, աշկերը կօլ ա ք՛ը՛ցալ (Բ): 3. Աչքե-  
րը փոքրանալ (գիրությունից, ծիծաղից  
են): Էնքան ք՛ուքացալ ա, աշկերը կօլ  
ա ք՛ը՛ցալ (Ձ): 4. Մեռնել: Ծանջվից,  
տանջվից, աշկերը կօլ ք՛ը՛ցալ (Բ):*

- Աշկերը հանգիլ - Աչքերի փայլը՝  
արտահայտությունը՝ կենդանությունը  
կորցել: *Մանմար աքերը պըռավալ ա,  
աշկերը հանգալ ա (Ձ):*

- Աշկերը հը՛տան քիւնիլ - Մեկի՝ մի  
բանի ետեփց կարոտով մնալ: *Հի՛նջ ախ-  
ճիգ ա՛ր, լօխճին աշկերը հը՛տան քը՛-  
ցալ (Բ):*

- Աշկերը հըլըղօրել - Քնից նոր արթ-  
նանալ: *Մարթը հանլ էն ա ինիս աշկերը  
հըլըղօրէս, վէր կընէգ՛ը կավը քըթէս ա,  
պըրծընէս (Ձ):*

- Աշկերը հըլծրել/հըլծր-պըլծր անել -  
Աչքերի շարժումով սաստել՝ գայրույթը  
հայտնել: *Աղանթըն ա, մարթը վէր աշկերը  
հըլծրէ, կընէգ՛ը զինքը կըրիվաքէ (Ձ):*

- Աշկերը հօփ - 1. Անվերապահորեն,  
վստահությամբ, առանց ավելորդ ջանք  
թափելու, հեշտությամբ: *Ըտը՛ղ հիշ կա՛,  
յը՛ս աշկերըս հօփ մին մուռուտումը կա-  
նիմ (Բ): 2. Անփորձ, միամիտ: Աշկերը  
հօփ մարթ ա, հու կարում ա խափում ա  
(Ձ): 3. Կուրորեն չտեսնելով: Աշկերը  
հօփ ք՛ը՛ցալ, ընգավ քը՛րծը նիվէր (Բ):*

- Աշկերը հօփ կ՛ան - Քնել, չկարողա-  
նալ քունը հաղթահարել: *...Հիշքան օ-*

*զըմ ա, թա քօն չինի, կարըմ չի, աշկերը  
հօփ ա կ՛ամ... (ՅԺՅ, V, 17):*

- Աշկերը հօփ օնել/անել - 1. Աչքը  
կացնել, սկսել քնել: *Լ՛ըհա աշկերը հօփ  
ա օնում, ծէն ըն տամ, թա ճէլի յը՛ք  
կանցիլարը (Բ): 2. Չտեսնելու տալ,  
աննկատ թողնել, ներողամիտ լինել: Բը-  
րիգադիրը ասմա.- Յը՛ս աշկերըս հօփ  
ըմ օնում, կարում ըս՝ նախագէն խաթի-  
րը քըթիր (Ձ): 3. Մեռնել: Հանը հանլ աշ-  
կերը հօփ չի կանլ, տըղէրքը տընամա-  
չը փայ-փայ ըն ընէս (Բ):*

- Աշկերը ճըպի-ճըպի անել - 1. *տեն*  
ճճողճճող(ճ)նէլ: 2. Շվարել՝ շփոթվել,  
ապշել: *Էտ վէր գ՛իղանց, մընաց աշկերը  
ճըպի-ճըպի ընէս (Ձ):*

- Աշկերը ճիրըկալիլ - *տեն* Աշկերը  
լըցվել: *Էս մարթին աշկերը ճիրըկալըմ  
ա ցըվէլան (ՆԼՂԺԲ, 116):*

- Աշկերը ճոնը տանել - Հոսող ջրին  
երկար նայելուց տեսողությունը խան-  
գարվել, երբ թվում է, թե շարժվողն  
ինքն է, իսկ ջուրն անշարժ է: *Կ՛ը՛տէն  
վէր շատ յէշիս, ճոնը աշկերըս կըտա-  
նէ (Ձ):*

- Աշկերը ճօկել - Կարողանալ տես-  
նել՝ տեսածն իրարից զանազանել: *Աշ-  
կերըս ճօկում չի, էն սարէն տօշումը  
վըխճըրնէ յը՛ս, թա կըվէ՛ր (Բ):*

- Աշկերը մըթն(ըվ)ել/մըթէն կօխել -  
1. Հիվանդությունից, սովածությունից  
են տեսողությունը թուլանալ՝ աղոտա-  
նալ: *Տոնըմ էնքան կացավ, վէր աշկերը  
մըթնըվից (Բ): 2. Հուզմունքից, գայրույ-  
թից իրեն կորցնել, աչքին ոչինչ չերեսալ:  
Վէր խաբարը յը՛կավ, թա տըղէն ըսպա-  
նալ ըն, Սիշա դային չօքից, աշկերը  
մըթնըվից (Բ):*

- Աշկերը մընալ - *տեն* Աշկերը կօլ  
քիւնիլ (2):

- Աշկերը յըրան քըցիլ - 1. Ուշադիր  
նայել՝ հետեւել: *Աշկերը յըրան քըցից,  
տը՛սնա՝ Էտ դերվիշը ըշտը՛ղ ա ք՛իս  
(Ձ): 2. Աչքերով ցույց տալ: Ախճիգ՛ը աշ-  
կերը քըցում ա ըշկափէն յըրա, տըղան  
կըլծիս ա ըղնում, վէր պիլանին էն ա ըն-  
դը՛ղ (Ձ):*

- Աշկերը նըհը՛տը տանել - Աչքը  
ետեփց կարոտով թողնել: *Նըշանաճըս  
փըխճըցըրէն, աշկերըս նըհը՛տը տա-  
րէն (Ձ):*

- Աշկերը շաղվել - *տեն* Աշկերը մըթ-  
ն(ըվ)ել:

- Աշկերը շըլծր քաղել - Նինջը հաղ-  
թել, նիրհել: *Անքօն-անդարար բաղվան-  
չի յա, աշկերը շըլծր ա քաղում (Բ):*

- Աշկերը շըռըմօռ տալ/անել - *տեն*  
Աշկերը հըլծրել:

- Աշկերը շըլշմբանդ ըրած - *տեն*  
ՉՈՇՄԸԿԱՎԵՐ:

- Աշկերը շօռ ածել - 1. տեն Աշկ ածել: 2. Ցանկաստեր՝ հեշտաստեր՝ վաճառոտ լինել, սիրահետել: Սաղ վախտը էն ա աշկերը շօռ ըծես, նամուսը կըտըրվէ ընդորա (Բ):

- Աշկերը չըռել - 1. Աչքերը լայն բացել (գարմանքից, գայրույթից եւն): Վըսկէն վար մըտըն ար ընզնում, աշկերը չըռում ար... (ՅԺՅ, V, 407): 2. տեն Աշկերը չըռք՝ անել: 3. տեն Աշկերը հըլծըրել: Էտ վախտը թաքալկերը աշկերը էտ սապօժնիգին յըրան պըլըզըմ ա, չըռքմ, սապօժնիգը վըխէլան մընամ ա կըմկըմախիս (Ձ):

- Աշկերը չըրաղվան - տեն Աշկերը պարզ:

- Աշկերը չըռք՝ անել - 1. Ուշադրությունը լարել, ուշադիր լինել, լավ հսկել: Օվջի Փիրումը, աշկերը չըռք ըրած, յէշըմ ա, թա տենա կարըմ ա՛ ճընանջի ծըմակըմը պըտահած օգէն (ՆԼՂԺԲ, 11): 2. տեն Աշկերը չըռք՝ տը՛ռնալ:

- Աշկերը չըռք՝ տը՛ռնալ - Անակնկալից ապշել, գարմանալ: Պառապը վեր վըսկուն անըմըն ըսկանում ա, աշկերը չըռք՝ ա տը՛ռնըմ (Ձ):

- Աշկերը պարզ՝ - Տեսողությունը լավ, լավ տեսողություն ունեցող: Աշկերը պարզ՝ ա, կա՛, էս սաը՛ղը թիլի՛ (Բ):

- Աշկերը պարզիլ - Ուշքը վրան գալ, գիտակցությունը եւ տեսողությունը հստականալ: Մուքին վեր էրկու ըստաքան խըմից, աշկերը պարզից (Բ):

- Աշկերը պենալ/պեց անել - 1. Բանիմաց դարձնել: Մեր աշկերը էս կըռը՛վըն ա պեցալ (Բ): 2. տեն Աշկը պենալ/պեց անել:

- Աշկերը պենվալ - 1. Կյանք մտնել, այլեւս միամիտ չլինել, կյանքը հասկանալ: Տը՛ռալ ըքսան տիրը՛կան, աշկերը անջախ-անջախ պեցվալ (Ձ): 2. Ծաղկել՝ բողբոջել: Գոլլանսուն աշկերը պեցվալ ա (Բ):

- Աշկերը պեց - տեն Աշկը պեց:

- Աշկերը պեց մընալ - տեն Պերանը պեց մընալ:

- Աշկերը պեց մընացած - տեն Աշկը ծակ:

- Աշկերը պեց պահել - Ուշադիր լինել՝ հսկել: Աշկերը պեց կըպահիս՝ դըրդին թուխականէն ճօտերը տանէ վէջ (Ձ):

- Աշկերը պըլըզիլ - տեն Աշկերը չըռել:

- Աշկերը պիցընոփ անել - տեն Աշկերը ճըպի-ճըպի անել:

- Աշկերը պիռնան տիւս տը՛ռնալ - տեն Աշկերը ըռնալ լըզվել (Ձ):

- Աշկերը սըվանալ/սըվըտեղէն անել - տեն Աշկերը մըլթն(ըվ)ել:

- Աշկերըս ինծ կէնա - տեն Աշկերըս քը՛գ կէնա:

- Աշկերը վը՛նսանը տակը ըըցիլ - տեն Աշկերը տափէն օնել:

- Աշկերը վըխաղնօյում - Անուշադիր: Աշկերըս վըխաղնօյում ա՛, տը՛ս-նում չը՛ս, վեր հապէրը նի յըն տը՛ռալ բօստանը (Բ):

- Աշկերը տափէն օնել - 1. Գետնին նայել, ներքեւ նայել: Աշկերըս տափէն կալնած՝ ըշտը՛ղ ը՛ս քո՛ւնում: 2. Ամաչել, անհարմար զգալ: Գալալ կըթնակեր ա, վեր յէշում ըս, աշկերը տափէն ա օ-նում (Ձ):

- Աշկերը տըժըվըմի անել - տեն Աշկերը մըլթն(ըվ)ել:

- Աշկերըս ըշտը՛ղ ա՛ իլնլ - Ասում են նրան, ում անուշադրության պատճառով որեւէ բան է կորսվել: Մարթը ասմա- Աշկերըս ըշտը՛ղ ա՛ իլնլ, վեր կա-վը ծընալ ա, դանան տակավըն ըրալ, ըսպանալ (Ձ):

- Աշկերըս կըփուչանա - Ասում են գեղեցիկ աղջիկներին երկար նայողներին: Խըրեգ՝ յէ՛շի, աշկերըս կըփուչա-նա (Բ):

- Աշկերըս քը՛գ կէնա - Ասում են չար աչք ունեցողին՝ աչքով տվածը քեզ բռնի: Աշկերըս քը՛գ կէնա, ի՛նչ աշկալ տուվէ՛լ (Ձ):

- Աշկերը ցըմըքցընել - տեն Աշկեն ըրտասունքը ցըմաքել:

- Աշկերը փըլըստըրատէ տալ - 1. տեն Աշկերը կըծըկածի անել: 2. տեն Աշկերը ծիլի-վիլի անել:

- Աշկերը փըլալա - Մեծ-մեծ աչքեր ունեցող: Ախճիգ՝ հինչ ա՛խճիգ՝ բօյալ, դաշննգ՝, աշկերը փըլալա... (Ձ):

- Աշկերը փըռնըվել - 1. Աչքերը փակվել (հիվանդությունից): Ասըմ ըն՝ մըրսալ ա, աշկերը փըռնըվալ ա, դի՛զ ա՛ (Ձ): 2. տեն Աշկերը քուռանալ:

- Աշկերը փօս ըղնել - Զյուծվելուց՝ նիհարելուց աչքերի խոռոչները մեծանալ: Միս տարէ յա տըղըպէրցըմ, աշկերը փօս ա ընգալ, էնքան մնշվալ ա (Բ):

- Աշկերը քալլան ըղնել - տեն Աշկերը բէյնին թըխել: ...Զանց պըկիս հարից, վեր աշկերըս չըռվից, քալլան ընգալ, էլ գիղացի վէջ, թա ինծ նըհէտ հինչ պըտահից (ՋՏ,Բ,15):

- Աշկերը քալլան ըըցիլ - Սաստիկ հուզմունքից, հարվածից, բարկությունից, սովածությունից, հիվանդությունից եւն աչքերը չըռել: Էտ ախմախը աշկերը քալլան ա ըըցիւմ, միս փօսում վը՛ր ին-գո՛ւմ, թա մը՛ռալ ըմ (ՆԼՂԺԲ, 119):

- Աշկերը քիսիլ - 1. Քունը տանել: Աշկերըս քո՛ւնում ա, շատ ըմ անքօն կացալ (Բ): 2. Ուշաթափվել: Ծառան վեր ընգալ, աշկերը քը՛ցալ (Բ): 3. Մի բա-

նով հիանալ, գմայլվել: Աշկերըս քը՛ցալ, յանի էսքան նախշուտ գո՛ւրն կի-նի՞ (Բ):

- Աշկերը քուռանալ - 1. Տեսողությու-նից զրկվել՝ կուրանալ: Սնը՛ի ապօրը աշկերը քուռացալ ա, էլ մըրթատը՛ղ տի-նծղ չի կա (Բ): 2. Անեծքի, վշտակցու-թյան, ափսոսանքի եւն արտահայտու-թյուն: Աշկերըս քուռանա, յը՛ս ի՛նչ քը՛ց-՛ցէ վէջ հը՛տան, կո՛ւլը կավըս կերալ (Բ):

- Աշկերը քուռըքընել - 1. Տեսողու-թյունից զրկել՝ կուրացնել: Պիրում ըն էտ ըխճըկանը աշկերը քուռըքընում, խօխան մաշկէն կապում, տանան տիւս ըըցիւմ (Ձ): 2. Տեսողության լարում պա-հանջել (աշխատանքի մասին): Զննջալ կօրծ ա, աշկերըս քուռըքըրալ (Բ):

- Աշկերը օնել - Անեծք, որ ասվում է երախտամոռին՝ հիշեցնելով արած լա-վությունը՝ աչքերը կուրացնի: Աշկերըս օնէ ըրածըս, իցցուն մանէթը հինչ ա՛, վեր պարթկալ տամ չըս (Բ):

- Աշկերը օռչիլ - 1. Շատ լացելուց աչ-քերը կարմրել: Էնքան սծք՝ ասից, աշկե-րը օռալ (Բ): 2. Մեկի նկատմամբ ան-տարբեր՝ չկամ լինել, նրա մասին չմտա-ծել, չցավել, չմտախոգվել (արտահայտ-վում է ժխտականով կամ հարցականով՝ հեզնաբար): Աշկերըս օռչալ ա՛ ընդորա հը՛տէ, վեր քիսիս քծմալ անիս (Բ):

- Աշկը աշկեն - տեն Աշկ աշկու:

- Աշկը աշկեն ըըցիլ - տեն Աշկ աշ-կու ըըցիլ:

- Աշկը բիդի տիւս - տեն Աշկը շօր:

- Աշկը երիւշ պէն չըտը՛սնալ - Մեկի կամ մի բանի մասին մտածելով, նրա-նով տարված լինելով՝ ամեն ինչ մոռա-նալ: Զինչ ա էտ ըխճըկանը տը՛սալ ա, աշկը երիւշ պէն չի տը՛սնում (Բ):

- Աշկը ըղնել - տեն Աշկավըն ըղնել:

- Աշկը թակել - Աչքը ցավացնել: Աշ-կըս թակում ա. փըսօր ա ընգալ (Բ):

- Աշկը թըքանալ - 1. Ուրախանալ, երջանկություն զգալ: Տըղան բընակա յը՛կալ, Ռօգա տծտիւն աշկը թըքացալ (Ձ): 2. Մեկի նկատմամբ սիրալիք լինել: Նախագէն տիւս ըըցիլի վախտը վեր կո՛ւմ ա, աշկը ժողովուրթէն յըրա թը-քանում ա (Ձ):

- Աշկը լիգը - 1. տեն Աշկերը լիգը: 2. տեն Աշկը կօշտ:

- Աշկը լիւս(ի) - 1. Բարեմաղթության արտահայտություն ուրախալի առիթով շնորհավորելիս կամ բարի լուր հաղոր-դելիս: Աշկըս լիւսի, ասում ըն՝ հարթ-նըս ճօխտակ տըղա յա պերալ (Ձ): 2. Հեզնական արտահայտություն՝ վատ բան լսելիս՝ տեսնելիս՝ պատահելիս: Աշ-կըս լիւս, էտ ախմաղըն ա փըսացուս (Բ):

- Աշկը լինում կենալ - Բարեմադրություն, որ ասում են աջքալույս տվողին՝ աջքը լուսավոր լինել, աջքը լույս լինել: - *Հանքի, աշկըտ լուսի, էծըտ ծընալ աշկըտ լուսում կենա, Մարդի (Բ):*

- Աշկը խաղալ - Աջքի կոպը թրթռալ, որը համարվում է լավ կամ վատ բան կատարվելու նախանշան: *Աշկըս խաղում ա, էտ խուխեն կըլխեն մին խաթալ յա կըլական (Բ):*

- Աշկը խըվարել - *տեն* Աշկեն լուսը խըվարել:

- Աշկը ծակ - Աջքածակ, ագահ, անկուշտ: *Մին աշկը ծակ պառալ ա ինում, կ'ամ ա, ասում. - Վէսկեն տո՛, չես ասիմ ճիրին տը՛ղը (ՆԼՂԺԲ, 143):*

- Աշկը ծակվել - Ագահանալ, աջքածակ դառնալ: *էտ մարթին աշկը ծակվում ա, ասում ա. - Մին էլ ք'իննամ, էլիա շէլանկըս վը՛սկավ, ըրծաթավ լըցած կ'ամ (ՀԺՀ, V, 436):*

- Աշկը ծըլտ լակած - *տեն* ԶՕՌ (1):

- Աշկը կոռնեղակավը կանած - *տեն* ՇԻԼԴԻ:

- Աշկը կոխել - 1. Մի բան մեկին ցույց տալով՝ ասելով՝ հանդիմանել, երեսով տալ: *Հենգ՝ տարել առաջ մին փոյթ ցորեն ա տուվալ, ամմէն դծնում աշկըս ա կոխում (Ձ):* 2. Դժգոհությամբ՝ անարգական ձեռով մի բան մեկին տալ: *Ընդորա աշկը էնքան ծակ ա, մին չօփ էլ չի տալ, վէր աշկըտ կօխիս (Բ):* 3. Ապացույցը ներկայացնելով՝ սուտ մեղադրանք տվողին ամոթանք՝ պարսավանք տալ: *Սուդյան լօխ պարզից, մին-մին ըտորա աշկը կօխից (Բ):* 4. Կորցնել: *Ցալատը իոր ա՛, աշկըտ ը՛ս կօխալ (Բ):*

- Աշկը կօշտ - Իր ունեցածով գոհ, ոչ ագահ, ուրիշներին չնախանձող: *Աշկը կօշտ մարթ ա, ուրան հը՛տէ լ'ավ ապրում ա (Ձ):*

- Աշկը կօշտ պահել - Մեկին նյութապես ապահովել, անկարոտ պահել, խնամել: *Կընգանըտ աշկը վէր կօշտ չի պահիս, աշկը ուրուշին լըրա կինի (Ձ):*

- Աշկը կօրէկ չըքցիլ - Ոչինչ չտալ: *Վէգիրը ամաւ. - Թաքավէրըն ապրած կենա, լըս ըտորա աշկը կօրէկ էլ չըք ըքցիլ... (Ձ):*

- Աշկը հանել - 1. Աջքի գունդը հանել, կուրացնել: *Դերվիշը կըտաղում ա, էտ ըխճըկանը աշկերը հանում, թողում քօռ... (Ձ):* 2. փխբ. Պատժել, ոխը հանել (սպառնալիք): *Աշկըտ կը հանիմ, վէր մէհէտ էլ կ'ողորթուն անիս (Բ):* 3. Խիստ վնասել, մեծ վնաս պատճառել: *Աշկըս հանալ ա, բօստանըս սաղ քըրըքանդ ըրալ (Ձ):* 4. Մեկի նախանձը շարժել, ի հեճուկս մեկի՝ մի բան անել: *Շիննցից*

*աշկը հանից, շէնին կըլխէ ախպորը քաշից ուրան հայաթը (Ձ):*

- Աշկը հանել, տը՛ղը վարել - Մեկին խաբել՝ հիմարացնել: *էտ կընէգ՛ը մարթին աշկը հանալ ա, տը՛ղը վարալ. օխտը սիրական ա պահում (Բ):*

- Աշկը հատ ըղնել - Աջքի եղջերաթաղանթի վրա ոսպի մեծությամբ սպիտակ բիծ առաջանալ: *Ապուն աշկը հատ ընգավ, տարէն դուխտուրէն կօշտը (Բ):*

- Աշկը հըղէ ըղնել/քիսիլ - Աջքը առանց թարթելու եւ առանց մի բանի նայելու՝ առաժ մնալ, որը համարվում է ցանկալի անձի գալստյան նախագուշակության նշան: *Ախճի, աշկըս հըղէ յա ընգալ, հանցալ իմ քուր կըլական ա (Բ):*

- Աշկը հըղէն (գրբ. ակն ի ճանապարհ) - Մեկին երկար եւ կարոտով սպասելիս, սպասողական վիճակում: *Տըղան սիգօնա բիդի կ'ա, մարը էնա աշկը հըղէն (Բ):*

- Աշկը հըղէն թողնել - Մեկին երկար ժամանակ իրեն տեսնելու հույսով սպասեցնել: *էտ տըղան ք'ունում ա էրուշ յէրգիր, նըշընածէն աշկը թողնում հըղէն (Ձ):*

- Աշկը հըղէն ինիլ/մընալ - Կարոտով ու երկար սպասել մեկի գալուն: *Մարը կիրում ա, թա. - Այ իմ անգիգ բալա, աշկըս հըղէտ ա մընացալ, իւէ կ'ամ չը՛ս (Ձ):*

- Աշկը հընգիստին ինիլ - Մահամերձ լինել, մահը մոտ լինել: *Սանթորը վէց ամէս ա՛ տըղըպէրցում, աշկը էն ա հընգիստին (Բ):*

- Աշկ ըղնել - 1. *տեն* Աշկի ըղնել: 2. Սկսել հասունանալ (միտքը, պտուղը եւն): *Մայիսի վերջին թօթըն ա գ'նլւսը աշկ ա ըղնում (Ձ):*

- Աշկը ճըպել - Աջքը թարթել՝ փակել ու բացել: *էս ախճիգ՛ը աշկը ճըպէց, լւնց իլւնլ, թօռը նի կալւնլ (ՀԺՀ, VI, 68):*

- Աշկը ճուր կըտըրել/տը՛ռնալ - Անհամբեր շատ եկար սպասել, երկար սպասելուց աջքերը հոգնել: *Ըսպասից, ըսպասից ուրան նըշընածին, տը՛սավ կ'ամ չի, աշկը ճուր կըտըրից (ԼՂԲ, 304):*

- Աշկը մինակ ախօռը տը՛սնալ - Ասում են որկրամոլ մարդկանց մասին:

- Աշկը յը՛ղել - Կաշառել, որեւէ բանով գոհացում տալ: *Աշկը յըղը՛ցէն, ծէնը կըտըրից (Բ):*

- Աշկը լըրա թողնել - Կարոտ՝ չհագեցած թողնել: *Բօստանը ծը՛րքան ինք՛ կալին, թուղէցէն աշկը լըրա (Բ):*

- Աշկը լըրա ինիլ/մնալ - 1. Շատ հավանել: *էտ դուլուդուն աշկը շիւտանց ար թաքավէրին տըղին լըրան, օզըմ ար*

*ուրան ըխճըկանը տա ընդըրան (ՀԺՀ, V, 43):* 2. Փափագել, տենչալ, բայց ձեռք չբերել՝ կարոտ մնալ: *խուխէն աշկը մընաց խըրըվածէն լըրան (Բ):* 3. Հսկել, պահպանել: *Արխային կաց, խուխէտ վէշ մին պէն չի պըտահէլ, էն ա աշկըս լըրան (Ձ):*

- Աշկը լըրա մը՛ռնել - Մի բանի կարոտ մեռնել, փափագին չհասնել: *Ըտի էլ թօռնանը տը՛սավ վէջ, աշկը լըրա մը՛ռնալ (Բ):*

- Աշկը լըրա պահել - 1. Ուշադրություն դարձնել, հետեւել: *էտ ախպերացուն լըին աշկը լըրան ա պահըմ, տը՛սնա համին էտ վէգիրը հի՛նչ ա անէլու (ՀԺՀ, V, 204):* 2. Խնամել, հոգ տանել: *Լ'ավ հարթընը աշկը պըտորունէն ա ըսկօսվօրը լըրա յա պըհէս (Բ):*

- Աշկը լը՛ր օնէլ - Հանդուրժել, մեկի հաջողությանը չնախանձել: *Նահանց աշկը յօր չօնըմ, վէր Սարումը դանշանկ կընէգ՛ օնէ (ՀԺՀ, V, 190):*

- Աշկը նի թողնել - 1. Երկար եւ սեւեռուն նայել մի բանի, ուշադրությամբ նայել: *Աշկը նի թողից պատէն, ընգավ քընէնքու մաջ (Ձ):* 2. Երկար սպասել: *Աշկըս նի լըմ թողալ, թա հիբ ըս կ'ամ (Բ):* 3. Մեկից օգնություն ակնկալել, հույսը մեկի վրա դնել: *Աշկը նի յա թողալ, թա հիբ ա ախպերը փուլ դըրկըլական (Ձ):*

- Աշկը նի մըննել - 1. Մեկի համակրանքը՝ վստահությունը վայելել: *էրկու ամէս ա, վէր կօրծի յա ընցալ, ամմա ուծժէ լօխճին աշկըն ա նի մըտալ (Ձ):* 2. Նախանձ շարժել: *Ալլահան էշըս հինչ ա՛, էն էլ ա հիրըվըննէրէս աշկը նի մըննում (Բ):*

- Աշկը շըլծր - *տեն* ՇԻԼԴԻ:

- Աշկը շիբիլը՛դ քաղել - Կարպետորեն խաբել: *Բաղվանչուն աշկը շիբիլը՛դ քաղից, խընծօրէն թափ տուվալ, տարալ (Բ):*

- Աշկը շինիլին տը՛ղ օնքըն էլ ցըրը՛վ տալ - Մի բան կարգավորելու փոխարեն ավելի վատթարացնել՝ փչացնել: *Սամվէլ դային ծօղից ցըկատէն կօթը շինի, ըրը՛խըն էլ կօտըրից. աշկը շինիլին տը՛ղ օնքըն էլ ցըրը՛վ տուվալ (Ձ):*

- Աշկը շօր - Ցանկասեր, հեշտասեր, վավաշտ, ամուսնական կյանքին անհավատարիմ: *Ըտորա կընգանը աշկը շօր ար, սիրականնի ար պահըմ, ամմա մարթը գ'նղում չար (ԼՂԲ, 357):*

- Աշկը չար - Նախանձոտ, չար աջք ունեցող: *Աշկը չար մարթին անա հիշկան կըրէս ըս, հը՛ռէ բիդի շօռ տաս (Ձ):*

- Աշկը չնփ - *տեն* ՇԻԼԴԻ:

- Աշկը չըկըտըրել - 1. Մեկից կամ մի

բանից հայացքը չհեռացնել, ուշադիր նայել՝ հսկել: Զանգ ասմա.- Սալադ կըկենաս, հիվանդան աշկըտ կըտորիս վէջ... (Ձ): 2. Մեկով կամ մի բանով հիանալ, զմայլվել: Թաքավերին տըղան էտ ծուկունը տըսնում ա, թա չէ, աշկ չի կըտորում (Բ):

- Աշկը պենալ/պեց անել - 1. Արթնանալ, զարթնել: Աշկըս պեցե, տըսե անը՝ վը տոնս յըկած (Բ): 2. Ուշքի գալ, սթափվել: Էտ ճըպաղած մարթին յըրա ցորտ-ցորտ ճուր ըն ածում, աշկը պենում ա (Ձ): 3. Կյանքը հասկանալ, գիտակցության գալ: Ախմադ գատ ար, փըսակվից, մըհենգ աշկը պեցալ ա (Բ): 4. Զգաստանալ, աչալուրջ լինել: Աշկըտ պեց, տըս կընէգըտ հինչեր ա անում (Ձ): 5. Կյանք մտնել, ապրել սկսել, նախկին դժվարությունները չունենալ, հոգսերից թեթեւանալ: Կըռքվը պըրծալ, անջախ-անջախ աշկ պեցենք (Բ): 6. Բացվել, ծաղկել: Զոնին աշկըտ պեցալ ա (Բ): 7. Լույս աշխարհի գալ, ծնվել: Յըս աշկըս պեց ըմ ըրալ՝ Կիզոդանց Սըրքըրան ըստուր-ընդուր անա փալ ուզիլիս (Ձ):

- Աշկը պեց - 1. տեն ԸՇԿԱՊԵՑ: 2. Արթուն, չքնած: Սաղ քըշերը աշկը պեց հիվանդ մորը քըշտեն նըստում ա (Ձ): 3. Կենդանի, չմեռած: Սարը ասմա.- Բալա, հալա էն ա աշկըս պեց, վեր ըտի յըք ա-նըմ, պա վեր մըռնիմ, հինչ ըք ընական (Ձ): 4. Բացահայտ, բոլորի աչքի առջե: Աշկը պեց նի մըտալ հիրըվանեն բոստանը, լօթին քաղից, քըգալ (Բ):

- Աշկը պեց լուսըցընել - Ամբողջ գիշեր չքնել, արթուն մնալ: Զանգ ծանդըր ա, հիրք օր ա՝ աշկը պեց ա լուսըցընում խըհը ախճիգ՝ (Բ):

- Աշկը պըլթալ - տեն Աշկը տըրա-թել:

- Աշկը պըրտծղել - Տեսողությունը թուլանալ: Զանգ քըռասուն տիրըկան կա վէջ, ամիա աշկը պըրտծղալ ա (Բ):

- Աշկը սըվըրել - Ընտելանալ, վարժվել: Մին վեր կ'ուղղությունեն աշկը սըվըրալ ա, էլ կարում չըն կըտըրցընին (Բ):

- Աշկը սիրիլ - Դուր գալ, հավանել: Ըխճըկանը աշկը վեր տըղեն սիրից, էլ կարել չըս նըստա պուք տաս (Ձ):

- Աշկը սոր - Լավ տեսողություն ունեցող, սրատես: Աշկըտ սոր ա, մին տըս էս հինչ ա՝ կ'իրան (Բ):

- Աշկը վախել - 1. Փորձով մի բանից վախեցած լինել: Զանգ քըղի անխա, վեր էշին աշկը պեռնան վախե վուչ, վեր վախից՝ քեզ ծառայել չի (ՆԱԲ, II, 170): 2. Մի բան կատարելու՝ գլուխ բերելու անհնարինությունը կամ վտանգը կանխագալ:

Աշկըս վախում ա, թա չէ յըս էլ պարթկ կանիմ, տոն շինիմ (Բ):

- Աշկը տըղան տոնս կ'ան - Աշքը սաստիկ ցավել: Աշկըս տըղան տոնս ա կ'ամ, դոխտուր, մին ճար ըրա՝ (Ձ):

- Աշկը տըսածըն ա սիրում - Մարդ հավանում՝ ընտրում է իր համար սովորական դարձածը: Աշկը տըսածըն ա սիրում, ա՝ ջիհիլեն, ախճիգ՝ ըք ծղում, ծեր շենան ուզը՝ցեք՝ (Ձ):

- Աշկը տընգել - 1. տեն Աշկը նի թողնել: 2. Մի բանի վրա աչք ունենալ, ցանկանալ իրենը դարձնել, նախանձով նայել: Էրկու հեշտար վըդ օնե, ամմա աշկը տընգալ ա հիրըվանեն բուստանեն (Բ):

- Աշկը տըռնանը ինիլ/պահել - 1. Տան վրա հսկել, պահպանել: Էն ա աշկը տըռնանը, արխալին կաց (Բ): 2. Ամուսնական կյանքին հավատարիմ լինել: Նըմուսալ կընէգ՝ ա, աշկը էն ա տըռնանը (Բ): 3. Առանց ուրիշից օգնություն ակնկալելու՝ իր միջոցներով ապրել: Աշկը տըռնանըն ա, վէշ մինին անա պեն չի օգում (Ձ):

- Աշկը տըսածան վախել - Վախենալ մի բանից՝ նախորդ փորձը աչքի առաջ ունենալով: Աշկը տըսածան ա վախում, հըռնե արաշտ ըրալ, արտըս չուրըցըրալ, ըստարե ընական չըմ (Բ):

- Աշկը տըրաթել - 1. Կուրանալ՝ աչքերը փչանալ: Զանգ քըղին աշկը տըրաթալ ա, վէշ մին պեն տըսնում չի (Ձ): 2. Անեծքի արտահայտություն՝ թող կուրանա, տեսողությունից զրկվի: Աշկըտ տըրաթե, էտ մարթին տօնը խե քանդում ըս (Բ):

- Աշկըտ պըլլեն - Զանդիմանական կամ անեծքի բանաձեռ՝ ուղղված չար աչք ունեցողին: Աշկըտ պըլլեն, Խամկ, կըվեն աշկալ չի տաս (Բ):

- Աշկը տոնգը - տեն Աշկը ծակ:

- Աշկը տոնս - տեն Աշկը շօր: Կընանուցան մինը կ'օղ ա ինում, մինըն՝ աշկը տոնս, էն մինըն էլ՝ լուզվանէգ՝ (ԶԺՅ, VIII, 377):

- Աշկը տոնս կ'ան - տեն Աշկը տըրա-թել:

- Աշկը տոնս օնել - տեն Աշկը հանել:

- Աշկը ցամաք - Անարտասուք, դժբախտություն չտեսած: Ներակ ընդուր կինի՝ աշկը ցամաք նի կըմընեն վըդեն տակը (Ձ):

- Աշկը ուրուշըն յըրա - 1. Ուրիշներից օգնություն ակնկալող, աղքատ: Էտ մարթը քասիթ մարթ ա ինըմ, աշկը օրիշի յըրա (ԶԺՅ, V, 575): 2. տեն Աշկը շօր:

- Աշկը փըռնել - Զավանել՝ ձեռք բերելու ցանկություն ունենալ: ...Էս յեկած

հընգերեն աշկը մին ըխճըկա փըռնում ա, հընգերեն յախան փըռնում ա, թա էտ ախճիգ՝ ինձ հետե բեդմա օգիս (ԶԺՅ, VI, 219):

- Աշկը փըսօր ըղնել - Փոքր ծախորդության հանդիպել: Սաղ-սըլմաթ կըռվան պըրծալ, աշկըն էլ չի փըսօր ընգալ (Բ):

- Աշկը քախճըր - Բարի, բարեհամբույր: Աշկը քախճըր կընէգ՝ ար, էտ յի-թիմներեն լ'ավ պահից (Բ):

- Աշկը քախճըր ինիլ/պահել - տեն Աշկը քըխճըրանալ:

- Աշկը քըխճըրանալ - Բարյացակամ դառնալ, մեկին բարի աչքով նայել: Ըս-կեսվօրը աշկը քըխճըրացալ ա, հարթ-նանը անա էլ կ'ենգատ չի անում (Ձ):

- Աշկը քըցիլ - տեն Աշկը տընգել:

- Աշկը քուշտանալ - Մի բանից հագենալ, բավարարվել, լիանալ: Ալման աշկը քըցում ա էտ ըխճըկանը աշկեն, յեշում, յեշում, էլիա աշկը քուշտանում չի (Ձ):

- Աշկը քուշտըցընել - Մեկին լիացնել, որեւէ բանի կարոտ չթողնել: Պիրում ըն էտ վըդերը սաղ տամ ըտըրան, աշկը քուշտըցընում (Ձ):

- Աշկը օնքան պիցըրանալ/ընցընել - Զանդան: Զըրուստացալ ա, էլ վէշ մինին խուսուցունում չի, աշկը օնքան պիցըրացալ ա (Բ):

- Աշկը օնքեն կըլխան ինիլ - տեն Աշկը օնքան պիցըրանալ: Պառալը կըզընվում ա, ասըմ ա.- Ա՛ տըղա, էտ հիշքան ա՝ աշկըտ օնքետ կըլխան իլան, վեր օգում ըս սաղ ջեյրան փըռնիս (ԶԺՅ, V, 485):

- Աշկը օտել - Իր ուժերին համապատասխան համարել, իր ուժերին վստահել: Սըվ ծին ասմա.- Էրկու օրումը չէ, ամմա իրքը օրումը, աշկըս օտում ա, քըգ կըհըսընիմ ընդըդ (Ձ):

- Աշկ թօղ անել - տեն Աշկ կ'ուղա-նալ:

- Աշկի ըղնել - 1. Նկատելի դառնալ, ուշադրություն գրավել: Էտքանեն մա-չին էտ կաղնեն ա աշկի ըղնում (Բ): 2. Նշանավոր լինել, որեւէ հատկանիշով առանձնանալ: Զանգ մին խըրեգ՝ վախտ անց կացած վէջ, աշկի յա ընգըմ հունցու լան առուտուր անօղ (ԶԺՅ, V, 184):

- Աշկ ինիլ - 1. տեն Աշկը փըռնել: 2. Զար աչք ունենալ: Դերվիշին աշկ ա ինում, աշկալ ա տամ, էտ բաղը իրքը օրումը չուրանում ա (Ձ):

- Աշկ խմիլ - 1. Տեսողական պատրանք ստեղծել: Զըռանցե էտ քարը աշկ ա խմիլում, գ'ուղում ըս, թա մարթ ա նըստած (Ձ): 2. Քիչ բանով գոհացնել:

Պատահ գործն ա տամ էտ կընգանը, աշկ խափում, ըխճըկանը տանում (2):

- Աշկ ծակել - 1. Խիստ աչքի զարնել, ակնառու երեւալ: *Էտ ըխճըկանը թօշին խալը աշկ ա ծակում* (Բ): 2. Նախանձ շարժել: *Իւնծ-ջիւնծը մին կալ ա, էն էլ ա աշկ ծակում* (Բ):

- Աշկ կողանալ - 3արմար պահ՝ ա-ռիթ որսալ: *Աղվէսըն ան կ'իւլը օգում ըն աշկ կ'ողանան, օղտէն անա թաքուն էտ հացըն օտըն* (ՆԼՂԺԲ, 82):

- Աշկ նըհաշ տալ - Խստություն ար-տահայտել, սաստել: *Արջը կ'իւլին աշկ ա նըհաշ տամ, կ'իւլը էլ ըմբըստըրա-կէն ք'էպէն նի չի կ'ամ* (2):

- Աշկ նի կ'ալ - Չար աչք դիպել, չար աչք ունեցողի հայացքից վնասվել: *Շատ յէր կալած ծառէն տակէն ծոնկ ըն տը-նում, վէր աշկ չի նի կ'ա* (ՆԱԲ, 161):

- Աշկ չըկըտըրել - *տեն* Աշկը չըկը-տըրել:

- Աշկ չըճըպէլ - 1. Անվախ, աներ-կյուղ լինել: *Օգում ըս լ'ըհա մօրթէ, աշկ չի ճըպէլ* (Բ): 2. Անամոթ՝ ակնդերես լի-նել: *Յիշկան օգում ըս՝ թըքըթօհմանթ տօ, աշկ չի ճըպէլ* (2):

- Աշկ պէնալ/պէց անել - *տեն* Աշկը պէնալ:

- Աշկ տալ, իշընդ/պէրի չըտալ - *տեն* Օր տալ, իշընդ չըտալ:

- Աշկ տիկնիլ (*գորք. ակն դնել*) - *տեն* Աշկը տընգէլ(2):

- Աշկու գ'իւլլան - 1. Աչքի բիբ: *Փանդը նի յա կ'ամ, ըտըրա աշկէն գ'իւլլան ցը-րը՛վ տամ* (Բ): 2. *տեն* Աշկու լիւս:

- Աշկու լիւս/իշընդ (*գորք. լոյս աչաց*) - 1. Տեսողություն, տեսողության կարողու-թյուն: *Աշկու լիւս չօնէ, քուռացալ ա* (Բ): 2. Շատ սիրելի, թանկագին անձ կամ իր: *Էտ տըղան լօխճին աշկէն լիւսըն ա* (2):

- Աշկու լիւս տը՛նալ - Մեծ սեր՝ հարգանք վայելել, սիրելի դառնալ: *Ըտի նախըրջուն ախճիգ'ը թաքավէրին աշ-կէն լիւսըն ա տը՛նում* (2):

- Աշկու լիւսու նըման պահել - Մեծ խնամքով՝ հոգատարությամբ պահել՝ պահպանել, սիրել, փայլալայել: *Ղարա-բաղէն ասում ա.- Մստուծ, թա տու կա-րում չըս մը՛գ պահիս, քըջա՛ց, մունք ք'ը՛գ աշկու լիւսոն նըման պահիսը՛* (2):

- Աշկու լիւսու նըհըտ չըփօխել - Շատ թանկարժեք՝ անգնահատելի հա-մարել: *Ղերվիշը թա.- Էս քարը ծօկ քար ա, աշկու լիւսոն նըհըտ չիփօխէլ չըմ* (2):

- Աշկու կ'իթօղ - *տեն* Աշկու փօշ: *Տըմբըլաջի հաջանը կասիս լըհա լօխջու աշկի կ'իթօղըն ա, վէջ հըրսընքու ըն կանչըմ, վէջ նըշանի, վէջ փըքըկանջի...* (ԶՏ, Ա, 38):

- Աշկու կուկում - *տեն* Աշկու գ'իւլլան:

- Աշկումը աղու մըզիլ - Շատ նեղել, տանջել, չարաչարել: *Յարթըն, հինչ հա՛րթըն, ըսկէսվօրը աշկումը աղու վա մըզիլ* (Բ):

- Աշկումը իշընդ ինիլ - 1. Գեղեցիկ՝ գրավիչ լինել, հաճելի արտաքին ունե-նալ: *Օխտը ախճիգ' տը՛սէ, վէշ միսին աշկումը իշընդ չի կար* (2): 2. Երիտա-սարդ լինել: *Յան պըռապալ չի, աշկումը էն ա իշընդ կա* (Բ): 3. Լավ ընտրություն կատարել: *Լ'ալ ախճիգ' ըս օգ'ալ, աշ-կումըտ իշընդ կա* (Բ):

- Աշկումը խուլ/մազ՝ փըսնել/տոնս կ'ալ - 1. Երկար սպասել, սպասելուց հոգնել: *Խէ կ'ամ չը՛ս, աշկումըս խուլ՝ փըսալ* (Բ): 2. Երկար ու դժվարին աշ-խատանք կատարել, նեղություն քաշել, չարաչարել: *Աշկումըս խուլ՝ ա փըսալ, մինչը՛վ էս տօնը շինալ ըմ* (2):

- Աշկումը լը՛ղ ինիլ - *տեն* Աշկումը իշընդ ինիլ:

- Աշկումը շօռ կ'ալ - *տեն* Աշկու փօշ տը՛նալ:

- Աշկումը պէրի ինիլ - *տեն* Աշկումը իշընդ ինիլ:

- Աշկումը պիցըրանալ - Մեկի մոտ հեղինակությունը՝ վարկը բարձրանալ, հեղինակություն ձեռք բերել: *Վէր անմա-հական ճոնը պիրոն ա, թաքավէրը ասմա.- Միհէնգ՝ աշկումըս պիցըրա-ցէր* (2):

- Աշկումը պիցըրցընել - Մեկի հեղի-նակությունը՝ վարկը ուրիշների մոտ բարձրացնել, հեղինակավոր դարձնել: *Տըղըմարթին ժուղուկուրթէն աշկումը պիցըրցընօղը կընէ՛ղն ա* (2):

- Աշկումը քըցիլ - Մեկին ուրիշների մոտ վարկաբեկել՝ հեղինակազրկել՝ ա-տելի դարձնել: *Էտ ախճիգ'ը ախսօրը լօխճին աշկումը քըցալ ա* (Բ):

- Աշկու չափալ - Մոտավոր չափով, որ որոշվում է նայելով: *Էտ տանը իրկը-նօթունը աշկու չափալ քըսան մէտըր կինի* (Բ):

- Աշկու պըլլօր - *տեն* Աշկու փօշ:

- Աշկու պըլլօր տը՛նալ - *տեն* Աշկու փօշ տը՛նալ:

- Աշկու պիրիլ - Գեղեցկացնել, հղկել: *Ղուլգ'արը մըղակը շինից, ըսքը-սից աշկու պիրիլ* (2):

- Աշկու փօշ - Սաստիկ ատելի, անտա-նելի: *Մարը ասմա.- Մին վըխտու վա իլալ իմ ախպէր, մըհէնգ աշկու փօշ ա* (2):

- Աշկու փօշ տը՛նալ - Սաստիկ ա-տելի լինել: *Կ'ուղթօթուն ըրալ, շէնումը աշկու փօշ տը՛նալ* (Բ):

- Աշկու փօշ տոնս օնօղ - *տեն* Աըր-տու փօշ տոնս օնօղ (ՍԺՐՏ՝-ի տակ):

- Աշկու քըշէռք - *տեն* ԸԾԿԱԶԱԾ:

- Ըշկերան ըրտասունք քամել - 1. *տեն* Աշկերը ծօվ տը՛նալ: *Յինչա տը-ղան կօրալ ա, էտ կընէգը տաա չի անում, սաղ օրը ըշկերան ըրտասունք ա քամում* (Բ): 2. Լացացնել: *Էս կըռը՛վը մէր ըշկե-րան շատ ըրտասունք քամից* (Բ):

- Ըշկերան խը՛ղճ - Տեսողությունը թույլ, լավ չտեսնող: *Լ'ալըն էն ա քառ ի-նիս, հինչ ըշկերատ խը՛ղճ* (2):

- Ըշկերան շընէր վէր տը՛նալ - Խո-րամանկ, վավաշոտ լինել: *Ըշկերան շը-նէր ա վէր տը՛նում, նը՛ստա դըրաղ շօ՛ռ տօ* (Բ):

- Ըշկերավը օտել/կօլ տալ/լէփիլ - 1. Տեսչանքով՝ կրքով նայել մեկին, մի բա-նի: *Առաջին տըսնալավը տըղան ու ախ-ճիգը ըշկերալ իրոնր օտում ըն* (ՆԱԲ, II, 25): 2. Ատելությամբ՝ թշնամանքով նա-յել, սաստիկ հանդիմանական հայացքով նայել: *Աշկէն փօշըն ա, ըշկերավը օտում ա* (2): 3. Ագահությամբ՝ մեծ ախորժակով ուտել: *Խըրապած, հինչ խըրապած, դու-նուղնէն ըշկերավը կերէն* (Բ):

- Ըշկերէն ճիրերը հըղէ ինիլ - *տեն* Լաց ինիլ: *Էլ կարում չի պըրաննան վէր ածէ, ընդի էլ կօլ ա տամ, ըշկերէն ճըրէ-րը հըղէ յա ընում* (ՆԱԲ, 126):

- Ըշկերէն չըհըվատալ - Տեսածին չհավատալ, տեսածը անիրական հա-մարելով՝ ապշել: *Կ'ամ ա, տը՛սնում շօ-նը էտ ճօխտ կ'իւլին խը՛խտած, ըշկե-րէն հըվատում չի* (2):

- Ըշկերէն տական տուարըկնէ կախ ինիլ - *տեն* Ըշկերէն տակը փըջըգ'օտել:

- Ըշկերէն տակը փըջըգ'օտել - 1. Աչ-քերի տակը ուռչել: *Էնքան լաց ա իլալ, ըշկերէն տակը փըջըգ'օտալ ա* (Բ): 2. Ծերանալ: *Ըշկերէն տակը փըջըգ'օտալ ա, մըռնէլի վախտըս ա* (Բ):

- Ըշկերէն փուշի մաղ(վ)ել - Ալեհեր դառնալ, ճերմակել: *Ըշկերէն փուշի յա մաղալ, էլիա էն ա ըստըրա-ընդըրա կընգանը հը՛տը ընգած* (2):

- Ըշկերումը կարթիլ - Մեկի աչքերի՝ դեմքի արտահայտությունից հասկա-նալ՝ գուշակել՝ կռահել տրամադրու-թյունը, մտադրությունը: *Ասէ, ասէ վէջ, յը՛ս ընդըրա ըշկերումը կարթում ըմ. մը՛թըր խային ա* (2):

- Ըշկերումը շընկուտըգ'նէ ինիլ - *տեն* Ըշկերան շընէր վէր տը՛նալ:

ԱՇԿԱԿ-ՕՆՔԱԿ - *տեն* ԸԾԿԱԶԱԾ-ՔԱԿ:

ԱՇԿԱՐ(Ա)/ԱՇԿԱՐ(Ա) (*գորք. աշկա-րայ*) - 1. ած. Ակներեւ, բացահայտ, ա-մենքին տեսանելի: *Աշկարա տը՛ղ ա, ընդը՛ղ կ'ուղթօթուն չինիլ* (Բ): 2. *տեն* Ա-ՓԱՇԿԱՐԱԿ:

- Աշկար անել - Բացահայտել, երեւան հանել, հայտնի դարձնել: Սուդ-յին ըռուշվաթ տուովակ, վեր կ'ուղղթունը աշկար չանէ (Բ):

- Աշկար ինիլ/տը'նալ/տոնս կ'անլ - Բացահայտվել, երեւան հանվել, հայտնի դառնալ: Հիշկան անում ըն, կարում չըն թաքուն պահին, էտ պէնը աշկար ա իննում (Ձ):

- Աշկար տոնս օնել - տեն Աշկար ա-նել:

ԱՇԿԻ - տեն ԱՇԿԻ:

ԱՇԿ-ԻՇԸՆՂ - տեն ՕՐ-ԻՇԸՆՂ:

ԱՇԿԱՐ(Ա) - տեն ԱՇԿԱՐ(Ա):

ԱՇԿ-ՕՆԵ - տեն ԸՇԿԸՕՆԵ:

- Ըշկերէն-ունքերէն անել - տեն Փուշերէն անել (ՓՕՇ-ի տակ):

ԱՇՆԱ (պրս., թրք. *ašina*) - տեն ԹԻՐ-ՎԱ:

ԱՇՆԱ-ՌՕՍՍ - գ. Ստերիմներ, բարեկամներ: Աշնա-դօստ հըվաքվում ըն, էտ մարթին էրված տօնը մին ամսումը շինում (Բ):

ԱՇՇԻ/ԱՇՇԻ/ԱՇԻՇԻ - վ. Անհոգութեան բացակայություն՝ փոյթ չէ, հոգ չէ: Աշշի, հինչ տը'նում ա, տը'նա, դանդաշ չի (Բ):

ԱՇՊԱԶ/ԱՍՊԱԺ (թրք. *aşpaz*) - գ. Խոհարար: ...Թաքավերը հըրամայրմ ա՝ պալատին քաշի ըմբընէրըմը հինչ օտէլի պը'ն կա, ընդըրանա աշպազնին իփին... (ՀԺՀ, V, 67):

ԱՇՊԱԶԽԱՆԱ/ԱՍՊԱԺԽԱՆԱ (պրս. *aşpazzane*, ադրբ. *aşpazzana*) - գ. Ծառարան: Նի յա մընըմ մին աշպազխանա, ընդը'դ ծառա տը'նըմ (ՀԺՀ, V, 230):

ԱՇՊԱԶՕԹՈՐԻՆ/ԱՍՊԱԺՕԹՈՐԻՆ - գ. Խոհարարություն: Կուճի ախպերն էլ ք'նունում ա աշպազօթուն սըվը'րում (Ձ):

ԱՇՐԱՓ (թրք. *eşraf*) (պատվավոր քաղաքացի) - հեզն. տեն ԱնՄԱխ:

ԱՇՐԱՔ (գրբ. աշուն) - գ. 1. Տարվա եղանակ՝ ամռան եւ ձմռան միջեւ, աշուն: Աշունքը վեր կ'ամ ա, ժողովուրթը բըդերան օտն չըն կ'ամ (Ձ): մ. 2. Աշնանը, աշնան ընթացքում: Սըխտօրը բիդի աշունքը վարիս, թա չէ պերք չի տալ (Ձ):

- Ըշունքու ծեք՝ - տեն ԸՇՐԱՔԱ-ԾԵՔ:

- Ըշունքու հավա - Անձրետտ եղանակ: Ամը'ն ա, ամմա ըշունքու հավա յա անում (Բ):

- Ըշունքու ճօտ - տեն ԸՇՐԱՔԱ-ՃՕՏ:

ԱՇՐԱՐՄԱ - տեն ԱՇՐԱՐՄԱ:

ԱՇՕՆ - 1. մկն. գ. Շուն: Խօխան լանց ինիլակ կ'ամ ա, թա.- Աշօնը կըծալ ա (Ձ): 2. ձ. Շանը քշելու ձայն: Աշօն, կօ'րէր ըստըղաս (Բ):

ԱՇՕՆ-ԱԿՈՒԼ - Մեկին դիմելու հեգնական արտահայտություն: Հու կարում ա, կըխօզէն բօստանը թըլանում ա, մի-նը կավէ՛ք՝ ասէ.- Աշօն-ակ'ո՛ւլ, էտ հինչ ը'ս անում (Ձ):

ԱՉ (գրբ. աջ) - ած. 1. Ձախին հակառակ կողմում գտնվող: Աջի ծը'րքը ծէխան օժժավ ա (Ձ): 2. Աջ ուղղությամբ տարածվող, աջ կողմը: Վէր պատառ ք'նունում ա բիդի աջի թաննիք, տը'ս-նում ա իւրանց շէնը ըրվամ ա (Ձ): 3. Կտորի, գուպայի շիտակ կողմը՝ երեսը: Մարթը ասմա.- Մ'կընէ՛ք, էս գ'նվքին ա-ջը վերըն ա՛ (Ձ): 4. Հարմար, պատշաճ, դյուրին (տեղի՝ վայրի մասին): Մէր շէնը լ'ավ տը'դ ա, աջ ա (Բ): 5. Հաջող, հաջողակ: Կօրծէրքս հանլ աջ ա, տը'սնանք՝ վէրչը հունց կիկի (Բ):

- Աջն ա ծէխը չըգիդանլ/չըճօկել - Բոլորովին անտեղյակ՝ անփորձ լինել: Հանլ շատ ա ցանիկ, աջն ա ծէխը ճօկում չի (Ձ):

- Աջ(ի) թել - տեն Աջ(ի) ծը'րք:

- Աջ(ի) ծը'րք - Գլխավոր՝ առաջնակարգ օգնական՝ պաշտպան՝ զինակից: Ռուբէն դայուն աջի ծը'րքը կուճի թօռ-նըն ա (Բ):

- Աջի ծը'րքէն ըրածը ծէխէնը կարել չի անէ - Մեկը մյուսին փոխարինել չի կարող: Ամմէն մարթ էլ իւրան տը'դը օ-նէ, աջի ծը'րքէն ըրածը ծէխը կարել չի անէ (Ձ):

- Աջ(ի) կօնը - տեն Աջ(ի) ծը'րք:

- Աջ տըռէլ, ծէխ շըպըրտէլ - Ազատ ու անհոգ լինել: Վէ՛ք կօրծ ա անում, վէ՛ք դանդաշ օնէ, աջ տըռում ա, ծէխ շըպըրտում (Բ):

ԱՉԱՐ (թրք. *açar*) - գ. 1. Կողպեք՝ փականք բանալու եւ փակելու հարմարանք: Ըջընէն յօր ա օնում, քարը տէն քըցում, Նի մըտնում, քընամ տօնը պէնում (ՀԱԲ, 15, 20): 2. Պոտտակները ամրացնելու եւ թուլացնելու գործիք, պոտտակիչ: Աջառը պէր, գազէն բալօնը պինդը-ցընիք՝ (Բ): 3. փխբ. ելք, հնարք, միջոց: Ղէրվիշը ասմա.- Ըտըրանա ըզզդվէլի ա-ջառը մինակ յը'ս կարիմ տամ (Ձ):

ԱՉԱՐ(ՆԸ)/ԱՉԵՐ(ՆԸ)/ԱՉԸՐ(ՆԸ) (գրբ. արջառ (եզ ու կով, պախրա, տավար) - գ. Երեք տարեկան արու հորթ: Ատում ըն՝ տափէն տակէն մին մը'ծ աննա կա, սաղ յէրգ'իրը էն ա էտ ըջանի մաշ-կէն տիրան՝ (ԱԱ, 15):

- Աջանը պինդցընէլակ յը'զնը կը-տը'նա - Աշխատանքի արդյունքում է մարդ փորձառու դառնում:

- Աջանը վեր ծըրան տոնս ա կ'ան, ուստա յը'զնանըն ըն թակում - Անփորձի՝ սկսնակի թերությունների համար նրա դեկավարին՝ փորձառուին եւ մեղադրում պատժում:

ԱՉԵՐ(ՆԸ) - տեն ԱՉԱՐ(ՆԸ):

ԱՉԸՐ(ՆԸ) - տեն ԱՉԱՐ(ՆԸ):

ԱՉԸԼՄԻՇ (թրք. *açılış* (բացվել) - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Աջըմիշ ինիլ - 1. Բացվել, պարզվել: Հավան աջըմիշ ա իլանլ (Բ): 2. տեն Ունքամաջը յը'տ կ'անլ: ...Գիդանցին, թա փըսականջ ա... հըզըրվէցին, վեր ք'ի-նան, պատառ աջըմիշ ինին (ՋՏ, Ա, 23):

ԱՉԸԽ (թրք. *aşık*) - 1. Պարզ, անամպ: Ըսօր աջըխ հավա յա (Բ): 2. Աշխույժ, սրտաբաց, զրուցասեր: Աջըխ մարթին Նըհը'տ հըդէ ք'ինիլը լանթա (Բ):

ԱՉԼԻԳ - ած. 1. Աջ ձեռքով գործ ա-նող: Աջիգ՝ ը'ս, թա ծէ'խիգ՝ (Բ): 2. Հա-ջողակ: Աջիգ՝ կօրծ ա (Բ):

ԱՉԿԻ/ԱՇԿԻ (ռուս. *очку*) - տեն ՉԵՇՄԱԿ:

ԱՉՄԱ - ած. Արձակ, կապանքներից՝ կապերից ազատ: Մին ասօղ ինի, քանի հէտ ը'ք տէսալ, վեր մին մըրթըվարի հայի կընէ՛ք թառ ածի, յա մազերը աջմա, ըռէխը ժընգըննա՞ծ խաղ ասի... (ՋՏ, Ա, 190):

- Աջմա անել - Արձակել, կապանքնե-րը՝ կապերը քանդել: Հինչ ը'ս տօշըտ աջմա ըրալ (Բ):

ԱՉՈՒ - ձ. Էշին՝ ջորուն քշելու ձայն: Մին էլ ըսկանում ըն, վեր Ըղէն սանը կ'ամ ա.- Աջո՛ւ, աջո՛ւ (Ձ):

- Աջու հալլա - տեն ԱՉՈՒ:

ԱՉՕՏ (ռուս. *отчет*) - գ. Հաշվետվու-թյուն: Զինամ ա կանտօրը, աջօտ տամ (Բ):

ԱՊԱ (հ.ե. \*appa- (հայր (մանկ. բառ) - 1. տեն ՊԱՊ(1): Իմ հնր իցցուն տիրը-կան ա, իմ ապա՝ ութաստուն (Բ): 2. տեն ՀԱՐ: Տըղան հօրըն ասըմ ա.- Ապա, թո՛ւլ տօ, քու յէրգ'իրըտ շօռ կ'ամ (ՀԺՀ, V, 484): 3. Տարեց տղամարդկանց՝ ծերու-նիներին տրվող հարգական անուն եւ կոչական բառ: Սէյրան ապա, օգում ըմ թօռնանըտ օզիմ տըղէտ հը'տէ, հինչ ը'ս ասում (Ձ):

- Ապան ամէն օր ք'անթան չի օտել - Միշտ հաջողություն չի լինի: Հանը աս-մա.- Մ'տըղէրք, ապան ամէն օր ք'անթան չի օտել, պատառ հըթըյաթ ըրէք՝ (Բ):

- Ապան դօրա կերակ, թօռնանը կըռ-քընէն առնից - տեն Հանը շըվօր կերակ, խոփէն կըռէքը առնից:

- Ապուն դիւրվին - տեն Զօհնա դիւր-վին:

ԱՊԱՐԱԺ (գրբ. ապառաժ) - գ. Պինդ՝ քարացած հող: Էտ ապառաժըմը ծառ չի փըսնէլ, Նըհախ չըրչարվու մէր (Ձ):

ԱՊԱՍՆԻ (ռուս. *опасный*) - ած. Վտանգավոր: Ապասնի կօրծ ա (Բ):

**ԱՊԱՐԱՏ** (ռուս. *annapam*, գերմ. *appar*, լատ. *apparatus*) - գ. Գործիք, սարք: Ապարատավոր նրկարում ա, տանում տամ էտ կրնգանը մարթին (2):

**ԱՊԷԼ** - Գործածվում է կապակցության մեջ:

- Ըպելա/Ապելա կ'առնը- Յեգ, հնագանդ, խեղճ: Էս խեղճ Ապելա կ'առնը ուռնա յա անում, շոկշոկցընում, ծիլենը խըրտնում ըն... (ՆԱԲ, 63):

**ԱՊԷԼԱՍԻՆ** (ռուս. *апельсин*) - գ. Նարինջ: Սըղափիւն, վեր Ղարաբաղ ապելսին չի տըճնում (Բ):

**ԱՊԷՐ** - 1. տեն ԱՊԱ: 2. տեն ԱԽՊԷՐ: - Ապորը ծօցը դարկել - Սպանել, մեռցնել: Ըտի մարթին բիդի ապորը ծօցը դարկիս (2):

- Ապորը կ'ինը յըրա տինիլ - Շատ թանկ վաճառել: Ապորը կ'ինը տիրան ա յըրա, մին կիլօ ցօրենը հարդոր իցցուն դըրամավ ա ծախում (Բ):

- Ապորը հըրսանեք'ը մըճնընը ըղնել - Շատ վատ վիճակի մեջ ընկնել, սաստիկ ծեծ ուտել: Էնքան թակալ ըն, ապօրը հըրսանեք'ը մըճնընը ա ընգալ (2):

- Ապորը հըրսանեք'ը մըճնընը քըցիլ - Խիստ պատժել՝ ծեծել: Վեր մէհէտ էլ նի մըտեր բաղը, քու ապօր հըրսանեք'ը մըճնընը ըմ քըցիլան (Բ):

**ԱՊՈՐԱԾՈՐ/ԱՊՈՐԱԾՈՐ** - գ. Ասում են լավ մարդու հասցեին: Էտ ապրածը խօսկըս տափավոր չի տըվալ (ՅԺՅ, V, 624):

**ԱՊՈՐԱՆԵ/ԱՊՈՐԱՆԵ** (գրբ. ապրանք) - գ. 1. Աշխատանքի արդյունք, որ արտադրված է փոխանակության՝ վաճառքի համար: Կօրծը անում ըն, ապրանքը տանում բազար (2): 2. Ունեցվածք: Տահանք ըտեղ փըռնում ըն, կըտօրում, ապրանքը թըլանում (ՅԱԲ, 15, 75): 3. Ընտանի անասուններ: Էս օխտը տօնըտ էնչաք ապրանք ըն լան պըհէս, վեր խընըցէք'ան վեր տըճաճ թանը նի յա տըճալ կ'էտը... (ՅԲ, 357):

**ԱՊՈՐԷԼ/ԱՊՈՐԷԼ** (գրբ. ապրիմ, ապրետ) - չբ. 1. Գոյություն ունենալ, կյանք ունենալ: Պիրում ա մարը օխտը օր, օխտը քըշէր հըրսանիք' անում, հէտօ տահանք ըսկըտում ըն ուրանց հէտէ ապրէլը (ՅԱԲ, 15, 14): 2. Բնակվել: ...Ղըլանց Պէտին քըռասնուհէնգ' տօն ա յօր կալան, յըճկալ, ըստըճ' ապրալ (ԱԱ, 21): 3. Կերակրվել, սնվել: Պէն չօնէ ուտելի, չօր հացավ ա ապըրում (Բ):

- Ապըրած կէնա - Բարեմադրության արտահայտություն՝ երկար ապրի: Ապրած կէնա Սիմօնը, տըղէս ք'ծմանգ' ա անում (Բ):

**ԱՊՈՐԷԼ**<sup>2</sup> - տեն ԱԲՈՐԷԼ:

**ԱՊՈՐԻՍ/ԱՊՈՐԻՍ** - ձ. Խրախուսական բացականչություն՝ կեցցեն, ապրեն: Տըղան կօրծը պըրծընում ա, մարթա մին տըճ'դան ասում ըն՝ ապրիս (2):

**ԱՊՈՐՈՒՍ/ԱՊՈՐՈՒՍ/ԱՊՈՐՈՒՍ** (գրբ. ապրուստ) - գ. 1. Ապրելու նյութական միջոց: Էն օրանը տէսը նահանք տէնըն ըն թաքավեր-թաքուհի, աշխարքը ըպրուստավ լըցընմ... (ՅԺՅ, V, 449): 2. Ապրելակերպ, ապրելու եղանակ: Տահանք վէճ մին ըպրուստու տար չըն իլալ (ՅԺՅ, V, 559):

**ԱՊՈՒԿԱ** (ռուս. *аплика*) - գ. տեն ԹԷՓ(3):

**ԱՊՈՒԷՏԱ** (ռուս. *операция*, լատ. *operatio*) - գ. Վիրահատություն: Ապլեցան միհէնգ' ա անդաթ ընգալ (2):

- Ապլեցան անել - Վիրահատել: Ապլեցան ըրէն, սըղըցըրէն (Բ):

**ԱՊՐԱԾՈՐ** - տեն ԱՊՐԱԾՈՐ:

**ԱՊՐԱՆԵ** - տեն ԱՊՐԱՆԵ:

**ԱՊՐԷԼ**<sup>1</sup> - տեն ԱՊՐԷԼ:

**ԱՊՐԷԼ**<sup>2</sup> - տեն ԱԲՈՐԷԼ:

**ԱՊՐԻՍ** - տեն ԱՊՐԻՍ:

**ԱՊՐՈՒՍ** - տեն ԱՊՐՈՒՍ:

**ԱՊՈՒՊԱՊ** (գրբ. ապուպապ) - գ. Պապի պապը, Նախապապ: Էս շէնին ապուպապէրը յըճկալ ըն Ըրասիւն կօխկէ շինէրան միւնան (ԱԱ, 19):

**ԱՊՈՒՐ** (գրբ. ապուր (ապրելու կերակուր) - գ. Անասնակեր՝ խոտ, դարման: Ծոնը կ'իւտից, ապուրը պըրծավ, հիլվընէն մընացէն տոնըն (Բ):

**ԱՊՈՒՐՈՒՍ** - տեն ԱՊՐՈՒՍ:

**ԱՋ** - տեն ՍԵԿ(Ը)ՐԷՏ: Էտ փըփաղէն անք էն ա ինոն, վեր հու տինում ա կըլխէն, էլ ըրվամ չի (2):

**ԱՋԱԲ** - տեն ԱՋԱԲ:

**ԱՋԱԲ/ԱՋԱԲ** (արաբ. *ajab*) - տեն ԹԱՅՐԻ: Աճանք պէն ըն տէսըն (ՋՏ, Ա, 220):

**ԱՋԱԲ-ԱՋԱԲ** - տեն ԹԵՅՐԻ-ԹԱՅՐԻ: ...Բա էս ծոն-ծըմէնը անք-անք հօր ը՛ս յէկալ, իշտեղ ը՛ս քինըմ (ՋՏ, Բ, 3):

**ԱՋԱԼ/ԱՋԱԼ** (թըբ., արաբ. *agel*) - գ. Օրհաս, վախճան, կյանքի վերջ, մահ: Հարը տըրան մին սօր ա տամ, ասըմ-Թա քըշէրը էտ սօրէն կէսը տոնս կ'ա, ընըշկէտ անք կա (ՅԺՅ, V, 324):

- Աճալը ծըրավել - Պատահարից չխուսափել, իր արարքով իր օրհասը մոտեցնել: Աճալը ծըրավալ ա, մին օր էլ ծառան վեր ա ընգընական, մըճնէ (2):

- Աճալը հըսնել/կ'ան - Մահը՝ վախճանը մոտենալ: Թարքէրէն աճալը հըսալ ա, էլ կարում չըն կըռվին (Բ):

**ԱՋԱԼ** - տեն ԱՋԱԼ:

**ԱՋԱԼ(Է)** - ձ. 1. Ուրախության բացականչություն: Աճան, անըճ'ը տոնս յըճ-

կալ (Բ): 2. Սիրելի էակին պատասխանելու կոչական ձայնարկություն: Խօխան ասմա.- Աճա: - Այան ասմա.- Աճանէ (Բ):

**ԱՋԱՓՍԱՆԱԼ** - տեն ԱՋԱՓՍԱՆԱԼ:

**ԱՋԱՓՍԱՆԱԼ/ԱՋԱՓՍԱՆԱԼ** - գ. 1. Զանազան բանջարեղեններով եւ մսով կամ առանց մսի պատրաստվող կերակուր: Էլ հինգ անքափաննընալ, վեր մաշին բաղըմճան չի կա (Բ): 2. փխբ. Խառնիխուռն՝ խճողված բան: Էս կօրծ չի, անքափաննընալ ա (Բ):

**ԱՋՈՂ** (թըբ. *ajə*) - գ. 1. Ոխ, վրեժխնդրության զգացմունք: Ըտըրա աճըղը կընօխանց ա ինձ յըրա (2): 2. Բարկություն, զայրույթ: Խօխան պըլօթուն ըրավ, մօրը աճըղը շըտացավ (2): - Աճըղը հանել/տոնս ածել/տոնս օնել - Վրեժխնդր լինել, վրեժն առնել: Ինք'ը կ'ան ա տօն, կընգանը փըռնէս, մին լան թըկէս, ճըխճըխալէս, աճըղը կընգանան հընէս (ԼՂԲ, 380):

- Աճըղը վեր ածել - Բարկությունը, զայրույթը թափել, հանգստանալ: Աճըղը վեր ածից, դիւջացավ (Բ):

- Աճըղը փըռնել - տեն ԸՋՈՂՎԷԼ:

**ԱՋԻ** (թըբ. *aci*) - 1. ած. Ղառը, կծու: Էս տանտէղը անք յա (Բ): 2. գ. տեն ԱՋՈՂ (2):

- Աճին քաշիլ - Գործած արարքի համար պատժվել, տույժը կրել: Սէհէտ մին փիսթուն ա ըրալ նախագէն, մինչըճ' միհէնգ' անքին քաշոն ա (Բ):

**ԱՐԱԹՈՐ** (գրբ. առաթուր (կոխկռտելով) - ած. Անպետք, անպիտանի: Պոտուն մին քավթառ, առաթուր ծի յա ընոն, հըլաթումը վեր ա ըղնում, ըստակում (ՆԱԲ, 131):

**ԱՐԱԿ** (գրբ. առակ) - 1. տեն ՄԱՍԱԼ: 2. Հանդիմանություն, նախատինք, խայտառակություն: Բիդասը տըղան հօրը հըճ'տէ առակ ա (2):

- Առակ անել/շինիլ - Խայտառակել, ծաղրի առարկա դարձնել: Փիս հարթը ըսկէսվօրըն էլ առակ կըշինի, մարթին էլ (2):

- Առակ տըճնալ - Խայտառակվել, ծաղրի առարկա դառնալ: Թարքէրը փախէն, սաղ ըշխարքումըս առակ տըճնէ (2):

**ԱՐԱԿ-ՊԱՐԱԿ** - տեն ԲԵՅԱԲՈՒԲԵՅԱԲՈՒԲ:

**ԱՐԱՆԻ** - գ. Հացաբույս: Լիւնընընը ղըմը առանի չի փըսնէլ (2):

**ԱՐԱՆՑ/ՈՒՐՈՒՆՑ** (գրբ. առանց) - կ. Ցույց է տալիս բացասում, բացակայություն, չգոյություն այն առարկայի՝ երեւոյթի, որի անունը դրվում է նրանից

հետո՝ իբրեւ խնդիր: *Իտի յէ էտ թամբնլ կընէկը առանց կործ անելի օտըմ ա, խըմըմ, նըստըմ...* (ԼՂԲ, 372):

- Առանց աշկ ճըպէլի - Ամփջապէս, առանց տատանվելու՝ երկմտելու: *Խաբարը վէր ըսկանում ա, առանց աշկ ճըպէլի հըղէ յա իննում ծըմակը* (Բ):

- Առանց էն էլ - Նույնիսկ տվյալ բանի չլինելու դեպքում էլ: *Առանց էն էլ շատ ար ք'անսիբ, կավըն էլ ընդը՞դ վէր ընգավ, ըստակից* (Ձ):

- Առանց էշու կըլծիս հըրսանէք՝ չի-նիլ - Ասվում է այն ժամանակ, երբ ուրախության կամ հավաքի ժամանակ մի անցանկալի անձ է հայտնվում: *Ըհը՛, Ծատօրը յը՛կավ, ախէր ըսէս ըմ, թա առանց էշու կըլծիս հըրսանէք՛ չինիլ* (Ձ):

- Առանց երկան մըտըծէլի - *տեն* Առանց աշկ ճըպէլի:

- Առանց ծըմէլի կօլ տալ - *տեն* Անծամ կօլ տալ:

- Առանց կըրակ երիլ/խըրավէլ - 1. *տեն* Առանց տէնակ մօրթէլ: 2. Խոսքով խիստ վիրավորել: *Տըղան ըխճըկանը ասմա.- Լ'ավըն էն չի՛, ինձ ըսպանիս, քանց էտ խօսկը ասիս, ինձ առանց կըրակ երիս* (Ձ):

- Առանց կըրակ երվիլ/խըրավվէլ - *տեն* Առանց տէնակ մօրթըվէլ:

- Առանց կըրակ ծօխ չինիլ - Առանց պատճառի հետեանք չի լինի: *Առանց կըրակ ծօխ չինիլ, Մսցակ, հանընթ մին պէն ըրալ ըս, վէր կընէգըտ փախալ ա* (Ձ):

- Առանց շունչ քըշիլի - Շատ կամաց՝ անձայն: *Առանց շունչ քըշիլի նի յա մըննում, էտ աջառը յօր օնում, տոնս կ'ամ* (Ձ):

- Առանց շօն շէն չինիլ - Ամեն տեղ էլ վատ մարդ կլինի: *Կարող չի պըտահէ՛ ծէր շէնին մարթիքը՛ յօխ լ'ավ ինին. առանց շօն շէն չի ինում* (Բ):

- Առանց սապուն վը՞ռ նի մըննէլ - Բացահայտ շողոքորթել: *Վէր ըտի առանց սապուն վը՞ռ ըս նի մըննում, հինչու վը՞ս հըսալ* (Բ):

- Առանց վըննըկըլծիս ք'ըլմփաջա չի-նիլ - Առանց անհրաժեշտ միջոցների գործը չի հաջողվի: *Առանց վըննըկըլծիս ք'ըլմփաջա չինիլ. առանց թըվանգ՛ հինչ վը՞րս բիդի անիս* (Բ):

- Առանց տէնակ մօրթէլ - Տանջել, չարչարել: *Էտ մարթը ամեն օր կընգանը առանց տէնակ մօրթում ա* (Բ):

- Առանց տէնակ մօրթըվէլ - Տանջվել, չարչարվել: *Ախճիգ՛ը փախճում ա հանընց օտս, թա.- էլ կարում չըմ էն տանը կէնամ, առանց տէնակ մօրթըվում ըմ* (Ձ):

- Առանց տօռնը պէրան - Անգաղտ-նապահ, վայրախոս: *Առանց տօռնը պէրան ա, ըտրորա քըշտէն պէն ըսէլի չի* (Բ):

- Առանց ուրող պատառ չըն տինում պիրընէրումը - Շատ մտերիմ՝ համե-րաշխ են: *Ըտրորանք մին էրկու տարէ առաջ դիշման ըն իլնլ, միհէնգ՛ էլ առանց ուրող պատառ չըն տինում պիրընէրումը* (Բ):

- Առանց փըջիլ վէր կըղնէ - *տեն* Փըջիս՝ վէր կըղնէ:

ԱՌԱՇԿ/ԱՌԱՉ՛ (գրք. յառաջ, առաջ(ք) - գ. 1. Երեսի դիմացը գտնվող՝ տարածվող կողմը, առջեւի կողմը: *Փիս թօխալ ա, առաջկըս տը՛սնում չըմ*: 2. Կնոջ սեռական օրգան: *Հինչ ը՛ս առաջկըս պէք ըրալ, համօթ ա* (Բ): 3. Գորգի, կարպետի ծայրերը՝ չգործված մասը: *Կարպետը կօրծում ըն, կըտրում, մին խիլա տէղ մընամ ա անկօրծէլ, Ղարաբաղում նըրան առաջ ըն ասում* (ՀԱԲ, 15, 136): 4. Օղու առաջին թորվածքը: *Յաման թօթ ա, առաջկը հէնգ լիտըր յը՛կալ ա* (Բ): Կ. 5. Առջեւը, առջետում, դեմուդեմ: *Կամ ա թաքավէրին ըռաշկէն վը՛ննը կէնըմ, թա.- Յը՛ս ըմ ըրալ* (Ձ): 6. Նկատմամբ, վերաբերմամբ: *Հիրըվանէն ըռաշկէն ուրան մէղավէր ա հանը՛վ անըմ* (Ձ): 7. Ներկայությամբ: *Շինացուց ըռաշկէն փըռնում ա, կընգանը թակում* (Բ): 8. Համեմատությամբ: *Լօխճին ըռաշկէն Սաբօն ա ուրան ցօրէնը ճէլի աղում, պըրծընում* (Ձ):

- Առաջկը կապել - *տեն* Առաջկը կըտըրէլ(1):

- Առաջկը կըտըրէլ - 1. Մեկի կամ մի բանի առաջը փակել, արգելք ստեղծել, ճանապարհը փակել: *Հըղէցըն էտ տըղէն առաջկը կըտըրէս ա վէգիրին տըղան, վէր ուրան հընգէր ա ընիս* (ՆԼԲԺԲ, 60): 2. Մեկից առաջ անցնել, առաջադիմելով գերազանցել: *Էտ շա-գ'էրդը էրկու ամսումը հանց սըվը՛րում ա փէշակը, վէր ուստէն առաջկը կըտըրում ա* (Ձ):

- Առաջկը կ'անլ - 1. Երեսւլ, պատկերանալ, ներկայանալ: *Թափէղը վէր պատառ ք'ընում ա, առաջըն ա կ'ամ իրէք հըղէ...* (ՆԱԲ, 39): 2. Որեւէ արարքի դիմաց փոխհատուցել: *Հինչու անիս, յը՛տէն-ճէլի քու առաջկըտ կըկ'ա* (Ձ):

- Առաջկ ըղնէլ - *տեն* Առաջկ ընցընէլ:  
- Առաջկըն անէլ - Առջեւը գցել տա-նել: *Վըխճըրնէն առաջկըն ըրալ, քըշից սարը* (Բ):

- Առաջկ ընցընէլ (գրք. յառաջ անցա-նէմ) - 1. Առաջ շարժվել: *Առաջկ ա ընցընում, ք'ոննում հըսնում սըվ՛դ դէվին պալա-տը* (Ձ): 2. *տեն* Առաջկը կըտըրէլ (2):

- Առաջկըն օնէլ - *տեն* Առաջկը կըտըրէլ(1):

- Առաջկը պէց - 1. Անամոթ, լաիրշ, անբարոյական: *Առաջկը պէց կընէգ՛ ա. վէ՛չ համօթ օնէ, վէ՛չ աբոտ* (Բ): 2. *տեն* Վը՞ռը պէց:

- Առաջկ ըս ք'ոննում՝ քըթէտ ըն թը-խում, քամակ ըս ք'ոննում՝ դըբանէտ ըն թըխում - Անելանելի վիճակ է: *Մարթը ասմա.- Ա՛ կընէգ՛, վէ՛շ մին պէն կարում չըմ անիմ. առաջկ ըմ ք'ոննում՝ քըթէս ըն թխում, քամակ ըմ ք'ոննում՝ դըբանէս ըն թըխում* (Ձ):

- Առաջկը քար քըցիլ - *տեն* Առաջկը կըտըրէլ(1):

- Առաջկ կէնալ - *տեն* Առաջկ ընցը-նէլ:

- Առաջկ կ'անլ - 1. Ծագել, սկիզբ առ-նել, առաջանալ: *Ըշտըղա վէրէ յա, մին դանդ ա մըգը՛տէն առաջկ կ'ամ* (Բ): 2. *տեն* Առաջկ ընցընէլ(1):

- Առաջկ պիրիլ - 1. Առաջացնել, ստեղծել: *Էտ կօրծը շատ տըճըրօթուն ա առաջկ պիրում* (Բ): 2. *տեն* Մաջտը՛դ պիրիլ:

- Առաջկ տալ/տանէլ - 1. Դեպի առաջ մղել: *Քարը առաջկ տըվէ, տը՛սնամ մին գ'ուրգա տակէն* (Բ): 2. Զարգացնել, կա-տարելագործել: *Ափանիմ ըտի տըղա, հօ-րը փէշակը առաջ ա տուվալ* (Բ):

- Առաջկ քաշիլ - 1. *տեն* Առաջկ տալ  
2. Առաջադրել, առաջարկել, արծարծել (խնդիրը, հարցը են): *Ամմէն դծնում կըլ-խօզէն ժօղօվումը էտ բըրիգադիրին տոնս քըցիլի հարցը առաջկ ըն քաշում* (Ձ): 3. Պաշտոնը բարձրացնել: *Ասում ըն, Քընթալաց Սիրը՛վէն թօռնանը առաջկ ըն քաշում* (Բ):

- Առաջկ քըցիլ - 1. *տեն* Առաջկ տալ  
2. Շահել: *Վէր ըտի յըս ըրալ, հինչ ը՛ս առաջկ քըցում* (Բ):

- Առաջկ քիսիլ - 1. *տեն* Առաջկ ըն-ցընէլ: 2. Առաջադիմել, դիրքով բարձ-րանալ: *Հէնգ՛ տըռնըմը էնքան առաջկ ք'ը՛ցավ, վէր տիրէցէն նախագա* (Բ): 3. Զարգանալ: *Ղարաբաղը օրկանցօր առաջկ ա ք'ոննում* (Բ):

- Ըռաշկան խը՛ղծ - Թեթեաբարո (կանանց մասին): *Ըռաշկան խը՛ղծ կը-նէգ՛ ա, հու կարում ա՛՝ ճանգըն ա քը-ցում* (Բ):

- Ըռաշկան՝ հիլի, քմական՝ ծիլի - Արտաքուստ՝ բարի, անկեղծ, լավ, ներ-քուստ՝ խարդախ մարդ: *Ըռաշկան հիլի յա, քըմական ծիլի, ընդըրա նըղը՛տ հու կըլծիս տինի, տօնը կըքանդիլ* (Բ):

- Ըռաշկէն փըրսօղ տալ - Մեկին քծ-նել՝ շողոքորթել: *Լօխ ըռաջիս փօրսօղ*

ըն տամ, վեններըս լուգում, ինձ թարիփ անում (ՆԱԲ, II, 19):

ԱՌԱԶ<sup>1</sup> - տեն ԱՌԱԾԿ:

ԱՌԱԶ<sup>2</sup> (գրք. յառաջ) - 1. Կ. Ժամանակի անունների եւ այլ բառերի հետ որ-վելով՝ ցույց է տալիս դրանց արտահայ-տած ժամանակին նախորդող ժամա-նակը: *Էրկու տարե առաջ մուկը էլ ընք ըտը՞ղ իլնլ (Բ): մ. 2. Նախ, նախապես: Առաջ հանքմ ըն էն առաջի օթախին կ'է-ղեցիկ ըխճըկանը... (ՀԺՀ, V, 20): 3. Հնում, անցյալում, նախկինում: Առաջ ը-տը՞ղ շէն չի իլնլ, ծըմըկնէ յա իլնլ (Ձ):*

- Առաջ Աստուծ - Աստծու առաջնոր-դությամբ՝ հովանավորությամբ (ասվում է որեւէ գործ սկսելիս): - *Առաջ Աստուծ,- ասում ա Սիմօնը, ահէտ ըսկըսում տա-նը փըղթամէնտը քանդիղը (Ձ):*

ԱՌԱԶԱՎՈՐ (գրք. առաջատոր, յա-ռաջատոր) - գ., ած. Աշխատանքային ցուցանիշներով ուրիշներից բարձր կանգնած: *Առաջավոր կալիսօզնիկնուն տանում ըն Բաքու, շօռ ածում (Ձ):*

ԱՌԱԶԻ - տեն ԸՈՐԶԻ:

ԱՌԱՏԱՍ - գ. Գույանի կամ արորի ներքին հաստ ձողը, որի ծայրին ամ-րացվում է խոփը: *Առատամը կօտըրից, Բեգլար դային մընաց մնթնլ (Ձ):*

ԱՌԶ(Ա) - տեն ԱՌԶ(Ա):

ԱՌԷՆ/ԱՌԻՆ (գրք. առ (առնուլ-ի արմատը) - մ. Ձեռքին, մոտը, նրա մոտ: *Առէն հէնգ՝ մանէթ կար, էն էլ փըռնէ-ցէն ինք՝ կալին (Բ):*

- Առէն պէն չիսիլ - Կարող չլինել, հնարավորություններից զուրկ լինել: *Վեր առէն պէն ինի, ք'ծմնգ՝ կանէ (Բ):*

ԱՌԷՍ/ԱՌԻՍ (գրք. առ) - մ. Ձեռքիս, մոտս, ինձ մոտ:

ԱՌԷՏ/ԱՌԻՏ (գրք. առ) - մ. Ձեռքիդ, մոտդ, քո մոտ:

ԱՌԸՏՈՐ - տեն ԱՌՈՒՏՈՐ:

ԱՌԸՏՈՐԱԿԱՆ - տեն ԱՌՈՒՏՈՐԱ-ԿԱՆ:

ԱՌԸՏՈՐ - տեն ԱՌՈՒՏՈՐ:

ԱՌԻՆ - տեն ԱՌԷՆ:

ԱՌԻՍ - տեն ԱՌԷՍ:

ԱՌԻՏ - տեն ԱՌԷՏ:

ԱՌԾԻՎ - տեն ԱՌԾԷՎ:

ԱՌՆԱՎՈՐ (թրք. arnavut (ալբանա-ցի) - ած. 1. Հաղթանակամ, վիթխարի: *Պա-ռավը ասումա,- Էն առնավուր տըղէքը կըրըցալ ջըն յըխնին, տու հինջ բիղի ա-նիս (Ձ): 2. Ծատակեր, որկրամոլ: Էտ առ-նավուրը վեր կամ ա մեր տօն, հինջու տի-նըմ ընք ըստօլէն, լօխ օտում ա (Բ):*

ԱՌՆԷԼ<sup>1</sup> (գրք. առնում, հ.է. \*ar-) - նք. տեն Ինք՝ օնել:

ԱՌՆԷԼ<sup>2</sup> - չք. Տունկը՝ պատվաստը

կաչել, ածել: *Էրկու ծառ ըմ տընգալ, չօրս ջալաղ ըրալ, լօխ առնալ ա (Բ):*

ԱՌՆԸ - գ. Թոռան թոռան՝ կոռան, թոռ: *Հնլն վէշ միըն ուրնն առնը տը-սալ չի (Բ):*

ԱՌՆԸՂ - տեն ԱՌՆԸՂ:

ԱՌՉ - տեն ԱՌՉ:

ԱՌՈՒ - Գործածվում է կապակցու-թյունների մեջ:

- Առռա հա - 1. Բացականչական ար-տահայտություն, որ նշանակում է՝ խփեցի, խփեց: *Տանում ա, պիրոմ, առ-ռա հա, դէվին կըրկաժին... (Ձ): 2. Արիա-մարիության՝ անարգական բացական-չություն՝ մերժման, բացասման նշանա-կությամբ: Առռա հա, յըս ք'ը՞գ վը՞ղ տը-վօղը ջըմ (Բ):*

- Առռա յէ - տեն Կա յէ: - *Առռա յէ,- Պոտլուն յըրան չննգ՝ ա անըմ կընէգ՝ը... (ԼՂՀ, 390):*

ԱՌՈՒ/ԱՌՈՒ (հ.է. \*ari- (շատ, հույժ) - մ. 1. Բուլղորվին, լրիվ: *Կ'ըտը առռէ ցըմաքալ ա (Բ): 2. Ամենա..., ամենից...: Կ'ըտը առռէ ցըմաքալ ա (Բ): 3. Ավելի, էլ ավելի: Հնլնվէրը առռէ յա կըզըվէս, ամա դէ ջօղաքը տաս չի (ՀԲ, 342): 4. Վ. Հենց՝ ճիշտ ու ճիշտ, ուղղակի: Առռէ էն փիս վախտը դերվիշը նի յա մըննում (Ձ): 5. 2., վ. Թեպետեւ, չնայած այն բա-նին: Առռէ ամէն օրը ճիրոմ ըմ, մին ա, էտ ծառը անըմ չի կ'ամ (Բ): 6. մ. Հակա-ռակ, զգրու: Առռէ տամ ջըմ, հինջ կարիս անիս (Բ):*

ԱՌՈՒ - տեն ԱՌՈՒ:

ԱՌՍԸԶ - տեն ԱՌՍԸԶ:

ԱՌՍԸԶՕԹՈՒՆ - տեն ԸՐՍԸԶՕ-ԹՈՒՆ:

ԱՌՎԱՆ/ԱՌՎԱՆ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Առվախ անել - Վախեցնել, սարսա-փեցնել: *Քօլէն քըմական մին աղվէս ա տոն կ'ամ, ըլըքըստըրակէն առվախ ա-նում (Ձ):*

- Առվախ ինի/տըննալ - Վախենալ, սարսափել: *Թաքավէրին մը՞ծ տըղան, վեր դէվին տըսնում ա, առվախ ա ի-նում (Ձ):*

ԱՌՏ - տեն ԱՌՏ:

ԱՌՏՈՒՏ - տեն ԱՌՏՈՒՏ:

ԱՌՈՒԾ - տեն ԱՌՈՒԾ:

ԱՌՈՒԾ/ԱՌՈՒԾ/ԱՌՈՒԾՍ (գրք. ա-ռիւծ) - տեն ԱՍԼԱՆ: Մին օր էտ ջախիլ տըղան անց ար կը՞նըմ Մելիքին պալա-տին քըշտավը, բնորդան ընդըրա յըրան ա պըրծընըմ մին կըտաղած անռնծ (ՀԺՀ, V, 237):

ԱՌՈՒԾԱՆ(Ս) - տեն ԱՌՈՒՏՈՐ:

ԱՌՈՒՅՍ - տեն ԱՌՈՒՅՍ:

ԱՌՈՒՏՈՒՐ - տեն ԱՌՈՒՏՈՐ:

ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ/ԱՌԸՏՈՒՐԱԿԱՆ - գ. Առետրով զբաղվող մարդ՝ առետրա-կան, վաճառական: *Առուտորականը մին օր քընում ա առուտորի (ՀԺՀ, V, 60):*

ԱՌՈՒՏՈՐ/ԱՌՈՒՏՈՒՐ/ԱՌԸՏՈՐ/Ա-ՌԸՏՈՒՐ (գրք. տուրեառ) - գ. Ապրանք-ներ գնելու, վաճառելու եւ շրջանառու-թյան մեջ դնելու գործունեություն: *Ծը-մը՞նը յը՞կալ, առուտորը լ'ալ չի ք'ու-նում (Բ):*

- Առուտոր անել - 1. Առուծախով՝ առետրով զբաղվել: *Անց ա կէնում մին տարե, էտ մարթը էլիա կ'ամ ա հնմին քաղաքը, վեր առուտոր անէ (Ձ): 2. Սա-կարկել, որեւէ գործի մեջ զիջումների ձգտել: Է՞ծ ծախսօղը ասմա,- Առըտոր մէր անէլ, կ'իսըն էտ ա, տօ՞, է՞ծը յօր կալ', ք'իսի՞ (Ձ):*

- Առուտորը հնր-մար չօնէ - Առետրով զբաղվող կարող է խաբել անգամ իր հարազատներին:

ԱՌՕԽԾ/ԱՌՕԽԶ/ԱՌՕՐԾ/ԱՌՕՐԶ (գրք. առողջ) - ած. 1. Առողջություն ու-նեցող, ոչ հիվանդ: *Առօխճ մարթ ար, անպէցն ըրէն, ըսպընը՞ցէն (Բ): 2. տեն ԶՕԹ՝:*

ԱՌՕԽԾԱՆԱԼ/ԱՌՕԽԶԱՆԱԼ/ԱՌՕՐ-ԾԱՆԱԼ/ԱՌՕՐԶԱՆԱԼ (գրք. առողջա-նամ) - չք. 1. Հիվանդությունից ազատ-վել, առողջությունը վերստանալ: *Ք'ը-ցալ բալնիցա, առօխճացալ, յը՞կալ (Բ): 2. տեն ԶՈՒԹԱՆԱԼ:*

ԱՌՕԽԾԱՑ(Ը)ՆԷԼ/ԱՌՕԽԶԱՑ(Ը)-ՆԷԼ/ԱՌՕՐԾԱՑ(Ը)ՆԷԼ/ԱՌՕՐԶԱՑ(Ը)-ՆԷԼ (գրք. առողջացուցանել) - նք. ԱՌՕԽԾԱՆԱԼ-ի:

ԱՌՕԽԾՈՒԹՈՒՆ/ԱՌՕԽԶՈՒԹՈՒՆ/Ա-ՌՕՐԾՈՒԹՈՒՆ/ԱՌՕՐԶՈՒԹՈՒՆ (գրք. ա-ռողջութիւն) - գ. 1. Առողջ լինելը, առողջ վիճակ: *Ըտըրանք յեր ըն կը՞նըմ ուրոն խըտտըմ, ուրոն հնլն, առօղճութունա, կընգանա հըրցըփօրց անըմ... (ԼՂԲ, 375): 2. տեն ԶՈՒԹՕԹՈՒՆ:*

ԱՌՕԹ-ՓԱՌՕԹ (գրք. փառօթ) - մ. 1. Մեծ փառքով՝ շուքով, փառավորապես, հանդիսավորությամբ: *Մը՞ռալը առօթ-փառօթ տարէն թըղը՞ցէն (Բ): 2. Առանց նեղության, առանց նյութական դժվա-րությունների: Ինք'ն ան ուրնն տըղան առօթ-փառօթ ըսկըսում ըն ապրէլ, մին-ջէվ վը՞ր մարթը կ'ան (ՆԼԴԺԲ, 35):*

ԱՍԱՆՑ - տեն ԱՆԱՆՑ:

ԱՍԷԼ/ԱՍԻԼ (գրք. ասեմ) - նք. 1. Միտքը խոսքով արտահայտել: *Էս վեր ասում ա, ծնկները ծիծնողում ըն (ՆԼԴԺԲ, 39): 2. Հաղորդել, հայտնել: Էտ խօխան, հինջը ինում ա, ք'ոնում ա թա-*

քավերին ասում (2): 3. Հիշատակել: Քուսասած մարթըտ միհենգ մեր շենումը չի կենում (Բ): 4. Անվանել, կոչել: Ըտըրան լոխ Պը՛լ Հոռի յին ասում (2): 5. Հրամայել, պատվեր տալ, հանձնարարել: Թաքավերը նծքնրնուն ըսէս ա, վեր էտ վէգիրին հըտը պահին (2): 6. Պատմել: Էտ մարթը ըսէս ա հորան կըլխավը ընցածը (Բ): 7. Պատասխանել: Հու հըրցընէ, կասիս: Քու կործըտ չի (Բ): 8. Մեկի՝ մի բանի մասին կարծիք արտահայտել: Հինգ ըս ասում, լավ ըմ ըրալ, վեր քըցալ չըմ (2): 9. Մտքով անցկացնել, մտածել, մտահոգվել: Էրկու տարէ յա՝ քըցալ ա սիգոն, էլ ասում չի, թա կընէգըս հունց ա տոնը պահում (2): 10. Կրկնել: Քու ասածըտ ըմ ասում (Բ): 11. Արտասանել, երգել: Մշըղ ախպեր, մին պէն ասէ, ըսկանանք (2): 12. Պնդել: Ասում ըմ՝ ըստի բիդի ինի (Բ): 13. Մի բանի արտահայտության նշանը լինել, վկայել մի բանի մասին: Էս վըննահէտը ասում ա, վեր կըխտարը կամ ա ըստըղաս ճոր խըմում (Բ): 14. Երանի թե, միայն թե: Ասէ թառ չի կա, մընացածը հիշտ ա (Բ): 15. Ենթադրենք, ընդունենք: Ասինք՝ էս դոնոնըս էլ քըխըքէ, պա յըմտնան (2): 16. Ուրեմն, պարզվում է որ: Դէ, էն ա աւէ, մէգ խնփան ըն, լի՞ (Բ): 2. Կարծես թե: Հանց խոսում ա, ասիս միսակ ինքըն ա ըշխարում: 18. Չնայած, թեեւ: Ասինք՝ պատառ կէշ ա, հինգ ա՛ իննկան (Բ):

- Ասածը ասած ա - 1. Իր խոսքի տերն է, իր ասածից չի հրաժարվի: Մեր նախագէն ասածը ասած ա, վեր ասալ ա, ընական ա (2): 2. Շատ համառ է: Էտ հարթանը ասածը ասած ա, կարել չըս փոխիս (2):

- Ասած տըղան կըտըրէլ - Ասածն անել՝ իրագործել: Թաքավերը ասում ա, ասած տըղան կըտըրում, էքսը հիշքան պառավ մարթ կա, լոխճին կըտորում ըն (2):

- Ասելը հինգ ա՛ - Ինչ է ուզում ասել, ի՛նչ մտադրություն ունի: Ասելը հինգ ա՛, վեր յըկալ ա (Բ):

- Ասելըն ա անելը մին ինի/տըղնալ - Ասածն իսկոյն՝ անմիջապէս կատարվել: Ասելըն ա անելը մին ա տըղնալ. կընէգըն ա օխտը խօսան յոր ա կալան, յըկալ էս սարէն կըլխէն վըր յըկալ (ԱՍ, 18):

- Ասելըն ա անելը ուրուր ախպեր ըն - Ասելն ու իրագործելը՝ կատարելը պետք է իրար համապատասխանեն: Ասելըն ա անելը ուրուր ախպեր ըն, վեր ասալ ըս, բիդի անիս (2):

- Ասելը քըցիլ - Առանց ասելու չանել՝ չհասկանալ, շնորհապակաս լինել: Խըքը կըտըրէլ չի՝ մին պէն անէ, էգգանան ասելըն ա քըցիւմ (Բ):

- Ասել չինիլ - տէն Ըսելի պէն չի(1): Միմօնը արագավը թա հիշքան ա ուրխանըմ, էլ ասիլ չինիլ (ԼՂԲ, 306):

- Ասինք՝ թա - Ենթադրենք, դիցուք: Ասինք՝ թա միսը յըս տուվէ, պա էն իրըքը ըշտըղա յըս քըթինան (Բ):

- Ասիս թա/լըհա - Կարծես թե, այնպէս է թվում թե: Արը՛վ, հինգ ա՛րը՛վ, ա-սիս լըհա ամընն ա (2):

- Ասում ա, լի՞ - Աստեղի է ասում, ճիշտ չի ասում, հենց այնպէս է ասում: Ասում ա, լի՞, էս շէփտումը կարել չի էտ պատը շարէ՛ (Բ):

- Ասում ըմ՝ ասու մէր, թա էշը քած ա, ասում ա՝ քոռակըն էլ ա քած - Ասում են այն ժամանակ, երբ մեկը՝ հակառակ մյուսի ջանքերի, շարունակում է բացահայտել գաղտնիքները:

- Ըսածան տոն կ'ալ - տէն Խուսկան տոն կ'ալ:

- Ըսածավը քինիլ - տէն Խուսկավը քինիլ:

- Ըսածէն պէնը վըննը կենալ/խըզ անել - Իր ասածը պնդել, համառել, չգիշել: Օլջի Փիրումէն կընէգը ըսածէն պէնը ա վըննը կենըմ, թա՝ չէ, վեր չէ, բիդի ասիս (2):

- Ըսելին ա ընելին մաջին սար ու ծորեր կա - Ասելն իրագործելը՝ կատարելը շատ դժվար է: Նըհախ տըղան ասել մէր, ըսելին ա ընելին մաջին սար ու ծորեր կա (Բ):

- Ըսելի պէն չի - 1. Անկարագրելի՝ արտակարգ է, չափազանց է: Էտ ախճիգը թա հիշկան ա իննում դաշանգ, ըսելի պէն չի (2): 2. Ասելն ամոթ է: Մորը հանց խուսկեր ասից, վեր ըսելի պէն չի (Բ):

ԱՍԷԼ-ԽՕՍԷԼ - չք. Զրուցել, իրար հետ աշխուժորեն խոսել: Նըստում ըն, ասում-խօսում, քը՛փ անում (Բ):

ԱՍԷՏ(ԷԼ) - տէն ԱՍԷԼ(ԱՍ):

ԱՍԷՏ(ԷԼ) - տէն ԱՍԷԼ(ԱՍ):

ԱՍԸՂ(ԵԸ) (գրք. ասելն) - գ. 1. Մետաղից բարակ, ողորկ, սրածայր թելանցքով գործիք՝ կարելու համար, ասել: Մարը մին փօնց ասըղ ա տուվալ, հանցու հու վեր ծգի՝ աշկալ տա, աշկերը ծակէ (ԱՍ, 15): 2. Տարբեր ձեւեր ունեցող եւ տարբեր նպատակներով օգտագործվող մետաղյա սրածայր ձողիկ: Թըվանգին ասըղը կօտըղալ ա (Բ): 3. Փուշ (ոգնու, բոյսի եւն): Կօզնուն ըսըղնէն ծըկօտից, շօնը փախալ (2): 4. Մի տեսակ բոյս, որի տերեւները ասեղների նման են: Մեր հընդերըմը ասըղ էլ ա փըսնէս (Բ):

- Ասըղ ածել - Թեթեակի կարել: Կընէգը էտ թորբան ասըղ ա ածում, տամ մարթին, հըղէ տիննում (Բ):

- Ասըղ խօզօղ - տէն Ասըղ մաշկօղ:

- Ասըղ կօլ տըված (շօն) - Սաստիկ նիհար, հյուծված (անձ): Էտ հինգ ա՛ հնւլտ, հանցըս ասըղ կօլ տըված շօն (Բ):

- Ասըղ կօլ տըված շօն տըղնալ - Սաստիկ նիհարել, հյուծվել: Էնքան հաց չի կէրալ, տըղնալ ա ասըղ կօլ տըված շօն (2):

- Ասըղ մաշկօղ - Խիստ ժլատ, գծուծ: Իգէն ասըղ մաշկօղ ա, կարել չըս նըստա պէն յոր օնիս (Բ):

- Ասըղ տալ - Շանը վնասելու՝ սպանելու նպատակով ուտելիքի մեջ ասեղ դնել: Կօղը չուբանէն շընէրէն ասըղ տուվալ, ըսպանից, վըխճարը քըշից, տարալ (2):

- Ասըղ տաս, էն մին դօլավը տոնս կըկա - Շատ նիհար է, հյուծված է: Էնքան տոնգը կացալ ա, վեր ասըղ տաս, էն մին դօլավը տոնս կըկա (Բ):

- Ասըղ տըղնալ - 1. տէն Ասըղ կօլ տըված շօն տըղնալ: 2. Հեշտությամբ անհետանալ, կորչել: Ասըղ տըղնալ, կօրալ, էլ կըրը՛ցէնք՝ վէք քըթէնանք (Բ):

- Ասըղ փըռնէլ գիդան - Կար անել իմանալ, կարելու շնորհք ունենալ: Տու հինգ կընէգ՝ ըս, ասըղ փըռնէլն էլ չըս գ'նոնում (2):

- Ասըղ քաշիլ - տէն Ասըղ ածել:

- Ասըղ քըցիլ տըղ չինիլ - Շատ բազմություն հավաքված լինելով՝ ամենեւին ազատ տեղ չլինել: Էնքան էլ մարթ ա իննում, վըր ասըղ քըցիլ տըղ չի իննում (ՀԺՀ, VII, 129):

- Ասըղ քըցիս՝ տափը չի ըղնէլ - տէն Ասըղ քըցիլ տըղ չինիլ:

- Ըսըղէն ծակավը անց կէնալ - 1. տէն Ասըղ կօլ տըված շօն տըղնալ: 2. Շատ ճարպիկ լինել: Ըսըղէն ծակավը անց կըկէնա, տու ընդըղա կարել չըս խնփիս (2): 3. Շատ տանջվել, չարչարվել, նեղություններ կրել: Հինգ կործ ա՛նէլ, հնւլտը ըրա՝ ըսըղէն ծակավը անց ըմ կացալ (Բ): 4. Շատ բարակ՝ նուրբ լինել: Էտ ախճիգը մին հանց շալ ա կօրծում, վեր ըսըղէն ծակավը անց կըկէնա (2):

- Ըսըղէն ծակավը անց կըցընէլ - Շատ տանջել, չարչարել, նեղել: Էտ աղան նծքնրնէրէն ըսըղէն ծակավը անց ա կըցընում, մինչը՛վ էտ կօրծը պըրծընըմ ըն (2):

- Ըսըղէն ծակէն հնալ ածել - տէն Ըսըղէն ծակավը անց կըցընէլ:

- Ըսըղէն ծակէն հնալ քինիլ - տէն Ըսըղէն ծակավը անց կէնալ (3):

- Ըսըղէն ծակավը - տէն Նալէն-մէլիս ղաթումը:

- Ըսըղու յըղա նըստէլ - Խիստ անհանգիստ լինել, անհարմար վիճակում գտնվել, նյարդայնանալ: Ըսըղու յըղա յըս նըստած, էտ հինգ ա՛ պըտահալ (Բ):

- Ըսըղու շօք - Չնչին՝ աննշան բան:

էտ ըստ՝դէն շօքը հինչ ա՛, վեր վախտ ըս կուրցընում (2):

ԱՍԸԼ (թրք. *asli*) - ած. Առողջ, պիտանի, գործունայ: Ընում ա, չընում, իրէք ախպէր ըն ընում, ախպուրցը մինը՝ ասըլ, էրկուսը՝ բըղասըլ (ՆԱԲ, 24):

ԱՍԹԸԽ (գրք. *աստղ*) - գ. 1. Սեփական լույս ունեցող երկնային մարմին, որ երեւում է գիշերը՝ լուսավոր կետի նման, աստղ: Ծըմբուզա քըշէրը վեր ասթըխէրը տոնս յը՛կէն, գ՛իղան վեր ցօրտ ա ինանկան (2): 2. Աստղի ձեւով՝ մի քանի ճառագայթներով կամ սուր անկյուններով զարդանկար՝ նշան՝ շքանշան եւն: Ասթըխը տօջանն ա տամ, ք՛իղում (Բ): 3. փխբ. Նշանավոր, հռչակավոր գործիչ: Էտ մարթը սաղ կանտօրէն ասթըխըն ա (Բ): 4. փխբ. Բախտ: Կօզի դաշանգ՛, ամմա ասթըխ չօնէ (Բ):

- Ասթըխէրը հըղէ ըղնէլ - Գիշերն անցնել, լույսը կամաց-կամաց բացվել: Ասթըխէրը հըղէ յըն ընգալ, պատառ վըխտանը յը՛տը հիյվըննէն տոնս ընէլի վախտըն ա (Բ):

- Ասթըխէրը հըմբարէլ - 1. Անհնարին՝ անմիտ գործ ձեռնարկել: Էտ պէնը կարէլ չըս անիս, հանջը՛վ ըրա, թա օգում ըս ասթըխէրը հըմբարիս (Բ): 2. Պարապ լինել, անգործության մատնվել: Կօրծ, զատ չի աւնում, ասթըխէրըն ա հըմբարում (Բ):

- Ասթըխէրը հըմբարվել - Երկինքը պարզ լինել: Կուղէրէն մը՛ծը ասմա.- Ասթըխէրը հըմբարվում ա, էս քըշէր կարէլ չընը կուղթօթուն անինը՝ (2):

- Ասթըխէր խօսկ տալ - Անհնարին՝ մեծ բաներ խոստանալ: Էտ տըղան մինչը՛վ փոսակվէր ըխճըկանը ասթըխէր ա խօսկ տամ (Բ):

- Ասթըխը խըվարէլ - 1. տեն Ասթըխը ծըռվել: 2. տեն Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը ծըլլալ - Մեռնել, վախճանվել: Մին ուրիւ՛գոն ախպէրը ըրանգիւմը տէսնում ա, վեր ախպօրը ասթըխը ծըլլաց... (ՅԺՅ, V, 557):

- Ասթըխը ծըռվել - Հաջողությունը դադարել, անհաջողության մեջ ընկնել, դժբախտանալ: Էտ օրանց էլ ըտըրա ասթըխը ծըռվում ա (Բ):

- Ասթըխը ծովվալ/կօրծ անել - Բարի բախտի արժանանալ, հաջողության մեջ ընկնել: Ըտըրա ասթըխը ծովվալ ա, էտ վը՛սկէն յօր ա օնում, փըսակվում, լ՛ալ ապրում (2):

- Ասթըխը կօրչիլ - տեն Ասթըխը ծըռվել:

- Ասթըխը հանգիլ - տեն Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը ճըլկավէրը ըղնէլ - տեն Ասթըխը ծըռվել:

- Ասթըխը մար մըննէլ - տեն Ասթըխը ծըռվել:

- Ասթըխը պէսվալ - տեն Ասթըխը ծովվալ:

- Ասթըխը վեր ըղնէլ - տեն Ասթըխը ծըլլալ:

- Ասթըխը տըղը - տեն Նախշը տըղը:

- Ասթըխը տոնս կ՛ան - տեն Ասթըխը ծովվալ:

- Ասթըխը փըռնէլ - 1. Դուր գալ, հավանել: Վէր ըտըրա տը՛սալ, ասթըխը փըռնից, կօրծի յէր կալմլ (Բ): 2. տեն Ասթըխը ծովվալ:

- Ասթըխը օրախ - Բախտավոր, գործը հաջողակ: Ասթըխը օրախ մարթ ա, կալմըն էլ ա ճօխտակ ծընալ, էշըն էլ (Բ):

- Ասթըխու թիքն/կուտուր/պատառ - տեն Լոնտու թիքն:

- Ասթըխէրէն հըսնէլ - Շատ բարձրանալ: Հէնգ՛ տըռնումը էտ ծառը հըսնըմ ա ասթըխէրէն (2):

- Ասթըխէրէն նըհը՛տ խաղ անել - Արագավազ՝ թռչկան լինել (ծիու մասին): Ծի, հինչ ծի՛, ասթըխէրէն նըհը՛տ խաղ ա անում (Բ):

ԱՍԹԸԽԱԳԵՏ (գրք. *աստեղագետ*) - գ. Աստղագուշակ՝ աստղերով գուշակություն անող: Էտ տըղան ասըմ ա, վեր ինքը՛ր ասթըխագէտ ա, վեր ասթըխը ծըլլամ ա, գ՛ուղում ա հիւր ասթըխ ա, հուվա մէռալ (ՅԺՅ, V, 555):

ԱՍԹԸԽԱՎ - ած. 1. Ոչ շատ գեղեցիկ, բայց դուրեկան, գրավիչ, հաճելի: Ասթըխալ ախճիգ՛ ար, էտ տըղան տը՛սալ, ծօղից, տարալ (Բ): 2. տեն Ասթըխը օրախ:

ԱՍԹԸԽԱՅԸՆԸՎ - ած. Աստղերի թվով, անհամար, բազմաքանակ: Շախը ասթըխիանջը՛վ գօրքալ նի յա մըննում Ղարաբաղ (2):

ԱՍԹԸԽՕՏ - ած. Աստղերով պատված, աստղալից: Էտ ասթըխօտ յէրգինքան իրէք ասթըխ վեր ընգալ... (ՅԺՅ, V, 288):

ԱՍԻԼ - տեն ԱՍԷԼ:

ԱՍԼԱՆ (թրք. *aslan*) - գ. 1. Առյուծ: Ասլանը ասմա.- Վէր ճօխտակ ծընիւմ, քը՛գ ուտըլական ըմ, վեր կընդակ ծընիւմ, մին ճօտ ըմ քը՛գ տըլական (2): 2. փխբ. Քաջ՝ կտրի՛ճ՝ սրտոտ մարդ: Ըտըրան էրկու ասլան տըղա յա ինում (Բ):

- Ասլան բալասի - տեն ԱՍԼԱՆ(2):

- Ասլանը ճանջ չի փըռնէլ - Ուժեղը իր կարողություններին համապատասխան է գործ ձեռնարկում: Տըղան դէվին ասմա.- Ասլանը ճանջ չի փըռնէլ, էտ հուվ ա՛, վեր յը՛ս ըտըրա նըհը՛տ կըռվիմ (2):

- Ասլան կըտըրէլ/տը՛ռնալ - Քաջ՝ անվախ՝ համարձակ դառնալ, արիանալ:

Էտ վէր տը՛սալ, ասլան կըտըրից (Բ):

- Ասլանու ծը՛ծ ծըծած - տեն ԱՍԼԱՆ(2):

- Ասլանու կաթնը - 1. փխբ. Ոգելից խմիչք, հատկապես թթի օդի: Սիրգօն ապան խըմում ա, թա.- Էս ըսլանէն կաթնան հիշքան ը՛ք քաշան (2): 2. փխբ. Հազվագյուտ բան: Լալ մարթը ըսլանու կաթն ա, տիժէր ա քըթէնալը (2):

- Ասլանու ըռը՛խ ճօթըռօղ - տեն ԱՍԼԱՆ(2):

- Ասլանու սը՛րտ ինիլ - Քաջ՝ անվախ՝ համարձակ լինել: Մէր Սիրգան ըսլանու սը՛րտ օնէ (2):

ԱՍԼԸ/ԱՍԼԻ (արաբ., պարս. *asl* (բուն, ծագում, արմատ, հիմնական), թրք. *asil* (ծագում, տեսակ, ցեղ) - գ. Արմատ՝ հիմք, ծագում, ցեղ, տոհմ: Ասլը ճինանչի, յը՛տնան ախճիգ՛ ծօղ (2):

- Ասլը հօ - Ցեղի՝ գերդաստանի ժառանգական հատկանիշները չեն կորչում, շարունակվում են սերնդեսերունդ: Էս խօսկէրքը ըսէլալ, դէրվիշը յէտ ա տը՛ռնում, թա.- Ասլի հօ՛ (ՅԺՅ, V, 603):

- Ասլին քաշիլ - Իր նախնիներին նմանվել: ...էն էլ ուրան ասլին ա քաշալ, հինչու տէսալ ա, էն ա աշկէն առաջը կալալ (ՅԺՅ, V, 604):

ԱՍԼԸԶԱՂԱ (թրք. *asilzade*) - ած. Ազնվագար, ազնվատոհմիկ: Էս ասլըզաղա հավքէրան ըրէնակ յէր կալած՝ Էս ա մին քանի տարի կա, վեր Կըվկազին նանամ-սանամ խանըմնէն էլ ըն յայլաղ քինըմ... (ՋՏ, Բ, 74):

ԱՍԼԻ - տեն ԱՍԼԸ:

ԱՍԿԱՆ (թրք. *asker*) - գ. 1. Թուրքական զինվոր: Ասկանընէն էտ վէր տը՛սէն, փախէն (Բ): 2. Զորք: Խանը անսկանը հըվաքում ա, նի մընում էտ թաքալէրին յէրգ՛իրը (2):

ԱՍԿԱՆԱՆ - գ. Քաղաք ԼՂՀ-ում՝ համանուն շրջանի կենտրոնը:

- Ասկանանն պէրթումը պըլօկված - Շատ թշվառ, չքավոր: Էտ հինչ ա՛ հանըտ, հանց ըս Ասկանանն պէրթումը պըլօկված (Բ):

ԱՍԿՕԼԿԱ (ռուս. *осколок*) - գ. Պայթած արկի, ռումբի, նռնակի եւն բեկոր: Մինչը՛վ միհէնգ ասկօլկան էն ա ջանըմը (2):

ԱՍՍԱ - գ. Խաղողի մի շարք տեսակներ՝ կախան խաղող, որ պահում են ձմռան համար: Աման կախ-կախ ըրալ, հանցու ծըլմընը խօխէնքը օտին (2):

ԱՍՍԱԸԸՂ - գ. Թելերից գործած գդալաման: Անանթ ա իլան՝ պէճինք՛իլ մաշին ասմալըղ էլ ըն իլան տալիս (2):

ԱՍՍԱՆ (պարս., թրք. *asman*) - տեն ՅԷՐԳԻՆԵ:

- Ասմանը յը՛ր ինիլ - տեն ՅԷՐԳԻՆԵ(ը) յը՛ր ինիլ:

- Ասմանը յը՛ր հ(անել) - տեն Զեր-գինք(ը) յը՛ր հ(անել):

ԱՍՍՈՒԲ - գ. 1. Ասված խոսք, ասույթ, ասելիք: Վեր քու ասմունք անիմ, մին շէփտըմը պըրծընէլ չըմ (Բ): 2. Ժամասացություն, ժամերգություն: Աղէրը ասմունքը պըրծալ, լօխ տոնս յը՛կէն (Ձ):

ԱՍՍՕՇԿԱ (ռուս. *осымушка*) - տեն ՊԱՏԱՌ:

ԱՍՊԱԺ - տեն ԱՇՊԱԶ:

ԱՍՊԱԺԽԱՆԱ - տեն ԱՇՊԱԶԽԱՆԱ:

ԱՍՊԱԺՕԹՈՒՆ - տեն ԱՇՊԱԶՕԹՈՒՆ:

ԱՍՊԷԼ - նք. Ասպերը ձգել՝ գործելու համար: Թիլը ասպից, վեր կ'օրծէ (Ձ):

ԱՍՊ(Ը) - գ. 1. Ջուկիակի հաստոցի շարժուն շրջանակը՝ սանրածէ թելերով, որոնց արանքով անցնում են հենքի թելերը: Ասպը մըծիճվալ ա, խը՛ղճէն թողալ մայնալ (Ձ): 2. Կտավի գլխի հենքի թելերը, ծոպ: Ասպը կըտօրից (Ձ):

ԱՍՍԱԽԿԱԼ - տեն ԱԽՍԱԽԿԱԼ:

ԱՍԿԷԼ/ԱՍԿԻԼ - կք. եւ չք. ԱՍԷԼ-ի:

ԱՍԿԻԼ - տեն ԱՍԿԷԼ:

ԱՍՏԱՌ (պրս., թրք. *astar*) - գ. 1. Հագուստի՝ վերմակի եւ ներսի կողմը կարված կտորը: Յուրդանէն աստառը կարում ա (Բ): 2. փխբ. Որեւ գործի ներքին՝ գաղտնի հանգամանքը, ներքին պատճառը, հիմքը: Տու կօրծէն իրը՛սըն ըս տը՛սնում, աստառը տը՛սնում չըս (Բ):

- Աստառ անել - տեն ԸՍՏԱՌԷԼ:

- Աստառը ծըկծըկօտ ինիլ - Ընդունված օրենքին՝ կարգերին դեմ լինել: Էն կարել չի մէր կօխկէն կօրծ անէ, ընդըրա աստառը ծըկծըկօտ ա (Բ):

- Աստառը շօռ տուված - Դավանանքը՝ համոզմունքը փոխած: Աստառը շօռ տուված մարթին անա ամմէն հինչ ըս-պըսէլի յա (Ձ):

ԱՍՏԱՌՕԺՆԻ (ռուս. *осторожный*) - 1. ած. Զգույշ, ուշադիր, զգու: Աստառօժնի մարթ ա, կարել չըս չանշմիշ քըցիս (Բ): 2. մ. Զգուշաբար, զգուշորեն: Էտ զըրանատնէն աստառօժնի յօր ա օնում, յըշիգումը տանում (Ձ):

ԱՍՏԷԼ(ԱՍ)/ԱՍԷԼ(ԱՍ)/ԱՍԷՏ(ԷԼ)/ԱՍԷՏ(ԷԼ) - մ. Ապա, հետո, այսուհետեւ: Աստէլ վեր հըղէ յա ինում, թա ք'ինի, օգում ա, վեր ուրան զըզտօղէն էլ նըհէտը տանէ... (ՀԱԲ, 15,68):

ԱՍԷԼ(ԱՍ) - տեն ԱՍԷԼ(ԱՍ):

ԱՍԸՎԱԾ - տեն ԱՍՏՈՒԾ:

ԱՍԸՎԱԾԱԶԻՆ - տեն ԱՍԸՎԱԾԱԶԻՆ:

ԱՍԸՎԱԾԱԾԻՆ - տեն ԱՍԸՎԱԾԱԾԻՆ:

ԱՍԸՎԱԾԱԾԱԶԻՆ/ԱՍԸՎԱԾԱԾԱԶԻՆ/ԱՍԸՎԱԾԱԾԻՆ (գրք. Աստուածածին) - գ. Քրիստոսի մոր՝ Մարիամի

մակդիրը: Մարյամ Աստվածածինն մին խօրթ մար ա իլնալ, տա փիս կընէգ՝ ա իլնալ... (ԱԱ, 51):

ԱՍՏՈՒԾ/ԱՍՏՈՒԶ/ԱՍՏՕԾ/ԱՍՏԸՎԱԾ (գրք. Աստուած) - գ. 1. Կրոնական պատկերացումներով՝ աշխարհն ստեղծող ու կառավարող գերագույն էակ: Աստուծ ըտըրա խընթիրքը ըսկանում ա, դուշ շինում, թըռչըցընում (ԱԱ, 64): 2. փխբ. Պաշտամունքի արժանի անձ, կուռք: Էտ մարթը մէր Աստուծըն ա (Բ):

- Աստուծ ա գ'նղոն - 1. Ոչ ոք չգիտե, հայտնի չէ, ո՞վ գիտե: Ք'ինըմ ա, ք'ինըմ, շատ ա ք'ինըմ, թա խըրէգ՝, Աստուծ ա գ'նղոն... (ՀԺՀ, V, 128): 2. Ինչ-որ վատ բան, վարմունք եւն դատապարտելու, որեւէ մեկի կամ որեւէ բանի նկատմամբ պարսավանքի եւ ընդհանրապես բացասական վերաբերմունքի արտահայտություն: Աստուծ ա գ'նղոն, թա քանէ մարթու տօնըս քանղնալ տու (Բ):

- Աստուծ ախըր պարի անէ - Թող հաջողվի՝ վերջը բարի լինի: Լ'ավ կօրծ ըս փըռնալ, Անդրի, Աստուծ ախըր պարի անէ (Բ):

- Աստուծ անէ - 1. Երանի թե: Աստուծ անէ՝ էլ կըմը՛վ չինի, մէխկ ըն էս ջիհիլնէն (Բ): 2. Եթե, եթե հաջողվի, եթե հաջողություն լինի: Աստուծ անէ՝ արաշտ չինի, ըստարէ Լ'ավ ցօրէն ընք հընձիլն (Բ):

- Աստուծ աշկան քըցիլ - Այլեւս բախտը չժպտալ՝ օգնություն չլինել: Աստուծ մը՛գ աշկան քըցնալ ա, կարում չընք ապրիսը՝ (Ձ):

- Աստուծ բանընք'նալ տա - քըմղ. Թող առատություն լինի: Ժողովուրդը էք'նից հօնձը ըսքըսում ըն, Աստուծ բանընք'նալ տա (Բ):

- Աստուծ դանըր տուվալ ա, դանմանըն էլ նըհի՛տը - Ամեն մի նեղություն՝ դժվար իրավիճակ իր փրկության ելքը՝ միջոցն ունի: Աստուծ դանըր տուվալ ա, դանմանըն էլ նըհի՛տը, կօզի կօրծ չի անում, ամմա ախպէրը միշտ քըղաքան փուլ ա դարկում (Բ):

- Աստուծ էրկու ծըրքալ ա տամ - Աստված շռայլ է (մեկի հանդեպ): Ըտըրանց Աստուծ էրկու ծըրքալ ա տամ, էրկու տըռնումը հըրուստացալ ըն (Ձ):

- Աստուծ ըղօրմած ա - տեն Աստուծ մը՛ծ ա:

- Աստուծ ըստը՛ղծալ ա, վեր յը՛կալ/քըշացալ - Անթերի է, կատարյալ է, արտասովոր է: Տօն, հինչ տօ՛ն, ախիս Լ'ըհա Աստուծ ըստը՛ղծալ ա, վեր յը՛կալ (Բ):

- Աստուծ ինիլ - Խիղճ՝ գույ՝ խղճմտանք ունենալ: Ընդըրա Աստուծ օնէ, նըհի՛տը հընզըրօթուն ըրա՛ (Բ):

- Աստուծ լավէն նըհի՛տ ա առուստօր

անում - Միշտ լավը՝ բարին է կործանվում՝ մեռնում: Աստուծ Լ'ավէն նըհի՛տ ա առուստօր անում, էլքան փիս պըրզվնէն թօղալ ա, էտ ջանիլ, խէլոնք, ըղօրմալ մարթին տարալ (Ձ):

- Աստուծ ծէն տալ - Աստծու անունը տալով՝ նրանից օգնություն խնդրել, Աստծուն ապավինել: Տարէն փիս արաշտ ա, կընանէք'ը Աստուծ ըն ծէն տամ, վեր թօռ կ'ա (Բ):

- Աստուծ ծըրք հըսցընէլ - Բախտը ժպտալ, օգնություն լինել: Աստուծ ծըրք հըսցըրալ, թօռ չի յը՛կալ, ժողովուրդը հօնձը ըրէն, պըրծէն (Բ):

- Աստուծ կըլխան փախած - Անբախտ, անհաջողակ: Աստուծ կըլխան փախած ա, վէշ մին պէն կարում չի անէ (Ձ):

- Աստուծ հազգար ու մին տօռնը օնէ, հազգարը վեր կապէ, մինը կըպէնա - Դժվար իրավիճակից դուրս գալու ելք կգտնվի: Դանդ մէր անէլ, Հանէս, Աստուծ հազգար ու մին տօռնը օնէ, հազգարը վեր կապէ, մինը կըպէնա, կալ ա լի՛, ըստակալ ա, ըստակալ ա, էս ա հէրէնչըտ ծըռական ա (Ձ):

- Աստուծ համ տամ ա, համ տանում - տեն Աստուծ մին տը՛ղա կըտըրում ա, մին տը՛ղա՛ տամ:

- Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա անում - Բարի՝ առատաձեռն մարդը միշտ շահում է: Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա անում, սաղ գ'անքումը Լ'իվթօթուն ա ըրալ, միհէնգ՝ էլ լօխ ուրան ըն ք'օմնա՛ գ' անում (Բ):

- Աստուծ հըզգարէն փուլ ա տամ, մինին՝ խըլք - Ասում են ոչ ունեւոր, բայց լավ՝ պարկեշտ՝ խելոք մարդկանց հասցեին:

- Աստուծ հը՛ռէ պահէ/տանէ - Թող այդպիսի բան երբեք չպատահի, Աստված ազատի (փորձանքից, չարից եւն): Աստուծ հը՛ռէ պահէ, ասում ըն հիրը՛վան շէնումը ազար կա (Ձ):

- Աստուծ հիւքի յա տուվալ, կարում չի յը՛տ յօր օնէ - Ասում են չար՝ դաժան՝ վատ մարդու մասին, որը մեռնելիս տանջվում է:

- Աստուծ հիւքին լոնըվէրէ - Բարեմաղթություն հանգուցյալի մասին: Կ'էվանը մէգ շատ ա ք'օմնա՛ գ' ըրալ, Աստուծ հիւք'ին լոնըվէրէ (Բ):

- Աստուծ դէյնանը տակէն պահում ա - Աստված հովանավորում է: Հու Ըստուծէն հըվատում ա, Աստուծ դէյնանը տակէն պահում ա (Ձ):

- Աստուծ դըվաթ տա - Բարեմաղթություն որեւէ աշխատանք կատարողին՝ թող ուժ՝ եռանդ լինի աշխատանքն ավարտին հասցնելու համար: Շէնին ջի-

հիշեն նորիս հետ տընէր ըն շինում, Աստուծո ղըվաթ տա (Բ):

- Աստուծ մաջին նըստած - Գեղեցիկ, հիասքանչ, կատարյալ: Ասում ա.- էս հինչ լնվ արտ ա՛, տարը մըճածը հունց ա փըսալ, լըհա ասիս Աստուծ մաջին նըստած ինի (ՅԺՅ, V, 662):

- Աստուծ մըճ ա - Մի ելք կգտնվի, պետք չէ հույսը կորցնել: Նըղըսըրտել մէլ, Աստուծ մըճ ա, էս ա թօռ կըկ'ա, բօստանըտ կըճիրի (Բ):

- Աստուծ մընևան քըցի - Անօրեն՝ անխիղճ գործ բռնել, իր հավատը դրժել, անողոք դառնալ: Թաքավէրը Աստուծ մընևան քըցալ ա, ժողովուրթէն տանջում ա (Ձ):

- Աստուծ մին տը՛ղա կըտըրում ա, մին տը՛ղա՝ տամ - Դժբախտությունն ու բախտավորությունը հաջորդում են իրար: Աստուծ մին տը՛ղա կըտըրում ա, մին տը՛ղա՝ տամ. Սըք'անէն էջը յըրկէ ըստակալ ա, կավը՝ ըսօր ծընալ (Բ):

- Աստուծ յը՛ր չօնէ/կօնէ՝ - Արդարացի չէ, անընդունելի է, անօրեն՝ անխիղճ արարք է: Աստուծ յը՛ր չօնէ, վեր ինձ էրկու ծի ինի, ք'ը՛գ մին էջ էլ չինի (Ձ):

- Աստուծ շընըհավեր անէ - տեն ՇԸՆԸՅԱՎԷՐ: Աստուծ շընըհավեր անէ, բօրջըն էլ փէշաք'արևերին ինի (ՁԱ, Ա, 56):

- Աստուծ չանէ - տեն Աստուծ վէջ անէ:

- Աստուծ չինիլ - Անգութ՝ անխիղճ՝ դաժան լինել: Յէզըն թա.- Կըծէ՛, ըսպանէ՛, էրկուվընևանուն Աստուծ չօնէ (ՅԺՅ, VII, 240):

- Աստուծ պահէ - բըմդ. Ապրի, երկար ապրի: Աստուծ պահէ Յէնօկէն, քժմնգ՝ ըրալ, բօստանըս չըփըրը՛ցէ (Ձ):

- Աստուծ պարին կըղարէ - բըմդ. Մեկի նպատակի կամ իղծի բարեհաջող իրականացման ցանկություն՝ թող հաջողություն լինի: Ասքիսէ՛գ՝ աքէրը օգում ա թօռնանը փըսակէ, Աստուծ պարին կըղարէ (Բ):

- Աստուծ սարէն յէջում ա, ծնունդ տինում - Ամեն մեկին որեւէ բան տրվում է՝ ըստ իր կարողությունների եւ արժանիքների: Մացակը ասմա.- Աստուծ սարէն յէջում ա, ծնունդ տինում, յը՛ս շատ ըմ հօնձ անում, բիղի շատ օտիմ (Ձ):

- Աստուծ սը՛տ չի - 1. Խիստ գաղտնի է, թաքուն է: Ըտըրա փըռնած կուրծէրան Աստուծ սը՛տ չի (Բ): 2. Անօրեն՝ անարդար գործ է: Ըտըրանա Աստուծ սը՛տ չի, յը՛ս կարել չըմ խառնըվիմ (Բ):

- Աստուծ վէջ անէ - 1. Երանի թե այդպես չինի, աստված մի արասցե: Աստուծ վէջ անէ՝ մարթին կընէ՛գը մը՛նէ, տօնը կըքանդվի (Ձ): 2. Սպառնալիքի արտահայտություն: Բաղվանջին ասում

ա.- Ա՛խօխէնք, էս դօնումը բախշում ըմ, ամմա հատէ ասում ըմ՝ Աստուծ վէջ անէ, մէհէտ էլ բաղան կոտորուն անիք... (Ձ):

- Աստուծ տա - տեն Աստուծ անէ:

- Աստուծ տալ - Բախտը բերել, հաջողության մեջ լինել: Ըտըրա Աստուծ տամ ա, քանէ հէտ ք'նունում ա վը՛րս, տէրտակ չի կ'ամ (Բ):

- Աստուծ տանել - Մեռնել, վախճանվել: Ամմա ինդի յա պըտահում, վը՛ր Աստուծ մին տը՛ղ չի տանըմ. առաջ կընգանըն ա տանըմ (ՅԺՅ, V, 64):

- Աստուծ ուրան (ք'ը՛գ) նըհը՛տ - 1. Աստված գորավիգ լինի նրան (քեզ), թող հաջողություն լինի: Տըղէրքը ք'ը՛ցալ ըն կըռը՛վ, Աստուծ ուրանց նըհը՛տ (Ձ): 2. Ինքն (դու) է (ես) իր (քո) գլխի տերը, պետք չէ միջամտել, հարկ չկա նրա (քեզ) հետ վիճելու, համոզելու: Իգէն ասած չի ըսկանում, հինջը օգում ա, թօղէ անէ, Աստուծ ուրան նըհը՛տ (Բ):

- Աստուծ քըշէրը կ'ամ ա, կընանուցը ընգունէրեն քըսը-փըսի անում - Կնոջ գաղտնիքը ոչ ոք չի կարող իմանալ: Աստուծ քըշէրը կ'ամ ա, կընանուցը ընգունէրեն քըսը-փըսի անում, վէշ մին կընգա սէկրէտ կարէլ չըս գիղնս (Ձ):

- Աստուծ քօս ա տուվալ, դէյնը չի տամ, թա ջանը դըրփէ - Անելանելի՝ ծանր կացության մեջ է: Արտը վըրէլի վախտըն ա, կ'նիթան չօնէ, թա վարէ. Աստուծ քօս ա տուվալ, դէյնը չի տամ, թա ջանը դըրփէ (Ձ):

- Աստուծանա մին օր կ'ուղացած - Անչափ ուրախ: Լիդա տօտան հանց ա Ըստուծանա մին օր կ'ուղացած. տըղան բընակա յը՛կալ ա (Բ):

- Աստուծանալ մըխիթարվիս - Սփոփանքի արտահայտություն՝ ուղղված ննջեցյալի հարազատներին կամ մեծ կորուստ ունեցողներին: Բադարանքանը յը՛տը մին-մին մոտանում ըն մըռածն տըղէն, թա.- Ըստուծանալ մըխիթարվիս (Բ):

- Աստուծ-Աստուծ անէլ - Որեւէ բան կատարվելու, փափագը իրականացնելու համար Աստծուն երկրպագել: Ըստուծ-Աստուծ ա անում, վեր կըռը՛վը ճէլի պըրծընէ (Ձ):

- Աստուծէն աշկան ըղնէլ - տեն Աստուծ աշկան քըցիլ:

- Աստուծէն աշկը յըրան ինիլ - տեն Աստուծ տալ:

- Աստուծէն էք'սը վէրջ չօնէ - Ասում են այն ժամանակ, երբ տված խոստումը չեն կատարում եւ անորոշ ժամանակով հետաձգում են:

- Աստուծէն ընէծածը - Թշվառ, խեղճ ու կրակ, անճարակ: Էտ Ըստուծէն ընէծածը հինջը օգում ա անէ, թօղում չըն (Բ):

- Աստուծէն ըշտնհավը - Մեծ ախորժակով: Դօնաղը վեր Ըստուծէն ըշտնհավը չի հաց կերալ, տընատը՛նը ք'ը՛փէն նի կըկ'ա (Ձ):

- Աստուծէն ըռաշկէն չօքէ, ամմա կօրծէն հը՛տումը կաց - Յիմնականում պետք է ապավինել սեփական ուժերին: Յնիքի, Ըստուծէն ըռաշկէն չօքէ, ամմա կօրծէն հը՛տումը կաց, ք'ինի բօստանըտ ճիրի, ումէղըտ թօռէն յըրա մէլ տինիլ (Բ):

- Աստուծէն ծաղէգը յըրան - Անարատ, մաքուր: Մը՛ղըր, հինջ մը՛ղըր, Ըստուծէն ծաղէգ'ը յըրան (Բ):

- Աստուծէն ծըրան տնու կ'նալ - տեն Յըղա տնու կ'ալ: Դէրը պահանջում ա՝ վը՛ր էտ հարամգադա հարուստէն կախ տան, վեր Ըստուծէն ծըրան տնու ա յը՛կալ (Ձ):

- Աստուծէն ծըրավը ք'ինիլ - Բարեպաշտ՝ օրինավոր լինել, կանոնավոր վարքով ապրել: Մէր շէնումը փիս մարթ չի կա, լօխ Ըստուծէն ծըրավըն ըն ք'նունում (Բ):

- Աստուծէն կըրակը կըլխէն վեր ածել - տեն Կըլխէն կըրակ վեր ածել:

- Աստուծէն կըրակը կըլխէն վեր տը՛ռնալ - տեն Կըլխէն կըրակ վեր տը՛ռնալ:

- Աստուծէն կ'իրումը կ'իրիլի չի - Անգութ՝ անխիղճ՝ դաժան արարք է: Ըտըրա ըրածը Ըստուծէն կ'իրումը կ'իրիլի չի (Ձ):

- Աստուծէն կօշտը դարկել - Սպանել, մեռցնել: Մէնըտ կըտըրէ՛, թա չէ Ըստուծէն կօշտը կըղարկիմ (Ձ):

- Աստուծէն կօշտը ք'ինիլ - Սպանվել, մեռնել: Էրկու տըղա օնար, ճօխտը Ըստուծէն կօշտը ք'ը՛ցէն (Բ):

- Աստուծէն հըղան տնու կ'նալ - տեն Յըղա տնու կ'նալ:

- Աստուծէն հըղավը ք'ինիլ - տեն Ըստուծէն ծըրավը ք'ինիլ:

- Աստուծէն հըղը՛ցը (յըրա) - Բարեպաշտ՝ օրինավոր՝ արդար: ...Թնունի դային ըրէտուն տըրէկան տըղամարթ ար, Ըստուծու հըղէցը յըրա մին անթանը մարթ ար (ՅԺՅ, VI, 177):

- Աստուծէն մանը խառնը/մաջին ինիլ - Աստծո կամքով կատարվել: Մին տըռնումը տու հունց հուրուստա՛ցէլ, հնլ-բնթ Ըստուծէն մանը խառնըն ա (Բ):

- Աստուծէն պահած կ'առնը կ'նալ օտէլ չի - Ում Աստված պահպանում է, ոչ ոք եւ ոչինչ չի կարող նրան վնասել:

- Աստուծէն պարալ չըտալ - Շատ գոռոց լինել: Իգէն Ըստուծէն պարալ չի տամ, հինջ մընա՛ց, թա ք'ը՛գ ախճի՛գ տա (Բ):

- Աստուծէն պարէվը մընևան քըցիլ/ըղնէլ - Սաստիկ շփոթված՝ հուզված

լինել: Զծնծին վախտը վեր կ'ամ ա, ըր-տըտարերը Ըստուծեն պարեկը մըննըր-ներան քըցոմ ըն (2):

- Ըստուծեն վընները երիւ - Ասում են մեծ խարոյկին: Զոբըննէն հանց դըռ-դոռաց ըն ըրալ, վեր Ըստուծեն վընները երոմ ա (2):

- Ըստուծեն տակէն - տեն Ըշխար-քէս տակէն (ԱՇԽԱՐ(Ք)-ի տակ):

- Ըստուծեն տարէն/ըռութանան/նու-րոգի/նը/քըշէրը/օրը) - Միշտ՝ ամեն տարի՝ առավոտ՝ երեկո՝ գիշեր՝ օր: Ըս-տուծեն տարէն կ'ամ ա, հօրը ըշխարա-ծը յօր օնում, ք'նունում (2):

- Ըստուծեն ումէղին թողնել - Թողնել բախտի քմահաճոյքին: Բօստանը վէջ ծիրոմ ա, վէջ քըղանում, թողալ ա Ըս-տուծեն ումէղին (Բ):

- Ըստուծեն փարք՝ տալ - Բախտից գոհ լինել, Աստծոց շնորհակալ լինել: Ըստուծեն փարք՝ ա տամ, վեր կարում ա կօրծ անէ, խօխէնք՝ը պահէ (Բ):

- Ըստուծեն փէշկը փըռնել - Զոյսը չկորցնել, չփիտակել, Աստծուն ապավի-նել: Ըստուծեն փէշկը փըռնէ, լօխ լ'ավ ա ինանկան (Բ):

- Ըստուծեն փիսը - Ասում են ի ծնէ վատ՝ ժառանգականորեն չարասիրտ մարդկանց մասին:

- Ըստուծեն քարավ տալ - Եղածով չբավարարվել, բախտից դժգոհել: Խը-րէզ՝ Ըստուծեն քարավ տօ՛, էն ըս լ'ավ ըպրէլիս, հինչըտ ա՛ պակաս (2):

- Ըստուծեն քըշտան կ'նալ - Ծատ խե-լոք՝ ճարտար՝ բանիմաց լինել: Զանց խօսում ա, հանց ա Ըստուծեն քըշտան ինի յը՛կած (Բ):

- Ըստուծեն օրը - Ամեն օր: Ըստու-ծէն օրը տահանք նորոք նըրէտ կըռ-վում ըն (2):

- Ըստուծու դանգ՛անի - Աստծու ստեղ-ծած կարգ: Ըստուծու դանգ՛անի ա. մինը անում ա, մինը՝ օտում (2):

- Ըստուծու դադաստան - Արդար դատաստան: Մին ա, հիբ էլ ինի, Ըստու-ծու դադաստան ըն ընական (2):

- Ըստուծու ըստը՛դծած - Կենդանի ա-րարած: Զէվանըն էլ ա Ըստուծու ըստը՛դ-ծած, հինչ ա՛նիկնք, թա լիւզիւ չօնէ (2):

- Ըստուծու թակած - տեն Ըստուծեն ընէծածը:

- Ըստուծու լ'ավ թըվալ - Բարի գործ կատարել, բարոյություն անել: Լ'ավ ըս ը-րալ, վեր էտ յէթմին ք'ծմա՛ ըս ըրալ, Ըստուծու լ'ավ կըթըվա (2):

- Ըստուծու կըրակ - 1. Զար, դաժան, անգութ: Իգէն մարթ չի, Ըստուծու կը-րակ ա (Բ): 2. Զարաճի: Ըստուծու կը-

րակ խօխէնք՝ ըն, մօրը շատ ըն չըրչա-րում (Բ): 3. Մեծ ցա՛լ՝ պատիժ՝ դժբախ-տություն: Էտ Ըստուծու կըրակ ա, լօխ-ծին էլ պըտահում ա (Բ): 4. Ծատ թանկ: Էշին կ'իկը մըհէնք՝ Ըստուծու կըրակ ա, կարում չընք ինք՝ օնինք՝ (2):

- Ըստուծու կ'առնը - Ամեղ, պար-կեշտ, հեգաբարո: Զինչ հա՛րթնը, հանշը՛վ ըրա, թա Ըստուծու կ'առն ա, հինչը ըսկօ-տուրը ասում ա, դանտի անում ա (Բ):

- Ըստուծու կիժ - Բացարձակ խենթ՝ գիժ: Էտ տըղան Ըստուծու կ'իժ ա, սա՛-յաղ կաց (2):

- Ըստուծու կ'օտէ - Ծիածան: Թօռը պըրծավ, մին մը՛ծ Ըստուծու կ'օտէ տոն յը՛կավ, խօխէնք՝ը ուրխացէն (2):

- Ըստուծու իըղէ - Բարոյություն, ար-դարություն, աստվածապաշտություն: Կըռը՛վը ընգավ, յիբ՛իբումըս Ըստուծու իըղէ չի մընաց (Բ):

- Ըստուծու դօնաղ - Անսպասելի հյուր: Զու Ըստուծեն դունաղէն պահէ, Աստուծ էլ ընդըրա կըպահէ (2):

- Ըստուծու պահած - Աստծո հովա-նավորած, փորձանքներից փրկված: Մեր յէբ՛իբը Ըստուծու պահած ա (2):

- Ըստուծու պատիժ - տեն Ըստուծու կըրակ:

- Ըստուծու տուված/տոնըք՝ - Բնու-թյան պարգեւած, բնատուր, աստվածա-տուր: Ըստուծու տուված շընօրը ա (Բ):

- Ըստուծու տօն - Եկեղեցի: Վեր սա-վէտը մընար, մեր շինէրքումը հիշկան Ըստուծու տօն կար, լօխ կըքանդվար (2):

- Ըստուծ-Քըրէստուծ անել - 1. տեն Ըստուծ-Աստուծ անել: 2. տեն Ըստու-ծէն ծըրավը քիւնիլ: 3. Առավոտյան՝ Նա-խաճաշին, օդի խմել: Արթնընը ասմա.- Մանվէլ, յը՛ք մարթա մին ըստաքան Ըս-տուծ-Քըրէստուծ անինք՝, իըղէ ինինք՝, հանլն արը՛վը տոն չի յը՛կալ (2):

ԱՍՏՈՒԶ - տեն ԱՍՏՈՒԾ:

ԱՍՏՕԾ - տեն ԱՍՏՈՒԾ:

ԱՍՓԱՆԼՏ (ռուս. асфальт, գերմ. asphalt, հուն. asphaltos) - գ. Ասֆալտ: Ա-րը՛վ ըրավ, ասփալտը կըկըղից (Բ):

ԱՍՕՐ - գ. 1. Ժողովրդական բանա-վոր ստեղծագործություն պատմող, եր-գասաց, բանասաց: Էտ մարթը լ'ավ ա-սօղ ա ինում, միշտ լ'ավ-լ'ավ քարէր ա ասում, ժողովուրդը ըսկանում ըն (2): 2. Սեղանապետ: Ասօղը լօխծին կէնացը խըմից (Բ): 3. Համարձակ խոսող՝ ճշ-մարտությունը երեսին ասող մարդ: Մա-նուկ դային ասօղ ա, հինչու հարկավեր ա՝ սողյին իրը՛սէն ասալ ա (2):

ԱՍՕՐ-ԽՕՍՕՐ - ած. Զրուցասեր, մարդամոտ: Ասօղ-խօսօղ մարթին անա լօխ հանգ կանին (2):

ԱՍՕՐ - տեն ԸՍՕՐ(Ե):

ԱՎ/ՕՎ (թըք. av) - տեն ՎԸՐՍ:

ԱՎԱՐ (պըս. avad) - ած. 1. Բերրի, ա-ռատ: Զունց վեր տէնըմ ըք, տարին ա-վաղ ա, կազէթու բօլլուղ կինի... (ՋՏ, Բ, 207): 2. Լավ մշակված, փարթամ, ընտիր, խոշոր: Տարէն վեր թոռոյին ինի, հանլ թօթը ավաղ կինի, հանլ հոնը (2): 3. Բար-գաված, շեն: Ծարտարը ավաղ շէն ա (Բ):

- Ավաղ անել - Բարգաված դարձնել, շենացնել: Էտ տըղան տը՛նում ա թա-քավեր, հօրը թախտը ավաղ անում (2):

- Ավաղ ինի/տը՛նում - Բարգավա-ծել, շենանալ: Ծէնումը վեր ջանիլ չիլնլ, էն շէնը ավաղ չի ինիլ (2):

ԱՎԱԶ - տեն ՀԱՎԱԶ:

ԱՎԱԶ (թըք. ivaz) - տեն ՏԸՐ՝ (16):

ԱՎԱԶԱԿ - տեն ԸՎԱԶԱԿ:

ԱՎԱԶԱՆ - տեն ԸՎԱԶԱՆ:

ԱՎԱԶ-ԸՎԱԶՈՒ - մ. Փոխադարձա-բար իրար հաջորդելով՝ փոխնիփոխ: Ը-տըրանք չծըք՝ տարէ յա անվագ-ըվանգոն փիսթուն ըն անում նորոք (2):

ԱՎԱԼ (թըք. evel) - տեն ԱՌԱՉ՝(2,3):

- Ավալ մօրթես, յը՛տնան վերթիս - Սե-փական անծը թանկ է անգամ որդուց:

ԱՎԱԼ-ԱԽԸՐ (թըք. əvəl-axir) - 1. տեն ԱԽԸՐ(1): 2. ած. Սկզբն ու վերջը՝ ամ-բողջ պատմությունը: Միւնը՛վ ըտըրա անվալ-ախըր գ'նընում չի, էտ պառավը ծը՛րք չի քաշում (2):

ԱՎԱԼԱՆ (թըք. əvvəldən) - տեն ԱՎԱԼ(Բ):

ԱՎԱԼ(Բ)Ի (թըք. əvvəliki) - ած. Սկզբի, նախնական, նախկին: Տըղան նորան էն անվալի մըհակը յօր ա օնըմ, ք'ընըմ (ԶԾՅ, V, 56):

ԱՎԱՆԱԿ - տեն ԸՎԱՆԱԿ:

ԱՎԱՆԱՍ (ռուս. аванс, ֆր. avance) - գ. Ամբողջ պարտավորության կատա-րումն ապահովելու համար նախապես տված գումար, կանխավճար: Զէնգ՝ մա-նէթ ավանա ա տամ, պայման կապում, վեր պատը պըրծընէլանը յը՛տը տասսը մանէթ էլ ա տըլական (2):

ԱՎԱՆԱՎԷՏ - տեն ԸՌԱՅԱՎԷՏ:

ԱՎ-ԱՎ - գ. Խաղատեսակ. խաղա-ցողները բաժանվում են երկու խմբի, խմբերից մեկի անդամները թաքնվում են, մյուս խմբի անդամները պետք է փնտրեն եւ գտնեն նրանց: Խօխէնք՝ը ավ-ավ ըն խաղ անում (Բ):

ԱՎԱՐ - տեն ԱՎԱՐԱ:

ԱՎԱՐԱ - տեն ԸՎԱՐԱ:

ԱՎԱՐՅԱ (ռուս. авария) - գ. Ավ-տովթար: Ասում ըն, յըրկէ Մարտակերտ ավարյա յա իլնլ, երկու հօքի մը՛ռալ ըն, Աստուծ հը՛ռէ տանէ (Բ):

- Ավարյա անել - Վթարի ենթարկվել: Մաշինը ավարյա ըրավ, լօխ սաղ պըր-ծէն, փարք՝ Ըստուծու (Բ):

ԱՎԱՐՏ (գրք. աւարտ (վերջ, վերջա-  
նալը) - ած. Ավարտած, վերջացրած: Էր-  
կու իկխտուտ ավարտ ախճիզ օնէ, ճօխ-  
տըն էլ անկօրծ (Բ):

ԱՎԳՄՐ - Գործածվում է կապակցու-  
թյունների մեջ:

- Ավգմր անել - տեն Զահլան(ն) տա-  
նել:

- Ավգմր ինիլ/տըննալ - տեն Զահ-  
լան քիսիլ:

ԱՎԳՕՆ/ԱԲԳՕՆ (ռուս. обгон) - գ.  
Շարժվող փոխադրամիջոցի կողքով ա-  
րագ ընթացքով անցնելով՝ առաջ ընկ-  
նելը, վազանց: Ավգօնըն ա շատ վախտ  
ավարյին մակին (Բ):

- Ավգօն անել - Վազանց կատարել:  
Էտ մըշիննէն, ուրոտ ալգօն ընէլալ,  
քիսամ ըն, նի տըննըմ ծօրը (Բ):

ԱՎԵՐԱԿ - տեն ԲՎԵՐԱԿ:

ԱՎԵՐԻԼ - տեն ԲՎԵՐԻԼ:

ԱՎԵՐԿԻԼ - տեն ԲՎԵՐԿԻԼ:

ԱՎԻԼ<sup>1</sup> - տեն ԻՎԻԼ:

ԱՎԻԼ<sup>2</sup> - տեն ԷՎՈՒԼ:

ԱՎԻԼԻ - տեն ԻՎԻԼ:

ԱՎԼԱՐ/ՕՎԼԱՐ (արաբ. evlad (որդի-  
ներ), թրք. evlat (զավակ, ցեղ, սերունդ) -  
գ. Գերդաստան, տոհմ: Կընջիս ըն ըտը-  
րանց ավլանդին դօնադ, վեր կ'ան ու-  
րանց տորդին տըսնան (ԼՂԲ, 315):

ԱՎԼԻԼ - տեն ԷՎԼԻԼ:

ԱՎՐԱՂ - գ. Ծառերի ճյուղերի եւ խո-  
տաբույսերի չորուկ եւ փտած մնացորդ-  
ներ: Ավրաղը վեր էրիս, պօղ չի կոյա-  
նալ (Բ):

- Ավրաղ տըննալ - Շատ չորանա-  
լուց փտել (ճյուղերը, խոտաբույսերը):  
Խօտը խէ հարում չըս, ավրաղ ա տը-  
նալ (Բ):

ԱՎՈՒԼ - տեն ԷՎՈՒԼ:

ԱՍՈ - տեն ԱՍՏՈ:

ԱՍՈՃԷՏԱՃ (ռուս. этаж, ֆր. étage) -  
գ. Իրար վրա շարքերով բարձրացող  
շինվածքի յուրաքանչյուր շարքը՝  
միեւնույն հարթությամբ ձգվող մասը: Տը-  
ները շինում ըն, ըխճըկանը պիրում, տի-  
նում էրկունջի ըտաժումը (ՀԱԲ, 15,73):

ԱՍՍԿ (գրք. յատակ, հ.ե. \*pad-) - գ. 1.  
Գետնի ամուր հողաշերտը, որի վրա  
շարում են շենքի պատերը: Փընթամէն-  
տը էնքան բիդի քանդիս, վեր ատակը  
պէց ինի (2): 2. փխբ. տեն ՏԸԺՕԽԿ:

- Ատակ անել - Հիմնահատակ ավե-  
րել: Ասէլըն ու տօնը ատակ անէլը մին ա  
տէնում (ՆԱԲ, 57):

- Ատակը ընցընել - անրգ. 1. Անհե-  
տանալ, անհետ կորչել: Թօրքերը էտ  
վեր տըստէն, ատակը ընցէն (Բ): 2. տեն  
Գօթբազօն ինիլ:

- Ատակը տըժօխկ անել - Սաստիկ

վիճաբանել՝ կռվել: Սաղ օրը էն ըն ուրոտ  
նըհըտ ատակը տըժօխկ ընէլիս (2):

- Ատակը քիսիլ - տեն Ատակը ընցը-  
նել:

- Ատակ ինիլ - տեն Ատակը ընցընել:  
ԱՍԱՄՆԸ - տեն ԱՏԷՄՆԸ:

ԱՏԷԼ (գրք. ատես) - նբ. Մեկի նկատ-  
մամբ ատելություն տածել: Կօզի հալալ  
քըվէրք ըն, ամմա ուրոտ ատում ըն (Բ):

ԱՏԷՄՆԸ/ԱՍԱՄՆԸ (գրք. ատամն (ա-  
տամ) - գ. Գութանի խոփը թեւի հետ կա-  
պող մասը: Կ'ոթանին ատէմնը կօտրալ  
ա (2):

ԱՏԼԱՍ (արաբ., թրք. atlas, ռուս. ат-  
лас) - գ. Փայլուն, ողորկ երեսով մե-  
տաքայա կտոր՝ կերպաս: Էրկու մետըր  
ատլաս ինք՝ կալնիլ, դարկից նըշնա-  
ծէն հրէտէ (2):

ԱՏԿԱՋ - տեն ԱՌԿԱՋ:

ԱՏԿԱՐԻՏԿԱ - տեն ԱՌԿԱՐԻՏԿԱ:

ԱՏԿՕՍ - տեն ԱՌԿՕՍ:

ԱՏԿԱԿԱՍ - տեն ԱՂԿԱԿԱՂ:

- Զօռն տըրը չի - Ուժով, ճնշմամբ, բռնությամբ հնարավոր չէ անել: Լէնգ՝ Թէմուրը տըսնում ա, վէր զօռն տըրը չի, յըտ ա տըրնում (Ձ):

- Զօռ ըղնէլ/հըննէլ - Ծանր աշխա-տանքից՝ մեծ ուժ գործադրելուց վնաս-վել: Էնքան կօրծ ա ըրալ, ծըրքը զօռ ա ընգալ (Բ):

- Զօռ պիւնըցնէլ - տեն Զօռ անել(1):

- Զօռ տալ - տեն Զօռ անել(2):

ԶՈՆԱՍԱ - տեն ԶՈՆՈՒՍԱ:

ԶՈՆԱՎ - տեն ԶՈՆՈՒՎ:

ԶՈՆԱԹԻ - տեն ԶՈՆՈՒԹԻ:

ԶՈՆԱ/ԶՈՐԱ (թրք. zorba) - ած. 1.

Ուժ ունեցող ու գործադրող, բռնավոր ու հարուստ: Մին շատ զօռա մարթ ա ինում. տա հիշտեղ քինամ ա, լօխ պի-տի ուրան հըղէ տան... (ՆԼՂԺԲ, 134): 2. Ուժեղ, զորավոր: Մին խիլլան վար կէ-նում ա, մին զօռա ըրօտուց ա լըսում (ՅԺՅ, V, 389):

ԶՈՆԱՅՈՐԹԻՆ/ԶՈՐԱՅՈՐԹԻՆ - գ. Ֆիզիկական ուժ գործադրելը, բռնու-թյուն: Տըրդ կա՝ զօռայօթունը անց չի կէնում, բիդի քախցըր լիւզո՞ւ պիւնըց-նիս (Ձ):

ԶՕՌԵԼ - տեն ԶՕՌՈՒԷԼ:  
 ԶՕՌԻ - տեն ԶՕՌՈՒԻ:  
 ԶՕՌԼՈՒ (թրք. *zorlu* (ուժեղ, ազդեցիկ) - տեն ԶՕՌՈՒԻ:  
 ԶՕՌՈՒՄԱ/ԶՕՌԱՄԱ (թրք. *zorlama*) - տեն ԶՕՌՈՒՄԱ(1):  
 - Զօռամա անել - տեն Զօռ անել(1):  
 ԶՕՌՈՒՎ/ԶՕՌՈՒՎ - մ. 1. Բռնության, հարկադրաբար: Թաքավերը հրդարաման ա տամ, էտ տըղեն գօռռավ փըռնում ըն, քըցնում տոնրման (2): 2. Մեծ դժվարությամբ, մի կերպ, հազիվհազ: Վեց օր վըճըը քանդում ա, գօռռավ մին խըրեզ՝ վըճը ա ինում քանդածը (3Ժ3, V, 75):  
 ԶՕՌՈՒՎ-ԳՈՒԶԱՎ - տեն ԶՕՌՈՒՎ-ԿԻԺ(Ժ)ԱՎ:  
 ԶՕՌՈՒՎ-ԿԻԺ(Ժ)ԱՎ/ԶՕՌՈՒՎ-ԳՈՒԶԱՎ - տեն ԶՕՌՈՒՎ (2): Էտ ծին գօռռավ-կ՝իժավ, մին թանիրավ կըլծիքը պիցըրցընըմ ա, թա.- Կըծե՛, օխծ ախպեր, կըծե՛, էրկուվըննանուն լիվթթուն ը-նելի չի (3Ժ3, VI, 251):  
 ԶՕՌՈՒՔԻ/ԶՕՌՈՒՔԻ (թրք. *zoraki*) - տեն ԶՕՌՈՒՎ(1):  
 ԶՕՌՈՒԷԼ/ԶՕՌՈՒԷԼ/ԶՕՌԵԼ (գրք. գօրեմ (կարողանալ, ձեռնհաս լինել, ճար անել) - 1. տեն Զօռ անել: 2. Իր ասածը պնդել, համառել: 3. ինչքան էս ախճիզ՝ գօռռալ ա, թա յեր չօնե, էս տըղան մըտեզ՝ չըրալ... (3Ժ3, VI, 27):  
 ԶՕՌՈՒԻ/ԶՕՌՈՒԻ - ած. 1. Դժվար, ծանր: Զօռի կօրծը ամմեն տըղըմարթու

պեն չի (2): 2. Ուժեղ: Ուշուփնեն տըճա-նըմ ըն, վեր տա գօռի, քանավար տըղալ ա, խոտատանում ըն, վեր տան... (3Ժ3, V, 311): 3. մ. Ուժեղ՝ սաստիկ կերպով: Զօռի կըզնըվում ա (Բ):  
 ԶՕՌՈՒՄԱԻ/ԶՕՌՈՒՄԱԻ - տեն ԶՕՌՈՒՄԱ(1):  
 ԶՕՌՈՒՄԱԻ - տեն ԶՕՌՈՒՄԱԻ:  
 ԶՕՎՕՏԵՆՆԻԿ (ռուս. *зоотехник*, հուն. *zoon+technike*) - գ. Անասնաբույծ: Ծարտար առաջ լ՝ալ գօվօտեխնիկն ըն իլնլ (Բ):  
 ԶՕՐ - տեն ԶՕՐ:  
 ԶՕՐԱՎԱՐ (գրք. գօրավար) - գ. Զորքի գլխավոր հրամանատար: Մին պառավ կընեզ՝ ուրան արտումը հօնծ ընելիս մին գօրավար գօրքավը անց ար կենում արտեն դըրադավը (ԱԱ, 25):  
 ԶՕՐԲԱ - տեն ԶՕՐԲԱ:  
 ԶՕՐԲԱՅՕԹՈՒՆ - տեն ԶՕՐԲԱՅՕԹՈՒՆ:  
 ԶՕՐԵԼ - տեն ԶՕՌՈՒԷԼ:  
 ԶՕՐԹՈՒՆ - տեն ԶԵՐԹՈՒՆ:  
 ԶՕՐՈՒԹՈՒՆ (գրք. գօրութիւն) - գ. 1. 3. Զորություն, ուժ, կարողություն: Ըտըրա գօրութիւնավը էտ քըղաքան տոնս ըն կ՝ամ, ք՝ընում մին օրիշ քաղաք (3Ժ3, V, 176): 2. Կախարդական ուժ՝ կարողություն: Էտ ախճիզ՝ շոտանց լըսած ա ինում էտ ճըպատին մասին, գ՝ուղում ա ինում ըտըրա գօրութիւնը (3Ժ3, V, 34):

ԶՕՐԲ (գրք. գօրք) - գ. Պետության զինված ուժերի ամբողջությունը կամ նրա մի մասը: Մին օր հարայըն ընգ՝-նում ա, թա դոնման գօրքերը հըվաքվալ ըն, կըռք՝ ըն օգում անին թաքավը՛րեն նըրի՛տ (ՆԼԴԺԲ, 75):  
 - Զօրք կապել - Զորք հավաքել՝ կազմել: Թաքավերը էտ վեր ըսկանում ա, դանտի գօրք ա կապում, տոնս կ՝ամ տահանց առաջըն (2):  
 ԶՕՓԻ/ԶՕՄՓԻ - գ. 1. 3. Զայկական շուրջապար, որի ժամանակ ոտքերով դոփում են գետինը: Միհենգ՝վա ջիհիլեն գ՝նոնում էլ չըն, թա գօփին հունց ըն պար կ՝ամ (Բ): 2. Կոխի տեսակ, որի ժամանակ հակառակորդները իրար հրում են ձեռքերով, կրծքով, ուսերով, միևնույն ու մեկի տեղահանվելը, պարտվելը: Զօփին լ՝ալ խաղ ա (2):  
 - Զօփի տալ - 1. Գետինը դոփելով՝ պարել: Զըհիլեն ուրոն ծը՛րքա փըռնում ըն, գօփի տամ (2): 2. Զօփի խաղը խաղալ: Զօփի ըն տամ, Ըրշակեն տըղան լը՛խում ա (2): 3. Իրար հետ կռվել, իրար խփել: Ղօչերը գօփի ըն տամ (Բ): 4. Զվարճանալ, պարապ ժամանակ անցկացնել: Կօրծ անօղ չի կա, լօխ գօփի ըն տամ (Բ): 5. Սիրային կապերի մեջ լինել, կենակցել: Նախագան ա էտ կընեզ՝ գօփի ըն տամ (Բ):

## Է

Է - ձ. 1. Զարմանքի բացականչություն՝ միթե՞, ի՞նչ ես ասում: Է՛, դո՛ւզ ը՛ս ասում, Կարո՛ն յը՛կալ ա՛ (Բ): 2. 3. Զիացական բացականչություն՝ ապա, բա: Մին տը՛սեք՝ Է՛, 3. Զուռուն հարթըն ճօխտակ տըղալ ա պերալ (Բ): 3. Անբավականության, դժգոհության, վշտի բացականչություն: Է՛, բա՛լամ, ըտի յա ըլնլ ք՝ծինա վըխտեն... (ԼԴԲԸ, 275): 4. Ափսոսանքի բացականչություն՝ ափսո՛ս, ավա՛ղ: Է՛, գ՝անքըս էս չօրք՝ սարեն դաթըմը մըշեցե (2): 5. Անհամբերության, սրտնեղության արտահայտություն: Է՛, էս հավան ի՛նչ պենվում չի՞, պատառ կօրծ անինք՝ (Բ):  
 ԷԳՕՅԻՍ (ռուս. *эгоист*, ֆր. *égoïste*, լատ. *ego*) - գ., ած. Անձնասեր, եսասեր (մարդ): Էտ հարթըն շատ էգօյիստ ա (2):  
 ԷԶԶԱՐԱՆ - տեն ԷԶԶԱՆ(ԱՆ):  
 ԷԶԶԱՐԱՆ - տեն ԷԶԶԱՆ(ԱՆ):  
 ԷԶԶԱՆ(ԱՆ) - տեն ԷԶԶԱՆ(ԱՆ):  
 ԷԶԶԱՆ(ԱՆ)/ԷԶԶԱՆ(ԱՆ)/ԷԶԶԱՆ(ԱՆ)/ԷԶԶԱՆ(ԱՆ) - մ. Միշտ, շարունակ: Էտ էծըտ

էզզան կ՝ամ ար, էտ խոխեն ծեծ տամ, էլիա ք՛ինամ (2):  
 ԷԶՆԱ - գ. Զրոյ ամուսին: 3. ու վա՛ տը՛սալ՝ էզնան քենուն նըրի՛տ սիլի-բիլի անե. անդար անիմ ըստի թիվը (Բ):  
 ԷԼ/ԱԼ<sup>3</sup> (գրք. այլ (այլեւս, ուրիշ, մնացածը) - մ. 1. Այլեւ: Արշը էլ խօսում չի, թըքում ա մարթին յըրա, քինամ (2): 2. Ավելի եւ: Ախճիզը էտ խընծօրը օտում ա, էլ դըշնեզանում (2): 3. Դարձյալ, եւ, էլի: Էտ քաջալ ճօտը ամմեն օր էլ էտ տանը մին վընաս ա տամ (3Ժ3, V, 458): 4. Նույնպես: Էտ օխճերըտ էլ կըկան, տը՛սնան էն մարթը ուրան ախպօրը տանը (3Բ, 346): 2. 5. Եվ, ու: Էտ մարթը քըվօրը տըղեն դարկում ա տօն, վար համ հաց պերի, համ էլ գուփուն... (3Ժ3, V, 406): 6. Եթե: Մը՛ռնե էլ՝ դարդըս չի (Բ): 7. Այսքանից հետո ինչի՞ համար, այլեւս ինչո՞ւ: Էլ հօր ը՛ս լաց ինում, կըտըրալ ըս պըրծալ (2): 8. Թեկուզ, չնայած: Էտ կընեզը գ՝նոնում ար, թա վեր քինի էլ վե՛, ուրան փայը դըրկըլան ըն (2): 9. Որ (թարմատար): 3. Զնլն լ՝ալ ա՛ էտքան էլ

կըրը՛ցալ ա քինի (2): վ. 10. Արտահայտում է զիջականություն՝ գոնե: Մին տոնս պըրծած մաշին էլ չի կամ, թա նըստե, քինի (Բ): 11. Արտահայտում է անսպասելիություն՝ հանկարծակիություն՝ հանկարծ: Մին էլ, ըրի՛, մարթը տօռըն թակից (2): 12. Արտահայտում է դժգոհություն, զայրույթ: Պա մարթ էլ ուրան հօրը տըրթթուն չանե՛լ (2): 13. Մեկից բարձր թվականների հետ ցույց է տալիս հավաքականություն՝ բոլորն անխտիր: 3. Էնգ՝ ախճիզ՝ օնե, հենգ՛ն էլ անպեն (Բ): 14. Արտահայտում է հարցման սաստկացում: 3. Զոնց էլ վըխտեն կըխոս չըմ ընգալ (Բ):  
 - Էլ ա - Գոնե, թեկուզ: Ալլահան վը՛-ղըն էլ ա, կարում չի բըջարի (Բ):  
 - Էլ ասու մե՛լ - Գործածվում է պատասխան խոսքի մեջ՝ արտահայտելով չափազանցություն՝ անսովորություն՝ շատ, չափազանց, սովալի են: - 3. Զամբօվեն տըղան կ՝օղ ա: - Էլ ասում էլ (2):  
 - Էլ ընցալ ա - Կատարվածի համար պետք չէ ափսոսալ՝ տրտնջալ, անհրաժեշտ է մտածել հետագա անելիքների

մասին: Մարթը ասմա.- Մ կընէգ, էլ ըն-  
ցալ ա, յո՞ր կաց, ք'իսինք՝ մէր բուստա-  
նալը իսինք՝ (2):

- Է՛լ իհնչ կօգիս - հեզն. Ասածո՞ պա-  
հանջածո անհավանական է՝ անտեղի է:  
- Էլ չէրիք/չի հէրիք՝ - Քիչ է, բալ է:  
Էտ մարդիմազարը հօրը փուլէրը կ'ու-  
ղացալ ա, էլ չէրիք, միհէնգ՝ էլ կապըն ա  
տարալ ծախալ (Բ):

ԷԼԵՔՏՐՈՒԿ (ռուս. *электрик*, ֆր.  
*électrique*) - գ. Էլեկտրատեխնիկայի  
մասնագետ: Լ'ալ էլէքտրիկը տոնգըն չի  
մընալ (Բ):

ԷԼԼԱ - տէն ԷԼՅԱ:

ԷԼԼԱ - տէն ԷԼՅԱ:

ԷԼԼՈՅԱ - տէն ԷԼՅԱ:

ԷԼՅԱ - տէն ԷԼՅԱ:

ԷԼՅԱ/ԷԼՅԱ/ԷԼԼՈՅԱ/ԷԼԼԱ/ԷԼԼԱ/ԱԼ-  
ՅԱ/ԱԼՅԱ/ԱԼԼԱ/ԱԼԼԱ (թրք. *ala*) - մ. Կր-  
կին, դարձյալ վերստին, էլի: Մին տեղ էլ-  
հա մին կընէգ՝ ա ջըրում (ՅԱԲ, 15, 123):

- Էլիս էն ճուրը, էն ճեղացը - Ամեն  
ինչ նայն է, ոչինչ չի փոխվել: Յէնգ՝  
տըռնանը յո՞տը կ'ամ ա հնման շէնը,  
տըռնում՝ էլիս էն ճուրը, էն ճեղացը (2):

ԷԼՅԻ (թրք. *elçi*) - գ. 1. Խճուղի: Տնւս  
ա կ'ամ էլչին, տըռնում մին դէրվիշ ք-  
տը՞ղ նըստած (2): 2. Ճանապարհորդ:  
Էլչին նըստում ա էտ ծառէն տակէն,  
մըթկէն դօնը ըղնում (2):

ԷԽԾ - տէն ԻԾԽ:

ԷԽԾՆԱԶ - տէն ԻԾԽՆԱԶ

ԷԾ (գրք. այծ) - գ. 1. Կաթնասուն ո-  
րոճող ընտանի կենդանի՝ այծ: Յաթին օ-  
գում ա էծը ծախէ, Կաթին էլ օգում ա էծ  
ինք օնէ (ՆԱԲ, 119): 2. փխբ. Երեխային  
կրծքից շուտ կտրած մայր: Էտ էծը խու-  
խէն մըրիալ չի քըցում (Բ): 3. փխբ. Սիսե-  
ռի թխագույն հատիկ: Միսէռը մը՛կնում  
ա, էծէրը ծօկում (2): 4. հոգն., փխբ.  
Բարկություն, խենթություն, կամակո-  
րություն: Իծէրալ մարթին նըրի՞տ կօրծ  
փըռնէլը տիժէր ա (2):

- Էծ-էծ ինիլ - տէն ԽՈՐԹԵԼԷ:

- Էծ-էծ խօսէլ - Առանց կշռադատե-  
լու՝ մտածելու խոսել: Էտ վէր ըսկըսում ա (2):

- Էծէրը ծըմակալըն անէլ - Որեւէ  
բան փռել, ցիրուցան անել, ցրել: Միժի  
հինչ ըս էծէրըն ծըմակալըն ըրալ, էտ  
պիւրթըտ խէ հըրվաքում չը՞ս (Բ):

- Էծէրը կ'ալ/յո՞ր կէնալ/փըռնէլ - Բար-  
կությունը՝ խենթությունը՝ կամակորու-  
թյունը բռնել: Մաշտուն էծէրը վէր կ'ամ  
ա, կընէգը տանան փախչում ա (2):

- Էծէրը տոն տըռնալ/քիսիլ - Բար-  
կությունը՝ խենթությունը՝ կամակորու-  
թյունն անցնել, հանդարտվել: Ըտի մին  
խիլլա վախտ կէնում ըն, մինչը՛վ թաքա-

վէրին էծէրը քիսում ա, դիւջանըմ ա (2):

- Էծը էծին հը՛տէ լ'ալ ա, կանց մին  
սոնրոն վը՛խճարը - Յուրաքանչյուրը ի-  
րեն համախառնասխան մարդու հետ ա-  
վելի լալ է գգում:

- Էծը մըկըկալալ կ'ըրունքընան ի-  
լալ, վը՛խճարը սուսըփուս ըստակից -  
Տրտնջացողը՝ բողբոջող շահում է:

- Էծ ընք, վը՛խճար չընք, վէր քըմըկ-  
նէս ծասկինք՝ - Յարուստի դիրքը իր թե-  
րոպությունները ծածկում է, աղքատինը՝ ոչ:

- Էծը ուրան վը՛նսան կախ կըտան,  
վը՛խճարը՝ ուրան - Յուրաքանչյուրին  
պետք է իր հանցանքին համապատաս-  
խան պատիժ սահմանել, յուրաքանչյու-  
րի հետ պետք է վարվել նրան արժանի  
ձեւով:

- Էծու մըրօք - տէն ԻԾՆԱԶՈՐՔ:

ԷԿԱՄԱՄԻՍՏ (ռուս. *экономист*) - գ.  
Տնտեսագիտության մասնագետ, տն-  
տեսագետ: Լ'ալ էկանամիստին հը՛-  
տան գ'ոլլալ կըքըցին (2):

ԷԿԱՄՕՍՅԱ (ռուս. *экономика*, իտ.  
*economia*) - գ. Տնտեսելը, տնտեսում,  
խնայողություն: Մարուշինանցէք՝ վէր  
ճուրը էկանօմյա չանին, կարէլ չըն ապ-  
րին (Բ):

ԷՅԷՅ - ձ. 1. Մեկին կանչելու՝ մեկի ու-  
շադրությունը հրավիրելու կոչական բա-  
ցականչություն: ... Միկը հէտան ծէն ա  
տամ.- Էհէյ, դալվիշին տըղա (ՅԺՅ, VI,  
117): 2. Սպառնալիքի բացականչություն:  
Ղօրօխչին մանըն թափ ա տամ, թա.- Է-  
հէյ, խէրոնք կացէք, հու նի մընէ բաղը,  
փըռլական ըմ, պըռընջօնը յո՞ր անիմ (2):

ԷՅՏ - տէն ՕԽՏ:

ԷՅՏԻԲԱՐ - տէն ԻՅՏԻԲԱՐ:

ԷՅ (գրք. է) - 1. տէն ԷՅԷՅ: ձ. 2.  
Ուղղվում է մեկին, որի անունը չի  
տրվում չիմանալու, արհամարհելու  
կամ այլ պատճառով: Էյ, տու հուլ ըս, մին  
յո՞ք ըստը՞ղ (2):

- Էյ գիղի - Ափսոսանքի արտահայ-  
տություն: Էյ գիղի Սալէտ, վէչ հարուստ  
ա իլալ, վէչ ք'անիք (2):

ԷՅՁԱՆ(ԱՆ) - տէն ԷՅՁԱՆ(ԱՆ):

ԷՅՁԱՆ(ԱՆ) - տէն ԷՅՁԱՆ(ԱՆ):

ԷՅԼԸՄ - տէն ԻՆՔԱՆԱՐՕՏ:

ԷՅՆ/ԱՅՆ (արաբ., թրք. *ayn* (աջք) -  
Գործածվում է կապակցությունների  
մեջ:

- Էյնը կ'ալ/քըցիլ - 1. Ուշադրություն  
դարձնել, մտահոգվել: Ղանգըլա մարթ  
ա. սաղ տօնը վէր կըրին տանին, էյնը չի  
կ'ալ (Բ): 2. Յիշել, մտաբերել: Մին էյնը  
չըքըցօղ հարս ամման դօնըմ, վէր խօ-  
րագ՝ ա իփիս, մըտան քըցիս ա, շիրէփը  
թողէս տոնալմը (ԼՂԲ, 376):

ԷՅՍԸ - տէն ԷՔՍԸ:

ԷՆ/ՅԷՆ (գրք. այն) - դ. 1. Ցույց է տա-  
լիս խոսողից ու խոսակցից հեռու  
գտնվող առարկա՝ երեւոյթ եւն: Ծիւն էլ  
փըսէն թօղըմ ա, ք'իսնալ էն տըղէն կօխ-  
կէն վը՛նըն կէնում (ՆԼՂԺԲ, 104): 2.  
Ցույց է տալիս հեռավոր ժամանակ կամ  
տեղ: Էն վըխտէն էլ անգն չի իլալ կընէգ՝  
տոնս քըցիլ (2): 3. Ցույց է տալիս ոչ խո-  
սողի կամ խոսակցի կողմից հաղորդ-  
ված իրողություն՝ հանգամանք եւն: Էն  
ըսըծնէն վէր կարէ անէ, լ'ալ ա (2): 4.  
Ցույց է տալիս անձնական դերանկան  
երրորդ դէմք՝ նա: Էն էլ յո՛կալ ա, մօրը  
իլալ-չիլալ հըրվաքալ, տարալ (Բ):

- Էն ա (գրք. այն է) - 1. Այսինքն, ու-  
րեմն, հետեւաբար: Վէր յո՛կալ չի, էն ա  
գ'իղալ, վէր կօրծէրը լ'ալ չի (Բ): 2. Յենց,  
ահա: Էն ա օգ'ում ին, թա հաց օտին,  
թօռը նի կալ'ալ (Բ): 3. Յրեն հա, հրեն է:  
Տըսնաա ըն՝ հէն ա մին հը՛ռէ տէղ մին  
պէն իշէղ-իշէղ ընէս (ՅԺՅ, V, 59): 4. Էլ  
դրանից հետո ի՞նչ է մնում: Վէր կալըն  
էլ ինք՝ կալ'ին ծը՛րքան, էն ա բիղի կախ  
ինի, էլ ապրում ա հինչ ա՛նէ (2):

- Էն ա խը՛ռէս/տանձիս/ք'արթիս  
պըթկէն - անրգ. Ես ի՞նչ իմանամ՝ որ-  
տեղ է: - Յէնդօ, անէշիգ'ը ըշտը՞ղ ա՛: -  
Էն ա խը՛ռէս պըթկէն (Բ):

- Էն աշխարքը - Յանդերձյալ կյանք:  
Մօլլան ասմա.- Էն ըմ իլալ էն ըշխար-  
քումը, մը՛ռած ըմ իլալ, էս դէրը ինձ սը-  
ղըցըրալ ա (2):

- Էն աշխարքը դարկէլ - Մեռնել,  
սպանել: Ղաջաղը ասմա.- Յա՛ ծիտ իզ  
տօ, յա՛ թա չէ ք'ը՛գ էն աշխարքըն ըմ  
ղըրկըլան (2):

- Էն աշխարքը քիսիլ - Մեռնել,  
սպանվել: Ծէնըմը ասսահկալ մարթ չի  
մընաց, լօխ էն աշխարքը ք'ը՛գէն (Բ):

- Էն առաջ - Վերջերս՝ վերջին ժա-  
մանակներս: Էն առաջ մին էրկու մարթ  
ըն յո՛կալ, օգ'ում ըն շէնումը գալօղ շի-  
նին (Բ):

- Էն Աստուծը - 1. Երդման բանաձեւ՝  
Աստված վկա: Կընէգ'ը ուրթումն ա օ-  
տում, թա.- Մ մարթ, էն Աստուծը, յը՛ս էս  
մարթին ըրըջի դօնումըն ըմ տը՛սնում  
(2): 2. տէն Ամանը գի՛ննդիլ(ո):

- Էն ա վէր - 1. Բայց, սակայն: Էն ա  
վէր ըտըրանց խօխա չինում (2): 2. տէն  
ԽԷՇԼԸՅԱ(Ս): 3. տէն Էն ա:

- Էն ա, վէր ասալ ա/ըրալ ա/ք'ը՛ցալ  
ա - տէն Էն ա(ո) ու էն:

- Էն ա, վէր կա - Միայն նա է, միակն  
է, այն է, ուրիշը չկա՝ պետք չէ: Տըղան  
ասմա.- Էն ա, վէր կա, յը՛ս միանկ ընդը-  
րան ըմ օգ'ում (2):

- Էն ա(ր) ու Էն - Վերջին անգամն էր, դրանից հետո այլեւ չի կրկնվել: *Էն ար ու Էն, էտ տղան էլ մօրը տը՛սավ վէջ (Բ):*

- Էն բաշտան - *տէն* Էն կըլխան:

- Էն դունյան - *տէն* Էն աշխարքը:

- Էն էլ կա - Պետք է հաշվի առնել նաեւ: *Էն էլ կա, վեր հըղէնի ախպոր չի ջիլլան (Ձ):*

- Էն էլ հիշկան - Արտահայտում է քանակական չափազանցություն՝ չափազանց, շատ: - *Ըստարէ խօտ ըս հաբալ: Էն էլ հիշկան (Բ):*

- Էն էլ հոնց - Արտահայտում է որեւէ վիճակի, դրության, հատկանիշի սաստկություն, չափազանցություն՝ ուժեղ, սաստիկ: *Ըսօրէ կարկուտ ա յը՛կալ, Էն էլ հոնց (Բ):*

- Էն էլ մին պէն ար - Բարեբախտության կամ պատահականության արդյունք էր, այլեւ չի կրկնվի: *Էն էլ մին պէն ար. Սիմօնէն կավը ճօխտակ ծընկից (Բ):*

- Էն ըշխարքան յը՛կած - Գունատ, վտիտ, մեռելի տեսք ունեցող: *Էն ըշխարքան յը՛կած ըս, էտ հինջ ա՛ հնլըտ (Բ):*

- Էն խաջը՝ կ'անալտը՝ մեռունը՝ յը՛խծէն՝ նըհատակը՝ սօրփը - Երդման բանաձեւ. խաջը՝ երկինքը՝ մեռունը՝ եկեղեցին՝ նահատակը՝ սուրբը վկա: *Յը՛ս մինակ քը՛գ ըմ սիրում, սօտ չըմ ասում, Էն խաջը (ԼՂԲ, 89):*

- Էն կըլխան - Ի սկզբանէ, նախապէս, կանխավ, վաղուց: *Էն կըլխան էլ գ'նողնում ար, վը՛ր տա ձորան նըշանածը չի (ՅԺՅ, V, 47):*

- Էն դօլը տէս անել - *հեզն*. Կարելո՛ր օգտակար բան անել: *Յինչ ա՛, իզէն Էն դօլը տէս ա՛ ընական, հնաման ախմաղըն ա, լի՛ (Ձ):*

- Էն յը՛տը-հը՛տը - *տէն* Էն առաջ:

- Էն վաղ ար, վեր էշը կաղ ար - Ժամանակները փոխվել են, նախկին միամիտը չեմ (չես, չէ): *Մարթը ասմա.- Էն վաղ ար, վեր էշը կաղ ար, էլ կարէլ չըս խնփիս (Ձ):*

- Էն վեր ա - *տէն* Էն ա վեր:

- Էն տը՛ղըն ա ընգալ - Ճարահատյալ, ստիպված: *Էն տը՛ղըն ա ընգալ, վեր իլանծ-ջիլան մին կավը ծախալ ա (Բ):*

- Էն օրը ըղնէլ - Վատ՝ նեղ վիճակի մեջ ընկնել: *Էն օրըն ըմ ընգալ. կարում չըմ թա կըլծիքս պահիմ (Ձ):*

- Էն օրը քըցիլ - Վատ՝ նեղ վիճակի մեջ գցել, ծեծել, հանդիմանել են: *Խը՛դ-ճէն Էն օրըն ըն քըցիլ, վեր տանան էլ չի տուս կ'ամ (Բ):*

ԷՆԵՐԳՅԱ (ռուս. *энергия*, հուն. *energeia*) - գ. Եռանդ, ջանք, ուժ: Թա էտ

*կուճի մարթին մաջին էտքան էնէրգյա ըշտըղան ա, կարում չըս գ'իղան (Բ):*

ԷՆՉԱ(Ն)Բ/ԷՆՉՈՒ(Ն)Բ (գրք. այն-չափ) - *տէն* ԷՆՔԱՆ:

ԷՆՉՈՒՆԲ - *տէն* ԷՆՉԱՆԲ:

ԷՆՔԱՆ (գրք. այնքան) - դ. 1. Այն չափով՝ քանակով: *Ամմեն մարթ բիդի Էնքան խըմէ, հիշկան վը՛ռավը կ'ամ ա (Բ):* 2. Շատ ավելի, առավել եւս: *Էտ տըղան քանէ քը՛ննում ա, Էնքան մնշվում ա (Ձ):* 3. Շատ, մեծ քանակությամբ: *Էնքան հէվան օնէ, մինը մօրթում չի, թա խօխէնքը օտին (Բ):*

- Էնքան էլ - Գործածվում է ժխտական նախադասության մեջ՝ ոչ բոլորովին, սպասածի չափ: *Էրկու կընէգ՝ պահէլը Էնքան էլ հիշտ չի (Բ):*

ԷՇ (գրք. էշ) - գ. 1. Սմբակավորների կարգին պատկանող կենդանի՝ ավանակ: *Յունց ա պըտահում, էտ դաթումը էշը մին դծնում էլ ա գըռռամ (ՆԼՂԺԲ, 119):* 2. *փխք*. Գութանի մաս՝ հաստ, ծուռ ու երկար գերանը, որի տակ՝ առջեփ կողմից դրված է ակը, իսկ ետեփ կողմից ամրացված է խոփը: *Կ'նրթանին էշը կաղնէ չար, կօտրից (Ձ):* 3. *փխք*. Լարավոր նվագարանի լարերի հենարան: *Աշըղը հնրփում ա, սազը տափավը կ'ամ, էշը կօտըրում (Ձ):* 4. *փխք*. Խաղի վեգի հարթ ու լայն կողմը: *Վէք'ին թօղ ըն անում, ըտըրանը էշ ա ըղնում (Ձ):* 5. *փխք*. Ապուշ՝ հիմար՝ անհասկացող մարդ: *Էտ էշը ըտի էլ կըլխու չի ըղնում, վեր կընէգ'ը սիրը՛կան ա պահում (Բ):* 6. *փխք*. Անտաշ՝ կոպիտ՝ գռեհիկ մարդ: *Էտ էշը փըռնում ա ըխճըկանը թակում (Բ):*

- Էշը անէ, ծին օտէ - Խեղճը՝ թույլը աշխատում է, ուժեղը՝ հզորը վայելում: *Մունք տանջվում ընք, ձորանք հըրուտանում ըն, նըհախ չըն ասալ՝ էշը անէ, ծին օտէ (Բ):*

- Էշան կ'նրի օգիլ - Մեկից նրա սիրելի բանը խնդրել: *Ասմա.- Պա էշան կ'նրի կօգի՛ն, էտ իմ ամմէնալ'ավ շօնըս ա, հունց քը՛գ տա՛մ (Ձ):*

- Էշան կ'արունք հըրընէլ - Անիմաստ հարցում անել, հիմարից լուրջ բան հարցնել: *Մինակ ախմաղը կարօղ ա էշան կ'արունք հըրընէլ (Բ):*

- Էշան վեր ըղնէլ - Խայտառակ դառնալ: *Էշան վեր ընգած տօն ըն, ըտըրանց անա հու բի՛դի ախճիգ՝ օգի՛ (Բ):*

- Էշ-էշ խօսել/տուս տալ - Յիմար-հիմար խոսել, դատարկաբանել: *Վեր ըտի էշ-էշ խօսում ա, փըռնում ըն, մին լ'ավ թակում (Ձ):*

- Էշը էլիւն Էն էշըն ա, փալանըն ա

փօխվալ - Էտքամբ նույնն է, միայն արտաքնապես է փոխվել: - *Սոնմբաթ, տըղատ ինխտտուտը պըրծալ ա, աշկըտ լուսի: Էշը էլիւն Էն էշըն ա, փալանըն ա փօխվալ (Բ):*

- Էշը էշին քըշտէն կապիս՝ յա՛ խույր/քացէ տալը կըսվը՛րէ, յա՛ խասյաթը/զըռռալը - Իրար հետ ընկերություն անող՝ շփվող մարդիկ բնավորությամբ նմանվում են իրար:

- Էշը ըխպըհարումը թնվիլ ա տըվալ, մօխէրը գիրալ ա տըվալ - Ասում են շատ հեռու ազգականի մասին: - *Սօնա, Մարգօն քու հինջըտ ա՛: Իմ ախպօր հանօրը մըրաքվէրը տըղէն կընէգը: Դէ էն ա, ա-սէ՝ էշը ըխպըհարումը թնվիլ ա տըվալ, մօխէրը գիրալ ա տըվալ, լի՛ (Բ):*

- Էշը թըկէլավ ծօրէ չի տը՛ռնալ - Բնությունից ժառանգածը արհեստական միջոցներով հնարավոր չէ փոխել:

- Էշը խը՛լքէն/կըլխէն քացէ տալ - Յիմարություն անել: *Էշը խը՛լքէն քացէ յա տուվալ, կացէնը յեր ա կնլանլ սաղ խընծօրծօր կըտօրալ (Բ):*

- Էշը կապէլ, յը՛տ անէլ - Ոչինչ չանել, բայց աշխատել ձեռացնել: *Յինչ ըս էշը կապում, յը՛տ անում, իսէ կօրծ չը՛ս անում (Ձ):*

- Էշը կըկտըրէ/կըմաշի, տանգը վէջ/չէ - Յիմականը՝ կարելո՛ր երկրորդականից շուտ է փչանում:

- Էշը կուրցընէլ - Շփոթվել, իրար խառնվել, մտորումների մեջ ընկնել: *Բօլա՛, ա՛յ իմ էշը կուրցըրած հայեր, բօլ ա՛ հինջքան մեր ծէռքավը մեր տօնը քընդէ-ցինք... (ՁՏ, Բ, 239):*

- Էշը կուրցընէլ, փըլանէն հը՛տան շօռ կ'նլ - Կարելո՛րից՝ հիմնականից զրկվելուց հետո չնչին բաների մասին հոգալ՝ մտածել: *Է՛, ա՛ ժուղօվորթ, էշը կուրցըրալ ըք, փըլանէն հը՛տան ը՛ք շօռ կ'ամ... (Ձ):*

- Էշը կօրած - Շփոթված, իրար խառնված, մտորումների մեջ ընկած: *Էշը կօրած մարթ ա Բանսպնըր (Բ):*

- Էշը հնքվան մօրթէլ - *տէն* Էշը վը՛ռան մօրթէլ:

- Էշը հինջ ա՛ գ'նողնում, մօշը հինջ ա՛ - Յիմարը՝ անհասկացողը լավի՝ գեղեցիկի արժեքը չի իմանա: *Ախէր Էն վըլ-լամաղ-շարմաղ ախճիգ'ը հօր ը՛ք տըվալ էտ ըխմաղէն. էշը հինջ ա՛ գ'նողնում, մօշը հինջ ա՛ (Բ):*

- Էշը հիշկան տանում ա՛ պէռնում ըն - Չորտնջացողին՝ չբողբողին շահագործում են: *Ըտի յա. էշը հիշկան տանում ա՛ պէռնում ըն, տուս ըս անում, ըտըրա հը՛տէ էլ սաղ օրը քը՛գ ըն պի-նըցընում (Ձ):*

- Էջ ըռանգ՝ տըվօղ - տեն Կատու կը-  
րասկա տըվօղ:

- Էջը վեր էջ ա, մըհըտ ա ցըխումը  
մընամ - Մարդ պետք է իր գործած  
սխալից խրատովի՝ դաս առնի եւ այն  
չկրկնի: Մարթը Էլիան յա, կ'ուղթթուն ա-  
նում, կընէգ'ը ասմա.- Ա' մարթ, էջը վեր  
էջ ա, մըհըտ ա ցըխումը մընամ (Բ):

- Էջը վեր ըղնէ, կըռէքը կըկօտըրէ -  
Ասվում է շատ քարքարոտ տեղի մասին:  
Էտ հինջ տըղ ա', վեր տօն ըս շինում. էջը  
վեր ըղնէ, կըռէքը կըկօտըրէ (Բ):

- Էջը վեր կա՝ վըսկէ յա թըրքում -  
Ասվում է՝ շեշտելու համար էջի օգտա-  
կար լինելը: Գնոր ասմա.- Ա' շան տըղա,  
էջը վեր կա՝ վըսկէ յա թըրքում, էջին  
լ'ալ պահէ (Բ):

- Էջը վըռան մօրթէլ - Զակառակ  
գործել, ներհակ գործ ձեռնարկել: Կընէ-  
գ'ը թա.- Ա' մարթ, բօլ ա', հիշքան էջը  
վըռան մօրթալ ըս, մին սափալու կօրծ  
փըռնէ (Ձ):

- Էջըտ էջաս հըռէ կապէ - Մի խառն-  
վիր իմ գործերին: Ուրուր նըհըտ կըռ-  
վում ըն, Կօլին ասմա.- Էլ ինձ նըհըտ  
կօրծ չօնիս, էջըտ էջաս հըռէ կապէ (Ձ):

- Էջ ըրըծըցընօղ - տեն ԻՇԱՆՆԻՇ:

- Էջը ցըխան տոն օնէլ - Ստեղծ-  
ված դժվար կացությունից դուրս գալ մի  
կերպ գլուխ հանել: Կ'ոլթանը կօտրում  
ա, վար անօղը ասմա.- Դէ յըք էջը  
ցըխան տոն կնլ (Ձ):

- Էջը ցըխումը մընալ - Գործը խա-  
փանվել, առաջ զգնալ: Զինչա փըռնում  
ա, էջը ցըխումըն ա մընամ (Բ):

- Էջը ուրան ըխօռէ կըզըռռա - Յու-  
րաքանցյուր մարդ իր շահն է փնտրում:  
Ըտի յա, էջը ուրան ըխօռէ կըզըռռա,  
վէշ մինը ուրուշին հըտէ դարդ չի ա-  
նում (Բ):

- Էջը ուրան իշօթունավը Էտ պէնը  
անէլ չի - Ասվում է, երբ մեկը չափա-  
զանց անխոհեմ՝ հիմար արարք է թույլ  
տալիս: Զանօ, Էս բըրատու ծառը խէ կը-  
տըրում ըս, էջը ուրան իշօթունավը Էտ  
պէնը անէլ չի (Բ):

- Էջը փըլանավը կօլ տալ - 1. Ագահ,  
շատակեր լինել: Էջը փըլանավըն ա կօլ  
տամ, ընտըրա ըռըխը կարէլ չըս հըվա-  
թիս (Ձ): 2. Որեւէ բան անհետ յուրացնել:  
Նախագան էտքան ապըրանքը թաքուն  
ծախից, էջը փըլանավը կօլ տըվալ, վէշ  
մինը գ'իդանց վէշ (Ձ):

- Էջը օտել, հնք'վումը խըռավել/տեմ  
ըղնէլ - Գործի մեծ մասն արած լինելուց  
հետո մի աննշան պատճառով կիսատ  
թողնել՝ անելուց հրաժարվել՝ չջարու-  
նակել: Ժողովուրդը թըքըթծիմնթ ա  
տաս, թա.- Գոհի, Էտ տօնըտ խէ կէսատ

ըս թօղալ. էջը կերալ ըս, հնք'վումը խը-  
ռավալ (Ձ):

- Էջը օտել, փալանը յըր ինիլ - Ան-  
չափ լկտիանալ: Ընտըրա ճար չինիլ. էջը  
կերալ ա, փալանը յըր իլնլ (Բ):

- Էջը օտվէլ չի, կ'ինը հօ կօտվէ - Ե-  
թե որեւէ բան ուղղակի նպատակին չի  
կարող ծառայել, անուղղակի կարող է  
(ծառայել): Զայրօն ասմա.- Բնք'մանը  
թուփալ ա, յըս Էլ արաղ կըքաշիմ, խը-  
միմ. էջը օտվէլ չի, կ'ինը հօ կօտվէ (Ձ):

- Էջ իմաստուն - Թերուն՝ տգետ,  
բայց իրեն իբրեւ գիտուն ներկայացնող  
մարդ: Էտ էջ իմաստունը ըշտըղ ք'ի-  
նամ ա, համին պէնէրըն ա ասում (Ձ):

- Էջին դայի ասէլ - 1. Խիստ հարբած  
լինել: Զըրսընքա յըտ մըկըռնէն էջին  
դայի յըն ասում (Բ): 2. Խեղճանալ, հնա-  
զանդ դառնալ: Էնքան թակում ըն, էջին  
դայի յա ասում (Ձ):

- Էջին գէտկէն/զտէգին - Երբեք -  
Վաճի, հիբ ըս փըսըկվըլան: - Էջին  
գէտկէն (Բ):

- Էջին ընգուռումը քօն իլնձ - 1. Շր-  
ջապատի իրադարձություններից՝ առօ-  
րյա անցուդարձից կտրված՝ անտեղյակ:  
Էջին ընգուռումը քօն իլնձ մարթ ա, Էն  
հինչ ա՝ գ'իդնում, թա կընէգ'ը ղըխսյծ-  
թուն ա անում (Բ): 2. Ապուշ, տխմար: Է-  
ջին ընգուռումը քօն իլնձ մարթին խն-  
փիլը շատ ա հիշտ (Բ):

- Էջին ընգուռումը քօն ինիլ - Շրջա-  
պատի իրադարձություններից՝ առօրյա  
անցուդարձից կտրվել՝ անտեղյակ լի-  
նել: Էջին ընգուռումը քօն ա իլնլ, վըդէ-  
րը պիժէնալ ըն, ուրան տըվալ չըն, հու  
վա՝ մաղավեր (Ձ):

- Էջին ըսըցէն՝ աշկըտ լիւս, քօռակ  
ա իլնլ, ասից՝ ըտըրանալ պէնըս թի-  
թըվանում չի - Ասում են այն ժամանակ,  
երբ, չնայած կատարված փոփոխու-  
թյուններին, մեկի հոգսը չի թեթեւանում:

- Էջին ըսըցէն՝ հըրսընքա ծէն ըն  
տամ, ասից՝ յա՝ ճողըն ա պակաս, յա՝  
փնդը - Մեկին հիշում են նրա կարիքը  
զգալու ժամանակ:

- Էջին ըրած, ծիյին կերած - Ասում  
են ուրիշի հաշվին ապրողի հասցեին:

- Էջին խըրատը թակըն ա - Անհաս-  
կացողին՝ հիմարին միայն ծեծելով կա-  
րելի է բան հասկացնել: Էջին խըրատը  
թակըն ա, ըտըրա էրուշ փօրմի կարել  
չըս մարթ շինիս (Բ):

- Էջին կինան խօսէլ - տեն Իշըկի-  
նան խօսէլ (ԻՇԱՆԿԻՆ-ի տակ):

- Էջին հնք'ին կըծէլ - Զամառել, իր  
ասածը պնդել: Էտ կընէգ'ը էջին հնք'ին

կըծում ա, թա.- Չէ, վեր չէ՝ յըս կ'ում չըմ  
նի մըննէլ (Ձ):

- Էջին մընէշակ տըվէն, թա վըտ օ-  
նէ, հախըռից, կերալ - տեն Խօզին  
կըլծիլը խալիչին կէնալ չի:

- Էջին մինը - տեն Էջու կըլծի:

- Էջին յէշում ըն, լօխտան/կ'արին  
քըցում - տեն Աստուծ սարէն յէշում ա,  
ծոնը տինում:

- Էջին յըրա թարս նըստըցընէլ - Մե-  
կին հրապարակորեն խայտառակել:  
Ըտըրա նըմանէն բիդի էջին յըրա թարս  
նըստըցընիս, վեր հանըք'վը յըր օնէ (Ձ):

- Էջին յըրա կըզընվէլ, փալանը թա-  
կէլ - Մեղավոր ուժեղից վախենալով՝  
զայրույթը թափել անմեղ թույլի վրա:  
Նախագան էջին յըրա կըզընվալ ա, փա-  
լանըն ա թակում (Ձ):

- Էջին նըհըտ ապըրօղը իշօթուն  
կըսըվըրէ, շանը նըհըտ ապըրօղը՝ շը-  
նօթուն - տեն Էջը էջին քըշտէն կապիս՝  
յա՝ խույը կըսըվըրէ, յա՝ խասյաթը:

- Էջին նըստէլ, էջին շօռ կ'նլ - Ան-  
փույթ՝ մոռացկոտ՝ հիմար լինել: Իզէն Է-  
ջին նըստում ա, էջին շօռ կ'նլ, հունց  
բիդի կօլխօզ դէկավարէ (Ձ):

- Էջին չու ասած - Աստրամադիր:  
Էջին չու ասած մարթ ա (Բ):

- Էջին չու ասէլ - Թեթեալի հանդի-  
մանէլ՝ դիտողություն անել՝ վիրավորել:  
Վախում ըս, թա էջին չու ասիս, դնստի  
խըռավում ա (Բ):

- Էջին պէնը հիշկան ծանդըր ինի,  
Էնքան ճէլլի կըք'ինի - Մարդ ինչքան  
շատ աշխատանք ունենա, այնքան  
կձգտի արագ կատարել: Մէլիքը աս-  
մա.- Ըտըրան շատ կօրծ տըվէք'. էջին  
պէնը հիշկան ծանդըր ինի, Էնքան ճէ-  
լի կըք'ինի (Ձ):

- Էջին պէնը վեր ծըռէ վէշ, քարը  
ղըրիթթուն չի քաշիլ - Ոչինչ առանց  
պատճառի՝ անհիմն տեղի չի ունենում:  
Էջին պէնը վեր ծըռէ վէշ, քարը ղըրի-  
թթուն չի քաշիլ. ամմէն պէն էլ ուրան  
մանին օնէ (Ձ):

- Էջին վեր քըցիլ, ծիյին նալէլ - տեն  
Էջին յըրա կըզընվէլ, փալանը թակէլ:

- Էջին վըռէն ածիս՝ կըզըռռա -  
Սաստիկ թառ է (գինու մասին): Մին կօ-  
լա կինի յա տինում ըստօլէն, վեր էջին  
վըռէն ածիս՝ կըզըռռա (Բ):

- Էջին վըռէն լիւս տալ - Արժեք չու-  
նենալ: Զնքին ասմա.- Կնքի, Էս հինչ  
կացէն ա՝. էջին վըռէն լիւս կըտա (Ձ):

- Էջին վըռէն մախաթ տալը գ'իդնում  
չի - Անչափ ապաշնորհ է: Էջին վըռէն  
մախաթ տալը գ'իդնում չի, ամմա պաշ-  
տօն ա օգ'ում (Բ):

- Էշին վրձեն մախաթ տըվօղ - Ան-խիդճ՝ անտաշ՝ վայրենի՝ տգետ մարդ: Էտ էշին վրձեն մախաթ տըվօղը կօխ ա տամ, էտ ծրղըզ՝ Լեն փուջըցընում (2):

- Էշին տոնտըվին տինիլ - տեն էշին ղարա թարս նըստըցընել:

- Էշին քեռի ասել - տեն էշին դայի ասել:

- Էշ խըրթնըցընօղ - Անարգ՝ ստոր՝ չարամիտ մարդ: Էտ էշ խըրթնըցընօղը սաղ շինանցուց ձորիսը նըհը՝ Էտ կընվըցը-նում ա (Բ):

- Էշ խօզօղ - տեն Ասըղ մաշկօղ:

- Էշ կընտել - տեն Պարապ-սարապ թրեւ գալ: Մխպերը կօրծ ա անում, ին-ք՝ ըն էլ սաղ օրը, էշ ա կընտում (2):

- Էշ կընտօղ - Տգետ՝ բռի՝ կոպիտ՝ անկիրթ մարդ: Մարը լաց ա ինում, թա.- Բալա, իգէն էշ կընտօղ ա, էն հինչացու վա՛, վեր ք՝ օզ՝ (2):

- Էշ կըտըրել - Շվարել, ապշել, շվա-րած՝ ապշած մնալ: Չօբանը մընում ա էշ կըտըրած... (ՀԱԲ, 15, 115):

- Էշ մատաղ անել - հեզն. Ոչինչ չգո-հաբերել: - Ափօ, վեր սաղ-սըլմաթ ք՝ ի-նիմ-կ՝ամ, հինչ ը՛ս ընական: - Էշ ըմ մա-տաղ ընական (2):

- Էշ նա բի՛լիր, մօշ նանդ՝ - տեն էշը հինչ ա՛ գո՛ղում, մօշը հինչ ա՛:

- Էշ նըհատակ - Ջուր տեղը տուժած՝ գոհված: Կամակիրը ասմա.- Մը՛զ կըռ-վօղ ա հարկավեր, էշ նըհատակ հար-կավեր չի (2):

- Էշ նըստել մին այիթ, քըշանալը՝ էրկու - Սկսած՝ ձեռնարկած գործը չպետք է կիսատ թողնել: Մ՝ ջիհիլնէ, էշ նըստելը մին այիթ, քըշանալը՝ էրկու. վեր նըշանվալ ըք, փըսըկվը՛ցէք՝ (2):

- Էշ տը՛նալ - տեն էշ կըտըրել:

- Էշու դօխտըր - Անասնաբույժ: Էշին դօխտուրը կըվէն յէշում ա, թա.- Դաբաղ ա (2):

- Էշու լակուտ - տեն էշու հանք:

- Էշու կըլծի - 1. Հիմար՝ տխմար մարդ: Էտ էշին կըլծիքն էլ փըռնում ա յըղէ կավը մօրթում, ծախում (Բ): 2. Մեծ, խոշոր (միրգ, բանջարեղեն են): Խը-յար, հինչ խըյար, ամմէն մինը մին էշու կըլծի (Բ):

- Էշու կին - տեն Իճլիկ:

- Էշու կուխըհըստօթուն - Անկոտ-րում համառություն, մեծ համառություն: Թանգան հարթըն էշու կուխըհըստօ-թուն օնէ, խը՛ղծ ընդըրա ըսկետուր (2):

- Էշու հանք - Հիմարի՝ տխմարի ծնունդ: Էշու հանք ա, ընդըրանա մարթ չի տոն կ՝ալ (Բ):

- Էշու հանքի էլ չի կըտըրել - Բուք է

(կտրող գործիքի մասին): Դասաբը տե-նակը յօր ա ունէս, թա.- Էս էշու հանքի էլ չի կըտըրել, յը՛ս ըստըրանալ հունց խօզ՝ մա՛շկիմ (2):

- Էշու հանքի յա. վէ՛ջ ըրկընանում ա, վէ՛ջ կըրճանում - Ասում են այն ժամա-նակ, երբ երկար ժամանակ վիճակը՝ դրությունը՝ դիրքը են չի փոխվում: Ա-յան ասմա.- Մեր հանը էշու հանքի յա. վէ՛ջ ըրկընանում ա, վէ՛ջ կըրճանում (Բ):

- Էշու հըրսանէք՝ 1. Աղմկալից՝ խառ-նաշփոթ հավաքույթ: Աշօտը ճըղճըղամ ա, թա.- Էս ժողօլ չի, էշու հըրսանէք ա (Բ): 2. Ձգձգված գործ: Ըտըրա տօն շինի-լըն էլ էշու հըրսանէք տը՛ռալ (2):

- Էշու հըրիշտ(ը)րակ - Շատ տգեղ, այլանդակ (հիմնականում կանանց մա-սին): Շէնին դաշանկ՝ ըխճըկերքը թօ-ղալ ա, ք՝ ը՛ցալ մին էշու հըրիշտըրակ օ-զ՝ալ (Բ):

- Էշու մազ՝ էլ չի կըտըրել - տեն էշու հանքի էլ չի կըտըրել:

- Էշու յերգիր - Աստիություն, բար-ձիթողի վիճակ: Էշու յերգիր ա, հու հինչ օզ՝ում ա, անում ա (Բ):

- Էշու նալ - 1. հեզն. Մեկ ռուբլանց մետաղադրամ (խորհրդային կարգերի ժամանակ): Էրկու էշու նալ ա տամ, մին կիլօ մէս ինք՝ օնում (2): 2. հեզն. տեն ՄԷՂԱԼ: Կ՝անփին էշին նալերը էլիմ տծ-շան կախ-կախ ա անում, տոն կ՝ամ շի-նամաջը (2):

- Էշու նըման կօրծ անել - Շատ աշ-խատել, չարչարվել: Էշու նըման կօրծ ըն անում, էլիա կարում չըն ապրին (Բ):

- Էշու նըման պինըցընել - Շատ աշ-խատեցնել, շահագործել, չարչարել: Բանգ՝ ըտըրանց էշու նըման պինըցը-նում ա, վերջումըն էլ տերտակ պէց թօ-ղում (2):

- Էշու պերք - տեն էշու հանք:

- Էշու վը՛ններ - 1. Երկար ոտքեր: Հէնթօն էշու վը՛ններ օնէ (Բ): 2. անրգ. Ժխտողական պատասխան որեւէ պա-հանջ ներկայացնողին՝ պոռոտախոս-դին են: - Սո՛րէն, էշըտ ծախէ, ինք՝ օնինք՝: - Էշու վը՛ններ (2):

- Էշու տը՛ղ տինիլ - Արհամարիել, հետը հաշվի չնստել, հիմար՝ անհաս-կացող համարել: Կընանէք՝ կան, վեր ձորանց մարթկանցը էշու տը՛ղ տիրան, օխտը տիրական ըն պահում (2):

- Էշու տըղա - տեն էշու հանք:

- Էշու քօռակ - 1. տեն էշու հանք: 2. Մտերմական հանդիմանություն՝ ուղղված երեխաներին: Հանքը խուխէն խըտտում ա, թա.- Էշու քօռակ, էտ խակ խընծօրը հօր ը՛ս քաղալ (2):

- Էշու օրում - 1. Հիմար, տխմար: Է-շու օրում մարթ ա (Բ): 2. Վատ՝ ծակը վիճակի մեջ ընկած: Էն ընք էշու օրում, մինը կա վէ՛ջ, թա ք՝ ծմանգ՝ անէ (Բ):

- Էշ քօնօղ - տեն էշ կըռտօղ:

- Էշ օտել, էշ մըծանալ - Ի ծնէ հի-մար, կոպիտ, անկիրթ լինելով՝ այդպես էլ շարունակել: Էշ կերալ ա, էշ մըծացալ, ընդըրանա էրիւշ հինչ ը՛ս ըսպասում (Բ):

Էշն - տեն Իճն:

ԷշնԸՆԱԶ - տեն ԻճնԸՆԱԶ:

ԷՇՇԱՊ (թըք. ešek) - տեն ԷՇ(5):

ԷՇՇԱՊԶԻ (թըք. ešekçi) - տեն ԻՇԱ-րԱՄ:

ԷՇՇԱՊՍԻԹԱՆ - ած. տեն էշ քօնօղ: ԷՁԻՁ - 1. տեն ԲԷՅԲԸՇԸՐԸՐ: 2. տեն ՆԸՎԱՄ:

ԷՍ/ՅԷՍ (գրք. այս) - դ. 1. Ցույց է տա-լիս խոսողին մոտ գտնվող առարկա՝ ե-րեսույթ են: Տըղան լըցընըմ ա, թան տոն կ՝ա, օշափը յեր ա կենում, ասում.- Էս հինչ մըրթավը՛տ ա՛ (ՀԺՀ, V, 564): 2. Ցույց է տալիս խոսողի նշած ժամանա-կը՝ տեղը: Մարթը ասմա.- Էս տարէ, ա՛րջ ախպեր, հալալ կէս ընք ընական (2): 3. Ցույց է տալիս խոսողի կողմից արդեն հաղորդված իրողություն՝ հանգամանք: Պառավը լօխ նաղլ ա անում, թա.- Այ տըղա, էս սաղ կըք՝ ինիս թաքավերին ասիս (2):

- Էս ա - 1. Հրես հա, հրեն է: Մին էլ ա տը՛սնում, վը՛ր մինը թըմփթըմփալալ էս ա կ՝ամ ա (ՀԺՀ, V, 17): 2. Հիմա, շու-տով: Տընատարը դունաղէն ասմա.- Պա-տառ նըստէ, էս ա հարթըն կըկ՝ա (Բ):

- Էս աշխարքը - Իրական, երկրային կյանքը՝ ի հակադրություն հանդերձալ կյանքի: Էս ըշխարքումը հինչ ը՛նք տը՛-սալ, վեր էն ըշխարքումը հինչ տը՛ս-նանք (Բ):

- Էս աշկը Էն աշկէն տը՛ղ լոն չի տալ - տեն Աջ կուռնանը կօրծը ծէխէ-նը կարել չի անել:

- Էս ա, վեր ասում ա - Ասելուց անմի-ջապես հետո: Էս ա, վեր ասում ա, Թէ-վանը յըրա յա պըրծընում, ըտըրան վեր քըց՝ում, կօխ տամ (2):

- Էս ա, վեր կա - Միայն սա է, միակն է, այս է, ուրիշը չկա՝ պետք չէ: Ուստան ասմա.- Էս ա, վեր կա, էրիւշ պէն հանջանք չի (2):

- Էս գըմէ տըղան - Պարծենկոտու-թյան արտահայտություն, որ ասում է խոսողը՝ մատնացույց անելով իրեն: - Կա՛րօ, էս կ՝ուլը հու վա՛ ըսպանալ: - Էս գըմէ տըղան (Բ):

- Էս էլ կա - տեն Էն էլ կա:

- Էս էլ մին պէն ար - տեն Էն էլ մին պէն ար:

- Էս ըրեվէն ծնուն չի տըմանալ - Աս-վում է որեւէ երեսոյթի ուժգնությունը՝ սաստկությունը ընդգծելու համար: *Ըս-տի ցորտ հանն իլան չի. Էս ըրեվէն ծնուն չի տըմանալ* (2):

- Էս լըհա գանգ, կախ տըվօղը հու-վա՛ - Կարետորը ոչ թե միջոցն է, այլ այն գործադրողը:

- Էս խըմօրը հանն շատ ճոխ ա տը-նական - Խճճված՝ բարդ հարց է, դեռ շատ բաներ կբացահայտվեն, այս հար-ցը դեռ շատ կքննարկվի:

- Էս ծօխը լօխճին հիւրթաւըն էլ տոն ա կըլական - *տեն* Էս օղտը լօխ-ճին տըռնանըն էլ չուքըլական ա:

- Էս կըլխան - Դենց այս պահից, ա-ռանց ուշացնելու: *Չարը ասմա. - Էս կըլ-խան փուլը տօ՛, վեր յը՛տնան փուլմանէ վէջ* (2):

- Էս յաշը քաշնալ ըմ - Իմ ողջ կյան-քում: *Էտ պառաւ մարթը յէշում ա, թա. - Բալամ, Էս յաշը քաշնալ ըմ, հանն ըտի պէն տը՛սած չըմ* (2):

- Էս յը՛տը-հը՛տը - *տեն* Էն առաջ:

- Էս յը՛տնան - *տեն* Էն առաջ:

- Էս սըհաթէս - Դենց հիմա, իսկույն, անմիջապէս: *Էս սըհաթէս էլ վեր ընդը-րանց տօն ք՛իսիս, Էն ըն ինանկան ք՛ը՛փ ընէլիս* (2):

- Էս տարած - Ամբողջ (օր, գիշեր): *Մէզ մինըն օնիք՛ իրը՛քվըննանէ, Էս տարած օրը կըջըրչարվէ* (2):

- Էս տըռնվա ծը՛տը ընցած տըռնը-վա ծըտէն ճիվ-ճիվ ա անում - *տեն* Թանգ(զ)ան ճօտեր ըն տոն յը՛կալ՝ ըրկաթէ ծուվէն ըն ածում:

- Էս ու էն - Տարբեր մարդիկ: *Էս ու էն կ՛ամ ըն ըտըրա բօստանը թըլանում, ինք՛ըն էլ խաբար չօնէ* (Բ):

- Էս օղտը լօխճին տըռնանըն էլ չուքը-լական ա - Այս պատուհասից՝ փորձան-քից՝ դժբախտությունից ոչ ոք չի կարող խուսափել: *Շինացուց հըվաքում ա, թա. - Էս օղտը լօխճին տըռնանըն էլ չուքըլա-կան ա, յը՛կէք թուփ տը՛ռնանք, խը՛ք-խը՛քու տանք, մին ճար անինք* (2):

- Էս օրը ըղնէլ - *տեն* Էն օրը ըղնէլ:

- Էս օրը քըցիլ - *տեն* Էն օրը քըցիլ:

ԷՍԷՆՅՅԱ (ռուս. эссенция, լատ. essen-  
tia) - գ. Բացախախուֆ, քացախաթթու: *Խաբարը յը՛ր ա ինում, թա Սիրօյի կընէ-գը Էսէնցյա յա խըմալ, մը՛ռալ* (2):

ԷՍՉԱ(Ն)Բ/ԷՍՉՈՒ(Ն)Բ (գրբ. այս-  
ջափ) - *տեն* ԷՍԲԱՆ:

ԷՍՉՈՒ(Ն)Բ - *տեն* ԷՍՉԱ(Ն)Բ:

ԷՍԲԱՆ (գրբ. այսքան) - դ. Այս չա-փով՝ քանակով: *Էսքան տիժըրօթունը վեր մին շօն ինանր տարած, միհէնգ՛ ըս-տակալ ար* (2):

ԷՎԻԼ<sup>1</sup> - *տեն* ԷՎՈՒԼ:

ԷՎԻԼ<sup>2</sup> - *տեն* ԻՎԻԼ:

ԷՎԻԼ/ՍԻՎԻԼ/ՕՎԻԼ (գրբ. աւելեմ)

- Նբ. 1. Ավելով սրբել՝ մաքրել: *Էվիլը յօր ա օնում, հայաթը Էվիլում* (2): 2. Առհասա-րակ՝ սրբել, մաքրել: *Մարը ըխճըկանը յըրա կըզնըվում ա, թա. - Էս հինչ ա՛ ըս-տըղը՛րքէս հանը, իսէ Էվիլում չըս* (2):

ԷՎՈՒԼ/ՍԻՎՈՒԼ/ՕՎՈՒԼ/ԷՎԻԼ/ՍԻՎԻԼ<sup>2</sup> (գրբ. աւել) - գ. 1. Յատակը՝ գետինը մաքրելու հարմարանք, ավել: *Շինացէն վեր բըզարան Էվիլ ինք՛ կալանվ, կարէլ չի տօն տը՛ռնա* (2): 2. Թելուկագգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, որից ավել են կապում: *Նըստում ա էշը, ք՛իւնիւմ Էվիլ քանդիւմ, պիրում կա-պում, տանում ծախում* (Բ):

- Էվիլ ածել (գրբ. աւել ածեմ) - *տեն* ԷՎԻԼ(1):

- Էվիլին տակը տալ - *տեն* ԷՎ-ԼԻԼ(1):

- Էվիլըտ կըծիմ - *հեզն*. Սիրում եմ քեզ: *Աղա ապան հանրանք պըտահում ա Մաքադաթէն, թա. - Էվիլըտ կըծիմ, յը՛ք մինտը՛ղ ապրինք՛* (2):

- Էվիլ կըծած էշ - Գլուխը տմբտմբացնող մարդ: *Ախճիգ՛ը ասմա. - Չէչէմին, Էտ Էվիլ կըծած էշըն ա՛ մընա-ցալ, վեր ինձ օգ՛ի* (2):

ԷՏ/ՅԷՏ<sup>3</sup> (գրբ. այդ) - դ. 1. Ցույց է տա-լիս խոսակցին մոտ գտնվող առարկա՝ Ե-րեսոյթ եւն: *Տըղան վազ տալալ Նի յա մըննում, թա. - Թաքալէրըն ապրած կէ-նա, Էտ ճոխը ճարած ա, խըմիս վէջ* (2): 2. Ցույց է տալիս խոսակցի Նշած ժամա-նակը՝ տեղը: *Էտ վախտէրքըն էլ չուման աշխարքըս կալանձ ա ինում* (2): 3. Ցույց է տալիս խոսակցի կողմից արդեն հա-ղորդված իրողություն՝ հանգամանք: *Ա-տում ա. - Էտ հինչ վեր պատմալ ըս, լօխ սօտ ա* (2): 4. Կարող է գործածվել նաեւ խոսողի Նշած առարկան, երեսոյթը, ժա-մանակը եւն ցույց տալու համար: *Մին տըղա յա ինում, Էտ տըղէն էլ Էրկու շօն ա ինում* (2):

- Էտ ա - Այդ է, ահա, ահավաղիկ: *Դէրվիշը ասմա. - Էտ ա քըթէտ տակէն, տը՛սնում չը՛ս* (2):

- Էտ ա, վեր ասում ա - *տեն* Էս ա, վեր ասում ա: *Էտ ա, վեր ասում ա, մին Էրկու օրըմ խօխան սըղացալ ա...* (ԱԱ, 36):

- Էտ ա, վեր կա - Միայն դա է, միակն է, այդ է, ուրիշը չկա՝ պետք չէ: *Վը՛ննէ-րը տակըն ա թակում, թա. - Էտ ա, վեր կա, Էրիւշ տօն օգում չըմ* (2):

- Էտ ար պակաս - Այդ չի կարող լի-նել, այդ ավելորդ է: *Էտ ար պակաս, վեր մէր վը՛ղէրը յը՛տ տանք թուրքէրէն* (Բ):

- Էտ էլ խօսկ ա՛ - 1. Ինչպէ՛ս կարելի

է այդպէս, անհարմար չէ: *Էտ էլ խօսկ ա՛, վեր ասում ըս, համօթ չի՛* (2): 2. Ի-հարկե, դրա մասին մի կասկածիր: - *Ա-շօտ, ք՛՛մանգ կանի՛ս, արտըս հընձիւմ*: - *Էտ էլ խօսկ ա՛, Դէնդօ, միշտ պաղը-րաստ ըմ* (2):

- Էտ էլ կա - *տեն* Էն էլ կա:

- Էտ էլ մին պէն ար - *տեն* Էն էլ մին պէն ար:

- Էտ վեր խաչա յա՛ - Ասում են, երբ անսպասելիորեն մեկը մի լավ բան է կա-տարում այդ ինչպէ՛ս եղավ: *Էտ վեր խա-չա յա՛, վեր յը՛կալ ըս ք՛՛մանգ անիս* (Բ):

- Էտ վեր խաչ ը՛ս քը՛ցալ - *տեն* Էտ վեր խաչա յա՛:

- Էտ օրը ըղնէլ - *տեն* Էն օրը ըղնէլ:

- Էտ օրը քըցիլ - *տեն* Էն օրը քըցիլ:

ԷՏԱԺ - *տեն* ԱՏԱԺ:

ԷՏՉԱ(Ն)Բ/ԷՏՉՈՒ(Ն)Բ (գրբ. այդ-  
ջափ) - *տեն* ԷՏԲԱՆ:

ԷՏՉՈՒ(Ն)Բ - *տեն* ԷՏՉԱՆԲ:

ԷՏԲԱՆ (գրբ. այդքան) - դ. Այդ չա-փով՝ քանակով: *Էտքան պէնէրը մինակ Օվջի Փիրումըն ա ըսկանում, պէցիւր ծըծաղում* (2):

ԷՐԳԱՆ - *տեն* ԷՐԿԱՆ:

ԷՐԿԱՆԲ - *տեն* ԷՐԳԱՆԲ:

ԷՐԳԱՆԲ/ԷՐԿԱՆԲ - *տեն* ԸՐԿԱՆԲՕ-ԹՈՒՆ:

- Էրգանքըն ա լէնքսը մին անէլ - *տեն* Լէնքսըն ա Էրգանքը մին անէլ:

- Էրգանքըն ա լէնքսը մին տը՛ռնալ - *տեն* Լէնքսըն ա Էրգանքը մին տը՛ռ-նալ:

ԷՐԷԼ - *տեն* ԷՐԻԼ:

ԷՐԷՍ(Ս)ՈՒՆ - *տեն* ՅԷՐԷՍ(Ս)ՈՒՆ:

ԷՐԻԼ/ԷՐԷԼ/ԻՐԻԼ (գրբ. այդեմ) - Նբ.

1. Հրդեհել, կրակի տալ: *Նօթը ածում ըն յըրա, Էրիւմ* (Բ): 2. Դաղել, այրուցքներ առաջացնել: *Փիջին դուրքան Նի յա կամ ճըկատէն, Էրիւմ* (Բ): 3. Արեւահարել: *Խօխէնքը տըկըլօր ըրը՛վէն տակէն Էն-քան խաղ ըն ըրալ, արը՛վը սաղ ջանը Է-րալ ա* (Բ): 4. Թեժ կրակով խանձել (կե-րակուրը): *Կըրակը թիժ ար, կուրկուտը Էրից* (Բ): 5. Կիզել, ուժեղ ջերմությամբ չորացնել՝ փչացնել: *Արը՛վը սաղ բուս-տըննէն Էրալ ա* (2): 6. Բարկ, կծու լինե-լով՝ ցավ, կսկիծ առաջացնել, մրմռա-ցնել: *Տանիտը՛ղ կըծօ յար, պէրանը Էրից* (2): 7. Խոսքով՝ պատասխանով վիրա-վորել, հոգեպէս հուզել՝ ցավ պատճա-ռել: *Մարը ասմա. - Թու խուսկէրքըտ մինչը՛վ միհէնգ՛ ինձ Էրիւմ ա* (2): 8. Կարծրություն տալու համար բարձր ջերմության ներգործության ենթարկել, թրծել: *Քարփիւնը Էրիւմ ըն, վեր պէնդ ի-նի* (Բ): 9. չք. Այրվել, վառվել: *Փանը նաւ ա, լ՛ալ չի Էրում* (Բ):

- Էրալ չի, մըրկալ ա - Տարբերությունը մեծ չէ, համարյա նույն է (ասում են վատ՝ բացասական երեւոյթի՝ իրողության են առթիվ): - *Յեղիսաբէթ, հոնք՝ վիւտ մէխկ մէր անէլ. Մարյանը օխտը սիրական չի պահըմ, վէցցըն ա պահում:* - *Էրալ չի, մըրկալ ա (2):*

- Էրած կաշի ինիլ - 3ին ոխ ունենալ: Ասում ա. - *Էրած կաշի օնիւմ, յը՛ս ըտըրա տօնը բիդի քանդիւմ (2):*

Էրիլ մօխէր շինիլ - Կրակով ոչնչացնել, վերացնել, սպառել: *Սաղ շէնը մին ժամումը էրում ըն, մօխէր շիւտում (2):*

ԷՐԻԼ-ԽՐՈՒԿԵԼ - Լը. Տոջորել, տառապանք՝ կսկիծ պատճառել, տանջել, չարչարել: *Էտ խօխէնք՝ը սաղ օրը հօրըն ա մօրը էրում ըն, խըրալում (2):*

ԷՐԻԼ-ՓՈԹԹԹՈՐԵԼ - տէն ԷՐԻԼ-ԽՐՈՒԿԵԼ:

ԷՐԿԱՆ/ԷՐԳԱՆ (գրք. երկայն) - ած. 1. Մեծ երկարություն ունեցող: *Մին էրկան մըհակ ա յը՛ր օնում, էտ խընծծորեն սաղ թակում, վէր ածում (2):* 2. 3արկ եղածից մեծ երկարություն ունեցող: *Շաւկարը կը՛նում ա, տը՛սնում էրկան (Բ):* 3. Ոչ կարծ, միւնչել թաթերը՝ ծնկները հասնող: *Միհէնք էրկան կը՛նօղ չի կա, քահիլ ըխճըկէրքը կարծ ըն կը՛նըմ, վըռընէն, պոպտըրնէն պէց՝ շօռ կամ (Բ):* 4. Ընդարձակ, ծավալուն: *Մին էրկան նամակ ա կիրում, դարկում ախպօրը (2):* 5. Երկարատեւ, մեծ ժամանակ ընդգրկող: *Էրկան քըշէր ա, լըստում ըն, զըրիւց անում (Բ):* 6. մ. Շատ ժամանակ, բավական ժամանակ: *Իտի էլ ապրում ըն նահանք ըտէղ շատ էրկան, սարէն անումըն էլ մընում ա Կըրիկըզ (ՆԼՂԲԲ, 146):* 7. ած., մ. Նարդախաղի տեսակ, որի ժամանակ քարերը շարում են իրար ետեկից: *Նանդին պիրում ըն, Միսօնը ասում ա. - Խօթէն, թըկօվի խաղ ա՛նիւնք, թա է՛րկան (2):*

- Էրկան ընայի, պը՛լ դոտայի - Ասում են բարձրահասակ եւ տխմար մարդու հասցեին:

- Էրկան լօլի - տէն LOLԻ:

ԷՐԿԱՆ-ՊԵՐԱԿ - մ. Մանրամասն, մանրակրկիտ: *Էտ դէրվիշը հինչ վէր իլնիւ ա, կ՛ամ ա թաքավէրին էրկան-պէրակ նաղլ անում (2):*

ԷՐԿՈՒ (գրք. երկու) - թ. 1. Մեկին հաջորդող թիվը՝ երկու: *Ամմա էտ մարթօնցը մաչին էրկու հայ ըն իննում, մինը միւնան փախալ... (ԼՂԲԲ, 270):* 2. Եվ այս, եւ այն, թէ՛ մեկ, թէ՛ մյուս: *Էրկու թաննփըն էլ կըլխու վըն ըղնում, վէր նըհախ տը՛ղան ըն կըռվում (2):* 3. ած. Մի քա-

նի: *Թօղում չի, թա էրկու խօսկ էլ յը՛ս աւսիւ (Բ):* 4. գ. Անբավարար գնահատական: *Դասատուն ըտըրան վանին էրկու վա տիննում (2):*

- Էրկու անքամ էրկուաը չօրք՝ ա - Բացարձակ ճշմարտություն է, ապացուցելու կարիչ չկա: *Մարթը ասմա. - Էրկու անքամ էրկուաը չօրք՝ ա, յը՛ս տանը չըմ իլնիւ, էս մածունը հուլ ա՛ կէրալ (2):*

- Էրկու աշկալ յէշիլ - տէն Աշկէրը չօրք՝ անէլ(1):

- Էրկու աշկատ մինին հըվատալ մէլ - Զգույշ եղի՛ր, ոչ մեկին մի վստահիր: *3անը տըղէն հըղէ յա քըցնում, թա. - Սա՛յաղ կա՛ց, վէշ միսին դավերյա չանիս, էրկու աշկատ միսին հըվատալ մէլ (2):*

- Էրկու աշկ ինիլ, էրկունըն/էրկուսըն էլ փօխ անէլ - տէն Աշկէրը չօրք՝ անէլ:

- Էրկու աշկու մաչտը՛ղ - 3սկողության տակ, ուշադրության կենտրոնում: *Կօզի էտ ծին քըշէր-ցիրէ՛կ էն ա իննում էրկու աշկու մաչտը՛ղ, ամմա Ծիկանը էլիա կարում ա կ՛ուղանա (2):*

- Էրկու էշին կ՛արին ճօթ անէլը չըգիլն - Անճարակ՝ ապաշնորհ՝ տխմար լինել: *Էրկու էշին կ՛արին ճօթ անէլը գ՛նողնում չի, ամմա օգ՛ում ա հարուստ ապըրէ (Բ):*

- Էրկու ըխօռա օտօղ - տէն Էրկու մօր ծը՛ծ ծըծած:

- Էրկու ըխօռու զըռօղ - Շողոքորթ՝ երկերեսակի մարդ: *Էտ էրկու ըխօռու զըռօղը ըտի հըրուստանում ա, լ՛ալ տընէր շիննում (2):*

- Էրկու ընգիւնանէ - Բազմազբաղ, գործերով ծանրաբեռնված: *Խը՛ղճը հինչ ա՛նէ, էրկու ընգ՛նանէն յա (Բ):*

- Էրկու ժուլիգին անա շընըկօտէգ՝ կինի - Բացասական հատկանիշներով ամուսինների զավակը կգերազանցի ծնողներին: *3անը՝ կ՛օղ, մարը՝ տոնս պըրծած, ինքը հինչ բի՛ղի տը՛ղնա. էրկու ժուլիգին անա շընըկօտէգ՝ կինի (2):*

- Էրկու խօսկ - Կարճ՝ համառոտ ասելիք: *Ինք՛ըն էլ կ՛ամ ա էրկու խօսկ աւսում, դըրաղ կէնում (2):*

- Էրկու ծը՛րք անէլ, մին բօղազ - Ագահաբար ուտել, խծել: *Էրկու ծը՛րք ա ըրալ, մին բօղազ, ջըլաման չի տամ, թա մինը մին պէն օտէ (Բ):*

- Էրկու ծը՛րք անէլ, մին կըլծիս թակել - տէն Կըլծիսը թակել:

- Էրկու ծը՛րքը իրը՛ս կըլըվանա, մին ծը՛րքը հինչ ա՛նէ - Մարդ միայնակ չի կարող անէլ այն, ինչ կարող է անել ընկերովի: *3իրըվանէրը թըքթըծհմնթ ըն տամ. - Մոնքի, էրկու ծը՛րքը իրը՛ս կըլը-*

*վանա, մին ծը՛րքը հինչ ա՛նէ. յը՛ք մը՛գ նըհէտ հընգըրա՛ց, մին տը՛ղ արտ աւնիւք՝ (2):*

- Էրկու կէսը մին տը՛ռնալ - Ամուսնանալ: *Էրկու կէսը մին ա տը՛ռալ, էլ հընգէր-հըրըվանու մըհալ չի քըցնում (Բ):*

- Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնէլ - Անելանելի դրության մեջ գցել: *Էս կըռք՛վը մը՛գ էրկու կըրակու դաթում թօղից (Բ):*

- Էրկու կըրակու դաթում/մաչի էրվիլ/մընալ - Անելանելի դրության մեջ ընկնել, անելիքը չիմանալ: *Խը՛ղճը մընամ ա էրկու կըրակու դաթում, գ՛նողնում չի, թա հունց անէ, վէր հա՛մ մօրը սըրտավը ինի, հա՛մ կընգանը (2):*

- Էրկու կիլօ կ՛արն նըհէտ փօխէլ չըմ - Ասում են անարժեք մարդու՝ իրի հասցեին: *Կընէգ՛ը ասմա. - Տու հինչ տըղամարթ ը՛ս, էրկու կիլօ կ՛արն նըհէտ փօխէլ չըմ (2):*

- Էրկու կիժին մին խէլիւնք ա հարկավէր - 3ամաձայնության չեկողներին՝ վիճողներին խորհրդատու պետք է լինի: *Էրկու կիժին մին խէլիւնք ա հարկավէր, առանց ըսկէսուր էտ հարթները կարէլ չըն յօլա ք՛իսին (2):*

- Էրկու հարուստ կըռվը՛ցէն, մին քըսիբու տօն քընդէցէն - 3արուստները՝ գորեղները իրենց վեճերը հարթեցնում են՝ աղքատներին՝ թուլերին տուժելով:

- Էրկու հօ-հա ընօղէն մինը բիդի ինի, վէր ասէ՛ հօ-հա ըրէք՝ - Նույնիսկ փոքրաթիվ աշխատողներին ղեկավար է անհրաժեշտ:

- Էրկու ճօխտ, մին կընղ - Քիչ, սակավաթիվ: *Խը՛րխանը գ՛ուռ շէն ա իլնիւ, միհէնք՝ մընացալ ա էրկու ճօխտ, մին կընղ մարթ (Բ):*

- Էրկու մաննան տը՛ղ - Շատ փոքր (տարածություն): *Էրկու մաննան տը՛ղ բօստան օնէ, էն էլ չի բաշիր անում, թա բիջանի (Բ):*

- Էրկու մօր ծը՛ծ ծըծած - Ճարպիկ, խորամանկ: *Էրկու մօր ծը՛ծ ծըծած ա, հունց էլ ինի, մին ճար ընական ա (2):*

- Էրկու նէրակ մինտը՛ղ ինիլ չի - Երկու լավ բան միասին չի լինում: *Էրկու նէրակ մին տը՛ղ ինիլ չի, մարթը բիդի տօն ա, կընէգ՛ը՝ վը՛ռը կէրած (2):*

- Էրկունը/էրկուաը իրը՛ք տը՛ռնա - բրմը. Ասում են նորապսակներին՝ ակնարկելով ծնվելիք երեխան: *Այան էլ ճըկըտըրնէրան պաչո՛ւմ ա, թա. - Էրկունը իրը՛ք տը՛ռնա (2):*

- Էրկու պատու դաթում/մաչի թօղնէլ - տէն Էրկու կըրակու դաթում/մաչի թօղնէլ:

- Երկու պատու դաթում/մաջի երվի/մընալ - տեն Երկու կըրակու դաթում/մաջի երվի/մընալ:

- Երկու պերան - Զիչ, մի քիչ (խոսելու՝ ուսելու մասին): Երկու պերան խօսում ա, մարթը մին տըհան ըսքըսում ըն ճըղճըղալը (2):

- Երկու քան մին հըլավում - Համերաշխ, հաշտ: Ըսես ըն հայն միջեվ ըսոր ուրոր նըհետ ըպրես ըն հաշտ, մին խօսկու, Երկու քան մին հըլավում... (ՀԺՀ, V, 530):

- Երկուան ճուրը մին արխավ քիսիլ - Հաշտ՝ համերաշխ՝ միաբան լինել: Մըրթըկընեզ՝ շատ սերավ ըն ինիս. Երկուան ճուրը մին արխավ ա քիս (2):

- Երկուան մին քան, մին հոնքի - տեն Երկու քան մին հըլավում:

- Երկու վըննավ թանկ ըղնել - Հանցանքի մեջ հանկարծակի բռնվել, անելանելի վիճակի մեջ ընկնել: Սաղ գ'անքը կ'ուղթթուն անօղը վերջումը Երկու վըննավ թանկ կըղնել (2):

- Երկու վըննը մին ջըմըշկում տինիլ - Համառել, կամակորոպամբ իր կամքը թելադրել: Ամմա էտ իշխանը Երկու վըննը տինըմ ա մին ջըմըշկում, թան. 2Է, վեր չԷ (ԼՂԲ, 329):

- Երկու վըննը ինիլ, Երկունըն/Երկուան էլ փոխ անել, փախճիլ - Շատ արագ փախչել, ճողոպրել: Թօրքերը էլ կըրըճեկն վեչ տեմ կենան, Երկու վըննը ունին, Երկունըն էլ փոխ ըրեն, փըխճըճեկն (Բ):

- Երկու վըխճարավ սուրուն չինիլ - Փոքր հնարավորություններով՝ միջոցներով հնարավոր չէ մեծ գործ ձեռնարկել: Հանքը ասմա. Շան տըղա, Երկու վըխճարավ սուրուն չինիլ, էտքան մատարյալավ կարել չըս տօն շինիս (2):

- Երկու տըռնան շօն - տեն Երկու ըխօռու գըռռօղ:

- Երկու տըվարեն կըլծիք մին ղըզղանում իփվիլ չի - Անտեղի է փորձել համատեղել անհամատեղելիները: Արջը ասմա. Մարթ ախպեր, մունք կարել չընք մին տըհ ապրինք. Երկու տըվարեն կըլծիք մին ղըզղանում իփվիլ չի (2):

- Երկու ցավու դաթում/մաջի թողնել - տեն Երկու կըրակու դաթում/մաջի թողնել:

- Երկու ցավու դաթում/մաջի երվի/մընալ - տեն Երկու կըրակու դաթում/մաջի երվի/մընալ:

- Երկու ուխայ - Մեծ ուրախություն, ցնծություն: Կըռըվը պըրծընէլը լօխճիս հըտե Երկու ուխայ ար (Բ):

- Երկու փանիլվան կարել չըն մին

քընդիրու յըրա խաղ անին - տեն Երկու տըվարեն կըլծիք մին ղըզղանում իփվիլ չի:

- Երկու քարու դաթում/մաջի թողնել - տեն Երկու կըրակու դաթում/մաջի թողնել:

- Երկու քարու դաթում/մաջի երվի/մընալ - տեն Երկու կըրակու դաթում/մաջի երվի/մընալ:

ԵՐԿՈՒԹՈՐ(Ո)ՆԱՆԵ - ած. Շեղքի երկու կողմն էլ սուր, երկսայրի: Թաքավերին տըղան Երկուըռքիսան թօրը տոն ա օնում, թըխում, էտ քարը Երկու կեն ա-նում (2):

ԵՐԿՈՒԹՈՐԱՆԵ - 1. ած. Երկու թել ունեցող: Երկուըռքվան սամալծտ ա տըհսնում, մընամ մաթ մընացած (2): 2. փխբ. գ. Թռչուն: Ինքն էլ չօրքվըննան է պահում չար, մինակ Երկուըռքվան յար պահում՝ հընդիշկա, դագ, հավ, ծրղան (2):

- Երկուըռքվան վարել - 1. Հողը երկկողմ վարել: Վըղը վեր Երկուըռքվան չի վըրեցեր, պերք չի տալ (2): 2. Աշխատանքն անկորուստ կատարել: Փարթ Ըստոծու, կօրծը Երկուըռքվան վըրըճեկն (2):

ԵՐԿՈՒԻՐՈՐԱՆԵ - ած. 1. Երկու երես ունեցող: Երկուիրըսան նըկար ա (Բ): 2. փխբ. Կեղծավոր, շողոքորթ: Երկուիրըսան կընգանը ճար չինիլ (2):

ԵՐԿՈՒԻՐՈՐԱՐՈՐՈՒՆ - գ. Երկերեսանի մարդու արարք՝ գործողություն: Երկուիրըսթունավ էտ խօխեկը՝ պահում ա, մըծըցընում (2):

ԵՐԿՈՒՅԻՆՋԻ - տեն ԵՐԿՈՒՅԻՆ:

ԵՐԿՈՒՄՐԹՎԱՆԵ - ած. Կասկածավոր, տարակուսող, երկու մտքի: Սիմօնը էն ա Երկումըթկան. գ'ողոն չի՝ կավը ծախե, թա չԷ (Բ):

ԵՐԿՈՒՅԻ/ԵՐԿՈՒՅԻՆՋԻ - թ. Առաջինին հաջորդող դասական թվականը, երկրորդ: Երկունջի դժնումը տըղան վեր թըխում ա, դեվը մաջան կեն ա տըհ-նում (2):

ԵՐԿՈՒՇԵԲԱԹ - տեն ԸՐԿՈՒՇԵԲԱԹ:

ԵՐԿՈՒՇԵԲԵԹ - տեն ԸՐԿՈՒՇԵԲԱԹ:

ԵՐԿՈՒՇԵՊԵԹ - տեն ԸՐԿՈՒՇԵԲԱԹ:

ԵՐԿՈՒՇԵՊՏԻ - տեն ԸՐԿՈՒՇԵԲԱԹ:

ԵՐԿՈՒՎԵԼ - նբ. Ասածը երկրորդ անգամ ասել՝ կրկնել: Էս ծէխ մարթը վեր չին ասածըն Երկուվելավ քընում ա (ՆԱԲ, 63):

ԵՐԿՈՒՎՈՆՆԱՆԵ (գրբ. երկոտանի) -

1. ած. Երկու ոտք ունեցող: Մինգէլ քի-նամ ա ծիլին էն մին վըննը պուկում օտում, կամ, թա՝ ալ ախպեր, ծիտ Երկու-վըննան յա՛... (ՆԼՂԺԲ, 16): 2. փխբ. գ.

Մարդ: Ըստեղ աղվեսը մետըն ա քըցում օ-ցեն ասածը, թա հինչու հետե Երկուվըն-նանուն լիվթուն ընէլի չի... (ՀԺՀ, VII, 236):

- Երկուվըննան էշ - Հիմար՝ տխմար մարդ: Ասում ա.՝ Տու մարթ չըս է՛, Երկու-վըննան էշ ըս (2):

- Երկուվըննան կ'իլ - Ագահ՝ գռվող մարդ: Էտ Երկուվըննան կ'իլը սաղ կախօզը կերալ ա (Բ):

ԵՐԿՈՒՏՈՐՈՐԱՆԵ - ած. երկհարվածանի՝ որով միաժամանակ երկու կրակոց կարելի է կատարել: Ըտըրան էլ ի-նում ա Երկուտըրըքան մին լ'ավ թը-վանգ՝ (2):

ԵՐՎԵԼ - տեն ԵՐՎԻԼ:

ԵՐՎԻԼ/ԵՐՎԵԼ/ԻՐՎԻԼ - 1. կբ. եւ չբ. ԵՐՎԻԼ-ի: չբ. 2. Բարձր ջերմություն ունե-նալ: Խըհճ հիվանդը երվում ա (2): 3. Խիստ փոշմանել՝ գղջալ: Ընդիտու նը-ման կավը ծախալ ա, միհենգ՝ մընացալ իրվիլիս (Բ): 4. Կսկծալ, վշտանալ, հոգե-պես տառապել: Մարթը ասմա.՝ Ա՛ կը-նեզ՝, խըրեզ՝ Երվի, վըխճար ա, լի՛, ըս-տակալ ա, ըստակալ ա (2):

- Երվիլ մօխեր տըհնալ - Վառվել, վերանալ: Էս կըռվավը շատ շենեքը ըն երվալ-մօխեր տըհալ (Բ):

ԵՐՎԻԼ-ԽՐՈՐԱՎԵԼ - կբ. եւ չբ. Ե-ՐՎԻԼ-ԽՐՈՐԱՎԵԼ-ի: Սաղ օրը երվում ըն-խըրավվում, էլիա պեն չի աննալ կ'ամ (Բ):

ԵՐՎԻԼ-ՓՈԹՈԹՈՐՎԵԼ - տեն ԵՐ-ՎԻԼ-ԽՐՈՐԱՎԵԼ:

ԵՐՈՒՇ/ՕՐՈՒՇ/ՕՐՈՒՇ (գրբ. ուրիշ) - դ. 1. Այլ, ոչ նույն: Էտ ախճիգ՝ կ'ամ ա տօն, Երիշ շօրեր կ'ընում, քիւնամ հըր-սանեք՝ (2): 2. Կողմնակի՝ օտար մար-դիկ: Ուրիշներեն հըրտը կօրծ ա անում, ուրանց տանը հըրտե անում չի (Բ):

- Երիշ աշկավ յեշիլ - Ոչ բարյացա-կամ վերաբերվել, ետին միտք ունենալ: Թաքավերը էտ կընգանը Երիշ աշկավ ար յեշում (2):

- Երիշ պեն ա - 1. Շատ լավն է, ար-տակարգ է, հիասքանչ է: Ղարաբաղա թօթեն արաղը Երիշ պեն ա, հու խըմում ա, համը մընամ ա պիրանումը (Բ): 2. Խնդիրը տարբեր է, այլ բնույթ կատանա: Մարթը ասմա.՝ Երիշ պեն ա, վեր փուլը միհենգ՝ տաս (2):

- Երիշ հանգի - Ուրիշ տեսակ, ոչ սովորական: Խուրջինան մին Երիշ հանգի հաց ա տոն օնում, լօխ մընամ ըն ըրմացած (2):

- Երիշ քամե փըջիլ - Իրադրություն-նը՝ պայմանները՝ հանգամանքները փոխվել: Թաքավերը տըհսնում ա, վեր է-րիշ քամե յա փըջում, հըրամանք ա տամ՝ գօրքը հըվաքին (2):

- Ուրիշին հացը օտել - Ուրիշի հաշ-

վին ապրել: Ասմա.- Պա տու հըմանչիւմ չը՞ս, վեր էրկու տարէ յա՛ ձորնիս հա-  
ցըն ըս օտում (2):

- Ուրնիս պըտառէն յը՛հ քըսէլ - Ու-  
րիշի օգտին գործել, ուրիշին ծառայել:  
Բօլ ա՛, ա՛յ իմ էշը կուրցըրած հայէր, հիշ-  
քան օրիշին պըտառէն յէր քըսէցինք  
(ԶՏ, Բ, 239):

- Ուրնիս փուպըլը ինք՛ կալած շալ-  
վարը կարճ կինի - Ուրիշի միջոցներով  
հնարավոր չէ կարիքները լիարժեք բա-  
վարարել: Ա՛ ջիհիլնէ, կօրծ ըրէք՛, ծէր  
տօնը պըհը՛ցէք՛, ձորնիս փուպըլը  
ինք՛ կալած շալվարը կարճ կինի (2):

- Ուրնիս աման աղավ անել - Ուրիշի  
գործերին խառնվել: Ուրան կօրծերը թօ-  
ղած՝ ձորնիս աման ա աղավ անում (2):

- Ուրնիս աշկավ յէշիլ - 1. Օտարի  
նման՝ անտարբեր վերաբերվել: Էտ տը-  
նաշիւրը ձորնիս խօսցըն էլ ա ձորնիս  
աշկավ յէշիւմ (2): 2. Քննադատական՝  
անաչառ վերաբերմունք ունենալ: Վէր  
օգ՛ում ըս կօրծըտ լ՛ավ ինի, ըրածէտ ձո-  
րնիս աշկավ յէշի (2):

- Ուրնիս խուսկավ ինիլ - Ուրիշի  
թելադրանքով՝ խորհրդով վարվել՝ գոր-  
ծել: ...Ախպէրը ձորնիս խուսկավ ընծղ  
ար... (ՅԺՅ, V, 40):

- Ուրնիս ծըրքու յէշիլ - Ուրիշից  
օգնություն ակնկալել, հույսը ուրիշի  
վրա դնել: Կօրծ չի անում, սաղ օրը էն ա  
ձորնիս ծըրքու յիշիլիս (Բ):

- Ուրնիս կըտօր թակել - տեն ձո-  
րնիս պըտառէն յը՛հ քըսէլ:

- Ուրնիս յըրա շօն ա հանչում, ինձ  
յըրա էլ կատու վա մըլավում - Ասում են  
այն ժամանակ, երբ անարժան մեկը վա-  
տաբանում է:

- Ուրնիս պինկալու յըրա ծոն ածել  
- տեն ձորնիս պըտառէն յը՛հ քըսէլ:

- Ուրնիս պիրանավ հաց օտել -  
տեն ձորնիս խուսկավ ինիլ:

- Ուրնիս տըռնան շօն - Ուրիշի օգ-  
տին գործող, ուրիշին ծառայող մարդ:  
Իզէն հինչ տըղամարթ ա՛, ձորնիս տըռ-  
նան շօն ա (2):

- Ուրնիս փարչավ ծոն խըմել - Ա-  
ներես՝ համարձակ լինել: Յըլիվորը աս-  
մա.- Տու ձորնիս փարչավ ըս ծոն խը-  
մում, հունց էլ ինի, կըրըլական ըս կըլծ-  
խըտ պահիս (2):

ԷՐԶԷՁ (թըք. *erkeç* (սոխագ, քոշ,  
քաղ) - գ. Էգ այժ՝ ու: Էրքանչին մը՛սը  
դըբըռէն մըսան քախծըր ա ինիւմ (Բ):

ԷԶ՛ (գրք. Էգ) - ած. գ., 1. Իզական սե-  
ռին պատկանող (կենդանի): Էք՛ շօնը  
հանսա կինի (2): 2. անըգ. Կին, աղջիկ:  
Խօխէնք՛ը սաղ էք՛ ըն, մին տըղա չօնէ,  
թա ք՛ծմա՛ք՛ անէ (Բ): 3. փխբ. Կնոջ  
բարք ունեցող (տղամարդ): Յինչ տըղա՛-  
մարթ, էք՛ ա, տանան տոն չի կ՛ամ (Բ):

4. Փոշոտման ենթակա՝ պտղաբեր  
(բույս): Յարը կըզընվում ա, թա.- Էտ  
խընծօրէն էք՛ ա, ին կըտրում ը՛ս (2): 5.  
Այն գործիքը, գործիքի մասը կամ սա-  
րածը, որի փոս ընկած մասի՝ անցքի  
մեջ ազուցվում է մյուս սարածի ցցված

մասը՝ ելուստը՝ ատամը: Պիրնում ա, թա  
մըղակը յըրա անէ, տը՛սնում ա պէտլին  
էք՛ը կա վէչ (Բ):

ԷԶԱԸ/ԷՅԱԸ - մ. 1. Յաջորդ օրը: Էս  
պառավը ք՛իննա՛ ա, էք՛սը ձորնիս տը-  
ղան յօր օնում, տանըմ շահէն կօխկը...  
(ՆԼԴԺԲ, 19): 2. Յետագայում, ապագա-  
յում: Յարը կըզընվում ա, թա.- Բա՛լա, էտ  
փուկերը վէր ցըրը՛վ ըս տաս, էք՛սը  
հունց ը՛նք ըպըլական (2):

- Էքսըվա կօրծէն յըրա ծոն կըկա -  
Օրվա գործը չպետք է հետաձգել, այլա-  
պես խոչընդոտներ կառաջանան: Ա-  
պան ասում ար.- Կօրծըտ վըխտէն ըրա՛,  
էք՛սըվա կօրծէն յըրա ծոն կըկա՛ (2):

- Էքսըվա փայը պահել - Կռվելիս՝  
վիճելիս խոսքերը չափավորել, այնպի-  
սի վիրավորական խոսքեր չասել, ո-  
րոնց համար հաշտվելու դեպքում  
պետք է զղջաս: Սիմօն, խըրէգ՛ ուշունց  
տօ՛, էք՛սըվա փայը պահէ, համօթ ա (2):

ԷԶՈՒԾ - տեն ԷԶՈՒՅ:

ԷԶՈՒՅ/ԷԶՈՒԾ/ՕԶՈՒՅ/ՕԶՈՒՅ (գրք.  
այգուց, եգուց) - մ., գ. Այսօրվան հաջոր-  
դող օրը՝ վաղը: Էտ կընգանը ըրիխընը-  
ցընում ըն, թա.- Էն ա տըղատ սաղ, է-  
ք՛նց պէց ընք թուղական (2):

- Էքցան օրը - տեն ԷԶԱԸ(2): Էտ  
յօխ օզըմ ար գ՛իդն, վը՛ր էք՛ցան օրը ձո-  
րնիս խազնան վէր կ՛ան կըտրին, գ՛իդն  
(ՅԺՅ, V, 245):

ԷԶՈՒՅ-ԱԼԼՈՒՐ - տեն ԸՍՕՐ-ԷԶՈՒՅ:

## Ը

Ը - ձ. 1. Արտահայտում է կմկմոց:  
Ախճիգը դէվին վեր տը՛սնում ա, մընում  
ա ը՛ ընէլիս (2): 2. Արտահայտում է տն-  
քոց: Յիվանդը տը՛դէն տակէն տընքտըն-  
քաա ա՛ ը՛, ը՛ (Բ): 3. Զարմանքի բացա-  
կանչություն՝ մի՞թե: Կընէգը ասմա.- Ը՛, ա՛  
մարթ, ին տու քը՛ցալ չը՛ս ծըմակը (2): 4.  
Դժգոհության ու ձանձրության բացական-  
չություն: Մարթը ծը՛րքը թափ ա տամ,  
թա.- Ը՛, տու կընէգ չըս տը՛ռնալ (2):

ԸԲԱԸ - տեն ԸԲԱՍ:

ԸԲԱՍՏ - տեն ԸԲԱՍՏ:

ԸԲԱՍՏ - տեն ԸԲԱՍՏ:

ԸԲԱՍԻ - տեն ԸԱԶԻ:

ԸԲԱՍՏ/ԲԱՍՏ/ԻԲԱՍՏ/ԸԲԱՍՏ/Ը-  
ԲԱՍՏ/ԲԱՍՏ/ԲԱՍՏ/ԸԲԱՍՏ/ԻԲԱՍՏ - կ.  
Անորոշ դերբայի հետ գործածվելով՝  
ցույց է տալիս դիմավոր բայով արտա-  
հայտված գործողության անմիջակա-  
նորեն նախորդած գործողություն, հենց  
որ: Էտ տըղան էնքան կ՛էղէցիկ ա ը-  
նիւմ, վը՛ր տը՛սնալըն ըբաստ սիրա-  
հարվւմ ա (ՅԺՅ, V, 39):

ԸԲԸԸՆԱՐԱՆԸ - տեն ԱԲԱԸՆԱՐ-  
ԱՆԸ:

ԸԲԸՆԱՐԵԼ - տեն ԱԲԱԸՆԱՐԵԼ:

ԸԲԸՍԱՆՈՒՅ - տեն ԲԸԶԱՆՈՒՅ:

ԸԲՐԱԶԱՎԱՆՆԻ - տեն ԱԲՐԱԶԱ-  
ՎԱՆՆԻ:

ԸԲՐԱԶՕՎ(ԱՆ)ՆԻ - տեն ԱԲՐԱԶՕ-  
Վ(ԱՆ)ՆԻ:

ԸԲՐՈՒԵՆ/ՈՒԲՐՈՒԵՆ - ած. Պատվի՝  
ամոթի զգացում ունեցող, բարոյական,  
առաքինի: ...Տը՛սնում ըն, վը՛ր ըբոռէն,  
հալալ, խըղճմըտանքավ մարթ ա, յօր ըն  
օնում, հաջի շինիւմ... (ՅԺՅ, VII, 204):

ԸԲՐՈՒԵՆ-ՅԸՅԻՆ - տեն ԸԲՐՈՒԵՆ:

ԸԲՐՈՒՈՒ/ՈՒԲՐՈՒՈՒ - տեն ԸԲՐՈՒԵՆ:

ԸԲՐՈՒՈՒ-ՅԸՅԸԼՈՒ - տեն ԸԲՐՈՒԵՆ:

ԸԲՕՐՆԻ/ՈՒԲՕՐՆԻ (ռուս. *уборная*) -  
գ. Արտաքնոց, պետքարան, գուգարան:  
Տանում ըն քըցում ուբօռնին, էն ա հըլա  
տել, փոշով ծածկել: Քամէն ծառերը թծ-  
գոմ կուրցըրալ ա (Բ):

- Թծգոմ կորչիլ - Խիստ փոշոտվել,  
փոշով ծածկվել: Էշը թըվիլ-թանվիլ ա ա-  
նում, թծգոմ կորչում (Բ):

ԹԾԶՆԸ - տեն ԹԾԶ՛:

ԹԾԶՆԸ - տեն ԹԾԶ՛:

ԹԾԶՈՒՏ - տեն ԹՈՒԶՈՒՏ՝:

ԹԾԹ/ԹԾԹՆԸ (գրք. թույթ) - գ. 1.  
Թթենու պտուղը՝ թույթ: Ասված խօսկ ա՛  
դարաբաղցուն օթը, թօթը, թիյին կօթը  
(Բ): 2. փխբ. Երեխայի փոքր առնան-  
դամ:

- Թթ Նըստել - Ուղեքը դնել թթով  
լցված խոր ամանի մեջ եւ որոշակի ժա-  
մանակ պահել՝ հողացավը բուժելու հա-  
մար: Դօխտուրը ասմա.- Զը՛գ վէջ մին  
ճար օքույթ չի, լ'ըհա հիշկան կարում ըս,  
թթ Նըստել (Ձ):

ԹԾԹԱՐ - տեն ԹԶՐԱՏ:

- Թթխար անել - Ամանը կիսով չափ  
լցնել: Մին թոնգի՛ կինավ թթխար ա  
անում, լը՛ր օնում, ք'իկամ հանօրը տօ-  
նը (Ձ):

ԹԾԹՆԸ - տեն ԹԾԹ:

ԹԾԹՈՒՏ/ԹԾԹՈՒՏ՝ - ած. Թույթ քս-  
ված, թթով կեղտոտված: Ջանիկ ըխճը-  
կերքը թօթը թըփէլանը լը՛տը թօթուտ  
չըղըրէթ՛ը տանում ըն կ'ը՛տը, լըվա-  
նում (Բ):

ԹԾԹԾԾ՛ - մակ. տեն ԷԾ (1):

ԹԾԹԾԾ՝ - ած. Թմբիկ, փափիկ:  
Թթթօջ խօխա յա (Բ):

ԹԾԼԱՄԱԶ - գ. 1. Մահակ, գավա-  
զան: Զօբանը թօլամազը լը՛ր ա օնում,  
տահանց հը՛տան ըղնում (Ձ): 2. փխբ.  
Անճոռնի կերպով մեծ, խոշոր: Թօլա-  
մազ ցակատ ա (Բ):

ԹԾԼԱՆ - 1. տեն ԹԹԼԱ: 2. ձ. Շան  
ձագին կանչելու ձայն: Թծլան, թծլան,  
լը՛ք ըստը՛ղ (Բ):

ԹԾԼՄԱՐ - տեն ԼՕՂՈՒՐ:

ԹԾԼՄԱՐԹԹԻՆ - տեն ԼՕՂՈՒՐԹ-  
ԹԹԻՆ:

ԹԾԻ (գրք. թույթ) - ած. Սեփն տվող,  
մուգ, թուփ: Յըրէվան խընէրէն մինին էլ

մին ախճիկ ա ինըմ, սէվ ըշկերավ, սէվ  
ունքերավ, թօխ կ'էղէցկուի (ԼՂԲ, 337):

ԹԾԻԱԸՍ - տեն ԹԾԻԱՌԻՍ:

ԹԾԻԱԸՐ - տեն ԹԾԻԱՌԻՐ:

ԹԾԻԱԸՐԷԼ - տեն ԹԾԻԱՐԷԼ:

ԹԾԻԱԹ - տեն ԹԾԻԱՏ:

ԹԾԻԱԾԱՍ - ած. Թուփ ծամեր ունե-  
ցող, թխածամ: Թօխծամ ախճիգ՛ ա իլան  
Սօնիշկա աքերը (Բ):

ԹԾԻԱԿԱ (թրք. *toka*) - տեն ԿՕՏԷ(1):  
Սար անին թօխկան լը՛տ ա անում, էտ  
թօրքէն էնքան թակում, վեր թան ծըմէ-  
լա քըցում ա (Ձ):

ԹԾԻԱՄԱՆ (թրք. *tokmak*) - գ. 1. տեն  
ԹԱԿ(1): ...Թօթը հընըմ ա, բաղերը  
թօխմախավ թափում ըն... (ՅԺՅ, V, 239):

2. Հաստ ձեռնափայտ: Սուղումուն դա-  
յուն թօխմախը մին փույթ կա (Բ):

ԹԾԻԱՄԱԶԱՐ - տեն ԹԾԻԱՄԶԱՐ:

ԹԾԻԱՊ (գրք. թույթ, թուխալ) - գ. 1.  
Ամա: Յէրգ'ինը՛ր թուխալերավ ծասկը-  
վալ ա (Բ): 2. Մառախուղ, մեգ: Թօխալը  
սաղ շէնը ծասկալ ա (Բ): 3. ած. Մա-  
ռախլապատ, ամպամած: Մին թօխալ օր  
Մանրիկն կընգանը Նըհը՛տ ք'իկամ ա  
ճը՛ղաց (Ձ):

- Թօխալ(ը) կօխել - Ամպերով՝ մառա-  
խուղով պատվել: Հանդերը թօխալ կօ-  
խալ ա (Բ):

- Թօխալ օրը տօն կըկա - Իրեն բա-  
վականաչափ առողջ՝ առույգ է գգում  
(ծերերի, հիվանդների մասին): Ախալերը  
ասում ա.- Ապուն հը՛տէ դանդ մէր անէլ,  
իզէն թօխալ օրը տօն կըկա (Ձ):

ԹԾԻԱՍ - գ. Թռչունների՝ ձվերի վրա  
նստելու եւ ձագ հանելու վիճակը: Թօխ-  
սէն վախտը հավ կա, վեր պէն չի օտում,  
ըստականալ ա (Բ):

- Թօխս ածել - տեն Թօխս տինիլ:

- Թօխս կ'ան/նըստել (գրք. ի թուխս  
նստել հատուց) - 1. Ձագ հանելու նպա-  
տակով ձվերի վրա նստել: Էտ սը՛վ հա-  
վը թօխս ա կ'ամ, տըսնըջօրս ճօտ տոն  
օնում (Ձ): 2. փխբ. Մի տեղ երկար  
նստել՝ մնալ: Հինչ ը՛ս թօխս լը՛կալ, խէ  
ք'իկամ չը՛ս ծեր տօն (Բ): 3. փխբ. Տնից  
դուրս չգալ, ամբողջ օրը տանը լինել:  
Կանթաքէղը էլ տոն չի կ'ամ շինամաչը,  
թօխս ա նըստալ (Բ):

- Թօխս տինիլ - 1. Ձագեր հանելու  
նպատակով ձվերի վրա նստեցնել՝ նա-  
խօրոք տեղ պատրաստելով: Մին դծնըմ  
էլ հավը թօխս ա տինըմ, ըսպասըմ մի-  
ջէվ ճօտերը տոն կ'ալը (ՅԺՅ, V, 458): 2.  
տեն Աղ տինիլ (2, 3):

ԹԾԻԱՏ/ԹԾԻԱԹ (գրք. թույթ) - գ. 1.  
Փայտանյութից եւ այլ նյութերից պատ-  
րաստվող բարակ թերթ՝ գրելու, տպելու,  
փայթաթելու եւ այլ կիրառությունների

համար, թույթ: Մին թօխտ ա յօր օնում,  
տըղէն յըրա նամակ կ'իրում (Ձ): 2. Այլ եւ  
այլ բովանդակություն ունեցող գրություն:  
Մէլիքը մին թօխտ ա կիրիս, տաս Պըլը-  
պուղուն, վը՛ր տանէ Թըղըվարթա քօխ-  
վէն տա (ԼՂԲ, 380): 3. Նամակ: Ըխճըկա-  
նը անա թօխտ ա ըստանում, վեր փը՛-  
սան ամբողջ կըլան ա շէնը (Բ): 4. Գրքի՝  
տետրի եւն թերթ: Կիրքան էրկու թօխտ  
ա պուք տամ (Բ): 5. Որեւէ կարգի պաշ-  
տոնական փաստաթուղթ, անցագիր,  
վկայական եւն: Մը՛ծ Նանգիրը տըրան քը-  
ռէ յա տամ, տոն քըցում, թօխտը տամ  
նընն տըղէն, վեր քիկի, Նըհաշ տա,  
վը՛սկէն ըստանա (Ձ): 6. ած. փխբ. Շատ  
բարակ: Մին թօխտ շօր ա կը՛ցալ, ծը-  
մընըվա կէսին տանան տոն լը՛կալ (Բ):  
ԹԾԻԱՐԷԼ/ԹԾԻԱԸՐԷԼ - Նք. տեն  
Թօխրավ տալ (ԹԾԻԱՌԻՐ-ի տակ):

ԹԾԻԱՌԻՍ/ԹԾԻԱԸՍ/ԹԾԻԱՍ/ԹԾԻԱՌԻՍ  
(պրս. *tuxm*, թրք. *tohum*) - 1. գ. Արուի սե-  
ռական գեղձերից արտազատվող մա-  
ծուցիկ հեղուկ, որ պարունակում է  
սերմաբջիջներ, սերմահեղուկ (հիմ-  
նականում գործածվում է հայիոյանը-  
ներում): 2. Ազգի՝ տոհմի՝ ընտանիքի  
սկիզբը՝ արմատը: Խըծըպիրթը՛ցուց  
թօխումը Ղարադաղան ա կ'ամ (Բ):

ԹԾԻԱՌԻՐ/ԹԾԻԱԸՐ - գ. Փայտե երկար  
կոթի վրա անց կացրած մի կողմը սուր  
կամ կացնաձեւ, մյուսը կեռ ու տափա-  
կացրած գործիք՝ գետնի վրա փորելու, քար  
քանդելու եւն համար՝ քլունգ: Կընէզը  
քիկամ ա պանի Նան թօխտը յօր օնում,  
մարթին կիրէզմանը քանդում, մէյըր  
տանում քըցում ծօրը... (ՅԺՅ, VII, 268):

- Թօխրավ տալ - 1. Քլունգով քան-  
դել՝ փորել: Թօխրավ ա տամ, էտ քարէ-  
րը տէն ածում (Բ): 2. փխբ. Տակից-  
գլխից՝ վայրիվերո խոսել: Խըրէզ՛ թօխ-  
րավ տօ՛, քը՛գ ըսկանօղ չի կա (Բ): 3.  
փխբ. տեն Թօխտը մաչը քըցիլ:

- Թօխտը մաչը քըցիլ - Իրար հետ  
թշնամացնել՝ կովեցնել: Թօխտը մա-  
չըն ա քըցում, ըտըրանց նըրնը անա  
պիժէնում (Ձ):

- Թօխտը տակըռավը կ'ան - 1. Մե-  
կին նեղացնել՝ վիրավորել: Ըսկէտըրը  
թօխտը տակըռավըն ա կ'ամ, հարթըն  
ք'իկամ ա հանանց տօն (Բ): 2. Գործը  
փչացնել՝ խանգարել՝ խոչնդոտներ  
ստեղծել: Մարթը լ'ավ փուլ ար ըշխը-  
դէս, կընէզ՛ը թօխտը տակըռավը լը՛-  
կալ, էլ կարում չի (Բ):

ԹԾԿ (գրք. թույթ) - գ. Թելերից՝ մազից  
եւն ոլորած փոքր պարան: Փանդերը  
տանրում ա, թօկավ կապում, շըլա-  
կում (Ձ):

- Թօկա փախած - Կարգուկանոնի չենթարկվող, սրիկա: *Էտ թօկա փախածը շինացուց շատ ա ք'օրտուղ տամ* (2):

ԹՕԿԱՍ - տեն ԹՕՂ(Է):

ԹՕՅՄԱԹ (թրք. *tömet* (մեղադրանք) -տեն ԹԸԲԸԹՕՅՄԱԹ:

ԹՕՅՈՒԲՕՅ (գրք. *թոի ու բոի* (վիհ, անդունդ) - գ. Բառս, խառնաշփոթություն, իրարանցում, պատերազմ են: *Էտ թօհուբօհեն վախտը Դըրդանը ուրնաց իլան-ջիլանը պեռնում ըն ծիթտանցը, քօջում ք'իկամ խընամունց շենումը վեր կ'ամ* (2):

ԹՕՂ(Է)/ԹՕ (գրք. *թող*) - 1. Թողնել բայի եզակի հրամայականը: *Տըղան հօրը ասմա.- Թօղե, ք'իկնիմ պիրիմ էտ ըխ-ճըկանը* (2): 2. Արտահայտում է ցանկություն՝ իղծ՝ պահանջ: *Թօղե մըհեն-գ'աց տենը էլ կըռք'վ չիկի* (Բ): 3. Արտահայտում է թույլտվություն՝ համաձայնություն: *Թաքավերըն ասում ա.- Յու վեր օգում ա, թօղե ք'իկի* (2): 4. Արտահայտում է հրաման՝ կարգադրություն: *Վե-գիրը ասմա.- Տա'րեք', թօղե ըտըրան քը-ցին տո'ւրման* (2): 5. Արտահայտում է զիջում՝ լավ, դե լավ: *Թօղե քու օգ'ածըտ իկի, հիկն ըմ ասում* (Բ): 2., վ. 6. Ապա, ուրեմն: *Թա ասածըս անիմ վեք, թօղե քուռանամ*: 7. Որ, որպեսզի: *Մին հաց ա տամ, թա.- Տար տօ' էն ըխմաղեն, թօղե տո'ւզըն ըստակե վեք* (2): 8. 2. Միայն թե, գոնե: *Թօղե հըրըդօթուն իկի, մընացածը հարկավեր չի* (Բ):

- Թօղ անել - 1. Ձեռքից արձակել, նետել, շարտել: *Ըտըրանա յետը էտ պառավ մարթը ճըպատը թօղ ա անըմ, քըցըմ օթախին մացտեղը* (ՅԺՅ, V, 334): 2. Արձակել, բաց թողնել: *Կավը ծըմակումը թօղ ա ընէս, իկը'ը կ'աս տօն* (2): 3. Թույլ տալ, թույլատրել: *Վեր շատ ըղա-ջանը ըն անում, օշափը ըտըրանց թօղ ա անում, վեր ուրանց քըվերը տը'սնան* (2): 4. Մի ումպով խմել (ոգելից խմիչքի մասին): *Բուդդանը էրկու ըստաքան թօթու արաղ ա թօղ անում, տո'ւս կ'ամ շի-նամաչ* (2):

- Թօղե ըտի իկի - Չեմ առարկում, համաձայն եմ: *Վեր շատ հօջանթ ըն տամ, կընէգ'ը լաց ա իկնում, թա.- Թօղե ըտի իկի* (2):

- Թօղե մեղքս մեր հանդիս քըջեղակը օտե - Յուրաքանչյուրի համար իր հայրենիքը քաղցր է: *Յիրը ասում ա.- Յէս իմ ուջաղաս տո'ւս կըվօղը չըմ, մեղքս թօղ մեր հանդիս քըջեղակը օտե* (ՆԱԲ, 66):

- Թօղե մեր ճընչիկս կ'իլը մը'գ օտե - տեն Փօրցանթ թանը անփօրց մաձնան լավ ա (ՓՕՐՑԻԼ-ի տակ):

- Թօղե փօրքս կօշտ իկի, հը'տաս տո'ւզըն ծեն տան - Կարեւորը եւությունն է, ոչ թե արտաքինը:

- Թօղ իկի - 1. Տեղից հանկարծակի շարժվել: *...Վեր վըխճարեն տըմակը թօղ ա իլալ, վը'ռը պեց ա իլալ* (ՅԱԲ, 15, 133): 2. Ցատկել: *Թաքավերին պուճուր տըղան թօղ ա ինում սիպտակ ծին նըստում, ք'իկնում...* (ՅԺՅ, VI, 137):

ԹՕՂԷԼ - տեն ԹՕՂՆԷԼ:

ԹՕՂ-ԹՕՂ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Թօղ-թօղ անել - 1. Շատ բաներ այս ու այն կողմ նետել՝ շարտել: *Էտ քարերը լօխ թօղ-թօղ ա անում, ածում ծօրը* (2): 2. Ցատկանել, տարուբերել, լիսխացնել: *Վըխճըրեն, տըմըկեն թօղ-թօղ ընէլավ ք'իկնում ըն* (Բ):

- Թօղ-թօղ իկի - 1. Ցատկոտել, թռչկոտել: *Կընէգը վը'ր սիրածու անում ա ըսկանում, տը'ղը թօղ-թօղ ա իկնում* (ՅԺՅ, VII, 282): 2. Ցատկանվել, տարուբերվել, լիսխալ: *Էնքան ք'օթ ա, վեր ք'իկնալիս ջանեն մըսերը թօղ-թօղ ա իկնում* (Բ):

ԹՕՂԻ (թրք. *toklu*) - գ. Մեկ տարեկան ջննած ոչխար: *Թօղ'ուն մէսը շատ քախճըր ա իկնում* (Բ):

ԹՕՂՆԷԼ/ԹՕՂԷԼ (գրք. *թողում*) - նք.

1. Թույլ տալ, թույլատրել՝ մի բան անելու: *Տահանը ուզը'ցալ ըն Բալլուվեն տանին խանեն հը'տե, ամմա մարը թօղալ չի* (ՆԱ, 33): 2. Որեւէ մեկին կամ մի բռնած բան բռնելուց դադարել: *Տըղան ջիլանը փըռնում ա, էլ թօղում չի, միկնը'վ վեր ծին դիկնանում ա* (2): 3. Որեւէ վայր իր ներկայությունից ազատել: *Տըղան ըսկանում ա, թա էտ հիկն ա նըշանակում, թօղում ա, կօրջում* (ՅԱԲ, 15, 26): 4. Մի տեղ գնալով՝ մեկին՝ մի բան իր հետ չտանել՝ չվերցնել: *Ծին թօղնում ա, իկը'ը վը'ննավ ք'իկնում* (2): 5. Մեկին լքել: *Կընգանը թօղալ ա, էտ դըխալին նըհը'տ փըսակվալ* (Բ): 6. Դադարեցնել, ընդհատել, անտեսել, անուշադրության մատնել: *Կօրծը թօղնում ա, ըսկըսում էտ կընգանը նըհը'տ սիլի-թիլի անէլը* (2): 7. Հետաձգել: *Կօրծը վեր թուղը'ցեր էք'սըվա օրեն, ամմալ չի կ'ալ* (Բ): 8. Հանձնել, ավանդել: *Տօնը-տը'ղը թօղից ախպօրը, իկը'ը քօջից* (Բ): 9. Նշանակել, դնել: *Թաքավերը մին դարավուչի յա թօղնում ըտը'ղ, վեր տանը յէշի* (2): 10. Պահպանության՝ խնամքի՝ հոգատարության հանձնել՝ վստահել: *Մ ջի-հիլեն, էտ վեր քօջումը էրնիշ յէրգ'իրեն, ծէր հօրանցը, մօրանցը, ծէր Դարաքաղը հիւր ը'ք թօղնում* (Բ): 11. Հնարավորություն տալ՝ ընձեռել, արգելք չհանդի-

սանալ: *Աղդամը մերունը վեր ըզաղալ ըն, թօղալ ըն, վեր թօրքերը տո'ւս կան* (2): 12. Կենդանի պահել, չսպանել: *Լօխճին կըտօրում ըն, թօղում հենգ հօքու, վեր ուրնաց հը'տե հաց թըխին* (2): 13. տեն Թա'րգ՝ անել: 14. Որեւէ նպատակի համար պահել՝ խնայել: *Նը'ղ օրվա հը'տե պատառ փուլ ա իլալ թօղած, ախճիգը էն էլ ա խըլալ* (Բ): 15. Պահել, չկտրել, չհեռացնել: *Ջիհիլեն մըրօթ ըն թօղալ* (Բ): 16. Իր պատերով հեղուկն անցկացնել՝ բաց թողնել՝ չպահել: *Կօլան ճաքալ ա, ծիւր ա թօղնում* (Բ): 17. Հետք պահել, մի բան որպես հետեւանք ունենալ: *Ըտըրանը էտ քարեն յըրա նըշան ըն թօղնում, վեր յը'տնան կարին տը'ղը գիղան* (2):

ԹՕՄՓ - տեն ԴՕՄՓ:

ԹՕՄՓԱԹՕՄՓ - տեն ԴՕՄՓԱ-ԴՕՄՓ:

ԹՕՄՓԱՏԸԸ - գ. Կռիվ, կտտորած: *Էտ թօմփատըգեն վախտը շատ մարթ ա ըսպանվում* (2):

ԹՕՅԲԱԾԻ (թրք. *toybaşı*) - տեն ՄԱԿԱՌԱԾԻ:

ԹՕՆԹԸԼԱՆ - տեն ԹՕՆԹԸՈՒԳ:

ԹՕՆԹԸՈՒԳ - ած. Թմբիկ եւ գեղեցիկ: *Թօնթըռիգ՝ խօխա յա* (Բ):

ԹՕՆԹԸՈՒԾ - տեն ԹՕՆԹԸՈՒԳ:

ԹՕԾ<sup>1</sup> - գ. 1. Այտ՝ թուշ: *Էտ խուխեն թօշան մարը կըծում ա, լաց ա իկնում* (2): 2. փխբ. Հետոյքի փափուկ եւ ուռուցիկ մասերից յուրաքանչյուրը: *Վը'ռեն թօշին վեր քացե յա տամ, տը'ղը կ'իպտում ա* (2):

- Թօշան արնոն կաթել - Առողջ լինել, կարմիր թշեր ունենալ: *Պայծառ բիբին ըսօր-էք' ուց ութասուն տըրը'կան ա, ամմա թօշան արնոն ա կաթում* (2):

- Թօշան կըտըրել, պիրանեն տեմ անել - տեն Վը'ռան կըտըրել, ըռըխեն տեմ անել:

- Թօշեն մին թաննափը հալալ ախճիգ՝ ա - Ասում են երիտասարդ հասակում այրիացած կանանց մասին՝ շատ քաղել է:

- Թօշերը խընձօր - Ուռուցիկ՝ լիքը այտեր ունեցող: *Թօշերը խընձօր ախճիգ՝ ա* (Բ):

ԹՕԾ<sup>2</sup> - 1. տեն ԱՉՈՒ: 2. տեն ԹՕԲ-(Բ)ՈՒԾ:

ԹՕԾ<sup>3</sup> - տեն ԹՕՐԱ:

ԹՕՐ՝ (հ.ե. *\*(s)ter-* (անմաքուր հեղուկ) - գ. Անձրել: *Արաշտ տարեն, վեր վանքեն քարերը լըղըցըրալ ըն, թօռ ա յէկալ* (ՆԱԲ, 89):

- Թօռան փախչիլ, կըրկուտեն տակը ըղնել - Որեւէ վտանգից ազատվելով՝ ավելի մեծ վտանգի ենթարկվել:

- Թօռը կըկա, կըճիրի - Ասում են

ծույլ մարդկանց հասցեին, ովքեր հույսը դնում են բնության վրա: *Կիման սաղ օրը էն ա դինջընայիս, խէ բի՞ղի կործ ա- նէ. թօռը կըկ'ա, կըծի՞րի բօստանը* (2):

- Թօռ թակել - Անձրեւի տակ երկար մնալ: *Էնքան թօռ թակալ ա, էտ փնդերը փըթալ ա* (Բ):

- Թօռ թակած, արը՛վ էրած - *տէն* Ա- րը՛վ էրած, թօռ թակած:

- Թօռու պըրանէլ - Անձրեւային եղա- նակներ սկսվել: *Աշունքը յը՛կալ, թօռու պըրանից, էլ կըրէցէնք վէջ, թա բուստընէն պիհինք, պըրծըցընինք՝, մընաց կ'ըրունքէն* (Բ):

- Թօռ օտել - *տէն* Թօռ թակել:

- Թօռ օրը կօլատ յը՛ր կալ, արը՛վ օ- րը՝ չօխատ - Եղանակը խաբուսիկ է լի- նում, պետք է պատրաստ լինել: *Թօռ օ- րը կօլատ յը՛ր կալ, արը՛վ օրը՝ չօխատ. մին էլ տը՛սեր արը՛վ օրը յերգ'ինքը մըթ- նըվից, թօռը նի կալալ* (2):

- Թօռ օրը հըվէրէն ճուր տըվօղ շատ կինի - Անհրաժեշտություն՝ կարիք չլի- նելու դեպքում օգնողները շատանում են:

ԹՕՐ<sup>2</sup> - *տէն* ԹՕՐ-ԹՕՐ:

ԹՕՐ<sup>3</sup>/ԹՕՐ<sup>2</sup> (թըք. *tor*) - գ. 1. Ձուկ որ- սալու ցանց՝ ուռկան: *Մին օր կ'էտըմը թօռը քըցած ծոկուն փըռնէլիս մին շատ դանձանգ՝ ծոկըն ա փըռնըմ* (ՀԺՀ, V, 78): 2. Երեսի քող: *Էտ կընէգ'ը թօռը յը՛տ ա քաշոմ, իրը՛սը պէնում, լօխ մընամ ըն մաթ մընացած...* (2):

ԹՕՐ<sup>4</sup> - *տէն* ԹՕՐՆԸ՝:

ԹՕՐԱԿ - գ. Բնակավայրի ծայրա- մասային թաղ, փողոցի թաղ: *Ինք'ըն էլ քըղաքէն թուռակըմըն ար ըպըրէս* (2):

ԹՕՐԸ - *տէն* ԹՕՐՆԸ:

ԹՕՐ-ԹՕՐ (հ.է. \*ter- (քընուշ, թույլ) - ած. 1. Լավ թխվելուց մեջը փուչ-փուչ, ու- ռած (խմորեղենի մասին): *Թօռ-թօռ հա- ցի ա* (Բ): 2. Թարմ, մատղաշ: *Թօռ-թօռ փիրիէտ ա* (Բ):

ԹՕՐՆԸ՝/ԹՕՐ<sup>4</sup> (գրք. թռն) - գ. Ջա- վակի զավակը՝ տղայի կամ դստեր զա- վակը տատի ու պապի համար: *Էտ պը- ռավէն մին թռն ա ինոմ, ինքըն էլ տը- դա* (ՀԺՀ, V, 157):

ԹՕՐՆԸ<sup>2</sup> - *տէն* ԹՕՐՆԸ:

ԹՕՐՆԸՍԲԸՆՈՒՄ - *տէն* ԹՕՐՆԸՍ- ԲԸՆՈՒՄ:

ԹՕՐԶԻ/ԹՕՐԶԻ (թըք. *torcu*) - գ. Ուռ- կանով ձուկ որսացող անձ, ձկնորս: *Էն մը՛ծ թօռչուցը յէշիլալ՝ թօռը ճուրըն ա քըցըմ, մին քանի ծոկըն փըռնըմ, տօն պը՛րըմ* (ՀԺՀ, V, 229):

ԹՕՐ ՈՒ ԹԱՅ - *տէն* ԹՕՐՈՒԹԱՅ:

ԹՕՐՈՒՄԲՈՒՆՈՒՄ - *տէն* ԹՕՐՆԸՍ- ԲԸՆՈՒՄ:

ԹՕՎԱԼԱ - *տէն* ԹՕՎԱԼԱ:

ԹՕՎԱԼԱ/ԹՕՎԱԼԱ/ԹԱԼՎԱ (արաբ., թըք. *tavla*) - գ. 1. Անասունների գոմ, ա- խոռ: *Մարթին օխըն տալանը յէտը յէր ա կէնում, նի մըննում թօվան, մին լան ծի յօր օնում, տոն կ'ամ* (ՆԼՂԺԲ, 25): 2. *փխբ. տէն* ՏՈՒՐՄԱՆ(1): *Կ'օղէն փըռնում ըն, տանում կօխում թօվան, էրկու տա- րէ պահում* (2):

ԹՕՎԱԼԱՄԻՇ - *տէն* ԹՕՎԱԼԱՄԻՇ:

ԹՕՎԱԼԱՄԻՇ/ԹՕՎԱԼԱՄԻՇ/ԹԱԼՎԱ- ՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Թօվամիշ անել - 1. Անասունները գոմի մեջ պահել՝ փակի տակ պահել: *Սաղ ծըմը՛նը հիյվընէն թօվամիշ ըն անում, մինջը՛վ կ'արունքը կ'ա* (Բ): 2. *փխբ.* Բանտարկել: *Ըտի էտ օխըբազէն թօվամիշ ըն անում* (2): 3. *փխբ.* Բռնել, ճանկել, խլել: *Մըհէգ վէր կըրիգիստ ա, մոնշտարի ըն թօվամիշ անըմ, կըսըկ'ի- նու ապրանք տամ...* (ԶՏ, Բ, 94): 4. *փխբ.* *տէն* Ըրամակ քըցիլ:

ԹՕՎԶԻ - ած. Թովիչ, գրավիչ, հմա- յող: *Ըշկըսըքըրտ թօվիչ, օփսունալ ըս, ալ ախճի* (ԼՂԲ, 101):

ԹՕՎԶԻ - Գործածվում է կապակ- ցության մեջ:

- Թօվիչ անել - Յարկաքաշիում կա- տարել: *Տը՛ղ յըրա տը՛մէք, թօվիչ ըրէք, իրէք տը՛ղ պէ՛ժին ըրէք...* (ՀԲ, 353):

ԹՕՎՈՒԼ - *տէն* ԹՕՎՈՒԼ:

ԹՕՐ՝ (գրք. թուր) - գ. 1. Կտրելու եւ խոցելու պողպատյա սառը զենք, թուր: *Էտ տըղան թօրավը մին հէնց թըխըմ ա, վը՛ր էտ դօվին էն մընացած իրէք կըլծ- խը մին դօնըմ ա կըտըրմ* (ՀԺՀ, V, 18): 2. *փխբ.* Խոզի կնճիթ: *Խօզ'ը վէր մէհէտ թօրավը թըխում ա, էտ պատը ցըրը՛վ ա կ'ամ* (2):

- Թօրան արոն կաթել - Ահեղ՝ վա- րագ՝ արյունաբերու լինել: *Էտ թաքավէ- րին թօրան արոն ար կաթում, լօխ նը՛ս- տա վախում ին* (2):

- Թօրէն ըմը՛խը տալ - *տէն* Թօրէն տակը տալ:

- Թօրէն կըտըրածը կըլ՛ըվանա, լիւզ- վին կըտըրածը լըվանալ չի - Խոսքով հասցրած վիրավորանքը ավելի ծանր է, քան ֆիզիկականը:

- Թօրէն համ առաշկը կըտըրել, համ քամակը - *տէն* Թօրը աչ էլ կըտըրել, ծէխ էլ:

- Թօրէն մաչը քըցիլ - Իրեն եւթար- կեցնել: *Թաքավէրը կըմը՛վ ա յը՛ր կէ- նում, հըրը՛վան ժուղովուրթէն թօրէն մաչը քըցիլ* (2):

- Թօրէն սօր վախտը - Ուժերի՝ իշ-

խանության ծաղկուն շրջանը: *Նախա- գէն թօրէն սօր վախտըն ա ինոմ, ախ- պօրը տինոմ ա պահէստապէտ* (2):

- Թօրէն տակը տալ - Թրով շատ հարվածել, կոտորել: *Տըղան թօրէն տա- կըն ա տամ էտ դէվէրէն, ըխճըկանը ը- գաղում* (2):

- Թօրը աչ էլ կըտըրել, ծէխ էլ - Ու- ժեղ՝ ազդեցիկ լինել, ինչ ուզել, այն էլ ա- նել: *Ըտըրա մին վախտ ա իլան, վէր թօ- րը աչ էլ ա կըտըրալ, ծէխ էլ* (Բ):

- Թօրը կըտըրել - Խոսքն անցնել, ա- մեն ցանկություն կատարել կարողա- նալ: *Կօզի չօբան ար, ամիա թօրը կըտը- րում ար շէնումը* (2):

- Թօրը հինչ վէր կարէ վէջ կըտըրէ, հացը կըկըտըրէ - Բռնությամբ՝ հար- կադրաբար չլուծվող հարցը խաղաղ ճանապարհով՝ հյուրասիրությամբ հնա- րավոր է լուծել:

- Թօրը սօր - *տէն* Խուպը սօր:

- Թօրու նըման կըտըրել - 1. Շատ սուր՝ հատու լինել: *Էս ցակատը թօրու նըման կըտըրում ա* (Բ): 2. Շատ ցուրտ լինել (եղանակի մասին): *Յավան թօրու նըման կըտըրում ա* (Բ):

- Թօր քաշիլ - Թրով սպառնալ: *Վէր թօր ա քաշիլմ, էտ մարթը ծէնը կըտը- րում ա* (2):

ԹՕՐ<sup>2</sup> - *տէն* ԹՕՐ<sup>3</sup>:

ԹՕՐԱՍԱՆ - *տէն* ԱՋԿ-ԾՈՒԴ:

ԹՕՐԲԱ/ԹՕՐԲԱ (թըք. *torba*) - գ. Փոքր պարկ: *Վէր էտ կ'իլը ծընըմ ա, տըղան մինը յօր ա օնըմ, քըցըմ ուրան թօրբան* (ՀԺՀ, V, 54):

ԹՕՐԷՆ - *տէն* ԹՕՐՈՒՆ:

ԹՕՐԸ - *տէն* ԹՕՐՆԸ:

ԹՕՐԹԱՓ - *տէն* ՏՈՒԶՆԸ:

- Թօրթափ անել/լինիլ - Սաստիկ քաղ- ցած լինելով՝ ուսելիք տեսնելիս խիստ փափագել: *Կ'իլը վըխճարէն սոնրոն վէր տը՛սնում ա, թօրթափ ա անում* (2):

ԹՕՐ-ԹՕՎԱԼԱՊ - գ. 1. Ջենք ու գրահ, սպառազինություն: *Էտ թաքավէրին թօր-թօվանգ'ը շատ ա ինոմ, ըտըրա հը՛տէ էլ հըրէվան թաքավէրներէն թէ- թա յա տամ* (2): 2. *փխբ.* Բռնություն: *Թօր-թօվանգ'ալ ամմէն պէն չի, վէր ան- մալ ա կ'ամ* (Բ):

- Թօր-թօվանգ՝ կապել - 1. Ջինվել, զենք վերցնել: *Մին օր էտ թաքավէրը թօր-թօվանգ'ը կապում ա, յէր ընում ծին, ք'ինում վէրսի* (ՆԱԲ, II, 18): 2. Կռվի պատրաստվել: *Թաքավէրը հըրամանը ա տամ, վէր թօր-թօվանգ' կապին...* (2):

ԹՕՐԾ (գրք. թորիծ) - գ. 1. Գերանի հաստ գլխին արված անցք, որից կապ են գցում քաշելու համար: *Չաթուն թօր- ծավը անց ըն կըցընում, քաշ տամ էտ կ'էրանը պիրում հայաթը* (2): 2. Ուղղան-

կյուն ձեռով կտրված՝ փոս գցած տեղ փայտի՝ առարկայի վրա, որի մեջ հազգնում՝ ագուցում են մի այլ փայտ՝ առարկա: Փանդը կոխում ըն թործը, պինդըցընում (Բ):

ԹՕՐԾԵԼ - նբ. 1. Գերանի՝ փայտի վրա անցք՝ թործ փորել: *Կէրանը թործում ա, թործակապը կապում, յըզնէրէն լըծում, պիրում (Ձ):* 2. Փայտերի՝ առարկաների կտրվածքները իրար վրա դնելով՝ միակցել, ամրացնել: *Սնթնումը կօտըրում ա, պիրում ըն թործում (Բ):*

ԹՕՐՄ - տեն ԹՕԽՈՒԲ:

ԹՕՐՆԸ/ԹՕՐՆԸ՝/ԹՕՐԸ/ԹՕՐԸ - դ. Ուր՝ արտահայտում է հարցում գործողության ուղղվածության՝ շարժման նպատակակետի մասին: *Վէշ մինը գնդում չըն՝ էտ մարթը թորն ա՝ քննում (Ձ):*  
- Թորնը յէշում ըս - Ամեն տեղ, ամենուր: *Թորնը յէշում ըս, քորքքանդ տը՝ ռած տընէր ա. բալան թաղիմ մէզ էս օրը քըցծողէն (Բ):*

ԹՕՐՆԸՍԵՐԸՆՈՒՄ/ԹՕՐՆԸՍԵՐԸՆՈՒՄ/ԹՕՐՆԸՍԵՐԸՆՈՒՄ - գ., ած. Անճարակ, խեղճ ու կրակ (մարդ): *Թորնըքը՝ ընում մարթ ա, ծը՝ թքավը վէշ մին պէն չի կ'ամ (Բ):*

ԹՕՐԶԻ - տեն ԹՕՐԶԻ:

ԹՕՐՍ/ԹՕՐՑ՝ (գրք. թործ) - գ. Թործել, թործում: *Պիրնոր թորսը վեր պըրծընում ա, ըմընէք՝ թորնան տնու ա տամ (Ձ):*

ԹՕՐՍԵԼ (գրք. թործել) - նբ. Կավից կամ մետաղից պատրաստած առարկաները ուժեղ կրակի մեջ այրել՝ կարծրություն տալու համար: *Կը՝ դէ ըմընէք՝ վեր թորսիս վէշ, կըճաքէ (Բ):*

ԹՕՐՈՒՄ - տեն ԹՕԽՈՒԲ:

ԹՕՐՈՒՆ - տեն ԹՕԽՈՒԲ:

ԹՕՐՈՒՍԵՐԸՆՈՒՄ - տեն ԹՕՐՆԸՍԵՐԸՆՈՒՄ:

ԹՕՐՓԱՂՅՈԼԻ - գ. Յողե ճանապարհ: *Էտ թորփաղոյին հըսնըմ ար մինչը՝ թաքավերին բաղը (Ձ):*

ԹՕՐՔ (արաբ., թրք. türk) - գ. 1. Թուրքիայի հիմնական ժողովրդի անվանումը կամ այդ ժողովրդին պատկանող անձ: *Էլ պարսիկ, էլ թորք սը՝ ռոտ չըն անում էտ սըմթէրումը ըրվան (ԱԱ, 39):* 2. Աղբեջանի հիմնական ժողովուրդը կամ այդ ժողովրդին պատկանող անձ: *Փնդուկվա թորքէրը շընըմուրտառ մարթիք՝ ըն իլնի (Բ):* 3. ած. փխբ. Անխիդճ, դաժան, վայրագ: *Թորք ը՛ս, էտ մարթին խէ տանջում ը՛ս (Բ):*

- Թորքա փախած - Երկյուղած, մտաքրիվ: *Թորքա փախած ը՛ս, անէ, տը՝ սնանք՝ հինչ ա պըտահալ (Բ):*

- Թորքէն նըհը՛տ հընգըրթուն ըրա, մըհակը ծը՝ թքատ վեր մէլ տինիլ - տեն Շանը նըհը՛տ հընգըրթուն ըրա, մըհակը ծը՝ թքատ վեր մէլ տինիլ (ՇՕՆ-ի տակ):

- Թորքէն չըբէլանը թակիս վէշ, աշնա չի տը՛ռնալ - Թուրքի հետ չպետք է մեղմ վարվել:

- Թորքը ասալ ա՝ հային յը՛տէ խըլըքը իմը բիդնար - Ասվում է հայի՝ մի բան անելուց հետո ավելի խելոք դատելը նկատի առնելով:

- Թորքը մին պէն չի, ամմա խօսկերը վը՛սկէ յա - Ասվում է՝ նկատի առնելով թուրքական առած-ասացվածքների խորիմաստությունը:

- Թորքու գառի/կաճի - գ. 1. Թրքուհի, աղբեջանուհի: *Թորքէն կաճին կըրէս չի հըսցընէ, լ'ըհա թըխածը թօղ ա ընէս, քըցիս սուփրէն յըրա, հայէրը բնորդն ուտէս ըն (ԲԶԲ, 179):* 2. Տգեղ՝ այլանդակ կին: *Ըտըրան էլ ինում ա մին կ'էշ կընէգ՝՝ մին թորքու գառի (Ձ):*

- Թորքու թըրմասկ - Տգեղ՝ այլանդակ երեխա: *Մարթը ասմա - էտ թորքէն թըրմասկը տար կուրցըրոն, յը՛ս ըտըրան հըրթօթուն չըմ անէլ (Ձ):*

- Թորքու մախլավա տը՛ռնալ - Զրքըվել, պատառուկվել (շորի մասին): *Էնքան կ'ը՛ցալ ա, էտ պէնջակը թորքու մախլավա յա տը՛ռալ (Բ):*

- Թորքու մըթիլ - Ճմրթված՝ կեղտոտ անկողին: *Էտ թորքէն մըթիլումը հունց ը՛ք քօն ինում (Բ):*

- Թորքու մօլլա - Թուրքերենին՝ աղբեջաներենին գերազանց տիրապետող հայ: *Տիկրանը թորքու մօլլա յա, հանց թուրքերեն խօսում ա, վեր ըսկի թորքը ընդի կարէլ չի խօսէ (Ձ):*

- Թորքու տավար - Յոգնած՝ ուժասպառ եղած մարդ: *Թորքու տավար ը՛ս, խէ տը՛հատ տոնրոն չը՛ս կ'ամ (Բ):*

- Թորքու ուստա - Անորակ աշխատող վարպետ: *Թորքու ուստա յա, իզէն հինչ պա՛տ բիդի տինի (Բ):*

- Թորքու փը՛սա - Ուշ-ուշ հայտնվող բարեկամ: *Աքէրը ասմա - Մարյանը ինձը՛տէ քուր չի, թորքու փը՛սա յա. տարանը մէհէտ էլ չի կ'ամ (Ձ):*

ԹՕՓ (թրք. top (գնդակ) - գ. 1. Խաղաղնդակ: *Խօխէնք՝ թօփավը խաղ ըն անում (Բ):* 2. Որոշ քանակությամբ կտորի փաթեթ: *Էն շօլկի կըտօրներան մին լնվ ռանգ՝ի թօփ ա յօր օնըմ, կարըմ... (ԼԲԲ, 328):* 3. Ասեղների փաթեթ՝ խրճակ: *Էտ դանջանգ՝ ախճիգ՝ մին մըկրատ, մին խունձօր, մի թօփ ասը՛դ տընէս ա տինիս տըղէն ըմըշկին (ՅԲ, 341):*

4. Սայլի՝ կառքի՝ մեքենայի անիվ: *Ըրբան էրկու թօփ օնէ, փայտօնը՝ չօրք՝ (Բ):* 5. Յրանոթ, թնդանոթ: *Պառավը թաքավերէն հը՛տէ պիրիս ա լնվ, թան Արսմանլարը քանէ թըրփանգ՝, թօփ, յա ծրնուշ պէնէր օնէ (ՅԺՅ, V, 675):* 6. ած. Փնջված, խմբված: *Էն ռանգ՝-ռանգ՝ թօփ վըրթերան շաղ տըղին փունջէրավ... (ՅԺՅ, V, 178):*

- Թօփ էլ տըրաքէ - Ինչ էլ լինի, չնայած խանգարող ցանկացած հանգամանքի: *Տըղան ասում ա - Թօփ էլ տըրաքէ, յը՛ս էտ ըխճըկանը բիդի օգ՛իմ (Ձ):*

- Թօփէն տըմանալ - Սպառնալիքները հանդուրժել: *Կընէգ՝ ըն ա, վեր կարում ա Ղազմիրին թօփէն տըմանա (Բ):*

- Թօփու գնլլն - Թմբիկ եւ ամրակազմ երեխա: *Էտ խօխան թօփու գնլլն յա (Բ):*

ԹՕՓԱԶ/ԹՕՓԱԶ (ռուս. monaz, ֆր. topaze, հուն. topazos) - գ. Թանկագին քարի տեսակ: *Քու մըտանիտ ալմազ ա, իմըն էլ խալիս թօփազ ա... (ԼԲԲ, 12):*

ԹՕՓԱԼ՝ (թրք. toplama) - ած. 1. Կարճ ու հաստիկ: *Թօփալ ախճիգ՝ ա (Բ):* 2. Կլորավուն, գնդաձեւ: *Թօփալ կարտօշկա յա (Բ):* 3. տեն ԲՕԲ՝:

ԹՕՓԱԼ՝ (թրք. topal) - տեն ԶՕԼԱԽ:

ԹՕՓԷ - գ. Գնդակախաղ, ֆուտբոլ: *Յինչ ասիս՝ խաղ ընք ըրալ՝ քըսկըրէնք՝ի, թօփէ, բաբաղուշի (Բ):*

- Թօփէ տալ - Գնդակով խաղալ, ֆուտբոլ խաղալ: *Խօխէնք՝ սաղ օրը թօփէ յըն տամ (Բ):*

ԹՕՓ-ԹԸՎԱՆԳ՝ - տեն ԹՕՐ-ԹԸՎԱՆԳ:

ԹՕՓ-ԹՕՓԽԱՆԱ - տեն ԹՕՐ-ԹԸՎԱՆԳ(1): *Էս թաքավերը յէր ա կէնում, թօփ-թօփխանա յէր կալած, կ'ամ... (ՅԱԲ, 15, 50):*

ԹՕՓԼԱՍԱ (թրք. toplama (հավաքում, ժողովելը) - ած. Շտապ եւ անորակ կատարված: *Թօփլամա կօրծը կօրծ չի (Բ):*

- Թօփլամա անէլ - Շտապ եւ անորակ կատարել: *Ուստան թօփլամա յա անում, էտ տանը պօլէրը մին օրումը թըխում (Ձ):*

ԹՕՓԼԷԳ՝ - տեն ԹՕՓԱԼ:

ԹՕՓԽԱՆԱ (թրք. topxane) - գ. Զենք պահելու տեղ, զինանոց: *...Շօշկա դալին քուչէքը մարթավ լիզըն ար. վը՛րը քըզարան ար կ'ամ, վը՛րը թօփխանան, վը՛րը ժաման... (ՅՏ, Ա, 1):*

ԹՕՓԿԱԽ - տեն ԲԱՆԼԱԿ: *Աշօտըն ա Տիկրանը սերավ հընգերունը ըն ըլալ, մին տեղ հաց ուտէիս, համ էլ ձորնոր միշտ թօփկ'ախ, ձորնոր ք'անլնգ՝ կ'այիս (ՆԱԲ, 136):*

ԹՕՓՈՒԶ/ԹՕՓՈՒԶ (թրք. *topuz*) - գ. 1. Մեծ մահակ, լախտ, գուրգ: ...Նի յա մըննում մաչը, տէսնում մին օշափ, թօփուզը ծեռքին, յէկավ (ՅԺՅ, V, 274): 2. Գնդածեւ պտղազխով փշոտ բույս: Էշը էտ թօփուզը հախռում ա, օտում (2):

ԹՕՓՈՒՂ/ԹԵՓՈՒՂ (թրք. *topuk* (կրոնկ, գարշապար) - գ. Ոտքի թաթից վերեւ երկու կողմից դուրս ցցված ոսկորները՝ կոճ, ճան: Թօփուղը նի յա կամ քարէն, փիս ցավ ա տամ (Բ):

- Թօփուղ տալ - Քալելիս երկու ոտքերի կոճերը իրար քսել: ... Էն պառազ մարթը թօփուղ տալավ քիսըմ ա... (ԶՏ, Բ, 85):

ԹՕՓՈՒԶ - տէս ԹՕՓՈՒԶ:

ԹՕԶ (գրք. թոք) - գ. 1. Մարդու եւ ողնաշարավոր կենդանիների շնչառության գործարան, թոք: Կընգանը էրկու տըղան կ'ամ ըն, մինը կըլծիսըն ա օտըմ, մինըն էլ՝ թօքը (ՆԼՂԺԲ, 8): 2. տէս Սըվ թօք:

- Թօքան կէնալ - Մեկին շատ սիրել:

Օգում ա, թա թօքան կէնա էտ խոխէն (Բ):

- Թօքէն տալ - 1. տէս Թանչին տալ:

2. Ուժեղ հազալ: Մըրսալ ա, թօքէն ա տամ (Բ):

- Թօքը թօքան տալ - տէս Թօքան կէնալ: ...Թօքըս թօքատ տամ, յա՛ր ջան, տուվ ըս իմ մը՛շկիս սարը (ԼՂԲ, 84):

- Թօքը մաշկան կէնալ - տէս Թօքը նի կէնալ:

- Թօքը նի կէնալ - 1. Խիստ ջղայնանալ՝ զայրանալ: Ըտըրան վէր ըսկանում ըմ, թօքըս նի յա կէնում (Բ): 2. տէս Թօքը ցըմաքէլ: Թօքըս նի յա կացալ, պատառ ճուր տօ՛ (Բ):

- Թօքը նի կըցընէլ - Խիստ ջղայնացնել՝ զայրացնել: Վէզիրը մընէլ ըստը՛ղ ա հոնկըվէրէն թօքը նի կըցընէս... (ՅԲ, 343):

- Թօքը նի մընէլ (միսին) - Շատ սիրվել, իրեն սիրել տալ: Էտ խօխան էնքան դաշանգ՝ ա ինոմ, վէր լօխճին թօքըն ա նի մըննում (2):

- Թօքը պուք տալ - Սաստիկ հուզել: Էտ խօխան էնքան լաց իլնվ, լափ թօքըս պուք տըվավ (Բ):

## Ժ

ԺԱՂՆԻ (ռուս. *жадный*) - տէս ԸՍԿԸՊՕՅ:

ԺԱԺ՝ՇԱՆԺ/ՍԱՆԺ/ՇԱԶ՝ՍԱԶ՝ (գրք. շարժ) - գ. Երկրաշարժ: Ժանժին վախտը յը՛խծէն էլ ա պարան յը՛կալ (2):

- Ժանժ կ'անլ - 1. Շարժվել: Սոթթուկին թըխում ըն, տը՛սնում ժանժ ա կ'ամ (2): 2. Ցնցվել, երերալ: Տըղան ա օշափը վէր կըռը՛վ ըն անըմ, սաղ յերգ'իրը ժանժ ա կ'ամ (2): 3. Շտապել, փութալ: Կընէգ'ը ժանժ ա կ'ամ, վէր խօրնա՛ր իփի, մարթին հը՛տէ հանդը հաց տանէ (2):

- Ժանժ տալ - 1. Շարժել: Մըղակը ժանժ ըն տամ, տը՛սնում կապ (2): 2. Ցնցել, թափահարել: Օշան տանում ա, հիշքան ժանժ ըն տամ, օշը կըլծիսը չի կամ (2): 3. Շտապեցնել: Մարթը կընգանը հիշկան ժանժ ա տամ, էլիս յըտանըմ ըն (Բ):

ԺԱԺ՝ - տէս ԺԵԺ:

ԺԱՆԸՆ - տէս ԺԵՆԸՆ:

ԺԱՆՈՏ - տէս ԺԵՆՈՏ:

ԺԱԿԷ(Ր)Թ (ռուս. *жакет, фр. jaquette*)

- գ. Կարճ վերնագգեստ: Մին ժակէրթ ա կ'ը՛նըմ, տոնս կ'ամ (2):

ԺԱՂԱ - 1. տէս ԺԸԺԸՂԱՂԱ՛(1): 2. ած. Ծամածռություններ անող: Ժաղա մարթին անա բիդի փախչիս (ԱԲԲ, 32):

- Ժաղա անել - տէս Ժըժըպապա անել (1):

ԺԱՄ (գրք. ժամ) - գ. 1. Ժամանակի չափման միավոր, որ հավասար է վաթսուս րոպեի, ժամ: Մին ժամանը յը՛տը

յէշոմ ըն, տը՛սնում տըղան սարէն քըմական տոնս յը՛կալ (2): 2. Ժամանակ, պահ: Էտ ժամէն ըխպիրին միշտ հէրթ ա ինոմ (Բ): 3. Մեկ ժամ տեսողությամբ ժամանակի չափ: Ժամի իրը՛քէն տը՛ղ ըն հըսնում (Բ): 4. տէս ՅԸ՛ԽԾԷ: Ըտը՛ղ մին ժամ ըն շինոմ, անըմ տինոմ Կանանչ ժամ (2): 5. Ժամերգություն, ժամասացություն: Ժամէն վախտը էտ դէրը վանրին ուստէն կընգանըն ար յէշում (2):

- Ժաման յը՛ս ըմ կ'ամ, օրինըյա տէրը տու վըս ասում - Ականատեսը ես եմ, բայց իրագեկը դու ես ներկայանում:

- Ժամ ասել - Ժամերգություն կատարել: Դէրը վէր ժամը ասում ա պըրծընում, էտ կընէգ'ը ըտըրան մին դօլ ա քաշոմ... (2):

- Ժամ տանել - Ազավորին քառասուն օրից հետո սգահան անել: Քըռասունը վէր տամ ըն, հընգէրունըը հըվաքվում ըն, քիսնամ Մէլիք'ին ժամ տանում (2):

- Ժամ կաղնել - Ժամերգություն սկսել: Դէրը վէր ժամ ա կաղնում, լօխ տուս ըն անում (2):

ԺԱՄԱՆԱԿ (գրք. ժամանակ, պրս. *zamān(a)*) - տէս ՎԱԽՏ:

ԺԱՄԱՆԱԿԷՆ - տէս ՎԸԽՏԷՆ:

ԺԱՄ-ԲԱՂԱՐԱՆԷ - գ. Ժամասացություն եւ պատարագ: Միհէնգ' կընդըմընը յը՛խծըմ ըն ժամ-բաղարնը՝ անում (Բ):

- Թօքը պըտառվել - Խիստ վախենալ՝ երկյուղել: Մարթը արչին վէր տը՛սավ, թօքը պըտառվից (2):

- Թօքը ցըմաքէլ - 1. Խիստ ծարավել: ...Մը՛ծ ախպէրըն ասից.- Թօքըրս ցըմաքալ ա, կըկարի՛ք պատառ ճուր հանիք'... (ՅԺՅ, VI, 92): 2. տէս Թօքը պըտառվել:

- Թօքումը տինիլ - տէս Թօքան կէնալ:

ԹՕԶԻ - ած. Աներես, պնդերես: Խօրթ ախչիգ'ը շատ խէլոնը, ընջուկ-թիթէվ ա իլնլ, ամմա հալալ ախչիգ'ը թօքի յա իլնլ (ՅԺՅ, V, 615):

- Թօքի քաշ - Շատ աներես՝ պնդերես մարդ: Իգէն թօքի քաշ ա, վէր ասալ ա, ընան ա (2):

ԹՕԶ ՈՒ ՍՕՐ - տէս ԹԸԶԸՍՕՐ:

ԹՕԶ(Զ)ՈՒՇ - 1. ձ. Էշին՝ ջորուն կանգնեցնելու բացականչություն: Խօրէնը հիշկան ծէն ա տամ՝ թօքուշ, թօքուշ, էշը վը՛նըն չի կէնում (2): 2. փխբ. տէս ԷՇ (1, 5):

ԺԱՄՅԱՐ - գ. Եկեղեցու զանգերը հնչեցնող սպասավոր: Վէրը էտ տըղան մատաղ ա մօրթում, ժամհարին նըհէտ մին տը՛ղ իփում, պըժէնըմ (ՅԺՅ, V, 92):

ԺԱՆԳ/ԺԵՆԳ (գրք. ժանգ) - 1. տէս ՕՆԶ: 2. փխբ. Ղեմքի մռայլություն: Ըտըրա ժանգ'ը հու տը՛սնըմ ա, զանիւն տանում ա (Բ):

- Ժանգ՝ անել, իրը՛սան կէնալ - 1. Կրա պրծնել, հարձակվել (գիշատիչ կենդանիների մասին): Շօնը ժանգ՝ ա անում ըտըրա իրը՛սան կէնում (2): 2. Մեկին անամոթաբար՝ կոպտաբար՝ լախըրդրեն պատասխանել: Էտ կընէգ'ը հինչը ասում ա, հարթըն ժանգ՝ ա անում, իրը՛սան կէնում (Բ):

- Ժանգ՝ թըխել - տէս Ժանգ՝ անել, իրը՛սան կէնալ:

ԺԱՆԳԱՆԼ - տէս ԺԵՆԳԱՆԼ:

ԺԱՆԳԱՆԱՆ - ած. 1. Կոպիտ, մռայլ, անտաշ, կշտամբող: Ժանգ'անն կընէգ' ա (Բ): 2. Լալկան, թնկթնկացող: Ժանգ'անն խօխա յա (Բ):

ԺԱՆԳԱՆԻ (գրք. ժանգառ) - ած. Բաց կանաչ: Ժանգանի շօր ա կը՛ցալ քը՛ցալ հըրսանէք՝ (2):

ԺԱՆԳԻ - տէս ԺԱՆԳԱՆԱՆ:

ԺԱՆԳ-ԺԱՆԳ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ժանգ-ժանգ՝ անել - տէս ԺԸՆԳ-ԺԸՆԳԱՆԼ:

ԺԱՆԳՕՏ/ԺԷՆԳՈՒՏ/ԺԸՆԳՕՏ/  
ԺԻՆԳՕՏ (գրք. ժանգոտ) - տեն ՕՆ-  
ՋՈՒՏ:

ԺԱՆԴԱՐՄ - տեն ԶԱՆԴԱՐՄ:

ԺԱՌԱՆԳ - տեն ԺԱՌԱՆԳ:

ԺԱՌԱՆԳ - տեն ԺԱՌԱՆԳ:

ԺԱՌԱՆԳ/ԺԱՌԱՆԳ/ԺԱՌԱՆԳ/ԶԱ-  
ՌԱՆԳ (գրք. ժառանգ) - գ. 1. Որդի, գա-  
վակ, հատկապես արու գավակ իր ծնող-  
ների նկատմամբ: Էս թաքավերեն ժա-  
ռանգ՝ չընդուն (ՆԱԲ, 37): 2. փխբ. Զետա-  
գա սերունդ, հետնորդներ: Էրկու հա-  
րուր տըռնանը յէտը տահանց ժոռընգ՝  
նէն յէտ յէկալ ըն, տէսալ՝ ըստէղ մի թա-  
գա շէն (ԱԱ, 30):

ԺԱՎՐՕՆԻԳ - տեն ԺԱՐՕՎՆԻԳ:

ԺԱՐԱԺԵՆ(Ն)Ի - տեն ԶԱՐԱԺԵՆ-  
(Ն)Ի:

ԺԱՐԻՏ (ռու. жарить) - Գործած-  
վում է կապակցությունների մեջ:

- Ժարիտ անել - 1. Յուղի մեջ առանց  
ջրի եփել՝ տապակել: Մին կաքավ էլ  
ժարիտ անում, տինում փըլավէն կըլ-  
խէն (ՅԱԲ, 15, 26): 2. փխբ. Սեկին հոգե-  
կան տառապանք՝ տանջանք պատճա-  
ռել, տոջորել: Էտ ախմաղը մօրը ժարիտ  
անում (Բ): 3. փխբ. Կոտորել, սպանո-  
ւել: Բախշին պիլիմօտը յօր անէն,  
նէմէցներէն ժարիտ ընէն (2): 4. փխբ.  
Շատ վարժ խոսել, ճառախոսել: Էտ էլ  
հօ խօսում չի՞, ժարիտ անում (2):

- Ժարիտ ինիլ/տըռնալ - 1. Յուղի  
մեջ առանց ջրի եփվել՝ տապակվել: Մէ-  
սը ժարիտ անողնում (Բ): 2. Զոգեպես  
տառապել՝ տանջվել՝ տոջորվել: Խըհճ  
կընէգը Էտ բէլնամու մարթին ծըրքէն  
լափ ժարիտ անիլ (Բ): 3. Կոտորվել,  
սպանոսվել: Թըվանգավը վէր յըրա ք-  
րէ, ծըռտըր ժարիտ իլին (Բ):

ԺԱՐԿՕ (ռու. жаркое) - գ. Տապա-  
կած միս՝ կարտոֆիլ եւն: Միհէնգվա  
պըռըվնէն ժարկօ վէլ ըն օտում, պիվա  
յէլ ըն խըմում (Բ):

- Ժարկօ անել - Միսը՝ կարտոֆիլը  
յուղի մեջ տապակել: Ժարկօ վըն անում,  
նըստում քը՛փ անում (2):

ԺԱՐՕՆ(Ն)ԻԳ - տեն ԺԱՐՕՎՆԻԳ:

ԺԱՐՕՎՆԻԳ/ԺԱՐՕՆ(Ն)ԻԳ/ԺԱՎ-  
ՐՕՆԻԳ (ռու. жаворонок) - տեն ԶԸԹԱ-  
ՎԵՐ(3):

ԺԷԺ/ԺԱԺ² - ած. 1. Զարկ եղածի պես  
չհասած, խակ: ԺԷԺ խամբարը իփիւմ  
ըն, օտում (Բ): 2. փխբ. Shաս, չհասունա-  
ցած, խակամիտ, տղայամիտ: Թաքավէ-  
րին տըղան էլ հալա ԺԷԺ անում, ըտը-  
րա հը՛տէ էլ վէգիրըն ան թաքավըրթուն  
անում (2):

ԺԷԺՏ (ռու. ж, см) - գ. Մետաղյա բա-  
րակ շերտ՝ թիթեղ: Օժժավ քամէ յա լալ,

մէր ԺԷԺտըն յեր անալ քըցալ նը՛րքէ  
ծօրը (ՅԲ, 350):

ԺԷԺՏԱՆԶԻ - տեն ԺԷԺՏԱՆԶԻ:

ԺԷԺՏԱՆԶԻ/ԺԷԺՏԱՆԶԻ (ռու. жес-  
тотный) - գ. Թիթեղյա իրեր եւ տանիք  
պատրաստող արհեստավոր, թիթեղա-  
գործ: ԺԷԺտանջին մին փիչ ան շինում,  
տամ էտ կընգանը, վը՛սկէ քըթօլը յը՛ր օ-  
նում (2):

ԺԷԺՏԻԼ - նբ. Թիթեղով պատել՝  
ծածկել՝ երեսապատել: Մարաքը շի-  
նում ըն, կըլծխըն ան կօխկերքը ԺԷԺ-  
տիւմ (2):

ԺԷԺՆՈ/ԺԱՆՆՈ (գրք. ժախ) - գ. 1.  
Այգիներում բուսնող անպետք խոտա-  
բույսեր: Էրկու օր գիրնալ ըն տը՛ռնում,  
էտ ԺԷխընը քանդում (2): 2. անրգ. Կա-  
նաչի: Էնքան ԺԷխըն կերէնք, գիլըրնէս  
տարալ (Բ):

ԺԷԺՆՈ-ՄԷԺՆՈ - գ. Տարբեր տե-  
սակի մոլախոտեր՝ անպետք խոտա-  
բույսեր: Բօստանը սաղ ԺԷխըն-մէխըն  
ան (Բ):

ԺԷԺՆՈՏ/ԺԱՆՆՈՏ - գ. Շատ մոլա-  
խոտեր՝ անպետք խոտաբույսեր աճած  
տեղ: Կամ ըն տը՛սնում ըլըբաստըրակը  
ժըխոտտում վէր ընգած (2):

ԺԷՍ/ԺՈՒՍ (գրք. ժամ, ժում) - 1. մ.  
Անգամ: Ամէն միւր երկու ԺԷՍ էտ վը՛ս-  
կան հափռում ըն, պըրծընում ան (2): 2.  
գ. Պահ, ժամանակ: Սահանք պայման  
ըն տըռնում, վէր էյսը Էս համին ԺԷմին  
ծախօղը կալը պիրի, միշտանին էլ՝  
փուլը (ՆԱԲ, 55):

ԺԷՆԳ - տեն ԺԱՆԳ:

ԺԷՆԳԱԼ - տեն ԺԷՆԳԱԼ:

ԺԷՆԳԱԼ/ԺԷՆԳԱԼ/ԺԱՆԳԱԼ - տեն  
ԿԸՆԱԼ(Ն)ԶԻ(1): Սաղ կարունըն բիթին  
ԺԷնգալ ըն քաղալ, պերալ իփալ, կերալ  
(ՅԺՅ, V, 113):

- Ժընգալիւմ հաց - Մեջը կտրտած  
կանաչեղեն եւ ձեթ լցրած եւ երկարածեւ  
տափակացրած ու սաքի՝ վառարանի  
վրա թխած հաց, որ շատ տարածված է  
Ղարաբաղում: Ժընգալիւմ հացը կա-  
րունըն ան ինում լազանթ (Բ):

- Ժընգալիւմ հացու մաչ - Տարբեր  
տեսակի կանաչեղեն, որով Ժընգալիւմ  
հաց են թխում: Ժընգալիւմ հացու  
մաչ ան քաղում, դարկում քըվօրը հը՛-  
տէ (2):

ԺԷՆԳՈՒՏ - տեն ԺԱՆԳՕՏ:

ԺԷՆ՝ (գրք. ժառ, ժեռ) - տեն ԶԸՆ՝ՐԾ:

- Ժեռ քար - 1. Ամուր, պինդ: Էս վը՛դ  
չի, ժեռ քար ան, կարում չընք քանդիլը՝  
(Բ): 2. փխբ. Անգութ, անխիղճ, քարա-  
սիրտ, դաժան: Ժեռ քար ան, խօխան լալ  
ան ինում, ծը՛ծ չի տամ (Բ): 3. փխբ.

ժլատ: Էտ ժեռ քարըն հալա մէհէտ մին  
մարթու մին պէն տըված չի (2):

ԺԷՆ² - ած. Սուր, խավարչտին: Մին

Ժեռ քըռէր ան ինում (2):

ԺԷՆ³ - ած. Վայրի, չպատվաստված:

Ժեռ զըկըռէ յա պիրում, հըլաթումը տըն-  
գում, ջըլաղում (2):

ԺԷՎ - գ. 1. Փոքր ու հասարակ մար-  
գարիտ: Էքսը Էտ կընէգը անկին քարը  
տամ ան, մին պէռնը ԺԷվէր ինք՝ օնում...  
(ՅԺՅ, V, 433): 2. փխբ. Շատ մանր բա-  
ներ: Էս ճուղուպուրը հանց ան ԺԷվէր ինի  
(Բ): 3. փխբ. Օղու՝ դոշաբի՝ մուրաբայի  
եւն պղպջակներ: Բըքմանգին ԺԷվէրը  
վէր մըծանում ան, գիղալ վէր հիլալ ան (Բ):

- ԺԷվ կապել - Պղպջակներ առաջա-  
նալ՝ առաջացնել: Ըրաղէն բօթուրը թը-  
փըհարում ըս, վէր մը՛ծ-մը՛ծ ԺԷվէր կա-  
պից, ըրէմըն թօթ ան (Բ):

ԺԸԺՊԱՊԱՎ/ԺԻԺՊԱՊԱՎ - գ. 1.  
Ղեմքի ծամածռելը ծաղրելու համար,  
ծամածռություն: Ըտըրա ժըժըպապան  
դունաղէն քը՛փէն փիս նի յա կամ (2):  
2. Զին պարատեսակ, որի ժամանակ  
պարում էին նմանակելով, ծամածռու-  
թյուններով: Ժըժըպապան առաջ ըն ի-  
լալ պար կամիլ (Բ):

- Ժըժըպապա անել - 1. Ծամածռու-  
թյուններ անելով ծաղրել: Ըսկէսուրը  
հիշքան անէսկ ան տամ, հարթըն Էնքան  
շատ ան ժըժըպապա անում (2): 2. փխբ.  
Մի կերպ՝ հազիվ կարողալ: Ղեռը ըվիտա-  
րանը յօր անէն, ժըժըպապա ընէն  
(2): 3. փխբ. Ղատարկ ժամանակ անց-  
կացնել: Կօրծ չի անում, սաղ օրը էն ան  
ժըժըպապա ընէն (Բ):

ԺԸԺՊԱՊԱՎ²/ԺԻԺՊԱՊԱՎ² - գ. Մի  
տեսակ բույս, որի մանր կոճակածեւ  
պտուղները թելի վրա շարելով՝ վզնոց  
են պատրաստում: Խօխէնքը՝ ժըժըպա-  
պա յըն քաղում, ճիտանիւց շինում (2):

ԺԸԼԱՍ (գրք. ժլատ) - տեն ԸՍԿԸ-  
ՊՕՅ: ...Մին օր ժըլատ շինացուն դօնաղ  
ան կամ հէռէ պարիկամերան (ՆԱԲ, 112):

- Ժըլատէն ըսը՛ցէն՝ տօռնը պէ՛ց, կը-  
սըհար ըրալ - տեն Կօղէն ըսը՛ցէն՝  
տօռնը պէ՛ց, կըսըհար ըրալ:

ԺԸԼԸՏՕԹՈՒՆ - տեն ԸՍԿԸՊՕՅՕ-  
ԹՈՒՆ:

ԺԸԼՈՒԹԿԱ - տեն ԺՈՒԼՈՒԹԿԱ:

ԺԸԼ(Ը)ՈՂԿԱԼԻԼ - չբ. Մոլախոտով՝  
անպետք խոտաբույսերով պատվել:  
Բօստանը ժըխընկալալ ան (Բ):

ԺԸՂՕՎՈՒԹ - տեն ԺՈՒՂՕՎՈՒԹ:

ԺԸՂՕՎՈՒԹԱԿԱՆ - տեն ԺՈՒՂՈՒ-  
ՎՈՒԹԱԿԱՆ:

ԺԸՄԱԺԵՆԸ - տեն ԸԺԸՄԱԺԵՆԸ:

ԺԸՍԱՅԱՍ - տեն ԲԱՂԱՆԸ:

ԺԸՄԱՍԵՐ - *ած., գ.* Եկեղեցի եւ եկեղեցական արարողություններ սիրող, հաճախ եկեղեցի այցելող (անծ): *Վընքը-ցէք՝ ժըմասէր մարթթը՝ ըն (Բ):*

ԺԸՄԱՎԵՐ - *գ.* Եկեղեցի՝ եկեղեցական արարողություն գնացած մարդ: *Ժըմավէրնէն յը՛խծան տոնս ըն տը՛ռնում, ք՛իւսամ տընէրը (2):*

ԺԸՄԱՍԸՂ (գրք. *Ժամատեղ (ժամ, մատուռ, աղոթելու տեղ)* - *գ.* 1. Քանդված եկեղեցու տեղ: *Յը՛խծէն միհէնգ՛կա վէջ, ամիա ժըմատը՛ղը սօրփ ա (2):* 2. Այն տեղը, որտեղ եկեղեցի պետք է շինվի: *Ըստէփանսկ՛ը՛րտա ժըմատը՛ղը կընօխանց ա մնիլոմ, ամմա հնլլն յը՛խծէն շինոմ չըն (Բ):*

ԺԸՄԱՍՏՈՆ (գրք. *Ժամատուն*) - 1. *տեն* ՅԸ՛հԾԷ: 2. *գ.* Եկեղեցուն կից կառուցված եւ նրան պատկանող տուն: *Գանձասարա յը՛խծէն ժըմատոն էլ օնէ (Բ):* 3. *տեն* ԲԸՂԸՐԸԹԱՍՏՈՆ:

ԺԸՄԱԹԱՐ - *գ.* Եկեղեցու մոտ դրված քար: *Էտ կընէգ՛ը ժըմքարէն նըստում ա, լնց ինոմ (2):*

ԺԸՄԸԺԵՆԹԻԼ - *տեն* ԸԺԸՄԸԺԵՆԹԻԼ:

ԺԸՆԳՄԼ/ԺԻՆԳՄԼ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՄԼ:

ԺԸՆԳՄԱՅԱՍ/ԺԻՆԳՄԱՅԱՍ - *տեն* ՈՒՆԶԱՅԱՍ:

ԺԸՆԳՄԱՃՈՒՐ/ԺԻՆԳՄԱՃՈՒՐ (գրք. *Ժանգաջուր (վնասակար ջուր)*) - *տեն* ՈՒՆԶԱՃՈՒՐ:

ԺԸՆԳԸԹԱԹԱԽ/ԺԻՆԳԸԹԱԹԱԽ - *տեն* ՈՒՆԶՈՒԹԱԹԱԽ:

ԺԸՆԳԸԼԸՂԱՆ/ԺԻՆԳԸԼԸՂԱՆ - *տեն* ԿԸՆԱ(Ն)ՉԻ(1):

ԺԸՆԳԸԿՄԼԻԼ/ԺԻՆԳԸԿՄԼԻԼ - *տեն* ՈՒՆԶՈՒԿՄԼԻԼ:

ԺԸՆԳԸՆ(Ն)ԱՏ/ԺԻՆԳԸՆ(Ն)ԱՏ - *ած. անրգ.* Ատամները թափված: *Ժընգ՛ըռատ քալթառ ա (Բ):*

ԺԸՆԳԸՆ(Ն)ԷԼ/ԺԻՆԳԸՆ(Ն)ԷԼ - *չք.* 1. Հարձակվելու նշաններ ցույց տալ, ատամները ցույց տալ (գիշատիչ կենդանիների մասին): *Կ՛իւլը վէր ժընգ՛ըռնում ա, վը՛րսկանը վախան նըրը՛տ չօքում ա (2):* 2. Դեմքը թթվեցնել, մռայլվել, դեմքը ծռմել: *Էտ խէ ժընգ՛ըռնալ ը՛ս (Բ):*

- Ժընգ՛ըռ(ն)ած արտ - Արեախանձ՝ կծղած արտ: *Խը՛ղճէն իլնծը մին ժընգ՛ըռնած արտ ար, էն էլ էրվից (Բ):*

ԺԸՆԳԸՆ(Ն)ՕՏ/ԺԻՆԳԸՆ(Ն)ՕՏ - *ած.* 1. Բարկացած, թթված, մռայլ: *Ժընգ՛ըռ(ն)օտ մարթին անա բիդի հը՛ռէ կէնա (Բ):* 2. Դաժան, չարաբարո: *Լէնգ՛թէմուրը ժընգ՛ըռնօտ մարթ ա իլնլ (2):*

ԺԸՆԳԸԿԱՐՄԼ/ԺԻՆԳԸԿԱՐՄԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ժընգ՛ըվարանգ՛ անէլ - Իրար հետ կռվելով-հաշտվելով գոյատևել: *Մըրթը-կընէգ՛ ժընգ՛ըվարանգ՛ ընէլալ ապրում ըն (2):*

ԺԸՆԳԺԸՆԳՄԼ/ԺԻՆԳԺԻՆԳՄԼ - *չք.* 1. Թնձկալ, թնկթնկալ: *Խօխան ժընգ՛ընգ՛ամ ա (Բ):* 2. Տրտնջալ, քրթմնջալ, մոթմոթալ: *Էտ կընէգ՛ը սաղօրը ժընգ՛ընգ՛ամ ա (Բ):* 3. Վնգվալ, վնգստալ: *Շօնը ժընգ՛ընգ՛ամ ա (Բ):*

ԺԸՆԳԺԸՆԳՄԼ/ԺԻՆԳԺԻՆԳՄԼ - *ած.* Ժնգ՛մագացող: *Ժընգ՛ընգ՛ան մարթալ, խուխալ, շանալ էտ շէնը լիգ՛ըն ա (2):*

ԺԸՆԳԺԸՆԳՑ(Ը)ՆԷԼ/ԺԻՆԳԺԻՆԳՑ(Ը)ՆԷԼ - 1. *նք.* ԺԸՆԳԺԻՆԳՄԼ-ի: 2. *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՄԼ:

ԺԸՆԳԺԸՆԳՕՆ/ԺԻՆԳԺԻՆԳՕՆ - *գ.* 1. Ժնգ՛մագալը: *Ըտըրա ժընգ՛ընգ՛օնը վէր ինի վէջ, կարքէն կընէգ՛ կինի (Բ):* 2. Ժնգ՛մագալու ձայնը: *Էտ ժընգ՛ընգ՛օնը վէր ըսկանում ա, էլ կարում չի քօն ինի (2):*

ԺԸՆԳԺԸՆԳՕՑ/ԺԻՆԳԺԻՆԳՕՑ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՕՆ:

ԺԸՆԳՈՒՏՑ(Ը)ՆԷԼ/ԺԻՆԳՈՒՏՑ(Ը)ՆԷԼ - *տեն* ՈՒՆԶՈՒՏՑ(Ը)ՆԷԼ:

ԺԸՆԳՕՆ/ԺԻՆԳՕՆ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՕՆ:

ԺԸՆԳՕՏ - *տեն* ԺՄԼԳՕՏ:

ԺԸՆԳՕՏԷԼ/ԺԻՆԳՕՏԷԼ (գրք. *Ժանգոտիմ*) - *տեն* ՈՒՆԶՈՒԿՄԼԻԼ:

ԺԸՆԳՕՑ/ԺԻՆԳՕՑ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՕՆ:

ԺԸՈՒՆԱԼ - *չք.* Վայրի դառնալ, վայրենանալ: *Էտ ծառէրը բիջնրնլ չըն, ժըռացալ ա (Բ):*

ԺԸՈՒՆԳԱՍԱՐ - *գ., ած.* 1. Ժանանգ՝ զավակ ունեցող (մարդ): *Ժըռընգ՛ատար ա, ամմա ննգնի մարթու նըման ա ապըրում (Բ):* 2. Խելոք՝ պատվարժան զավակ ունեցող (մարդ): *Կըրիքօրը ըսկի ժըռընգ՛ատար չի. չծրք՛ տըրդա օնէ, չծրք՛ըն էլ բիդասըլ (2):*

ԺԸՐԺԸՐԱԼ/ԺԻՐԺԻՐԱԼ - *չք.* Ժրություն ցուցաբերել, ժրանալ (երեխաների մասին): *Խօխէնք՛ը ժըրժըրալ ըն, մօրը շատ ըն չըրչարում (Բ):*

ԺԻԺԻ - *տեն* ԾԻԾԻ:

ԺԻԺԻՊԱՊԱ՛ - *տեն* ԺԸԺՈՊԱՊԱ՛:

ԺԻԺԻՊԱՊԱ՛ - *տեն* ԺԸԺՈՊԱՊԱ՛:

ԺԻԼԵՏ (ռուս. *жулет, фп. gilet*) - *գ.* Առանց օձիքի եւ թեւերի կարճ հագուստ, որ հագնում են պիջակի տակից: *Մին ժիլէտ ա կօրծում, խուխէն կը՛ք տամ(2):*

ԺԻՆԳՄԼ - *տեն* ԺԸՆԳՄԼ:

ԺԻՆԳՄԱՅԱՍ - *տեն* ԺԸՆԳՄԱՅԱՍ:

ԺԻՆԳՄԱՃՈՒՐ - *տեն* ԺԸՆԳՄԱՃՈՒՐ:

ԺԻՆԳԸԹԱԹԱԽ - *տեն* ԺԸՆԳԸԹԱԹԱԽ:

ԺԻՆԳԸԼԸՂԱՆ - *տեն* ԺԸՆԳԸԼԸՂԱՆ:

ԺԻՆԳԸԿՄԼԻԼ - *տեն* ԺԸՆԳԸԿՄԼԻԼ:

ԺԻՆԳԸՆ(Ն)ԱՏ - *տեն* ԺԸՆԳԸՆ(Ն)ԱՏ:

ԺԻՆԳԸՆ(Ն)ԷԼ - *տեն* ԺԸՆԳԸՆ(Ն)ԷԼ:

ԺԻՆԳԸՆ(Ն)ՕՏ - *տեն* ԺԸՆԳԸՆ(Ն)ՕՏ:

ԺԻՆԳԸԿԱՐՄԼ - *տեն* ԺԸՆԳԸԿԱՐՄԼ:

ԺԻՆԳԺԻՆԳՄԼ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՄԼ:

ԺԻՆԳԺԻՆԳՄԼ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՄԼ:

ԺԻՆԳԺԻՆԳՑ(Ը)ՆԷԼ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՑ(Ը)ՆԷԼ:

ԺԻՆԳԺԻՆԳՕՆ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՕՆ:

ԺԻՆԳԺԻՆԳՕՑ - *տեն* ԺԸՆԳԺԸՆԳՕՑ:

ԺԻՆԳՈՒՏՑ(Ը)ՆԷԼ - *տեն* ԺԸՆԳՈՒՏՑ(Ը)ՆԷԼ:

ԺԻՆԳՕՆ - *տեն* ԺԸՆԳՕՆ:

ԺԻՆԳՕՏ - *տեն* ԺՄԼԳՕՏ:

ԺԻՆԳՕՏԷԼ - *տեն* ԺԸՆԳՕՏԷԼ:

ԺԻՆԳՕՑ - *տեն* ԺԸՆԳՕՑ:

ԺԻՆԶԻԼ/ԶԻՆԶԻԼ (*արս. zānjir, թրք. zinçir*) - *գ.* 1. Իրար հագրած մետաղե օղակների երկար շարան՝ տարբեր բաներ կապելու՝ քաշելու համար, շղթա:

*Մը՛ծ շօնը պիրիս ա ժինջիլալ ծառան կըպէս, կուճիկը յօր օնէս, ք՛իս վը՛րս (ՀԺՀ, V, 280):* 2. *անրգ.* Թանկագին մետաղներից պատրաստված նույնպիսի նուրբ շարան, որ գործածում են որպես զարդ, վզնոց: *Էտ ժինջիլը հինջ ա՛, վէր վիզատ կախ ըս տըվալ (Բ):*

ԺԻՆԶԻԼՄԱԿ/ԶԻՆԶԻԼՄԱԿ - Գործածվում է կապակցության մեջ:

- Ժինջիլնթակ անէլ - Շղթայով խիստ ծեծել: *Ժինջիլնթակ ըն անում, էտ կ՛իլտօռած շանը ըսպանում (2):*

ԺԻՆԶԻԼՄԾ/ԶԻՆԶԻԼՄԾ - *ած.* 1. Շղթայով կապված, շղթայված: *Էտ ժինջիլնծ բուղան վէր պըռանչոմ ա, ըտահանք սըրտածանք ըն տը՛ռնում (2):* 2. *փխք.* Կատաղած, գազազած: *Ժինջիլնծ կընէգ՛ ա, մարթին հօք՛ին հանում ա (Բ):*

- Ժինջիլնծ շօն - Կատաղած՝ գազազած մարդ: *Էտ ժինջիլնծ շօնը օր-ի-շը՛ղ չի տամ տըընցուց (2):*

ԺԻՆԶԻԼԻԼ/ԶԻՆԶԻԼԻԼ - *նք.* Շղթայով կապել, շղթայակապ անել: *Շօնը հապէն ծուվէնը կերալ, փըռնէցէն ժինջիլէցէն (Բ):*

ԺԻՐԺԻՆԹ - տեն ԸԺԸՄԸԺԵՆԹ:  
ԺԻՐԺԻՆԹԻԼ - տեն ԸԺԸՄԸԺԵՆԹԻԼ:

ԺԻՐԺԻՆՆԼ - տեն ԺԸՐԺԸՐԸԼ:

ԺՈՒԼԻԿ<sup>1</sup> (ռուս. жулик) - ած. 1. Ճարպիկ՝ անազնիկ ու խաբեպատիր միջոցներով որեւէ նպատակի ձգտող, ուրիշներին խաբելու՝ մոլորեցնելու մեջ հնարագետ, խորամանկ: Էտ ժուլիգ մարթը կարթմ ա էտ ըխճըկանը խանփի, վըսկէ մուտանան յըր օնէ (2): 2. Խորամանկություն արտահայտող: Էտ տըղան ժուլիգ աշկէր օնէ (2): 3. Խորամանկությամբ արված՝ կատարված: Ժուլիգ կործ ըս փըռնալ (Բ): 4. փխբ. ճարպիկ, ձեռներեց, հնարագետ: Միհէնգ՝ ժուլիգ մարթու դար ա (Բ): 5. գ. Խորամանկությամբ օժտված մարդ: Էտ ժուլիգը թաքավերին ըխճըկանը խըլքա տանում ա (2):

ԺՈՒԼԻԿ<sup>2</sup> - գ. 250 գրամանոց շիշ՝ գրաֆին, որի մեջ օդի են լցնում: Էրկու հօքավ էտ ժուլիգ՝ պէնում ըն, խըմում, հանրիում (2):

ԺՈՒԼԻԿԱՆԱԼ - չբ. Խորամանկ դառնալ: Էտ խօխան տահանց նըհըտ կէնում ա, ինքըն էլ ժուլիգ՝ անում (2):

ԺՈՒԼԻԿԱԲԱՇ - գ. Խորամանկների առաջնորդ, շատ խորամանկ մարդ: Դարդունց Նլծն ժուլիգ՝ բաշ ա, հիւր օգի՝ կըխանփի (Բ):

ԺՈՒԼԻԿԱՎԱՇԻ - տեն ԺՈՒԼԻԿԱՎԱՐԻ:

ԺՈՒԼԻԿԱՎԱՐԻ - մ. Խորամանկ կերպով, խորամանկորեն: Էտ կընէգ՝ ժուլիգ՝ վարի մարթին կ'օք ա տամ, դարկում վըրս (2):

ԺՈՒԼԻԿԱՅ(Ը)ՆԵԼ - նբ. ԺՈՒԼԻԿԱՆԱԼ-ի:

ԺՈՒԼԻԿԱՓՈՒՆԻ - 1. ած. Խորամանկության միջոցներին՝ գաղտնիքներին տիրապետող, շատ խորամանկ: Ժուլիգ՝ փանդի մարթ ար Սիմօնը (2): 2. տեն ԺՈՒԼԻԿԱՎԱՐԻ:

ԺՈՒԼԻԿԱՐՈՒՆ - գ. Խորամանկ լինելը, խորամանկություն: Ժուլիգ՝ օթունը ըստուծանա տըվօվի յա, ամմէն մարթու պէն չի (2):

- Ժուլիգ՝ օթուն անել - Խորամանկել,

խորամանկություն բանեցնել: Մղասը ժուլիգ՝ օթուն ա անում, չօխա ծին ծախում (Բ):

ԺՈՒԼՈՒԹԿԱ/ԺՈՒԼՈՒԹԿԱ (ռուս. жулю-док) - գ. Մարդու մարտողության գործարանը, ստամոքս: Էնքան կիկի յա խըմալ, ժուլութկան հիվընդացալ ա (Բ):

ԺՈՒԿ - գ. Կարծ ժամանակ: Ժուկ ա ընցնում, կուճուր ախպերը ճըղօրտած շուրերալ կ'ամ ա տուս կ'ամ մին քաղաք (ՆԼՐԺԲ, 8):

ԺՈՒԿԱՎ-ԺԱՄԱՆԱԿԱՎ - մ. Մի ժամանակ, ժամանակով, շատ առաջ: Ժուկավ-ժամանակավ մին շէնում մին պառավ մարթ ար կէնում (ՅԺՅ, V, 212):

ԺՈՒԿ-ԺԱՄԱՆԱԿ - գ. Ինչ-որ ժամանակ: Ժուկ-ժամանակ ա ընցընում, թաքավերին տըղան փըսակվում ա (2):

ԺՈՒՂՈՒՎԱՐԹԱԿԱՆ/ԺՈՒՂՈՒՎՈՒՐԹԱԿԱՆ/ԺՈՂՈՎԱՐԹԱԿԱՆ/ԺՈՂՈՎՈՒՐԹԱԿԱՆ (գրբ. ժողովրդական) - ած. 1. Ժողովրդին հատուկ՝ վերաբերող: Ժողովրդական խօսկերքն էլ ա կամանց-կամանց կօրչում (Բ): 2. Ժողովրդին պատկանող, պետական: Ժողովրդական վըդ չի մընաց, լօխ փայ-փայ ըրէն (2): 3. Ժողովրդականություն վայելող, ժողովրդի հետ սերտ կապի մեջ գտնվող: Մէր նախագան ժողովրդական մարթ ա (Բ):

ԺՈՒՂՈՒՎՈՒՐԹ - տեն ԺՈՒՂՈՎՈՒՐԹ:  
ԺՈՒՂՈՒՎՈՒՐԹԱԿԱՆ - տեն ԺՈՒՂՈՒՎԱՐԹԱԿԱՆ:

ԺՈՒՂՈՎՈՒՐԹ/ԺՈՒՂՈՒՎՈՒՐԹ/ԺՈՂՈՎՈՒՐԹ/ԺՈՂՈՎՈՒՐԹ (գրբ. ժողովուրդ) - գ. 1. Երկրի՝ տերության բնակչությունը: ...Էս միւնը շատ փիսըն ա իլնլ, շատ ա ջըրջըրէս իլնլ ժողովուրթէն (ՅԺՅ, V, 669): 2. Որեւէ ազգի բոլոր անհատների ամբողջությունը, ազգ, ազգություն: Յայ ժողովուրթը ք'ծինն ժողովուրթ ա (Բ): 3. Որեւէ տեղում խմբված բազմություն: Էտ հըվաքված ժողովուրթը գիրալ ըն տըր'նում, ըտըրան թակում (2): 4. Որեւէ տեղի (գյուղի, քաղաքի եւն) բնակչությունը, համայնք: Խըծըպիրթը՝ ցէք՝ դօչչաղ ժու-

ղովուրթ ըն (Բ): 5. Ընտանիք, գերդաստան: Խօնդիթ ժուլիգ՝ ժողովուրթ ըն (Բ): 6. Երկրի բնակչության աշխատավորական զանգվածը: Յըրուստնէն ըն ժողովուրթէն տօնը քանդօղը (Բ):

- Ժողովուրթէն ըռըխը (միսին) յըրա անէլ - Մեկին բամբասանքի՝ նախատինքի առարկա դարձնել: Էտ հիրը՝ վաւը ժողովուրթէն ըռըխը էտ հարթնաւը յըրա յա անում (2):

- Ժողովուրթէն ըռըխը (միսին) յըրա ինիլ/տըր'նալ - Բամբասանքի՝ նախատինքի առարկա դառնալ: Էտ կ'ուղութունանը յըտը ժողովուրթէն ըռըխը Յըմբանդին յըրա իլնլ (2):

ԺՈՒՄ - տեն ԺԵՄ:

ԺՈՒՐԹ - տեն ԺՕԼՕՐ:

ԺՕԼՕՐ/ԺՕԼՈՒՐ (ռուս. жулоб) - գ. Տանիքից ջուրը հոսելու համար սարքված հարմարանք, ջրհորդան: Ժօլօբը ճըղվում ա, թուռաճիւրը պատէն յըրա յա վէր տըր'նում (2):

ԺՕՐՕՎ (գրբ. ժողով (ժողովված, ամփոփված) - գ. Որեւէ ընկերության՝ կազմակերպության՝ համայնքի եւն ընդհանուր նիստ՝ որեւէ հարց քննարկելու նպատակով: Կըլխօզէն ժողովէն վախտը Կիման յըր ա կէնում նախագէն բիյաբուռ անում (2):

- Ժողով անել - Ժողով գումարել, ժողով կազմակերպել: Մին թաքավըր քի-ննմ ա ժողովուրթին հըվաքում, ժողով անում (ՆԼՐԺԲ, 131):

- Ժողով ընէլալ տօն չի պահվել - Ապրելու՝ գոյատեւելու համար պետք է աշխատել՝ ապրուստի միջոցներ հայթայթել եւ ոչ թէ խոսել՝ տեսություն քարոզել:

- Ժողովք անել - Յավաքել, համախմբել, ի մի բերել, ժողովել: Յիվըն-նէն ժողովք ա անում, քըշիւմ սարը (2):

ԺՕՐՕՎԱՐԹ - տեն ԺՈՒՂՈՎՈՒՐԹ:

ԺՕՐՕՎԱՐԹԱԿԱՆ - տեն ԺՈՒՂՈՒՎԱՐԹԱԿԱՆ:

ԺՕՐՕՎՈՒՐԹ - տեն ԺՈՒՂՈՎՈՒՐԹ:

ԺՕՐՕՎՈՒՐԹԱԿԱՆ - տեն ԺՈՒՂՈՒՎԱՐԹԱԿԱՆ:

## Ի

Ի՛/ԻՅ - ձ. 1. Արտահայտում է զարմանք՝ հիացմունք: Ի՛, իւ՛՛ Սումբաթն էլ ա՛ փըսակվալ (Բ): 2. Արտահայտում է դժգոհություն՝ նեղարտություն՝ արհամարհանք՝ զզվանք: Ի՛, էս հինչ փիս հավա յա՛ (Բ):

Ի<sup>2</sup> (գրբ. էի) - Եական բայի սահմանական եղանակի անցյալի անկատարի եզակի երրորդ դեմքի ձեւը: Զըցալ ի ծըմակը, թա փանդ պիրիմ... (2):

Ի<sup>3</sup> - Ինձ տուր: Յանը թա. - Էտ դուշը ի՛, տանիմ տամ խուխէս (2):

Ի<sup>4</sup> - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ի յըր - 1. Դեպի վեր: Էտ ծօրըն ի յըր պիցըրանում ըն, տըր'սնում կ'ոււււաշը մին քօլու քըմակէ ծընած (2): 2. Սկսած: Էտ օրանց ի յըր փըրսան գիւքուճին նըհըտ խօսում չի (Բ):

- Ի վեր - Դեպի ցած: Էտ ախպիրը սարըն ի վեր քըշանում ա, նի տըր'նում կ'ըտը (2):

ԻԲԱԹ - տեն ԸԲՆՍ:

ԻԲՆՍ - տեն ԸԲՆՍ:

ԻԲՐՈՒԽ (պրս. ibrik) - գ. Լվացվելու ջուրը լցնելու մետաղյա ջրաման: Իբրուխը թօրքերըն ըն իլնլ շատ պինցընէս (Բ):

ԻՂԱՆԻՆԻ - տեն ԸՈՒՍԿՕՎՆԻ:  
 ԻԶ<sup>1</sup> (թրք. *iz*) - տեն ՅԸՏՏ:  
 ԻԶ<sup>2</sup> - տեն ԻՆԶ:  
 ԻԶԵՆ - տեն ԸԶԵՆ:  
 ԻԶԵՍ - տեն ԸԶԵՍ:  
 ԻԶԵՏ - տեն ԸԶԵՏ:  
 ԻԶԸԶԱՍԸՌ - տեն ԸԶԸԶԱՍԸՌ:  
 ԻԶԸԶԱՍԱԼ - տեն ԸԶԸԶԱՍԱԼ:  
 ԻԶԸԶՑ(Ը)ՆԵԼ-տեն ԸԶԸԶՑ(Ը)ՆԵԼ:  
 ԻԶԸ-ԹՕԶԸ (թրք. *izi toza*) - տեն ՅԸՏՏ-ԹԵՓՈՒՐ:  
 ԻԶՍԻՐ - գ. Յյուսկի դուրաձե գործիք՝ նուրբ ու լայն շեղբով: *Դնկա՛նրը իզմիրավը փաղը ծակում ա* (2):  
 ԻԶԿԵՍ(Տ)ՆԻ (ռուս. *известный*) - տեն ԸՆԸՍՕՎՈՒՐ:  
 ԻԶՈՒՐ - տեն ԶՈՒՐ:  
 ԻԹԻ - ած. Դառը, կծու: *Իթի տա՛խ-տը՛ղ ա* (Բ):  
 ԻԹԻ-ԼԸՂԵ - տեն ԱՂՈՒ-ԼԸՂԵ:  
 ԻԹԻ-ԽԱՎԱՐ - տեն ԶԸՅՆՐ (4):  
 ԻԹՏԸԲԱԹՏԻ/ԸԹՏԸԲԱԹՏԻ- Գործածվում է կապակցությունների մեջ:  
 - Իթտըբաթտի անել - տեն ՅԸ՛տըբեփուռը կուրցնել: *Կացենը իթտըբաթտի ըրավ, էլ կըրճե՛ցեն վե՛ջ քըթե՛նան* (2):  
 - Իթտըբաթտի ինիլ/տը՛նալ -տեն ՅԸ՛տըբեփուռը կորչիլ: *Նա մինակ ամման ուռույթանա յա տո՛ւս կ'ամ, էլիա իթտըբաթտի ընձում* (ՅԺՅ, V, 36):  
 ԻԺ(Ժ)ԱՆ (գրք. ածան) - ած. 1. Ոչ թանկ, ոչ բարձր գին ունեցող: *Մին իժժան դարյա յա ինք՝ օնում, դարկում գիմքուճեն* (2): 2. Մեծ ծախսեր չպահանջող: *Իժժան հըրսանեքը լօխ կարին անին* (Բ): 3. Ցածրորակ, անորակ: *Իժժան խօրան՞ա* (Բ): 4. մ. Ոչ թանկ գնով, դյուրագին: *Թօռը նի յա օնում, էտ մարթը ճարը կըտըրած ապըրանքը իժժան ծախում ա, յը՛տ տը՛նում* (2):  
 - Իժժան Խաչի - Յեղիսակություն չունեցող մարդ: *Իզէն իժժան Խաչի յա, ընդըրա հու բի՛ղի ըսկանա* (Բ):  
 - Իժժան նըստել - 1. Մատչելի գնով ձեռք բերել: *էտ կավը Սաքսիմին յըրա իժժան նստից* (2): 2. Շատ ծախսեր չպահանջել: *Տօն շինիլը առաջ ա իլնլ իժժան նըստելիս, միհեն՞ա շատ ա տիժէր* (Բ): 3. Պատիժ՝ հատուցում չստանալ: *էտ կուղթթունը Լալազարէն յըրա իժժան ա նըստալ* (Բ):  
 - Իժժան մըսան խօրան՞ա չի տը՛նալ - տեն Իժժան մըսումը թընըխաշու չինիլ:  
 - Իժժան մըսումը թընըխաշու չինիլ - Էժանագին ապրանքը անորակ կլինի:  
 - Իժժան պըրծնել/տո՛ւս կ'նլ - Որեւէ բանից հեշտությամբ՝ առանց լուրջ հե-

տեանքների եւ անախորժությունների ազատվել: *Լավ կարկուտ յը՛կալ, ամմա շինըցէք՝ իժժան պըրծեն* (2):  
 ԻԺ(Ժ)ԱՆ-ԸՈՒԷԳՆԱՆ - ած. Շատ էժան, համարյա ձրի: *Իժժան-ըռե՛գան բազար ա, հիշքան կարըմ ըս՝ առուտուր ըրա* (2):  
 ԻԺ(Ժ)ԱՆ-ԻԺ(Ժ)ԱՆ/ԻԺ(Ժ)ԱՆ-ԻԺ(Ժ)ԱՆ - տեն ԻԺ(Ժ)ԱՆ (1, 4):  
 ԻԺ(Ժ)ԱՆԱԿԻՆ - տեն ԻԺ(Ժ)ԱՆ (1-3):  
 ԻԺ(Ժ)ԱՆԱՍԱԼ - չք. 1. Էժան դառնալ, գինը իջնել: *Ամբ՛ռնը վեր կ'ամ ա, ծո՛ւս իժժընանում ա* (Բ): 2. փխբ. Լրջությունը կորցնել, անհամանալ, նսեմանալ: *Տըղամարթը վեր հընգըրմաճի իժժընացավ, էլ մըհալ քըցօղ չինիլ* (2):  
 ԻԺ(Ժ)ԱՆԱՆՈՒՑ - ած. Էժան գին ունեցող, հասարակ տեսակի: *էտ կընե՛զը միշտ իժժընանուց շօրեր ար կ'ը՛նում* (2):  
 ԻԺ(Ժ)ԱՆ - ԻԺ(Ժ)ԱՆ - տեն ԻԺ(Ժ)ԱՆ - ԻԺ(Ժ)ԱՆ:  
 ԻԺ(Ժ)ԱՆՑ(Ը)ՆԵԼ - նք. ԻԺ(Ժ)ԱՆԱՆԱԼ-ի:  
 ԻԺ(Ժ)ԱՆՕՐԹՈՒՆ - գ. Էժան լինելը: *Միհեն՞ա, վեր ամմեն հինջը թանկ՞ ա, առաջ իժժընթուն ա իլնլ* (Բ):  
 - ԻԺ(Ժ)ընթուն ըղնել - Ապրանքների գները իջնել, ամեն ինչ էժան դառնալ: *էտ տըղան տը՛նըմ ա թաքավեր, յերգիրը իժժընթուն ա ըղնում* (2):  
 ԻԺԻՄԱՅԵՆԸ - տեն ԸԺԸՄԱՅԵՆԸ:  
 ԻԺԻՄԻՅԵՆԸԻԼ - տեն ԸԺԸՄԱՅԵՆԸԻԼ:  
 ԻԼԱԹ - տեն ՄԻԼԼԱԹ:  
 ԻԼԱԹ-ՄԻԼԱԹ - տեն ԻԼԼԱԹ-ՄԻԼԱԹ:  
 ԻԼԱԹ/ԸԼԱԹ - 1. տեն ԻԼԱԹ-ԶԻԼԱԹ (1-2): 2. գ. Զավակ, ժառանգ (գործածվում է հատկապես անեծքներում): *Իլն-ծըտ թաղիմ* (Բ):  
 - Իլնծը օրթնած ա - Եղածով պետք է գոհ լինել: *Իլնծը օրթնած ա, ա՛հայեր, բօլ ա, հիշկան ըշկըծըկօթուն ըք ըրալ* (2):  
 ԻԼԱԹ-ԶԻԼԱԹ/ԸԼԱԹ-ԶԸԼԱԹ - ած. գ. 1. Ամբողջը, ինչ որ կա-չկա: *Իլնծ-չիլնծը հըվաքում ըն, ածում ըրբան, հըղէ իննում* (2): 2. Ընդամենը: *...Տահանց իլնծ-չիլնծ մին կալ ա իննում* (ՆԼՐԺԲ, 62): 3. մ. Լինի թե ոչ, լինի թե չլինի: *էտ մարթին հէտէ կընե՛զը իլնծ-չիլնծ մին ա* (2):  
 ԻԼԱՆԲԱԼԸՂ (թրք. *ilanbaliği*) - գ. Օձածուկ: *Իլանբալըղը փօշ չօնէ* (Բ):  
 ԻԼԱԶ - տեն ԻԼԼԱԶ:  
 ԻԼԱՐԻԼ - տեն ԸԼԱՐԻԼ:  
 ԻԼԱՓ - գ. Որպես սեփականություն ունեցածը, ունեցվածք: *...Ամմա էտ մար-*

*թին աշկը ձորան իլնփավը քուշտանում չար...* (ՅԺՅ, V, 403):  
 ԻԼԲԻՅԱԼ(ՍԸՍ)/ԸԼԲԻՅԱԼ(ՍԸՍ)/ԱԼԲԻՅԱԼ(ՍԸՍ)/ՅԱԼԲԻՅԱԼ(ՍԸՍ) (թրք. *il-bölöl*) - մ. Անմիջապես, իսկույն: *...Իլբի-հնլ կօխկէ շինըթկընուն ջիհիլնուն վը-հըքէս ա, սարէն մին թիրափավը քըշը-նաս ծօրը* (ԱԱ, 20):  
 ԻԼԳԻԾ(Տ)/ԻԼԿԻԾ(Տ)/ԻՐԳԻԾ(Տ) - գ. 1. տեն ՅԸՂՕԼԻ: *էտ ախճիզը ձորան իլկիշտավը ըսպընէս ա օխճերէն* (ԼՂԲԶ, 285): 2. փխբ. Նիհար եւ բարձրահասակ մարդ: *էտ իլգիշտը մին քաշ բօյավ ախճիզ ա օզնում* (2):  
 ԻԼԳՈՒՆ - տեն ԸԼԸԳՈՒՆԵ:  
 ԻԼԸՍԻԼՆԻՍ - տեն ԸԼԸՍԻԼՆԻՍ:  
 ԻԼԻ - տեն ԼԻ:  
 ԻԼԻԳ/ԻԼԻԿ (գրք. իլիկ) - գ. 1. Թել մանելու ձեռքի հողաձե գործիք՝ իլիկ: *Կընանեքը իլիկնէն յը՛ր ըն օնում, էտ ծառէն տակէն նըստօտում, թիլ մանում* (2): 2. Ճախարակի ձողը, որի վրա փաթաթվում է թելը: *Չըխըրակէն իլիզը տը՛ղան տո՛ւս ա կամ, Յայկուշ աքերը կարում չի շինի* (2): 3. փխբ. Ողնաշար, հատկապես՝ ողնաշարի վերին՝ վզի մասը: *Մըհակալ թըխում ըն, էտ կատվէն իլիզը կօտըրում* (2):  
 - Իլիզը կըտըրած - Շատ աղքատ: *Իլիզը կըտըրած մարթ ա, ամմա վե՛շ մինին մըննանը յը՛ր չի օնում* (Բ):  
 - Իլիզը տալ - Անասունը մորթելուց հետո վիզը մինչեւ վերջ կտրել՝ մարմնից անջատել, որպեսզի չթափտա: *Վը՛խճարը մօրթում ըն, իլիզը տամ, մաշկում* (Բ):  
 - Իլիզին տափը - Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղի գերեզմանոցը:  
 - Իլիզին տափը քինիլ - տեն ՍԸ՛ՌՆԵԼ:  
 - Իլիզ՝ մանել - Իլիկով թել մանել: *Մին օր էտ ախճիզը կառնէրը տանում ա հանդը, համ էլ իլիզ՝ ա մանըմ* (ՅԺՅ, V, 490):  
 ԻԼԻԳԱՍԱԶ/ԻԼԻԿԱՍԱԶ - գ. Ճախարակի իլիկի միջին մասը, որի վրայով անցնում է ճախարակը պտտեցնող լարը: *Քօղը կարծ ա իննում, կարում չըն քը-ցին իլիզ՛ամաջը* (2):  
 ԻԼԻԳԱՍՕՆ/ԻԼԻԿԱՍՕՆ - գ. Ճախարակի այն մասը, ուր իլիկն է պտտվում: *Իլիզ՛ատօնը վեր բօշ ինի, իլիզը փարու կըտա* (Բ):  
 ԻԼԻԿ - տեն ԻԼԻԳ:  
 ԻԼԻԿԱՍԱԶ - տեն ԻԼԻԳԱՍԱԶ:  
 ԻԼԻԿԱՍՕՆ - տեն ԻԼԻԿԱՍՕՆ:  
 ԻԼԻՍ - ԻԼԻՍ - տեն ԻԹՏԸԲԱԹՏԻ:

ԻԼԼՆԹ - տեն ՄԻԼԼՆԹ:  
 ԻԼԼՆԹ - ՄԻԼԼՆԹ/ԻԼԼՆԹ-ՄԻԼԼՆԹ/ԸԼԼԻԹ-ՄԻԼԼՆԹ/ԸԼԼԻԹ-ՎԻԼԼՆԹ/ԻԼԼԻԹ - ՄԻԼԼՆԹ - գ. Մարդ արարած: Ասում ըն.  
 - Տու հինգ իլլաթ-միլլաթ ը'ս, վար քըշէր-վա էս վախտըս ըստէղ ըս (ՅԺՅ, V, 404):  
 - Իլլաթ-միլլաթ ինիլ - տեն Յը'տը - թէ-փոռը կորչի: Տըրանա յետը օշափը քու-նալ ա հընցընում, ախճիզն էլ ըլլաթ-վիլ-լաթ ա ինիւմ, էլ ուրվամ չի (ՅԺՅ, VII, 78):  
 ԻԼԼՆԹ/ԻԼԼԻԼ (գրք. էլանեմ, հ.է. \*el-)  
 - չք. 1. Եռալուց բարձրանալ եւ թափ-վել: Թանալը իփիւմ ա, իփիւմ, իլլըմ (Բ):  
 2. փխր. Շատանալ, շատ լինել, առատ լինել: Ըստարէ ցորէնը իլլիւմ ա (Բ):  
 3. փխր. Շատ հարուստ լինել: Ըստըրանը իլլիւմ ըն, ամմա կօշտ փորալ հաց չըն օտում (Ձ):  
 ԻԼԼՆՄԱ - տեն ՄԼԼՆՄԱ:  
 ԻԼԼՆՁ/ԻԼԼՆՁ (արաբ. *ilag*, թրք. *ilāç* (միջոց) - գ. ճար, հնար, միջոց: Թաքա-վէրը ասմա. - Ըստըրա իլլանը էն ա, վէր մին փօս քանդիք, թադիք (Ձ):  
 - Իլլանց անէլ - Որեւէ վիճակից դուրս գալու համար հնար՝ միջոց գտնել: Էտ կընէգը հիվընդանում ա, կարում չըն մին իլլանց անին (Ձ):  
 - Իլլանց ինիլ - Որեւէ վիճակից դուրս գալու համար հնար՝ միջոց գտնվել: Յանքիմնէրէն մինը քընամ ա, մինը՝ կամ, ճար չինում, իլլանց չինում (ՅԺՅ, VI, 216):  
 ԻԼԼՆՔԸՍ - տեն ԻԼԼՆՔԻ:  
 ԻԼԼՆՔԻ/ԻԼԼՆՔԸՍ/ԻԼԼՆՔՏԱՍ - վ. Մանականդ, հատկապես: Լօխ էլ օգում ըն արտ վարին, իլլանքի ճիրօվի տը'ղ (Ձ):  
 ԻԼԼՆՔՏԱՍ - տեն ԻԼԼՆՔԻ:  
 ԻԼԼԵՐՈՒՏ - տեն ԸԼԼԵՐՈՒՏ:  
 ԻԼԼԸԿԻԼ - տեն ԻԼԼՆԼ:  
 ԻԼԼԸՐԱՏՈՆ - տեն ԸԼԼԻՐԱՏՈՆ:  
 ԻԼԼԸՐԹԱԹԱՆ - տեն ԸԼԼԻՐԹԱԹԱՆ:  
 ԻԼԼԸՐՅԱՏ - տեն ԸԼԼԻՐՅԱՏ:  
 ԻԼԼԸՐՄԱՐ - տեն ԸԼԼԻՐՄԱՐ:  
 ԻԼԼԸՐՄԱՐԷ - տեն ԸԼԼԻՐՄԱՐԷ:  
 ԻԼԼԸՐՍԸՐՓԷ - տեն ԸԼԼԻՐՍԸՐՓԷ:  
 ԻԼԼԸՐՔԱՇԻ - տեն ԸԼԼԻՐՔԱՇԻ:  
 ԻԼԼԸՐՕՏԷԼ - տեն ԸԼԼԻՐՕՏԷԼ:  
 ԻԼԼԸՐՕՏԿԷԼ - տեն ԸԼԼԻՐՕՏԿԷԼ:  
 ԻԼԼԸՑ(Ը)ՆԷԼ (գրք. էլուցանեմ) - նք.  
 ԻԼԼՆԼ-ի:  
 ԻԼԼԻԹ-ՄԻԼԼՆԹ - տեն ԻԼԼՆԹ-ՄԻԼԼՆԹ:  
 ԻԼԼԻԼ - տեն ԻԼԼՆԼ:  
 ԻԼԼԱ (թրք. *ilxi*) - գ. 1. Խառնիճա-դանջ՝ խառն բազմություն՝ ամբոխ: Իլ-խան վէր կամ ա, փիս մարթիք շատ ըն ընում, հորը չըրչարում ըն (ՆԱԲ, 92):  
 2. Նախիբ, հոտ: Պըտահում ըն մին վըխ-ճարու իլխու (ՅԱԲ, 15, 63):

- Իլխա անէլ - Յավաքել: Էտ խօխան սաղ ապըրանքը իլխա յա անում, քըշում ձորանց շէնը (Ձ):  
 ԻԼԿԻՇ(Տ) - տեն ԻԼԳԻՇ(Տ):  
 ԻԼԳՈՒՆ(Է) - գ. Կարմրանագիների ընտանիքին պատկանող թուփ՝ բարակ տերեւներով, վարդագույն կամ սպի-տակ ծաղիկներով: Կլորունը Ք'ոռնէն դը-րաղէն ա շատ փըսնէս (Ձ):  
 ԻԼՆԷԼ - նք. Կալսվող հացահատիկը շրջել՝ խառնել, որպեսզի լավ չորանա: Յաշանը իլնիւմ ըն, նըստում, վէր հաց օտին (Ձ):  
 ԻԽՇ - տեն ԻՇԽ:  
 ԻԽՇԱՆ - տեն ԻՇԽԱՆ:  
 ԻԽՇԱՆՈՒԹՈՒՆ - տեն ԻՇԽԱՆՈՒ-ԹՈՒՆ:  
 ԻԽՇԸՅՆՎԱՄԱ - տեն ԻՇԽԸՅՆՎԱՄԱ:  
 ԻԽՇԸՆԱՁ - տեն ԻՇԽԸՆԱՁ:  
 ԻԽՏԻՅԱՐ - տեն ԸԽՏԻՅԱՐ:  
 ԻԽՏԻՅԱՐՉԻ - տեն ԸԽՏԻՅԱՐՉԻ:  
 ԻՇՆՅՆՁ - գ. 1. Այծի հագ: Էտ իծան-հանգը իծէրէն ըսպակից (Բ):  
 2. փխր. Կեղծ եւ թույլ հագ: Իծանհանգը ըստըրանա անպակաս ա (Բ):  
 - Իծանհանգ տալ - Կեղծ եւ թույլ հա-գալ: Իծանհանգ ա տամ, վէր գիդան, թա հիվանդ ա (Ձ):  
 ԻՇՆՄԱՐ - գ. Մեծ՝ ծերացած այծ: Իծըմարէն մէտը օտվէլ չի (Բ):  
 - Իծանար էծ - Ծծկեր երեխային կա-թից շուտ կտրած մայր: Միհէնգվա հարթները իծանար էծեր ըն, խօխունը մին ամէս էլ չըն ծէծ տամ (Բ):  
 ԻՇՆՄՕՇ - գ. Երկարափուն մոշի տե-սակ, որ աճում է հատկապես անտառ-ներում: Իծանմօշը պէնդ մօշ ա (Բ):  
 ԻՇՆՆՕՑ - գ. Այծերի փարախ: Յունց ա պըտահում, կ'ոռնէր նի յա մընում իծան-նօցը, էծերը կըտօրում (Ձ):  
 ԻՇՆՏԱՐ - գ. ած. Այծի տեր, այծ ու-նեցող: ...Մին օր էլ էտ իծատար պառա-վը կ'ամ ա էտ չուբանէն յորա կըռէվ, ասում. - Էծըս տու վըս քըթում, պէց թօ-ղում (ՅԺՅ, VII, 20):  
 ԻՇՆՐՆՁ (գրք. այծարած) - գ. ած. Այծերի հովիվ, այծեր պահող: Տէս ըն կամ, տէսնում՝ մին իծարնած ընդէղ էծե-րը պահում ա... (ՅԱԲ, 15, 101):  
 ԻՇՆՍԸՐՕՔ - 1. գ. Ցանցառ միրուք: Էտ իծըմըրօքըս խէ խօզում չը'ս (Բ):  
 2. ած. Այծի միրուքի նման սրածայր մի-րուք ունեցող: Մին օր էլ ըստըրանց շէնը էրկու իծըմըրօք մարթ ըն կ'ամ (Ձ):  
 ԻՇՆՍՐԵՂ՝ԸՇՆՍՐԵՂ՝ԸՇՆՍՐԵՂ՝ - Վայրի մանրապտուղ ելակ: Ըտը'ղ էլ շատ իծըմօրէ յա փըսնէս (Ձ):  
 ԻՇՆՍՐԵՂ՝ԸՇՆՍՐԵՂ՝ԸՇՆՍՐԵՂ՝ - գ. Սաջի վրա թխված անթթմոր բա-րակ հաց: Էտ կընէգը դանստի խըմօր ա

անում, մին իծըմօրէ թըխում, տինում դունաղէն ըռաշկէն (Ձ):  
 ԻԾԸՇԱՐՈՒԿ - տեն ԻԾԸՇԱՐԱՆՈՒԿ:  
 ԻԾԸՇԱՐԱՆՈՒԿ - ած. Տողան կազ-մած, մեկը մյուսի ետեւից միաշարք շարված: Ըստըրանը ըտի իծըշըրանուկ քինամ ըն, թաքավէրին պըլատէն ըռը-չին վը'նը կէնում (Ձ):  
 - Իծըշըրանուկ ըղնէլ - Տողան կազ-մել, իրար հետեւից միաշարք շարվել: Ժուղօվորթը իծըշըրանուկ ըն ըղնում, էտ տըղէն հը'տան քինում (Ձ):  
 ԻԾՊԸՍՕԿ - տեն ԹԷՉՆՍՁՆՅԻ:  
 ԻԾ(Տ)ՈՒՆ - տեն ԻՑ(Ց)ՈՒՆ:  
 ԻԿՐԱ (*ռուս. ukpa*) գ. - 1. Ձկնկիթ, խա-վիար: Այան ասմա. - Բալա, յը'ս վէր իկ-րա չըմ կէրալ, մըծացալ չը'մ (Բ):  
 2. Բա-դրիջակի աղացած զանգվածից պատ-րաստված պահածո: Բաղըմջանէն իկ-րան քըսում ա հացը, կըծօտում (Բ):  
 ԻՀ - տեն Ի՝:  
 ԻՀԻԼՕՑ - տեն ԸՀԻԼՕՑ:  
 ԻՀՏԻԲԱՐ/ԻԹՏԻԲԱՐ (արաբ. *ixtibar* (փորձառություն, հմտություն), թրք. *iktibar* (ուժ, գործություն, արժեք) - 1. տեն ՂԱՎԷՐՅԱ, Մէլիքին ըստըրա յորա իհ-տիբար չինում, ամմա ըստըրան էլ ա դարկում (Ձ):  
 2. գ. Յարգ, պատիվ: Էտ պէնան յը'տը թաքավէրին իհտիբարը յիրգիրումը պիցըրանում ա (Ձ):  
 ԻՀՏԻԲԱՐԼՈՒ/ԻԹՏԻԲԱՐԼՈՒ (թրք. *iktibarla*) - 1. տեն ՂԱՎԷՐԵՆՆԻ: Իհտի-բարու մարթ ա մրտոշը, լօխ դավէրյա յըն անում: 2. ած. Յարգանք՝ պատիվ ու-նեցող: Ըտի Սօնան էտ իհտիբարու մարթին ըխճըկանը օզնում ա տըղէն հը'տէ (Ձ):  
 ԻՄ (գրք. իմ) - Անձնական դերան-վան եզակի թվի առաջին դեմքի՝ ՅԸ՝Ս-ի սեռական հոլովածեւ: Վը'ր ուրանց հը-վաքում ըն, դօնաղըն ասում ա. - Յէս ծը-ր տըղան ըմ, էս էլ իմ կընէգըս ա... (ՆԼԳԺԲ, 76):  
 - Իմ աջառըս ընդըրա յորա կ'ամ ա - Յետը կարողանում եմ լեզու գտնել: Ախ-ճիգը ասում ա. - Իմ աջառըս ընդըրա յը-րա կ'ամ ա, թօղէ յը'ս քինամ, պիրիմ (Ձ):  
 - Իմ աջառըս ընդըրա նըիւտ փըռ-նում ա - տեն Իմ աջառըս ընդըրա յորա կ'ամ ա:  
 - Իմ ապօր/հօր էշին թայը/թան - 1. Յասակ առած, ծեր: Այդիւնը իմ ապօր էշ-ին թան ա, ամմա հնալ նօր ա փըսակ-վում (Բ):  
 2. Շատ հին: Էտ գ'անքան իմ ապօր էշին թան ա (Բ):  
 - Իմ արը'վ - Երդման բանածեւ՝ երդվում եմ իմ արեւով: Բախշին ուր-թիւմն ա օտում. - Իմ արը'վ, էտ պէնը յը'ս չըմ ըրալ (Ձ):

- Իմը ինձ ա հըսալ/տուվալ - Զամբե-  
րությունս հատել՝ վերջացել է: *Էտ էլ վեր  
ասալ ա, իմը ինձ ա տուվալ* (2):

- Իմ խըմօրըս էլ ա խաշ ըրած - Իմ  
բաժինն էլ վերջացած է: *Այան ըսէս ա. -  
Իմ խըմօրըս էլ ա խաշ ըրած, ըսօր-  
էք՝նոց ք՛ինանկան ըմ էն դուսյան* (2):

- Իմ կարճ խըլքավըս - Ասում է խո-  
տողը, երբ համեստորեն ցանկանում է  
իր կարծիքը հայտնել մի բանի վերա-  
բերյալ՝ կարծում եմ, իմ կարծիքով: *Իմ  
կարճ խըլքավըս ըսօր ծոն ա կըլա-  
կան* (2):

- Իմ հնաշվալ - *տեն* Իմ կարճ խըլ-  
քավըս:

- Իմ հօր տըղան չինիմ, թա... -  
Սպառնալիքի՝ հավաստիացման ար-  
տահայտություն մի բան անպայման  
կատարելու մասին: *Պուդին կըզնըվում  
ա, թա. - Մէլիք, յո՛ւս իմ հօր տըղան չի-  
նիմ, թա քննալ չի կամ քո՛ւզ* (2):

- Ի(մ) մար ինձ չծլէն դնոզումըն ա՛  
պերալ - Ես էլ եմ արժանի հոգատար՝  
ուշադիր վերաբերմունքի: *Կուճի ախպե-  
րը լաց ա ինում, թա. - Իմ մար ինձ չծլէն  
դնոզումըն ա՛ պերալ, խէ ինձ փայ չը՛ք  
տամ* (2):

- Իմ մօր սիրականը - Ասելի անձ-  
նավորություն: *Իզէն ինձը՛տէ ախպեր  
չի, իմ մօր սիրականըն ա, վեր տը՛սնում  
ըմ, գննիւս տանում ա* (2):

- Իմ ու քու անէլ - Խտրություն դնել,  
իրար հետ համերաշխ չլինել: *Սաբալ  
ախպերը ըն, սաղ օրը էն ըն իմ ու քու  
ընէլիս* (2):

- Իմ ու քու չինիլ - Իրենց ունեցածից  
հավասար օգտվել, իրար մեջ խտրու-  
թյուն չդնել, համերաշխ լինել: *Խօսքը  
մին ըրած՝ սերավ ապրում ըն, իմ ու քու  
չի կա* (3Ժ3, VI, 237):

- Իմ փայ նէմէցըս/թօրքըս - Զանա-  
քով ասում է տղամարդն իր կնոջ հաս-  
ցեին՝ իմ բաժին թշնամին: *Սեդրակը  
ասմա. - Ա՛ կընէգ, իմ փայ նէմէցըս տու  
վըս, էլ հօր ը՛մ քինամ կըռք՛վ* (2):

ԻՄԱՆ (արաբ. թրք. *iman*) - գ. Զա-  
վատ, կրոն, դավանանք: *Ըստ էտ թօրքը  
իմանը փօխում ա, ըտըրանց մաչին  
ապըրում* (2):

ԻՄԱՆԱՆ/ԸՄԱՆԱՆ (գրբ. *իմանամ*,  
հ.ե. \*em-) - տեն ԳԻՂԱՆ:

ԻՄԱՆԱՆԶ (թրք. *imansiz*) - ած. 1. Զա-  
վատը՝ կրոնը՝ դավանանքը փոխած:  
*Էտ շէնումը իմանսըգ մալականնէ յըն  
ապրում* (2): 2. փխբ. Անգամ, անպատ-  
կառ: *Ասալ ա. - Ա՛ քալթառ, ա՛ իմանսըգ,  
հոնչիլ ը՛ս օտում* (3Ժ3, VI, 47):

ԻՄԱՍ - տեն ԻՄԱՍ:

ԻՄԱՍԿ - գ. Իմացողություն, հասկա-  
ցողություն: *Ընդըրա իմասկը վերըն ա՛,  
վեր կօրծի յըս յօր կալնալ* (Բ):

ԻՄԱՍԿԱԿ/ԸՄԱՍԿԱԿ - ած. Խելոք,  
բանիմաց, ըմբռնող, հասկացող: *...Յէր  
ա կընաս, թա. - Զէցէք էս հինչ թաքա-  
վերէն կօշտը. էն միկա իմասկավ ա ին-  
ձանա* (3Ժ3, V, 318):

ԻՄԱՍՏՈՒՆ/ԸՄԱՍՏՈՒՆ/ՄԱՍՏՈՒՆ  
(գրբ. *իմաստուն*) - գ. ած. 1. Մեծ իմաս-  
տությամբ օժտված, հանճարեղ, շատ  
խելոք: *Էտ ախճիգը իմաստուն ա ինում,  
գուդում ա, վեր տա լըին թաքավերըն ա,  
վը՛րսի յա յը՛կալ* (3Ժ3, V, 546): 2. Իմաս-  
տասեր, փիլիսոփա, գիտնական: *Թա-  
քավերը ծեն ա տաս ուրան յիրգիրին  
իմաստունուն, վեր ըտըրա մանին քը-  
թէնան* (2): 3. Բանիմաց, փորձված: *Պա-  
ռավ մարթը իմաստուն կինի* (Բ): 4. ած.  
Իմաստություն պարունակող, իմաստա-  
լից: *Էտ կիրքումը իմաստուն խօսկերք  
ա ինում կ՛իրան* (2):

ԻՄԱՍՏՈՐՈՒՆ/ԸՄԱՍՏՈՐՈՒՆ/ՄԱՍ-  
ՏՈՐՈՒՆ (գրբ. *իմաստնություն*) - գ.  
Իմաստուն լինելը, իմաստունի հատկու-  
թյունը *...Ինքըն էլ ուրան իմաստօթու-  
նըն ա պինըցընըմ, էս անսունչ ըխճկա-  
նը սունչ ա տամ* (3Ժ3, V, 335):

ԻՄԱՍ/ԻՄԱՍ (գրբ. *իմաց.*) - Գոր-  
ծածվում է կապակցությունների մեջ:

- Իմաց անէլ/տալ (գրբ. *իմաց առ-  
նեմ*) - Զայտնել, տեղեկացնել: *Էտ տը-  
ղան ծին նըստում ա, քընում ժողովուր-  
թին իմաց անում* (3ԱԲ, 15. 118):

ԻՄԵՆԱՅԱ (ռուս. *имения*) - գ. Կարո-  
ղություն, հարստություն, ունեցվածք:  
*Մելիք՝ Սաջումէն իմենյան փըսէն ա մը-  
նում* (2):

ԻՄՊՈՐՏՆԻ - տեն ԻՄՊՈՐՏՆԻ:

ԻՄՊՈՐՏՆԻ/ԻՄՊՈՐՏՆԻ (ռուս.  
*импортный*) - ած. Ոչ տեղական, ուրիշ  
երկրից ներմուծած: *Առաչ կընդըմընդ  
մարթու վա իլնալ ծի, միհենգ թօրնը  
յէշում ըս, իմպըրտնի մաշին ըն քը-  
շում* (Բ):

ԻՅԱ - ձ. Էշի գռռալու ձայնը: *Էշը  
գըռռամ ա՛ իյա՛, իյա՛... (2):*

ԻՆ - տեն ՍԱՂԱՆԱ: Ասում ըն, էտ  
ծծրումը ինէր կան (2):

ԻՆԱԲԻ - գ. Պարեղանակ: *Զուռնա-  
չին մին լավ ինաբի յա ածում, էտ արչէ-  
րը ըսքըսում ըն պար կնըլ* (2):

ԻՆԱԴ (արաբ. *inad*) - գ. Զամառու-  
թյուն, կամակորություն: *Սամսունէն  
ինադը լօխ գնոդում ըն, ըտըրա հը՛տէ էլ  
նըհը՛տը կօրծ չըն փըռնում* (Բ):

- Ինադ անէլ/ըղնէլ - Զամառել, կա-  
մակորություն անել, հակառակվել: *Էտ*

*կընէգը ինադ ա ըղնում, կավը ծախում  
չի* (2):

ԻՆԱԴՈՒ (թրք. *inadina*) - մ. 1. Ի հե-  
ճուկս, զգրու, մեկին հակառակ: *Տիքըր-  
կընգանը ինադու մը՛ծ հըրսանէք՝ ա  
անում* (2): 2. Միտումնավոր կերպով,  
դիտմամբ: *Ինադու ծերքը կըտըրում ա,  
վեր կօրծ չանէ* (Բ):

ԻՆԳԼԻԶ (թրք. *ingliz*, իտ. *inglese*) - գ.  
1. Անգլիացի: *Կոնքնոց Սըմվէլին կը-  
նէգը ինգլիգ ա, կըռվէն վախտըն ա պէ-  
րալ* (2): ած. 2. Անգլիական: *Ըտըրան էլ  
մին ինգլիգ թըվանգ ա ինում* (2): 3.  
փխբ. Շատ սուր՝ հատու (կտրող գոր-  
ծիքների մասին): *Ինգլիգ դարյազ ա* (Բ):  
4. փխբ. Ճարպիկ, ձեռներեց: *Խօսըսվը  
ինգլիգ մարթ ա* (Բ):

ԻՆԳԻԼ - տեն ԸՂՆԵԼ:

ԻՆԴԻ - տեն ԸՂԴԻ:

ԻՆԵԼ - տեն ԻՆԻԼ:

ԻՆԺԻՆԵՐ - տեն ԻՆՋԻՆԵՐ:

ԻՆԻԼ/ԻՆԵԼ/ԸՆԻԼ (գրբ. *լինիմ*) - չք.

1. Գոյություն ունենալ: *...Մին խէլնոնք  
տըղա յա ինըմ, ինքըն էլ ծոնկըն փըռնօղ  
(3Ժ3, V, 78):* 2. Գտնվել մի տեղում: *Էտ  
յը՛խծէն էլ ծըմակէն մաչին ա ինում* (2):  
3. Տեղի ունենալ, կատարվել, պատահել:  
*Ըտըրանա յը՛տը էտ յիրգիրումը շատ  
պէնէր ա ինում շէնան հը՛ռէ* (2): 4.  
Դառնալ մի բան, վերածվել մի բանի:  
*Մուկը վէշ մին վախտ թօղէլ չընք, վեր  
Շուշին թուրքերէն հը՛տէ դըջատը՛ղ ինի  
(Բ):* 5. Մի տեղում ներկա գտնվել: *Յու  
վեր Սուխտուրաշէն իլնձ ա, տը՛սած կի-  
նի, թա էտ հինչ տըրախտ տը՛ղ ա...*  
(ԱԱ, 23): 6. Պատկանել: *Էտ տօնը քուխէ-  
նըն ա ինում* (2): 7. Ունենալ, ունեցվել:  
*Մելիք՝ Շահնագարէն մին շօն ա ինում,  
վըխճարու մըսավ ա ինում պըհէլիս  
(ՆԼԴԺԲ, 99):* 8. Զանդիսանալ: *Ըտը-  
րանց կըռվէն մանին էն ա ինում, վեր  
խօրէնին էշը քացէ յա տամ Յէնդօվէն  
խօզին* (Բ): 9. Զավասարվել, կազմել:  
*Յէնգ տարէ կինի, վեր իմ ախպօր տը՛-  
սալ չըմ* (Բ): 10. Առաջանալ, ծագել: *Յը՛-  
ղը մաճնան ա ինում* (2): 11. Ծնվել,  
ստեղծվել: *Տահանը ուրուր նըհը՛տ վեր  
ապրում ըն, էրկու տըղա յա ինում  
(ՆԼԴԺԲ, 2):* 12. Որեւէ բանով տարվել՝  
զբաղվել: *Մարթը տը՛սնում ա, վը՛ր ար-  
չըն էն ա շաղված, ուրան անավ իլած,  
թօղում ա փախճում* (3Ժ3, VII, 208): 13.  
Վեր բարձրանալ: *Մինչը՛վ միհենգ էլ  
ըտահանց թուրնան ծօխ ա ինում  
յէրգինքը* (2): 14. Որեւէ վիճակում՝  
դրության մեջ գտնվել: *Էտ կընէգըն էլ  
վըննըճանդըր ա ինում* (2): 15. Կազմում  
է հարադրական բայեր լինելության՝ վե-  
րածման նշանակությամբ: *Թաքավերին*

տորդան էտ չուբանեն նրիհտ հընգէր ա ինոմ, քիսամ (Ձ): 16. Կազմում է հարադրական բայեր մի բանի եկեղանակվել նշանակությամբ: *Էտ խոխոսցը ծըրքեն մարը խըրըվ-խարավ ա ինոմ* (Ձ): 17. Կազմում է բայի երկրորդական բարդադրյալ ձևեր: *Մին օր հաց թըխէյիս դիւշմանի գորքը անց կընայիս ա ինոմ* (ԱԱ, 25):

- Ինիլի պէն - Յնարավոր՝ իրականանալի բան: *Ասում ա. - Էտ ինիլի պէն չի, նրիախ տըղան չըրչարվէ մէլ* (Ձ):

- Ինոմ ա, չինոմ - Յեքիաթներն սկսելու բանաձեւ՝ հայտնի չէ՝ եղել է, թե ոչ: *Ինոմ ա, չինոմ մին թաքավէր* (ՀԺՀ, V, 188):

- Չինի թա - 1. Ստադիր չէ՞ս, կարո՞ղ է պատահել: *Կօյին ասմա. - Սի՛րգօն, չի-նի՞ թա փուշմանալ ըս, օգում չըս հըր-կըրվէ արտ անինք՝* (Ձ): 2. Գուցե, թերեւ: *Չինի՞ թա թօռ կ'ա* (Բ):

- Չինիմ-չըգիդամ - Երբեք, ոչ մի դեպքում, արգելում եմ: *Յնրը ասմա. - Չինիմ-չըգիդամ մինին բուստանան կուղթթուն ըք ըրալ* (Ձ):

ԻՆԻՍՏԻՏՈՒՏ (ռուս. институт, լատ. institutum) - գ. Բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ինիստուտ: *Էտ ախճիգը ինիստուտը պըրծընում ա, փըսակվում* (Ձ):

- Ինստիտուտ ավարտ - Ինստիտուտ ավարտած, բարձրագույն կրթություն ստացած: *Ըտըրան էլ էրկու ինստիտուտ ավարտ ախճիգ ա ինոմ* (Ձ):

ԻՆԿՈՒԲԱՏՈՐ - (ռուս. инкубатор, լատ. incubare) - գ. Արհեստական եղանակով ճտեր հանելու ապարատ: *Ինկուբատորը անոնք ընգավ, շէնին կընանէք՝ը հալ թօխս տինիլը թնրգ՝ ըրէն* (Բ):

ԻՆՁԻԶՁ (գրք. ինձ) - Անձնական դերանվան եզակի թվի առաջին դեմքի՝ ՅԸ՝ Ս-ի տրական եւ հայցական հոլովաձեւը: *Ըտըրանք խաղավ ըն ինիս, ինձ էլ մըհալ չըն քըցիս* (Ձ):

- Ինձանա հըրցըրու - Այդ մասին ես լավ գիտեմ: *Տու ինձանա հըրցըրու, թա էտ կընէգը հինչ ջուպար ա* (Բ):

- Ինձանա լըս հըրցըրում - Դու ինձնից լավ գիտես, այդ մասին ավելորդ է ինձ հարցնելը: *Ինձանա լըս հըրցըրում, տու սաղ գանքըտ ընդը՞ղ ըս ապըրալ* (Բ):

- Ինձ ըստի չի տըսնաս - Ինձ ապաշնորհ՝ թույլ՝ խեղճ չկարծես, մի՛ թերազնահատիր իմ ուժը: *Աղվէսը ասմա. - Կո՞ւ ախպեր, ինձ ըստի չի տըսնաս, լըս կարող ըմ էտ կումաշին էլ լըս-նիմ* (Ձ):

- Ինձ թաղիս - Երդման բանաձեւ՝ թող մեռնեմ, եթե տեղյակ եմ արել եմ

եմ: *Յիրըվանը ասմա. - Ինձ թաղիս, թա լըս քու հավըտ մօրթած ինիմ* (Ձ):

- Ի՞նձ հինչ - Դա ինձ չի վերաբերում, դա իմ գործը չէ, չեմ ուզում խառնվել: *Ի՞նձ հինչ, թա Պուղուաէն տըղէն թակալ ըն* (Ձ):

- Ինձ յեշնում ա, քը՞գ տըսնում - Ասում եմ շի՛լ՝ շեղ աջքերով մարդկանց մասին:

- Ինձ տըս, քը՞գ խըղճա՝ - Իմ սխալները մի՛ կրկնիր, որ ինձ պես չգժախտանաս՝ չծախողվես: *Նանօվը ասմա. - Ծաղէգ, ինձ տըս, քը՞գ խըղճա՛, հիշ-կան կարում ըս, հարթանըտ նրիհտ լ'ալ կ'աց* (Ձ):

- Ինձ տո՞ւս լը՞ք - Որեւէ պարտականություն հանձն առնելու արտահայտություն. ես դա կանեմ: *Արտոնը ասմա. - Արաղը ինձ տո՞ւս լը՞ք, լըս կը-պիրիմ* (Ձ):

- Ինձ տօ, քը՞գ տամ - Չկա, չունեմ, որտեղի՞ց տամ: *Մըհէգ հօր ա՛, ինձ տօ, քէգ տամ, իտի էշէրը մաննալ կըհըմ-բարվին...* (ՁՏ, Բ, 150):

ԻՆՁԸՏԵ/ԸՆՁԸՏԵ - մ. Ինձ համար: *Ինձըտէ մին փափաղ ըմ ինք կալնի* (Բ):

ԻՆՁ ՈՒ ԻՆՁ - մ. Ինքս ինձ, ինքս ինձ հետ, ինքս իմ մեջ: *Ինձ ու ինձ խօսում ըմ, հո՞ւր ըմ խընգարում* (Բ)

ԻՆՆԱՆՈՒՅ - 1. ած. Ինը մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: *Մին ին-նանուց տախտակ ա տանշո՞ւմ, էտ պա-տէն թըխում:* (Ձ): 2. գ. Թղթախաղի մեջ ինը նիշ պարունակող թուղթը: *Կարտ ըն խաղ անում, Անդոնեն իրըք իննա-նուց ա ըղնում* (Ձ):

ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ - տեն ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ: ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ/ԻՆՆԱՍ(Ս)ՈՒՆ (գրք. իննսուն) - թ. Իննսուն: *Ապան իննսուն տիրըկան ա:* (Բ)

ԻՆՆԷՔԱՆ - տեն ԻՆՆԷՔԱՆ:

ԻՆՆԸ (գրք. ինն) - թ. Ութին հաջորդող թիվը՝ ինը: *Իննը ամէս անց ա կե-նում, թաքավէրին հարթը մին վըսկը-քնքնիլ տըղա յա պո՛ւրոմ* (Ձ):

- Իննը ամէս քու մօր փօրումը հունց ըս կացալ - Ասում եմ շատ անհամբեր մարդկանց:

ԻՆՆԷՔԱՆ/ԻՆՆԷՔԱՆ (գրք. իննե-քեան) - թ. Ինն էլ, բոլոր ինը միասին: *Իննը տըղա օնէ, իննը՞քան էլ մին տան մաջի լըն ապըրում* (Բ)

ԻՆՆԸՊԱՏԵՎ (գրք. իննպատիկ) - ած., մ. Ինն անգամ ավելի, իննով բազմապատկված: *Յնրը տըղէն անա իննը-պատեգ՝ մը՞ծ ա* (Բ):

ԻՆՆԸՏԱԿ - տեն ԻՆՆԸՊԱՏԵՎ:

ԻՆՆԻՆՁԻ - թ. Իններորդ: *Մը՞ծ տը-*

դան հանլն իննինջի դասարանըմըն ա կըրթիս (Բ):

ԻՆՁԸ(Թ)ՄԻՇ/ԻՆՁԻ(Թ)ՄԻՇ/ԸՆ-ՁԸ(Թ)ՄԻՇ (թրք. inçinmek (վիրավորվել, սիրտը կոտրվել) - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Ինջը(թ)միշ անել/տալ - Նեղացնել, տխրեցնել, վիրավորել: *Կընէգը էզզան մարթին նըհէտ կըռէլ ա անըմ, մարթին ինջիմիշ անըմ...* (ՀԺՀ, V, 15):

- Ինջը(թ)միշ ինիլ/տը՞նալ - Նեղանալ, տխրել, վիրավորվել, նեղսրտել: *Արանգին մին կընէգ ա կ'ամ, ասում ա - Ա՛ բալա, յէր կաց, շատ մէլ ընջըմիշ ինիլ, կա շօրէր տամ, կը՞ց, քիսի՞ դօնախըր ...* (ՀԺՀ, V, 495):

ԻՆՁԻ(Թ)ՄԻՇ - տեն ԻՆՁԸ(Թ)ՄԻՇ

ԻՆՁԻՆԵՐ/ԻՆՁԻՆԵՐ (ռուս. инже-нер, ֆր. ingenieur, լատ. ingenium) - գ. ճարտարագետ, ինժեներ: *Թաքավէրը մին ինժինէր ա պիրիլ ըամ, վէր էտ պալատը շինի* (Ձ):

ԻՆՍԱՆ - տեն ԸՆՍԱՆ:

ԻՆՍԱՓ (արաբ., թրք. insaf) - տեն ԽԸՂԸ (3): *Լէնգ՝ Թէմուրէն ըսկի ինսափ չի իլնի* (Ձ):

ԻՆՍԱՆԱԿԸՏ - տեն ԸՆՍԱՆԱԿԸՏ:

ԻՆՍԱՆՕԹՈՒՆ - տեն ԸՆՍԱՆՕԹՈՒՆ:

ԻՆՍ-ՁԻՆՍ - գ. 1. Կենդանի շունչ, շնչավոր էակ: *Մուղանին չօլին նըման մին չօլ ա կ'ամ առաջըս, վէ՛չ ճօնդ օնի, վէ՛չ պօճախ, մարթ, ինս-ջինս չի ըրէ-վըմ...* (ՁՏ, Բ, 13): 2. տեն ԻԼԼԱՐ-ՄԻԼ-ԼԱՐ 3. Ազգուսակ, ցեղ: *Ըտըրանք փիս ինս-ջինս ըն ինոմ* (Ձ):

ԻՆՍԱՐՈՒՄԵՆՏ (ռուս. инструмент, լատ. instrumentum) - տեն ՅԱՅԱՐ (Ձ):

ԻՆՎԱԼԻԴ (ռուս. инвалид, ֆր. invalide, լատ. invalidus) - ած. Խեղանդամ, հաշմանդամ: *Թաքավէրին էլ մին ինվա-լիդ ախճիգ՝ ա ինոմ՝ ճօխտ վը՞ննան չօլախ* (Ձ):

ԻՆՎԱԼԻԴՕԹՈՒՆ - գ. Հաշմանդամ լինելը: *Ինվալիդթունըն ա էտ մարթին ըտի անխը՞ղճ շինալ* (Բ):

ԻՆՎԵՆՏԱՐ (ռուս. инвентарь, լատ. inventarium) - գ. Հիմնարկության՝ ձեռնարկության ունեցվածքի մեջ մտնող առարկաների՝ իրերի ամբողջությունը, գույք: *Ըշկօլէն հը՞տ թանգն ինվէնտար ըն ինք կալնի* (Ձ):

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ - տեն ԻՆՏԵԼԻԳԵՆՏ:

ԻՆՏԵՐՆԱՍ (ռուս. интернат, ֆր. internat, լատ. internus) գ. 1. Գիշերօթիկ դպրոց: *Քիսամ ա Բաքու, ցիրը՛կը կօրծ անում, ուրո՞գնըն էլ ինտէռնատումը կարթում* (Ձ): 2. Դպրոցին կից կացա-րան սովորողների համար: *Էրո՞ւշ շէնա*



- Իշընդ-իշընդ անել - Մերթ ընդ մերթ փայլել՝ առկայծել՝ փայլվել: *Տըսնաս ըն՝ հէն ա մին հրճե տեղ մին պէն իշընդ-իշընդ ա ընէս* (ՅԺՅ, V, 591):

ԻՇԸՆԵ - գ. Երկարավուն տանձի տեսակ: *Իշընէն ահնամ տանն ա* (Բ):

ԻՇԸԹԱՎԻԼ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշըննվիլ տալ - Էջի նման թավալվել: *Տըղան վեր տըրըքընէս ա, օշափը վեր ա ըղնէս, իշըննվիլ տաս* (Ձ):

ԻՇԸ(Լ)ԹՈՒ (թըք. *işli* (փայլ) - տեն ՇԻՆԸ(Լ)ԹՈՒ: ...Սարթու պարի մըտքէրան, պարի պընէրան իսկի իշընթու չըկա մէշնէրին, ամմա ապանին ու շանը մէջը շատ կա (ՋՏ, Ա, 90):

ԻՇԸԼՈԲԻ - գ. Խոշոր հատիկներով լոբու տեսակ: *Գոլխտան լճվ իշըլօբի յա իլնլ տըռնաս* (Բ):

ԻՇԸԽԱՆԱՆԸ/ԻՇԸԽԱՆԱՆԸ - գ. 1. Կարճ ու նուրբ մազիկներով մարմին ունեցող միջատ, որ ապրում է հողի մեջ եւ մեծ վնաս է հասցնում սածիլներին: *Ուռնոթանա քինամ ըն բօստանը, տըստում իշըխանանը խըլարին շիթիլնէն կըտօրած* (Ձ): 2. Մի տեսակ թունավոր սեւ բզեզ: *Իշըխանանը էտ խուխէն ծէրքան կըծում ա, ըսքըսում ա լնց ինիլը* (Ձ): 3. *տեն ՊՈՒԻ(ՆԸ)*: 4. *ած. փխբ.* Սեւ մաշկ ունեցող, տգեղ: *Մարուսան մին իշըխանան խիճիճ օնէ, սաղ օրը թնիփ ա անում* (Բ):

ԻՇԸԽԱՆԱՆԸ - տեն ԻՇԸԽԱՆԱՆԸ:

ԻՇԸԽԱՆԱՆԸ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իշըխըռավ տալ - Առանց լուրջ պատճառի մեկից խռովել: *Էտ հարթըն վնրին իշըխըռավ ար տամ* (Ձ):

ԻՇԸԽՈՒԴՅԻՆ - գ. Էջի վրա գցելու խուրջին: *Դուգմար իշըխուրջինը քըցոմ ա էջին փըլանավը, քինըմ ծըմակը, վեր գըկըք քաղէ* (Ձ):

ԻՇԸԿԱԹՆՈՒԿ - գ. Իշակաթնուկագգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, որ պարունակում է կաթնաման դառը հեղուկ: *Իշըկաթնուկը էշըն ա օտում* (Բ):

ԻՇԸԿԱԾՈՒԿ - գ. Մի տեսակ վայրի փշոտ խոտաբույս: *Իշըկածուկը տանը պատան կախ ըն տամ, վեր աշկավ տըլօղ չիկի* (Ձ):

ԻՇԸԿԱԾՈՒ - գ. տեն Էշու կըլծի:

ԻՇԸՅԱՆԸ - տեն ԻՇԱՅԱՆԸ:

- Իշըննվիլ տալ - տեն Էշու տընդ տիկիլ:

ԻՇԸՅԱՆԸ - տեն ԻՇԱՅԱՆԸ:

ԻՇԸՊԱՆԱՆԸ - գ. Մի տեսակ թունավոր խոտաբույս: *Էշըն իշըպըլանուկ*

*ըն օտում, ըսքըսում լօք-լօք անէլը* (Ձ):

ԻՇԸԿԱԶԻ - տեն ԻՇԸԿԱՐԻ:

ԻՇԸԿԱՐԻ - *ած. մ.* Էջի նման, Էջի վարվեցողությամբ: *Իշըկարի մարթ ա, իշըկարի օտում ա, իշըկարի ապըրում* (Բ):

ԻՇԸԿԱՐՆԸ - գ. 1. Հաստ երկճյուղ փայտ, որի վրա ամրացնում են ցանկապատը: *Իշըկարնը կօտրում ըն, չափարը ճըմօռում, նի տընում բօստանը* (Ձ):

2. Երկար եւ առանց թիկունքի նստարան, իշոտունկ: *Իշըկարնը տինում ըն, նըստօտում* (Բ):

ԻՇԸՏԱՄԱՐՈՒ - գ. Խոշոր եւ քիչ դառը սալորի տեսակ: *Իշըտամթուլը քաղում ըն, ածում պօծկան, արաղ քաշում* (Ձ):

ԻՇԸՏԱՐՈՒՆԸ - գ. Մի տեսակ վայրի բանջար, որ թթու են դնում: *Էտ կընէգը ըստօլէն մին կօլա կինի յա տինում, մին էլ մին աման աղ տիրած իշըտըռտը* (Ձ):

ԻՇԸՏ(Ը)ՆԵԼ - *նք.* ԻՇԱՆԱԼ-ի:

ԻՇԸՓԱՆԱՆԸ - գ. Շուշանագգիների ընտանիքին պատկանող մոխրագույն տերեւներով եւ տիպի հոտով խոտաբույս: *Խօտը հարում ըն, իշըփըլավը ճօկում, տէն ածում* (Ձ):

ԻՇԸՔՈՒՆԸ - գ. տեն Էշ կըռտօղ:

ԻՇԸՔՈՒՆԸ - գ. 1. Էջի ձագ՝ քունակ: *Մօսին մին իշըքօռակ ա տամ, մին կառնը ինք՝ օտում* (Ձ): 2. *տեն Էշու քունակ:*

ԻՇԻ(Լ)ԹՈՒ - տեն ՇԻՆԸ(Լ)ԹՈՒ:

ԻՇԻՅԱՆԸ/ԻՇԻՅԱՆԸ - (*ռուս. ušiac, հուն. ischias*) - գ. Նստանյարդի բորբոքում՝ իշիաս: *Էտ մարթին էլ իշիյագավ հիվանդ մին կընէգ ա ինում* (Ձ):

ԻՇԻ/ԻՇԸ/ԷՇԻ/ԷՇԸ (*արաբ. ask* (սիրահարություն, սեր), *թըք. eşk*) - գ. 1. Եռանդ, ավուն, ոգեւորություն: ... *Քարը կոտրատում ա էն էիշավը, վար վըսկէն քարէն տակէն ա իննական* (ՅԺՅ, V, 406): 2. Սեր: *Սարէն ծաղէգը պէցվալ ա, էշիքտ խըլքըս տարալ ա ...* (Ձ):

- ԻՇԻ ըղնէլ - տեն Իշիու կնիլ:

- Իշիու կնիլ - Ոգեւորվել, խանդավառվել: *Հօնն ընտղնէն թաքավէրին վեր տըսնում ըն, իշիու վըն կամ* (Ձ):

ԻՇԻԱՆ/ԻՇԻԱՆ (*գրք. իշիան*) -գ. Ժառանգական պատվավոր տիտղոս, որ կրում էին նախկին ժառանգական կալվածատերերի սերունդները կամ երկրի պետերի կողմից դրան արժանացածները: *Հանդիւթին Բայանդուր իշիանը մին շատ դաշնակ բախչա օնէր* (ԼՂԲ, 338):

ԻՇԻԱՆԻԹՈՒՆ/ԻՇԻԱՆԻԹՈՒՆ - գ. Պետական կառավարման մարմին, կառավարություն: *Իշիանութունը ցըրըվ ա կամ, կոտլօթունը շըտանում ա* (Ձ): 2.

Որեւէ իշիանի՝ կառավարչի կողմից կառավարվող երկիր՝ նահանգ՝ տարածք: *Առաջ ըստընդ Վաղվան իշիանութունըն ա իլնլ* (ԱԱ, 46): 3. Կառավարելու՝ կարգադրելու՝ հրամայելու իրավունք՝ հնարավորություն: *Վեր իշիանութունը ծըրքան յեր կալին, էտ նախագան քօջից* (Ձ):

ԻՇԻԱՆԻԹՈՒՆ/ԻՇԻԱՆԻԹՈՒՆ - տեն ԻՇԻ (1):

ԻՇԻԱՆԱՆԸ/ԻՇԻԱՆԱՆԸ/ԷՇԻԱՆԱՆԸ/ԷՇԻԱՆԱՆԸ - *ած.* Փառահեղ, գեղեցիկ, հաճելի: *Մազերըտ գառ նան խաս ա, ման կնիլըտ էիշընագ ա ...* (ԼՂՅ, 55):

ԻՇԻԱՆ - 1. Յ. Ցանկության՝ ըղձանքի բացականչություն՝ երանի թե: *Աստուծ, իշկար մեր ջիհիլնէն սաղալմաթ կան կըռվան* (Բ): 2. վ. Գործածվում է հարցմանը կասկածանք հաղորդելու համար՝ արդյոք: *Իշկար ըսօր թօռ կըկամ* (Բ):

ԻՇԻԱՆ - տեն ՆԸՇԱՆ:

ԻՇԻԱՆ(Յ) - տեն ԸՇԻԱՆ(Յ):

ԻՇԻԱՆ - տեն ԸՇԻԱՆ:

ԻՇԻԱՆ - տեն ԸՇԻԱՆ:

ԻՇԻԱՆԻԹՈՒՆ - տեն ԸՇԻԱՆԻԹՈՒՆ:

ԻՇԻԱՆԻԹՈՒՆ/ԻՇԻԱՆԻԹՈՒՆ - գ. 1. Էշ լինելը, Էջի արարք: *Էտ մարթըն ասում ա . - Կօզի մարթ ըս տէռալ, համա իշօթունը էլլա մընացալ ա մաջիտ* (ԲՅԲ, 230): 2. փխբ. Հիմարություն, անհասկացողություն, անխելություն, անտաշություն: *Ուրան իշութունէն դարդան շինըցէք միշտ կըրակըն ին ըղնում* (Ձ):

- Իշօթուն անել - Հիմար՝ կոպիտ արարք թույլ տալ: *Էտ տըղան իշօթուն ա անում, հանը փիս կըզնըվում ա, տանան տոն քըցում* (Բ):

ԻՍ - տեն ՅԸԻԱ:

ԻՍԿԱՎԱՆ (*գրք. իսկական*) - *ած.* Իրական, բնական, ոչ կեղծ, ոչ շինծու, ճշմարիտ, անկեղծ: ...*Էտ էրկու շէնին մաջին իսկական բըրիշօթուն ա ըստընդծրվալ* (ՅԲ, 362):

ԻՍԿԱՊԷՍ (*գրք. իսկապես*) - մ.

Ստուգապես, իրոք: *Քընում ա, քընում, տէսնում՝ իսկապես, մին դուշու պոն, մաջը ճօտեր, մարը կա վուչ* (ՅԱԲ, 15, 26):

ԻՍԿԻ - տեն ԸՍԿԻ:

ԻՍՊԱՆԸ - *ած.* Վստահելի, վստահություն ներշնչող: *Կիզդանց Լէվօնը իսպաթու մարթ ա* (Բ):

ԻՍՏ/ԻՍՏԻ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Իստը նի կէնալ - Ջղայնանալ, գայրանալ: *Ղօթ ա, Ղալին մին փարա մարթօց իստին նի ա կացալ, վեր քու կազէթըմ ուրանց թանին թըթօ ըմ ասալ...* (ՋՏ, Ա, 68):



- Իրը՛սան ըշփիշկա թափ տաս, նի կըկէնա - Ասում են կարմրերես՝ առույգ մարդկանց մասին:

- Իրը՛սան լին վեր ըղնէ, հազգար թիք՛ն կըտը՛ննա - Ասում են շատ գոռոզ՝ ինքնահավան մարդկանց մասին:

- Իրը՛սան լին կաթէլ - Շատ գեղեցիկ ու սպիտակամորթ լինել: *Ախճիգ, հինչ ախճիգ, իրը՛սան լին ա կաթում* (2):

- Իրը՛սան կախ ինիլ - Մեկին մի բան շատ խնդրելով՝ պահանջելով՝ հոգնեցնել, ձանձրացնել: *Նախագան ասում ա. - Բժյ ա, հիշքան իրը՛սաս կախ ըս իլնի, քը՛գ փոյլ չօնիմ տալի* (2):

- Իրը՛սան կակօղ - Մեղմ բնավորություն ունեցող, մերժել չկարողացող: *Իրը՛սան կակօղ կընէ՞ք ա, հու հինչ օգում ա, տամ ա* (Բ):

- Իրը՛սան կենալ - 1. Վիճել, դիմադարձություն անել, կոպիտ պատասխաններ տալ, բողոքել: *Վայ ա, վեր մինը էտ ըխճըկանը մին պէն ա ասում, դաստի իրը՛սան ա կենում* (Բ): 2. Ասվում է որպես մեղադրանք անդաստիարակ՝ աներես՝ անամոթ անձի ծնողի՝ դաստիարակողի հասցեին: *Խըրըտօղէտ իրը՛սան կենաս, էտ ք՛ծրփին խէ թակում ը՛ս* (2):

- Իրը՛սան պէնդ - Զամառ, աներես, պնդածակատ: *Իրը՛սան պէնդ կընէ՞ք ա, յա՛ ասած, յա՛ ըսելու. ուրան հը՛տէ մին ա* (Բ):

- Իրը՛սան վեր ըղնօղը քըռասսուն թիք՛ն կըտը՛ննա - Իրը՛սան լին վեր ըղնէ, հազգար թիք՛ն կըտը՛ննա:

- Իրը՛սան տալ - 1. Մի բան մեկի երեսին զարկել՝ շարտել: *Տըղան կըզնըվում ա, վը՛սկէ ջամը հօրը իրը՛սան տամ, քի՛նում* (2): 2. անրգ. Յետ վերադարձնել: *Տուված պարթկէն հը՛տէ էնքան միննայթ ըրավ, տարէ իրը՛սան տուվէ* (Բ):

- Իրը՛սան օնջ վեր տը՛ննալ - Խոժոռ՝ մռայլ տեսք ունենալ: *Ընդըրա քըշտէն հարթը կըկէնա՛, իրը՛սան օնջ ա վեր տը՛ննում* (Բ):

- Իրը՛ս առնել - Շփանալ, լկստվել: *Իրը՛ս առած խօխա յա* (Բ):

- Իրը՛սավը կ'ան/տալ - 1. Զանդիմանելու նպատակով շարունակ ակնարկել՝ հիշեցնել (մեկին արած լավությունը, մեկի կատարած վատ արարքը եւն: *Օխտը տարէ առաջ հիրըվանէն մին է՞ծ ա տըվալ, ամմեն օր իրը՛սավըն ա կ'ամ* (2): 2. Երեսին շփել (հեղուկը): *Կինին ախպօրը իրը՛սավըն ա տամ, տուս կ'ամ* (2):

- Իրը՛սավը ճո՛ւր տալ - Թեթեակի լվացվել: *Մէխակը իրը՛սավը ճո՛ւր ա տամ, տուս կ'ամ* (Բ):

- Իրը՛սեն արուռը վեր կ'ան - *տեն* Աբուռը վեր կ'ան: 2. *տեն* Իրը՛սեն մեռուներ վեր կ'ալ:

- Իրը՛սեն արուռ ինիլ - Արժանապատվություն՝ ամոթի զգացում ունենալ: *Ընդըրա իրը՛սեն վեր արուռ ինի, մարթին թաղէլ չի, քըմակէն փըսակվէ* (Բ):

- Իրը՛սեն ասել - Առանց քաշվելու՝ համարձակորեն՝ դեմ առ դեմ մեկին ուղղակի նրան վերաբերող քննադատական՝ նախատական խոսքեր ասել: *Քի՛նամ ա նախագէն կօշտը, լօխ իրը՛սեն ասում* (2):

- Իրը՛սեն ըղնէլ - Աղաչել, խնդրել: *Էտ մարթը հիշկան իրը՛սեն ա ըղնում, աման չի կ'ամ, Մէլիքը աթկազ ա անում* (2):

- Իրը՛սեն թըբէլ - 1. Խիստ անպատվել, հանդիմանել, խայտառակել: *Զարը տըղէն իրը՛սեն թըբում ա, տանան տուս քըցիւմ* (2): 2. Խիստ արհամարհել: *Էտ պէնանը յը՛տը լօխ իրը՛սեն թըբում ըն* (Բ):

- Իրը՛սեն թըբում ըս, ասում ա՝ հինչ լ'ավ թօռ ա՝ կ'ամ - Ասում են ինքնասիրություն՝ արժանապատվություն չունեցող մարդկանց մասին:

- Իրը՛սեն խանչալ խըղըցընիս, աշկը ճըպէլ չի - Ասում են անվախ՝ աներկյուղ մարդկանց մասին:

- Իրը՛սեն խաչ անել/քաշիլ - *տեն* Իրը՛սեն խըջըհանել:

- Իրը՛սեն խըջըհանել/խըջըկընքել - Երեսը խաչակնքել, խաչի նշան անել: *Դօնաղը դըզդանէն մուտանում ա, իրէսին խըջըհանում* (ՅԺՅ, VII, 169):

- Իրը՛սեն ծըծաղել - 1. Կեղծավորել, շողոքորթել: *Զիւր տը՛սնում ա, իրը՛սեն ծըծաղում ա* (Բ): 2. Գեղեցիկ՝ ընտիր լինել, փայլել, փայլատակել: *Դերվիշը մին խընձօր ա տամ թաքավէրին, հինչ խընձօ՛ր, լըհա իրը՛սէտ ծըծաղում ա* (2): 3. *տեն* Իրը՛ս տալ: *Էնքան իրը՛սեն ծըծաղալ ըն, լափ իրը՛ս ա առալ* (Բ): 4. Զարախնդալ, ծաղրել: *Էտ ախճիգը դու՛նաղէն իրը՛սեն ծըծաղում ա, դօնաղը տուս ա կ'ամ, քի՛նամ* (2):

- Իրը՛սեն կակօղ յէշիլ - *տեն* Իրը՛ս տալ:

- Իրը՛սեն կաշին հաստ - *տեն* Իրը՛սը կ'ումաշու կաշի:

- Իրը՛սեն կաշին տըրը՛խ շինիս, չըքէլանը Բաղդադ քինիս, մաշիլ չի - Ասում են շատ անամոթ՝ անպատկառ մարդկանց մասին:

- Իրը՛սեն կ'արմուրը վեր կ'ան - Զափեությունը՝ առույգությունը տեղի տալ: *Իրը՛սեն կ'արմուրը վեր ա յը՛կալ, էլ առաջվա Նախշունը չի* (Բ):

- Իրը՛սեն կ'իրիլ - Ապտակել: *Վէր իրը՛սեն մին էրկու հը՛տ կ'իրը՛ցէն, վիզավ կալանվ, վեր ինքըն ա ըրալ* (Բ):

- Իրը՛սեն համօթը վեր կ'ան/քինիլ - *տեն* Իրը՛սեն մեռունը վեր կ'ան:

- Իրը՛սեն ճըխէվլավ թըխէլ - *տեն* Իրը՛սեն թըբէլ:

- Իրը՛սեն ճիրնվը - Առանց ձեռք տալու, այնպես, ինչպես եղել է: *Փուլըն էլ խըրջիս չի, իրէսեն ճիրնվը ծիլիս ա, տինիս ջըբումը, շէնը կ'աս* (ՅԺՅ, V, 258):

- Իրը՛սեն ճո՛ւրը վեր կ'ան/քինիլ - 1. *տեն* Աբուռը վեր կ'ալ: 2. *տեն* Իրը՛սեն մեռունը վեր կ'ալ:

- Իրը՛սեն մաղ օնէլ - Ամաչել, քաշվել: *Էտ հարթը իրը՛սեն մաղ կ'անած ա ըսկէսվօրը քըշտէն կօրծ անում* (Բ):

- Իրը՛սեն մեռունը վեր կ'ան/քինիլ - Ամոթը կորցնել, աներես՝ անամոթ դառնալ, չպատկառել: *Ընդըրա իրը՛սեն մեռունը կընօխէ յա վեր յը՛կալ, արուռ-հայա չօնէ* (Բ):

- Իրը՛սեն մեռուն չինիլ - Անամոթ՝ աներես՝ լափրշ լինել: *Կընգանը իրը՛սեն վեր մեռուն չիլանվ, մարթին տօնը կըքանդըվի* (Բ):

- Իրը՛սեն մին անգի՛նը զընդան շինիլ, մինը՝ կըրակ - Բուրբուրի չամաչել, աներեսաբար մի բան խնդրել՝ պահանջել: *Լանջա կընէ՞ք ա, իրը՛սեն մին անգի՛նը զընդան ա շինալ, մինը՝ կըրակ, սաղ օրը ըստուր-ընդուր անա պէն ա օգում* (Բ):

- Իրը՛սեն մին հափուռ կօրէկ կըտըղըվարվէ - Ասում են անհարթ՝ չեչուտ դեմքով մարդկանց մասին:

- Իրը՛սեն մին հափուռ վը՛ղ քըցօղ ինիլ - Զավակ՝ հարազատ ունենալ, մեռնելուց հետո իրեն հուղարկավորող ունենալ (հաճախ գործածվում է ժխտական ձեռքով): *Խը՛ղը մը՛նալ, իրը՛սեն մին հափուռ վը՛ղ քըցօղ չիլանվ* (Բ):

- Իրը՛սեն յէշիլ - 1. Ապրուստը մեկից ակնկալել, մեկից ակնկալիք ունենալ: *Վազգէնը կօրծ չի անում, սաղ օրը էն ա ախպօրը իրը՛սեն յիշիլիս* (Բ): 2. Ուշադրության արժանացնել, բանի տեղ դնել (հաճախ գործածվում է հարցական եւ ժխտական ձեռքով): *Շէնըմը վէշ մինը Խսակէն իրը՛սեն յէշում չի* (Բ): 3. Մեկի առաջ պարզերես լինել, պարտավորությունը՝ պարտքը՝ հանձնարարությունը կատարած լինել (հաճախ գործածվում է հարցական եւ ժխտական ձեռքով): *Տա մըտածըմ ա, թա հունց քինի ուրան հօրը իրը՛սեն յէշի, համուք ա...* (ՅԺՅ, V, 17):

- Իրը՛սեն յէշվում չի - Շատ տգեղ է: *...Պէրած ըխճըվէքը կ'էշ ըն ընում, իրըսներէն յէշվում չի* (ՅԺՅ, V, 495):

- Իրըսեն լըղըծոն անխա, օտվել չի-տեն Իրըսեն յեշվում չի:

- Իրըսեն լըրա վեր ընգած - Բարձի-թողի վիճակում գտնվող, անուշադրու-թյան մատնված: *Իրըսեն լըրա վեր ըն-գած տափ ա, մինը կա վեչ, թա բիջն-րի* (Բ):

- Իրըսեն ցնքավ թըխել - տեն Իրը-սեն թըթել:

- Իրըսեն փարդան ճըղվել - 1. տեն Իրըսեն մեռունը վեր կ'ան: 2. Բուն էու-թյունը բացահայտվել: *Անց ա կենում մին տարե, կընգանը Իրըսեն փարդան ճըղվում ա, մարթը կըլծի ա ըղնում, թա տա հինչ տիպ ա* (2):

- Իրըսեն փարդան շինիլ - 1. Մեկին միջևորդ՝ բարեխոս դարձնել որեւէ գործ գլուխ բերելու համար: *Յարնբեղը ախպորը տըղէն Իրըսեն փարդան շինից, քընցավ սուղին կոշտը* (2): 2. Առիթ՝ պատրվակ բռնել: *Միւթին կացէնը սըրէ-լը Իրըսեն փարդան յա շինում, քինամ Միխայիլին տօնը, արաղ խըմում* (2):

- Իրըսեն փարդան չինիլ - տեն Իրը-սեն մեռուն չինիլ:

- Իրըսեն փըլավ ընք ուտըլական - տեն Իրըսեն փըլավ չընք ուտըլական:

- Իրըսեն փըլավ կօտվել - Շատ գե-ղեցիկ է: *Ախճիգ ըմ ասալ է, Իրըսեն փը-լավ կօտվել* (Բ):

- Իրըսեն փըլավ չընք ուտըլական-Արտաքին գեղեցկությունը կարետը չէ: *Թանգան հարթը շատ ա դաշանգ, ամ-հա Իրըսեն փըլավ չընք ուտըլական, տու ասէ նըմուսավ ինի* (2):

- Իրըսեն փըրթոնշ կօտվել - տեն Իրըսեն փըլավ կօտվել:

Իրըսեն օնել - 1. Երեսին՝ դեմքին մոտեցնել: *Իմ հոր ծեռքէն մին փէտ կար, իրէսին կալավ, նըշան տիրնվ...* (ԼՂԲԲ, 26): 2. Մեկին այցելության՝ տե-սության գնալիս որեւէ նվեր վերցնել՝ տանել: *Ատում ըն, Յեղուշը էն ա ագառու, մին պէն չի կա, թա Իրըսեն օնիմ, քի-նիմ գիրնվ ընցընիմ* (Բ):

- Իրըսը բիզվիլ - Խիստ նիհարել, հյուծվել, տկարանալ: *Էնքան կօրծ ա ըրալ, Իրըսը բիզվնլ ա* (Բ):

- Իրըսը բիզվիլ, դէյնու մընչանք տըննալ - տեն Իրըսը բիզվիլ:

- Իրըսը դըղլարու կաշի - տեն Իրը-սը կ'ումաշու կաշի:

- Իրըսը ըստառան կըտ(ը)րած - Անամոթ, լախրշ, անպատկառ, լկտի: *Իրըսը ըստառան կըտըրած կընգանը ճար չինիլ* (2):

- Իրըսը թալաթինու կաշի - տեն Իրըսը կ'ումաշու կաշի:

- Իրըսը թըթված - Խոժոռադեմ,

մռայլ, անտրամադիր: *Իրըսը թըթված մարթ ա* (Բ):

- Իրըսը թըթվըցընել - Խոժոռվել, մռայլվել, անտրամադիր դառնալ: *Թա-քավէրը էտ վեր ըսկանում ա, Իրըսը թըթվըցընում ա* (2):

- Իրըսը թըթըմօր կ'ան - Նախատվել, հանդիմանվել: *Էնքան Իրըսը թըթըմօր ա յըկալ, էլիա յըխնըվալ չի* (Բ):

- Իրըսը իրըսան կըհըմա(ն)ջի - Երես առ երես՝ դեմ առ դեմ դժվար է մե-կի խնդրանքը մերժել կամ մեկին վատ բան ասել: *Իրըսը իրըսան կըհըմանջի, էնքանէն մաջին մուտացավ փուլ օգից, էտ մարթը ճարը կըտըրած տըղավ* (Բ):

- Իրըսը լըպըգտած - 1. տեն Իրըսը ըստառան կըտըրած: 2. Ողորկ՝ հարթ դեմք ունեցող: *Իրըսը լըպըգտած ախ-ճիգ ա* (Բ):

- Իրըսը խըջըհանել/խըջըկընքել - տեն Իրըսեն խըջըհանել:

- Իրըսը խօսկ կ'ան - տեն Իրըսը թը-քըմօր կ'ան:

- Իրըսը ծաղկել - Վրան բորբոսի փառ կապել, բորբոսնել (հացի, գաթայի եւն մասին): *Յացէն Իրըսը ծաղկում ա, տամ ըն շանը* (2):

- Իրըս(ը) ծըռել - 1. տեն Իրըսեն ըղ-նել: 2. տեն Իրըսեն ծըծաղել (1):

- Իրըսը կակօղ - տեն Իրըսան կա-կօղ:

- Իրըսը կըտըրել - տեն Իրըս անել:

- Իրըսը կըրկատած - տեն Իրըսը կ'ումաշու կաշի:

- Իրըսը կ'իրմիրիլ - Անհարմար զգալ, ամաչել: *Անյթ ա, պատրօնը վեր խօսէ, հարթը Իրըսը կըկիրմիրի, մի-հէնգվա հարթնէրը ըսկի ջըլաման չըն տամ, թա պատրօնը մին պէն խօսէ* (2):

- Իրըսը կ'իրմիրցընել - Անհարմար վիճակի մեջ գցել, ամաչել տալ: *Ուրան ըրած կ'ուղույթունավը սաղ տընըցուց Իրըսը կ'իրմիրցըրավ* (Բ):

- Իրըսը կ'ումաշու կաշի - Շատ անամոթ՝ աներես՝ անպատկառ: *Ըտըրա Իրըսը կ'ումաշու կաշի յա, էնքան թըթը-թծիմնթ ըն ըրալ, էլիա օջուպ չի* (Բ):

- Իրըսը կ'ումաշու կաշի շինիլ - Անամոթություն՝ աներեսություն անել: *Իրըսը կ'ումաշու կաշի յա շիննլ, հըրը-վըննէրան փուլ հըվաքալ, տըղէն հըտէ հըրսանէք ըրալ* (Բ):

- Իրըսը կ'ումաշու օս - Կեղտոտ, կեղտոտված: *Իրըսը կ'ումաշու օս մարթ ա* (2):

- Իրըսը ճըպըռել/ճըպըռօտել/վեր ճըպըռել - տեն Իրըսը պուք տալ:

- Իրըսը մաշկան կարած - տեն Իրըսը ըստառան կըտըրած:

- Իրըսը մօր շինիլ - Խայտառակել, անպատկել: *Էտ ախճիգը մօրը Իրըսը մօր շինից* (2):

- Իրըսը յըխնըվել - Որեւէ բանի՝ վատ արարքի համար տուժելով՝ դաս առնել, խրատվել, այլեւս չկրկնել (հատ-կապես գործածվում է ժխտական ձեւով): *Կուղույթունէն հըտէ հէնգ տարե տոնումն յա նըստալ, էլլա Իրըսը յըխնը-վալ չի, նօրիցան ա կ'ուղօթուն ըրալ, փըռնալ ըն* (Բ):

- Իրըսը յըր օնել - տեն Իրըս անել:

- Իրըսը լըղըծոն - Գեղեցիկ: *Իրըսը լըղըծոն ախճիգ ա Ծօվիկը* (2):

- Իրըսը լըրա - Անխառն, անարատ: *Իրըսը լըրա արաղ միհէնգ տիժէր կը-քըթէնալ* (Բ):

- Իրըսը լըրա օնել - Մեկին ապավի-նել: *Յէղան աքէրը պըռալալ ա, մին պարիկամ էլ չօնէ, թա Իրըսը լըրա օնէ* (Բ):

- Իրըսըն ի յըր ինիլ - տեն Իրըսը տոն կալ: *Նօքնըր թա - Պա հունց չի՝ լնց ինիմ, վեր էտ անվնլ սըփաթըտ օրը հն-րոնը հըր Իրըսըն ի յըր ա ինում* (ԱԱ, 77):

- Իրըսըն ի յըր խաղ անել - 1. տեն Իրըսեն ծըծաղել (2): 2. Արգանդում գտնվող մանկան շարժվելը մեկի ներ-կայությամբ (հավատում էին, որ այդ դեպքում մանուկը նմանվելու է այդ ան-ձին): *Դէրվիշը վեր նի յա մընէս, էտ հարթնանը խօխան փօրումը Իրըսըն ի յըր խաղ ա ընէս, պառավը ասմա - Բու-ռանամ յըս, թօռնըս դէրվիշ ա տըռա-կան* (2):

- Իրըսըն ի յըր խօսել - տեն Իրըսեն խօսել: *...Մարը սաղ օրը Իրըսըն ի յըր խօսում ա, թա - Խէ չըն փըռակվում* (ՅԺՅ, VII, 77):

- Իրըսը շան կաշի - տեն Իրըսը կ'ումաշու կաշի:

- Իրըսը շան կաշի - տեն Իրըսը կ'ումաշու կաշի:

- Իրըսը շինիլ թուրնում կ'իրմիրնծ վըռն թօշեր - 1. Առույգանալ, կարմրե-րես դառնալ: *Սումբաթը հնրվից, Իրը-սը շինից թուրնում կ'իրմիրնծ վըռն թօշեր*: 2. տեն Իրըսը կ'իրմիրիլ:

- Իրըսը շօռ տալ - 1. Երես դարձնել՝ հարաբերությունները խզել, լքել: *Ախ-ճիգը քիննամ ա էտ տըղէն կօշտը, հնրը, մարը, քուվերթը լօխ Իրըս ըն շօռ տամ...* (ՅԺՅ, VII, 90): 2. Խոռվել: *Բախտը ինձանա Իրըս ա շօռ տըղալ* (2):

- Իրըսը չըտըննալ - Աչքին չերեալ, այլեւս չհանդիպել, մի բան կամ մեկին բոլորովին չտեսնել: *Էտ մարթը հինչ ա՛նէ հէնգ տարե յա՝ տըղէն Իրըսը տը-սալ չի* (2):

- Իրընսը պարօշ - տեն Իրընսը կու- մաշու կաշի:

- Իրընսը պարգ՝ - Գործը պատվով կատարած՝ ազնիվ, պարգերես: Իրընսը պարգ՝ մարթ ա (2):

- Իրընսը պարգ՝ անել - Մեկի հույսերը արդարացնել, ամոթով չթողնել, իրեն լավ դրսեւորել: Թանգն հարթը հորը-մօ- ռը իրընսը պարգ՝ ըրալ (2):

- Իրընսը պարգ՝վիլ - 1. Յեղուկ նյութի երեսի շերտը մաքրվել, նստվածքը ցած իջնել: Կինուս իրընսը վեր պարգ՝վում ա, բիդի քամիս, հանցու թըթվէ վէ (Բ): 2. Զվարթանալ, տրամադրությունը բարձ- րանալ: Կանփին վեր արաղը տընսալ, իրընսը պարգ՝վից (2):

- Իրընսը պենդ - տեն Իրընսան պենդ:

- Իրընսը պեց - 1. տեն Իրընսը պարգ՝: 2. Համարձակ, հպարտ: Իրընսը պեց շօռ ա կամ, ընդորա հընտ, վեր տըղան հէ- ռօս ա (2):

- Իրընսը պընդըցնել - Առանց ամա- չելու՝ աներեսաբար՝ համառորեն որեւէ բան խնդրել՝ պահանջել: Իրընսը պին- դըցըցըրալ, կօրծի նի մըտալ (2):

- Իրընսը պըռօզու տեփ - Լիքը՝ հպարտ՝ չաղ երես ունեցող: Իրընսը պը- ռօզու տեփ ա, էն հինչ ա՛, վեր օզիմ (2):

- Իրընսը պըտատած օզիլ - Ամաչե- լով՝ քաշվելով որեւէ բան խնդրել: Ու- րան կըռքէն յըխտավը յօլլա քինօղ մարթ ա Հայաստեղը, վեր մինին անա էլ մին պէն ա օզում, իրընսը պըտատած ա օզում (2):

- Իրընսը պիրանան հըմանչիլ - Ազա- հաբար՝ աներեսաբար ուտել, շատ ուտել: Էտ դօնաղը հանց օտում ար, իրընսը պիրանան հըմանչիւմ ար (2):

- Իրընսը պըրթըծիրալ լըվացած - Լիրթ, լկտի, անպատկառ, անամոթ: Իրընսը պըրթըծիրալ լըվացած կընէգ ա, ըտըրանա պըրծումըն չինիլ (Բ):

- Իրընսը պիլծըր(վ)էլ - Երեսը լիքը դառնալ, չաղանալ: Մանջված ախճիգ ա իլան, միհէնգ ա իրընսը պիլծըրվալ (Բ):

- Իրընսը պուք տալ - 1. Խիստ հան- դիմանել, նախատել, անպատկել: Հարթըն էլ, վեր քըշերալ յըտէ ար յը- ր կէնում, էտ կընէգը իրընսը պուք ար տամ (2): 2. Մեկին անամոթաբար, հա- մառորեն ինչ-որ բան խնդրելով, պա- հանջելով՝ ձանձրացնել: Էնքան տանքընը իրընսը պուք տըրվալ, մինչը՛վ վեր էտ բօստանը յըր կանլալ (Բ):

- Իրընսը սըլ՝ - տեն ՍԸԿԻՐԸՍ:

- Իրընսը սըվանալ - տեն Սըվիրընս մընալ:

- Իրընսը սըվըցընել - 1. տեն Սըվի- րընս անել: 2. տեն Իրընսը պընդըցընել:

- Իրընսըս վըննանըտ տակը - Մեկին (հատկապես սրբերին) մի բան թախան- ձագին խնդրելու՝ աղերսելու բանաձեւ: ...Ասում ա.- Ա սօրփ, իրընսըս վընտանըտ տակը, հանց ըրա՛, տըղաս կըռվան սաղ- սըլմաթ կնն (2):

- Իրընս ըս տամ, աստառ ա օզում - Ասում են նրա մասին, ով, լավ վերաբեր- մունքից երես առնելով, ավելին է պա- հանջում:

- Իրընսը վընան կարած - տեն Իրըն- սը ըստառան կըտըրած:

- Իրընսը տափէն թօղնել - Մենակ՝ անտեր թողնել: Մարը հիշքան դաչանը- պըղատանը ա անում, վըր տըղան ու- րան մէնակ, իրընսը տափէն չըթօղնէ, անջուկ չի օնում... (ՀԺՀ, VII, 3):

- Իրընսը տափերը քըսել - Ստորա- նալ, ամեն միջոցի դիմել որեւէ գործ գլուխ բերելու՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար: Իրընսը տափերը քըսելալ էտ կընէգը խօխէնքը պահում ա, մըծըցընում (2):

- Իրընսը տէմ անել/տալ - տեն Իրընսը պընդըցընել:

- Իրընսը(տ) կարիմ/կըրկըրօսիմ/ մըր- թըսըրդիմ/ շըմբիմ - Անեծքի՝ խիստ հան- դիմանության արտահայտություն: Իրըն- սըտ կարիմ, խուխէս խէ թակալ ըս (Բ):

- Իրընսը տնու կնն - Մեկի՝ մի բանի- դեմը ելնել, դեմ առ դեմ հանդիպել: Ախ- պէրըն ասում ա.- Յէս հըմանչում ըմ մը- նէլ Մեծ Նըհըտակէն իրէսը տնու կամ, մըհէնգ էլ տնու քընի (ՆԱԲ, 83):

- Իրընսը ցըմաբել - տեն Իրընսը բիգ- վիլ:

- Իրընսը ցօրտ - Ոչ բարյացակամ, կո- պիտ, խստաբարո: Նախագան, վեր իրըն- սը ցօրտ չիլան, կալիսօզը կըքանդվի (Բ):

- Իրընսը փափուկ - տեն Իրընսան կակօղ:

- Իրընսը փըռնել - տեն Իրընս անել

- Իրընսը քաշ կըտկօտած - Անհարթ՝ չէչոտ դեմը ունեցող: Հըմբալաց Սնրքի- սը աշխարքըն շօռ ա յըկալ, մին իրընսը քաշ կըտկօտած ախճիգ օզալ (Բ):

- Իրընսը քաշիլ - 1. Կաթի՝ մածունի եւն երեսի մասի յուղային նյութը՝ սերը վերցնել: Կաթնէն իրընսը ամմէն օր քաշնում ըն, թուփ անում, խընը՛ցէ հա- րըմ (2): 2. Որեւէ բանի ընտիր մասը հա- վաբել: Նի յըն մըննում բօստանը, իրըն- սը քաշնում, տանում (2):

- Իրընս ինիլ - տեն Իրընսատըլ ինիլ:

- Իրընս-իրընս անել/ինիլ - Խոսքով հակառակվել, վիճել: Մըծ ախպէրը օզըմ չար, վեր թաքալէրին տըղան օշափնէրին տընսալ, իրընս-իրընս ինի... (ՀԺՀ, V, 202):

- Իրընս իրընսու - տեն ՏԷՄԱՏԷՄ:

- Իրընս իրընսու ասել - տեն Իրընսէն ասել:

- Իրընս հանել - տեն Ճիրին իրընսը տնու օնել (ՃՈՒՐ-ի տակ):

- Իրընս յըր օնել - տեն Իրընս առնել:

- Իրընս պահել - Չթրաշվել, միրուք թողնել: Առաջ վեր մարթ ար մըռնում, մինչը՛վ քըռասունքը տալը շէնին տը- դըմարթիքը իրընս ին պահում (2):

- Իրընս տալ - Մեկին շատ սիրելով՝ հովանավորելով՝ քմահաճույքները կա- տարելով՝ հանդուգն դարձնել, շփաց- նել, կամակոր դարձնել: Էտ ըխճըկանը հանը էնքան իրընս ա տըրվալ, էլ վէշ մի- նին անգուճ չօնում (Բ):

- Իրընս տինիլ - տեն Իրընսը պընդը- ցընել:

- Իրընսու ճնր/մէռուն - տեն ԱԲՈՒՐ:

- Իրընս փըռնել - Կաթի՝ մածունի մ երեսին ճարպային շերտ՝ սերուցք առաջանալ: Կաթըն իփնում ըն, պատառ պահում, իրընս ա փըռնում (2):

- Իրընս քըցիլ - 1. Բարեկամաբար մե- կին խնդրել՝ պարտադրել մի բան անե- լու: Իրընս քըցան, հըրաքվէրը մարթին անա էրկու չուվալ ցօրէն ինք կալան (Բ): 2. Ակնարկելով խնդրըն հիշեցնել: Գե- դամը ամմէն դժնում իրընս ար քըցում, ամմա ախպէրը մըհալ չար տինում (2):

ԻՐԸՍԱՆ/ԻՐԸՍԱՆ - ած. Համարյա լիքը, մի քիչ պակաս լցրած: Մին իրըն- սան վէրառ ճնր ա ինում ըտը՛դ, էտ տը- դան կըլխէն ա քաշում, լօխ խըմում (2): 2. տեն ԻՐԸՍԱՆ: 3. Կ. Պատճառով: Մարթին իրընսան էտ կընէգը տանան տնու չի կաս (Բ):

- Իրընսան անել - Լրիվ՝ լիքը չցնել, մի քիչ տեղ թողնել: Գոլանսը ածում ա ճուվարանը, իրընսան անում, շըլակում, քինամ (2):

ԻՐԸՍԱՆՑ/ԻՐԸՍԱՆՑ - տեն ԻՐԸ- ՍԱՆՑ:

ԻՐԸՎԱԿ - տեն ԸՐԸՎԱԿ:

ԻՐԸՔ/ԻՐԸՔ (գրք. երեք) - 1. ք. Եր- կուսին հաջորդող թիվը՝ երեք: Յըրգ ինքան իրէք խնծօր ա վեր ըղնում, մինը պըտմօղէն, էրկուսըն էլ լըսօղնէրէն (ՆԱԲ, II, 27): 2. Գ. Բավարար գնահա- տական: Խօխան տնսը իրընք ա ըստա- նում, մարը իրընսէն խօսում ա (Բ):

- Իրընք քըսան - տեն ՎԱՑ(Ց)ՈՒՆ:

ԻՐԸՔԱՆ/ԻՐԸՔԱՆ (գրք. երեքեան)- ք. Երեքն էլ, բոլոր երեքը միասին: Իրընք քան փըռակվում ըն, էտ տանը ապ- րում (2):

ԻՐԸՔՐՏՐԸԺԱՆԸ/ԻՐԸՔՐՏՐԸԺԱՆԸ - ած. Երեք հարկ ունեցող, եռահարկ: Մի- հէնգ իրընքըտըրճանէ տընէր շատ ըն շի- նում (2):

- Իրը՝քըտըժանէ ուշունց - տէս Օխ-տըըտըժանէ ուշունց: Սառան մին լնվ իրը՝քըտըժանէ ուշունց ա տամ, ինքը նի մըննում օթաղը, տօռը կապում (2):

ԻՐԸՔԻՆԶԻ/ԻՐԸՔԻՆԶԻ/ԻՐԸՔԻՆԶԻ - Դ. Երկրորդին հաջորդող դասական թվականը՝ երրորդ: Թաքավերին տըղան պիցըրանում ա իրը՝քինջի ծառը, ճըղներէն դաթումը կօղլու կէնում (2):

ԻՐԸՔԻՆԶԻ - տէս ԻՐԸՔԻՆԶԻ:

ԻՐԸՔՏՐՈՐՔԱՆԵ/ԻՐԸՔՏՐՈՐՔԱՆԵ - Լ. ած. Երեքհարվածանի՝ որով միաժամանակ կարելի է երեք կրակոց կատարել: Էտ բէնամուս տըղան հօրը իրը՝քտըրըքանէ էլ ա ծախալ (Բ):

ԻՐԸՔՓՈՇԿԱՆԵ/ԻՐԸՔՓՈՇԿԱՆԵ - ած. Երեք փեշ՝ քղանցք ունեցող: Այան էզզանան իրը՝քփըշկանէ շօրըն ար կը՝նում: 2. Գ. Երեք փեշ՝ քղանցք ունեցող երկար հագուստ, որ դարաբաղի կանայք համատարած կրում էին մինչեւ 20-րդ դարի կեսերը: Էլ իրը՝քփըշկանէ կը՝նօղ չի կա, անդար անիմ ըստի թիվը, միհէնգվա պըռըվնէն էլ ըն շալվար կը՝նում (Բ):

ԻՐԸՔՔՐԹԱՆԵ/ԻՐԸՔՔՐԹԱՆԵ - Գ., ած. Տրեխի տեսակ, որը առջեւի մասում ունի երեք ծայր: Բէգլար անիմ միշտ իրը՝քըթանէ յար կը՝նում (2):

ԻՐԸԾԱՅԱՍ - տէս ԽՆԸՁՐ(Ն)ԱՅԱՍ:

ԻՐԸԾԱՎԸՏ- տէս ԽՆԸՁՐ(Ն)ԱՎԸՏ:

ԻՐԸԾՅԱՄԵԼ- տէս ԽՆԸՁՐ(Ն)ՈՅԱՄԵԼ:

ԻՐԸՍԱԹԱՓ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իրըսաթափ տալ - Կրակի թեժ լինելու պատճառով թոնրի կողին կըպցրած հացի երեսը թափվել՝ ընկնել: Թուրունը վեր շատ ա իննում թիժ, հացը իրըսաթափ ա տամ (Բ):

ԻՐԸՍԱԾՈՒՐ - տէս ԱԲՈՒՐ:

ԻՐԸՍԱՆՈՒՑ - Գ. Ոսկիներով զարդարված շորի կտոր, որ կանայք կապում էին գլխերին՝ ճակատին՝ վզին: Դէ էն վախտը Շուշվա Ղալին նաննամ-սաննամ հարթները իրըսանուց էլ ըն իլնվ կըպէլիս (2):

ԻՐԸՍԱՊԷՆԴ - ած. 1. Վերելի՝ մակերեսային մասը՝ պինդ, իսկ տակը՝ փխրուն (հողի՝ գետնի մասին): Իրըսապէնդ ա, վախել մէր, քանդի (Բ): 2. տէս Իրը՝սան պէնդ:

ԻՐԸՍԱՊԷՑ - ած., մ. 1. Երեսը՝ դեմքը՝ արտաքին մակերեսը չծածկած: Իրըսապէց կընէ՞ք ջըն տը՝սնըմ Բըղդադա քուլէքումը (2): 2. տէս Իրը՝սը պէց:

ԻՐԸՍԱՍՏԱՐ - Գ. Զգեստի՝ վերմակի արտաքին՝ նուրբ ու ընտիր կողմը եւ տակի կողմից կարված կտորը՝ աստառը, միասին: Էնքան կը՝ցալ ա, պինջակէն իրըսաստառը ճըրդօտվալ ա (Բ):

- Իրըսաստառ անել - տէս ՊՐՏՈՐՏՈՒՆԻ:

ԻՐԸՍԱՍԱՆ - Գ. Տրեխի կապի այն մասը, որ ծածկում է ոտքի թաթի երեսը: Իրըսաստանը թոնլ ա իննում, Ղոնլգանին վը՝ննան տըրը՝խը տոն ա կ'ամ, մընում ցը՝խումը (2):

ԻՐԸՍԱՍԱՆԸ - ած. Երեսի կողմը թեթեակի տաշած: Իրըսատանը քարէրը շարում ըն, մընացածը ածում քամակը (Բ):

- Իրըսատանը տալ - Երեսի կողմը թեթեակի տաշել: Մին փնդ ա յօր ունէս, իրըսատանը տաս, ըստօլ շինիս (2):

ԻՐԸՍԱՍԸՂ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իրըսատըղ ինիլ - Բարոյական իրավունք՝ համարձակություն ունենալ, դիմելու՝ խնդրելու տեղ ունենալ (հատկապես գործածվում է ժխտական եւ հարցական ձեւերով): Վէրջը, էտ մարթիքը հըսնըմ ըն տօն, էլ իրըսատըղ չի ընում, վար տանը խօսէն (ՅԺՅ, V, 406):

ԻՐԸՍԱՐԱՆՔ - տէս ԹՐՔՐԹՈՅԱՆ: Էտ մարթիքըն էլ կըզնըվում ըն տըրա յիրան, իրըսարանք տամ... (ՅԺՅ, VII, 304):

ԻՐԸՍԱՏՈՒ - Գ. Կարվող առարկաների արտաքին կողմի՝ երեսի համար պիտանի՝ նախատեսված՝ գործածվող կտոր՝ կաշի: Յուրդանէն հը՝տէ թանգան իրըսացու վա ինք կանլն (Բ):

ԻՐԸՍԱՔԱՇ - տէս ԻՐԸՍՔԱՇ(Ի):

ԻՐԸՍՈՅԱՆ - մ. Ոչ խոր, մակերեսորեն: Էտ վը՝ղը իրըսըհան քանդում ըն, էտ պէնէրը թաղում: 2. Արտաքուստ, առերեսույթ, առերես: Թաքավէրը կընգանը քըշտէն իրըսըհան նըշաս ա տաս, վեր վէշ մին պէնա խաբար չի (2):

- Իրըսըհան՝ հիլի, տըկըհան՝ ծիլի - Արտաքուստ բարի՝ անվնաս, ներքուստ չար՝ նենգ՝ վնասող: Էշմիյաժնա իրըսըհան՝ հիլի, տըկըհան՝ ծիլի վըրթըբէդնէն հըռնէ պէնը ընդէդ հըսըրին, վը՝ր կըռը՝վ սարթէլ տըվին... (ՁՏ, Բ, 37):

ԻՐԸՍՈՅԱՐ - Գ. Խնոցին վերջում թեթեակի հարելը՝ յուղի պատառները իրար միացնելու համար: Խընը՝ցէն վերջումը իրըսըհար բիդի անիս, վեր յը՝ղը հըվաքվէ մին տը՝ղ (Բ):

ԻՐԸՍԼԵՎԱ - ած. Երեսը չվազած, անվա: Իրըսըվա խօխենք ըն (Բ):

- Իրըսըվա հաց օտօղ - Ասում են երեխաների մասին:

ԻՐԸՍԾԱՍԿԱՆ - Գ. 1. Ծծկեր երեխայի երեսը ծածկելու բարակ շոր՝ շղարշ: Իրըսծասկանը յը՝տ ըն քաննում, տը՝սնում խօխան կա վէշ (2): 2. Երեսի արտաքին կողմի ծածկոց, երեսը ծածկելու շոր: Էտ հարթըն միշտ իրըսծասկան ար քըցում ըստօլէն յըրա (4):

ԻՐԸՍԿԱՆԻ - տէս ԻՐԸՍԾԱՍԿԱՆ:

ԻՐԸՍԿԱՆՅԱՍ - Գ. Դեմք, կերպարանք: Էտ հարթանը իրըսըկհատը շատ ա իննում դաշանգ՝ (2):

- Իրըսըկհատա ըղնէլ - Ծերանալ, դեմքը կնճռուվել, տգեղանալ: Ջանիլ վըխտէն դաշանգ ախճիգ՝ ա իլնլ Նուբարը, միհէնգ՝ ա իրըսըկհատա ընգալ (Բ):

- Իրըսըկհատը ըրըվիատ ա - Ասում են շատ գեղեցիկ անձանց մասին: Ախճիգ, հիսն ախճիգ, իրըսըկհատը ըրըվիատ ա (Բ):

- Իրըսըկհատ ինիլ/տը՝ռնալ - տէս ԿՕՂՈՂ կէնալ:

ԻՐԸՍԿԱՍԱՆ - տէս ՂԱԼՂԱ:

- Իրըսըկման ինիլ - 1. տէս ԿՕՂՈՂ կէնալ: 2. Պանդխտության՝ օտարության գնալ: Վէց տարէ յա՝ ջիհիլնէն իրըսըկման ըն իլնլ, խաբար չի կա (2):

ԻՐԸՍՊԱՇՏ - ած. Կեղծավոր, շողոքորթ, երկերեսանի: Վէր դոնը ասիս, միհէնգ իրըսպաշտ տըղըմարթիքը կընանուցան շատ ըն (Բ):

ԻՐԸՍՊԱՐԱՆ - Գործածվում է կապակցության մեջ:

- Իրըսպարան անել - տէս Իրը՝սը շօռ տալ:

ԻՐԸՍՊԱՐՁ - ած. տէս Իրը՝սը պարզ:

ԻՐԸՍՊԷՏՈՒԿ - Գ. 1. Նորապսակ հարսի երեսի ջողը բարձրացնելու՝ երեսը բացելու հանդեսը, երեսբացուկ: Իրըսպէցնիկէն վախտը հարթըն հըմըն-չիլնն կիլիմիում ա (Բ): 2. Հարսի երեսը երեսբացուկի ժամանակ տեսնելու համար տրվող դրամական պարգև: Աղանթ ա իլնլ, իրըսպէցնիկ ըն իլնլ տաս, յը՝տնան հարթանը իրը՝սը տըսնաս (2):

ԻՐԸՍՊԸՏՈՐՈՒՆ (գրք. երեսպաշտություն) - Կեղծավորություն, շողոքորթություն, երկերեսանիություն: Ըտի իրըսպըշտօթունալ ըտըրանք ըտը՝դ հըրուստանում ըն (2):

ԻՐԸՍՑ(Ո)ՆԵԼ - Նը. Ոչ խորը՝ մակերեսային դարձնել: Տը՝սնում ըն, վեր տակըռտը շատ ա, կոնանը իրըսըցնում ըն, ըտի վարում (2):

ԻՐԸՍՔԱՇ(Ի)/ԻՐԸՍՔԱՇ(Ի)/ԻՐԸՍԱՔԱՇ - Գ. 1. Սեղանի՝ աթոռի ծածկոց, երեսակալ: Կինին վեր ա ածում, իրըսքաշին սաղ կինուտ անում (2): 2. Դա-

գաղի մեջ ննջեցյալի վրա գցվող շորը: 3ու ա՛ր ըսկացալ, վեր մըռալին իրը՛ս-քաշը կանծապէտը յօր կօնի, ուրան տանը մըհար յօրդանու իրէս կըտրէլ տա... (ՁՏ,Բ, 157):

ԻՐԸՎԱԶՈՒԿ - տէն ԸՐԸՎԱՆՅՈՒԿ:  
 ԻՐԸՎԱԶՈՒՄ - տէն ԸՐԸՎԱՆՅՈՒԿ:  
 ԻՐԸՎԱԻՓ - տէն ԸՐԸՎԱԻՓ:  
 ԻՐԸՎԱԼՆԻՄ - տէն ԸՐԸՎԱԼՆԻՄ:  
 ԻՐԸՎԱՅԱՄ - տէն ԸՐԸՎԱՅԱՄ:  
 ԻՐԸՎԱՅԱՍ - տէն ԸՐԸՎԱՅԱՍ:  
 ԻՐԸՎԱՆՅՈՒԿ - տէն ԸՐԸՎԱՆՅՈՒԿ:  
 ԻՐԸՎԱԶՈՒ - տէն ԸՐԸՎԱԶՈՒ:  
 ԻՐԸՎԳՈՒՄՆԸ - տէն ԸՐԸՎԳՈՒՄՆԸ:

ԻՐԸՎԳՈՒՄՆԸ - տէն ԸՐԸՎԳՈՒՄՆԸ:

ԻՐԸՎՅԱՍ - տէն ԸՐԸՎՅԱՍ:

ԻՐԸՔԱՆՈՒՅ - 1. ած. Երեք մաս՝ չափ՝ քանակ՝ ծավալ պարունակող: Իրըքանուց դուրբալ ճիւղ ա քաշում հայաթը (2): 2. գ. Երեք ռուբլիանոց թղթադրամ խորհրդային կարգերի օրոք: Էս խէղճը զանիւն տընէլանը նըհետ մին իրըքանուց ա տոնս օնում, տամ սուդին (ՆԼԴԺԲ, 122): 3. թ. Երեքին էլ: Ըտըրանց իրըքանուց կախ ըն տամ (2):

ԻՐԸՔԹԵՎԻԼ - չք. 1. Կանաչեղենի՝ բանջարեղենի երրորդ թեւերը՝ տերեւները դուրս գալ՝ աճել: Կընանչին իրըքթեվալ ա (Բ): 2. փխբ. Աճել, մեծանալ, զորանալ: Խօխէնքը իրըքթեվում ըն, Կարօ դային ուրխանում ա (2):

ԻՐԸՔԵՇԵԱԹ/ԻՐԸՔԵՇԵԹ/ԻՐԸՔԵՇԵԹ/ԻՐԸՔԵՇԵԹ (գրք. երեքշաքաթ) - 1. ած. Շաքաթալ երկրորդ օրը՝ երեքշաքաթ: Իրըքշեքաթը վեր կամ ա, դերվիշը քինամ ա թաքալերին կօշտը (2): 2. մ. Երեքշաքաթի օրը: Ամէն իրըքշեքաթ Վազին քինամ ա վըրս (Բ):

ԻՐԸՔԵՇԵԹ - տէն ԻՐԸՔԵՇԵԱԹ:  
 ԻՐԸՔԵՇԵԹ - տէն ԻՐԸՔԵՇԵԱԹ:  
 ԻՐԸՔԵՇԵԹ - տէն ԻՐԸՔԵՇԵԱԹ:  
 ԻՐԸՔՊԱՏԵՎ - տէն ԻՐԸՔՏԱԿ(2):

ԻՐԸՔՏԱԿ - ած. մ. Երեք տակ ծալած, երեք շերտից՝ ծալքից՝ թերթից՝ թելից բաղկացած: Իրըքտակ քանդիրը յօր ա ունէս, էտ սիւթնը ծառան կըպէս (2): 2. Երեք անգամ ավելի, եռակի: Ծատօրը էտ կավը իք ա ունէս, տընէս Թադլար իրըքտակ թանձ ծըխէս (2):

ԻՐԸՔՏԱԿԵԼ - նք. 1. Երեքտակ դարձնել, երեք տակ ծալել: Թիլը իրըքտակում ա, կըզկում (2): 2. Երեք անգամ ավելացնել, եռապատկել: Առուտուրականը նօթեն կինը իրըքտակում ա (2):

ԻՐԸՔՏԱԿԵԼ - կք. եւ չք. ԻՐԸՔՏԱԿԵԼ-ի:

ԻՐԸՔՏԻՐԸՎԵԼ - տէն ԻՐԸՔԹԵՎԻԼ:

ԻՐԹԻՐԱՆԱԼ - տէն ԸՐԹԻՐԱՆԱԼ:  
 ԻՐԹԻՐՑ(Ը)ՆԵԼ - տէն ԸՐԹԻՐՑ(Ը)-ՆԵԼ:

ԻՐԹԻՐՈՒԹՈՒՄ - տէն ԸՐԹԻՐՈՒԹՈՒՄ:

ԻՐԻԼ - տէն ԷՐԻԼ:  
 ԻՐԻԼԻՔ - տէն ԸՐԻԼԻՔ:  
 ԻՐԻՅԱԿ - տէն ԸՐԻՅԱԿ:  
 ԻՐԻՍԿԻՆ/ԻՐԻՑԿԻՆ (գրք. երիցակին) - տէն ԳՐԻՍԿԻՆ:

ԻՐԻՍՓՈՒ/ԻՐԻՑՓՈՒ - գ. Եկեղեցու տնտեսական գործերը կառավարող անձ, որ ընտրվում է այդ եկեղեցու ծխականների կողմից: Իրիսփօխըն էլ հինչ ա՛նէ, վըրթըրէդին թաննիքն ա պահում (2):

ԻՐԻՑԿԻՆ - տէն ԻՐԻՍԿԻՆ:  
 ԻՐԻՑՓՈՒ - տէն ԻՐԻՍՓՈՒ:  
 ԻՐԻՑՆԱԿ - տէն ԸՐԻՑՆԱԿ:  
 ԻՐԿԸԾՈՒԿԱՆ - տէն ԸՐԿԸԾՈՒԿԱՆ:

ԻՐԿԸՆԱԲՕՅ - տէն ԸՐԿԸՆԱԲՕՅ:  
 ԻՐԿԸՆԱԼՆԻՄ - տէն ԸՐԿԸՆԱԼՆԻՄ:  
 ԻՐԿԸՆԱՍՕՇ - տէն ԸՐԿԸՆԱՍՕՇ:  
 ԻՐԿԸՆԱՆԱԼ - տէն ԸՐԿԸՆԱՆԱԼ:  
 ԻՐԿԸՆԱՆԳՈՒՃ - տէն ԸՐԿԸՆԱՆԳՈՒՃ:

ԻՐԿԸՆԱՎՈՒՄ - տէն ԸՐԿԸՆԱՎՈՒՄ:  
 ԻՐԿԸՆԱՍՈՐ - տէն ԸՐԿԸՆԱՍՈՐ:  
 ԻՐԿԸՆԱՎՈՇ - տէն ԸՐԿԸՆԱՎՈՇ:  
 ԻՐԿԸՆԵՇԻ - տէն ԸՐԿԸՆԵՇԻ:  
 ԻՐԿԸՆԱԶԻ - տէն ԸՐԿԸՆԱԶԻ:  
 ԻՐԿԸՆՑ(Ը)ՆԵԼ - տէն ԸՐԿԸՆՑ(Ը)ՆԵԼ:

ԻՐԿԸՆՑՈՒՓԵ - տէն ԸՐԿԸՆՑՈՒՓԵ:  
 ԻՐԿԸՆՕՒԹՈՒՄ - տէն ԸՐԿԸՆՕՒԹՈՒՄ:

ԻՐԿԸՆՕՏԵՎ - տէն ԸՐԿԸՆՕՏԵՎ:  
 ԻՐԿԸՆՕՏԵՍ - տէն ԸՐԿԸՆՕՏԵՍ:  
 ԻՐԿԻԼ - տէն ԷՐԿԻԼ:  
 ԻՐՓԻՎԵՐԻ - տէն ԸՐՓԻՎԵՐԻ:  
 ԻՑՈՒՄ - տէն ԻՑ(Ց)ՈՒՄ:

ԻՑ(Ց)ՈՒՄ/ԻՑՈՒՄ/ԻՑ(Ց)ՈՒՄ (գրք. յիսուն) - գ. 3ինգ տասնյակ, հիսուն: Դանրվիշը վըր լըսըմ ա, մուտանըմ ա, իցուն մանէթ վըսկէ փօղ տամ, էտ օթախին մէշին յէշըմ (3Ժ3, V, 180):

ԻՓ - գ. 1. Եփվելը, եռալը: Թընավէն իփը վեր ըսքըսում ա, բիդի խառնիս, թա չէ իլլան ա, վեր տըրնում (Բ): 2. Քաղցուների՝ օրգանական նյութերի խմորումը: Կինուն իփը հանալ պըրծալ չի, խըմէլի չի (Բ):

- Իփ ածել - Եփել, եռացնել: Ախճիգը կաթնը իփ ա ածըմ, ածըմ թաքալերին կըլիին, ըսպանըմ (3Ժ3, V, 104):

- Իփը կըլխավը ածել - 1. Չափից շատ եփել՝ եռացնել: Էտ կընէգը խուրանգին իփը կըլխավըն ա ածում, մաղ-

բուն անում (2): 2. փխբ. Խիստ զայրացնել: Շինացէթ՝ 3անամէն իփը կըլխավըն ըն ածում (2):

- Իփը կըլխավըն ընցընել - 1. Չափից շատ եփվել՝ եռալ, շատ եփվելով՝ բարձրանալ ու թափվել: 3արթնը թանավը թօղում ա կըրակէն յըրա, կամ, տըրսնում իփը կըլխավըն ընցած (2): 2. փխբ. Խիստ զայրանալ: Աէտրակը էտ վեր տըրսնում ա, իփը կըլխավըն ա ընցընում (Բ):

- Իփը նըստել - 1. Եփվելը՝ եռալը դադարել: Կըրակը վեր ա ընցընում, խուրանգին իփը նըստում ա (2): 2. Խմորվելը դադարել: Թօթեն իփը վեր նըստից, արաղը քըշիլի վախտըն ա (Բ):

- Իփը պակաս - 1. Անհրաժեշտ չափով չեփված: Մըսէն իփը պակաս ա, պէնդ ա (Բ): 2. Անհրաժեշտ չափով չխմորված: Իփը պակաս կ'ինին ճէլլի կը հըրփըցընէ (Բ): 3. Անփորձ, տհաս: Իփը պակաս ցանիլ ա (Բ):

- Իփը տըրը - 1. Անհրաժեշտ չափով եփված: Կուրկուտէն իփը տըրըն ա (Բ): 2. Անհրաժեշտ չափով խմորված: Թօթեն իփը տըրըն ա, լալ արաղ ա տոնս կամ (Բ):

- Իփ կ'ան - 1. Եփվել, եռալ: Ծանշ ըմ իփան, իփ կըկա, տըրսնա տըրդա հիբ կըկա... (ԼԴԲ, 41): 2. Խմորվել: Կինին մինչըմ իփ կ'անը 3արնաթըր լօխ խըմում ա (2):

- Իփ տալ - տէն Իփ ածել: 3էտնան դըզդաննէն տիրան ըն կըրակին յըրա, մէջը ճիւր ածալ, իփ տըվալ (3Ժ3, VI, 60):

ԻՓՄԾ - ԹԸՆԱՄԾ - ած. Լուրջ, բանիմաց, ծանրաբարո, փորձառու: Իփանծ թըխած ախճիգ ա Մարանգիլը (Բ):

ԻՓՐԵՎ - տէն ԻՓՐԵՎ:

ԻՓԻԼ (գրք. եփեմ) - նք. 1. 3ում կերակրանյութը կրակով՝ ջերմությամբ խաշել: Տընատարը քինամ ա էտ վըր-ցակը մօրթում, իփում ըն, վըր տան դու-նաղէն (3Ժ3, VII, 38): 2. Եռացնել: Ծիւրը իփիծմ ըն, ըլըբաստըրակը քըցնում մաջը (2): 3. փխբ. Այրել: Արըմը իփում ա (Բ): 4. չք. տէն ԻՓ կ'ան:

- Իփանծ հավէն ծըծաղը կըկ'ան - Ասվում է, երբ մեկը անհավանական՝ անբնական՝ անհեթեթ բաներ է ասում կամ անում: Նիկօլ անին հանց պէնէր ա ասում, վեր իփանծ հավէն ծըծաղը կըկ'ան (Բ):

- Իփիծէն մէխը չուտողէն վըզին - Գովաբանական արտահայտություն ճաշ եփողի հասցեին՝ շատ համեղ է ճաշը, վայ չուտողին:

ԻՓԻԼ-ԹԱՓԵԼ - նք. Տան զանազան գործերն անել: Ամմէն օր մարթը քինում



ված, կիպ չնստող, լայն: *Շալվարը յը-րան լախ ա (Բ):*

- Լախ անել - 1. Կապը՝ հանգույցը թուլացնել: *Թոխյան լախ ա անում (Բ):* 2. տեն Կըննը կախ անել:

- Լախ ինիլ - Կապը՝ հանգույցը թուլանալ: *Քանդիրը լախ ա ինում, էշին պեռնը ծռում ա (Ձ):*

ԼԱԽԸՌ - Գործածվում է կապակցության մեջ:

- Լախըն ըղնել - Ոչինչ չանել, ամբողջ օրը հանգստանալ՝ պառկել: *Հանրը սաղ օրը տանջվում ա, ինքըն էլ լախըն ընգած կիրք ա կարթում (Ձ):*

ԼԱԽ-ԼԱԽ - ած. Լիլխացող, թույլ, խախտ: *Էտ էշին լախ-լախ պեռնը կոխկէն ա ըղնում, էշին վեր քըցում (Բ):*

- Լախ-լախ անել - Թույլ կերպով շարժվել՝ տարուբերվել: *Կըխճարը քի-նում ա՝ տըմակը լախ-լախ ընելավ, էծը ծըծաղում ա (Ձ):*

ԼԱԽԿԱԹԸԽԿ/ԼԸԽԿԱԹԸԽԿ - գ. Դատարկություն, ամայություն: *Բազարը լախկաթըխկ ա, առըտօր անօղ չի կա:*

- Լախկաթըխկ անել - Դատարկ լի-նելուց երեքավ՝ մեկ այս, մեկ այն կողմ շարժվել: *Ըրբան լախկաթըխկ ընելավ քիճամ ա (Բ):*

ԼԱԽՏ (այրս. *laxt*) - գ. Հաստ պարան՝ գոտի՝ թոկ, որով խաղացողները խաղի ժամանակ իրար հարվածում են: *Խօ-խենքը մարթը մին լախտ ըն յօր ունէս, ուրուր վեր թըկէս (Ձ):*

- Լախտ անել - Ոլորել, ծալել: *Քան-դիրը լախտ ա անում, քըցում էշավը, քիճամ (Ձ):*

ԼԱԽՏԷ - գ. Խաղատեսակ. գետնին շրջանագիծ գծելով՝ գոտիները դնում են ներսում՝ ծայրերը գծի վրա: Դրսում գտնվող խաղացողը ձգտում է շրջա-նագծի ներսում գտնվողից գոտին խլել եւ նրանով հարվածել ներսի խաղացողին: Եթե ներսի խաղացողը կարողա-նում է մի ոտքը դիպցնել խփողի ոտքին, տեղերով փոխվում են: *Լախտէն համ խօխենքըն ըն իլն խաղ ընելիս, համ մըծէրը (Բ):*

ԼԱԿ՝ (հ.ե. \*log- (թույլ, փչացած), այրս. *lag* (ներած ձու) - ած. 1. Երկար մնալուց կամ շատ հասունանալուց փչացած՝ նեխած: *Թուխսըկանէն տա-կէն քըսան ծու վա ինում, տասսը լակ ա տնու կամ (Ձ):* 2. փխբ. Դատարկախոս, դատարկամիտ, թեթևաոլիկ: *Լակ մարթ ա Զավէնը (Բ):*

- Լակը ծակը կօխել - Լռել, ձայնը կտրել: *Վեր մէհէտ տըրըքըրէն, լակը ծակը կօխից (Բ):* 2. Լռեցնել, ձայնը կտրել տալ: *Վէշ մինը կարում չար էտ ան-*

*համանչ կընգանը լակը ծակը կօխէ (Ձ):*  
- Լակ ծու - Դատարկախոս՝ դատարկամիտ՝ թեթևաոլիկ մարդ: *Էտ լակ ծուն էլիա յըկավ, գանիլքնից ա ընա-կան (Բ):*

- Լակ ծու շինիլ - Փչացնել: *Ընդիսու նըման տանձը պահից, պահից, լակ ծու շինից, տէն ածից (Բ):*

- Լակ ծուվու նըման իրըսան կէնալ - տեն ժանգ՝ անել, իրըսան կէնալ (2):

- Լակը կած՝ - Տրամադրությունը վատ, ջղայնացած, բարկացած: *Պու-դին քիճամ ա, տըսնում Մէլիքը լակը կած (Ձ):*

ԼԱԿ՝ (գրք. լակ) - գ. 1. Այնուով՝ թե-փով պատրաստված ջրալի անասնա-կեր: *Խօզին ճօտերը լակը օտում ըն, պարաց ըղնում (Բ):* 2. փխբ. Անհամ անորակ ջրալի կերակուր: *Էտ լակը հինչ ա՝ վեր իփնլ ըս (Բ):*

- Լակ անել - 1. Այնուով՝ թեփով ջրա-լի անասնակեր պատրաստել: *Անթա ա, կավը վեր ծընէ, պատառ լակ կանին, տան ուրան (Բ):* 2. փխբ. Անհամ անո-րակ ջրալի կերակուր պատրաստել: *Էտ կընէգը շօրվա իփիլըն էլ չար գնդում, լակ ար անում, տամ մարթին (Ձ):*

ԼԱԿ՝ (ռուս. *лак, գերմ. Lack, իտ. lacca*) - գ. Փայտյա՝ մետաղա եւն առարկաները ջնարակելու փայլուն ներկանյութ՝ լաք: *Լակ ըն ինք՝ օնում, էտ կըրաս-կէն կըլխավը քըսում (Ձ):*

- Լակ տալ - Լաքով ջնարակել, լաք քսել: *Միհէնգվա չուրընէն մըհակըն էլ ըն լակ տամ (Բ):*

ԼԱԿԱՆ - ած. Ասածը՝ պատվերը չկատարող, հակառակվող: *Լական ուս-տա յա Մուխանը, լօխ էն ըն նըստա նը-դացած (Ձ):*

ԼԱԿԷԼ (գրք. լակեմ, լակել) - նբ. 1. Հեղուկ կերակուրը լեզվով բերանն ածել եւ ուտել՝ խմել (շնեթի եւ այլ կենդանի-ների մասին): *Շօնը էտ լակը լակում ա, թանգնում (Ձ):* 2. անրգ. Խմել (մարդկանց մասին): *Էնքան ծուր ա լակալ, փորը օռալ ա (Բ):* 3. անրգ. Խմիչք խմել, կոն-ծել, հարբել: *Թաքավերըն ան դանկիշը միսչէվ էքսը հէն ըն իլն լըկէլիս (ՀԺՀ, VI, 99):*

ԼԱԿԻՐՕՎԸՆՆԻ (ռուս. *лакирован-ный*) - ած. Լաքով պատած, լաքապատ: *Լակիրօվընի վըննաման ա կըգալ (Բ):*

ԼՕԼԱԿ (պրս. lila) - գ. 1. Երկարա-վուն եւ սևամեջ ոսկոր: ...Կոլէրը մըսէրը թիքն-թիքն յըն անում, թօղում կարկածըն ա լուլուկնէն (Ձ): 2. Օրորոցի մեջ դրվող հատուկ ձեռով պատրաստած խոդովակ, որով երեխայի մեզը թափ-վում է դուրս՝ միգամանի մեջ: Մին լօլակ ա շինում, տինում ըրորուցումը (Ձ): 3. տեն ԼՈՒԼԱ (6):

- Լուլակում տըռէլ/տըռօտէլ - Դեռ շատ փոքր լինել, խելքը բան չկտրել: Սանթուրը թա.- Սըրքըրա՛, յը՛ս վեր էն ըմ իլնլ հոնձ ընէլիս, տու հնլն էն ըս իլնլ լուլակումըտ տըռէլիս (Բ):

- Լուլկնէն ցէց կէնալ - Խիստ հյուծվել՝ նիհարել: Կալը իրը՛ք ամէս ա՛ կումումը, լուլկնէն ցէց ա կացալ (Բ):

ԼՕԼԱԾ - տեն ԼՕԼՕԾ:

ԼՕԼԻ - ած. գ. Երկարահասակ ու նիհար, լողող (մարդ): Էտ լօլին վեր հըղըցավը քիսում ար, լօխ ծըծաղում ին (Ձ):

ԼՕԼԿԱ/ԼՕՐԿԱ - տեն ԸՐՈՒՐՈՒՆՑ:

ԼՕԼՕ՝ - մակ. Խնձոր: Խօխան լօլօ յա օգնում (Բ):

ԼՕ-ԼՕ՝ 1. Խաղատեսակ: Մի խմբի երեխաներից մեկի աչքերը ձեռքերով ծածկում են եւ արտաբերում լՕ՝-լՕ՝ կամ ո՛ւլ-ո՛ւլ ձայները: Եթե չճանաչեց, նրա խումբը պետք է փնտրի ու գտնի մյուս խմբի անդամներին, որոնք իրենց թաքստոցներից անընդհատ հանում են այդ ձայները: Եթե ճանաչեց, կամ գտան հակառակ թիմի բոլոր անդամներին, խմբերը տեղերով փոխվում են: Լօ-լօն ձւրողիւնէն ըն իլնլ խաղ ընէս (Բ): ձ. Որոշ խաղերի ժամանակ իրար կան-չելու ձեւ: ԼՕ՝-լՕ՝, էտ ըշտը՛դ ըս (Ձ):

- Լօ - լօ անել - Կանչել, ձայն տալ: Լօ-լօ յըն անում, խօխօնը հըվաքում (Ձ):

ԼՕԼՕԾ/ԼՕԼԱԾ - գ. Խողովակաձեւ փաթաթած լավաշ հաց՝ մեջը պակիր, միս, սօխ եւս լցրած: Լօլաճը տինում ըն խուխէն ծը՛րքէն, դարկում հայաթը, ձւրանց սիլի-քիլի անում (Ձ):

ԼՕԼՕՇ - տեն ԼՕԼԻ:

ԼՕԽ (գրք. ողջ) - 1. ած. գ. Բոլորը, ամենքը, ամբողջը: Թաքավը՛րը հըրա-

ման ա տամ, վար օցերը լօխ կան ձւրանց ըռաշկավըն անց կէնան (ՆԼՂԺԲ, 11):

- Լօխ պըրծալ ընք, մընացալ ա ապօրը գօղը - Ասում են այն ժամանակ, երբ դեռ կարելուր բաները չարած՝ առաջարկում են անել ոչ կարելուրը:

- Լօխ քը՛գ, լօխ քը՛գ - Ասում են ուտելու ժամանակ գլուխացող երե-խային՝ խփելով մեջքին. մի՛ շտապիր, բոլորը քնն է:

ԼՕԽԷԼ - տեն ՓԸԼԱՆԷԼ:

ԼՕԽՏԱ - տեն ՆՕԽՏԱ:

ԼՕԿ (հ.ե. \*(s)led- (թույլ լինել) - գ. 1. Օձանման թունազուրկ սողուն, լորտու: Լօկը օխճէն ըսպանում ա (Բ): 2. փխբ. տեն ԽԸ՛Ր:

- Լօկէն նաղը յըրա/վեր պիրիլ - Մանրամասն ու ձանձրալի կերպով որեւէ բանի շուրջ երկար խոսել, որեւէ բան ձգձգված պատմել: Յըրըվաննին կաս ըն էրգան խուսէս, լօկէն նաղը յըրա պիրիս... (ԼՂԲ, 318):

- Լօկը թօղ - թօղ ընէլալ - Դատարկ ձեռքով, դատարկաձեռն: Յըմանչում էլ չի Ափկարը, լօկը թօղ-թօղ ընէլալ յը՛ր ա կացալ, քըղաքան յը՛կալ քըվօրը տօնը (Բ):

ԼՕՂ - տեն ԼԸՂ:

ԼՕՂԼՕՂ(Ի) - տեն ԼՕԼԻ:

ԼՕՂԱՆԻ - գ. Յմուտ, իմաստուն բժիշկ կամ այլ մասնագետ (առասպե-լական բժիշկ Լոխմանու անունից): Մին օր հնրըն ըսկանում ա, վը՛ր էսհինչ քըղաքումը մին ամմէն հինչ գիւղօղ լօղմանի կա (ՅԺՅ, VII, 48):

ԼՕՂԱՆՕԹՈՒՆ - գ. Մասնագիտա-կան հմտություն՝ իմաստնություն: ...Էտ լօղմանին վը՛ջ մինին ձւրան փէշակը սուվուրցըրալ չի, հանցու ձւրան լօղ-մանթունը ձւրան անում մընա (ՅԺՅ, VII, 48):

ԼՕՂԿԱ (թրք. loğça) - ած. Գոռո-գամիտ, պարծենկոտ: Լօղվա մարթ ա Շաբօն (Բ):

ԼՕՂԿԱ-ԼՕՂԿԱ - տեն ԼԸՂԿԱ-ԼՕՂ-ԿԱ:

ԼՕՂԿԱՄԻՇ - տեն ԼԸՂԿԱՄԻՇ:

ԼՕՂԿԱՎԱՉԻ - տեն ԼԸՂԿԱՎԱՉԻ:

ԼՕՂԿԱՎԱՐԻ - տեն ԼԸՂԿԱՎԱՐԻ:

ԼՕՂԿՕԹՈՒՆ - տեն ԼԸՂԿՕԹՈՒՆ:

ԼՕՂՏԵՎ - տեն ԼՕԼԻ:

ԼՕՄ(Բ) (ռուս. лом) - տեն ԼԻՆԳ:

ԼՕՇՏԱԿ՝ - տեն ԼՕՇՏՏՐԱԿ՝:

ԼՕՇՏԱԿ՝ - տեն ԼՕՇՏՏՐԱԿ՝:

ԼՕՇՏՏՐԱԿ/ԼՕՇՏԱԿ/ԼՕՇՏՏՐԱԿ՝ (գրք. լօշտակ) - գ. Դրմագիտների ընտա-նիքին պատկանող բոլոս, որի արմատ-ները օգտագործում են բժշկության մեջ:

Շօնը քանդում ա, լօշտըրակէն տակըռը տոնս օնում (Ձ):

ԼՕՇՏՈՐԱԿԷ/ԼՕՇՏԱԿԷ/ԼԱՇՏՈՐԱԿԷ - ած. Լայն ու երկար (ականջների մասին): Լօշտըրակ ընգունէ օնէ (Բ):

ԼՕՊ (ռուս. лоб (ճակատ) Գործածվում է կապակցության մեջ

- Լօպէն տալ - Խփել, հարվածել: Լօպէն վեր տամ ըն, էտ կօղը լօխ վըզնվ ա օնում (Ձ):

ԼՕՊ(Պ)ԱԶ - ած. Սնապարծ, մեծամիտ: Լօպպազ մարթին անա զնիւնս տարած ա (Բ):

ԼՕՊ(Պ)ԱԶԱՆԱԼ - չք. 1. Մեծամտություն անել, մեծամտել: Խըրէզ լօպպազազ, էտ պէնը տու կարէլ չըս անիս (Բ): 2. Մեծամիտ դառնալ, մեծամտանալ: Սուս ու փուս տըղա յա իլնվ Աբասը, մը-հէնգ ա ըտի լօպպազազալ (Բ):

ԼՕՊ(Պ)ԱԶՕԹՈՒՆ - գ. Սնապարծություն, մեծամտություն, պարծենկոտություն: Ըտըրա լօպպազօթունը վէշ մի-խին տուր չի կամ (Բ):

ԼՕՌ - տեն ՇԸՍԱԹ:

ԼՕՍԿԷԼ (գրք. լետում) - չք. 1. Շատ շփվելուց՝ մի բանի քսվելուց մաշվել՝ ողորկ դառնալ: Ճըղազէն քարը լօսվալ ա (Ձ): 2. փխբ. տեն Իրըս առնել:

ԼՕՍԿԷԼ-ԿՕԿԿԷԼ - տեն ԶՈՒԲԿԷԼ - ԶՈՐԹՆԻԿԷԼ:

ԼՕՏԱՆԲ - տեն ԼՈՊԱՆԲ:

ԼՕՏՁԻԿ (ռուս. лётчик) - գ. Սավառնորդ, օդաչու: Սամալծտը տըրաքում ա, լծտչիկը պարաշոտավ լօք ա տամ (Ձ):

ԼՕՏՕ (ռուս. лото, ֆր. loto, իտ. lotto) - գ. Խաղատեսակ՝ լոտո: Զնիլ տըղէք ըն, քինամ չըն, թա ուրանց բաղը պի-հին, անջախ սաղ օրը լօտօ յըն խաղ անում (Ձ):

ԼՕՐ/ԸԼՕՐ (գրք. լոր) - տեն ԶԸ-ԲՈՒՆԽՆՓԻ:

ԼՕՐԻՆ - գ. Կաշվե թուկ, որով լուծը կապում են սայլին: Լօրխը կըտըրվում ա, ըրբան ըղնում ա ծօրը (Ձ):

ԼՕՐԻՆԷԼ - նք. Լորխով լուծը սայլին կապել: Ըրբան լօրխում ըն, հըղէ իննւմ (Ձ):

ԼՕՐԿԱ - տեն ԼՕԼԿԱ

ԼՕՓԱ - տեն ԼԱՍՓԱ

ԼՕՓԱ-ԼՕՓԱ - ած. Մեծ-մեծ, լայն: Լօփա-լօփա տըխտըկնէ յա թըխում (Ձ):

- Լօփա-լօփա անել - Մեծ կտորների բաժանել: Փնղը լօփա-լօփա յա անում, վէր ածում (Բ):

- Լօփա-լօփա խօսել/տոնս տալ - Պոռտախոսել, մեծախոսել: Խըրէզ լօփա-լօփա խօսէ (Ձ):

ԼՕՓԷԼ - տեն ԼԸՍՓԷԼ:

ԼՕՔ (հ.ե. \*lok- (ցատկ) - Գործածվում է կապակցության մեջ:

- Լօք տալ - 1. Մեկի կամ մի բանի վրայով լայն քայլով անցնել: Քարեն կըլխավը լօք ա տամ, ընցընում (Ձ): 2. Ցատկել: Պիծի տըղան լօք ա տամ, յեր կենում, տանան տոնս կամ, իսկի կընգանըն էլ ասում չի (ՆԱԲ, 29): 3. փխբ. Անբարոյական կյանք վարել (կանսնց մասին): Լօք տըվող կընգանը ճար չի-նիլ (Ձ):

ԼՕՔ-ԼՕՔ - Գործածվում է կապակցության մեջ:

- Լօք-լօք անել - 1. Ցատկոտել: Լօք-լօք ըն անում, թըքանում (Ձ): 2. փխբ. Ուրախությունից թռչկոտել: Խօխէնըք աղանծը վէր տըսնում ըն, լօք-լօք ըն անում (Բ): 3. փխբ. Հոխորտալ, սպառնազին խոսել, մեծախոսել: Վէր ծըր-քավըտ պէն չի կաս, հօր ըս լօք-լօք ընէս (Բ):

ԼՕՔԷ - տեն ԼՈՒՔՏԱՆԷ:

ԼՕՔ՝ (թրք. lök (ծանրաշարժ, ծանր, դանդաղկոտ) - 1. գ. Ձկան տեսակ՝ լոքո, որ տարածված է Քոռ եւ Արաքս գետերում: Մին լծք ըն փըռնում, քըշքըռում, տըսնում դնիզ օխտը փուր (Ձ): 2. ած. գ. փխբ. Գեր եւ դանդաղաշարժ (մարդ, անասուն): Ըտըրան էլ ինում ա մին լծք կընէգ (Ձ):

ԼՕՔՏԱ - տեն ՆՕԽՏԱ:

## Խ

ԽԱԲԱՐ/ԽԱՔԱՐ/ԽԱԲԱՐ (արաբ. xaber, թրք. haber) - գ. Լուր, տեղեկություն: Մէհէտ Թիվանէն խաբար ըն հըսցընէս, թա. ...Թօրքէրը Նի յըն տըհալ Հնդդոն-թան յըրէ շէնէրը... (ԱԱ, 76):

- Խաբար անել - տեն Խաբար տալ:

- Խաբար ինիլ - Տեղեկություն ունենալ, տեղյակ լինել: Կընէգը օխտը սիրական ա պահում, ինքը խաբար չօնէ (Բ):

- Խաբար շօռ ածել/պըճըղել - Լուրեր տարածել: Տըղամարթը վէր խաբար շօռ ածից, տըղամարթ չի (Ձ):

- Խաբար տալ - 1. Հայտնել, տեղեկացնել, իրազեկել: Կամ ըն կընգանը խաբար տամ, վար էն ա մարթըտ փըլան տըղը ըսպանված (ՆԼՂԺԲ, 25): 2. Խոսել, պատմել: Տահանց էլ թօղինք հըղըցումը, քաշալ ախպօրը անա խնքնը տանը (ՀԺՀ, V, 630):

- Խաբար տանել - Լուր՝ տեղեկություն հասցնել: Խաբար ըն տանում թաքավէրին, վէր տըղան մըհալ ա (Ձ):

ԽԱԲԱՐ - տեն ԽԱԲԱՐ:

ԽԱՔԱՐ - տեն ԽԱԲԱՐ:

ԽԱԲԱՐ-ԱԹԱՐ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խաբար-աթար չի կա- Ոչ մի լուր՝ տեղեկություն չկա: Վաղօս էրկու տարէ յա՝ քըհալ ա սիզօս, խաբար-աթար չի կա (Բ):

ԽԱԲԱՐԴԱ(Ր)/ԽԱՔԱՐԴԱ(Ր)/ԽԱԲԱՐԴԱ(Ր) (պրս. xaberdar (լսիչ) - ձ. Բացականջություն, որով զգուշացնում են մարդկանց մի բանից: - Էյ խաբարդար, մին ծիյավէր ճըղըրթալալ յէկալ ըտըրանց քըշտավը անց կացալ (ԶՏ, Ա, 9):

- Խաբարդար ինիլ - Մի բանից հեռու մնալ, անհաղորդ՝ անտեղյակ լինել: Մըծ քուրը ախպօրը դըրդէրան խաբարդար ար (Ձ):

ԽԱՔԱՐԴԱ(Ր) - տեն ԽԱԲԱՐԴԱ(Ր):

ԽԱՔԱՐԴԱ(Ր) - տեն ԽԱԲԱՐԴԱ(Ր):

ԽԱԲԱՐԶԻ - գ. Լրաբեր, բանբեր, սուրհանդակ: Խաբարչին խաբարը դանսի հըսցընում ա թաքավէրին (Ձ):

- ԽԱԳ/ԽԱՂ - ած. Խելապակաս, հիմարավուն: Մարթին կընէգը վէր խազ՝ իլնվ, տօնը կըքանդվի (Բ):

ԽԱՂ - տեն ԽԱԳ:

ԽԱԳ-ԽԱՅՏԱՌԱԿ - տեն ԽԱՂԲ-ԽԱՅՏԱՌԱԿ:

ԽԱԶ - տեն ԽԱԶ:

ԽԱՂ - տեն ԽԱԶ:

ԽԱԶԱՂ/ԽԱՂԱՂ - գ. Վայրի սոխա-նման բույս, որ օգտագործում են թարմ եւ թթու դրած վիճակում: Ղարաբաղա ծըմըկնումը հինչըն ա բօլ՝ խազազը (Բ): ԽԱՂԱՂ - տեն ԽԱԶԱՂ:

ԽԱԶԱԼ (թրք. kazel) - Աշխարհ թափված եւ ծառերի տակ հավաքված տերեւներ: Էս ծըմակըմը տիրէվ, խազալ, ճըղնէր, տէս-տէն ըն հըվաքըմ, մին պու-ճուր տօն շինըմ, ապրըմ (ՀԺՀ, V, 41):

- Խազալը վեր տալ - Ուրախությունն անցնել, անտրամադիր դառնալ: Էրկու օր էլ անց չի կենում, թանգան հարթանը խազալը վէր ա տամ (Ձ):

- Խազալ տալ - Աշխարհային տերեւա-թափը սկսվել: Ծառերը վէր խազալ տան, սըրկէվիլը Էն վախտը կըքաղին (Ձ):

- Խազալ տըհնալ - տեն Խըզնիլն տըհնալ:

ԽԱԶԱՅԻՆ - տեն ԽԱԶԷՅԻՆ:

ԽԱԶԱՅԻՆՕԹՈՒՆ - տեն ԽԱԶԷՅԻՆՕԹՈՒՆ:

ԽԱԶԱՆՂԱՐ - տեն ԽԱԶԱՆՂԱՐ:

ԽԱԶԱՐ - տեն ԽԷԶԱՐ:

ԽԱԶԷՅԻՆ/ԽԱԶՆԻՆ (ռուս. *хозяин*) - գ. Տեր, տնօրեն: *Էտ չօբանը սնսին յը-րա ճընանջըմ ա, վեր ուրան խազայինին ախճիգըն ա* (ՅԺՅ, V, 538):

ԽԱԶԷՅԻՆՕԹՈՒՆ/ԽԱԶՆԻՆՕ-ԹՈՒՆ - գ. Տեր՝ տնօրեն լինելը: *Խազէյի-նօթունա կըման էրնու պէն կարում չար անէ Ափկարը* (Բ):

ԽԱԶԻԼ - տէն ԽԱԶԻԼ:

ԽԱԶԻԼ - տէն ԽԱԶԻԼ:

ԽԱԶ/ԽԱԶ/ԽԱԶ (գրք. *խազ*) - գ. 1. Գիծ, գծիկ: *Տըղան էտ խազին յըրա կը-լծի ա ընգընէս, թա ախճիգը հինջ ա ծգանլ ասէ* (Ձ): 2. Ձեռքի ափի մեջ եղած գծավորումները: *Բախաջին ըտըրա ծը-րըը փըռնում ա, խըզէրէն յէշնում, թա՝ պէնըտ պիւրթ ա* (Ձ):

- Խազը ընցընել - տէն Չափը ընցը-նել:

- Խազումը վեր ըղնել - Պատրաստ լինել: *Կոնքի, էքոնց կըրըլական ըս հոնձը ըսքըսիս: - Էն ըմ խազումը վեր ընգած* (Ձ):

- Խազ՝ քաշիլ - 1. տէն ԽԱԶԻԼ: 2. տէն Խաչ քաշիլ(1):

ԽԱԶԻԼ/ԽԱԶԻԼ/ԽԱԶԻԼ (գրք. *խա-զեմ*) - նք. 1. Խազ՝ գիծ քաշել, գծել: *Դոն-գանը փանը խազում ա, կըտըրմ* (Բ): 2. Մի փոքր կտրել, քերծել: *Տինակավը ծըրքը խազում ա* (Ձ): 3. Ձնջել: *Մատի-տը յօր ա ունէս, էտ կիրանձնէն սաղ խըզիս* (Բ):

ԽԱԶՎԻԼ/ԽԱԶՎԻԼ/ԽԱԶՎԻԼ - չք. եւ կք. ԽԱԶԻԼ- ի:

ԽԱԶՆԱ/ԽԱԶՆԱ (արաբ. *xazina*, պրս. *xazine*, թրք. *hazine*) - գ. 1. Գանձ, հարստություն: *Յօրը խանգան շատ օնէր, էտ խազնիցը յէր կալավ շատ վըսկէ* (ՅԺՅ, V, 135): 2. տէն ԽԱԶՆԱՏՕՆ(2): *Խըզնէն պինանլիքը տամ ա, պիրում ա կէս խորջին վըսկավ լըցնում, տուս կամ* (ՅԱԲ, 15, 120): 3. Ձկնորսական կո-ղովի մեջ տեղադրված այլ կողով, որը արգելակում է ձկների՝ կողովից դուրս գալը: *Խազնան թողում չի՝ ծուկունը ճու-վըրանան տուս կա* (Ձ):

ԽԱԶՆԱ - տէն ԽԱԶՆԱ:

ԽԱԶՆԱԳԱՐ/ԽԱԶՆԱԳԱՐ/ԽԱԶՆԱ-ԳԱՐ (արաբ., պրս. *xazine-dar*, թրք. *hazine-dar*) - գ. 1. Գանձապահ, գանձապետ: *Խազնադարըն, էս կընգանը տըսնալավ, խըլքը օգում ա, թա կուրցընէ* (ՅԺՅ, VI 198): 2. փիթ. տէն ԽԱԶՆԱՏԱՐ(2):

ԽԱԶՆԱԳԱՐ - տէն ԽԱԶՆԱԳԱՐ:

ԽԱԶՆԱԶԻ/ԽԱԶՆԱԶԻ - տէն ԽԱԶ-ՆԱԳԱՐ:

ԽԱԶՆԱԶԻ - տէն ԽԱԶՆԱԶԻ:

ԽԱԶՎԻԼ - տէն ԽԱԶՎԻԼ:

ԽԱԶՎԻԼ - տէն ԽԱԶՎԻԼ:

ԽԱԹԱ (արաբ. *xata* (սխալ, հան-ցանք), թրք. *hata*) - գ. Փորձանք, պատու-հաս: *Տի էլ խըթան պըրծընում ըն* (ԲՅԲ, 150):

- Խաթա անել - Փորձանք՝ պատու-հաս բերել՝ առաջացնել: *Խօխան թը-վանգավը վեր խաղ ըրավ, գիղան վեր մին խաթա յա ընական* (Բ):

- Խաթան նըստա կախ ինիլ/շըռշը-ռալ - Անընդհատ փորձանք՝ պատուհաս բերել՝ առաջացնել: *Էն ա խաթան նըս-տա կախ, ըտըրա հըրտէ յէլ վէշ մինը նը-հըրտը հընգըրթօուն չի անում* (Բ):

- Խաթան նըխա տըհան կինի - Ասում են այն ժամանակ, երբ մեկը փոր-ծում է որեւէ բան անելիս համարձակ քայլ կատարել: *Մարը ասմա. - Էս թուխ-պավը հօր ըս քինում վըրս, խաթան նըխա տըհան կինի* (Ձ):

- Խաթան քաշիլ - Յեռնալ, գնալ, որպեսզի փորձանք չգա: *Էտ թըվանգը յըր կանլ, խաթատ քաշի* (Բ):

Խաթա տըհնալ - Փորձանք՝ պատու-հաս լինել, նեղություն պատճառել: *Էտ ծին Յաննիս հըրտէ խաթա յա տըհնալ, գոնդում չի, թա հունց անէ՝ ծախէ, պըր-ծընէ* (Բ):

- Խըթու մաչ ըղնել - Փորձանքի՝ պատուհասի ենթարկվել: *Մըհէնգ ըն-գալ ա խըթու մաչ, էլ կարում չի տուս կա* (2):

- Խըթու մաչ քըցիլ - Փորձանքի՝ պա-տուհասի ենթարկել: *Էտ տըղան ուրան ըխմըղթունավը հօրը խըթու մաչ ա քը-ցում* (Ձ):

- Խըթու շօռ կանլ - Կամովին փոր-ծանքի՝ պատուհասի ենթարկվել, վտան-գավոր բան ձեռնարկել: *Տընաշինըտ լըհա էն ա խըթու վա շօռ կամ* (Բ):

ԽԱԹԱԲԱԼԱ (արաբ. *xata+bela* (փոր-ծանք) - տէն ԽԱԹԱ: ...*Յամ ուրանք սաղ-սալամաթ էտ խաթաբալան ըզըտ-վեցին, համ ժողովուրթը* (ՋՏ, Բ, 229):

ԽԱԹԱԼՈՒ (թրք. *hatali* (սխալ, թերի, ծախորդ) - ած. Փորձանք՝ պատուհաս բերող, վտանգավոր: *Շենումը լօխ գոն-դում ին, վեր Վաղոն խաթալու մարթ ա* (Ձ):

ԽԱԹԱՅԻՆ - ած. 1. Իշխանական ծագում ունեցող, իշխանական: *Ըտը-րանք խաթային դաստան յըն ինում* (Ձ): 2. փիթ. Ըստիր, թանկարժեք: *Խաթային շօրէր ա կընում* (Բ):

ԽԱԹԱՆԳ - տէն ԸՈՐԵԿԱԿԱԼԻ:

ԽԱԹԱՆԳԱԶ/ԽԱԹԱՆԳԱԶ (պրս. *xatengaz*) - գ. Կարճ կոթով եւ դեպի վեր ձգված եզրերով գոգավորված թիակ՝

աղբը վերցնելու համար: ...*Շերքէն խաթանգազ ա ինում, տամ ա, տըղէն ճակատը ճըղում* (ՅԱԲ, 15, 134):

ԽԱԹԱՐ - գ. Տասը - տասներկու ձիե-րից կազմված խումբ՝ քարավան: *Ղըչ-չըղնէն յըրա յըն պըրծընում էտ խաթա-րէն, թըլանում* (Ձ):

ԽԱԹԵՐ - տէն ԽԱԹԵՐՈՒ:

ԽԱԹԵՐ - տէն ԽԱԹԵՐՈՒ:

ԽԱԹԻՐ/ԽԱԹԻՐ (արաբ. *xatir*, թրք. *hatir*) - գ. Յարգանք, պատիվ: *Յաննիս թը-ղէլանը յըտը միշտ քընիյիս ըմ ընլ քժ-մանգ ընէյիս Յաննիս խաթրուն հէտէ* (ԼՂԲԶ, 272):

- Խաթիր անել - տէն Խաթիրը պա-հել:

- Խաթիրը կօտըրել - Մեկի հարգը՝ պատիվը չպահել, խնդիրքը մերժել: *Պըհ-լին օգից վէչ Թոնիս դանյուն խաթիրը կօտըրէ* (ՅԺՅ, VI, 181):

- Խաթիրը պահել - Մեկի հարգը՝ պա-տիվը պահել, ի պատիվ մեկի՝ մի բան անել՝ կատարել՝ զիջել: *Յիրըվանէն շանը քարավ չըն տալ, տըհնը խաթիրը կըպահին* (ԱԲԲ, 57):

- Խաթիրը քըթնալ - Մեկին իր լավ վերաբերմունքով՝ խոսքով սիրաշահել, մեկի վերաբերմունքը իր օգտին փոխել տալ: *Էտ խուխօցը մուտանում ա, խա-թիրին թըթնում, ծըռքին հացը տամ ուրանց, շանը թուլան յօր օնում, պիրում տօն* (ՅԺՅ, VII, 93):

- Խաթիր ինիլ - Յարգանք՝ պատիվ վայելել: *Էտ հարթնանը տանքիւրցը քըշ-տէն մըժ խաթիր ա ինում* (Ձ):

- Խաթրան ընցընել/տուս կանլ - տէն Խաթիրը կօտըրել:

- Խաթրանը քինիլ - Մեկի տրամադ-րության՝ ցանկության համապատաս-խան գործել, նրա ցանկությունները կա-տարել: *Յարթնը վեր ըսկէսվօրը խաթ-րանը չի քինի, տօնը կըռքէվ կըղնէ* (Բ):

- Խաթրին նի կանլ - Մեկին ան-հանգստացնել՝ նեղություն տալ՝ վիրա-վորել՝ անպատվել: *Մարթը ասում ա. - Յըս քոնում ըմ, ամմա հու վեր քըմըկիս այուն խաթրին նի յըկավ, ինձանա պըր-ծընական չի* (Ձ):

ԽԱԹԻՐ - տէն ԽԱԹԻՐ:

ԽԱԹԻՐԶԸՍՕԹՈՒՆ/ԽԱԹԻՐԶԸՍՕ-ԹՈՒՆ - գ. Վստահ՝ ապահով լինելը, չտա-րակուսելը: *Խաթիրջըմօթունը ամմէն մարթու տուված չի* (Ձ):

ԽԱԹԻՐԻԶԸՍՕԹՈՒՆ - տէն ԽԱ-ԹԻՐԶԸՍՕԹՈՒՆ:

ԽԱԹՐԱՎ/ԽԱԹՐԱՎ - 1. ած. Ուրիշի խնդիրքը չմերժող, ուրիշին ընդառա-ջող: *Խաթրանլ խան հանլ իլան չի* (Ձ): 2.

մ. Կամավոր կերպով, առանց բռնի ուժ գործադրելու, ոչ զուռով: *Խաթրնավ ըրած կործեն տըհը վեշ մին պեն տալ չի* (2):

ԽԱՆԹՈՒՎ - տեն ԽԱՆԹՈՒՎ:

ԽԱՆԹՈՒՄ/ԽԱՆԹՈՒՄ/ԽԱՆԹԵՐ/ԽԱՆԹԵՐ - կ. Յանուն, ի սեր, համար: *Թաքավերը էտ հըլիվուրեն ասում ա.- Միպտակ մըգ'երէտ խաթրոն վըմ ըրալ* (2):

ԽԱՆԹՈՒՄ - տեն ԽԱՆԹՈՒՄ:

ԽԱՆԹՈՒՄ (թրք. *xatun*) - տեն ԽԱՆԹՈՒՄ:

ԽԱՆ (այրս. *xān*) - գ. 1. Մարդու դեմքի՝ մարմնի կամ կենդանու մոթոն վրա ընդհանուր գունավորումից տարբերվող ի ծնե գոյացած բիծ, բնաբիծ, պուտ: *Էտ ըխճըկանը աջի թօշէն էլ մին մըծ խալ ա իննւմ* (2): 2. Ընդհանրապես՝ բիծ, խալանման նշան: *Շարմաղը կ'արմուր խըլերալ դարյան կ'ընում ա, քիւնամ հըրսանէք* (2):

- Խալ ըղնէլ - տեն Լաք'ն ըղնէլ:

- Խալ քըցիլ - տեն Լաք'ն քըցիլ:

ԽԱՆԱ (արաբ. *xale* (մորաքույր), թրք. *xala* (հորաքույր)) - գ. 1. Թուրք՝ աղբեղանցի տիկին: *Խալան ըտըրան տաւում ա, ներքէ տանը կ'ըղում* (2): 2. ած. Ծանրաբարո, ծանրակշիռ, լրջախոհ: *Խալա մարթ ա Սախթուր դային* (Բ):

ԽԱՆԱԴԵԼՆԻԿ (ռուս. *холодильник*) - գ. 1. Մթերքները սառն վիճակում պահպանելու հարմարանք, սառնարան: *Մի-հէնգ ամմեն տան էլ խալադէլնիկ կա* (Բ): 2. Օղեթորման սարքի օդակաձեւ խողովակը, որը տեղադրվում է ջրով լի տակառի մեջ, որպեսզի օդու գոլորշին սառի եւ հոսի: *Ըրադէն գալօդէն խալադէլնիկը ծակվալ ա* (2):

ԽԱՆԱԹ (արաբ. *xālat*, այրս. *xālāt*) - գ. 1. Թանկարժեք զգեստ, որով արեւելքում իշխողները պարգեատրում էին որեւէ մեկին՝ ի նշան իրենց գոհունակության: *Շահ-Աբբասը էս մարթին լւավ վըսկալ, խըզնավ, խըլըթնըրալ դարկում ա ուրանց տօն ...* (ՅԺՅ, VII, 53): 2. Նորահարսին՝ նորափեսային տրվող նվեր: *Աղանթ ա՝ թանգզն հարթնը հոնր տօն քիւնի, խալաթ կըտան* (2): 3. Տանը կամ աշխատանքի վայրում հագնելու երկար վերնազգեստ: *Նախշունը խալաթը կ'ընում ա, ըսքըսում ըմընէքը լըվանալը* (Բ):

- Խալաթ անէլ/տալ - Նվիրել, ընծայել: *Լօղմանին ասում ա.- Վըր քու ասածըն ինի, յէս քեզ իրէք հազգար մանէթ տամ, հալան մին պեն էլ խալաթ կանէլ* (ՅԺՅ, VII, 168):

ԽԱՆԱԹ-ԲԱՐԱԹ - գ. Նվերներ, ընծաներ: *Թաքավերը մէծ խալաթ-բարաթ ա տամ, յօր օնում, կ'ամ* (ՅԱԲ, 15, 81):

ԽԱՆԱԹԱՄԻՇ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խալաթամիշ անէլ - Նվերներ տալ: *Մին քանէ տարէ վեր անց ա կենում, թաքավըրըն էտ մարթին նօրից ծեն ա տամ, վըր էլլա խալաթամիշ անէ, դարկէ* (ՆԼՂԺԲ, 63):

ԽԱՆԱՍՏՕՅ (ռուս. *холостой*) - ած. 1. Չլիցքավորված: *Խալաստօյ պատրօնավ վեր յըրա յըն տամ, թօրքերը փախչում ըն* (2): 2. փխբ. Չամուսնացած, ամուրի: *Էտ նըկարիչին տանը վէջ մին մարթ չի կար, ինքըն էլ սուրէի ար, խալաստօյ...* (ՅԺՅ, 177):

ԽԱՆԴԱՐ - տեն ԶՈՒԼԱՎԵՐ

ԽԱՆԻ՝ (այրս. *xāli*, թրք. *hali*) - տեն ԳԱՐԱՆ: *Սահմաղը փափաղը տինում ա կըլիւն, խալին յըրա նըստում* (ՅԱԲ, 15, 18):

ԽԱՆԻ՝ (արաբ., թրք. *xalā* (դատարկ տեղ)) - ած. 1. Անմարդաբնակ, ամայի: *Խալի տըհէր ա, վէշ մինը քիւնում չի, թա ապըրէ* (2): 2. Անմշակ: *Խալի վըհը վեր բիջանիս, լ'ավ պերթ յօր կօնիս* (Բ):

ԽԱՆԻՉԱ (այրս. *xaliče*) - գ. Փոքր գորգ: *Մին հատ կօրէկ խալիչին տակէն կօղըլ ա կենում* (ՅԱԲ, 15, 24):

- Խալիչան տական տոն քաշիլ - Պատվից՝ իշխանությունից՝ պաշտոնից զրկել, սնանկացնել: *Ըստի ժըղօվուրթը էտ ախմաղ թաքավերին տական խալիչան տոն ըն քաշիւմ, յիրգիրան նըրհ'տ տամ* (2):

ԽԱՆԻՍ (արաբ. *xālis*, թրք. *halis*) - ած. Մաքուր, անխառն, զուտ, իսկական: *Թանջիրը մին կիօ խալիս վըսկէլ յա տամ, էտ դուշը ինք' օնում* (2):

ԽԱՆԻՓ - տեն ԽԱՆԻՓԱ:

ԽԱՆԼՈՒ - գ. Որսի շուն: *Վըրսկանը յըրա յա անում, խալլուն դանտի յըրա յա պըրծընում, ըղվէսին պըկան փըրնում* (2):

ԽԱՆԻ (արաբ. *xalk*, թրք. *halk*) - գ. 1. Ժողովուրդ, բազմություն: *Թաքուհին յէշնում ա տըսնում մին մըծ խալի ա կ'ամ բիդի պալատը* (2): 2. Գերդաստան, տոհմ: *Դծրոնը ըշխըղօվուր խալի ըն* (Բ): 3. Ուրիշներ, օտարներ: *Խալիւն խօխէքը վեր տարալ ըն մըծանում, Թափէղը օրալ ա մըծանում* (ՆԱԲ, 38):

- Խալիւն աշկէն շերանը/փօշը տըսնում ա, ուրան աշկէն կ'ըրանը տըսնում չի - Ասում են նրա մասին, ով, իր մեծ պակասությունները անտեսելով, ուրիշների չնչին թերություններն է մատնացույց անում:

- Խալիւն յըրա շօն ա հանում, ինծ յըրա յէլ կատու վա մըլավում - Ուրիշներ-

րի վրա արժանավորներն են խոսում, ինծ վրա՝ անարժանները:

ԽԱՆ-ԽԱՆ - ած. Խալեր ունեցող, բծավոր: *Խալ-խալ մօրթէլ յա* (Բ):

ԽԱՆՅԱՐ - տեն ԿԸՏՏՕՊ (2):

ԽԱՆՎԱԹ/ԽՕԼՎԱԹ/ԽՕՎԱԼԱԹ (արաբ. *xaly(at)*, այրս. *xālvāt*, թրք. *halvet*) - ած. 1. Ազատ, դատարկ: *Խալվաթ տընէր շէնումը շատ կա* (Բ): 2. Առանձին, մեկուսացած, մարդկանցից հեռու: *Ըտըրանը հըսնում ըն մին խալվաթ տըհը, ըսքըսում ըտըհը ապրէլը* (2): 3. ած., մ. Թաքուն, ծածուկ: *...Քըշերըն ծօցըտ կըկան, Խօլվաթ չինի, մին հանգի* (ԼՂՅ, 102):

- Խալվաթ անէլ - Փակ պահել, մարդու ներս չթողնել: *Էտ ախճիգը ուրան օթաղը խալվաթ ա անում* (2):

- Խալվաթ օր - Յանգիստ օր: *Սաղ գանքումը Նուբար աքերը մին խալվաթ օր չի տըսալ* (Բ):

ԽԱՆՎԱՐ (այրս. *xālvār* (իշաբեն)) - գ. Ծանրության հին չափ, որ հավասար է երեսուն փոթ: *Արաշտ տարէն վեր մին հէքտար արտան մին խալվար ցօրէն տըհնա, էլիա լ'ավ ա* (Բ):

ԽԱՆՏՈՒՐԱ (ռուս. *халтура*) - գ. Անբարեխղճորեն որեւէ բան անելը, անբարեխղճորեն կատարած գործ: *Ըտըրա ըրածնէն սաղ խալտուրա յա* (Բ):

- Խալտուրա անէլ - Անբարեխղճորեն՝ խմբիայլոց անէլ՝ կատարել: *Յինչ կօր'ծ, լօխ խալտուրա յըն անում* (Բ):

ԽԱՆՏՈՒՐՇԻԿ (ռուս. *халтурщик*) - գ. Անբարեխղճորեն աշխատող: *Իզէն խալտուրշիկ ա, հինչ հոնծ բիդի ա'նէ* (2):

ԽԱՆՈՒՏ - տեն ԽԱՆ-ԽԱՆ:

ԽԱՆՓԱ/ԽԱՆԻՓ (գրբ. *խալիփա*) - գ. Յին կարգի՝ տերթոնիկյան դպրոցի ուսուցիչ: *Խօխէնքը ծըլըպատակ նստում ըն, լ'ըհա մինը վեր տոնրոն ա կ'ամ, խալիփը ճապկէ ճըպատալը տըրըքընում ա* (2): 2. Յին կարգի դպրոցներում փոքրերին դասավանդող ավագ աշակերտ: *Էլ դասատու, էլ խալիփա, լօխ ըվիրան ըն, չափը ընցալ, ըշկըրնէն ունքըրնան պիցըրացալ ա* (2):

ԽԱՆԱՆ/ԽԱՆԱՆԱ (գրբ. *խախալ*) - գ. Խոշոր անցքերով մաղ՝ ցորենը, գարին եւ այլ ընդեղենները մաղելու համար: *Այան խանանը յօր ա ունէս, նըստէս, էտ ցօրէնը լօխ խըխըլիս* (2):

- Խանանը ծակ - Անխելք, հիմար: *Խանանը ծակ մարթը էրկան կապըրէ* (2):

- Խանան տալ - Կուտակվել, հավաքվել: *Վըրծըրնէն ծառէն շուքումը խանան ըն տըվալ* (Բ):

- Խըխանլի ճուր կըրէլ - տեն Մաղալ

ճիւղ կըրէ: *Էրկու տարէ յա՛ խըխալան* ճիւղը ըմ կըրում (Բ):

- Խըխալին կըծխը պէն ըղնէ/քըցիլ - Ձեռնարկած գործից օգուտ գալ, ունեցածի վրա մի բան ավելանալ: *Սաղ տարէն կործ ըմ անում, ամիս ըսկի խըխալին կըծխը պէն չի ըղնում* (Բ):

ԽԱԽԱԼ - տէն ԽԱՆԽԱԼ:

ԽԱՆԽԱԼ/ԽԱԽԱԼՆ - ած. տէն Յանգիստ, խաղաղ: *Միհենգ Ղարաբաղա խախանը տըղ չի կա* (Բ):

ԽԱԽԱԼՆ - տէն ԽԱՆԽԱԼՆ:

ԽԱԽՈՒՏ/ԽԱՐԽՈՒԹ (գրբ. խախուտ) - ած. Խարխված, խարխուլ, փլվելու ենթակա: *Խախուտ տօն ար Պուղուն տօնը* (Ձ):

ԽԱԿ (գրբ. խակ) - ած. 1. Ղեռնու չիսած, ոչ հասուն: *Խօխան խակ հիւնը կէրավ, փօրը ցավից* (Բ): 2. փխբ. Ղեռնուտի, անչափահաս: *Սիմօնը հանն խակ խօխա յա իլան, վեր հանը մըճալ ա* (Ձ): 3. փխբ. Մտավորապես չգարգացած, թերուս, անհմուտ: Խակ մարթ ա Կանփին (Բ): 4. փխբ. Չմտածված, չկշռադատված: *Խակ կործը կըծխ չի կ'ան* (Ձ):

- Խակը վեր անել - տէն Յամը հանել:

- Խակը վեր կ'ան - տէն Յամը տոն կ'ալ:

- Խակ կործ/պէն փըռնել - Չմտածված գործել, սխալ գործել: *Ջըհիլնէն խակ կործ շատ ըն փըռնում* (Ձ):

ԽԱԿԻ (պրս. *hāki* (հողային), թրք. *haki* (կանաչամոխրագույն, հողագույն) - ած. Կանաչավուն-հողագույն, կանաչադեղնավուն: *Խակի շօր ա կըճալ* (Բ):

ԽԱՐ/ՅԱՐ (գրբ. խար) - գ. 1. Ուրախանալու՝ գլարճանալու զբաղմունք: *Քծինն խարէր լօխ ըղանն ընգալ ըն* (Բ): 2. Երեխաների արարքները՝ զբաղմունքը, խաղալը: *Թըվանգին սանը վեր ըսկանում ըն, խօխէնքը խաղը թօղում ըն, փախճում տօն* (Ձ): 3. տէն ՅԸՐԹ: 4. փխբ. Խորամանկություն, մեկին վնասելու՝ վարկաբեկելու համար գործադրված արարք: *Ըտըրա խաղերը վէշ միւնը կըլխու չի ըղնում* (Ձ): 5. Անասունների ցատկոտելը՝ վազվզելը: *Ծիյօտանցը խաղը ըտըրանց կործա քըցում ա* (Ձ): 6. Մարմնի մասերի՝ ոսկորների միացման տեղերը, հոդ: *Վըճնէն խաղը ցավում ա* (Բ):

- Խաղ անել - 1. Որեւէ կարգի խաղով զբաղվել, զվարճանալ: *Խօխէնքը խաղ ըն անում* (Բ): 2. Որեւէ առարկայի հետ զբաղվել, շարժել, պտտեցնել: *Սըհակը յօր ա ունէս, խաղ ընէս* (Բ): 3. փխբ. Թռչկոտել, վազվզել, շարժվել: *Կարունքը վեր կ'ամ ա, հիյվընէն խաղ ըն անում* (Ձ): 4. փխբ. Որեւէ գործի անլուրջ

վերաբերվել: *Յինչ ը՛ս խաղ անում, խէ կօրծըտ կարքէն չը՛ս անում* (Բ): 5. Բեմական որեւէ դեր կատարել: *Արտիստը լ'ավ ա խաղ անում* (Ձ): 6. փխբ. Որեւէ մեկին խաբել՝ մոռլորեցնել, ձեռ առնել: *Յարթընը ըսկէսվօրը անավ խաղ ա անում* (Բ): 7. Որեւէ խաղի տիրապետել: *Իգէն հինչ տըղամարթ ա՛, կարում չի, թա նարդի էլ խաղ անէ* (Բ): 8. փխբ. Տարուբերվել, տատանվել: *Ըստօլը վըննէրէն տակէն խաղ ա անում* (Բ):

- Խաղ ասել - տէն ՅըՐք ասել: *Պուղին, մին սիպտակ ծի նըստած, խաղ ըսէլավ տօն ա կ'ամ* (ՆԱԲ, 134):

- Խաղը բայաթի տըճնալ - Ուրախությունը տխրության վերածվել, դժբախտանալ: *...Սըճ հորոն անա հանօղ, Խաղըտ տըճնա բայաթի* (ԼՂԲ, 111):

- Խաղ կապել - Երգ հորինել: *Էս աշըղը սազը յեր կալավ, ըտէղ մին խաղ կապից...* (ՅԺՅ, V, 660):

- Խաղը պըռավել - Որեւէ գործ՝ երեսույթ ձանձրալի դառնալ, կարեւորությունը՝ պատասխանատվությունն այլեւս չգիտակցվել: *Խաղը պըռավալ ա, հծնծ ընտղնէն էլ առաջվա նըման չըն հծնծ անում* (Ձ):

- Խաղըտ ասէ - տէն ՅըՐքըտ ասէ:

- Խաղ խաղ անել - Վտանգի ելթարկել, փորձանք բերել: *Էտ տըղան տոնրման տոն ա կ'ամ, էլիա խաղ խաղ անում, հօրը քըցում կըրակու մաջ* (Ձ):

- Խաղու պըրանել - Գործը կատակի՝ ծաղրի վերածել: *Էտ օյիւբագնէն հարփիւմ ըն, կօրծը խաղու պըրանում* (Ձ):

ԽԱՐԱԼ/ՅԱՐԱԼ (գրբ. խաղամ) - չբ. տէն Խաղ անել:

ԽԱՐԱԼԻԹ/ԽԱՐԱԼԻԹ/ՅԱՐԱԼԻԹ/ՅԱՐԱԼԻԹ (գրբ. խաղալիկ, խաղալիք) - գ. 1. Երեխաների համար խաղալու իր՝ առարկա: *Թաքավէրէն տըղան կ'ամ ա, վեր ուրանց խօխէն հէտէ խաղալիք շիւնիլ տա* (ՅԺՅ, V, 595): 2. փխբ. Որեւէ մեկի կամակատար՝ քմահաճույքի առարկա: *Աբրամը հինչ տըղամարթ ա՛, կընգանը ծըճըքէն մին խաղալիք ա* (Ձ): 3. փխբ. Շատ փոքր կամ մեկի գործածությանը անհամապատասխան առարկա: *Ապան կացէնը յօր ա օնում, թա. - Էս հինչ կացէն ա՛, էս խաղալիք ա ինձէ՛տէ* (Ձ):

ԽԱՐԱՐ/ՅԱՐԱՐ (գրբ. խաղաղ) - 1. ած. Անդռիվ, անպատերազմ, երբ կամ որտեղ պատերազմ չկա: *Ասում ըն՝ խաղաղ վախտըքըն էլ էտ պէրթըտ տոնրմա յա իլան...* (ԱԱ, 44): 2. մ. Խաղաղ կերպով, խաղաղորեն: *Միհենգ թօրը չի կա Ղարաբաղ, մըզը՛տէ խաղաղ ապրում ընը* (Բ):

ԽԱՐԱՐՈՒԹՈՒՆ - տէն ԽԱՐԱՐՈՒԹՈՒՆ:

ԽԱՐ-ԽԱՐ/ՅԱՐ-ՅԱՐ - մ. Մաս առ մաս, անդամ առ անդամ, ըստ ոսկորներն միացնող հոդերի (մարմնի մասին): *Վըճաթը մօրթում ըն, խաղ-խաղ կըտօրում, իփիւմ* (Ձ):

ԽԱՐԱ/ՅԱՐԱ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խաղս ըղնէ/ինի/կ'ան/տալ - 1. Ուրախությունից թռչնալ՝ ցատկոտել: *Խօխէնքը վեր ըլբաստըրակը տըճնում ըն, խաղս ըն ըղնում* (Ձ): 2. Այս ու այն կողմ վազվզել, վիստալ (առատությունից): *Մուկները ըրտէրումը խաղս ըն ընգալ* (Բ): 3. Հորդել, եռալ (արյան՝ ուժի՝ եռանդի մասին): *Կարունքը վեր կ'ամ ա, ջանհիլ տըղօրցըն ա ըխճըկօրցը անողնը խաղս ա կ'ամ* (Ձ):

ԽԱՐՈՒ(Ր)/ԽԱՐՈՐ/ՅԱՐՈՒՐ/ՅԱՐՈՐ/ՅԱՎՈՐ (գրբ. խաղող) - գ. 1. Խաղողագգինների ընտանիքին պատկանող թփաբույս, որթատունկ: *Խաղուն տաք տըճէրըն ա տըճնում* (Ձ): 2. Այդ բույսի պտուղը, խաղող: *Թոնին քընում ա, տէսնում՝ մին մարթ էրկու ճըվարան խաղու վա ծախում* (ՆԱԲ, 103):

- Խաղուն ծըծաղել - Խաղողը հասունանալ, հասունանալուց փայլել: *Խաղուն ծըծաղում ա, քըղէլի վախտըն ա* (Բ):

ԽԱՐ ՈՒ ՊԱՐ - գ. 1. Երգ ու պար, երգելն ու պարելը: *Ջիհիլնէն ամմէն օր հըվաքվում ին, խաղ ու պարավ ուրանց օրը անց կըցընում* (Ձ): 2. փխբ. Շատ հեշտ՝ ոյուրին բան՝ գործ: *Յծնծ անէլը խաղ ու պար չի, ամմէն մարթ կարէլ չի անէ* (Բ):

ԽԱՐԹ - ԽԱՅՏԱՌԱԿ/ԽԱԳ-ԽԱՅՏԱՌԱԿ - տէն ԲԱՅԱԲՈՒՐ-ԲԱՅԱԲԱԹ:

ԽԱՐՈՐ - տէն ԽԱՐՈՒ(Ր):

ԽԱՍ (պրս. *xam*, թրք. *ham*) - ած. 1. Չմշակված, չվարած, խոպան (հողի մասին): *Լիւծը տընում ըն մին ղանջանգ ըչէռու վըզի, ճապկէ ճըպատավ էլ մաշկէն թըխում, վեր խամը վարէ* (ՆԱԲ, 71): 2. Անվարժ, անփորձ: *Խամ հծնծ անօղը ճէլի կընըղանա* (Ձ): 3. Չվարժեցրած, դեռ չլծած՝ չհեծած: *Տըղան լօք ա տամ յեր ինում էտ խամ ծին, հըղէ ինում* (Ձ): 4. Անծանոթ, օտար: *Շիւնըքէ էտ խամ մարթին լ'ավ հիւրումնալ ըն անում* (Բ): 5. Չտաշված, չիղկված: *Պատը խամ քարավ ա տիրած* (Բ): 6. Չմտածված, չկշռադատված, անփորձությամբ կատարված: *Խամ կօրծը տիծէր ուրոնը կըղնէ* (Բ):

- Խամավ ըղնել - Մարմնի որեւէ անդամ՝ մաս բռնվել՝ ընդարմանալ (շատ

աշխատելուց կամ երկար ընդմիջումից հետո ֆիզիկական աշխատանք կատարելուց): *Էնքան քար տանջից, ծըրքը խամ ընգավ* (Բ):

- Խամավ քըցիլ - Անվարժ անասունների շատ բանեցնելով՝ խիստ հոգնեցնել: *Յէնդօն էտ խամ էշին Էնքան տարավ ծըմակը, լափ խամավ քըցնավ* (Բ):

- Խամա տոնս կ'ան - Երկար ժամանակ չաշխատելուց հետո մի բանի դարձյալ վարժվել: *Էրկու ամես ա՝ հըպարապ, միհէնգ ա հնլան խամա տոնս կ'ամ Սամսունը* (Ձ):

- Խամա տոնս պիրիլ - 1. Ձմեռվա հանգստից հետո անասուններին վարժեցնել դաշտային աշխատանքներին: *Կարունքը բիդի յըզնէն խամա տոնս օնիս, վէր խամավ չի ըղնին* (Ձ): 2. Ապօրինի կենակցությամբ աղջկան կուսությունից զրկել: *Ըտի էլ վէշ միներ գիդանց վէշ, թա հու վա էտ ըխճըկանը խանփանլ, խամա տոնս պերավ* (Ձ): 3. Ընդհանրապես՝ սովորեցնել, մի բանի վարժեցնել: *Դոլգանը մին ամսումը շնգէրդին խամա տոնս պերավ* (Բ):

- Խամ ինիլ - Մեկին՝ մի բանի ծանոթ չլինել, նրա լավ ու վատ կողմերը չիմանալ (սովորաբար գործածվում է հարցական կամ ժխտական ձեւերով): *Խամ ըս ընդըրանա, գոնդում չըս, վէր իգէն կործ անօղ չի* (Ձ):

- Խամ կործ/պէն փըռնել - Չմտածված բան անել, առանց փորձառության մի բան ձեռնարկել: *Վալօղը խամ կործ փըռավ, կըծիքը խաթա պերավ* (Բ):

- Խամ յըգնանը սամուն տալ - Անփորձ մարդուն դժվար գործ հանձնարարել: *Ասում ա.- էտ ջըհիլին նըհախ չըջարէլ մէր, խամ յըգնանը սամուն չըն տալ* (Ձ):

ԽԱՄԲԱՐ - գ. 1. Հացագգիների ընտանիքի պատկանող միամյա կողրավոր բույս, եգիպտացորեն: *Խամբարը վէր ճիւրէցէլ վէշ, պէրք չի տալ* (Բ): 2. Այդ բույսի հատիկը: *Կըճէխաշը յօբան, սիսըճան, ցորէնան, խըմբարան ըն իսիում* (Բ):

- Խըմբարու մըրօք - տէն ԽՈՄԲԱՐՈՄԻ:

ԽԱՄ-ԽԱՄ - 1. ած. Բոլորովին անվարժ՝ չվարժեցրած: *Խամ - խամ յըգնէրը լըծում ըն, կարում չըն, թա վարին* (Ձ): 2. մ. Առանց տեղեկություն ունենալու: *Խամ - խամ խօսում ա* (Բ):

ԽԱՄԽԱՐԱ - գ. Չմշակված՝ խոպան ու քարքարոտ տեղ: *Յըգնէրը լըծում ա, էտ խամխարան վարում* (Ձ):

ԽԱՄ-ԽՈՐՈՒԾ - 1. տէն ԽԱՄԽԱՐԱ: 2. տէն ԿՈՐՏԵՊՈՐՏԱՆՔ (2):

ԽԱՄՈՒԹ/ԽԱՄՈՒՏ (թրք. *qamut, xamut* (կառքին լծվող ձիու վզին հագցվող կիսաշրջանաձեւ փայտ, ձիու լուծ) - գ. Ձիերը կառքին լծելու կաշի: *Խամութու նըման պալին տըփըկօցին տիրած կըլ-խին՝ տօն ա քինըմ* (ՁՏ, Ա, 4):

ԽԱՅԱ (պրս. *xaye* (ամորձիք) - գ. 1. Էշի՝ ջորու՝ ձիու առնանդամ: *Էշը խայան տոնս ա կալան* (Բ): 2. փխբ. Մեծ առնանդամ:

ԽԱՅԱՆ - Կամով ծեծած օրանը, որ պատրաստ է հավաքելու եւ մաղելու համար: *Կալը հանլ խայան ա, մեր ումէրը այան ա...* (Ձ):

- Խայան անէլ - Հավաքած հասկերը՝ օրանը ծեծել եւ պատրաստել մաղելու համար: *Յօրնէն խօրթները մըկնում ըն, խայան անում* (Ձ):

- Խայան ինիլ/կապէլ/տըհնալ - Հավաքված հասկերը՝ օրանը ծեծվել եւ պատրաստվել մաղելու համար: *Յօրէնը, խայան իլան, միներ կար վէշ, թա խըխալի* (Ձ):

ԽԱՅԻՆ (արաբ., թրք. *hayin*) - ած. Նախանձ, չար, նեղամիտ, խարդախ: *Շուշընդըճէք էլ համ խային, շընըմոտտառ ըն իլան, համ էլ վըդում քանիք* (ԱԱ, 34):

ԽԱՅԻՆԱՆԱԼ/ԽՈՅՈՆԱՆԱԼ - չք. Խային դառնալ, խայինի հատկություն ձեռք բերել: *Էրավ կընէք ա իլան Սիրէվը, մըհէնգ ա ըտի խայինացալ* (Բ):

ԽԱՅԻՆԼԻՄԻՇ/ԽՈՅՈՆԼԻՄԻՇ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Խայինլանմիշ անէլ - Մեկին կասկածել տալ, միտքը փոխել: *Թաքավէրին տըղան էտ ըխճըկանը շատ ար սիրում, ամիա պառավը կարից ըտըրան խայինլանմիշ անէլ* (Ձ):

- Խայինլանմիշ ինիլ/տըհնալ - Կասկածել, միտքը փոխել: *Աստուծ ըտըրա հըսնէլին ա յէշում, մին էլ սըփաթէն, խայինլանմիշ ինիւմ...* (ԱԱ, 66):

ԽԱՅԻՆՎԱԶԻ/ԽՈՅՈՆՎԱԶԻ - տէն ԽԱՅԻՆՎԱՐԻ:

ԽԱՅԻՆՎԱՐԻ/ԽՈՅՈՆՎԱՐԻ - մ. Նախանձորեն, չարաբար, նեղգորեն, խարդախորեն: *Էտ վէգիրը հիւնջու անում ար, խայինվարի յար անում* (Ձ):

ԽԱՅԻՆՕՐԹԻՆ/ԽՈՅՈՆՕՐԹԻՆ - 1. Խային լինելը, խայինի հատկությունը, նախանձություն, նեղամտություն: *Խայինթօրունը Բանդինց ցըդէն Ըստուծանա տըված ա* (Բ):

ԽԱՅՏԱՌԱԿ/ԽՈՅՏԱՌԱԿ (գրք. *խայտառակ*) - տէն ԲՈՅԱԲՈՒՆ:

ԽԱՅՏԱՌԱԿԷԼ/ԽՈՅՏՈՐԱԿԷԼ (գրք.

*խայտառակեմ*) - նք. տէն Բըլաբուտ անէլ:

ԽԱՅՏԱՌԱԿՉԻ/ԽՈՅՏՈՐԱԿՉԻ (գրք. *խայտառակիչ*) - տէն ԲՈՅԱԲՈՒՆ:

ԽԱՅՏԱՌԱԿՉՕՐԹԻՆ/ԽՈՅՏՈՐԱԿՉՕՐԹԻՆ (գրք. *խայտառակութիւն*) - տէն ԲՈՅԱԲՈՒՆ:

ԽԱՅՏԱՌԱԿԷԼ/ԽՈՅՏՈՐԱԿԷԼ - կք. եւ չք. ԽԱՅՏԱՌԱԿԷԼ - ի:

ԽԱՆ՝ (պրս. *xān*, թրք. *han*) - գ. Միջնադարյան Արեւելքում իշխանների, ինքնակալի տիտղոս եւ այդ տիտղոսը կրող անձը: *Խանէն ցօրքը կամ ա հըստում տահանց, ըսպանում, տըդ էլ թաղում ըն* (ՆԼՂԺԲ, 147):

- Խանէն առաշկը խօզ՝ տանէլ - Մեծ համարձակություն՝ հանդգնություն ունենալ՝ գործել: *Մարթը ասում ա. - Տու վըս խըճ, քըգ վէր թօղին, խանէն առաշկը խօզ կըտանիս* (Ձ):

ԽԱՆ՝/ԽԱՆԱՎ՝ (պրս. *xān*) - տէն ԲԱՐՎԱՆԱՐԱ:

ԽԱՆԱՎ՝ - տէն ԽՕՆ:

ԽԱՆԱՎ՝ - տէն ԽԱՆ՝:

ԽԱՆԱՆՐԱ (պրս. *xanende* (լավ երգիչ, երաժշտագետ) - 1. Ինքնուս՝ ժողովրդական երգիչ: *Մուշեհավէն ըսըճէն՝ խէ սըվ ըս կըճալ, ասից՝ միսակ էտ չի, դանդան խանանդա յէլ ըմ տըհալ* (Ձ):

ԽԱՆԳՈՐԷԼ - չք. 1. տէն ՄՈՐԿ(ԸՎ)ԷԼ(1): 2. Գունաթափվել, խուսանալ: *Շօրը իրըվէն տակէն թառ տըված վէր շատ պահիս, կըխանգըռէ* (Բ):

ԽԱՆԳՈՐԷԼ - գ. Խմորի բարակ շերտը կտրտելով եւ եփելով պատրաստած կերակրատեսակ, որ ուտում են յուղ, մածուն եւ սխտոր խառնելով: *Խանգանլը քըսիբու խօրանգ ա* (Բ):

ԽԱՆՐԱՎ - տէն ԽԱՆՐԱՎ:

ԽԱՆՐԱՎ/ԽԱՆՐԱՎ (գրք. *խանդակ*) - գ. Բնական կամ արհեստական երկար ու խոր փուս: *Յօր ա օնում էտ վըսկէն էլ պիրում, մէռալը թաղում մին խընդանկում, ինքը կամ...* (ՀԺՀ, V, 305):

ԽԱՆՋԱՐԱ (պրս. *xan + zade* (ծնունդ) - գ. Խանի որդի: *Խաբարը կամ ա, վէր խանգաղէն փըռնալ ըն, տարալ կօխալ տոնումն* (Ձ):

ԽԱՆԸՄ - տէն ԽԱՆՈՒՄ:

ԽԱՆԸՄՎԱԶԻ - տէն ԽԱՆԸՄՎԱԶԻ՝:

ԽԱՆԸՄՎԱՐԻ - տէն ԽԱՆԸՄՎԱՐԻ՝:

ԽԱՆԸՄՕՐԹԻՆ - տէն ԽԱՆԸՄՕՐԹԻՆ՝:

ԽԱՆԸՂ - գ. Խաների հավաքատեղի: *Մըծ կօղէրը յա՝ խանլըղներումը կիսին, յա՝ մէլքարաններումը* (Ձ):

ԽԱՆՁ - տէն ԽԱՆՁ:

ԽԱՆՁ/ԽԱՆՁ (գրք. խանձ) - Գործածվում է կապակցության մեջ:

- Խանձ տալ - տես ԽԱՆՁԻԼ (1,2,3):

ԽԱՆՁԻԼ - տես ԽԱՆՁԻԼ:

ԽԱՆՁԻԼ/ԽԱՆՁԻԼ (գրք. խանձեմ) -

1. Նբ. Մաշկի վրայի մազը՝ բուրդը՝ փետուրը, ինչպես նաեւ շորի խավը, չորացած խոտը եւս այրել: *Կըրական մօտեւ նըստում ա, մազէրը խանձում (Բ):* 2. Մորթած անասունի ոտքերը եւ գլուխը կրակի վրա երկար պահելով՝ արտաքին մակերեսային այրել եւ քերելով մաքրել՝ խաշ պատրաստելու համար: *Տըվարէն վըճնէրը խանձում ըն, խաշ քըցում (Բ):* 3. Խիստ չորացնել (արեւի մասին) *Արըճը բուստընեն խանձում ա:* 4. Գ. Խանձած շորի կտոր, որ դնում են կտրվածքի վրա՝ արյունահոսությունը դադարեցնելու համար: *Դանստի մին խանձիլ ըն շինում, տինում կըտըրած տըճէն յըրա (Զ):*

- Խանձած յաբա - Նիհար եւ սեւահեմ մարդ: *Ախճիգը թա.- Էս խանձած յաբան հինչ ա՛, վեր նըհըտը փըսակ-վիմ (Զ):*

ԽԱՆՁՎԻԼ - տես ԽԱՆՁՎԻԼ:

ԽԱՆՁՎԻԼ/ԽԱՆՁՎԻԼ - կբ. եւ չբ. ԽԱՆՁԻԼ-ի:

ԽԱՆՁՈՒԴ(ՆԸ)/ԽԱՆՁՈՐ(ՆԸ) (գրք. խանձող) - Գ. Կիսով չափ այրված փայտի կտոր: *Էս մարթը բուրդան մին իրիլիս խանձող ա յօր օնում, բիդի ուրան ցանը տանում (ՅԺԳ, VII, 208):*

- Խանձող շինիլ - Այրել, վառել: *Ըտըրա տօնը մին ժամումը խանձող ըն շինում, ուրան էլ փըռնում, տանում (Զ):*

- Խանձող տըճնալ - Այրվել, վառվել - Թօրթըրը սաղ շէնը նի յըն կըցընում, ժըղովուրթէն իլան-ջիլան լօխ խանձող ա տըճնում (Զ):

- Խընձողներէն դաթումը թողնել - Դժվար կացության մեջ թողնել: *Մին քանէ վախտ անց կընալանը յետը տըղան կընգանը յօր ա օնում, տին կամ, տահանց թողում խընձողներէն դաթումը (ՆԼԴԺԲ, 132):*

- Խընձողներէն դաթումը մընալ - Դժվար կացության մեջ ընկնել: *Մարթը մըռնէլանը յըտը Շարմաղ բիբին խընձողներէն դաթումը մընաց (Զ):*

- Խընձողու ճուր անօղ - տես ԽԱՅԻՆ:

ԽԱՆՁՈՐ(ՆԸ) - տես ԽԱՆՁՈՒԴ(ՆԸ):

ԽԱՆՁԱԼ (արաբ. *xanjar*; պրս. *xānčār*, թրք. *hançer*) - Գ. Դաշուկ՝ երկսայրի սրածայր փոքր թուր: *Էտ մունուտին էլ խանչալը հանըմ ա, թըխում, Ավին կըլօխը կէս անում (ՅԺԳ, V, 140):*

- Խանչալ քաշիլ - տես Խընչալալ խօսել:

- Խընչալալ խօսել - Խանչալով սպառնալ: *Խանը կընգանը նըհըտ խընչալալ ար խօսում (Զ):*

- Խընչալէն քարը վեր ըղնել - Արժանապատվությունը վիրավորվել, անպատվությունը կրել (սովորաբար գործածվում է հարցական կամ ժխտական ձեւերով): *Յարը ասմա - Յինչ ա՛, վեր տըրը՛խ կը՛նաս, խընչալէտ քարը վեր ա՛ ըղնական (Զ):*

ԽԱՆՁԻԼ - Նբ. 1. Ուտելիքի՝ հացի երեսն այրել՝ մեջը հում թողնելով: *Իգէն կարում չի հաց թըխէ, էգզանան խանչում ա (Բ):* 2. Խիստ կերպով այրել՝ խանձել: *Էտ ծըրքըտ ըշտը՛ղ ը՛ս խանչալ (Բ):* 3. փխբ. Տանջել, կսկծացնել, չարչարել: *Էտ ախճիգը մօրը խանչում ա (Բ):*

ԽԱՆՁ-ԽԱՆՁ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խանչ - խանչ(ը) կ'ան - տես ԽԱՆՁ-ԽԱՆՁԷԼ:

ԽԱՆՈՒԲ/ԽԱՆՈՒԲ (թրք. *xanab*) - Գ. 1. Տիկին, տիրուհի: *Ծառան սնախն յըրա կամ ա, տըճնում խանումը մըճած (Զ):* 2. ծղր. Մակդիր, որ դնում են կանանց վրա: *Պուղին կընգանը ասմա.- Խանում, Մէլիքին կընգը՛ն ըսկի քու մըշտը՛ղըտ էլ չարժի (Զ):*

ԽԱՆՈՒԲ-ԽԱԹՈՒՆ - 1. տես ԽԱՆՈՒԲ: 2. ած. Ծանրաբարո (կանանց մասին): *Խանում-խաթուն կընէ՛ք ա Մարյանը (Բ):* 3. մ. Խանումի՝ տիրուհու նման, խանումավարի: *Չուքանէն կընէ՛քըն էլ կ'ամ ա հըրսանէ՛ք, խանում - խաթուն նըստում (Զ):*

ԽԱՆՈՒԲՎԱՐԻ - տես ԽԱՆՈՒԲՎԱՐԻ:

ԽԱՆՈՒԲՎԱՐԻ - տես ԽԱՆՈՒԲՎԱՐԻ:

ԽԱՆՈՒԲՈՐԹՈՒՆ - տես ԽԱՆՈՒԲՈՐԹՈՒՆ:

ԽԱՇ - Գ. 1. Խաշված՝ եփված լինելը, խաշվելու աստիճանը՝ չափը: *Մըսան մին թիքն կըտըրում ա, օտում, թա. - Խաշը պակաս ա (Զ):* 2. Խոշոր եւ մանր եղջյուրավոր անասունների ոտքերից, գլխից, մասամբ եւ թափանից երկար եփելով պատրաստած ջրալի ճաշ, որ ուտում են սիսոր, քացախ խառնելով, խաշ: *Խաշը տըղըմարթու պէն ա, կընէ՛քըն հի՛նչ ա, խաշ օ՛տելը հինչ (Բ):*

- Խաշը իփիլ (մինիս) - Մեկին շատ ծեծել, խիստ պատժել: *Մարթը Էտ վեր ըսկանում ա, քինում ա տօն, կընգանը խաշը իփում (Զ):*

- Խաշ ըղնել/կ'ան - տես ԽԱՇՎԻԼ:

- Խաշին ճիրին ճուրը - 1. Անհամ

անորակ ջրալի կերակուր: *Էս խաշին ճիրին ճուրը հինչ ա՛, վեր իփան ըս (Բ):* 2. Յեռու ազգական: *- Էս տըղան քու հինչըտ ա՛: - Խաշիս ճիրին ճուրըն ա (Բ):*

- Խաշ տալ - 1. տես ԽԱՇԻԼ: 2. Մրգերը՝ բանջարեղենը չորացնելուց՝ թթու դնելուց՝ տապակելուց առաջ եռացրած ջրի մեջ քիչ պահել եւ հանել: *Գնվանը խաշ ըն տամ, յը՛տնան մը՛կ-նում, վեր հիշտ չորանա (Բ):*

- Խաշ տինիլ/քըցիլ - Խաշ կերակրատեսակը եփել: *Մին օր էլ խաշ ա տինում, հըրըվանէն ծէն տամ դօնաղ (Զ):*

ԽԱՇ<sup>2</sup> - տես ԹԱՇԱՏԱՏԱՏ:

- Խաշ անել - Թթխմորը խառնել խմորին եւ հունցել: *Խմորը խաշ ա անում, ինքը քինամ բօստանը (Զ):*

- Խաշը կ'ան - Թթխմորը թթվել եւ պատրաստ լինել օգտագործելու: *Թըխ-տըմուրամանը վեր տաք տը՛ղ տինիս, խաշը ճէլի կըկա (Բ):*

- Խաշը պակաս - Անիրաժեշտ չափով չթթված (թթխմորի մասին): *Խաշը պակաս թըխտըմօրալ հունցած խըմօրան լալ հաց չի թըխվել (Զ):*

ԽԱՇԱՐ (գրք. խաշար (խոշոր, կոշտ, հաստ, կոշտ կերպով) - ած. Ոչ խիտ՝ լայն անցքերով հյուսված: *Խաշար չըվալալ անլեր չըն պիրիլ (ԱԲԲ, 37):*

- Խաշար չըվալալ անլեր կըրել - տես Մաղալ ճուր կըրել:

- Խաշար տըճնալ - Ծակծկվել: *Գոնլընն էնքան կըճալ ա, խաշար ա տըճալ (Բ):*

ԽԱՇԷԼ - տես ԽԱՇԻԼ:

ԽԱՇԷՄՆԸ/ԽԱՇԷՎՆԸ/ԽԻՇԷՄՆԸ - տես ԽԱՇԱԼ: *...Մին փօս կար քօհնան, տըճնամ՝ թանգան քանդած խաշէմը կ'ոնտան... (ԼԴԲԲ, 272):*

ԽԱՇԷՎՆԸ - տես ԽԱՇԷՄՆԸ:

ԽԱՇԻԼ<sup>1</sup>/ԽԱՇԷԼ (գրք. խաշեմ) - Նբ.

1. Որեւէ ուտելի բան ջրի մեջ եռացնելով եփել: *Մէսը խաշում ըն, աղալ անում, օտում (Զ):* 2. տես Խաշ տալ (Զ): 3. Եռացրած ջրով այրել: *Իփան ճուրը վեր ածից, վըճնէրը խաշից (Բ):* 4. փխբ. Այրել, խանձել: *Արըճը բաղէրը խաշան ա (Բ):* 5. փխբ. Տանջել, մեծ վիշտ պատճառել: *Տըղան ուրան փըռնած կուրծէրալը հօրը խաշում ա (Բ):*

ԽԱՇԻԼ<sup>2</sup> - Գ. Փոխիկնից եռացրած ջրով խաշվելով պատրաստած կերակրատեսակ, որ ուտում են՝ յուղ կամ սոխառած եւ թան ավելացնելով: *Ղարաբաղէն վեր խաշիլ չօտէ, էլ հինչ դարաբաղէ (Զ):*

- Խաշիլը իփիլ (մինիս) - տես Խաշը իփիլ (մինիս):

ԽԱԸԻՐ - ՂԵՅԱՍԱԹ - տեն ՅՆԻՐ - ՂԵՅԱՍԱԹ:

ԽԱԸԼԱՍԱ (թրք. *haşlama*) - գ. Կերակրատեսակ, որ պատրաստում են ոչ-խարի, տավարի են միսը ջրի մեջ երկար եփելով՝ հաճախ հետը խառնելով կտրատած սոխ, լոլիկ, գազար, տաք-դեղ: *Խաշլաման կառնանը մըսավըն ա իննում լնգանթ* (Բ):

ԽԱԸԼԸՂ (թրք. *harçlık*) - գ. Ամենօրյա ծախսելու դրամ, գրպանի փող: *Ապան ամմեն դեննում թոռնանը խաշլըդ ար տամ* (Ձ):

ԽԱԸԽԱԸ (գրբ. *խաշխաշ*) - գ. Կակազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս, որ տալիս է գլանաձե պտուղներ՝ մանր սերմերով, որոնք ուտելի են եւ քնեցնող հատկություն ունեն: *Խըշխաշավ թըխած հացը շատ քախծըր ա իննում* (Բ)

- Խաշխաշ տըճնալ - 1. Մասերի վերածվել, պատառոտվել: *Հիլին վեր ա ըղնում, խաշխաշ տըճնում* (Բ): 2. Մարմինը պատառոտվել, մեռնել: *Գիրիշ դայուն տըղան մին օր յեր ա իլնլ էտ պըռըշ-նին, վեր ընգալ, խաշխաշ տըճնալ* (Ձ):

ԽԱԸՎԷԼ - տեն ԽԱԸՎԻԼ:

ԽԱԸՎԻԼ/ԽԱԸՎԷԼ - կբ. եւ չբ. ԽԱԸԻԼ<sup>1</sup>-ի:

ԽԱԸՈՒ (գրբ. *խաշու, խաշոյ* (արգանակ, մսաջուր) - գ. Խաշած՝ եփած մսի՝ բանջարեղենի ջուր, արգանակ: *Տնգը կամ ա տոն, մըսէն խաշուն կըլ-խէն քաշնում* (Ձ):

ԽԱԸՓԻԸ - Գործածվում է կապակցության մեջ:

- Խաշփիշ անել - Հապճեպ եփել՝ թխել՝ խորովել: *Շերքը յեղ ու քախցըր ա ըղնում, դնստի խաշփիշ ա անում, օտում* (ՆԱԲ, II, 320):

ԽԱԸՓՈՒԸ/ԽԱԸՓՈՒԶ/ԽԱՍՓՈՒԸ (թրք. *xəspus*) - ած. գ. Անբարոյական, անզգամ (մարդ): *Ըտըրան էլ էրկու խաշփուշ նծքնըր ա իննում* (Ձ):

ԽԱԶ (գրբ. *խաշ*) - գ. Իրար հատող եւ ուղղանկյուն կազմող ձողերի ձեւով առարկա, որ ծառայում է իբրեւ քրիստոնեական պաշտամունքի խորհրդանիշ, խաչ: *Էտ վախտը տըղան մըտըն ա քը-ցում մօրը տըված խաշը* (ՀԺՀ, V, 176): 2. Խաչաձե շքանշան, որով պարգեատրում են հատկապես պատերազմում քաջություն՝ խիզախություն ցուցաբերածներին: *Էս կըռվանը յըտըր շատ ջի-հիլնէ յըն խաչ ըստացալ* (Բ): 3. տեն ԽԱԶՔԱՐ: 4. Խաղաթուղթ, որի վրա նկարված է խաչաձե նշան: *Խաչի տու-գը ինձ ա ընգալ* (Բ): 5. փխբ. Քրիստո-

նեական կրոն: *Հայը վէշ մին վախտ խաշը մըննան քըցիլ ջի* (Ձ): 6. փխբ. Ծանր տառապանք՝ փորձություն, որ վիճակվում է մեկին: *Էտ խաչին ամմեն մարթ կարէլ ջի տէմ կէնա* (Ձ):

- Խաչ անել - տեն Իրըսէն խըջըհա-նել:

- Խաչավ-խըջըմանավ յըր օնել - Մեկին շատ հարգել՝ պատվել՝ մեծարել: *Էտ հըլիվուրէն հառնըրը խաչավ-խըջըմա-նավ ըն յօր օնում, ուրանց պիրըննէրէն պատառըն էլ նըրան տէմ օնում* (ՀԺՀ, VII, 290):

- Խաչավ-մըտաղավ ինք՝ կննած - Մեծ դժվարությամբ ձեռք բերած: *Խա-չավ-մըտաղավ ինք՝ կննած ըպըրանքէն յըրա հնանա կըկէնան* (Բ):

- Խաչավ օրթնած - Սուրբ: *Խաչավ օրթնած ծառ ա պըռըշնին* (Ձ):

- Խաչը առանց դեր ճուրը ըղնել - Անօրեն՝ անբարոյական բան կատար-վել: *Մարթը մըռնէլիս ասում ա.- Ա կը-նէգ, դուգըն անէ. փըսըկվէլանը յըտըր քանէ հըտէ յա՛ խաշը առանց դեր ճուրը ընգալ* (Ձ):

- Խաչը իմըն ա, գորուպոնը յըս ըմ գնդոնում - Ես լավ գիտեմ իմ ունեցածի կամ հարազատի՝ ծանոթի ինչ լինելը՝ կարողությունները: *Հնրըր ասմա.- Խաչը իմըն ա, գորուպոնը յըս ըմ գնդոնում. իմ տըղաս կարող ջի ըտի պէն ըրած ինի* (Ձ):

- Խաչը կըլխան խըռավել - Հավատ-քը չօգնել, փորձանքի՝ ձախորդության հանդիպել: *Խաչը մեր կըլխան էլ ա խը-ռավալ* (Բ):

- Խաչը կօթավը կօլ տալ - Մեծ-մեծ երդումներ տալ: *Նախագան ժողօվէն վախտը խաչը կօթավը կօլ ա տամ, ամ-հա յըտնան վէշ մին պէն ջի անում* (Ձ):

- Խաչը ճուրը քըցիլ - Խաչը մեջն ընկղմելով՝ ջուրն օրհնել, ջրօրհնեքի տոնը կատարել: *Լըրիս խաչը ճուրը քը-ցիլիս վախտը էտ կընէգը դէրին աշկա-վըն ա ըղնում* (Ձ):

- Խաչըն էլ ա ուրանը, գորուպոնըն էլ - Եվ իշխանությունը, եւ միջոցները իր ձեռքում են: *Խաչըն էլ ա ուրանը, գորու-թոնըն էլ, հինջը օգում ա, անում ա* (Ձ):

- Խաչը քաշիլ - Տանջվել, տառա-պանք՝ վիշտ կրել՝ տանել: *Ամմեն մարթ ուրան խաչըն ա քաշնում* (Ձ):

- Խաչին փըռնըվել - Դիվահարվել: *Ասում ըն՝ մըհըտ մին մարթ էտ սօր-փէն քըշտէն կուգալ ա, մինջը՛վ տօն հըսնէլը՝ խաչին փըռնըվալ* (Ձ):

- Խաչին տակէն մատաղ մօրթէ, ժու-ղովորթէն ըզըդօղէն՝ վըննըտակէն - Ժու-ղովորդի ազատարարը արժանի է ավելի մեծ երկրպագության, քան սուրբը:

- Խաչին քարան պաճի, ք՞ծմաճ՝ ընօ-ղէն՝ ծըրքան - Ուրիշներին օգնողը՝ օժանդակողը արժանի է երկրպագու-թյան:

- Խաչ հանել - տեն Իրըսէն խըջըհա-նել:

- Խաչ տինիլ - տեն Խաչ քաշիլ (1):

- Խաչ քաշիլ - 1. Մեկից՝ մի բանից հրաժարվել՝ հույսը կտրել, չեղած՝ չունե-ցած համարել: *Էտ օրվանից հնրը տը-ղէն յըրա խաչ ա քաշնում* (Ձ): 2. տեն Իրըսէն խըջըհանել:

ԽԱԶԱՊՈՒՐԻ (կրպ. *khachapuri*) - գ. Կծու, թթու համեմունքներով եւ պանի-րով պատրաստված թխվածք: *Ամմեն մարթ ջի սիրում խաչապուրին* (Ձ):

ԽԱԶԲՈՒՐ - գ. Յորենի հասկերից կազմված խաչաձե փունջ: *Շըրքէնըս խաչբուռ ա, յարըս տըղավը մին աբուռ ա...* (Ձ):

- Խաչբուռ անել - Յորենի հասկերից խաչաձե փունջ կազմել: *Տըղան հասկե-րը կըտօրում ա, խաչբուռ անում, տամ ըխճըկանը* (Ձ):

ԽԱԶԷԼ - տեն ԽԱԶԻԼ:

ԽԱԶԻԼ/ԽԱԶԷԼ (գրբ. *խաչեմ*) - նբ. 1. Մեկին խաչաձե փայտի վրա մեխելով՝ սպանել՝ մահապատժի ենթարկել: *Թա-քավէրը հըրամանը ա տամ, վեր վէգի-րին խաչին* (Ձ): 2. փխբ. Տանջել, կեղե-քել: *Էտ օյիւնբազը ժուղովորթէն շատ ա խաչնում* (Ձ):

- Խաչած Քըրիստոսա ընանգը - Դե-ղին, դեղնագույն: *Ղազ, հինջ դա՛գ, մին տըրէկանը թըմըմէլու, ընանգըն էլ խա-չած Քըրիստոսա ընանգը* (ՆԱԲ, 37):

ԽԱԶԻԿ - տեն ԽԱԶ (4):

ԽԱԶԻԿ-ՄԱԶԻԿ - տեն ԽԱԶԱՍԱԶ-ի:

ԽԱԶԿԱԼ՝ (գրբ. *խաչակալ*) - գ. Եկե-ղեցու բեմում փայտե հարմարանք, որի վրա դրվում է խաչը: *Դերը խաչը պաչնում ա, տինում խաչկալին յըրա* (Ձ):

ԽԱԶԿԱՊ - գ. Խաչաձե կապ՝ հան-գույց: *Վէշ մինը կարում ջի էտ խաչկա-պը յըտ անէ* (Ձ):

- Խաչկապ անել - Խաչաձե կապել՝ հանգուցել: *Բախաջին մին թիլ ա խաչ-կապ անում, տինում ըտըրա պէրցին մաչին* (Ձ):

ԽԱԶՄԱՐ/ԽԱԶՄԱՐ/ԽԱԶԱՍԱՐ - տեն ԽԷԶԱԿ: 2. տեն ԽԱԶԿԱՊ:

ԽԱԶՎԷԼ - տեն ԽԱԶՎԻԼ:

ԽԱԶՎԻԼ/ԽԱԶՎԷԼ - կբ. եւ չբ. ԽԱԸԻԼ-ի:

ԽԱԶ ՈՒ ՄԱԶ - տեն ԽԱԶԱՍԱԶ(Ի):

ԽԱԶՓՈՒԶ - տեն ԽԱԸՓՈՒԸ:

ԽԱԶՓՕՆՋ - տեն ԽԱԶԲՈՒՐ:

ԽԱԶՔԱՐ - գ. Վրան խաչ քանդա-

կած սալաքար կամ խաչի ձեռով արձան, որ դնում են ուխտատեղիներում՝ սրբավայրերում՝ գերեզմանոցներում են։ *Ըստը՞դ առաջ մին մը՞ծ կաղեն յա իլնլ՝ տակեն մին խաչքար (2)։*

ԽԱՁԱՆԻՆԻ (թրք. *haçaleti*) - 1. տեն ՅԱՄԱՆԻՆԻ։ 2. տեն ՅԻՖԻՐԱՍՆԻ։

ԽԱՌ (պրս. *xār* (փուռ, փշոտ թուփ) - Գործածվում է կապակցության մեջ։

- Խառ կանանց - Սուգ կանաց։ *Վառ կանանց ըմ կօքըմըտ, խառ կանանց ըմ կօքըմըտ ... (ԼՂԲ, 263)։*

ԽԱՌԱՆՈՒՐԱ - ած., գ. 1. Լավ ու վատ, պիտանի ու անպետք (անձեր, իրեր են)։ *Յըրսընքավը խառախոտա մարթըք ըն հըվաքվալ (2)։* 2. Անպետք, անգործածելի (ապրանքներ)։ *Լավերը յոր ա օնում, խառախոտան պիժենում քըսիբներեն (2)։*

ԽԱՌԷԼ - տեն ԽԱՌՆԷԼ։

ԽԱՌԸ - տեն ԽԱՌՆԸ։

ԽԱՌԹՈՒԹԷ - տեն ԽԱՌԹՈՒԹԷ։

ԽԱՌԹՕԹ - տեն ԽԱՌԹՕԹ։

ԽԱՌՆԷԼ/ԽԱՌԷԼ (գրք. *խառնել*) - Նբ. 1. Տարբեր նյութեր իրար հետ մեկտեղել, այնպես անել, որ միմյանց հետ խառնուրդ կազմեն։ *Օշափը հրքք չըվալ ցորեն, հրքք չըվալ կ'արի յա խառնում, տըղեն թա։ Բիդի մին քըշերումը ուրոնր անա ճօկիս (2)։* 2. Միեմույն նյութը այս ու այն կողմ շրջել, խառնել, իրար տալ, հարել։ *Կուրկուտը իփիլիս վեր խըռնեցել, համը կըկորջի (Բ)։* 3. Մի նյութի մեջ այլ նյութ ավելացնել։ *Շըփօթեն լըհը՞տ վեր բնքմնաք չի խառնիս, օտվէլ չի (Բ)։* 4. Միավորել, միացնել։ *Էրկու արիսեն ճուրը խառնում ըն, վեր կարին բուստընեն ճիրին (2)։* 5. Մասնակից դարձնել։ *Էտ անըզկամը քըվօրը տըղեն էլ ա խառնըմ ուրան կուրծերեն (2)։* 6. Շարվածքը՝ կարգը՝ դասավորությունը խախտել։ *Բաղվանջին հանրիում ա, ցանրգերը խառնում (Բ)։* 7. Յարդարանքը փչացնել, խառնտորել, խճճել։ *Քամեն ըխճըկա-նը մազերը խառնում ա (Բ)։* 8. Շփոթել, հուզել։ *Էտ կընգանը ծըկըլթօցը շինն-ցուց խառնում ա (2)։* 9. Իրար դեմ լարել՝ գրգռել։ *Պառավը ըտըրանց մաջը խառնում ա, ուրոնր լըհը՞տ կըռվըը-նում (2)։*

ԽԱՌՆԸ/ԽԱՌԸ (գրք. *խառն*) - տեն ԽԱՌՆԸ/ԽԱՌՆԸ (2, 3)։

ԽԱՌՆԸՎԱՍԿ/ԽԱՌՆԸՎԱՍԿ - տեն ԽԱՌՆՈՒՐԱ։

ԽԱՌՆԸՎԷԼ/ԽԱՌՎԷԼ - 1. կբ. ել չբ. ԽԱՌՆԷԼ-ի։ չբ. 2 շփոթվելուց՝ հուզվելուց իրեն կորցնել, շփվել։ *Էտ տըղան ըխճըկանը վեր տը՞սնում ա, խառնըվում*

*ա, էլ կարում չի, թա խօսէ (2)։* 3. Մի-ջամտել։ *Թաքավերը պայման տիրած ա ինում, վեր էս ախճիգը ուրան կուրծերեն խառնըվէ վուչ (ՅԱԲ, 15, 69)։* 4. Խառ-նաշփոթ վիճակ ստեղծվել։ *Ամմեն հինչ խառնըվալ ա, վէշ մին պեն կարում չընք անինք (Բ)։* 5. Կենակցել, զուգավորվել։ *Յասանըն էլ էտ ծիյանցը տը՞սած ա իլնլ խանեն ծիյանցը լըհը՞տ խըռնըվէլիս (ՅԺՅ, VII, 189)։*

ԽԱՌՆՈՒՐԹ/ԽԱՌՆՈՐԹ/ԽԱՌՈՒՐԹ (գրք. *խառնուրդ*) - գ. 1. Տարբեր նյութերի խառնումով ստացված արդյունքը՝ նյութը։ *Ճուրը խառնում ա կինուն լըհը՞տ, խառնուրթը ծախում (2)։* 2. Իրար խառնված նյութերից յուրաքանչյուրը։ *Էտ իլլէ-րին չըվալումը համ ցորնու խառնուրթ ա ինում, համ կարոն (2)։* 3. Տարբեր տեսակների՝ ցեղերի՝ առանձնյակների զուգավորումով՝ խաչասերումով ստացված տեսակ՝ ցեղ, առանձնյակ։ *Ճօրեն էշու, մին էլ ծիյու խառնուրթ ա (Բ)։*

- Խառնուրթ անել - Մի նյութ այլ նյութի հետ խառնել, հատկապես տաք ու սառը ջրերը խառնել։ *Ճուրը խառնուրթ ա անում, լըղանում (Բ)։*

ԽԱՌՆՈՐԹ - տեն ԽԱՌՆՈՒՐԹ։  
ԽԱՌՎԱՍԿ - տեն ԽԱՌՆԸՎԱՍԿ։  
ԽԱՌՎԷԼ - տեն ԽԱՌՆԸՎԷԼ։  
ԽԱՌՈՒԹ - տեն ԽԱՌՆՈՒՐԹ։  
ԽԱՌՈՒ(Ն)Ք - ած. Իրար միացած (հոնքերի մասին)։ *Խառնը օնքեր օնէ Աշխենը (Բ)։*

ԽԱՍ (արաբ. *xass*, թրք. *xasa*) - ած. 1. Ընտիր, լավորակ։ *Խաս պիւրթ ա ինք օնում, դժճակ կարում (2)։* 2. Մետաքս։ *Խաս շօր ա կը՞ցալ (Բ)։* 3. տեն ԽԱԼԻՍ։ 4. Սպիտակ (կտորի՝ շորի մասին)։ *Խաս կը-տօր ա, հանց ա լըհա պիմըկըօլա ինի (Բ)։* 5. գ. Մետաքսյա կտոր՝ գործվածք, մետաքս։ *Ըսօր ծրփնթ ա, պաս ա, կըլ-խիտ Բաղդադի խաս ա... (ԼՂԲ, 55)։*

ԽԱՍԻԼ/ԽԱՍԻԼ (գրք. *խսիր*) - գ. Եղեգից՝ ծղոտից՝ դալար բույսերի կեղեկից գործած կարպետ։ *Մին խասիլ ըն էտ ծառեն տակեն մը՞կնում, լըրա քօն ինում (2)։*

ԽԱՍԼԸՅԱ(Ս) - տեն ԽԵՇԼԸՅԱ(Ս)։

ԽԱՍՅԱԹ/ԽԱՍՅԱԹ (արաբ. *xassayet*)

- գ. 1. Մարդու հոգեկան բոլոր հատկու-թյունների ամբողջությունը՝ խառնվածք, բնավորություն։ *Դերին խասյաթը շատ փիս ա ինում, ծըռեն շատ ա ինում չըրջը-րէլիս (ԼՂԲ, 349)։* 2. Գործելու՝ վարվելու՝ աշխատելու եւն սովորական դարձած եղանակ՝ ձեւ՝ հակում են։ *Էշ ա, լի՞, խըս-յաթ օնէ՞ կըլծիք թափ տալ... (ԲՅԲ, 196)։*

ԽԱՍՍԱ (թրք. *hasta*) - ած. ծղր. Յի-վանդ, վատառողջ։ *Խէ կօրծ չը՞ս անում, խաստա լը՞ս (Բ)։*

- Խաստա խըմօր - ծղր. Յիվանդ՝ վա-տառողջ մարդ։ *Էտ խաստա խըմօրը մեր կըլծիք հնլն շատ օյինեն յա պիր-լնկան (2)։*

ԽԱՍՍԱԼԱՍԻՇ/ԽԱՍՍԸԼԱՍԻՇ - Գոր-ծածվում է կապակցության մեջ։

- Խաստալամիշ ինիլ - ծղր. Յիվան-դանալ։ *Ասում ըն՝ էն կըլծապահեն էլիա խաստալամիշ ա իլնլ (Բ)։*

ԽԱՍՍԱԽԱՍԱ/ԽԱՍՍԸԽԱՍԱ (թրք. *xastaxana*) - ծղր. տեն ԲԱԼԻՆՅԱ։

ԽԱՍՓՈՒՇ - տեն ԽԱՇՓՈՒՇ։

Խալ (գրք. *խալ*) - գ. 1. Աղվամազի բարակ շերտ գործվածքի երեսին։ *Պիր-թի շօրին խալը շատ կինի (Բ)։* 2. Պտուղների եւն վրայի նուրբ մազաշերտ կամ փոշեման շերտ։ *Շօրը յօր ա ունէս, սըրկծվին խալը վեր ընէս, կըծուտէս (2)։*

ԽԱՎԱՐ (գրք. *խաար*) - 1. գ. Լույսի բացակայություն, բացարձակ մթություն, խավար։ *Տիւս ա կամ, տը՞սնում՝ ամէն տեղ խավար ա, լիւս չըկա ... (ՅԺՅ, VI, 234)։* 2. ած. Շատ մութ, խավարչտին։ *Տըղան ըտի ըղնում ա էտ խավար յերգիրը (2)։* 3. Խավարամիտ, հետամնաց։ *Էտ շէնին ժօղօվուրթը էնքան խավար ըն ինիս, վեր ուրանց շէնին ըլնծ-չըլնծ իրէք դերին լը-հախ տեղան կուտուրէս ըն (ՅԺՅ, V, 413)։*

ԽԱՎԱՐ-ԹԸՐԹԻՇ - տեն ԽԱՎԱՐ։

ԽԱՎԱՐԹ(ՆԸ)/ԽԱՎԱՐՍ(ՆԸ) - գ. Մաշկային հիվանդություն, որ արտա-հայտվում է հետզհետե տարածվող մանր բշտիկներով, որոնք լցվում են հե-ղուկով՝ թարախով, ջրջրով։ *Խավարթ-նը էտ խուխեն լափ տանջոնում ա (2)։*

ԽԱՎԱՐ-ԽԱՍԻՍ - Գործածվում է կապակցության մեջ։

- Խավար-խասիս մընալ - Խավարի մեջ խարխափել, լույսի երես չտեսնել (հաճախ գործածվում է որպես անեծք)։ *Սօտ ասօղը խավար-խասիս մընա, խըրըվ-խարավ կ'ա, աշկը պըլթա... (ՅԺՅ, V, 587)։*

ԽԱՎԱՐՍ(ՆԸ) - տեն ԽԱՎԱՐԹ(ՆԸ)։

ԽԱՎԷՇ (արաբ. *xabiš* (արմավով եւ յուղով պատրաստված հրուշակեղեն), ասոր. *xawisā*) - գ. Ուտելիք, որ պատրաս-տում են այլուր յուղի մեջ բովելով եւ մե-ջը շաքարի օշարակ խառնելով, խա-վիծ։ *Աղանթ ա, ծըմըթկանեն հը՞տէ խա-վէծ կըտանին (2)։*

ԽԱՍՏ (վրաց. *xati* (պատկեր, նկար) - գ. Ձեռքով գրելու յուրաքանչյուրին հա-տուկ ձեւը, ձեռագիր։ *Խուջեն խատտավը կըրում ա, թօխտը տամ... (ՅԱԲ, 15, 66)։*

ԽԱՐ - Գործածվում է կապակցու-թյան մեջ։

- Խար անել - Անարգել, ստորացնել։

էտ կընէ՞ք մարթին էզզանան խար ար անում (2):

ԽԱՐԱԲ (արաբ. *xarab* (ավեր), *harap* (ավերակ, հիվանդ) - ած. 1. Ոչ սարքին, փչացած: Մաշինը խարաբ ա (Բ): 2. Անհաջող, աննպաստ: Մը՛գ օսինք՛ վէջ արաբա, մը՛ր պը՛նէրը խարաբ ա... (ԼԴԲ, 11): 3. Ավերված, քանդված: Խա-րաբ տօն ա (Բ):

- Խարաբ անել - 1. Փչացնել, անպետքացնել: Սըհաթը քըցո՛ւմ ա ճո՛ւրը, խարաբ անում (Բ): 2. Անհաջող՝ աննպաստ դարձնել: Մարթին կործը կը-նէ՞քըն ա խարաբ անում (2): 3. Ավերել, քանդել: Գոռ շէն ա իլնի Չայլուն, թօր-քէրըն ըն խարաբ ըրալ (Բ):

- Խարաբ ինիլ/տը՛նալ - 1. Փչանալ, անպետքանալ: Տըրախտըրը խարաբ ա ինում, վար ընօղէն մտում ըն մաթնիլ (Բ): 2. Անհաջող՝ աննպաստ դառնալ, վատթարանալ: Զանի քընըմ, քանի ժօ-ղօվորթէն տո՛րոյթոնը խարաբ ա ինըմ... (ՀԺՀ, VI, 95): 3. Ավերվել, քանդվել: Տանը երկան վախտ վեր ապըրօղ չինի, խարաբ կինի (2): 4. Հիվանդանալ: Էնքան էտ նամ ութաղումը ապըրում ա, վեր խարաբ ա ինում (2):

ԽԱՐԱԲԱ (թրք. *xaraba*) - տէն ՊԸՐԻ-ՇԱԿ:

ԽԱՐԱԲԱԽԱՆԱ/ԽԱՐԱԲԱԽԱՆԱ (թրք. *xarabaxana*) - գ. Ավերակներով պատված տեղ: Կարըմ չի, թա տըժօխ-կըմը տէսածնէս յա լըսածնէս քէզ կի-րիմ, վեր տու էլ չի էս խարաբախանին մըղակավը նի մըննիս (ԶՏ, Բ, 13):

ԽԱՐԱԿ՝ (գրբ. խարակ (ապառաժ քար), պրս. *xārā* (խիստ պինդ քար) - գ. 1. Հերկված արտի մեջ չհերկված հողակ-տոր: Արտը վարում ըն, մին խըրէ՞ք խա-րակ ա մընում (Բ): 2. Ընդհանրապես՝ որեւէ կատարված բանի անկատար մնացած մաս, բացթողում, վրիպակ: Խմաստունը կըլխու յա ըղնում, վեր թիլի-սիմչին վեր թիլիսիմ ա ըրալ, քըրըքը-րալ, մին խըրէ՞ք խարակ տեղ ա մընա-ցալ (ՀԱԲ, 15, 2):

- Խարակ անել/քըցիլ - 1. Հողը լավ չհերկել, անվար հողաշերտ թողնել: Հէնդօն կարում չի արտը վարէ, խարակ ա անում (2): 2. Որեւէ բան անորակ անել, բացթողումներով՝ թերություննե-րով անել: Դոլգամը մըղակը լավ չի շի-ննիլ, խարակ ա ըրալ (2):

- Խարակը օնել - Բացթողումը՝ վրի-պակը՝ թերությունը վերացնել: Տըղան անում ա, հանրն էլ հը՛տան խարակը օնում ա (2):

ԽԱՐԱԿ՝ - գ. Փայտի դեզ: Էրկու խա-րակ փանդ տահանը մին ամսումը էրո՛ւմ ըն (Բ):

ԽԱՐԱԶՈՒ - գ. 1. Փայտե խաչածեւ հարմարանք, որի վրա դնում են գերա-նը եւ սղոցում: Կէրանը տիկնում ըն խա-րաչովէն յըրա, գիրդաբիրնիվ կէս անում (2): 2. տէն ԶԸՐԸԶԱՆԱՆ:

ԽԱՐԱՐ (արաբ. *ḡarar* (քործ), թրք. *xarar* (քործ, մեծ տոպրակ) - գ. 1. Մեծ պարկ՝ հացահատիկ, բամբակ, բուրդ, ծղոտ եւլ լցնելու համար: Զո՛ւնըն ա-ծում ա խարարը, ջըլակում, տանում կը-վէն տամ (Բ): 2. փխր. Խիստ անբարոյա-կան՝ շատերի հետ կենակցած կին: Էտ խարարը օրը օխտը սիրական ա փօ-խում (2):

ԽԱՐԱԹՈՒԹԷ/ԽԱՐԱԹՈՒԹԷ - գ. Թթենու տեսակ, որի պտուղն է խարթթը: Հնո-րո՛ւթ խարթթէ շատ կա (Բ):

ԽԱՐԱԹՕԹ/ԽԱՐԱԹՕԹ (գրբ. խառ (փշոտ թուփ), պրս. *xar-tut* (կոկոռշենի) - գ. Սեւ ու կարմրավուն, թթվաջ մեծա-հատ թուփ՝ պինդ կոթով: Խառթթօթան լ՛ավ վարէննի յա տը՛նում (Բ):

ԽԱՐԻՍԻԹԷ - տէն ԽԱՐԻՍԻՏ:

ԽԱՐԶ (արաբ. *xārg*, թրք. *harç*) - գ. 1. Հարկ, տուրք: Հօքո՛ւմնթին խարջէրը տալանը յը՛տը տակէն պէն չի մընամ (2): 2. Ծախսվող միջոցների ամբողջու-թյունը: Տօն շինիլին խարջը շատ ա (Բ): 3. Տան բաժանքի՝ դեպքում աղջիկների՝ քույրերի ստացած բաժինը՝ սպիտակե-ղեն, անկողին եւն: Հանրըն էլ վեր մը՛ռ-նում ա, Անդօնէն քուվէրքը ուրանց խարջը յօր ըն օնում, ղըրաղ կէնում (2):

- Խարջ անել/տը՛սնալ - Ծախս կա-տարել, գնումներ անել: Խարջ ա անում, քուվէն ծէն տամ դօնաղ (2):

- Խարջը տո՛ւս օնել - Որեւէ բանի վրա ծախսված գումարը ետ շահել: Խա-ղուն ինք՛ ա օնում, կ՛ինի շինում, ծա-խում, մին թանիրնիվ կարում ա խարջը տո՛ւս օնել (2):

- Խարջու տակ ըղնել - 1. Որեւէ բա-նի համար ծախս կատարել: Խարջու տակ ա ըղնում, տըղէն հը՛տէ հըրսանէ՛ք՝ անում (Բ): 2. Տուրքադրվել, հարկա-դրվել: Վըխճըրնէն կօրչում ըն, չօբանը խարջու տակ ա ըղնում (2):

- Խարջու տակ տիկնիլ/քըցիլ/թօղնել: Էտ ըխճըկէրքը խը՛ղճ տըղէն խարջու տակ ըն քըցո՛ւմ (2): 2. Տուրքադրել: Մու-դի յըն տամ, էտ թանջիրնէն խարջու տակ քըցո՛ւմ (2):

ԽԱՐԶ - ԲՕՐԶ - տէն ԽԱՐԶ (1, 2):

ԽԱՐԶԻԼ - նբ. 1. Ծախսել, որեւէ գործ՝ աշխատանք եւն իրագործելու հա-մար դրամ վճարել՝ տրամադրել: ...Ամ-մէն օր տո՛ւս ա յը՛կալ, պիրանան մի վը-սկէ վեր քըցնիլ, էտ մարթըտ խարջնիլ ա, խօխէնքը պահալ (ԱԱ, 70): 2. Վաճառել:

Ուստան տանում ա էտ ջամը բըզարու-մը խարջում... (ՀԺՀ, Կ, 393): 3. Սպառել, գործածելով վերջացնել: Մին շէփտումը մին կարաս կինին խարջում ա, պըրծը-նում (2):

ԽԱՐԶՎԻԼ - կբ. եւ չբ. ԽԱՐԶԻԼ-ի:

ԽԱՐՏ (գրբ. խայթ (խայթոց), խարտ (խարտուք), հ.ե. *\*khai-t-*) - գ. 1. Մեղվի, կարիճի եւն խայթոցը: Հայը մըղըրա-ճանց ա՛ խարտը կուրցըրած (ԱԲԲ, 52): 2. Մեղվի՝ խայթելու ժամանակ մարմնի վրա թողած բարակ ծեղը՝ փուշը: Մըղը-րաճանցը վեր կըծում ա, բիդի դանտի կըծած տը՛ղան խարտը տո՛ւս օնիս, վեր օռչի վէջ (Բ): 3. տէն ԽԱՐՏՕՑ:

կավից եւն պատրաստած երկարավուն աման խմոր հունցելու եւն համար: *Էս Առաքելը ճուտերեն հանջիրավը շաղվում ա, խօզը նի յա մըննում, ըս-կըսում տաշտին խըմօրը օտելը (ՀԺՀ, VII, 383):* 2. Ջրաղացի ձագարածեւ արկղը, որի մեջ լցնում են աղալու ցորե-նը: *Յօրէնը ածում ըն տաշտը, ըսքըսում աղալը (2):* 3. Գոգավոր սարալանջ: *Վըխընընեն տաշտումը նըստում ըն, արօճ անում (2):*

- Տաշտեն մին հացը - Միևուճար զավակ: *Էտ կընէզը ըղնում ա խանէն վը՛նները, թա. - Էտ տըղան իմ տաշտեն մին հացըն ա, ըսպանել մէլ (2):*

- Տաշտը ծակվել - Գործը ձախողվել՝ անհաջողության մատնվել: *Մեր տաշտը ծակվալ ա, կարում չընք ապըրիկը՛ (2):*

- Տաշտը տերտակ/ցամաք - Աղքատ, ապրուստի միջոցներից զուրկ: *Խը՛ղճ Հանրաբեղը հիկնջ ա՛նէ, տաշտը տերտակ, խօխէնքը՛ շատ (Բ):*

ՏԱՇՏԱԿ (գրք. տաշտակ) - գ. 1. Փոքր տաշտ: *Ալլերը ածում ա տաշտա-կը, հունցում (Բ):* 2. Լոդի ձեւ, երբ մեջքի

վրա պառկում են ջրի երեսին եւ ձեռքե-րով լող տալիս: *Տաշտակը ամմէն մար-թու պէն չի (Բ):* 3. *տես* ՀԻԾԸԼՍԾԵՂ:

- Տաշտակ անել - Մեջքի վրա պառ-կած՝ լողալ: *Տաշտակ ընելավ մին թան-րան ճիրան տուս ա կամ (2):*

ՏԱՇ-ՏԱՇ - Գործածվում է կապակ-ցության մեջ:

- Տանջ-տանջ անել - *տես* ՏԱՇՏԱՇՕ-ՐԵԼ:

ՏԱՇ-ՏԱՇ/ՏԱՇԻ-ՏԱՇԻ - գ. Խրա-խուսանքի՝ պարողներին ոգետրելու բացականչություն: *Մակառքաշին հան-րում ա, ծը՛րքերը պիցըրցընում, ծեն տամ. - Տանջի-տուշի՛, պար յը՛կէ՛ք (2):*

ՏԱՊ - *տես* ՏԱՊԸՈՒ:

ՏԱՊԱԿ/ՏԱՊԱԿ (գրք. տապակ) - *տես* ՔԱՊԱԿԵՐ (3):

ՏԱՊԱԿ՝ (գրք. դիպակ (ընտիր կտոր՝ հանդերձ) - գ. Որեւէ բանի՝ իրար միացած մասերից յուրաքանչյուրը, մաս, շերտ, բաժին: *Մըղըրաճանջըն ա հայը մին տապակ ըն, ուրուր նըման (ՆԱԲ, 86):*

ՏԱՊԱՆ (գրք. տապան) - գ. 1. Գե-րեզմանաքարի առջեւը հորիզոնական դիրքով դրված տափակ երկար քար, տապանաքար: *Տապանը տիկնիկս վեր ա ըղնում, կօտըրում (2):* 2. Այն նավը, որով Նոյը իր ընտանիքով եւ բոլոր տեսակի կենդանիներով փրկվեց ջրհեղեղից: *Էտ մարթը ամմը՛ն հիյվանա մին-մին ճօխտ յօր ա օնում ուրան նըհէտ, լօխ տըպանումը տըղվարում (ՀԺՀ, VII, 166):*

ՏԱՊԸՈՒ - Գործածվում է կապակցու-թյան մեջ:

- Տապըռ անել - 1. Թաքնվել, պահ մտնել: *Մխքաղըն էլ լօթ կըտա պատեն լուսըծակավը նի մըննէ լէխձեն, ընդէղ տապըռ անէ, լէշի վարթաբեղին կալին (ՆԱԲ, 60):* 2. Ձայնը կտրել, լռել: *Տըղան տապըռ ա անըմ, աշկէն տակավը տա-հանց հէտը պահում (ՆԱԲ, II, 90):*

ՏԱՐ (գրք. տար) - գ. Որեւէ լեզվի այբուբենի նշաններից յուրաքանչյուրը՝ գիր: *Էտ յը՛խծուն տըռնանը կըլխեն չօրթ տառ ա ինում կիրանձ, ամմա կա-րում չըն կարթին (2):*

- Տառերը ճընն(ն)ջիլ - Գրաճանաչ լինել, մի քիչ գրել-կարդալ իմանալ (հա-ճախ գործածվում է հարցական կամ ժխտական ձևով): *Իզէն տառերը ճը-նանջում ա՛, վեր նամակ կիրի (Բ):*

- Տառերը պիրանումը հը(ղ)լըղօրել - *տես* Կիրկապ անել (1): *Տառերը պիրա-նումը հըղլըղորելավ պատառ էլ ա կար-թում, էլիա դըրըցուվեն յըրա պըրծնում (ՆԱԲ, 107):*

ՏԱՐԱՍ - *տես* ՏԱՐԱՍ:

SUNԵՆ (գրք. տառնիս) - գ. 1. Կակ-  
դաթեւ ձկների ցեղ՝ տառնիս: *Տառնիսը*  
*ջուրըցըրած ա ինում լնգնթ* (2): 2. տեն  
Չօր չօփ:

SUNԹ - տեն SUNԹ:

SUNԿԱՊ - Գործածվում է կապակ-  
ցության մեջ:

- Տառնկապ անել - տեն Կիրկապ  
անել (1): *Ղեր Մուքըլը մին թանիրավ*  
*տառնկապ ընելավ կըրթելիս ա ընում*  
(ՆԱԲ, 107):

SUN(Ն)ԱՆ - տեն ՏԸՆ(Ն)ԱՆ:

SUNԸ/ՏԸՆԸ (գրք. դառն) - տեն  
ԱՂՈՒ:

SUNՈՒ - տեն ՏԱՊԸՈՒ:

SUN-SUN - մ. Յուրաքանչյուր տառն  
առանձին, տառ առ տառ: *Տառ-տառ լօխ*  
*կարթում ա, ամմա վեշ մին պեն կըլծիս*  
*չի ըղնում* (2):

SUN (գրք. դաս) - գ. 1. Առանձին  
առարկայի հատկացված ուսումնական  
ժամ, դասաժամ: *Լըհա վեր տաները*  
*պըրծընում ա, խօխենքը տօն քինիլի*  
*տը՛ղ քինամ ըն բաղերը* (Բ): 2. Ուսում-  
նական աշխատանք՝ առաջադրանք, որ  
տրվում է սովորողներին՝ հաջորդ պա-  
րապմունքի համար պատրաստելու: *Խօխան տաները սըվըրում ա, քինամ*  
*խաղ անում* (Բ): 3. Կիսք. խրատ, որ ձեռք  
է բերվում փորձով: *Յանը ասմա.- էտ*  
*քը՛գ թօղե տան ինի, էլ շընըծաննջու*  
*պոն չի քանդիս* (2):

- Տան անել - Դասապարապմունք  
ունենալ: *Տաները անում ա, կամ տօն,*  
*տը՛սնում վէճ մարըն ա տանը, վէճ հն-*  
*րը* (2):

- Տան տալ - 1. Դասավանդել: *Ամմեն*  
*դասատու չի կարում լավ տան տա* (Բ):  
2. Թելադրել, սովորեցնել մեկին մի բան  
անելու կամ չանելու, խրատ տալ: *Ըս-*  
*կէսուրը հարթանըն տան ա տամ, դար-*  
*կում հանրանց տօն* (2): 3. Պատժել,  
պատժելով խրատել: *Մեհետ էլ հայերը*  
*հըվաքվալ ըն, տահանց մին լավ տան*  
*տուվալ* (ԱԱ, 29):

- Տան քաղել - խրատվել, փորձից՝  
իրողությունից խրատ առնել: *Կուղու-*  
*թունու հը՛տե տուրմն քըցեցեն, տան*  
*քաղից* (2):

SUN(Ս)Ը (գրք. տասն) - թ. Տասը՝  
իննին հաջորդող թիվը: *Տըղան*  
*վըծանըմ ա, տը՛ռնըմ տասը տըրեկան...*  
(ՉԺՅ, V, 123):

- Տաս(ս)ը չափել, մին կըտ(ը)րել -  
*տեն Օխտը չափել, մին կըտըրել:*

- Տաս(ս)ը հը՛տ(է) - տեն Յազգար  
հը՛տ(է):

SUN(Ս)ԸՆԶԻ - տեն SUN(Ս)ԻՆԶԻ:

SUN(Ս)ԻՆԶԻ/SUN(Ս)ԸՆԶԻ - թ.  
Իններորդին հաջորդող դասական  
թվականը՝ տասներորդ: *Տասսինջի օրը*  
*հիվանդը աշկերը պենում ա* (2):

SUN(Ս)ՈՒՑ - տեն SUN(Ս)ՕՑ:

SUN(Ս)ՕՑ/SUN(Ս)ՈՒՑ - գ. Տասը եզ-  
ների լծվող գութան: *Սաղ շենումը մի-*  
*նակ ըտըրան ա իլնլ տասսօց* (2):

SUN(Ս) (գրք. տուար) - գ. 1. Խոշոր  
եղջերավոր ընտանի կենդանի(ներ):  
*Պօլիգը տուս ըն օնում, տենում մաչին*  
*մին տըվարու պօգ...* (ՆԱԲ, 66): 2. Կիսք.  
Յիմար՝ ապուշ՝ տխմար՝ բռի մարդ: *էտ*  
*տավարը կըլծիս չի ըղնում, վեր կընեգը*  
*ամմեն օր ուրան խանիում ա* (2):

- Տավարը վը՛ռան մօրթել - տեն էշը  
վը՛ռան մօրթել:

- Տավար կըտ(ը)րել - Յիմարանալ,  
տխմարանալ: *Առաջ կարթեն մարթ ա*  
*իլնլ Սէտրակը, մըհենգ ա ըտի տավար*  
*կըտըրալ* (Բ):

- Տավար տը՛ռնալ - Ֆիզիկական  
ծանր աշխատանք կատարելուց խիստ  
հոգնել: *Տավար տը՛ռած կամ ա տօն,*  
*տը՛սնում կընեգը հաց չի շիննլ* (2):

SUN(Ս)-ՎԸՆԶԱՐ - գ. հվք. Խոշոր եւ  
մանր եղջերավոր ընտանի կենդանի-  
ների ընդհանուր անվանումը: *էտ հա-*  
*րուստ մարթին հազարներավ տավար-*  
*վը՛խճար ա ինըմ, ամմա ինքը շատ*  
*ըսկուպօյ ա ինըմ* (ՉԺՅ, V, 584):

SUN(Ս)/SUN(Ս)/SUN(Ս)/SUN(Ս)/SUN(Ս) - գ. 1.  
Յոր կամ մոր մայրը, մեծ մայր: *էտ տը-*  
*դան տատին լըսըմ չի, ճընապարվըմ ա,*  
*քընըմ* (ՉԺՅ, V, 157): 2. Ընդհանրապես  
պառավ՝ ծեր կին: *Կամ ա, տը՛սնըմ էտ*  
*ծառեն տակեն մին տատե նըստած* (2):

SUN - տեն SUN:

SUN<sup>1</sup> - մնկ. տեն SUN:

SUN<sup>2</sup> - մնկ. տեն ՅԱՑ(1):

SUN(Ս)ԱՑ - Գործածվում է կապակ-  
ցության մեջ:

- Տաննվայ անել - հեզն. Խիստ կա-  
րիքի՝ սովի՝ աղքատության մեջ լինել:  
*Մին վըխտու խօսուօլը շենին համփան ա*  
*իլնլ, միհենգ էն ա տաննվայ ընէս* (Բ):

SUN - տեն SUN:

SUN<sup>2</sup> - տեն SUN:

SUN(Ս)/SUN(Ս) - գ. Ինքնուս  
մանկաբարձուհի, ծննդկանին առաջին  
օգնություն ցույց տվող փորձառու կին:  
*էտ էլ թայդի քընում ա տատմարեն*  
*հէտան* (ՅԱԲ, 15, 106):

SUN(Ս) - տեն SUN(Ս):

SUN/SUN/ՏԸՆ/ՏԸՆ (գրք. տեր) - գ.  
1. Այն անձը, որին պատկանում է մի  
բան: *Տարը մուտացավ, տը՛սավ մին*  
*կո՛ւլ յիրա պըրծած օգում ա՛ խեղճ*

*հիյվանեն ցըրեկ տա* (ԱԱ, 44): 2. Երկրի՝  
երկրամասի՝ գավառի եւն տիրակալ: *էտ*  
*յիրգիրին տարըն էլ խօշանբաճըն ա*  
*իննլ* (2): 3. Վարձու աշխատող պահող  
անձ: ... *Թօխմախը էնքան թակօղ ա*  
*ինըմ, վեր միչեկ տարըն ասըմ չի՛ թակի*  
*միլ, թակիլը թանգ չի անըմ* (ՉԺՅ, V,  
339): 4. Որեւէ կարգի ունեցվածք  
ունեցող անձ: *էտ մարթըտ էլ մը՛ծ*  
*հըրըստությունու, վըղերու, բըղերու տար*  
*ար* (2): 5. Որեւէ կարգի զբաղմունք՝  
պաշտոն ունեցող անձ: *Ինքըն էլ մը՛ծ*  
*կօրծու տար ա իննլ* (2): 6. Որեւէ  
կարգի հատկությամբ օժտված անձ:  
*Ուրեկըն մը՛ծ խը՛քու տար ա* (Բ): 7.  
Ծնողը՝ որպես զավակ(ներ) ունեցող  
անձ: *Թէմուրը հէնգ ըխճըկա տար ա*  
(Բ): 8. Որեւէ զգացմունք՝ հոգեվիճակ  
ունեցող անձ: *Խը՛ղճը հինչ ա՛նէ, դանդու*  
*տար ա* (Բ): 9. Մեկի՝ մի բանի  
նկատմամբ լիիրավ իշխանություն  
ունեցող անձ՝ անձնավորված երեսույթ:  
*Ըշխարթես տարը Աստուծոն ա* (Բ): 10.  
Արյունակցական կամ մերձավոր կապի  
մեջ գտնվող հարազատ՝ որպես խնա-  
մակալ՝ հովանավոր: *էտ կընեգը ասմա.-*  
*Իմ տարըս իմ ախպեր ա* (2): 11. Տնօրեն,  
ղեկավար, կառավարող: *Ներակ մէզ*  
*տըված, վեր Կո՛ղզանց Մանտին բիդի*  
*մէզ տար ինի* (Բ): 12. Որեւէ բանով  
օժտված: *էտ մարթը փիս պենու տար ա՛*  
*համ կօղ ա, համ աշկը շօր* (Բ): 13. Տան  
գլխավորը: *Տանը տարը վեր կընեգը*  
*իլնլ, էն տօնը տօն չի տը՛ռնալ* (2):

- Տար անել/շինիլ - 1. Մի բանի տեր  
դարձնել: *Ըտի Մէլիք՝ Շահնազարը Իբ-*  
*րահիմ խանեն Շուշվա յըրա տար ա*  
*անում* (Բ): 2. Մի բանով օժտել, տալ:  
*Թանջիրը ըտըրան ուրան նըհը՛տ տա-*  
*նում ա, մը՛ծ կօրծու տար անում* (2):

- Տարը մը՛ռածը - տեն ՍԸ՛ՐԱԾԸ(1):

- Տար(ը) չինիլ - Յրաժարվել, հանձն  
չառնել, տիրություն չանել: *Ասում ա.-*  
*Վեր փուլը վըխտեն տաս վէճ, յը՛ս տարը*  
*չըմ* (2):

- Տար ը՛ս - Կարո՞ղ ես տնօրինել՝ ղե-  
կավարել՝ պատասխանատվություն  
վերցնել եւն: *Յանը ասմա.- Վեր փուլ տամ,*  
*կըկա՛րիս առըտօր անիս, տար ը՛ս* (2):

- Տար վը՛նը կենալ - 1. Տիրություն  
անել, որպես տեր հանդես գալ, տիրա-  
նալ, տեր դառնալ: *էնքան վը՛ղերը բի-*  
*ջարում ըն, վըրջումը Կանիոնց Դանգա-*  
*րըն ա կամ, տար վը՛նը կենում* (Բ): 2.  
Յովանավոր՝ պաշտպան կանգնել: *Ապ-*  
*րեսը ախպօրը յիթմալերեն տար վը՛նը*  
*կացավ* (Բ): 3. Հանձն առնել, ստանձնել:  
*Վէշ մինը օգում չի՛ էտ կօրծեն տար*  
*վը՛նը կենալ* (2):

- Տար տը՛նալ - տեն Տար վը՛նը կէնալ (1, 3):

SURUD - ձ. Գրագը շահած լինելու բացականչություն: *Հավէն մարջանվը մարջ ըն կամ, Կանիին մին խըյար ա տամ Հանուն, Հանին լըհա յօր ա օնում, Կանիին ասմա՛ տարած* (Բ):

SURUD-UD - տեն ՂԱՐԱՆ-ՂԱԶ:

SURUD - մ. Ամբողջ տարվա ընթացքում: *Տարանը ըշխադածը մին օրումը լօխ խարջից* (Ձ):

SURUD-NU (ՆԱ) - գ. 1. Հարսին հայրական տնից տանելիս նվագվող տխուր մեղեդի: *Տարանինան վեր ածում ըն, հըրթընցովէն մարը ըսքըսում ա լանց ինիլը* (Ձ): 2. *Վիսբ. տեն ՂԱՐԱՆԵՔ*: 3. ձ. Երգուպարի ձայնի նմանողություն: *Քըթէն տակէն յը՛րք ա ասում՝ տարանինն, տարանինն* (Ձ):

SURUD-SUKH (Է) - տեն ՂԱՐԱՆ-ՂԱԽ (Է):

SURUD-SURUD - տեն SURUD-NU (ՆԱ):

SURUDUD (ռուս. *maparam*) - գ. Աղմուկ-աղաղակ, խառնակություն: *Անրքիսը հանրիան կամ ա տօն, տարարամ պիցըրցընում* (Ձ):

SURUD/SURUD/SURUD (գրք. տարի) - գ. 1. Տասներկու ամսվա տեղողություն՝ տարի: *Տըհէնց ամէն տարէ էտ մարթը ռուրան օղտավը քըրէի ա անըմ, խօխէնը պահում* (ՆԱԴԺԲ, 79): 2. Որոշ ժամանակաշրջան, ժամանակներ: *Հանրը ամառ. - Վէջինչ, խըրթխառէ տարէ յա, տէմ կացէք՝* (Ձ): 3. Երկար ժամանակ: *Տընաշինըտ մինչը՛վ տանան հըսնում ա բարը, տարէ յա ընցընում* (Բ): 4. Որեւէ բանով բնորոշվող տարեթիվ՝ ժամանակ: *Կըմվէն տարէն շատ մարթ ա մեր շինացուց ք՛ծմաճ ըրալ* (Բ): 5. Մահվան տարեկից: *Հօրը տարավը Մուքայիլը էրկու անցը՛ռ ա մօրթում, ժուղուվորթէն լալ հաց տամ* (Բ):

- Տարէն (կըլխավը) շօռ տալ - Մի տարի անցնել: *Տարէն կըլխավը շօռ ա տամ, կամ ա աշունքը* (ՆԱԴԺԲ, 100):

- Տարէն պի՛լօրէլ - Տարին լրանալ: *Տարէն պի՛լօրում ա, ամիա հասան պարթկը պի՛լում չի* (Ձ):

- Տարէն տընընդերկու ամէս - Շարունակ, ամբողջ տարվա ընթացքում, միշտ: *Տարէն տընընդերկու ամէս մեր Բափկէնը համան շօրէրըն ա կը՛նում* (Բ):

- Տարէն քուռըկատել - Անբարենպաստ տարի լինել: *Աստարէ տարէն քուռըկատալ ա* (Ձ):

- Տարուն առաշկը կըտ(ը)րէլ - Մինչեւ մեկ տարեկան դառնալը սկսել քայլել (երեխաների մասին): *Խօխա, հինչ խօ՛խա, տարուն առաշկը կըտըրալ ա* (Բ):

- Տարուն հախկան ըղնէլ - Հիվանդ լինելով եւ այլ պատճառներով չկարողանալ տարվա բերք ու բարիքից օգտվել: *Խը՛ղճ Գորգէնը ծառան վեր ընգալ, տարուն հախկան ընգալ* (Բ):

- Տարուն հախկան քըցիլ - Խանգարելով՝ վնաս հասցնելով տարվա բերք ու բարիքից զրկել: *Ղավուրթէն տուրմա՛ն դըրկը՛ցէն, տարուն հախկան քըցէցէն* (Բ):

- Տարուն պէնը գիղվալ չի - Տարվա բարենպաստ կամ անբարենպաստ լինելը անկախատեսելի է: *Հանրը ամառ. - Տարուն պէնը գիղվալ չի, թուռույին ինիլին յէշիլ մէլ, մին էլ տը՛սէր՝ վէրջը արաշտ իլնվ* (Ձ):

SURUD-UD (գրք. տարեկան) - տեն SURUD:

SURUD - տեն SURUD:

SURUD/SURUD - գ. 1. Մանր եղջերավոր անասունների կտորոք, որ հետզհետե շերտ է կապվում եւ ոտների տակ ծեծվելով՝ պնդանում: *Ճըղացիս տծնը տառթ ա, կըտըրը լիգը մարթ ա...* (ԼՂԲ, 15): 2. *տեն ՔԱԶՈՒՌ*:

SURUD - տեն SURUD:

SURUD - տեն SURUD:

SURUD - գ. 1. *տեն ՏԱԼԷ*: 2. Կույտ, դեզ: *Մին տանր խօտը մին մուռտումը էրվից* (Բ):

- Տանր ըղնէլ/յը՛ր օնէլ - տեն ՏԱՐ-Ս(Ը)ՎԻԼ:

SURUD - նք. 1. Իրար վրա շարել՝ դիգել: *... Վը՛րը վը՛ր կըրեցալ չի, թա սըղըցնէ, կըծիսը կըտըրալ ըն, տանրանլ* (ՀԺՅ, VI, 103): 2. Որոշ կարգով՝ հերթականությամբ՝ հաջորդականությամբ դնել՝ շարել՝ տեղավորել, դասավորել: *Հարթըն չայը ածում ա ըստըքըննէն, պիրում ըստօլէն յըրա դաշան՛ք տանրանլ* (Ձ):

SURUD-UD-UD - կք. եւ չք. ՏԱՐԱՆ-Ի:

SURUD-SURUD - մ. Ղարսերով, կույտերով: *Շօրէրը տանր-տանր նի յա տամ սանդօղը, կապում* (Ձ):

- Տանր-տանր անէլ - տեն ՏԱՐ-ՍՕՏԷԼ:

- Տանր-տանր ինիլ - տեն ՏԱՐ-ՍՕՏՎԷԼ:

SURUD - 1. կք. եւ չք. ՏԱՆԷԼ-Ի: չք. 2. Հրապուրվել, հափշտակվել, գրավվել, հմայվել: *Էտ վախտը թաքավը՛րէն տըղան տէսնում ա ըխճըկանը, ընդորա սիրունօթունավը տարվում ա, հիվընդանըմ* (ՀԺՅ, V, 384): 3. Կլանվել, անձնատուր լինել: *Խօխան խաղավը տարվում է, կառնէրը կուրցընում* (Բ):

SURUD - տեն SURUD:

SURUD-UD-UD - տեն SURUD-UD-UD: SURUD-UD-UD - գ. 1. Միակ տերը՝ տիրություն անողը: *Շատ առաջ ըստը-*

*դէս տարը-տըրականը Վարթան իխշա-նըն ա իլնլ...* (ԱԱ, 17): 2. Միակ պաշտպանը՝ խնամակալը՝ հովանավորը: *Սօնա աքօրը տարը-տըրականը ռուրան ախպօրը տըղան ա* (Բ):

SU (գրք. տափ) - գ. 1. Տափարակ, հարթ տարածություն, հարթավայր: *Էնքան մարթ ա ըսպանալ, վար լիհն էս տափէն անումը տիրանլ ըն Մըրթըսպան* (ԱԱ, 44): 2. Ընդհանրապես՝ գետին: *Մէգ մինըն օնինք, ըսկի չօնինք, տափէն տակէն վը՛սկէ չօնինք* (ԱՅ, 53): 3. Տան հատակ: *Ռուրուգունը կամ ա տօն, տէսնում կընէգը տափէն ըքստած* (ՀԱԲ, 15, 83): 4. Արոտ, վարելահող: *...Ալէքսան անումավ մին մարթ ռուրան տափումը հօնձ ընէլիս ա իլնլ* (ԱԱ, 59): 5. Ղաշտ, հողակտոր: *Ղըրըզնէն յօր ըն օնում, նի մըննում տափը* (ՆԱԲ, 24): 6. *Վիսբ. Գորգի՛ կտորի՛ նկարի եւն հիմնական գույնը, որի վրա նախշեր եւ արված: Գիթին տափը կամումը ա* (Բ): 7. *տեն SU (Ը)LU (1)*:

- Տափ անէլ - 1. Ավերել, գետնին հավասարեցնել, ոչնչացնել: *Ղուշմանին գօրքը նի յա տը՛նում էտ շէնը, տափ անում* (Ձ):

- Տափան կացած - Շատ ցածր՝ ցածրահասակ: *Ղըրուց Սուրէնին տըղան մին տափան կացած ախճիճ ա օգալ* (Բ):

- Տափան կէնալ - 1. Գետնին պառկել՝ հպվել: *Մըրթըկընէճ մընըմ ըն տափան կացած* (ՀԺՅ, V, 49): 2. Մեռնել, սատկել (գործածվում է որպես անեծք): *Տափան կէնա լիրիսակը, բօստանըս քաղալ ա* (Բ):

- Տափան կըտ(ը)րէլ/կըտըրց(ը)նէլ - Մի ծանր բան գետնից վեր բարձրացնել: *Հիշկան անում ա, կարում չի էտ քարը տափան կըտըրցընէ* (Ձ):

- Տափան ճիւր խըմէլ - Մեջքը խիստ կորանալ (ծերությունից՝ հիվանդությունից եւն): *Սօնիշկա աքէրը պըռավալ ա, տափան ճիւր ա խըմում* (Բ):

- Տափան մինչը՛վ յերգինք(ը) - Խիստ շատ: *Ախճիճը տափան մինչէլ յերգինք ուրիսացալ, աշխարքըս ռուրան տը՛նալ...* (ՀԺՅ, V, 91):

- Տափան յը՛ր կնլանձ - Արժեք չունեցող: *Ասում ա. - Էտ տափան յը՛ր կնլանձ ա, էտ հինչ ա՛, վեր ըտըրան մին վը՛սկէ տամ* (Ձ):

- Տափան նամ յը՛ր օնէլ/քաշիլ - տեն Տական նամ յը՛ր օնէլ:

- Տափան տուս յը՛կած - 1. *տեն Տափան յը՛ր կնլանձ*: 2. Գուռատ: *Էտ տափան տուս յը՛կած ախճիճը հինչ ա՛, վեր ծգնլ ըս* (Բ):

- Տափան փըսնել - տեն Տափեն տական փըսնել:

- Տափան քըթած - տեն Տափան յըր կալած:

- Տափավը ընցընել - տեն Տափեն տակը ընցընել:

- Տափավը կ'ալ - տեն Տափեն կ'ալ:

- Տափավը մին անել - Ղետնին շաղ տալ՝ թափել՝ ցիրուցան անել: *Շօրէրը տափավը մին ա ըրալ* (Բ):

- Տափավը մին ինի/տըռնալ - Ղետնին թափվել՝ ցիրուցան լինել: *Ցօրէնը ըրբան վեր ա տըռնում, տափավը մին ինում* (Ձ):

- Տափավը տալ - տեն Տափեն կ'ալ:

- Տափեն թըքում ըս՝ յերգինքըն ա ըղնում - Ամեն ինչ հիմնովին փոխվել է:

- Տափեն թողնել - 1. Անուշադրության մատնել: *Չավէնը խըմալ ա, կօրծը տափեն թողալ* (Բ): 2. Թշվառ վիճակի մեջ թողնել: ... *Էսքան տարի տու ընդըրանց յօղորին ջան ըս տըվալ, խէ՛, ընդըրանք քէզ տափին կըթօղին* (ՉՏ, Բ, 91):

- Տափեն իրըսան ճինջի/սըրփիլ - Բնաջնջել, վերացնել, հիմնահատակ ավերել: *Խաբար ա դարկում հիրքվան թաքավերին, թա.- Յա՛ ախճիգըտ ինծ բիդի տաս, յա՛ թա չէ յերգիրըտ տափեն իրըսան կըճինջիմ* (Ձ):

- Տափեն իրըսան ճինջվի/ սըրփիլ - Բնաջնջվել, վերանալ, հիմնահատակ ավերվել: *Շատ ազկեր, շատ յերգիրնէ յըն տափեն իրըսան ճինջվալ, ամմա հայը կա հօ կա* (Բ):

- Տափեն իրըսեն - Ամբողջ աշխարհում: *Տափեն իրըսեն հիշկան մարթ կա, էնքան էլ դարդ կա* (Բ):

- Տափեն իրըսեն չըրվալ - Շատ փոքր՝ ցածրահասակ լինել: *Մըրյանէն մին շօն օնէ՛ տափեն իրըսեն ըրվամ չի* (Բ):

- Տափեն իրըսը տոն կ'ալ - 1. Հայտնվել, երեան գալ: *Ըշտըղա վերէ յա, մեր շէնումը մին կօղ ա տափեն իրըսը տոն կամ* (Բ): 2. Բացահայտվել, հայտնի դառնալ: *Ըտի կուղթթունը տափեն իրըսըն ա տոն կամ* (Ձ):

- Տափեն կ'ալ - Ղետնին զարկել, տապալել, զգետնել: ... *Վէզըն էլ կըտրից, ջնմոնքը տափեն յէկալ...* (ՉՏ, Ա, 222):

- Տափեն հըվըսարվել - տեն Տափ տըռնալ:

- Տափեն հըվըսըրցընել - տեն Տափ անել:

- Տափեն մընալ - 1. Անուշադրության մատնվել, չգործածվել, չվաճառվել եւն: *Ապըրանքը տափեն ա մընացալ, ինք օնօղ չի կա* (Բ): 2. Թշվառ վիճակի

մեջ հայտնվել: *Սիրան աքերը տափեն ա մընացալ, մին պարիկամ չօնէ, թա քժմա՞գ անէ* (Բ):

- Տափեն տական էլ ա - Որտեղից էլ լինի, ինչպիսի դժվարությամբ էլ լինի: *Տըղան ասմա.- Տափեն տական էլ ա, յըս բիդի էտ ըխճըկանը քըթենամ* (Ձ):

- Տափեն տական փըսնել - Հանկարծակի հայտնվել, անսպասելիորեն երեւալ: *Ըշտըղ քը՛փ կա, Ջարմէնը ընդէղ տափեն տական փըսնում ա* (Բ):

- Տափեն տակը ընցընել/(նի) մըննել

- 1. Անհետանալ: *Կավը տափեն տակըն ա ընցալ, ըրվամ չի* (Բ): 2. Մեռնել, թաղվել (գործածվում է որպես անեծք): *Տափեն տակը ընցընէ Վանին, վը՛խճարըս կուղացալ ա* (Բ): 3. Հողի տակ մնալ, հողով ծածկվել: *Շատ վախտ ա անց կէնում, էտ պալատը տափեն տակըն ա ընցընում* (Ձ):

- Տափերը ճըպըռօտել/չընգըռօտել/ պուք տալ - 1. Ցավից գալարվել: *Կընգանը ցավը վեր փըռնում ա, ըսքըսում ա տափերը ճըպըռօտելը* (Ձ): 2. Չարաչար աշխատել, տընել: *Սաղ օրը տափերը ճըպըռօտում ա, էլիա կարում չի տօնը պահէ* (Բ): 3. Աղոթագին խնդրել՝ աղոթել (մի բանի կարիքը խիստ զգալով, մի բան փափագելով): ... *Էն ա Հաջի Սայադը խուխու հէտի տափերը պուք տայիս* (ՀԱԲ, 15, 105): 4. Շատ փնտրել՝ որոնել: *Ըտըրանք իրը՛ք օր, իրը՛ք քըշեր տափերը պուք ըն տամ, ամմա էտ մարթին քըթէնում չըն* (Ձ):

- Տափերը տըրփտըրփել - 1. Անորոշության մեջ հայտնվել, մոլորվել, խաբխափել (հաճախ գործածվում է որպես անեծք): *Տափերը տըրփտըրփէ նա ըսկէտուրը, տի հարթնանը կըթօղին՝ ծէրքէրը ցօրտ ճո՛ր քըցի* (ՆԱԲ, III, 180):

- Տափերը քանդիլ - տեն Տափերը ճըպըռօտել:

- Տափը ընցընել - 1. տեն Տափեն տակը ընցընել: 2. Սաստիկ ամաչելուց չհամարձակվել մարդկանց աչքին երեւալ, սաստիկ ամոթահար լինել: *Առաջ հարթները վեր պըտրօնէն տըսնալիս ըն իլալ, տափըն ըն իլալ ընցընէլիս, միհէնգվա հարթները պատառ ա մընամ, թա պըտրօնէն ջընըղնէրէն նըստին* (Բ):

- Տափը թումբ անել - տեն Տափեն տակը ընցընել (2):

- Տափը ծակել, (նի) մըննել - տեն Տափը ընցընել:

- Տափը կ'ալ - տեն Տափեն տակը ընցընել (2): *Մը՛գ ուրուր անա հանօղին բալան մըռնէ, տափը կ'ալ* (ԼՂԲ, 42):

- Տափը կօխել - 1. տեն Տափը կօխել-տոն օնել: 2. տեն Տափումը տինիլ:

- Տափը կօխել-տոն օնել - Խիստ նախատել՝ հանդիմանել՝ անպատվել՝ ամոթանք տալ: *ժողովումը կալխօզնիկ-նէն նախագէն տափըն ըն կօխում-տոն օնում* (Ձ):

- Տափը կօտըրալ ա - Ասում են գետնին ընկած երեխաներին, որպեսզի սփռվեն եւ լաց չլինեն:

- Տափը (նի) մըննել - տեն Տափը ընցընել:

- Տափը (նի) մըտած(ը) - Անամոթ, անզգամ, անպատկառ: *Էտ տափը մըտածնէն կըզնըվալ ըն, մօրը աշկէն ըռըջին ըխճըկանը մօրթալ* (ԱԱ, 33):

- Տափը տըղ չըտալ (թա նըստե) - Դադար՝ հանգստություն չունենալ, հանգստանալու տեղ չգտնել, խիստ անհանգիստ լինել: *Էն պէնին յըրա Մարդիրօսը շատ ա կըզնըվալ, տափը տըղ չի տամ* (Ձ):

- Տափը քըցիլ - 1. Վայր զցել, ցած գլորել: *Կուլիէ յա տամ, ախպօրը տափը քըցիմ* (Ձ): 2. Դեն նետել, շարտել: *Էտ խանումը էնքան հարուստ ա ինում, վեր մին շօրը մէհէտ կը՛նում ա, տափը քըցիմ* (Ձ): 3. Բանի տեղ չլնել, անտեսել: *Դէ Մէլիքին հըրամմանը հո՛ւ կըկարի տափը քըցի...* (ՀԺՀ, V, 236): 4. տեն Տափը կօխել:

- Տափը քըցիլ-տոն օնել - տեն Տափը կօխել-տոն օնել:

- Տափ տալ - Որեւէ բան բարձր տեղից գլորվելիս, ուժով գետնին հարվածելով, վեր թռչել եւ նորից գլորվել: *Քարը տափ տալալ թուլոլ ա ըղնում, ըղնում ծօրը* (Բ):

- Տափ տըռնալ - Ավերվել, գետնին հավասարվել, ոչնչանալ: *Լէնգ Թէմուրը ուրան գօրքավը վեր շէն նի յար մըննում, էն շէնը տափ ար տըռնում* (Ձ):

- Տափումը տինիլ - Մեկի մահը ցանկանալ (գործածվում է անեծքներում): *Տափումը տինիմ Դուլգանին , խուխէս թակալ ա* (Բ):

- Տափ ու տըղնար պուք տալ - տեն Տափերը ճըպըռօտել:

- Տափ ու տըղնար տալ - տեն Տափերը ճըպըռօտել (4):

- Տըրփերան փուշի հըվաքել - տեն Փուշի հըվաքել:

- Տըրփերեն կ'ալ - 1. տեն Տափեն կ'ալ: 2. Դժգոհելով՝ փնթխնթալով աշխատել: *Հինչ ըս տըրփերէն կամ, խէ կարքէն չը՛ս կօրծ անում* (Ձ):

- Տըրփերեն յըկած(ը) - տեն Տափը (նի) մըտած(ը):

**ՏՄՓ - տեն ՏԵՓ:**

**ՏՄՓԱՆ (գրք. տափան)** - գ. Երկրագործական գործիք, որով հարթում են ցանած արտը, կոշտերը փշրում եւ սերմը հողով ծածկում: *Առաջ արտը վեր վրէլիս ըն իլնլ, տըփանալ ըն իլնլ տըփընէլիս (Բ):*

- Տափան անել - տեն ՏՄՓԱՆԵԼ:

**ՏՄՓ(Ը)ԼԱԿ (գրք. տափարակ)** - ած.

1. Հարթ, առանց խորդուբորդությունների, տափակ: *Տափլակ քըրծ ա Յըղնաքարը (2):* 2. փխբ. Ձանձրալի, ոչ սրամիտ: *Տափըլակ խուսկերք ա ասում (Բ):* 3. փխբ. հարդախ, ստոր: *Տափըլակ մարթ ա Աղնսը, սայաղ կաց (Բ):*

**ՏՄՓԿԱՆ/ՏՄՓԿԱՆ (ռուս. мяпка)** - գ. տեն ՔԱՆԹԱՆ: *Տանփկան յոր ա օնում, թառնանը տակը քանդում (2):*

- Տանփկան տալ - Այդ գործիքով հողը փխրեցնել: *Շըռերեն տակը ապան ամեն տարե տանփկան յա իլնլ տալիս (2):*

**ՏՄՔ (գրք. տաք)** - ած. 1. Տաքություն՝ ջերմություն տվող՝ սփռող՝ տարածող: *Մին տաք անրճի չի անում, թա ծոնը հանի (Բ):* 2. Ջերմությունը՝ տաքությունը սովորականից ավելի տաքացրած: *Վըննէրը տինում ա տաք ճիրին մաչին, յուրդանումը փըթթթորվում, քունավ ընցընում (2):* 3. Տաքացնող, ցրտից պատսպարող: *Տաք շօրէր ա կընում, քինամ ծըմակը (2):* 4. Որտեղ կամ երբ օդի ջերմաստիճանը բարձր է, ոչ ցուրտ: *Աշունքը վեր կամ ա, էտ դուշէրը թըռչում ըն, քինամ տաք յըրգիրեն (Բ):* 5. Չսառած, սովորական ջերմությունը պահած: *Շըրքը տինում ա մըսէն, տըսնում հանն տաք ա (2) 6. փխբ. Շուտ բռնկվող, դյուրաբորբոք: Տաք խասյաթ օնէ Տիրանը (Բ):* 7. փխբ. Բուռն, լարված, թեժ: *Կործէն տաք վախտըն ա (Բ):* 8. փխբ. Սիրալիր, ջերմ: *Կըծիքը տինում ա մօրը տաք տօշին, քունավ ընցընում (2):* 9. փխբ. Թարմ: *Տաք հաց ա, լըհա կարում ըս, կէր (Բ):* 10. Խիստ տաքացած, շիկացած: *Տաք ըրկաթավ ըտըրա մաշկը դըղմում ըն, պէց թօղում (2):* գ. 11. Շոգ, բարձր ջերմություն, տաքություն: *Տաքէն ամեն մարթ չի կարել տէմ կենա (Բ):* 12. Տաք եղանակ: *Տաքէրը վեր ըղնում ա, օգում ա պըրավէրկա անէ, տէսնա՝ կինին կենում ա՛, թա քացախ ա՛ տէռալ (ՀԱԲ, 15, 135):* 13. մ. Տաքացնելու՝ տաքանալու չափ, այնպես, որ չմրսի՝ չսառի: *Խուփէն տաք բիրի կըց տաս, վեր մըրսէ վէչ (Բ):*

- Տաք ճուր/ճիրէր - Հանքային տաք բուժիչ աղբյուր(ներ): *Քանքանք տաք ճիրէր շատ կա (Բ):*

- Տաք չի, գնդում ըս, թա ցօրտ ա - Մի բանի՝ Երեսույթի բացակայությունը դրա հակառակի առկայության տպավորություն է թողնում:

- Տաք տըղ - Լավ վարձատրվող՝ եկամտաբեր՝ պատվավոր պաշտոն՝ աշխատանք: *Հանրը շատ ա օգում՝ մին տաք տըղ տըղէն կօրծի տինի (Բ):*

**ՏԱՔԻՐ - տեն ՏԱՔԻՐ:**

**ՏԱՔԵՐ - տեն ՏԱՔԻՐ:**

**ՏԱՔԻՐ - տեն ՏԱՔԻՐ:**

**ՏԱՔԻՐ/ՏԱՔԻՐ/ՏԱՔԵՐ/ՏԱՔԻՐ/ՏԵՔԻՐ/ՏԵՔԵՐ (գրք. տալգր)** - գ. Ամուսնու եղբայրը կնոջ համար, տեգր: ... *Մին էրիշ տըղա յէ տըղա յա պէրալ, փըսակալ ուրան տանքու ըխճըկան յըրա (ՀԲ, 337):*

**ՏԱՔ-ՏԱՔ** - ած., մ. 1. Տաք վիճակում, հենց նոր կրակից վերցրած: *Տաք-տաք խըրավածը պիրում ըն, թօթէն արաղը տինում, քըփ անում (2):* 2. Շատ տաք: *Տաք-տաք ճուրը ածում ա կըլիէն, ըսպանում (2):* 3. Բուռն, բուռն կերպով լարված, գրգռված: *Առե էն հըրսընքէն տաք-տաք վախտը Մէլիք-Շահնազարը խըմէն ա, կիրմիրիս, ըսքըսէ տաք-տաք խօսէլը (2):*

**ՏԱՔՈՒԹՈՒՆ/ՏՈՔՈՒԹՈՒՆ (գրք. տաքութիւն)** - գ. 1. Արեւի՝ կրակի կամ այլ աղբյուրի արձակած ջերմությունը: *Իրըփէն տաքութիւնը էնքան շատ ա, կարում չընք, թա տանան տոն կանք (Բ):* 2. Մարմնի ջերմաստիճանի հիվանդագին բարձրացում, ջերմություն: *Խուխէն տաքութիւնը պիցըրանում ա, մարը խացախ ա քըսում ջանը (Բ):*

- Տաքութիւնումը խօսել - Կցկտուր՝ անկապ խոսել (բարձր ջերմություն ունենալու ժամանակ): *Վեր Ալիսանը ըսքըսում ա տաքութիւնումը խօսէլը, կընէգը դօխտուր ա ծէն տամ (2):*

**ՏԱՔՕՑ - տեն ՏԱՔ (11):** *Էս տաքօցէն կարում չընք տէմ կենանք (Բ):*

**ՏԵՊ/ՏԵԿ/ՏԵՅՊ/ՏԵՊ (գրք. տիկ)** - գ. 1. Կենդանիների, հատկապես այծի եւ ոչխարի ամբողջական հանված մորթու տուպրակ՝ գինի եւն լցնելու համար, տիկ: *Էրկու փնդ, կըլիէն՝ մին տէգ, տէգին կըլիէն՝ մին ճեղաց... (ԱՅ, 33):* 2. Մի տիկի տարողություն: *Ասըմ ա.- Օխտը տիման պէր, օխտը տէգ ճուր. վեր մին մըսիսալ պակաս ինի, կարել չըմ տոնս օնիս (ՀԺՀ, V, 424):*

- Տէգ՝ շինիլ - Ուռցնել, փքել: *Էնքան կէրալ ա, փօրը տէգ ա շինան (Բ):*

- Տէգ՝ տընալ - Ուռչել, փքվել: *Պօկը տէգ ա տընալ, էնքան ցօրտ ճուր ա խըմալ (Բ):*

**ՏԵՋ/ՏԵՋ/ՏԵՋ (գրք. տիգ)** - գ. 1. Բաշխերի կարգին պատկանող հավկթածե բարակ ու փոքրիկ միջատ՝ բույսերի, կենդանիների եւ մարդկանց մակաբույծ: *Շըրքը մըկնում ա, էտ տէգը կուռնըտական պուք տամ (2):* 2. փխբ. Մեկի կամ մի բանի հաշվին ապրող: *Դէ՛, Մանդին էլ տէգ ա, լի՛, ինքը կօրծ չի անում, ամմա ախաօրցը ըշխաղածը օտում ա (2):* 3. փխբ. Շատ փոքր բաւ: *Տաննին մըծէրը ճօկում ա, տըգէրը թօղում (2):*

- Տէգա մագ՝ խօգող - տեն Ասըղ մաշկօղ:

- Տէգըը քանդիլ - Մեկին միամտացնելով՝ մանրամասնությունները իմանալ՝ բացահայտել: *Էտ խուփէն խուսցընում ըն, տէգէրը քանդում (2):*

- Տէգ կօխած դանա - Կեղտոտ՝ փնթի մարդ: *Ասում ա.- Էտ տէգ կօխած դանան ա՛ մընացալ, վեր ինձ օգի (2):*

- Տէգ տընալ, նըստա կէնալ - տեն Նըստա կէնալ, պուք չըկնալ:

- Տէգ տընալ, պատան կէնալ - հեգն. Կյանքից կառչել, երկար ապրել (ծերերի մասին): *Սումբաթ դային տէգ ա տընալ, պատան կացալ (Բ):*

**ՏԵՋ՝ տեն ՏԵՋ՝:**

**ՏԵԼ** - Գործածվում է կապակցություն մեջ:

- Տէլին տալ - Զառանցել, անկապ՝ կցկտուր բաներ ասել: *Ուղթունանց մօտէ հիվանդը ըսքըսում ա տէլին տալը (2):*

**ՏԵԼԱՐ - տեն ՏԵԼԱՐ:**

**ՏԵԼԵԳ(Ը)ՐԵՅԿԱ - տեն ՏԵԼԵԳ(Ը)ԼԵՅԿԱ:**

**ՏԵԼԵՂԱՍ - տեն ԹԵԼԵՂԱՍ:**

**ՏԵԿ - տեն ՏԵԳ:**

**ՏԵՀԱԼ - տեն ՏԵՍԱԼ:**

**ՏԵՀԱԿԱԼ - տեն ՏԵՍԱԿԱԼ:**

**ՏԵՂ՝ (գրք. դեղ) - տեն ՃԱՐ (2, 3):**

- Տեղ տալ - տեն ՃԱՐԵԼ՝:

**ՏԵՂ՝ տեն ՏԵՂ՝:**

**ՏԵՂ՝ տեն ՏԵՂ՝:**

**ՏԵՂԱԿ՝ տեն ՏԵՂԱԿ՝:**

**ՏԵՂԱԿ՝ տեն ՏԵՂԱԿ՝:**

**ՏԵՂԱԿ - տեն ՏԵՂԱԿ:**

**ՏԵՂ-ՂԱՐԱՆ - տեն ՃԱՐ-ՃՈՐ:**

*Թաքավերը մարթիք ա դըրկըմ աշխարքիս էն ճընդէրը, վեր տեղ-դարման ճարին, ուրան ջանիլ-ջիվան տըղին մին ճար անին (ՀԺՀ, V, 580):*

**ՏԵՂԵԼ (գրք. դեղեմ) - տեն ՃԱՐԵԼ՝:**

**ՏԵՂԵՆ/ՏԵՂԵՆ/ՏԵՂԵՆ՝ (գրք. դեղին)** - 1. ած. Չվի դեղնուցի գույն ունեցող, դեղին: *Էտ ախճիգըն էլ վարին տեղէն շօրէր ար կընում (2):* 2. փխբ. Գունատ, դալուկ: *Ըտըրա իլնծըն էլ մին մաշված, տեղէն իրըսալ տըղա յար (2):*

- Տեղէն գաւառ - տեն ՋԱՆՈՐԱՆ:  
- Տեղէն խօսք/գաւառ - Վառ դեղին, ոսկեգույն: Տեղէն խօսք տանձ ա (Բ):  
- Տեղէն ծըտ - տեն ՏՈՂԱԾԾԵՏ:  
- Տեղէն ծըտ ըսպանօղ - Անխիղճ, անգութ: Իզէն տըղէն ծըտ ըսպանօղ ա, էն հինչ յէթիմ բիդի պա՛հէ (Բ):  
- Տեղէն կակա - տեն ՏԵՂԵՆ՝ (2):  
- Տեղէն ճիւղանուց - տեն ՏՈՂԱԾԾԵՏ:  
- Տեղէն ճիւղան - տեն Տեղէն խօսք: ՏԵՂԵՆ՝ - տեն ՏՈՂԵՆ՝:  
ՏԵՂԵՆ-ՏՈՂԱԾԾԵՏ - տեն ՏԵՂԵՆ՝ (2):  
ՏԵՂԵՆ - տեն ՏՈՂԵՆ:  
ՏԵՂԵՆԾԱՐ - տեն ՃԱՐ-ՃՈՒՐ: Թօթէն արաղը արաղ չի, դարաբաղցուց հըտէ տըղըճար ա (2):  
ՏԵՂԻՆ՝ - տեն ՏՈՂԵՆ՝:  
ՏԵՂԻՆ՝ - տեն ՏՈՂԵՆ՝:  
ՏԵՄ/ՏԵՄ - Կ. 1. Մեկի՝ մի բանի դիմաց՝ առջեւ՝ հանդէպ: Կամ ա, թաքաւէրին տէմ չօքում, ըսքըսում նաղլ անէլը (2): 2. Մեկի՝ մի բանի հակառակ՝ ընդդէմ: Ըզարէն տէմ ճար չի կա (2): 3. Ի վնաս մեկի՝ մի բանի, մեկի՝ մի բանի դէմ ուղղված: Ժողովումը Կանխին նախագէն տէմ ա խօսում (2): 4. Գ. Դիմացի՝ առջեւի տարածություն՝ տեղ: Էտ վախտը մին մարթ տէման տոա ա կամ (ՅԱԲ, 15, 138):  
- Տէմ անէլ - 1. Դեպի մեկի՝ մի բանի կողմը դարձնել՝ ուղղել: Թըվանգը տէմ ա անում բիդի ախաօրը, յըրա անում (2): 2. Մատուցել, առաջարկել, հրամցնել: Միժմանին խաղվալ լըցնում ա, տէմ անում դունդընէրէն (2): 3. Զետել, հպել: Զըղացպանը մին ծըճըք ճըղացէն քարէն տէմ ա անում, ճեղացը վըճնն անում... (ՆԼՂԺԲ, 134): 4. Որեւէ արգելքի առջեւ կանգնեցնել: Մէզ էս դարդին տէմ ընօղէն բալան մըճնէ (Բ): 5. Մեկի՝ մի բանի ուղղությամբ՝ առջեւ բռնել՝ պահել մի բան: Ըռնըթաթախ պիրում ըն մօրը տէմ անում (2):  
- Տէմը խաղ անել - Զոյություն ժամանակ սաղմը մեկի ներկայությամբ արգանդի մէջ շարժվել, որ իբր նշան է, թէ մանուկը այդ անձին կնամանկ: Խօխան մօրը փօրումը թաքաւէրին տէմը խաղ ա անում, մարը ուրխանում ա (2):  
- Տէմը խաղ չինիլ - Անհաղթելի՝ անկառավարելի լինել, արգելող՝ խանգարող չունենալ: Դէ՛, Թէվանըն էլ ճօկ մարթ ա իլնլ, ընդըրա տէմը խաղ չիլնլ (2):  
- Տէմը կ'ան/տոն կ'ան - Դիմավորել, ընդառաջ գալ, հանդիպել: Վեր շէնան մուտանում ա, թօռնէրը տէմըն ըն կ'ամ (2):

- Տէմ ըղնէլ/ինիլ - 1. Կանգ առնել, չշարժվել, չշարունակել: Խուսէլիս տէմ ա ըղնում, էլ կարում չի պէն ասէ (2): 2. Զանդիպել: Զըղէքը մին ծառու տէմ ա ընգնում, ասում.- Էս լիան կըտրիմ, քինան, էլ հօր ը՛մ հեռէ քինան (ՆԼՂԺԲ, 110):  
- Տէմ կէնալ - տեն ՏՈՒՄԱՆԱԼ:  
- Տէմ կըցընէլ - տեն ՏՈՒՄԱՆԱԼ:  
- Տէմ տալ - 1. տեն Տէմ անել: 2. տեն Տէմ տիկիլ:  
- Տէմ տիկիլ - Ստիպել, հարկադրել: Էտ կընէգը տէմ ա տիրալ, թա.- Յա՛յէս, յա՛ քու խօխատ, թա օգում ըս՝ մընամ, ըտըրան պիտի մօրթիս (ԱԱ, 77):  
- Տէմ օնէլ - տեն Տէմ անել:  
ՏԵՄԱՏԵՄ (գրք. դէմ ի դէմ, դէմ առ դէմ) - մ. Երես երեսի, դեմադէմ: Զը-շէրաւը օխծը գաւթնըմ ա, տըճնըմ, վըճի ուրան անա մըճ մին օխծ էն ա տէմատէմ կաղնած (ԶԺՅ, V, 129):  
ՏԵՄԱՆ(Ն)Ց/ՏԻՄԱՆ(Ն)Ց (գրք. ի դիմաց) - տեն ՏԵՄ:  
ՏԵՄԱՆԻԼ - տեն ՏԱՄԱՆԻԼ:  
ՏԵՄԱՆԻԼԻ - տեն ՏԱՄԱՆԻԼԻ:  
ՏԵՄԱՆ/ՏԻՄԱՆ (գրք. դիմախար) - 1. Գ. Նեցուկ, հեւարան: Էտ ծառըն ա պատէն տէմիար կէնում, թա չէ պարան կըկա (Բ): 2. մ. Դիմացից, դեմադէմ: Տէմիար մին արչ ա տոն կամ, Ավօն սըրտաճաք ա տըճնում (2):  
- Տէմիար անէլ/տալ - 1. Զետել, նեցուկ դնել: Խընծօրոն ճըղնէրէն տակէն փանդէր տէմիար ա տամ, վեր կուտըր-հատվին վէչ (Բ): 2. Նեցուկ դարձնել, հեւել, կըթնել: Զանլիգը տէմիար տալալ քինամ ա (Բ):  
ՏԵՄ-ՏԵՄԱՆ(Ն)Ց - տեն ՏԵՄԱՏԵՄ:  
ՏԵՅՊ - տեն ՏԵՊ:  
ՏԵՆ/ՏՈՒՆ - մ. 1. Այն կողմ: Պատառ տէն ըն քընում, տըճնում՝ կավը մին ծառու տակէ նըստած (2): 2. Զեռու, մի կողմ: Ասում ա.- Ծուլուղ տէն, Զանին փըսըկվէլի մըթլ օնէ (2): 3. Կ. Զետո: Զըշէրվա կէսանը տըճնը թաքաւէրին մըճ տըղէն քօնը տանըմ ա (ԶԺՅ, V, 16):  
- Տէն ածել - Մի կողմ թափել (իբրեւ անպետք բան): Տըրանա յէտը ժողովություն հուրը խըմիշկ ա քաշում, տանըմ ա տէն ածըմ (ՆԼՂԺԲ, 18):  
- Տէն անել - 1. Մի կողմ քշել, հեռացնել: Զուռին հիլլըննէն տէն ա անում, էլիա նըստում, վեր գաւթն կօրծէ (2): 2. Վտարել, վռնել: Ըտըրան թակում ըն, շէնան տէն անում (2):  
- Տէն ըղնէլ - 1. Մի կողմ՝ հեռու ընկնել: Ծըմըճնը կ'ոթանըն տէն ա ըղնում (2): 2. Զյուծվել, ուժասպառ լինել: Այան քանէ քինամ ա, տէն ա ըղնում (Բ):

- Տէն ընգած(ը) - 1. Զնչին՝ անպետք՝ անարժան (բան): Տէն ընգած մարթ ա Սաղին (Բ): 2. Ամենաքիչը, անկազն: Ասում ա.- Էս էծը տէն ընգածը հէկք մանէթ ածի (2):  
- Տէն կացէթ - Զեգնական արտահայտություն՝ ուղղված իրեն ոչ հատուկ կամ իր ուժերից վեր որեւէ բան անողին: Տէն կացէթ, Մարդին իրըճըտըճանէ տօն ա շինում (Բ):  
- Տէն կէնալ - 1. Մի կողմ քաշվել՝ հեռանալ՝ կանգնել: Տըճնում ա, վեր հարը կամ ա, ինքը տէն ա կէնում (2): 2. Ըստ ժամանակի՝ հեռանալ՝ անցնել: Ծըմըճնը վեր տէն ա կէնում, ծառէրը ըսքըսում ըն ծաղկէլը (Բ):  
- Տէն տալ - Մի կողմ անել՝ քաշել՝ լցնել՝ տեղափոխել: Թիյըճնը յօր ըն օնում, ծոնը տէն տամ (Բ):  
- Տէն տիկիլ - 1. Մի կողմ դնել, պահել: Ծողովուրդին փօշէրը ճօկում ա, տէն տիկում, վեր տա խուզէրէն (2): 2. Ետ գցել, խնայելով կուտակել՝ հավաքել: Այան ամմէն ամէս պատառ փոկ ար տէն տիկում՝ նըճ օրվա հըտէ (Բ): 3. Զաշվի չառնել: Կընէգ կա, մարթին ասածը տէն ա տիկում (2):  
- Տէն քըցիլ - 1. Նետել, շարտել, մի կողմ գցել: Էս ախկատը չիլը տէն ա քըցում, Էս խաղանիւր յէշում ա, տէնում՝ Աստված ուրան ըռաչին կաղնած (ՅԱԲ, 15, 123): 2. Ծատ էժան՝ ինքնարժեքից ցածր գնով վաճառել: Տըճնում ա, վեր մուշտարի չի կա, յըղէ կավը քըսան մընէթալ տէն ա քըցում, կամ տօն (2):  
- Տէն քինիլ - տեն Տէն կէնալ:  
ՏԵՆԱԿ/ՏԵՆԱԿ/ՏԱՆԱԿ/ՏՈՒՆԱԿ (գրք. դանակ) - Գ. 1. Կոթից եւ պողպատյա շեղբից բաղկացած կտրելու գործիք՝ դանակ: Էս մարթին ջըքումը մին լալ տէնակ ա ինում, տոա ա օնում, տամ նազիր-վէզիրին... (ՅԱԲ, 15, 84): 2. Որեւէ գործիքի կտրող մասը: Ըռննդին տէնակը քուռացալ ա (Բ):  
- Տէնակըն էլ ա ուրանը, տըմակըն էլ, հունցը օգում ա, կըտըրում ա - Բոլոր միջոցները իրենն են, գործի բնույթը ինքն է որոշում:  
- Տէնակը պըկավը քաշիլ - տեն ՄՕՐԹԵԼ (1):  
- Տէնակը պըկէն տէմ անէլ/տիկիլ - Բռնությամբ ստիպել, հարկադրել: Տէնակը պըկէն տէմ ըն օնում, ծին յըճ օնում (2):  
- Տէնակը վըսկընէն/պըկէն հըսնէլ/տէմ ըղնէլ - Այլեւ չկարողանալ համբերել, համբերությունը սպառվել: Մին օր էլ տէնակը վըսկընէն ա հըսալ, ժողօ-

վորաթը էլ տեմ չի կացալ, դիւշմաններէն  
նի յա ածալ շէնին յըրէ խըրամատնէն,  
մուրթօտալ (ԱԱ, 32):

- Տէնակը վըսկըռէն/պըկէն հըսը-  
նէլ/տէմ քըցիլ - Յամբերութիւնից հա-  
նէլ: *Խանը տէնակը վէր վըսկըռէն տէմ  
ա քըցիւմ, ժողովորթը բունտ ա պի-  
ցըրցընում (2):*

- Տէնակը տըմակումը քիսիլ - Գործը  
հաջողվել, հաջողության՝ բախտավո-  
րության հանդիպել: *Ըսլանէն տէնակը  
տըմակումըն ա քըցալ. կավը ճօխտակ  
ա ծընալ (Բ):*

- Տէնակը հորան կօթը կարել չի տն-  
շի - տէն Լամբը հորան տակէն իշմը չի  
տալ:

- Տէնակ թըխել - Դանակով հարվա-  
ծել՝ վիրավորել՝ սպանել: *Կըռվում ըն,  
Սուրենը տէնակ ա թըխում, ախաօրը  
ըսպանում (Բ):*

- Տէնակ թըխիս՝ արհեստ չի կաթել -  
Ասում են խիստ տխուր՝ հուսահատ՝  
վշտացած մարդկանց մասին:

- Տէնակ նըհաշ տալ - Դանակով  
սպառնալ: *Վէր տէնակ ա նըհաշ տամ,  
կօղը փախծում ա (2):*

- Տէնակ քաշիլ - 1. Դանակով մեկի  
վրա հարձակվել՝ սպառնալ: *Յօրը յըրա  
տէնակ ա քաշում... (2):* 2. տէն ՍՕՐ-  
ԹԵԼ (1):

- Տէնակ քըցիլ - Գուշակության ձեւ,  
երբ դանակը նետում են եւ նրա ընկած  
դիրքից ելնելով՝ գուշակություններ ա-  
նում: *Բախաջին ասմա.- էքից կըկաս՝  
տէնակ քըցիլ (2):*

- Տընակէն տակէն մընալ - Վիրահա-  
տության ժամանակ մեռնել: *Տանում ըն,  
վէր անպէցն անին, տընակէն տակէն ա  
մընամ (Բ):*

- Տընակու տակ ըղնէլ - Վիրահատու-  
թյան ենթարկվել: *Խըդճ Կիրիքօրը ըս-  
տարէ իրըք հըտ տընակու տակ ա ըն-  
գալ (Բ):*

ՏԵՆԱԿ - տէն ՏԵՆԱԿ:

ՏԵՆԳ - տէն ՂԱՆԳ:

ՏԵՊԵԳ/ՏԵՊԻԳ/ՊԵՊԵԳ/ՊԵՊԻԳ՝  
(գրք. բոկ) - 1. տէն ՎԵՆՆԵՏԵՊԵԳ: 2.  
ած. փխբ. Որեւէ բանում անհմուտ՝  
անտեղյակ, անգետ: *ՂԷ՝ Սեգին տէպեգ՝  
ա, ըշտըղա յա՞ գիւղում հօնծ անէլը (2):*

ՏԵՊԻԳ - տէն ՏԵՊԵԳ:

ՏԵՐ՝ - տէն ՏՈՐ:

ՏԵՐ՝ (գրք. դեռ) - տէն ՅԱՆԱՆ:

ՏԵՐԱԾ - տէն ՏՈՐԱԾ:

ՏԵՐԱՆԱԼ - տէն ՏՈՐԱՆԱԼ:

ՏԵՐՆԱԿ/ՏԱՆԱԿ (գրք. դառն) - 1. ած.  
Յուրահատուկ անախորժ համ ունեցող՝  
դառն: *Տէռնը տանծ ա քաղում, պիրում*

(2): 2. գ. Դառնահամ ուտելիք: *Էտ տէռ-  
նը հունց ըս ստում (Բ):*

ՏԵՐՆԱԿ-ՏԵՐՆԱԿ - ած. Բոլորովին  
դատարկ: *Տէռնը-տէրտակ տօն ա (Բ):*

ՏԵՍ՝/ՏՈՐ՝ - 1. մ. Այս կողմ: *Տէս ա  
յէշում, տըսնում էտ տըղէն, ասըմ.- Յէք  
ըստէղ (ՅԺՅ, V, 564):* 2. կ. Ի վեր, այդ  
ժամանակվանից սկսած մինչեւ այժմ  
(ժամանակ ցույց տվող բառերի բացա-  
ռականի հետ): *Էտ օրաց տէսըն էլ ըտը-  
ղէտ անըմը մընաս ա Սամէր ծլան դն-  
րանի (Սամէրին մըհած ծօր) (ԱԱ, 21):*  
ՏԵՍ՝ - տէն ՏՈՐ՝:

ՏԵՍԱԿ/ՏՈՐԱԿ (գրք. տեսակ) - տէն  
ԶՈՐՈՐԱԿ:

ՏԵՍՈՏԵՆ - տէն ՏԵՍ-ՏԵՆ:

ՏԵՍՆԱ - տէն ՏՈՐՆԱ:

ՏԵՍՆԱԼ - տէն ՏՈՐՆԱԼ:

ՏԵՍՆԱ(Ն)Թ - տէն ՏՈՐՆԱ(Ն)Թ:

ՏԵՍՆԱՍ - տէն ՏՈՐՆԱՍ:

ՏԵՍՆԱԿ/ՏՈՐՆԱԿ/ՏԱՆԱԿ (գրք.

դաղձն) - գ. Շրթնածաղիկների ընտա-  
նիքին պատկանող խոտաբույս՝ դաղձ:  
*Տէսնը լալ համ օնէ (Բ):*

ՏԵՍՆԱԿԱԼ - տէն ՏՈՐՆԱԿԱԼ:

ՏԵՍ-ՏԵՆ/ՏԵՍՈՏԵՆ/ՏՈՐՆԱ-ՏՈՐՆԱ/  
ՏՈՐՆԱԿԱԼ - գ. հվթ. Զանազան բաներ  
(ուտեստներ, ապրանքներ են): *Էտ կը-  
նէգըտ ըսկըտում ա վըսկալը տանը հէ-  
տէ տէսա-տէնա ինք օնէլը (ՆԼՂԺԲ, 29):*

ՏԵՍ ՈՒ ՃԱՆԱ(Ն)Չ/ՏՈՐ ՈՒ ՃԱ-  
ՆԱ(Ն)Չ - ած. Հանրածանոթ, հանրաճա-  
նաչ: *Տէս ու ճանանչ մարթ ա իլնլ Պըլը-  
Պոտին (2):*

ՏԵՍՈՒՏԵՆ/ՏՈՐՈՒՏԵՆ - մ. Այս ու  
այն կողմ: *Շատ տըստուտէն ա ման  
կամ, շատ ա ծըրալըմ... (ՅԺՅ, V, 80):*

- Տէսուտէն անէլ/ըղնէլ - 1. Այս ու այն  
կողմ ընկնել, թափառել: *Շատ ա տէ-  
սուտէն ըղնում, շատ ա ջօռ կամ, ամիս  
էտ մարթին քըթէնում չի (2):* 2. Ելք՝  
միջոց փնտրել: *Շատ տէսուտէն ընէլան  
յէտը վընչ մին պան կարում չըն անէն  
(ՆԼՂԺԲ, 100):* 3. Որոշակի չասել, խոս-  
քը ծամծմել: *Հինչ ըս տէսուտէն ըղնում,  
կարքէն անէ, տըսնամ՝ հինչ ա իլնլ (Բ):*

- Տէսուտէն քըցիլ - Մեկին այս ու այն  
կողմ գցել, թափառական դարձնել: *Հն-  
րը տըղէն տանան տոն ա քըցիւմ, տէ-  
սուտէն քըցիւմ (2):*

ՏԵՍԹ/ՏՈՐԵՍ (գրք. տես) - գ. Արտա-  
քին կերպարանք: *Վարթիթերին տէս-  
քան հայիլ-մայիլ կըտրած՝ մընըմ ա  
ըտըղ կաղնած (ԼՂԲ, 339):*

ՏԵՍԹԱԿ/ՏՈՐԵՍԱԿ - ած. Հաճելի՝  
դուրեկան արտաքինով, գեղեցիկ: *Տէս-  
քալ ախճիգ ա Հէղանը (Բ):*

ՏԵՎ - տէն ՂԵՎ:

ՏԵՏ - տէն ՏՈՐ՝:

ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝/ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝ (գրք. տես-  
րակ) - գ. Շապիկի մեջ կարած որոշ չա-  
փի մաքուր թղթեր՝ գրելու՝ նկարելու եւն  
համար, տետր: *Տէտըրակը պէնում ա,  
կիրում (2):*

ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝/ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝ (գրք. տատ-  
րակ) - գ. Աղավկների ընտանիքին  
պատկանող թռչուն՝ տատրակ: *Էրկու  
տէտրակ ա ըսպանում, յըտ տըռնում (2):*

ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝ - տէն ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝:

ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝ - տէն ՏԵՏ(Ո)ՐԱԿ՝:

ՏԵՐ (գրք. տեր) - 1. տէն ՏԱՐ: 2. գ.  
Հարգական կոչական բառ՝ մեկին դիմե-  
լու համար: *Կամ ա, թա.- Տէր Բախշի,  
Սէլիքը քըգ ծէն ա տամ (2):*

- Տէր Աստուծ - Սրտնեղության՝ զար-  
մանքի՝ երկմտանքի եւն արտահայտու-  
թյուն: *Տէր Աստուծ, էս կըռքըլը հիք ա՞  
պըրծընական, մէխկ ըն մէր ջիհիլնէն  
(Բ):*

- Տէր ըղօրմի ասէլ - տէն Ըղօրմի  
ասէլ:

- Տէր հայր - տէն ՂԵՐ:

ՏԵՐԻՏՈՐԱԿ (ռուս. *территория*,  
լատ. *territorium*) - գ. Ասիականագետված  
տարածություն՝ տարածք: *Սէծ տէրի-  
տօրյա յա ինում տըրան (ՀԱԲ, 15, 114):*

ՏԵՐՄԱԿ/ՏՈՐՄԱԿ/ՏԱՆՄԱԿ - գ.  
Հացաբույսերի մանրացրած ցողունը՝  
հարդը, որ աղյուսածեւ կապում եւ պա-  
հում են որպէս ձմեռվա անասնակեր:  
*Պիրում ա ախուռէն մաջին՝ տիրմանէն  
տակէն, լօխ թաղում (ՀԱԲ, 15, 99):*

- Տէրմանը մըլըքընէլ/քամուն տալ -  
տէն Թէփուռը մըլըքընէլ:

- Տըրմանու տակալ քիսոլ ճիւղ -  
Խորամանկ՝ ծածկամիտ մարդ: *Շատօ-  
րը տըրմանու տակալ քիսոլ ճիւղ ա (Բ):*

ՏԵՐՄՈՒՍ/ՏՈՐՄՈՒՍ (ռուս. *термос*,  
հուն. *thermos*) - գ. Հատուկ կառուցված-  
քով անոթ՝ լցվող նյութերը սառչելուց  
կամ տաքանալուց պահպանելու հա-  
մար, թերմոս, ջերմապահ: *Ապան ամ-  
մէն օր բաղը քիսնալիս տէրմուսը չայալ  
լըցնում ար, տանում (Բ):*

ՏԵՐՏԱԿ/ՏՈՐՏԱԿ/ՏԱՆՏԱԿ (գրք.  
դատարկ) - ած. 1. Ոչնչով չլցված, մեջը  
բան չպարունակող: *Մին տէրտակ յն-  
շիգ՝ ա յօր օնում, էտ վըսկէն ածում մա-  
ջը, կըղում (2):* 2. Թափուր, չբաղեց-  
րած: *Լօխ նըստօտում ըն, տէրտակ  
տըղ չի մընամ (2):* 3. Անմարդաբնակ,  
անբնակ: *Էտ ծըմակումը մին կուռուր  
տօն ա ինում, նի յըն մըննում էտ տօնը,  
տէսնում տէրտակ (ՅԺՅ, V, 269):* 4. Ան-  
բովանդակ, բովանդակագուրկ, դա-  
տարկամիտ: *Մին տէրտակ խօսկ ա  
ասում, հօրը կըզնըվընում (2):* 5. Ան-

նշան, չնչին: *Ջեջին արաղը թօթէն ըրաղէն քըշտէն տէրտակ պէն ա* (Բ): 6. Դատարկածեռն, ձեռնունայն: *Էտ տըղան տէրտակ անց ա կընաս, քիս տօն* (ՆԼԴԺԲ, 59):

- Տէրտակ ա - *տէն ՎԵՉԻՆՉ*:

- Տէրտակ ըրուրու(ն)ց ըրօրել - 1. Աննպատակ՝ անհիմն գործ բռնել: *Մինը կա վէջ՝ մէր Միխակէն ասէ. - Միհէնգ՝ հու վա՛ խաղուն քաղում, վէր տու քաղում ըս, հինչ ը՛ս տէրտակ ըրուրունց ըրօրում* (Բ): 2. Պարապ լինել, ոչինչ չանել: *Խալ-խը հծնձ ըն անում, մէր Ղանգարն էլ տէրտակ ըրուրուց ա ըրօրում* (Բ):

- Տէրտակ թօղ(ն)ել Ամեն ինչից՝ ունեցվածքից զրկել, կողոպտել: *Ղը-ջըղնէն ըտըրան պըլօկում ըն, տէրտակ թօղում* (Չ):

- Տէրտակ ծըրքավ - Առանց նվերի՝ կաշառքի եւն: *Ինքըն էլ տէրտակ ծէռ-քավ հըղէ յա ըղնում բըղի յերգինք՝* (ՅԺՅ, VI, 180):

- Տէրտակ կարաս - Դատարկամիտ՝ դատարկախոս մարդ: *Յըմբարցին տէրտակ կարաս ա, լօխճին գանիւն տա-նում ա* (Բ):

- Տէրտակ կըրասէն սասը պէցնօր կինի - Դատարկամիտ՝ դատարկախոս մարդիկ բարձր են խոսում:

- Տէրտակ մըհակէն շօն չի հանում - 1. Առանց պատճառի ոչինչ չի լինում: 2. Դատարկածեռն այցելողին ուշադրութեան չեն արժանացնում:

- Տէրտակ մընալ/նըստել - Ջուրկ՝ ձեռնունայն մնալ: *Տօնը-տըղը երվում ա, Փռռանձինը տէրտակ ա մընամ* (Չ):

- Տէրտակ ցուքավ - *տէն Ջուքը ծակ* (1):

- Տէրտակ տուպ(ը)րակէն/ըխօռէն էշ չի զըռռալ - *տէն Տէրտակ մըհակէն շօն չի հանիլ*:

- Տըրտակավ լիզը - *հեզն. տէն ՏԵՐՏԱԿ*:

ՏԵՐՏԱԿԱԲՕԾ/ՏԵՐՏԱԿԱԿԱԲՕԾ/ՏԱՐՏԱԿԱԲՕԾ/ՏԵՐՏԱԿԱԿԱԲՕԾ - *տէն ՏԵՐՏԱԿ* (6): *Խաղ ա անում, փօղը լօխ տանել տամ, տէրտակըբօշ տօն քըննում* (ՅԺՅ, V, 478):

ՏԵՐՏԱԿ-ՄԵՐՏԱԿ/ՏԵՐՏԱԿ-ՄԵՐՏԱԿ/ՏԻՐՏԱԿ-ՄԵՐՏԱԿ - *ած., մ.* Դատարկամիտ, ոչինչ չարժեցող: *Տէրտակ-մէրտակ խուսկէրք ա ասում* (Բ):

- Տէրտակ-մէրտակ խօսել/տոն տալ - Յիմար-հիմար խոսել, անմիտ բաներ ասել: *Սահանք ասում ըն. - Սա պըլ ա, յէր պիտի կէնա, տիրտըկ-մէրտակ տոն տա* (ՆԼԴԺԲ, 131):

ՏԵՐՏԱԿ-ԱԲԲԸԼԴԸՐԱՆ - *ած.* Ընչա-զուրկ, ծայրահեղ աղքատ: *Ուրերան մին*

*օր թաքավըրը հորան էտ հորի-փանր ըխճըկանը տամ ա էտ տէրտակ-սըբըլ-դըրան տըղէն* (ՅԺՅ, VII, 134):

ՏԵՐՏԱԿՈՒԲՕԾ - *տէն ՏԵՐՏԱԿԱԲՕԾ*:

ՏԵՐՏԵՐ/ՏԵՐՏԵՐ - *տէն ՂԵՐ*: *Ախ-ճիգը տըրնում ա ժամ, տըղան էլ տէրտէր, ծիյանքըն էլ գանգէր* (ՅԺՅ, V, 176):

ՏԵՐՈՒԹՈՒՆ (գրք. տերութիւն) - գ. Թագավորություն, երկիր, տերություն: *Շատ ա քինամ, խըրէգ ա քինամ, հըս-նում ա մին երոշ տերութիւն* (Չ):

ՏԵՓ/ՏՄՓ (*հ.ե. \*deph-, պրո. dāf*) - գ.

1. *տէն ՂԸՆԳՈԼԲԱԶ*: 2. Ճյուղերից հյուսած, վրան կտորից երես քաշած եւ մեջը թեփ կամ լաթեր լցրած կլորավուն եւ տափակ բարձ՝ փայտե կոթով կամ առանց կոթի, որի վրա դնելով բացված խմորագունդը՝ կպցնում են թոնրի պատին: *Տէփը ըղնում ա թոնրէն մաջը, երվում* (Չ): 3. Օրորոցում երեխայի տակ դրվող բարձիկ: *Լօլակը տէփին մաջին ըն տինում* (Բ): 4. Այգիներում փոքրիկ հյուղակ: *Մէր խաղվէն բաղումը մին տէփ ա իլան, բաղվանջին ըտըղ ար քօն ինում* (Բ):

- Տէփին տինիլ, պատան տալ - Գործը տեղը տեղին՝ կարգով՝ ճիշտ կատարել: *Ուստա Կոթին ամմէն հինջը լ՛ալ ա անում, տէփին ա տինում, պատան տամ* (Բ):

- Տէփը ճըղած (ղավալ) - Աշխույժ, համարձակ խոսող (մարդ): *Տէփը ճըղած զավալ ա մէր Խօրէնը* (Բ):

ՏԵՓ-ԶՈՒՐՆԱ - *տէն ՋՈՒՐՆԱ-ՂԱՎԱԼ*:

ՏԵՓՉԻ - *տէն ՂԸՆԳՈԼԲԱԶԻ*:

ՏԵՓՈՒՐ/ԹԸՓՕՐԱ (գրք. թափուր) - գ. 1. Միակտուր փայտե մեծ ափսե կամ սկուտեղ: *Մըսըրը իփում ըն, տէփուրէն շարում, ղունըղնէրէն տէմ անում* (Չ): 2. Կլոր փոքրիկ սեղան: *Տանը իլանը մին կարավաթ ա ինում, մին տէփուր, մին դաբըրէտկա* (Չ):

ՏԵՔԵՐ - *տէն ՏՄՔԻՐ*:

ՏԵՔԻՐ - *տէն ՏՄՔԻՐ*:

ՏՈՋ՝ - *տէն ՏԵՋ՝*:

ՏՈՋ՝/ՏՈՋ՝ - *տէն ՏՈՒ* (երեխաների մասին):

ՏՈՋՄՍԱՐ/ՏԻՋՄՍԱՐ - գ. Խոտի դեզի տեր: *Տըզանտարը կամ ա, տըսնում՝ տիգը երված* (Չ):

ՏՈՋՄՓՈՒ/ՏԻՋՄՓՈՒ (գրք. դիզափայտ (որտեղ փայտի դեզ կա) - գ. Խոտի դեզի կենտրոնում հաստատված փայտ՝ դեզը քանդվելուց պաշտպանելու համար: *Առանց տըզանտար տիգը քամէն ցըրըլ կըտա* (Բ):

- Տըզանտար տըռնալ - Ուղիղ՝ ձիգ կանգնել: *Յինչ ը՛ս տըզանտար տըռնալ, խէ նըստում չը՛ս* (Բ):

ՏՈՋՉ - ձ. 1. Տգգալու ձայնը: *Տըճգ, մին ճանջ կամ ա, ըտըրա կըլիէն վէր կամ* (Չ): 2. *Ֆիխք*. Փոքր երեխային լացելու մղող ձայն: *Վէր ասում ա՛ տըճգ, խօխան լաց ա ինում* (Բ):

- Տըզգ անել - *տէն ՏՈՋՉԱԼ*:

ՏՈՋՉԱԼ (գրք. տգգամ) - չք. 1. Տգգոց հանել: *Էտ վախտը մին էլ ա տըսնում մին ճանջ տըզգալավ ակուշկավը Նի մըտավ* (ՅԺՅ, V, 173): 2. *Ֆիխք*. Լալ, թնձկալ (երեխաների մասին): *Խօխան տըզգամ ա, մարը փըռնում ա թակում* (Բ):

ՏՈՋՉԱՆ՝ - գ. Վայրի տանձ կամ խնձոր: *Տըզգանավ թօրբան լըսնում ա, կամ տօն* (Չ):

ՏՈՋՉԱՆ՝ - *ած.* Տգգացող, տգգոց հանող: *Տըզգան ճանջ ա* (Բ): 2. *Ֆիխք*. Լալկան, նվկան (երեխաների մասին): *Տըզգան խօխա յա Արտօն* (Բ):

ՏՈՋՉՈՑ(Ը)ՆԵԼ - 1. *տէն ՏՈՋՉԱԼ*: 2. *Նք.* ՏՈՋՉԱԼ-ի:

ՏՈՋՉՕՆ - գ. 1. Ճանճերի՝ մեղվի եւն թռչելուց թեւերի թրթռումից առաջացող ձայնը: *Ճընջէրէն տըզգօնը մէգ քունը-հարամ ըրավ* (Բ): 2. *Ֆիխք*. Երեխաների միալար լացի ձայնը: *Յարը թա. - Էտ խոփէն տըզգօնը կըտըրցըրէք* (Չ):

ՏՈՋՉՕՑ - *տէն ՏՈՋՉՕՆ*:

ՏՈՋԵԼ - *տէն ՏՈՒԵԼ* (երեխաների մասին):

ՏՈՋՈԹԵՎԵԼ/ՏԻՋՈԹԵՎԵԼ - չք. Կուչ գալ, կծկվել (ցրտից, հիվանդությունից եւն): *Յավէրը տըզըթէվալ ըն* (Բ):

ՏՈՋՈՎԱՎԱ/ՏԻՋՈՎԱՎԱ - *տէն ԹԸՍՈՎԱՎԱ*:

ՏՈՋՈՎՈՋԻ/ՏԻՋՈՎՈՋԻ - *տէն ԽՈՒՐՂՄ՝ՍԻՐՈՂՄ՝*:

ՏՈՋՎՈՋԱԼ - *տէն ՏՈՋՏՈՋԱԼ*:

ՏՈՋՎՈՋԱՆ - *տէն ՏՈՋՏՈՋԱՆ*:

ՏՈՋՎՈՋՑ(Ը)ՆԵԼ - *տէն ՏՈՋՏՈՋՑ(Ը)ՆԵԼ*:

ՏՈՋՎՈՋՕՆ - *տէն ՏՈՋՏՈՋՕՆ*:

ՏՈՋՎՈՋՕՑ - *տէն ՏՈՋՉՕՑ*:

ՏՈՋՏՈՋԱԼ/ՏՈՋՎՈՋԱԼ - *տէն ՏՈՋՉԱԼ* (շատերը կամ շատ անգամ):

ՏՈՋՏՈՋԱՆ/ՏՈՋՎՈՋԱՆ - *տէն ՏՈՋՉԱՆ՝*:

ՏՈՋՏՈՋՑ(Ը)ՆԵԼ/ՏՈՋՎՈՋՑ(Ը)ՆԵԼ -

1. *տէն ՏՈՋՏՈՋԱԼ*: 2. *Նք.* ՏՈՋՏՈՋԱԼ-ի: ՏՈՋՏՈՋՕՆ/ՏՈՋՎՈՋՕՆ - *տէն ՏՈՋՉՕՆ*:

ՏՈՋՏՈՋՕՑ/ՏՈՋՎՈՋՕՑ - *տէն ՏՈՋՏՈՋՕՆ*:

ՏՈՋՈՒԼԻ(Գ) - *տէն ՏՈՋՈՒՐԻ(Գ)*:

ՏԸԶՈՒՐԱԿ - տեն ՏԸԶՈՒՐԻԻ(Գ):  
 ՏԸԶՈՒՐԻԻ(Գ)/ՏԸԶՈՒՐԱԿ/ՏՈՒՐՈՒՐԻԻ(Գ)/ՏԸԶՈՒՐԻԻ(Գ) - գ. 1. Գյուղական փողոցի ճրագ: Տըզուրիքը նի յա կըցընում, յոր օնում, նի մընում կումը, տըսնում կավը ծընած (2): 2. Կիսք. Աղոտ լույս արծակող լուսավորության աղբյուր, աղոտ լույս: Էս էլ հո լամբ չի, տըզուրիք ա, լի (Բ):  
 - Տըզուրիք անել - Աղոտ կերպով լուսավորել՝ լույս տալ: Էս լամբը տըզուրիք ա անում (2):  
 ՏԸԶՕՏԷԼ/ՏՈՒԶՕՏԷԼ - տեն ՏԸՈՏԷԼ:  
 ՏԸՊ՝ - տեն ՏԷՊ:  
 ՏԸՉ՝ - տեն ՏԷՉ՝:  
 ՏԸՉ՝ - տեն ՏԸՉ՝:  
 ՏԸՉՆԸ - տեն ՏԸՉՉԱՆ՝:  
 ՏԸՉՆԱԼ - տեն ՏԸՄՆԱԼ:  
 ՏԸՉՆԸՎԱԼ - տեն ՏԸՄՆԸՎԱԼ:  
 ՏԸՂ՝/ՏԸՂ՝/ՏԸՂ՝ (գրք. տեղ) - գ. 1. Տարածություն: Պատահ տըղ վեր քիսամ ըն, մին պառավ մարթ ա ջիհում (2): 2. Որեւ բանով բնորոշվող վայր: Աշանըն էլ կիսու տեղ ա (ՀԱԲ, 15, 125): 3. Մեկի՝ մի բանի գտնվելու վայրը: Օջափն էլ ուրթում ըն կերալ, ճաք-ճաք ըն յեկալ, թա.- Տեղը գիւղում չընք (ՀԺՀ, VI, 27): 4. Մեկի՝ մի բանի հատկացված վայր: Նծքնը էլիա կանջում ա, կամ տեղը (ՀԺՀ, V, 280): 5. Որեւ առանձին մաս՝ հատված՝ կտոր: Մըսէն լավ տըղերան կըտօրում ա, խըրավում (2): 6. Որեւ մեկի գրաված դիրքը հասարակության մեջ՝ ընտանիքում են: Ընըմը ուրան օժժավ ինիլնվը առաջի տըղը Սամսօնըն ա (Բ): 7. Պաշտոն, աշխատանք: Պեցուր տըղ ա կործ ա-նում Մաշինկին տըղան (Բ): 8. Անկողին: Տեղերը վեր ըն քըցում, քօն ինըմ, Պի-ծուն ըլկերեն քօն չի կամ (ՆԱԲ, 30): 9. Բաց՝ ազատ տարածություն, միջոց: ...Տօնըն էլ քըմական նըհըտ ա ինում, տոն կանի տըղ չի ինում (ՀԺՀ, VI, 270): 10. Մաս, բաժին: Վըրսեն մեւը հենգ տըղ կէս ըն անում (2): 11. Մի բանից մնացած հետք: Յարան հիշկան էլ սըղանա, մին ա, տըղը մընա ա (Բ): 12. Նշված՝ նշանակված վայր: Ըտըրանք ասած վըխտեն կամ ըն էտ տըղը (2): 13. Միջավայր, հասարակություն, հասարակական վայր: Պառավը ասում ա.- Այ բալա, ըստըղ լօխ կօղըր ըն, էս քու տըղըտ չի (2): 14. Հիմք: Հանց քամէ ըրալ, վեր քըրծը տըղան պուք յըկալ (Բ): 15. Պաղար առնելու՝ գիշերելու վայր, իջեան: Մին տըղ չըն քըթենում, թա քըջերը կենան (2): 16. Կ. Փոխարեն, փոխանակ: Միհենգվա ջիհիլենն ու-

րանց հորանցը քծմաք ընէլին տըղ, սաղ օրը հըպարապ շօռ ըն կամ (2):  
 - Տըղ անել - Տեղավորելու՝ տեղավորվելու համար տեղ բաց անել: ...Աղվէսը կիլիկն ասում ա.- Ղէ վանքումը տըղ ըրա, յէս էլ նի մըննէմ (ՀԺՀ, VII, 227):  
 - Տըղան յըր կէնալ/տոնրոն կ'ան - Որեւ բանի ձեռնամուխ լինել, որեւ բան ձեռնարկել (հիմնականում գործածվում է ժխտական կամ հարցական ձեռնով): Ընումը լօխ կօրծ ըն անում, մեր Արտա-շըն էլ ըսկի տըղան յըր չի կենում (Բ):  
 - Տըղան յըր կէնօղը - Ամեն մարդ, պատահական անձնավորություն: Ղէ Ռուբէնը հինգ բաղվանչի. տըղան յըր կէնօղը նի յա մըննում բաղը, կոտորուն անում (Բ):  
 - Տըղավը մին - Իր ողջ էությանը, ամբողջովին: Էս էլ հօ ցօրէն չի, տըղա-վը մին վըսկէ յա (Բ):  
 - Տըղավը մին կըրակ տըռնալ - Ջանք չխնայել, բոլոր միջոցները կիրա-ռել: Էտ մարթը մըտածում ա, ասում.- Վըր յէս տըղավըս մին կըրակ էլ տըռ-նամ, մինչէլ լուսը իծծուն մէխ էլ չըմ կարէլ կըտրէմ... (ՀԺՀ, VII, 199):  
 - Տըղավը մին վըսկէ տըռնալ - Մեծ արժեք ներկայացնել, շատ թանկարժեք լինել: Տըղան ասում ա.- Վեր տըղավը մին վըսկէ էլ տըռնա, յըս էտ կոտղա-ցած ըպրանքան մուտանալ չըմ (2):  
 - Տըղաց անել - 1. տեն Տըղը հըսցընել: 2. Ամուսնացնել: Գիւլին տըղէն ա ըխճը-կանը տըղաց ըրալ, ըրխընացալ (Բ):  
 - Տըղաց ինիլ - 1. տեն Տըղը հըսնել: 2. Ամուսնանալ: Հանքուն կուճի տըղան էլ տըղաց իլնվ, տօն տըռնալ (Բ):  
 - Տըղ գիլծը - Ուրիշներին հարգող՝ օգնող, երախտապարտ: Տըղ գիլծը մարթ ա Մըրքըրան (Բ):  
 - Տըղէն անընալ - 1. տեն Տըղավը մին: 2. տեն Տըղը տըղէն:  
 - Տըղէն տակը ըղնել - Անկողնային հիվանդ դառնալ: Մին օր էլ էտ թաքա-վերը տըղէն տակըն ա ըղնում (2):  
 - Տըղէն տակը քըցիլ - Անկողնային հիվանդ դարձնել: Էս ցօրտը շատ մար-թու տըղէն տակը կըքըցի (Բ):  
 - Տըղը անել - Տեղը որոշել՝ իմանալ: Տըղը անում ա, քիսամ մին լավ ծի ինք օնում (2):  
 - Տըղը գիլնալ - Գնահատել, հարգել: Տըղան վեր ուրան մօրը տըղը գիլնաց վէջ, էն հինչ տըղա՞ (Բ):  
 - Տըղը դինջ կէնալ - տեն Ղինջ կէնալ:  
 - Տըղը ըղնել - տեն Տըղը կ'ան:  
 - Տըղը ընգած տըղը - Հարկ եղած

դեպքում: Տըղը ընգած տըղը մինը ինում չի, թա քծմաք անէ (Բ):  
 - Տըղը թըխծընել - տեն Տըղը պընղըց(ը)նել:  
 - Տըղը թօղ(ն)ել - 1. Անմիջապես մեռցնել՝ սպանել: Գիւլն տամ ա ճը-կատան, տըղը թօղում (2): 2. Անմիջա-պես ազդել՝ ներգործել՝ բուժել: Ասում ա.- Էս ճարը խըմէ, կըլխացալըտ տըղըն ա թուղյական (2):  
 - Տըղը ինիլ - 1. տեն Ուրան տըղը ինիլ: 2. Հարմար՝ պատշաճ լինել, արժանի լինել: Քծմաք ընղէն Աստուծ հիշկան քծմաք անէ, տըղըն ա (2):  
 - Տըղը լէն - Նյութապես ապահով, ապրուստի միջոցներով ապահովված: Ախճիքը թա.- Մ մար, իմ տըղըս լէն ա, արխային կա՞ց (2):  
 - Տըղը լինանալ - Ապրուստի միջոց-ներն ավելանալ, ապահով կյանք ստեղծվել: Մին հարուստ ախճիք ա օգում, տըղը լինանում ա (2):  
 - Տըղը լինըց(ը)նել - Ապրուստի մի-ջոցներն ավելացնել, ապահով կյանք ստեղծել: Ըտի նախըրջուն տըղան էտ պալատումը տըղը լինըցընում ա, թա-քավերին ըխճըկանը նըհըտ լավ ապը-րում (2):  
 - Տըղը ծանղըր ինիլ/կէնալ/ նըստել - 1. Իրեն լուրջ պահել, անմտություն՝ թեթեւություն չանել: Անըս ա՛ պառավ մարթը տըղը ծանղըր կըկէնա, միհէնգ-վա պըռըվնէն ջիհիլներան բէթար ըն (Բ): 2. Մի տեղ ամուր հաստատվել, հեռանալու՝ լքելու մտադրություն չունե-նալ: Մէլիքըն ասում ա.- Քըճքէ խանէն ըսըճքէ, վեր մուսը մըր տըղը ծանղըր ընք նըստալ, մուսը մեր վըղան տոնս յըկօղը չընք (2):  
 - Տըղը կ'ան - 1. Հարմար առիթը ներ-կայանալ, դրություն ստեղծվել: Լըլիա վեր տըղըն ա կամ, Շըմավօնը ըրած լիվօթունը Սիմօնէն իրըսալըն ա կամ (Բ): 2. Իր նախկին վիճակին վերադառ-նալ, դուրս ընկած մասը տեղը գցվել: Սընըխչին հիշկան անում ա, ըտըրա տոնս ընգած վըննը տըղի չի կամ (2):  
 - Տըղը հարգանկ - տեն Տըղը լէն:  
 - Տըղը հըրգանկ(վ)ել - տեն Տըղը լինանալ:  
 - Տըղը հըրգընց(ը)նել - տեն Տըղը լինըց(ը)նել:  
 - Տըղը մէխել - Իր տեղում պահել, անշարժ պահել: Կօղէն վիզան փըռնում ա, տըղը մէխում (2):  
 - Տըղը մէխվել - Իր տեղում մնալ, անշարժ մնալ: Արջը վեր կօռնում ա, Սար ամին տըղը մէխում ա (Բ):  
 - Տըղը մընալ - 1. Անմիջապես մեռ-

նել՝ շուկա փչել: Ուստան ամմենափիս, աղու ճարը շինում ա, վեր մարթ լիհան լուգին նի տալըն ըբանտ տըղըն ա մընամ (ՅԺՅ, VII, 51):

- Տըղըն նըղ - Նյութապես անապահով, դժվար վիճակում: Ասում ա.- Աստուծ, տըղըն նըղ ա, կարում չըմ խոխեքըս պահիմ, մին ճար ըրա՛ (2):

- Տըղըն նըղանալ - Ապրուստի միջոցները սպառվել, դժվար կացության մեջ ընկնել: Մարթ, վեր տըղըն նըղանում ա, Ըստուծեն մըղըն ա քըցում (Բ):

- Տըղըն նըղըց(ը)նել - Ապրուստի միջոցներից գոկել, դժվար կացության մեջ դնել: Էս կըղըվը շատ մարթու տըղ ա նըղըցըրալ (Բ):

- Տըղըն նըստել - 1. Վերջ տալ, այլևս չշարունակել: Զարը ասմա.- Տըղընտ նըստե՛, տու հծնձ անօղ չըս (2): 2. Մեկին փոխարինել, պաշտոնը գրավել: ... Ննգիրը օգում ա, վըր թաքավըրեն ըսպանե, տըղըն նըստե (ՆԼԵԺԲ, 63):

- Տըղըն նըստըց(ը)նել - 1. Ընդհատել, չթողնել, որ շարունակի: Ժողովեն վախտը խուզարանը օգում ա ինքըն էլ խօսե, նախագան տըղըն նըստըցընում ա (2): 2. Մեկի փոխարեն՝ պաշտոնում մեկ ուրիշի նշանակել: Ըստի թաքավերին թախտան վեր ըն պիրում, էտ մարթին տըղըն նըստըցընում (2):

- Տըղըն նի մըն(ն)ել - 1. Անկողին մտնել, քնելու պատրաստվել: Նի յա մընում տըղըն, բուրդան մին ծըկըթոն ա ըսկանում (2): 2. տեն Տըղըն կ'ալ (2):

- Տըղըն ընցընել - Պիտանի՝ պետքական լինել, արդյունք տալ, հաճույք պատճառել են: Էս խըրավածը լ'ալ տըղըն ընցալ (Բ):

- Տըղըն ու տըղըն - 1. Իսկույն, անմիջապես: Օխը կըծես ա, ախճիգը տեղըն ու տեղը մընես ա (ԲՅԲ, 163): 2. Զենց նույն տեղում: Զեյրանը վեր ըն քըցում, մաշկում, տըղըն ու տըղըն էլ խըրավում, քըփ անում (2):

- Տըղըն պենդ նըստել - տեն Տըղըն պընդըց(ը)նել:

- Տըղըն պեց անել - տեն Տըղըն քըցիլ (1):

- Տըղըն պընդըց(ը)նել - Որեւ տեղում վայրում դիրքում պաշտոնում են հաստատապես հիմնավորվել: Տահանք խտի հընում ըն Զամլիբե, ըտըղ տըղընըն պընդըցընում (ՅԺՅ, VII, 190):

- Տըղըն պիրիլ - 1. Կարգի գցել, սարքել, թերությունները՝ պակասությունները լրացնել, վերջնական տեսքի բերել: Ուստան կամ ա, տըղընըն ա մըղընկեն էլ տըղըն պիրում, փուլը յոր օնում, քինամ (2): 2. Զիշել, ճանաչել:

Զարը շատ ա ինում պըռաված, տըղան տըղըն չի պիրում (2):

- Տըղըն տալ - 1. Փոխարինել: Վեշ մին հընգեր ախպորը տըղըն տալ չի (2):

2. Մի բանի դիմաց վճարել՝ փոխատուցել: Զօբանը Զըվենին կավը կուրցըրալ, տըղըն հենգ վըրճար տըղալ (Բ):

- Տըղըն տաք - տեն Տըղըն լեն:

- Տըղըն տերտակ մընալ - 1. Մահանալ: Ըրշակեն տըղըն էլ տերտակ մընաց, ըղօրմի ընղըրան (Բ): 2. Փոխարինող չլինել: Ուստա Կարօն քօջից, տըղըն տերտակ մընաց (Բ):

- Տըղըն տըղեն - 1. Կարգին, կանոնավոր, ինչպես որ պետք է: Վեր ք'ունում ա, տընսում՝ ամեն հինջ տըղըն տըղեն ա, կամ ա... (ԱԱ, 87): 2. Ամենայն մանրամասնությամբ, կետ առ կետ: Խօխան հօրը տըղըն տըղեն լօխ պատմում ա (2):

- Տըղըն տըղ չըտալ (թա նըստե) - տեն Տափը տըղ չըտալ: Էս կընեգը սաղ օրը տեղը տեղ չի տամ, թա նըստե (ՅԺՅ, V, 411):

- Տըղըն տինիլ - 1. Վերցրածը կրկին իր տեղում գետեղել: Կօղը փուշմանում ա, ապըրանքը պիրում, տըղըն տինում (2): 2. Մեկին մի բանի փոխարեն ընդունել՝ կարծել: Թաքավերին աշկերը լ'ալ չի ինում տընալիս, ըտըրան ինում Նօք'արեն տըղըն ա տինում (2): 3. Զարկ եղած պատասխանը տալ, շշպել: Զարթըն կըզնըված կամ ա, ըսկըսվօրը տըղըն տինում (2):

- Տըղըն տիտիգ՝ անել - հեգն. տեն Տըղըն նըստել:

- «Տըղընտ ծօխ ա, յըր կաց, էն դօլեն/ տեն նըստե՛» ասել - Թեթեակի հանդիմանել: ... Մին փիս պենու խառնըվում չար, հան մին մարթու ասած չար, թա.- Տեղընտ ծօխ ա, յէր կաց, տեն նըստե՛... (ՅԺՅ, VI, 177):

ՓՕՇ (գրբ. *փուշ*) - գ. 1. Որոշ բույսերի վրա գտնվող կոշտ ու սրածայր հավելված: *Ցնքին փօշը մաննըս ծակալ ա* (2): 2. Ձկան բարակ՝ սրածայր ոսկոր: *Ծուկնէն փօշը մընացալ ա պըկէն* (Բ): 3. Ոգնու մորթը պատող ասեղնածե ստեղ: *Կօզնուն փօշը վեր ինի վէջ, կօզնին կարէլ չի ապըրէ* (2): 4. *տեն* ԽԱՐՏ: 5. *փխբ*. Ասվում է խիստ՝ մռայլ՝ չար մարդու մասին: *Իզէն հօ ըսկէտուր չի՞, փօշ ա, փօշ* (Բ):

- Փուշերէն անէլ - 1. Խստություն բանեցնել: *Ըսկէտուրը շատ ար փուշերէն անում, կուճուր հարթը տէմ չար կենում* (2): 2. Հակաճառել, իլու կերպով չենթարկվել: *Միհէնգվա հարթները լըհա վեր հարթն ըն կամ, ըսքըսում ըն փուշերէն անէլ* (2):

- Փուշերէն-թըվերէն անէլ - *տեն* Փուշերէն անէլ:

- Փուշերու լըրա նըստած ինի/նըստէլ - Խիստ անհանգիստ լինել: *Քըշեր տըճալ՝ հնիլ ապան ծըմական կնիլ, այլա էն ա փուշերու լըրա նըստած* (Բ):

- Փօշերը տնու օնէլ - *տեն* Փուշերէն անէլ:

ՓՕՇՄԱՆ - *տեն* ՓԷՇՄԱՆ:

ՓՕՇՏ՝ - *տեն* ՓՈՒՇՏԱ:

ՓՕՇՏ՝ (ռուս. *почта, լեհ. poczta, իտ. posta*) - գ. 1. Ծանոթների՝ նամակների՝ դրամի են առաքումն ու ընդունումը վարող կապի հիմնարկ, ինչպես նաեւ այդ հիմնարկի շենքը, փոստ: *Առաջ ամմէն շէնում էլ փօշտ ա իլնի* (Բ): 2. Այն, ինչ որ առաքված կամ ստացված է կապի հիմնարկի միջոցով: *Փօշտը ըստանում ըն, ամմա էտ նամակը մաշին չի իննում* (2):

- Փօշտու թընըկաման - Անբարոյական կին: *Ծատորը գողնում չի, վեր իրան կընէքը փօշտու թընըկաման ա* (Բ):

- Փօշտու ճօրէ - Շատ չարչարվող մարդ: *Փօշտու ճօրէ յա մէր Համօն* (Բ):

ՓՕՇՏԱԼ՝ՕՆ - *տեն* ՓՕՇՏԱԼԸՆ:

ՓՕՇՏԱԼԸՆ/ՓՕՇՏԱԼ՝ՕՆ (ռուս. *почта-малень, իտ. postiglione*) - գ., ած. Փոստատար: *Տա իրան փօշտալ՝օն լըղօնէգին մին սօր ա տամ, դարկըմ* (ՀԺՀ, V, 128):

ՓՕՇՏԱԼԱՆԱ - *տեն* ՓՕՇՏ՝ (1):

ՓՕՇՈՒՏ (գրբ. *փշուտ*) - ած. Փշեր ունեցող, փշերով պատված, փշոտ: *Գողը փօշուտ ծաղէք ա* (Բ):

ՓՕՉ (պրս. *pūč*) - ած. 1. Մեջը դատարկ, սևամեջ: *Մէր հըրյաթումը մին մըժ, փօջ թուրէլ յա իլնի* (Բ): 2. *փխբ*. Անիմատ, անհեթեթ: *Փօջ խօսկէրք ա ըտըրա ըսքնէն* (Բ): 3. *փխբ*. Դառնություններով ու տառապանքներով լի: *Փօջ աշխարք ա* (Բ): 4. *փխբ*. Փտած, փչացած: *Ըխպիրան տէնը էրկու ծառը կա՛տակընէն փօջ* (ՀԺՀ, V, 372): 5. *ած.*, գ. Անպիտան, սրիկա, անզգամ: *Էրկու տըղա օնէ, ճօխտը՝ փօջ* (2): 6. գ. Թերություն, արատ (գործածվում է հիմնականում հոգևակի ձեռով): *Ըտըրա փօջէրը շատ ա* (Բ):

- Փօջ անէլ - Փչացնել, անպետքացնել: *Էնքան ապըրանքը թօղից թօռէն տակէն, փօջ ըրալ* (Բ):

- Փօջերը պէց անէլ - Մեկի թերությունները՝ զաղտնիքները են բացահայտել: *Աղվէսը կամ ա, թան կընգանը քըշտէն փօջէրը պանց անէ, թաքավերը թօղում չի...* (ՀԺՀ, V, 628):

- Փօջերը պէց ինիլ - Մեկի թերությունները՝ զաղտնիքները են բացահայտվել: *Էտ կընանէքը տըճանում ըն, վեր իրանց փօջէրը պէց ա ինում, լը՛տ քննում ըն Ըստուճէն վը՛տքը...* (ԱԱ, 87):

- Փօ՛ջ, թա տըռօ՛գ - Խաղատեսակ: *Խօխէնքը փօ՛ջ, թա տըռօ՛գ ըն խաղ անում* (2):

- Փօջ իլնծ - *տեն* ՓՕՉ (5): *Էքսը մարթը, կընէքը, խօխէնքը յէր ըն կէնում, թան քինան, էս փօջ իլնծէն թօղում չըն* (ՀԺՀ, V, 499):

- Փօջ ինիլ - Փչանալ, անպետքանալ: *Արաշտ ըրալ, բարը սաղ փօջ իլնի* (2):

- Փօջ ճըղուպուր/պուպու - *տեն* Մաջը փօջ ճըղուպուր (ՄԱԶ-ի տակ):

ՓՕՉԻԳ/ՓՈՒՉԻԳ - գ. 1. Միզապարկ, միզափամփուշտ: *Ըփկարէն փօջիգը նապէցալ լըն ըրալ* (Բ): Թռչունների կերակրափողի լայնացած պարկածե մասը: *Պիրում ա էրկու միսի մօրթում, փուշիգնէն տըրըզընում, ծուկներէն կապում* (ՀԱԲ, 15, 94): 3. Մարմնի վրա գոյացած ուռուցք՝ պալար: *Պըկէն տակէն մին փօջիգ ա տնու յը՛կալ* (Բ): 4. Պղպջակ: *Կինին վեր ածում ա ըստաքանը, փուշիգնէն լօբ-լօբ ըն անում* (2): 5. Մաշկի վրա գոյացած բշտիկ, որ սովորաբար լցված է լիկում հեղուկով: *Ծը՛րքէրը սաղ փուշիգնէլ յա* (Բ):

- Փօջիգը ծակ/պիրանան մօտէ - Անզաղտնապահ: *Փօջիգը ծակ տըղամարթը հինջ կա՛նին* (Բ):

- Փօջիգը վը՛ռան մօտէ - Բարկացկոտ, շուտ բարկացող: *Փօջիգը վը՛ռան մօտէ մարթ ա մէր Ապըրհամը* (Բ):

- Փօջիգը տըրաքէլ - Միգելու խիստ

ցանկություն ունենալ: *Դէ թաքավերին տըղան էլ, փօջիգը տըրաքում ա, հունց նըստէ՞ (2):*

- Փուչիգումը պէն չըպահէլ - Անգաղտնապահ լինել: *Տընաշինըտ փուչիգումը պէն չի պահում, հինչու ըսկաւում ա, լօխճին ասում ա (Բ):*

ՓՕԶ-ՓՕԶ - ած. 1. Ծակոտկեն, շատ մատերում փուչ տեղեր ունեցող: *Փօջ-փօջ հաց ա (Բ):* 2. Գզելով կամ ճիպոտով ծեծելով զգզգված ու փափկեցրած (բրդի՝ բամբակի մասին): *Փօջ-փօջ պիրթաւ ա (Բ):*

ՓՕՌՆԸ - տէն ՓՈՒՐ:

ՓՕՍ (գրբ. փոս) - գ. 1. Գետնի մեջ փորած կամ որեւէ պատճառով խոր ընկած տեղ: *Մին խօր փօս ա կըտըրում, մինչէլ կօտէն հողումըն ա տինում...* (ՀԱԲ, 15, 13): 2. Հարթ մակերեսային վրա ներս ընկած տեղ: *Էս էլ հօ հըղէ չի՞, սաղ փօսեր ա (2):* 3. Գերեզմանափոս: *Լըհա վեր մէյը տինում ըն փօսումը, կարկուտը նի յա օնում (2):* 4. Մարմնի վրայի կամ ներսի գործարանների խորոց: *Ըտըրա ընկերէն տակէ փօսերը վեր տը՛սնում ա, վախում ա (2):* 5. ած. Ներս ընկած, խոր ընկած, փոսացած: *Մէր շէնը փօս տը՛ղ ա (Բ):*

- Փօս ըղնէլ - Ներս ընկնէլ, փոսանալ: *Խը՛ղճը Էնքան մաշվալ ա, թօշերը փօս ա ընգալ (Բ):*

- Փօս քանդիլ (միևնի հը՛տէ) - Դավ նյութէլ մեկի դէմ, որոգայթ լարել: *Ուրո՛շին հը՛տէ փօս քանդողը ինքը կըղնէ մաջը (2):*

- Փօս քըցիլ - Փոս գոյացնել, փոսացնել: *Վէդրան թըխում ա քարէն, փօս քըցում (2):*

ՓՕՍԱԼԱՂ - տէն ԼՕՂՎԱ:

ՓՕՏ - տէն ՓՕԹ:

ՓՕՏՕԳՐԱՓ (ռուս. *фотограф*) - գ. Լուսանկարիչ: *Խուջաց Սիրգոնէն թօռը լալ փօտօգրափ ա (Բ):*

ՓՕՐ (գրբ. փոր) - գ. 1. Մարդու եւ կենդանիների մարմնի մաս, որի մեջ տեղավորված են ստամոքսը, լյարդը, աղիքները եւ այլ գործարաններ: *Ղանման քաղում ա փորը, ըսպանում (2):* 2. Փորոտիք: *Փորը տո՛ւս ըն տամ, մէսը ածում խորքինը, քինամ (2):* 3. Իրանի առջեւի մասը՝ կրծքից ներքեւ: ... *Սուփրան փորավըն ա տամ, քընում (ՀԱԲ, 15, 17):* 4. Կնոջ արգանդ: *Իգէն հալա՛ն ուրան մօրը փորումըն ա իլալ նաղինջ (Բ):* 5. Ծին, ծնունդ: *Ղանվրիշը ասում ա.- Թա ախճիգ՝ ինի, առաջին փորը իմըն ա, թա տըղա ինի՛քունը (2):* 6. փխր. Ամանների՝ անոթների՝ իրերի միջին՝ ուռուցիկ մասը: *Կըրասէն փորը ճաքալ ա (Բ):* 7. փխր.

Սնունդ, ապրուստի միջոց: *Ամմէն մարթ ուրան փորէն հը՛տէ յա ըշխաղում (2):*

- Փորան ըղնէլ - տէն Պօրտը տո՛ւս ըղնէլ:

- Փորան փըռնէլ - Որովայնի ուժեղ ցավ զգալ՝ ունենալ: *Կամ ըն, տը՛սնում՝ թաքավէրը, փորան փըռնած, ճըղճըղամ ա (2):*

- Փորան փըռնէլ վեր ըղնէլ - տէն Ուշկիւնա՛ն ինիլ:

- Փորան քինիլ - Փորը լուծել, փոր-լուծություն ունենալ: *Հու շատ գո՛ւլմս օտէ, փորան կըքինի (Բ):*

- Փորավը չըվան/քանդիլ չի պատ կալ - Ասում են շատ գեր՝ մեծ փոր ունեցող մարդկանց մասին:

- Փորէն կըռը - Բուն նպատակը՝ ցանկությունը: *Ըտըրա փորէն կըռը Էն ա ինում, վեր հիրըվանէն նըհը՛տ հըրաւաշ տը՛ռնա (2):*

- Փորէն կուտընէքը - Մարդու որովայնի ճարպը: *Ասում ա.- Ըտըրան Էնքան թըկեցէք, վեր փորէն կուտընէքը հալի (2):*

- Փորէն վը՛րթըն կօտըրէլ - Մի քիչ սևվելով՝ քաղցը մեղմել: *Հիշկան շօռ ա կամ, մին պէն չի քըթէնում, թա լըհա փորէն վը՛րթըն կօտըրէ (2):*

- Փորէն տակը քօրէլ - տէն Մաշկը քօրէլ:

- Փորէն ցավը - տէն ՓՈՒՐԱՑԱՎ:

- Փորը իփիլ - տէն Լըղաճա(ն)ք ինիլ:

- Փորը լըցնէլ - Ազահաբար ուտելով՝ կշտանալ: *Նըստում ա, փորը լըցնում, քինամ (2):*

- Փորը լիգը - 1. Կուշտ կերած՝ հագեցած: *Փորը լիգը մարթին էլ հինչ դարդ կինի (Բ):* 2. տէն ՊԱԾ(Ճ)ԱՌԱՎԷՐ:

- Փորը՝ լիգը, կօխկը՝ տերտակ - Ասում են այն կանանց մասին, որոնց երեխաները ծնվելուց մահանում են:

- Փորը խափիլ - տէն Փորէն վը՛րթըն կօտըրէլ:

- Փորը խէխտանձ բըրամա - Գոտկատեղը բարակ, նրբիւրան մարդ: *Հարթը, հինչ հա՛րթը, փորը խէխտանձ բըրամա (Բ):*

- Փորը խըշարէլ - տէն ՓԸՓԷԽՎԷԼ:

- Փորը ծակէլ - 1. Հանգիստ չտալ, անհանգստություն պատճառել: *Կընգաւը ջօղաքը մարթին փորը ծակում ա (2):* 2. Նախանձը շարժել: *Նըխշունէն ղըշշընգօթունը հիրըվըններէն փորը ծակում ա (Բ):*

- Փորը ծափ տալ - Խիստ սոված լինել: *Էրկու օր ա՛ պէն չի կերալ. փորը ծակում ա (2):*

- Փորը ծըմըր(ը)կէլ - տէն Փորը տո՛ւս կալ:

- Փորը ծուխավ լըցնէլ - Հրագենով սպանել: *Թափանջան տո՛ւս ա օնում, ըտըրա փորը ծուխավ լըցնում (2):*

- Փորը կապվէլ - Փորկապություն ունենալ: *Խը՛ղճը հինչ ա՛նէ, փորը կապվալ ա, կարում չի, թա չօլ քինի (Բ):*

- Փորը կատու ըղնէլ - տէն Փօխանը կատու ըղնէլ:

- Փորը կըլխան պեցո՛ւր - 1. Շատ գեր: *Փորը կըլխան պեցո՛ւր ա, էտ հինչ կօրծ բիդի ա՛նէ (Բ):* 2. Հիդուլթան վերջին շրջանում գտնվող (կին): *Փորը կըլխան պեցո՛ւր հարթն ա, խօխա պիրիլի վախտըն ա (Բ):*

- Փորը կըտօրէլ - Որովայնը խիստ ցավել: *Էնքան կերալ ա, փորը կըտօրում ա (Բ):*

- Փորը կօշտ (ինիլ) - 1. Կուշտ կերած՝ հագեցած (ինիլ): *Փորը կօշտը տո՛ւզին դաղիրը գիղալ չի (2):* 2. Տնտեսապես ապահով (ինիլ): *Դօրոնը փորը կօշտ խալիս ըն (Բ):*

- Փորը կօշտ պահէլ - Իր կամ ուրիշի մասին հոգ տանելով՝ երբեք քաղցած չմնալ՝ չթողնել: *Սօնա բաջին քըշէր-ցիրը՛կ ըշխաղում ար, համ ուրան փորը կօշտ պահում, համ խօսըն (Բ):*

- Փորը կօտ ըղնէլ - տէն Փորը մայա ըղնէլ:

- Փորը հաստ - տէն ՀՐՍՍԱՓՕՐ:

- Փորը հացուտ անէլ - տէն Փորէն վը՛րթըն կօտըրէլ:

- Փորը դաժավ լիգը - Նախանձ, չարակամ, խարդախ: *Փորը դաժավ լիգը մարթ ա Շաքօն (Բ):*

- Փորը ճըրդօտէլ - 1. Բղավել, բարձր ձայնով կանչել: *Ծէն տալալ, փորը ճըրդօտէլալ քինամ ա, տէսնում լիհա հըղըցէն կըլխէն՝ մին փօսում, պըրանած (ՆԼԴԺԲ, 119):*

- Փորը մայա ըղնէլ - Քաղցը անցնել: *Միկա վեր օտըմ ըն, խըմում, էտ տըղէն փորը մայա յա ըղնում, ըսկըսում ա խաղ անէլ... (ՀԺՀ, VII, 110):*

- Փորը մաշկան կէնալ - Սաստիկ նիհարել: *Էնքան կօրծ ա ըրալ, փորը մաշկան ա կացալ (Բ):*

- Փորը լը՛ր չօնէլ - Նախանձել: *Մը՛ծ հարթանը փորը լը՛ր չի օնում, վեր կուճի հարթանը ըտի սիրում ըն (2):*

- Փորը լըղըկալիլ - տէն Փորը փիլըկալիլ:

- Փորը շինիլ - տէն ՄԱՉԻԼ (2):

- Փորը շօն ըղնէլ - տէն Փօխանը կատու ըղնէլ:

- Փորը պէն ըղնէլ - տէն Փորը մայա ըղնէլ:

- Փորը պըլիթիլ - տէն Փորը տո՛ւս կալ:

- Փորը պընդըց(ը)նել - Կուշտ ուտել, հագնել: ... *Ըստը՞դ մին լ՛ավ փորը պընդըցընես ա, հըդէ ինիս (2):*

- Փորը վախալ լիգը - Սարսափի մատնված, սարսափահար: *Հիշտը՞դ ը՞ք տէսալ, վէր փորը վախալ լիգը մարթը քօն ինի (ՆԱԲ, 30):*

- Փորը վէր ածել - 1. Փորոտիքը հանել՝ դուրս թափել՝ մաքրել: *Ծոնկնէն փորը վէր ըն ածում, լըվանում, իփոն (2):* 2. Սպանել (հաճախ գործածվում է որպես սպառնալիք): *Ասում ա.- Ծէնըտ կըտըրէ, թա չէ փորըտ վէր կածիմ (2):*

- Փորը վըրթնած/վըրթնալ լիգը - *տէն Փորը դաժալ լիգը:*

- Փորը վէց-վէց անել - Շատ քաղցած լինել, ուտելու մեծ ցանկություն ունենալ: *Էտ դմորըմը փորը վէց-վէց անելալ, խըլուշկուտալալ մին աղվէս ա անց կէնըմ... (ՋՏ, Բ, 155):*

- Փորը տափավը քաշ ինիլ - 1. Սաստիկ գիրանալ, փորը շատ մեծանալ: *Տընաշինըտ կարում չի, թա տոնոր կա, փորը տափավը քաշ ա ինիմ (2):* 2. Ծնելու ժամանակը մոտ լինել (կենդանիների մասին): *Խօզին փորը տափավը քաշ ա ինիմ, էքոնց ծընական ա (Բ):*

- Փորը տափերը քըսել - *տէն Պորտը տափերը քըսել:*

- Փորը տէրտակ - Քաղցած, անոթի: *Փորը տէրտակ մարթը կարէլ չի հծնծ անէ (Բ):*

- Փորը տըռըզիլ/տըռըզցընել - *տէն Փորը տոնս կ'նլ:*

- Փորը տըռօզ - 1. Գեր, չադ: *Փորը տըռօզ մարթ ա իլնլ Հայկան (Բ):* 2. *տէն ՊԱՃ(Ճ)ԱՌԱՎԷՐ:*

- Փորը տըրաքել - 1. Չափազանց շատ կերած լինել: *Փորը տըրաքում ա, կարում չի թա նըստէ (Բ):* 2. Խիստ նախանձել, նախանձից պայթել: *Սունէն փորը տըրաքում ա, վէր տըքրակէնը ըտի դաշննգ ա (Բ):*

- Փորը տոնբնգ անել - *տէն Փորը պընդըց(ը)նել:*

- Փորը տոնս կ'նլ - 1. Գիրանալ, չաղանալ: *Հինչա պաշտօն ըն տըվալ, Մըցակէն փորը տոնս ա յըկալ (Բ):* 2. Հղիանալ, հղի դառնալ: *Անց ա կէնում մին քանէ վախտ, թաքուիուն փորը տոնս ա կամ (2):*

- Փորը փիլըկնլիլ - 1. *տէն Փորը տոնս կ'նլ (1):* 2. Հարստանալ: *Սումբաթէն փորը փիլըկնլիլ ա, էլ մէգ մըրթա-տը՞դ չի տինիմ (Բ):*

- Փորը քըթէն տէմ ըղնել - 1. *տէն Փորը տափավը քաշ ինիլ (1):* 2. Ծննդաբերելու ժամանակը մոտ լինել (կանանց մասին): *Հէրիքնագէն փորը քըթէն տէմ*

*ա ընգալ, էս շէբաթը հանրնթ խօխա կըպիրի (Բ):*

- Փորը քըշանալ - Սովածանալ: *Հիշկան կօրծ ա անում, էնքան փորը քըշանում ա (2):*

- Փորը քըշիլ - *տէն Փորան ք'ինիլ:*

- Փորը քուշտըց(ը)նել - *տէն Փորը պընդըց(ը)նել:*

- Փոր պահել - 1. Ախորժակ պահել ավելի լավ ուտելիքի համար: *Ասում ա.- Փօր պահէ, էս ա խըրաված ըմ անում (2):* 2. Այստեղ-այնտեղ սնվելով՝ գոյատևել: *Փոր պըհէլալ տօն չըս տը՞ռնալ (2):*

- Փորումը այթու/այիփալէնու թիքն/կուտուր/պատառ չինիլ - Տգետ՝ անգրագետ լինել: ... *Էտ դէրըն էլ պէն չի ինիմ գիդնիս, փորումը այիփալէնու կուտուր չի ինիմ... (ՀԺՀ, VII, 303):*

- Փորումը արնուն կաթել - *տէն Լը-դաճա(ն)ք ինիլ:*

- Փորումը կըռ ինիլ - Գաղտնի նպատակ՝ ցանկություն՝ պահանջ ունենալ: *Ընդըրա փորումը վէր կըռ չինի, էս ծոն-ծըմը՞ռ օրը կ'նլ չի մէր շէնը (2):*

- Փորումը կըտօրել - Զայրույթը մի կերպ զսպել: *Հարթըն ուտէս ա, ըսկէտուրըն էլ փորումը կըտօրէս ա (2):*

- Փորումը սաղանա/օխծ ինիլ - Զարմտադրություն՝ դիտավորություն ունենալ: *Թաքավէրը դնստի յա կըծիս ըղ-նում, վէր վէզիրին փորումը սաղանա կա (2):*

- Փորումը սըրտ չըմընալ - *տէն Լը-դաճա(ն)ք ինիլ:*

- Փորու յէսիր - Միայն ուտելու մասին մտածող, ամեն ինչ փորին ծառայեցնող: *Փորու յէսիր մարթը կարէլ չի տօն պահէ (2):*

- Փորու ցալ - *տէն ՓՈՒՐԱՅԱՎ:*

- Փոր քըցիլ - *տէն Փորը տոնս կ'նլ:*

ՓՕՐԹԱՓ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Փորթափ անել - *տէն Լըդաճա(ն)ք անել:*

- Փորթափ ինիլ/տը՞ռնալ - *տէն Լը-դաճա(ն)ք ինիլ:*

ՓԸՐԹԸԽԱԼ - *տէն ԱՊԷԼԱԽԻՆ:*

ՓՕՐԿԱՊ - *տէն ՓՈՒՐԿԱԳԸՊՕՐՈՒՆ:*

ՓՕՐՄ (ռուս. *форма*, լատ. *forme*) - գ. Կերպ, ձև, եղանակ: *Էտ փօրմի չօրսին էլ ըսպանում ա... (ՀԱԲ, 15, 128):*

- Փօրմու հը՞տէ/մըհար - Արտաքուստ ցույց տալու համար, ձեականորեն: *Փօրմու հը՞տէ ինքըն էլ ա ըսքըսում խօտ հարէլը (2):*

ՓՕՐՄԱ (ռուս. *форма*) - գ. Համազգեստ: *Առաջ ըշկօլնիկնէն փօրմա յըն իլնլ կընալիս (Բ):*

ՓՕՐՍՈՒՐ - *տէն ՓԸՐՍՕՐ:*

ՓՕՐՍՕՐ - *տէն ՓԸՐՍՕՐ:*

ՓՕՐՏՈՒՊԸՅԱՆ (ռուս. *фортепиано*, իտ. *fortepiano*) - գ. Ղաշնամուր: ... *Թնռին, սագին էլ հավան չըն, փօրտուպըյանէն ա մօղան (ՋՏ, Ա, 26):*

ՓՕՐՑ (գրբ. *փործ*) - գ. 1. Կյանքից՝ գործունեությունից եւն քաղած գործնական գիտելիքների, հմտությունների, ունակությունների եւն ամբողջությունը: *Ուստա Արտաշը մը՞ծ փօրց օնէ (Բ):* 2. Վարժություն, որ կատարվում է որեւէ բան սովորելու՝ որեւէ բանում հմտանալու համար: *Շատ ա փօրց անում, մինչը՞վ կարում ա ինքըն էլ փօրը նըման պար կա (2):*

ՓՕՐՏԱԼՔ (գրբ. *փործանք*) - *տէն ԽԱԹԱ:* Կուճուր ախպօր փննդէրավը Պարսէղը պըրծընում ա ամմէն մին փօրցանքա (ՀԺՀ, V, 439):

ՓՕՐՏԷԼ - *տէն ՓՕՐՏԻԼ:*

ՓՕՐՏԻԼ/ՓՕՐՏԷԼ (գրբ. *փործել*) - նք. 1. Ստուգել՝ պարզել մեկի կամ մի բանի ինչպիսին լինելը: *Մին սօվ տարէ Աստուծ ոնգիս ա ժողովուրդէն փօրցի... (ԱԱ, 88):* 2. Համտեսել, համտես անել (համը, սպիրտայնությունը եւն որոշելու համար): *Կինին փօրցիմ ա, տը՞սնում՝ թըթօ (2):* 3. Որեւէ բան անել՝ գործողությունների դիմել մի բանի հասնելու՝ մի բան իրականացնելու համար: *Շատէրըն ըն փօրցիմ, ամմա կարում չըն էտ ուշափէն յը՞խնիս (2):* 4. Փործարկել: *Ապան մին թնգզն չըխարակ ա շինիմ, այան նըստում ա, վէր փօրցի (2):* 5. Հափսը՝ սագելը՝ գույնի համապատասխանությունը եւն պարզել (հագնելով, չափելով եւն): *Էտ ախճիգը հինչ շօր փօրցիմ ա, յըրան կամ չի (2):* 6. Գործածվում է որպես սպառնալիքի արտահայտություն՝ չհամարձակվես, եթե անես, կտուժես (իրամայական եղանակով): *Ասում ա.- Փօրցի լըհա մէհէտ էլ նի մըննիս իմ բաղըս (2):*

- Փօրցած թանը անփօրց մածնան լ՛ավ ա - Ծանոթ՝ փործված մարդը՝ իրը՝ երեւոյթը եւն, իրենց թերություններով հանդերձ, գերադասելի եւն անծանոթից՝ անփորձից, թեկուզ եւ դրանք նախորդներից ավելի առավել լինեն:

ՓՕՐՏԿԷԼ - *տէն ՓՕՐՏԿԻԼ:*

ՓՕՐՏԿԻԼ/ՓՕՐՏԿԷԼ - 1. կր. եւ չք. ՓՕՐՏԻԼ-ի: 2. չք. Վարժել, հմտանալ, փործ ձեռք բերել, փորձառու դառնալ: *Փօրցված վը՞րսկան ա Աթօն (Բ):*

ՓՕՐՔԱՇ - գ. 1. *տէն ՂՈՒՇՆՈՒՆ:* 2. Գոտու նման հատուկ կարված լայն երիզ, որ, օրորոցի վրայով ու տակով անցկացնելով, կապում են, որպեսզի երեխան չընկնի: *Խօխան տինում ա ըրորորցումը, փօրքաշավը կապում (2):* 3. *հեզն. տէն ԿՕՏԷ (1):*

ՓՕՓ - 1. գ. Պաքսիմատով, շաքարով եւ ջրով պատրաստած մանկական ճաշ: *Խօխենքը փօփ շատ ըն սիրում (Ձ): ած.* 2. Շատ հասունանալուց եւն փափկած, փափուկ: *Փօփ զըկըռ ա (Բ):* 3. փխբ. Շատ ծերացած, ծերությունից մարմինը փափկած: *Փօփ պառաւ ա (Բ):*

- Փօփ տը՛նաւ - 1. Շատ փափկել: *Տաննը էնքան հըսաւ ա, լափ փօփ ա տը՛նաւ (Բ):* 2. Շատ ծերանալ, ծերությունից մարմինը փափկել: *Մէր ազնավորը քընում ա, տէսնում ուշափէն մարը պըռաւած, փօփ տէռած... (ՆԱԲ, 26):*  
ՓՕՔ(Ը)Ս/ՓՕՔԱ (գրք. փոք) - գ.

Կաշվե կծկվող ու ծալքավոր հարմարանք օդի հոսանք դուրս մղելու համար, փուքս: *Փօքսըն էնքան փըջում ա, վար ջամը սըկսում ա կիրմիրիը (ՅԺՅ, V, 392):*  
- Փօքսը նըստել - տէն Յավան նըստել (ՅԱՎԱ-ի տակ):  
ՓՕՔԱ - տէն ՓՕՔԱ:

## Ք

ՔԱ - տէն ՔՈՒ (գործածվում է հիմնականում **հնար** եւ **մար** բառերի տրական հոլովածեի հետ): *Քա հօր, քա մօր տօնը շինվի, քը՛գ խէ փըսակում չը՛ն (Բ):*

ՔԱԹ - գ. 1. Յեքիաթ: *Տըրանաւ էլ քաթը պըրծընէս ա (ՅԺՅ, V, 599):* 2. տէն ՋՐՈՒՄՅ:

ՔԱԹԱՆ (գրք. քթան) - գ. Կտավատի թել եւ այդ թելից գործած կտոր՝ կտավ: *Քաթան ա ինք՛ օնում, մին դարյա կարում, տամ ըխճըկանը (Ձ):*

- Քաթան տը՛նաւ - տէն ՍԸՓԱՐԹ-Ն(ԸՎ)ԻԼ:

ՔԱԹՍՈՒՆ - տէն ՔԱՏ(Ց)ՈՒՆ:

ՔԱԼ - տէն ՔԱԼ:

ՔԱԼԱՂԱ - տէն ՔԱԼԱՂԻ:

ՔԱԼԱՄԱՆԳՕ - Գործածվում է կապակցության մեջ:

- Քալամանգօ տը՛նաւ - Սաստիկ մրսել: *Այազ ա, քալամանգօ յընք տը՛նում (Ձ):*

ՔԱԼՈՒԾ - տէն ՔԱԼԾ:

ՔԱԼՈՒԹՈՒԼ - տէն ՔԱԼՈՒԹՈՒԼ:

ՔԱԽԾՐ/ՔԱԽՅՐ (գրք. քաղցր) - ած. 1. Քաղցրահամ: *Ծերանը քախծըր բար ա (Բ):* 2. Ջգայարանների համար դուրեկան՝ շոյող: *Քախծըր սնս օնար աշըղ Աըըստամը (Ձ):* 3. Գզվալից, սիրալիր: *Այան թուռնէրէն քախծըր ար յէշում (Բ):* 4. Բարի, բարյացակամ: *Քախծըր մարթ ա (Բ):* 5. Սիրելի, թանկագին: *Ասում ա.- Տու իմ քաղցըր ախպէրըս ըս, յը՛ս քը՛գ կարէլ չըմ ըսպանիմ (Ձ):* 6. Հաճելի, հոգեկան հաճելի զգացումով լցնող: ... *Սըն էլ քըշէրէն կէսըմը՝ քունտընուս էն քախծըր վախտը, շընէրը ըսկըսը՛ցէն հանջը (ՀԲ, 363):* 7. Երջանիկ, լավ: *Մարթը թաքավէր ա տանում, ինքըն էլ՝ թաքուհի, ըսկըսում ըն քախծըր ապրէլը (ՆԼԴԲ, 32):* 8. գ. Քաղցրավենիք: *Քիսամ ա բըզարան քախծըր ինք՛ օնում, դարկում մօրը հը՛տէ (Ձ):* 9. մ. Հաճույքով, սիրով, սիրալիր կերպով: *Տըրանց քախցըր ճանապար ա տինում (ՀԱԲ, 15, 33):*

- Քախծըր աշկ - Բարյացակամու-

թյուն, բարեհաճ վերաբերմունք: *Էտ թաքավէրին էլ քախծըր աշկ ա իննւմ ժողովուրդէն յըրա (Ձ):*

- Քախծըր աշկավ յէշիլ - Բարյացակամ բարեհաճ լինել մեկի նկատմամբ: *Կօզի խօրթ, ամմա քախծըր աշկավ ար յէշում էտ խօնը (Ձ):*

- Քախծըր լիզիլ - Ախորժալուր՝ դուրեկան խոսվածք՝ խոսք: *Քախծըր լիզիլ օնէ Մաքաղաթը (Բ):*

- Քախծըր լիզիլ օխծը պինան տին կօնէ - Հաճելի՝ դուրեկան՝ ոյութող խոսքերով ամեն ինչի կարելի է հասնել:

- Քախծըր լիզիլ պընըց(ը)նէլ - Հաճելի՝ դուրեկան խոսքով մեկին հմայել: *Քախծըր լիզիլ պընըցըրավ, թաքավէրին աշի թէվը տը՛նաւ (Ձ):*

ՔԱԽԾՐ-ՄԱԽԾՐ/ՔԱԽՅՐ-ՄԱԽՅՐ/ՔԱԽԾՐ-ՔԱԽՅՐ - 1. ած. Անախորժ եւ շատ քաղցր: *Քախծըր-մախծըր կինի յա (Բ):* 2. փխբ. Հաճույթստություն պարունակող, շողողորթ: *Ջանիւս տանում ա Ջավէնին քախցըր-մախցըր խոսկէրքան (Բ):*

ՔԱԽԿԱՎԱՐԻ/ՔԱԽԿԱՎԱՐԻ/ՔԱՂԸ-ՔԱՎԱՐԻ - ած., մ. Քաղաքավարության նորմաներին՝ կանոններին համապատասխան: *Քախկըվարի յա խօսում (Բ):* 2. Քաղաքավարության նորմաներով առաջնորդվող, բարեկիրթ, քաղաքակիրթ: *Քախկըվարի խալի ըն խօնդիւնը (Ձ):* 3. Քաղաքի տարագով: *Էս կարճիզ թօխ ծըմավէր հարսը քախկավարի յա. կէցինը Սօսկօվի մախմուր քիւլը՝ ա՛յախան մարքարիդավ արած... (ՋՏ, Ա, 2):*

ՔԱԽԿԱՎԱՐԻ - տէն ՔԱԽԿԱՎԱՐԻ:  
ՔԱԽՅՐ - տէն ՔԱԽԾՐ:

ՔԱԽՅՐ-ՄԱԽՅՐ - տէն ՔԱԽԾՐ-ՄԱԽԾՐ:

ՔԱԾ (գրք. քած (էգ շուն) - 1. ած. Էգ, ոչ արու (կենդանիների, անարգաբար նաեւ մարդկանց մասին): *Էտ կընէգը տը՛նում ա մին քած կիւլ, ըղնում ծըմակը (Ձ):* 2. գ. Էգ կենդանի, հատկապես՝ շուն: *Քածը վեր թույլօցը սնսը ըսկանում*

*ա, յըրա յա պըրծընում, կիւլին կօխում տակը, ըսպանում (Ձ):* 3. անրգ. Կին, անբարոյական կին: *Էս քածըն էլ ա կըլխու ըղնում, բայց թասիբի պէն էլ կա չէ՛ մաշտը՛ղը (ՀԱԲ, 15, 14):*

- Քած ասթըխը տին կիւլ - Շատ ժամանակ անցնել: *Տընաշինըտ մինչը՛վ մին պէն ա ասում, քած ասթըխը տին ա կամ (Բ):*

- Քած արմատ - Կին, աղջիկ: *Քած արմատ ա, էն հինչ ա՛րտ բիդի անէ (Ձ):*

- Քած արչ - Գազազած, գազանաբար: *Քած արչ ը՛ս, հինչ ը՛ս էտ կընգանը թակում (Բ):*

- Քած նափան - Չար շունչ, որ իբր հիվանդի ներսում ծավալվում եւ սպանում է նրան: *Չար նափանը Ալծվէն էլ ըսպանից (Բ):*

- Քած պըրիստավ - Խստաբարո կին դեկավար: *Էտ քած պըրիստավը բաղվանցօցը օր-իշը՛ղ չար տամ (Ձ):*

ՔԱԾԻ - ած. Կանացի հատկություն ունեցող, վախկոտ, թույլ, կնամարդի (տղամարդկանց մասին): *Քածի մարթ ա Ղանգարը (Բ):*

- Քածի Մանաս - Կնամարդի՝ կանացի հատկություն ունեցող տղամարդ: *Էտ քածի Մանասը կընգանը անա փիս վախում ա (Բ):*

ՔԱԾ(Ծ)ՈՒՆ - տէն ՔԱՏ(Ց)ՈՒՆ:

ՔԱՅ-ՔԱՅ - ած., մ. Բարձրաձայն եւ լիաթոք (ծիծաղի՝ ծիծաղելու մասին): *Մէլիք-Շահնազարը Պուղուն յէշում ա, քահ-քահ ծըծանդում (ՆԱԲ, 129):*

ՔԱՂ՝ (գրք. քաղ (մուխտտ) - գ. 1. Յորեն՝ խոտ՝ տերեւ՝ պտուղներ եւն հատ-հատ պոկելը՝ քաղելը՝ հնձելը, բեր-բահավաք: *Քաղը ըսքըսում ա, ժողովուրդը յօխ քինամ ըն բաղէրը (Բ):* 2. տէն ՔԱ(ԸՅ)ՂԱՆ: 3. Բերքահավաքի ժամանակը: *Քաղը վեր կամ ա, շինանցէք՝ իւրիւրօնցավ ըն ըղնում (Ձ):* 4. Քաղած բանը (պտուղ, հունձ, խոտ եւն): *Խընծօրին բաղը քաղում ին, քաղը պիրում մըկնում (Ձ):*

- Քաղ անէլ - 1. տէն ՔԱՂԵԼ: 2. տէն ՔԱՂ(ԸՅ)ԱՆԵԼ:

- Քաղ տալ - Գոկպայի մաշած տե-  
ղերը կտրելով՝ նոր թելերով գործել:  
*Ամմէն աշունք այսան տընըցուց գիւրէ-  
քը քաղ ար տամ* (2):

ՔԱՂ<sup>2</sup> (գրք քաղ (արու այծ, նոխազ) -  
տէն ՔԵՌ):

ՔԱՂԱՔ (գրք. քաղաք) - գ. 1. Խոշոր  
բնակավայր, վարչական՝ արդյունաբե-  
րական՝ առեւտրական՝ մշակութային  
կենտրոն: *Ժուկավ-ժամանակավ Արմա-  
վիր քաղաքումը մին թաքավեր ար կէ-  
նում* (ՆԱԲ, 37): 2. փխբ. Քաղաքային  
կյանքը (ի հակադրություն գյուղականի):  
*Քղղաքան զանիւն տանում ա* (Բ): 3.  
Քաղաքի բնակչությունը: *Էտ խաբարը  
վեր կամ ա, սաղ քաղաքը սըրտաճաք ա  
տը՛նում* (2):

ՔԱՂԷԼ<sup>1</sup> (գրք. քաղեմ) - նբ. 1. Յորեն՝  
խոտ՝ տերեւ՝ պտուղներ են պոկել՝  
հավաքել՝ հնձել: *Ոռոյթանան վը՛ր յէր ա  
կը՛նըմ, տը՛սնըմ ա՛ էլիա յէկած, մին  
խիլլա խընծօր քաղած* (ՀԺՀ, V, 17):

ՔԱՂԷԼ<sup>2</sup> - տէն ԽԸՐԷԼ: ... *Լըիա բն-  
գը օգիւմ ա, թա «հարթանը» զանդրո-  
կը յէտ քըցի, Յէղիշան դանան քաղում  
ա փօրը...* (ԱԱ, 50):

ՔԱՂՍԱՎԷՏ - տէն ԳՕՐՍԱՎԷՏ:

ՔԱՂՎԷԼ<sup>1</sup> - կբ. եւ չբ. ՔԱՂԷԼ<sup>1</sup>-ի:

ՔԱՂՎԷԼ<sup>2</sup> - կբ. եւ չբ. ՔԱՂԷԼ<sup>2</sup>-ի:

ՔԱՍ (գրք. քամ (քամվածք) - գ.  
Քամելը, քամվելը: Քամը վեր  
պըրծընում ըն, կիսին ածում ըն  
կըրըսնէն, ջէջան՝ պուծկնէն (2):

- Քամ անել՝ տիսիլ - տէն ՔԱՍԷԼ:

- Քամ ըղնել/կնլ - տէն ՔԱՍՎԷԼ:

ՔԱՍԱԿ (գրք քամակ) - գ. 1. Կռակ,  
թիկունք, մեջք՝ մինչեւ գավակը: *Ծը՛րքէ-  
րը քըմակէն տիրած՝ պիրոմ ըն թա-  
քավերին կօշտը* (2): 2. տէն ՎԸ՛Ռ (1, 2):  
*Արջը թաթը քըմական կօխում ա, ճըղ-  
մաղէնքը հանում...* (ՀԱԲ, 15, 132): 3.  
Ետեւ, հետեւ: *Էս ախճիգըն ու կընէգը  
նանգիր-վանգիրներէն առաջնէն ըն ընգալ,  
քէցալ, նըրանք էլ՝ քըմական* (ՀԺՀ, VI, 19): 4. Հետեւի կողմը: *Ասում ա. - Քըմա-  
կաս ա յը՛կալ, յը՛ս քամակըս հունց  
տը՛սնամ* (2): Կ. 5. Հետեւում: *Արջը կամ  
ա, ըտըրա քըմակէն վը՛նըր կէնում* (2): 6. Բացակայությամբ: *Տըղօցը քըմակէն  
թաքուին ա վէգիրները թաքավերէն  
թախտան քըցում ըն, փըսակվում...*  
(ՆԱԲ, 49):

- Քամակ անիլ - Ոչինչ չարժենալ:  
*Քըմակէն ասած խօսկը քամակ անիլ*  
(ԱԲԲ, 100):

- Քամակը աղ/ախտա ածել - տէն  
Վը՛նըր աղ ածել:

- Քամակը զը՛ն - տէն Վը՛նըր զը՛ն:

- Քամակը ըղնել/ընցընել - տէն  
Հը՛տան ըղնել:

- Քամակը թո՛ւլ - տէն ՎԸՌԸԲՕԾ:

- Քամակը խըշուր անել - տէն  
Քամակը քըշիլ:

- Քամակը ծըռել - տէն Մաշկը ծըռել:

- Քամակը կըտըրել - տէն Հը՛տը  
կըտըրել:

- Քամակը հօգա կօխել - տէն Վը՛նը  
աղ ածել:

- Քամակը դայիմ - տէն Մաշկը  
պէնդ:

- Քամակ ըղնել - տէն Յը՛տ ըղնել  
(1, 2, 3):

- Քամակը ճըղել/ճըրդօտել/ճուրճ-  
նօտել/ճօթ(ը)նել - տէն Վը՛նը ճըղել:

- Քամակը նանջողըր ածած - 1.  
Համարձակ: *Ընդըրա քամակը նանջ-  
ողըր ածած ա, վէշ մին պէնա վախում չի*  
(Բ): 2. Արագաշարժ, արագընթաց: *Քա-  
մակըտ նանջողըր ածած ա՛, խէ հան-  
դանդ չը՛ս կօրծ անըմ* (Բ):

- Քամակը նըիւր՝ չըկնլ - 1. Սկսած  
գործը ավարտին չհասնել: *Տօնը շինում  
ընք, շինում, քամակը նըիւր՝ չի կամ*  
(Բ): 2. Նյութական միջոցները չհերիքել:  
*Քամակըս նըիւր՝ չի կամ, թա արտըս  
վարել տամ, պըրծընիմ* (2):

- Քամակը շուի անել - տէն Քամակը  
քըշիլ:

- Քամակը շօռ տալ - տէն Իրը՛սը  
շօռ տալ:

- Քամակը չօփ կօխել - տէն Վը՛նը  
աղ ածել:

- Քամակը պահել - տէն Մաշկը  
պահել:

- Քամակը պէնդ - տէն Մաշկը պէնդ:

- Քամակը պէց - տէն Վը՛նը պէց:

- Քամակը պըզզան ածել - տէն  
Քամակը քըշիլ:

- Քամակը պըլթալթալ - տէն  
Վը՛նան նի կէնալ:

- Քամակը պիհիր կօխել - տէն Վը՛նը  
աղ ածել:

- Քամակը տանիս՝ առաջը գի՛ղնլ  
չի - Ասում են անուշադիր՝ անկազմա-  
կերպ մարդկանց մասին:

- Քամակը ըրա տըղէտ, հա՛ց կեր,  
իրը՛սըտ ըրա մարթիտ, հա՛ց կեր - Ասում  
են՝ նկատի ունենալով ամուսնու եւ ոչ թե  
որդու նվիրվածությունը:

- Քամակը տանիտը՛ղ ածած/ քըսած  
- տէն Վը՛նը տանիտը՛ղ ածած/քըսած:

- Քամակը տանիտը՛ղ ածել - տէն  
Վը՛նը աղ ածել:

- Քամակը տափերը թակել/տըփերէն  
կնլ - տէն Վը՛նը տափերը թակել:

- Քամակը տափերը քըսել - Խիստ  
զղջալ: *Յըղէ կավը ծախում ա, մընամ  
քամակը տափերը քըսելիս* (2):

- Քամակը տէմ անել - տէն Իրը՛սը  
շօռ տալ:

- Քամակը փնդ կօխել - տէն Վը՛նը  
աղ ածել:

- Քամակը քըշիլ/քաշիլ - 1. տէն  
Փօրան քիսիլ: 2. տէն Լըղաճա(ն)ք ինիլ:

- Քամակը քըջեղակ կօխել - տէն  
Վը՛նը աղ ածել:

- Քամակ թօղնել - տէն Յը՛տ քըցիլ (1):

- Քամակ մընալ - տէն Յը՛տ մընալ:

- Քամակ նի մըն(ն)ել - տէն Վը՛ն մի  
մըն(ն)ել:

- Քամակ քըցիլ - տէն Յը՛տ քըցիլ  
(1, 2, 3, 4):

- Քըմական էվիլ/վէղըրա կախ տալ -  
տէն Վը՛նան էվիլ կախ տալ:

- Քըմական ճըղըցաքար կախ տը-  
ված - տէն Վը՛նան ճըղըցաքար կախ  
տըված:

- Քըմական՝ պիյաներ, ըռաշկան՝  
պէնսյաներ - Ասում են նրբակազմ, բայց  
տգեղ ու կնճռու դեմք ունեցող կանանց  
մասին:

- Քըմական սըրընուցու քար կախ  
տըված - տէն Վը՛նան ճըղըցաքար կախ  
տըված:

- Քըմական վը՛տ օնել - Սեռական  
տրամադրությունը՝ հակումը ստուգել՝  
մերձենալու նպատակով: *Սաղ օրը էն ա  
ըստըրա-ընդըրա քըմական վը՛տ ունէ-  
լիս* (2):

- Քըմակավը անել/կօրծ փըռնել/պէն  
փըռնել - տէն Վը՛նավը անել:

- Քըմակէն զօռ կնլ/հըսնել - *հեզն*.  
տէն Ջօռ ըղնել:

- Քըմակէն զօռ տալ - տէն Ջօռ  
անել (2):

- Քըմակէն խօսել - տէն Հը՛տան  
խօսել:

- Քըմակէն մարթ ինիլ - Հովանավոր՝  
պաշտպան ունենալ: *Ընդըրա վեր քը-  
մակէն մարթ չինի, կարել չի ըտի մը՛ծ-  
մը՛ծ խօսէ* (2):

- Քըմակէն վը՛նըր կէնալ - տէն  
Մաշկը պահել:

- Քըմակէն նըստում ա, թա՛ ըռաշկաս  
յը՛ր կաց - Ասում են անհիմն՝ անարդար  
պահանջներ ներկայացնողի մասին:

ՔԱՍԷ/ՔԱՍԸ/ՔԱՍԻ (գրք. քամի) - գ.  
1. Օդի հոսանքի շարժում հորիզոնա-  
կան ուղղությամբ: *Քամէն այուն պիրթը  
սաղ տարավ* (2): 2. Փողի գազեր, փուք:  
*Դօխտուրը ճար ա տամ, վեր խըմէ՛ փօ-  
րէն քամէն տոնս կա* (2): 3. Հողացավ,  
ոսկրացավ: *Հիւր մաշկումը քամէ կա,  
բիղի քըշէրու մէս օտէ, վեր անց կէնա*  
(Բ): 4. փխբ. Դատարկաբանություն,  
փչոց: *Ըտըրա ըսըծնէն սաղ քամէ յա*

(Բ): 5. *փխբ.* Քամու նման արագասույր (հատկապես ձիերի մասին): *Էտ թաքա-վերին էլ մին ծի յա իննում, հինչ ծի, մին քամէ* (2):

- Քամավ ըղնել - 1. Քամու ազդեցու-թյանն ենթարկվելով՝ մրսել ու հիվան-դանալ: *Կանփին քամավ ա ընգալ, էրկու օր ա՝ տոնս չի կամ շինամաչ* (Բ): 2. Խեղճանալ, գլուխը կորցնել: *Հինչ ըս տական-կըլխան խօսում, քամավ ըս ընգալ* (Բ):

- Քամէ անել - 1. Քամի փչել: *Քամէ ըրավ, հընձանձ խօտը սաղ ցըրը՜վ տուվավ* (Բ): 2. *տեն* Քամէ տալ: 3. Ստել, սուտումուտ բաներ ասել: *ժորան մեհէտ մին դուգ պեն չի ասել, սաղ օրը քամէ յա անում* (Բ):

- Քամէ ըղնել - 1. *տեն* Քամէ անել (1): 2. Կտրող բարակ գործիքների, հատկա-պես՝ գերանդու սայրը, ալիքածե դառ-նալով, անպետքանալ: *Քամէ ընգած ղըրյագավ կարէլ չըս խօտ հարիս* (Բ):

- Քամէ թակել - 1. Քամու տակ ընկ-նել, քամու ազդեցությանն ենթարկվել: *Լըվացը քամէ թակալ ա, չուրացալ* (Բ): 2. *տեն* ճնոր թակել:

- Քամէ խաղ անել - Օդի մեղմ շար-ժում լինել, մեղմ քամի փչել: *Ըստը՜ղ շատ ա տաք, ըսկի չի քամէ խաղ անում* (Բ):

- Քամէ խըռեգ՝ տալ - *տեն* Քամէ անել (3):

- Քամէ խըռեգ՝ տըվօղ - *տեն* Քամէ քօսօղ:

- Քամէ կօլ տալ - 1. *տեն* Քամավ ըղնել (1): 2. Անգործ թրեւ գալ: *Մի-հէնգվա քիհիլնէն սաղ օրը էն ըն քամէ կօլ տալիս* (2): 3. Ծայրահեղ կարիքի՝ աղքատության մեջ լինել, ուսելու բան չունենալ: *Ասում ա.- Ինձ ըշտըղա յա՛ փուլ, էն ըմ քամէ կօլ տալիս* (2):

- Քամէ նըհը՜տ տալ - *տեն* Քամէ խըռեգ տալ:

- Քամէն թանրս փըջիլ - Գործը ձա-խողվել՝ չհաջողվել: *Հինչը օգում ըմ անիմ, քամէն թանրս ա փըջում* (2):

- Քամէ նի կան - *տեն* Քամավ ըղնել:

- Քամէ տալ - 1. *տեն* Քըմըքամէ անել: 2. Քամու առջեւ պահելով՝ մաքրել՝ զտել (ցորենը, գարին են), երնել: *Այան սիսը՜նը ածում ա խախալը, կըլխանը յը՜րը պահում, վեր ածում, քամէ տամ* (2):

- Քամէ տաս՝ կըտանէ - *տեն* Փըջիս՝ վեր կըղնէ:

- Քամէ տը՜նալ - Անկատարելիորեն հեռանալ՝ անհետանալ: *Կամ ըն, տը՜ս-նում ախճիգ չի կա, քամէ յա տը՜նալ* (2):

- Քամէ քօսօղ - Ստախոս, փչան: *Քամէ քօսօղ ա Ըսատուրը* (Բ):

- Քամու նըման - Շատ արագ, արա-

գորեն, քամու նման սուրալով: *Ծիս քամու նըման հընսում ա պալատը* (2):

- Քամուն ըռը՜խը ըղնել - Քամուց քշվել՝ տարվել: *Էնքան պեմբակը քա-մուն ըռը՜խը ընգավ, փուչացավ* (2):

- Քամուն ըռը՜խը տալ - *տեն* Քամուն տալ:

- Քամուն պերածը քամեն կըտանէ - *տեն* Կը՜տեն պերածը կը՜տը կըտանէ:

- Քամուն տալ - 1. Քամու ազդեցու-թյանը ենթարկել, քամու առաջ պահել, որ քամին քշի: *Ամէն տարէ հուրան խօխէքը պըցըրընայիս ըն ըլալ Մըռավը, կըրըզմանան էրկու հափուռ վեղ քա-մուն տալիս* (ՆԱԲ, 94): 2. Ցրիվ տալ, ցրել, հետք չթողնել: *Էնքան չօր խօտը լօխ քամուն տըվավ, տը՜ղըն էլ չի ման-իում* (Բ): 3. Վատնել, մսխել: *Էտ հօրը փուլէրը սաղ քամուն տըվավ* (2):

ՔԱՍԵԼ՝/ՔԱՍԸ՝ (գրք. քամեմ) - նք.

1. *տեն* ՄԸԶԻԼ: 2. Ծակոտկեն ամանի՝ պարկի են մեջը դնել, որպեսզի հեղուկը ծորվի՝ դուրս գա: *Ժենգալը իփում ըն, ածում ճըշըքամեն, քամում* (2): 3. Մինչեւ վերջին կաթիլը խմել՝ ծծել: *Կինուն կը՜վաթը քամում ա, տոնս կամ* (2): 4. *փխբ.* Հոսեցնել (արցունք, արյուն են): *Էս կըռը՜վը շատ արուն քա-մից մեր ժուղովորթան* (Բ):

- Քամած մածուն - Ուսելիք, որ պատրաստում են մածունը քսակի մեջ լցնելով եւ կախելով, որ հեղուկը թափ-վի: *Քամած մածունը լանգան պեն ա* (Բ):

ՔԱՍԵԼ՝/ՔԱՍԸ՝ (գրք. քամեմ) - *տեն* Քամէ տալ (2): *Յեզըն հուրան պենը լ՛ալ անում ար՝ կալը թըկէլանը յետը ցօրէնը, տէրմանը քամում* (ՀԺՀ, VII, 227):

ՔԱՍԵՂ - գ. Հեղուկ քամելու հարմա-րանք: *Քամէջը յը՜ր ա օնում, կաթնը քամում* (2):

ՔԱՍԸ՝ - *տեն* ՔԱՍԵ:

ՔԱՍԸ՝ - *տեն* ՔԱՍԵԼ՝:

ՔԱՍԸ՝ - *տեն* ՔԱՍԵԼ՝:

ՔԱՍԻ - *տեն* ՔԱՍԵ:

ՔԱՍՅԱՐ - ած. Որտեղ հաճախ քամի է լինում, քամոտ: *Սարէն շէնը քամիար տը՜ղ ա* (Բ):

ՔԱՍՎԵԼ/ՔԱՍՎԸ՝ - կք. եւ չք. ՔԱ-ՍԵԼ-ի:

ՔԱՍՎԸ՝ - *տեն* ՔԱՍՎԵԼ:

ՔԱՍՈՒՏ - *տեն* ՔԱՍՅԱՐ:

ՔԱՍՔԱՍ - ած. Թույլ, ուժասպառ: *Կամ ըն, տը՜սնում մին քամքամ մարթ ըտը՜ղ վեր ընգած* (2):

ՔԱՍՔԱՍ - 1. գ. Անցք, որով օդը մտնում է ներս եւ դուրս գալիս, օդանցք: *Պատեն քամքաշը ծասկում ա, վեր ցօր-տը կա վէչ* (2): 2. Տաք քամիով հյուրը՝ խոնավությունը քաշված՝ ցամաքած,

խորշակահար: *Արտը հընձում ըն, մին փուք քամքաշ ցօրէն ա տը՜նում* (2):

ՔԱՍՕՏ - *տեն* ՔԱՍԵՂ:

ՔԱՍ - *տեն* ԿԱՍՅ:

ՔԱՍԴԵԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴԵԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴԻԼ/ՔԱՍԴԻԼ/ՔԱՍԴԵԼ/ՔԱՍԴԵԼ - *գրք. քանդեմ* - նք. 1. Ավերել, փլցնել: *Սապէտին վախտը էտ յը՜խծէն քանդան ըն, տը՜ղը կանցիլար շինան* (2): 2. Փորել: *Ծօրէն դըռնաղավը վը՜ղը քան-դում ա, ճիւր ա տոնս կամ* (2): 3. Քակել, արծակել: *Ծամէրը քանդում ա, տոնս կամ* (2): 4. Սարքի՝ գործիքի՝ մեքենայի մասերն իրարից անջատել՝ հանել: *Մա-շինը քանդում ա, վեր շինի, ամմա կա-րում չի* (Բ): 5. Փորելով հանել: *Այան խընջըլօգ ա քանդում, պիրում իփում, տամ ապուն* (2): 6. *փխբ.* Վնաս հասց-նել, սնանկացնել: *Էտ օյինբագը ժուղու-վորթէն քանդից* (2):

ՔԱՍԴԻԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴԵԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴԵԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴԻԼ/ՔԱՍԴԻԼ/ՔԱՍԴԵԼ/ՔԱՍԴԵԼ - 1. կք. եւ չք. ՔԱՍԴԻԼ-ի: 2. չք. *փխբ.* Սաստիկ հարբել: *Մըկըռնէն էնքան խըմում ըն, վեր լափ քանդվում ըն* (2):

- Քանդված չըվըստան - Հաշմված մարդ: *Խը՜ղըն հինչ ա՛նէ, քանդված չըվըստան ա, կարում չի, թա մին կօրծ անէ* (Բ):

ՔԱՍԴԻԼ - *տեն* ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴ-ՔԱՍԴ/ՔԱՍԴ-ՔԱՍԴ/ՔԱՍԴ-ՔԱՍԴ (գրք. քանդ (փորվածք) - Գործածվում է կապակցու-թյունների մեջ:

- Քանդ-քանդ անել - 1. *տեն* ՔԱՍԴ-ՔԱՍԴԻԼ: 2. Մի կերպ յուր գնալ, ապրուստի քիչ միջոցներ վաստակել: *Քանդ-քանդ ընէլավ էտ խօքէնքը պա-հում ա, մըծըցընում* (2):

- Քանդ-քանդ ինիլ/տը՜նալ - *տեն* ՔԱՍԴԻԼ/ՔԱՍԴԻԼ:

ՔԱՍԴ-ՔԱՍԴ - *տեն* ՔԱՍԴ-ՔԱՍԴ:

ՔԱՍԵ/ՔԱՍԸ/ՔԱՍԻ (գրք. քանի) - դ.

1. Հարցական բառ թիվը՝ քանակը՝ արժեքը՝ իմանալու համար: *Ասում ա.- Հօբան ախպեր, քանէ՞ վը՜խճար օնիս* (2): 2. Հարաբերական դերանվան իմաստով՝ որքան որ, ինչքան որ, ինչ-քան: *Քանէ քիսնամ ըն, էնքան մուտու-նալավ էն սիպտանկ պենը մըծանում ա* (ՀԺՀ, V, 419): 3. Քանի դեռ: *Քանէ թօռ չի յը՜կալ, հարկավեր ա խաղուն քաղած* (Բ): 4. Քանի՞ անգամ, որքա՞ն: *Հարը կըզնըվում ա, թա.- Քանէ՞ ասիմ քը՜գ, էլ*

վը՛րս մէր անէլ (Ձ): 5. Որքա՛ն ժամա-  
նակ, մինչեւ ե՛րբ: Քանէ՛ բիրդի ըստի  
քանսիբ կէնանք (Ձ):

- Քանէ էջը կաշվին ա - Քանի դեռ  
ուշ չէ: Ասում ա.- Քանէ էջը կաշվին ա,  
քինի՛, թա չէ փիս ա ինանկան (Ձ):

- Քանէ՛ կէս/թիք/ան/կուտոր տը՛ռնամ  
- տեն Մաջաս (էրկու) կէս տը՛ռնամ  
(ՍԱԶ-ի տակ):

- Քանէ՛ կըլխանէ յա/յըմ/յըս - Ինչ-  
պէս է (եմ, ես) հանդգնել, ո՛ր իրավուն-  
քով: Ասում ա.- Տու քանէ կըլխանէ յը՛ս,  
վեր թաքալէրին ծիլին ախօռըն ըս նի  
մըտալ (Ձ):

- Քանէ՛ մին - Քանի՛ անգամ: Քանէ՛  
մին ասիմ, ա՛ հայէր, իրոր փիսօթուն  
մէք՛ անէլ (Ձ):

- Քանէ վեր - տեն Չո՛ւն(Քի): Էտ  
պատրուկը քանի վեր քասիբ ա ինո՛ւմ,  
լնվ պէն չի կարող տա (ՆԼՂԺԲ, 123):

- Քանէ տըռնըվա շօն ըս, խէ  
մըհէնգ՛ ըս հանջում - Ասում են նրանց,  
ովքեր որեւէ բանի մասին ուշացումով  
են նախագուշացնում՝ բողոքում են:

- Քանէ քինո՛ւմ ա/քինի - Յետգիտեմ,  
աստիճանաբար: Խըմում ա, ամմա մը՛ռ-  
նում չի, քանի քինում ա, լիվանում ա  
(ՆԼՂԺԲ, 81):

ՔԱՆԵՆԸ - տեն ՔԱՆԵՍԸ:

ՔԱՆԵՍԸ/ՔԱՆԵՍԸ/ՔԱՆԻՍԸ/ՔԱՆԵ-  
ՆԸ/ՔԱՆԵՍԸ/ՔԱՆԻՆԸ - գ. Քանի-ի գո-  
յականական հոլովովո՛ղ ձեւը՝ քանի  
առարկա՛ մարդ՝ միավոր: Ըտըրանց  
անա քանէսը քինամ ըն, էլ կամ չըն (Ձ):

ՔԱՆԵ-ՔԱՆԵ/ՔԱՆԵ-ՔԱՆԵ/ՔԱՆԻ-  
ՔԱՆԻ - ած. Շատ-շատ: Քանէ՛-քանէ՛  
ջանիլ ըսպանվից էս կըռվումը (Բ):

ՔԱՆԵ՛ - տեն ՔԱՆԵ:

ՔԱՆԵ՛ՆԸ - տեն ՔԱՆԵՍԸ:

ՔԱՆԵ՛ՍԸ - տեն ՔԱՆԵՍԸ:

ՔԱՆԵ՛ՔԱՆԵ՛ - տեն ՔԱՆԵ-ՔԱՆԵ:

ՔԱՆԹԱԼ - 1. գ. Մեծ առնանդամ,  
հատկապես՝ էջի: Վեր խըմալ ա, էն  
սըհաթը սըվացալ ա, մին էլ մին էշու  
քանթալ ճըկատան կախ ա իլնվ (ՅԺՅ,  
VI, 48): 2. ած. Ծանրաշարժ, դանդաղա-  
շարժ: Քանթալ կընէգ ա Սիրանը (Բ):

- Քանթալ շօն - Ծանրաշարժ՝ դան-  
դաղաշարժ մարդ: Էտ քանթալ շօնը  
հէնգ օր օր ա, կարում չի, թա բօստանը  
պիհի պըռծընէ (Բ):

ՔԱՆԻ - տեն ՔԱՆԵ:

ՔԱՆԻՆԸ - տեն ՔԱՆԵՆԸ:

ՔԱՆԻՍԸ - տեն ՔԱՆԵՍԸ:

ՔԱՆԻ-ՔԱՆԻ - տեն ՔԱՆԵ-ՔԱՆԵ:

ՔԱՆՑ - տեն ԿԱՆՑ:

ՔԱՆՔԱՆ/ՔԱՆՔԱՆ - (պրս. kanden) -  
գ. տեն ՔԱՆՔԱՆԻՑ: Էտ քանքանը տարէն  
մէհէտ թըմիզընէլիս ըն իլնվ (Ձ):

ՔԱՆՔԱՆԻ/ՔԱՆՔԱՆԻ - գ. Ստոր-  
երկրյա ջրմուղ՝ առու փորող արհեստա-  
վոր: Քանքանէքը շատ ըն ջըրջարվում,  
ամմա կարում չըն ճորը քըթէնան (Ձ):

ՔԱՇ՝ - գ. 1. Ագռավագգիների ընտա-  
նիքին պատկանող թռչուն, ագռավ:  
Քաշը գառ-գառ մուտանում ա դօնէ-  
գին... (ԱԱԶ, 30): 2. փխբ. Անճոռնի՝ ալ-  
լանդակ՝ տգեղ մարդ: Ասում ա.- Էտ քա-  
շըն ա՛ մընացալ, վեր օգիմ (Ձ):

- Քաշերը սը՛վ ըն կընական - ծղր.  
Մեծ ցալ՝ դժբախտություն է լինելու:  
Ասում ա.- Պա՛խ, պա՛խ, պա՛խ, տու վեր  
կաս վէջ հըրսանէք, քաշերը սը՛վ ըն  
կընական (Ձ):

- Քաշը հիշկան լըղանա, լըղօնէգ՛ չի  
տը՛ռնալ - տեն էջը թըկէլավ ճօրէ չի  
տը՛ռնալ:

- Քաշը քարէն տիկիլ, քըջէղակը՝  
ծառէն - Իբր թե շատ մեծ՝ դժվար աշ-  
խատանք կատարել: - Յինչ պէնէ յը՛ս, -  
Քաշը քարէն ըմ տընում, քըջէղակը՝  
ծառէն (ՆԱԲ, III, 36):

- Քաշին խընամէն/շըհաղը քըջէղա-  
կը կինի - Նմանը նմանին կգտնի, նմա-  
նը նմանի հետ ընկերություն՝ բարե-  
կամություն կանի:

- Քաշին կատարը էրիլ - Սաստիկ  
տաք՝ տոթ լինել: Քաշին կատարը էրիլ  
ա, կարում չընք, թա կօրծ անիկը՝ (Բ):

- Քաշին հը՛տէ ամմէնաղնշանգը  
իւրան ճօտըն ա - Յուրաքանչյուրն իր  
զավակին՝ յուրայինին գերադասում է  
մյուսներից:

- Քաշին պըներան մինչը՛վ սօյնին  
յը՛ղը - Ամեն ինչ (ուտելիքների մասին):  
Էտ հըրսընքէն վախտը ըստօյէն լըրա  
հինջու ասիս, իլնվ ա՛ քաշին պըներան  
մինչը՛վ սօյնին յը՛ղը (Ձ):

- Քաշին պօգին - Ոչ մի տեղ, ան-  
հայտ տեղ: Ասում ա.- Էտ ախպիրը էն ա  
քաշին պօգին, վէշ միւրը գիւղում չի  
ըտըրա տը՛ղը (Ձ):

- Քաշին քօնածը - տեն ՔԱՇ՝ (2):

- Քաշ կըտկօտած/չընգ(ը)ռօտած -  
1. Չեչոտ (դեմքի մասին): Ըտըրա քաշ  
կըտկօտած իրը՛սը կըտըրվէ (Ձ): 2.  
Քաղցր, համով (պտուղների մասին):  
Քաշ կըտկօտած տանն ա, լըհա տըղա  
յըս՛կէր (Բ):

- Քաշ տը՛ռնալ - արիւմ. Խիստ նիհա-  
րել: Էնքան տիւզըն կացալ ա, քաշ ա  
տը՛ռալ (Բ):

- Քաշու ըռըխա վեր ընգած - Անհամ,  
ոչ ախորժելի: Էս էլ հօ խօրնագ չի՛, քաշու  
ըռըխա վեր ընգած ա (Բ):

- Քաշու խաղու - Մեծ-մեծ հատիկ-  
ներով խաղողի տեսակ: Մին ճուվարան  
քաշու խաղու վա քաղում, դարկում խը-  
նամունց տօն (Ձ):

- Քաշու ծէն/սնն - 1. Խռպոտ՝ տհաճ՝  
անախորժ ծայն: Քաշու ծէնավ կարել  
չըս լ՛ավ յը՛րք ասիս (Ձ): 2.  
Հարագուշակ ծայն: Ըտըրա սննը  
քաշու սնն ա, հիբը խօսում ա, մին  
փիս պէն ա պըտահում (Բ):

- Քաշու ճօտ - Տգեղ՝ այլանդակ՝ ան-  
ճոռնի երեխա: Ըտըրան էլ ինո՛ւմ ա էր-  
կու ախճիգ՝ էրկու քաշու ճօտ (Ձ):

- Քաշու նըման կըռկըռալ/կըռռալ -  
տեն ԿԸՌԿԸՌԱԼ (2):

- Քաշու նըման լըրա տալ տանել -  
Խլել, հափշտակել: Ըտըրանք քաշու նը-  
ման լըրա լըն տամ, պըռապէն վըխճըր-  
նէն տանում (Ձ):

- Քաշու չանգէր - Անվարժ՝ տգեղ  
ձեռագիր: Կըտըրվէ ըտըրա խատտը,  
հանց ա քաշու չանգէր (Բ):

- Քաշու չընգէրա վեր ընգած - տեն  
ՔԱՇ (2):

- Քաշու պաներ - տեն Հավու պաներ  
(ՀԱՎ՝-ի տակ):

- Քաշու պիրանավ կարունք չի կնլ  
- Հարագուշակությամբ լավ վիճակ չի  
ստեղծվի:

- Քաշու սաղունձ - Ծառերից հոսող  
թանձր խեծ: Գիւլնսոն ճըղնէրան քա-  
շու սաղունձ ա վեր տը՛ռնում (Բ):

- Քաշու սըխտօր - Միտորի նման  
վայրի բույս: Քաշու սըխտօր ա քան-  
դում, պիրում աղ տիկում (Ձ):

- Քաշու սօղան - Սոխի նման վայրի  
բույս: Ըտը՛ղ շատ քաշու սօղան ա  
փըսնէս (Բ):

ՔԱՇ՝ - գ. 1. Որեւէ մարմնի ծանրու-  
թյունը, կշիռ: Էտ վըխճարէն քաշը չօրք՝  
փույթ կինի (Բ): 2. Որեւէ բանի մեկ ան-  
գամ կշեռը որոշ կշռաչափով՝ որպես  
ծանրության կամ քանակի միավոր:  
Փույթանուց քարը տիկում ա քըշըռքէն,  
մին քաշ տանն քըշըռռում (Ձ):

- Քաշավը մին - Առարկայի՝ մարմնի  
եւն ծանրության՝ կշռի չափով: Թաքա-  
վէրը յիրգիրավը մին ա անում, վար հու  
իւրան ըխճըկանը պիրի, քաշավը մին  
վը՛սկէ յա տըլան (ԱԱ, 67):

- Քաշումը ինի/կնլ - Ծանր լինել,  
կշիռ ունենալ: Խօգէրը բօլ-բօլ կաղէն  
ըն կէրալ, քաշումը կա, հարկավեր ա  
մուրթօտած (Ձ):

ՔԱՇ՝/ՔԱՐՇ (գրբ. քաշ, քարշ  
(քաշելով, քաշքշելով) - Գործածվում է  
կապակցությունների մեջ:

- Քաշ անել/տալ - 1. Քաշել, ձգել:  
Քաշ ա անում, էտ ջանդաքը պիրում, քը-  
ցիւմ շանը առաշկը (Ձ): 2. Բռնությամբ՝  
գոռով տանել: Մխճիգը ըտըրան քաշ ա  
տաս, տընէս իւրան տօնը (ՅԺՅ, V, 286):  
3. Բստացնել, գետնին քսել: Մը՛ծ-մը՛ծ

վրնըմաները քաշ ընելավ մին թանիրնավ տոնս ա կամ էտ ցը՛խան (Ձ):

- Քաշ ինիլ/կնլ - 1. Գետնի երեսին քսվելով՝ շարժվել, սողալ: *Ըտի՛ վը՛նները կուտըրհատած, քաշ ինիլնվ հըստում ա տոն (Ձ):* 2. Թրե գալ, թափառել: *Խալխեն տըղէքը էն ըն կործ ընէլիս, մէր Վաղոն էլ սաղ օրը էն ա քնէքումը քաշ կնլիս (Բ):* 3. Հետամտել, մեկի հետեւից ընկնել: *Շատ ա էտ ըխճըկանը հը՛տան քաշ կամ, ամմա պէն չի աննլ կամ (Ձ):* 4. Հարչարվել, տընել: *Սաղ օրը քաշ ա կամ, ամմա կարում չի տօնը պահէ (Բ):*

**ՔԱՇԿ՝** (գրք. քաշ (սնակուշտ, մեջքի՝ փորի ներքեւի կողմը) - ած., մ. 1. Գետնի մակերեսային աննշան չափով կամ ոչ հարկ եղած չափով դեպի վեր ձգվող: *Վըստակած կամ ա, էտ քաշ քօլէն տակէն նըստում (Ձ):* 2. Ոչ մեծ բարձրության վրա գտնվող: *Ըտըրանը հէլվանը ծըմը՛նը պէրալ ըն, էս քաշ տը՛ղէրը պահալ (ԱԱ, 21):* 3. Գետնից՝ հատակից ոչ բավականաչափ՝ ոչ շատ բարձր: *Էտ տանը պատալօկը քաշ ա (Բ):* 4. Նման առարկաների համեմատությամբ ավելի ներքեւ գտնվող: *Մէր տօնը ծէր տանան քաշ ա (Բ):* 5. Ոչ ուժգին, թույլ: *Ըտըրա սնսը քաշ ա (Բ):* 6. Ըստ աստիճանի՝ դիրքի՝ արժեքի՝ նշանակության եւն՝ ստորին, ոչ բարձր, ոչ շատ հարգի: *Քաշ պաշտօն օնէ, կարում չի կործ դնէլը-ցընէ (Բ):* 7. Հափով՝ քանակով եւն քիչ՝ փոքր: *Ըտըրա ըռօճիկը քաշ ա (Բ):* 8. Ցածրածայն: *Քաշ ըն խօսում, վէր վէշ միւնը ըսկանա վէշ (Ձ):* 9. ած. Ցածրահասակ, կարճ, կարճահասակ: *Հնքին շատ ա իննում բօյալ, Կնիին՝ քաշ (Ձ):* 10. գ. Առարկայի՝ տեղի՝ տարածության ստորին կողմը՝ մասը: *Էրկուըտըժանէ տօն ըն շինում, տիյը՛րը մը՛ծ ախպէրըն ա կէնում, քաշումը՛ կուճի ախպէրը (Ձ):* 11. կ. Ցույց է տալիս դեպի ներքեւ՝ դեպի ստորին մասը ուղղված գործողություն: *Էս ախպիւրըն էն ա Շօթայալը չընըսած՝ Դըլէն պէրթան քաշ (ԱԱ, 57):*

- Քաշ անէլ - տէն Քաշ օնէլ:

- Քաշ ըղնէլ - Կախվել, կախ ընկնել: *Ասում ա.- էն ա թօրբան ներքէ ծառան քաշ ընգած, քիսի պէր (Ձ):*

- Քաշ քըցիլ - Կախ անել, կախ տալ: *Կավը մօրթում ըն, թութուն ճըղնան քաշ քըցիլ (Ձ):*

- Քաշ օնէլ - Փոքր երեխային հարմար դիրքով կկեցնել՝ բնական կարիքը հոգալու համար: *Մէհէտ էլ մին կընէ՛ք խօխան էտ ծըռէրէն տակէն քաշ ա կալնլ, կնիլըցըրալ, Աստուծ կըզնըվալ ա... (ԱԱ, 82):*

**ՔԱՇԱՆ/ՔԱՇԱՆԱ** - գ. 1. Ճյուղերից հյուսած հարմարանք, որի վրա որեւէ բան դարսեւելով՝ քաշում ու տանում են: *Փնղը տանում ա քըշանէն յըրա, քաշ տամ (Ձ):* 2. Բարակ ծառերի, ճյուղերի կապուկ, որ քաշելով տուն են տանում: *Քաշանը մին թանիրնվ պիրում ա, հըսցընում տօն (Ձ):*

**ՔԱՇԵԼ** - տէն ՔԱՇԻԼ:

**ՔԱՇԸԼ** - տէն ՔԱՇԻԼ:

**ՔԱՇԻ/ՔԱՇԻ** - գ. Կավե խոր աման: *Քաշին կինավ լըսում ա, ծասկում (Ձ):*

**ՔԱՇԻԼ/ՔԱՇԵԼ/ՔԱՇԸԼ/ՔԱՇԻԼ** (գրք. քաշեմ) - նբ. 1. Ուժ գործադրելով՝ դեպի իրեն ձգել: *Հիշկան քաշում ա, կարում չի էտ ճէղընը քըշըցընէ (Ձ):* 2. Իր ետեւից քաշ տալ, ուժ գործադրելով՝ տանել: *Տնիկընը յը՛գըն կարէլ չի կնիլանը քաշի (Ձ):* 3. Ձգելով մի բանի ամրացնել: *Տէփին յըրա խօզու կաշի յըն քաշնլ (Բ):* 4. Ներքաշել, ներս ձգել, կլանել: *Թնիսին ճիթը յօր ա օնում, տընում պըրանումը, քաշում, ճէռնը տէն քըցում (ՆԱԲ, 103):* 5. Ծխել: *Սուս ըրած՝ չուրուխը քըշիլավ քիսնում ա... (ՀԺՀ, V, 649):* 6. Ծծել, հեղուկը՝ խոնավությունը իր մեջ առնել: *Վընըմանէրըն ճուր ա քաշում (Ձ):* 7. Տանել, հեռացնել: *Ասում ա.- Զօրըտ իմ յիրգիրաս քաշի, թա չէ փիս ա իննկան (Ձ):* 8. Սարքել, պատրաստել: *Նըստում ա, դէյնավը փօկ քաշում (Ձ):* 9. Ամփոփել, ետ տանել: *Հիյվընէն էլ հիքվընէն իւրանց ըն քաշալ, հօփ յէկալ, տը՛ռալ մին կըծէք (ՀԺՀ, VII, 213):* 10. Կշռել: *Էրկու կիւս մէս ա քաշում, տամ ըտըրան (Ձ):* 11. Ձեւը բարձրացնել: *Խանջալը քաշում ա, մին էծու հօլ ըսպանում (ՀԱԲ, 15, 107):* 12. Վերցնել, վրայից՝ միջից առնել: *Տընատարը խըրըվածէն ամանը մոտըցընէն ա, դունըղնէն մարթա մին խըրաված ըն քըշիս (Ձ):* 13. Հավաքելով, մի բանի մեջ լցնելով՝ վերցնել: *Կաթնէն իրը՛սը քաշում ար, տամ խօնցը (Ձ):* 14. Օղի՝ ձեթ եւն հանել: *Ղարաբաղա ամմէնալավ թօթէն արաղը սարուշինն-ցէք՝ ըն քաշում (Բ):* 15. Նմանվել, նմանություն ունենալ: *Ախճիգը մօրը կըքաշի, տըղան՝ դայուն (ԱԲԲ, 13):* 16. Նեղության՝ տանջանքի եւն եւթարկվել, կրել: *Պա վէր ապրէլը ըստի կինի, էն հինչ օրէր ը՛ք մուք քնշնլ (ՀԲ, 348):* 17. Տեւել: *Խստի քաշըմ ա մին քանի շէթէթ (ՀԺՀ, VI, 99):* 18. Կառուցել, կանգնեցնել (պատ, պատնէշ եւն): *Հըրամանը ա տամ, վէր իւրան յըրգիրին զըմանավը պատ քաշին (Ձ):* 19. Որեւէ բանի եւն-թարկվել: *Լնս ա տը՛ռալ, վէր Վաղօն մը՛ռալ ա. էս ա էրկու տարէ յա՛ ցավ ար*

*քաշում (Բ):* 20. Նկարել, լուսանկարել: *Բնլքի գիղըմ ըք, թա ըշխարքիս տակէն էլ օրիշ ջոռաշ շիքիլ չօնի կընէգը. թա գիղըմ չըք, յէս նըշանց տամ, տուք քաշիլ տըվէք (Ձ):* 21. Շրջափակել, պատել: *Հայաթը սէթկա յա քաշում, վէր հիյվըն-նէն նի չի տը՛ռնան (Բ):* 22. Ծածկել: *Յօր-դանը քաշում ա յըրան, վէր մըրսէ վէշ (Բ):* 23. Մի տեղ տանել, դեպի որեւէ կողմ տանել: *Մարթին քաշում ա մին անգնէն, թաքուն ասում (Ձ):* 24. Քսել, ներկել: *Օնքէրը սուրմա յա քնշնլ (Ձ):* 25. Ձգել, երկարությամբ զգել, տարածել: *Թա-քավէրին պալատան մինչը՛վ իւրան տօնը գնբն յա քաշում (Ձ):* 26. Կառուցել, սարքել: *Ուռուպանան յը՛ր ըն կէնում, տը՛սնում՝ կը՛տէն յըրա մին դաշննգ կարմունց քաշած (Ձ):* 27. Բե-րել, հասցնել: *Մըսըլիաթ ըն ըրալ, ծըմա-կան ճուր քաշնլ շէնը (ԱԱ, 59):* 28. Մի բանի վրա անց կացնել: *Մէսը քաշում ա շըմփոխնէն, տինում պօղէն յըրա (Բ):* 29. Հագնել: *Տըղան թաննկը քաշած կըլխին քաշալ խօխա յա (ՀԺՀ, VI, 120):* 30. Փակել, ծածկել, գոցել: *Տօնը քաշում ա, վէր ցօրտը կա վէշ (Ձ):* 31. Հոգալ: *Հըրսընքէն ծախսը սաղ դօրփէրըն ա քաշնլ (Բ):* 32. Սղոցել: *Կէրանը քաշում ըն, տախտակ շինում (Բ):* 34. Անհաջողության մատնել, ձախողել, դավաճանել: *Ըտի էտ տըղան հընգէրունցը քաշում ա (Ձ):* 35. չք. Վերանալ, անցնել: *Պառավըն էտ խընծօրը վէր օտում ա, ծըրըվօթունը քաշում ա (Ձ):* 36. Կազմում է բազմաթիվ հարադրություններ՝ ախ քաշիլ, բօյ քաշիլ, խաշ քաշիլ, վը՛տ քաշիլ եւն:

- Քաշած արաղ - Տնական թունդ օղի: *Ապան մինակ քաշած արաղ ար խըմէն (Բ):*

**ՔԱՇԻԼ** - տէն ՔԱՇԻԼ:

**ՔԱՇԼԻԳ՝** - ած. 1. Բավականաչափ ցածր, ցածիկ: *Թափէղը մին քաշիլք տան ըռաջի վէնն ա կէնում, ծէն տամ, մին պառավ կընէք ա տոնս կամ (ՆԱԲ, 43):* 2. Կարճահասակ, կարճիկ: *Քաշ-լիք հարթն ա Դօրնուց Հէղանէն հարթըն (Ձ):*

**ՔԱՇԿ** (գրք. քաշք) - գ. 1. Առասպելական ոգի, քաշք: *Ասում ըն՝ Ռըհիմին ծօրնումը քաշկեր ըն ապըրում (Ձ):* 2. փխբ. Շատ տգեղ, այլանդակ մարդ: *Էտ հօ հարթըն չի՛, քաշկ ա, քաշկ (Բ):*

- Քաշկավ ըղնէլ - 1. Կատաղել, մոլեգնել: *Քաշկավ ա ըղնում, ըսքըսում կընգանը թակէլը (Ձ):* 2. Դիվոտել, դիվահարվել, խենթանալ: *Առաջ կարքէն մարթ ա իլնլ Ռուբէնը, միհէնգ ա ըտի քաշկավ ընգալ (Բ):*

- Քաշկավ քըցիլ - 1. Կատաղեցնել: Կընէգը վեր ջօղութը տամ ա, մարթին լափ քաշկավ ա քըցիւմ (2): 2. Դիվահար դարձնել, խեթաքնել: Ըտըրանք էնքան էտ մարթին վըխծըցընէս ըն, լափ քաշկավ ըն քըցիս (2):

- Քաշկերը կ'ալ/յը՞ր կ'ենալ - 1. տեն Քաշկավ ըղնէլ: 2. Հակառակել, համառել: Սիմօնէն քաշկերը վեր կ'ամ ա, էլ կարէլ չըս պիտըցընիս (Բ):

- Քաշկերը փըռնել - 1. տեն Քաշկերը կ'ալ: 2. Համոզել: Կանգստացնել: Սին թանիրնալ ըտըրա քաշկերը փըռնում ըն, դարկում հծնծ (2):

- Քաշկը յըրան կըստել - Անհայտ պատճառով գործը ձախողվել՝ չհաջողվել՝ ձգձգվել: Քաշկը յըրան կըստալ ա, անըր՞վ չի անում, թա հծնծը պըրծընիկը (Բ):

- Քաշկ կըրիտ տըվօղ - Ճարպիկ: Քաշկ կըրիտ տըվօղ տըղա յա Արսէն (Բ):

- Քաշկու ժըմատօն - Աղմկոտ՝ խառնաշփոթ տեղ՝ հավաքույթ: Թամադան ասում ա.- Ա՛ ժըղօվորթ, էս հօ քաշկու ժըմատօն չի՞, տո՛ւս ըրէք (2):

- Քաշկու կըտօր - Շատ մութ տեղ: Էս քաշկու կըտօր ա, ըստը՞ղ հունց ը՞ք կօրծ անում (Բ):

- Քաշկու հըրիշտըրակ - տեն ՔԱՇԿ (2):

- Քաշկու հըրսանէք՝ - տեն Քաշկու ժըմատօն:

- Քաշկու ճօտ - տեն ՔԱՇԿ (2) (հատկապես երեխաների մասին):

- Քաշկու պէն - Անհասկանալի՝ տարօրինակ երեւոյթ: Քաշկու պէն ա. վեր ըխպիրան մուտանում ըն, ճո՛ւրը կըտըրվում ա, վեր հըռանում ըն՝ կ'ամ ա (2):

ՔԱՇԿՈՒՏ - ած. 1. Զայրացկոտ, կատաղի, որի կատաղությունը երբեմն-երբեմն բռնում է: Քաշկուտ մարթ ա հօրէնը, վախտ ա ինո՛ւմ՝ կըտաղում ա, վախտ ա ինո՛ւմ՝ քը՛փըտ կ'ամ ա կը՛ստա (Բ): 2. Դիվահար, այսահար, ընկնավոր: Էտ ախճիգըն էլ քաշկուտ ա ինո՛ւմ, հինջ դօխտուր ծէն ըն տամ, կարում չի ճար անէ (2):

- Քաշկուտ անէլ/քըցիլ - տեն Քաշկավ քըցիլ:

- Քաշկուտ ըղնէլ/տը՛ռնալ - տեն Քաշկավ ըղնէլ:

ՔԱՇԿԷԼ - տեն ՔԱՇԿԻԼ:

ՔԱՇԿՈՒԼ - տեն ՔԱՇԿԻԼ:

ՔԱՇԿԻԼ/ՔԱՇԿԷԼ/ՔԱՇԿՈՒԼ/ՔԱՇԿԻԼ - 1. կը. եւ չը. ՔԱՇԻԼ-ի: չը. 2. Նահանջել, ընկրկել: Թօրքերը էտ վեր տը՛սէն, քըշվէցէն մեր վըղէրան (2): 3. Ցրվել, վերանալ: Թօխպը քաշվալ ա (Բ):

4. Առանձնանալ: Մի անգո՛ն ա քաշվում, ըսքըսում լաց իկիլը (2): 5. Տնդել, գոլորշիանալ, խոնավությունը ցամաքել: Փըլավէն ճո՛ւրը քաշվալ ա (Բ): 6. Կուչ գալ, կարճանալ, փոքրանալ (կտորի մասին): Վեր լըվանում ա, էտ շօրը քաշվում ա (2): 7. Ամաչել: Առանց քըշվիլի մուտանում ա, թաքավէրին ըռըչին վը՛նը կէնում (2): 8. Գոսանալ (մարմնի անդամների մասին): Աչի վը՛նը քաշվալ ա (2): 9. Անհաջողության մատնվել, ձախողվել: Ըստարէ արաշտ ա. հո՛ւր արտ օնէ, քըշվիլան ա (Բ):

ՔԱՇԿԻԼ - տեն ՔԱՇԿԻԼ:

ՔԱՇ-ՔԱՇ՝/ՔՈՇՈՔԱՇ՝ - Գործածվում է կապակցությունների մեջ:

- Քաշ-քաշ անէլ - 1. Այս ու այն կողմ քաշել՝ ձգել, քաշքշել: Պըռավէն ճօրուն հնքվան ըն կապում, քաշ-քաշ անում (ՆԼՂԺԲ, 72): 2. Բռնի կերպով տանել: Էնքան քաշ-քաշ ըրէն սուղը, լափ գնիլան տարավ (2): 3. Ուշացնել, ձգձգել: Էտ կօրծը շատ քաշ-քաշ ըրէն (Բ):

- Քաշ-քաշ ըղնէլ/ինիլ/կ'ալ - 1. Այս ու այն կողմ քաշվել՝ ձգվել, քաշքշվել: Էնքան քաշ-քաշ ա իլալ էտ կարպէտը, լափ ճըրղօտվալ ա (Բ): 2. Չարչարվել, տընել: Սա թա.- Յէս քառասուն տարէ ո՛ւրո՛ւն տըռնէրէ քաշ-քաշ ինծղը, պէռնը կըրօղը չըմ... (ՀԺՀ, VII, 194):

ՔԱՇ-ՔԱՇ՝/ՔՈՇՈՔԱՇ՝ - 1. ած. Շատ ցածր՝ ցածրահասակ: Քաշ-քաշ տըռնէր ա էտ շէկին տըռնէրը (2): 2. մ. Կռանալով, կգանալով: Վըխճըրատարը յէշում ա տէսնում՝ միկը քըշըքաշ թաքուն վըխճարէն մաչավը քըռնում ա (ՆԱԲ, 64):

ՔԱՇՔԱՇԱՆ - գ. Տանը կից շինություն ամառային ճաշկերույթի համար: Թանջիրը տանը կօխկէն մին քաշքաշան էլ ա շինիլ տամ (2):

ՔԱՇ-ՔՈՇՂԵՂԱԿ - տեն ՇՕՆ-ԿՈՒԼ: ...ժօղօվորթը բնօրի վախտ քըշէրը կու-մէրըմըն ըն իլալ կը՛նըմ, անասուններին քըշտին, վը՛ր քաշ-քըշէղակ յըրա չըտան, տանին (ԼՂԲ, 345):

ՔԱՇՕԿԻ՝ - գ. Փլավի այն տեսակը, որ պատրաստում են՝ բրնձի վրա ջուր լցնելով եւ այնքան եփելով, մինչեւ որ ջուրը բոլորովին ցամաքի: Քաշօվի յա իփում, տամ դունաղէն (2):

ՔԱՇՕԿԻ՝ - տեն ՔՈՇՕՎԻ:

ՔԱՇՂԱ (այս. kecel) - ած. 1. Մագերը թափված, ճաղատ: Էտ քաչալ ճօտին յըրան թէփուտ չի փըսնըմ, ըտըրա հէտի էլ քաչալ ըն ասըմ (ՀԺՀ, V, 458): 2. փխբ. տեն ՏՐԱԿԼՈՐ (2, 3):

- Քաչալ նմիրը տը՛ռնալ - Անտեղի հարցադրումներով (սովորաբար ողջությունը հարցնելով, մեկի ժամանակը

խլել (գործածվում է Մարտակերտի շրջանի Չափար գյուղում): Հինջ ը՛ս քաչալ նմիրը տը՛ռնալ, խէ թօղում չը՛ս էտ մարթը կօրծը անէ (Բ):

- Քաչալը պէց անէլ - Թերությունները երեւան հանելով՝ խայտառակել: Ըտի էտ կընէգը շինըմաչումը ո՛ւրան մարթին քաչալը պէց ա անում (2):

- Քաչալը վեր ճար անօղ ինի, ուրան կըլխէն/քըչալէն կանէ - Որեւէ պակասություն ունեցողը, եթէ հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի (ասում են, երբ մեկից պահանջում խնդրում են այն, ինչի կարիքը հենց նա ունի):

- Քաչալը ուրան փըրհաղէն թանրիփ կանէ/հավան կըկէնա - Յուրաքանչյուրն իր ունեցածն է գովում՝ հավանում:

- Քաչալ խան - Առույգ՝ կայտառ՝ նյութապես ապահով մարդ: Դէ կըզալանց Ալօփըն էլ քաչալ խան ա, սաղ օրը էն ա քը՛փ ընէս (2):

- Քաչալ խաթա - Անտեղի փորձանք: Ըշտը՛ղ մին քաչալ խաթա կա, մըզը՛տէ յա կ'ամ (Բ):

- Քաչալ խաշու - հեգն. Անյուղ՝ հասարակ կերակուր: Քաչալ խաշու օտօղը կարէլ չի հծնծ անէ (2):

- Քաչալ կըլծիս խօզիլ - 1. Անիմաստ գործ կատարել: Քաչալ կըլծիս խուզիլանվ տօն չըս տը՛ռնալ (2): 2. Ճարպկորեն՝ խորմանկորեն մեկին խաբել: Քաչալ կըլծիս խօզում ա, ըտըրա կավը էծու կինալ ինք՝ օնում (2):

- Քաչալ դուզղուն - հեգն. Փորձառու մարդ: Քաչալ դուզղուն ա Սէտըրակը, կարէլ չըս խանփիս (Բ):

- Քըչալէն հը՛տէ դալլանքխանան յա՛ իլան, յա՛ չիլան - տեն Դըլլանքէն հը՛տէ քաչալը յա՛ սաղ, յա՛ մը՛ռած (ԴԱԼԼԱՔ-ի տակ):

- Քըչալէն վեր ճար ինի, ուրան կըլծիս/քաչալը կըքօրէ - տեն Քաչալը վեր ճար անօղ ինի, ուրան կըլխէն/քըչալէն կանէ:

ՔԱՌ (այս. kar) - 1. ած., գ. Լսողությունից լրիվ կամ մասնակիորեն զուրկ (մարդ, կենդանի): Քառ մարթ ա, հինջու ասում ըն, ըսկանում չի (2): ած. 2. Լսելու ունակությունը կորցրած: Ըտըրա ծէխէ անգուճը քառ ա ինո՛ւմ (2): 3. փխբ. Հեռավոր ու հետամնաց: Մին քառ շէնում մին մարթ, մին կընէգ ին ապըրում (2):

4. փխբ. Ջերմություն չարձակող: Քառ փիչ ա (Բ): 5. փխբ. Ամուր, ընտիր (բոժոժի մասին): Էրկու փուլք քառ բըրամա յա ծախում, մին ծի իք՝ օնում (2):

- Քառ գո՛րգա - տեն ԳՈՒՐԶԱ:

- Քառ Թննի/դուլի - 1. Խուլ մարդ:

Էտ քառ թնկին ըսկանում չար, ամմա լավ ար տըմսում (2): 2. Շրջապատի հանդեպ անտարբեր՝ ամեն ինչից անտեղյակ մարդ: *Դէ՛, Քանսպնըն էլ քառ թնկին յա, ըշխարքաս խաբար չօնէ* (Բ):

ՔԱՌԱՍ(Ս)ՈՒՆ - տեն ՔՐՈՒԱՍ(Ս)ՈՒՆ:

ՔԱՎԵԼ (գրք. քաւել) - նք. Ջոզումով՝ աշխատանքով՝ լավ գործով եւն թույլ տված սխալը՝ հանցանքը ուղղել: *Ասում ա.- Էտ ըրածըտ մը՛ծ մէխկ ա, բիդի կարիս քավիս* (2):

ՔԱՎԹԱՌ (այրս. *kafīār*) - 1. անրգ. տեն ՊԱՌԱՎ: *Մահմադը յէշում ա տէսնում՝ մին քավթառ դծվ ծիյէնը թակում ա* (ՀԱԲ, 15, 15): 2. տեն ՋԱՂՈՒ: *Էտ քավթառը թիլիսիմ ա անում, էտ տըղան քար ա տըմնում* (2): 3. գ. տեն Քավթառ քօսի:

- Քավթառ աղվէտ - Փորձված ու խորամանկ ծերունի: *Քավթառ աղվէտ ա Աշօտ դային, վէշ մինը կարէլ չի ընդըրա խնկի* (Բ):

- Քավթառ էշը/ծին/ծօրէն էլ ա կնարի օտում - Տարիքի հետ պահանջները չեն նվազում:

- Քավթառ շանը քուչի-քուչի չըն անել - Փորձված մարդուն խաբելը անխմաստ՝ անհնար է:

